

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՀԱՍԿԱՆԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՁԸ

Հույս դժվար ժամանակներում - Վերջին վարագույրը.

Հայտնություն

ԲՈՒ ԱԹԼԻ
ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ ԴԱՍԱԽՈՍ
(ԱՍՏՎԱԾԱՇՆՁՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

ՄԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՅՈՒՅՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՔ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ, ՀԱՏՈՐ 12

ԱՍՏՎԱԾԱՇՆՁՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԵՐ, ՄԱՐՇԱԼ,

ՏԵԽԱՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս մեկնաբանության գրքում կիրառվող հապավումները.....	5
Հեղինակի խոսքը: Ինչպե՞ս կարող է այս մեկնաբանությունը ձեզ օգնել.....	7
Աստվածաշունչը ճիշտ կարդալու ուղեցույց: Ստուգված ճշմարտության ինքնություն ուսումնասիրություն.....	10
Հատուկ Թեմա: Ապագայի վերաբերյալ Հին և Նոր Կտակարանյան կանխատեսումները.....	20
Հատուկ Թեմա: Հին Կտակարանի մարգարեություն.....	28
Հայտնության Գրքի ներածությունը.....	33
Հայտնություն 1:1-20.....	47
Հայտնություն 2-3.....	80
Հայտնություն 4-5.....	128
Հայտնություն 6-7.....	150
Հայտնություն 8-9.....	168
Հայտնություն 10-11.....	180
Հայտնություն 12-14.....	204
Հայտնություն 15-16.....	244
Հայտնություն 17-18.....	265
Հայտնություն 19.....	279
Հայտնություն 20.....	300
Հայտնություն 21-22.....	313
Հավելված 1: Հունարեն լեզվի քերականական կառուցվածքի համառոտ սահմանումները.....	334
Հավելված 2: Տեքստային քննադատություն.....	346
Հավելված 3: Բացատրական բառարան.....	351
Հավելված 4: Վարդապետական սկզբունքներ.....	364
Հազարամյայի կարծիքների աղյուսակներ.....	366
Հայտնություն, բանաստեղծություն.....	370

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱՆԵՐ

Մեսիա, Հայտ. 1:1.....	49
Շուտ վերադարձը, Հայտ. 1:1.....	50
Սիմվոլիկ թվերը, Հայտ. 1:4.....	53
Եկեղեցի, Հայտ.1:4.....	55
Յոթ Հոգիները, Հայտ. 1:4.....	56
Անդրանիկը, Հայտ. 1:5.....	56
Վաղ Եկեղեցու <i>Kerygma</i> , Հայտ. 1:5.....	57
Քրիստոնեությունը համագործակցություն է, Հայտ. 1:6.....	59
Հավիտյան (հունարեն իդիոմա), Հայտ. 1:6.....	60
Հավիտյան (<i>'olam</i>), Հայտ. 1:6.....	60
Ամեն, Հայտ. 1:6.....	62
Ամպերով վերադառնալը, Հայտ. 1:7.....	64
Սգալու ծեսերը, Հայտ. 1:7.....	65
Աստծո Անունները, Հայտ. 1:8.....	66
Աստծո թագավորությունը, Հայտ. 1: 9.....	70
Եղջյուրներ որոնք օգտագործվել են Իսրայելի կողմից, Հայտ. 1: 10.....	71
Որտե՞ղ են գտնվում մահացածները, Հայտ. 1:18.....	76
Աստված նկարագրվում է որպես մարդ, Հայտ. 2:1.....	87
Իմանալ, գիտենալ, Հայտ. 2:2.....	89
Համբերություն, Հայտ. 2:2.....	89
Հունարեն «փորձություն, փորձ» տերմինները և դրանց նշանակության երանգները, Հայտ. 2:2.....	92
Նեղություն, Հայտ. 2:9.....	96
Վարձքերի և պատիժների աստիճանները, Հայտ. 2:10.....	99
Տիրոջ Անունը Նոր Կտակարանում, Հայտ. 2:13.....	102
Հավատք, Հայտ. 2:13.....	102
Իսրայել (անունը), Հայտ. 2:14.....	104
Աստծո Որդին, Հայտ. 2:18.....	107
Կանայք Աստվածաշնչում, Հայտ. 2:20.....	108
Սիրտը, Հայտ. 2:23.....	111
Խոստովանություն, Հայտ. 3:5.....	116
«Դուռը» Նոր Կտակարանում, Հայտ. 3:7.....	118
Սկիզբ/ծագում (<i>archē</i>), Հայտ. 3:14.....	122
Հարստություն, Հայտ. 3:17.....	123
ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը, Հայտ. 4:1.....	130
Երկինքները և երրորդ երկինքը, Հայտ. 4:1.....	132
Երեց, Հայտ. 4:4.....	135
Քերովբե, Հայտ. 4:6.....	137
Սրբեր, Հայտ. 5:8.....	142
Փրկագին/փրկանք/ազատագրում, Հայտ. 5:9.....	144
Թագավորել թագավորության մեջ, Հայտ, 5:10.....	146
Մետաղադրամները Պաղեստինում, Հայտ. 6:6.....	154
Կնիք, Հայտ. 7:2.....	160
Տասներկու թիվը, Հայտ. 7:4.....	162
Աստծո փրկության ծրագիրը «խորհուրդ», Հայտ. 10:7.....	185
Հին կտակարանի մարգարեություն, Հայտ. 10:7.....	186
Քառասուներկու ամիս (դանիելից), Հայտ. 11:2.....	192

Սուրբ Հոգին Աստվածաշնչում, Հայտ. 11:11.....	195
Այն Օրը, Հայտ. 11: 18.....	200
Սատանան, Հայտ. 12:3.....	208
Պատերազմ երկնքում, Հայտ. 12:7.....	212
Անձնական չարը, Հայտ. 12:9.....	214
Ցանկացած պահին Հեսուսի վերադարձը, Հայտ. 12:12.....	218
Մարդկային իշխանություններ, Հայտ.13.....	221
Ամեղ, անարատ, հանցագուրկ, առանց նախատինքի, Հայտ.14:5.....	233
Ժամը, Հայտ. 14:7.....	235
Աստվածաշնչի մոտեցումը ակոհոլի և հարբեցողության հանդեպ, Հայտ. 14:10.....	237
Փառք (<i>doxa</i>), Հայտ. 15:8	250
Նոր Կտակարանի մարգարեություն, Հայտ. 16:6.....	252
Կրակ, Հայտ. 16:8.....	256
Դիվական (անմաքուր ոգի) հրեշտակներ և դևեր, Հայտ. 16:13.....	258
Տերմիններ Երկրորդ Գալստյան համար, Հայտ. 16:15.....	260
Կործանել, ավերել, ապականել (<i>phtheirō</i>), Հայտ. 19:2.....	281
Հավատք, վստահություն և հավատարմություն Հին Կտակարանում (ἰσχυ), Հայտ. 19:4.....	282
«Ճշմարտություն» (գաղափարը) Հովհաննեսի գրվածքներում, Հայտ. 19:11.....	290
«Ճշմարիտ» (տերմինը) Հովհաննեսի գրվածքներում, Հայտ. 19:11.....	291
Արդարություն, Հայտ. 19:11.....	291
<i>Logos</i> /logos տերմինի երբայերեն և հունարեն նշանակությունները (Հովհ.1:1), Հայտ. 19:13.....	295
Հիսուս Նազովրեցի, Հայտ. 22:16.....	329
Երրորդությունը, Հայտ. 22:17.....	330
Մարանաթա, Հայտ. 22:20.....	332

ԱՅՍ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

- AB Խարիսի Աստվածաշնչյան մեկնաբանությունները, իսր. Ուիլյամ Ֆոքսուել և Դեյվիդ Նոել Ֆրիդմեն/ Anchor Bible Commentaries, ed. William Foxwell Albright and David Noel Freedman
- ABD Խարիսի Աստվածաշնչի Բառարան (6 հատոր), իսր. Դեյվիդ Նոել Ֆրիդմեն/ Anchor Bible Dictionary 6 vols., ed. David Noel Freedman
- AKOT Հին Կտակարանի Վերլուծական Բանալի, Ջոն Ջոզեֆ Օուենս/ Analytical Key to the Old Testament by John Joseph Owens
- ANET Մերձավոր Արևելքի Հնագույն Տեքստեր, Ջեյմս Բ.Պրիտչարդ /Ancient Near Eastern Texts, James B. Pritchard
- BDB Հին Կտակարանի եբրայերեն և անգլերեն բառարան, Ֆ.Բրաուն, Ս.Ռ.Դրայվերի և Ս.Ա. Բրիգգ/ A Hebrew and English Lexicon of the Old Testament by F. Brown, S. R. Driver and C. A. Briggs
- IDB Մեկնաբանի Աստվածաշնչյան Բառարան, (4 հատոր), իսր. Ջորջ Ա.Բաթրիք/ The Interpreter's Dictionary of the Bible (4 vols.), ed. George A. Buttrick
- ISBE Միջազգային Ստանդարտ Աստվածաշնչի Հանրագիտարան, (5 հատոր), իսր. Ջեյմս Օր/ International Standard Bible Encyclopedia 5 vols., ed. James Orr
- JB Երուսաղեմի Աստվածաշունչ /Jerusalem Bible
- JPSOA Սուրբ Գիրքը ըստ Մազորեթիկ Տեքստի` Նոր Թարգմանություն/ The Holy Scriptures According to the Masoretic Text: A New Translation
Ամերիկայի հրեական հրատարակչությունը / (The Jewish Publication Society of America)
- KB Հին Կտակարանի եբրայերեն և արամեերեն բառարան, Լյուդվիգ Կոհլեր և Վոլտեր Բաումգարտներ/ The Hebrew and Aramaic Lexicon of the Old Testament by Ludwig Koehler and Walter Baumgartner
- LAM Սուրբ Գիրքը հնագույն արևելյան ձեռագրերից (the Peshitta), Ջորջ Մ.Լամսա/ The Holy Bible From Ancient Eastern Manuscripts (the Peshitta) by George M. Lamsa
- LXX Մեպտուագիդ (հունարեն-անգլերեն) Չոնդերվան, 1970/ Septuagint (Greek-English) by Zondervan, 1970
- MOF Աստվածաշնչի Նոր Թարգմանություն, Ջեյմս Մոֆֆատ/ A New Translation of the Bible by James Moffatt
- MT Մազորեթիկ եբրայերեն տեքստ/ Masoretic Hebrew Text
- NAB Նոր Ամերիկյան Աստվածաշնչյան Տեքստ/ New American Bible Text
- NASB Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչ /New American Standard Bible
- NEB Նոր Անգլերեն Աստվածաշունչ /New English Bible
- NET Նոր Անգլերեն Թարգմանություն, երկրորդ Բետա հրատարակչություն / New English Translation, Second Beta Edition
- NIDOTTE Հին Կտակարանի աստվածաբանության և էկզեգետիկայի նոր միջազգային բառարան, 5 հատոր, իսր. Ուիլլեմ ՎանԳեմերեն/ New International Dictionary of Old Testament Theology and Exegesis (5 vols.), ed. Willem VanGemeren

NIV	Նոր Միջազգային Տարբերակ /New International Version
NJB	Նոր Երուսաղեմի Աստվածաշունչ/ New Jerusalem Bible
NRSV	Նոր Վերանայված Ստանդարտ Աստվածաշունչ/ New Revised Standard Bible
OTPG	Հին Կտակարանի քերականական վերլուծության ուղեցույց, Թոդ Ս.Բիլի, Ուիլյամ Ա.Բենկս և Գոլին Սմիթ/ Old Testament Passing Guide by Todd S. Beall, William A. Banks and Colin Smith
REB	Վերանայված Անգլերեն Աստվածաշունչ /Revised English Bible
RSV	Վերանայված Ստանդարտ Տարբերակ /Revised Standard Version
SEPT	Սեպտուագինդ, հունարեն-անգլերեն, Ջոնդերվան, 1970 /The Septuagint (Greek-English) by Zondervan, 1970
TEV	Այսօրվա Անգլերեն Տարբերակ, Աստվածաշնչյան Ընկերությունների Միությունից / Today's English Version from United Bible Societies
YLT	Յանգի Սուրբ Գրքի Բառացի Թարգմանությունը, Ռոբերտ Յանգ/ Young's Literal Translation of the Holy Bible by Robert Young
ZPEB	Ջոնդերվանի Պատկերազարդ Աստվածաշնչի Հանրագիտարան, (5 հատոր)իսմբ. Մերրիլ Ս. Տեննիյ /Zondervan Pictorial Encyclopedia of the Bible (5 vols.), ed. Merrill C. Tenney

Հեղինակի խոսքը: Ինչպե՞ս կարող է այս մեկնաբանությունը օգնել ձեզ:

Աստվածաշնչյան մեկնաբանությունը մտային և հոգևոր գործընթաց է, որը փորձում է հասկանալ հեղինակի ներշնչվածության չափը բուն հեղինակի մոտ, այնպես որ Աստծո պատգամը հասկանալի և կիրառելի լինի մեր օրերում:

Հոգևոր գործընթացը որոշիչ է, բայց նաև դժվար է այն սահմանել: Դա իր մեջ ներառում է բաց լինել Աստծո առաջ և հեշտությամբ ընդունել Աստծո ասածները: Մարդու մեջ պետք է լինի ծարավ (1) Նրա հանդեպ, (2) Նրան ճանաչելու, և (3) Նրան ծառայելու հանդեպ: Այս գործընթացը ներգրավվում է աղոթք, խոստովանություն և կյանքի փոխելու պատրաստակամությունը: Մուրբ Հոգին մեկնաբանության գործընթացում որոշիչ դեր է խաղում, բայց ինչու՞ անկեղծ, աստվածապաշտ քրիստոնյաները Աստվածաշունչը տարբեր կերպ են հասկանում: Դա մեր համար մնում է գաղտնիք:

Գործընթացի մտային կողմը նկարագրել հեշտ է: Մենք պետք է լինենք հետևողական և նախապատվությունը տանք տեքստին, այլ ոչ թե անձնական կամ եկեղեցական համոզմունքներին: Մենք բոլորս էլ գտնվում ենք որոշակի պատմական պայմանների շրջանակներում: Մեզնից ոչ ոք չի կարող լինել օբյեկտիվ և չեզոք մեկնաբան: Այս մեկնաբանությունը առաջարկում է ուշադիր և տրամաբանական մոտեցում, որը հիմնված է մեկնաբանության երեք սկզբունքների վրա, որոնք կօգնեն մեզ խուսափել մոլորություններից:

Առաջին սկզբունք

Առաջին սկզբունքը ամփոփվում է նրանում, որ պետք է հաշվի առնել պատմական իրավիճակը, երբ գրվել է համապատասխան գիրքը, որը առիթ է հանդիսացել հեղինակի համար գրելու տվյալ գիրքը: Բուն հեղինակն ուներ նպատակ և պատգամ՝ փոխանցելու մարդկանց: Տեքստը չի կարող մեզ համար նշանակել մի բան, որը երբեք չի նշանակել բուն, ներշնչված հեղինակին: Դա հասկանալու բանալին ոչ թե մեր պատմական, զգացմունքային, մշակութային, անձնական կամ եկեղեցական կարիքն է, այլ հեղինակի մտադրությունը: Կիրառությունը սերտ կապված է մեկնաբանության հետ, բայց ճիշտ մեկնաբանությունը միշտ պետք է նախորդի կիրառությանը: Հարկ է հստակ ընդգծել, որ աստվածաշնչյան յուրաքանչյուր տեքստ ունի մեկ և միայն մեկ իմաստ: Դա այն իմաստն է, որը հենց բուն աստվածաշնչյան հեղինակը, գտնվելով Մուրբ Հոգու գործության ներքո, մտադրվել է փոխանցել իր ժամանակակիցներին: Իսկ հենց այդ իմաստն էլ կարող է ունենալ լայն կիրառություն տարբեր մշակույթներում և իրավիճակներում: Բայց բոլոր կիրառությունները պետք է կապակցված լինեն գլխավոր ճշմարտության հետ, որը փոխանցում է մեզ հեղինակը: Այդ իսկ պատճառով, այս ուսուցողական սերտողության մեկնաբանությունը կազմված է այնպես, որ կտա անհրաժեշտ պատկերացում աստվածաշնչյան յուրաքանչյուր գրքի մասին:

Երկրորդ սկզբունք

Երկրորդ սկզբունքը գրական բաժինները ճիշտ որոշելու համար է: Յուրաքանչյուր աստվածաշնչյան գիրք իրենից ներկայացնում է մեկ ամբողջական փաստաթուղթ: Մեկնաբաններն իրավունք չունեն առանձնացնել ճշմարտության մեկ ասպեկտ՝ մերժելով մյուսները: Ուստի, մենք պետք է հակված լինենք հասկանալու աստվածաշնչյան ամբողջ գրքի նպատակը, նախքան գրական բաժինների առանձին մեկնաբանելը: Գրքի առանձին մասերը-գլուխներ, պարբերություններ կամ համարներ-չեն կարող նշանակել այն ինչ չի նշանակում ամբողջ բաժինը: Մեկնաբանությունը պետք է ամբողջի դեղուկտիվ մոտեցումից գնա դեպի մասերի ինդուկտիվ մոտեցմանը: Ուստի այս սերտողության մեկնաբանությունը կօգնի վերլուծել յուրաքանչյուր գրական բաժնի կառուցվածքը ըստ

պարբերությունների: Գրքի գլուխների և համարների բաժանումները ներշնչված չեն, բայց օգնում են մեզ որոշել տեքստի կառուցվածքային սահմանները:

Մեկնաբանությունը պարբերության մակարդակի վրա- ոչ թե նախադասության, արտահայտության կամ բառի կարող է հանդիսանալ իբրև բանալի, բացահայտելու աստվածաշնչյան հեղինակի մտադրության իմաստը: Պարբերությունները հիմնված են ընդհանուր թեմայի վրա, հաճախ կոչվում է թեմա կամ թեմատիկ նախադասություն: Պարբերության մեջ յուրաքանչյուր բառ, արտահայտություն, բառակապակցություն և նախադասություն ինչ-որ կերպ կապված է այս ընդհանուր թեմային: Դրանք սահմանափակում, ընդարձակում, բացատրում են և/կամ հարցադրում: Ճիշտ մեկնաբանելու միակ ճշմարիտ կերպը՝ հետևել հեղինակի մտքին պարբերությունից պարբերություն, աստվածաշնչյան գրքի մի բաժնից մյուսին: Այս մեկնաբանության սերտողությունը նախատեսված է օգնել մարդկանց՝ ժամանակակից անգլերեն թարգմանությունները համեմատելու համար: Այս թարգմանություններն ընտրվել են, որովհետև նրանք հետևեցին թարգմանության տարբեր մոտեցումներին:

1. Հունարեն Նոր Կտակարանի չորրորդ վերստուգված սրբագրություն, հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից (UBS⁴): Այս թարգմանությունը պարբերությունների է բաժանվել ժամանակակից գիտնականների կողմից:
2. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV) - սա բառացի թարգմանություն է, հիմնված հին հունարեն ձեռագրերի ավանդության վրա, որը կոչվում է TextusReceptus (համընդհանուր ընդունված տեքստ): Այս թարգմանության պարբերությունների բաժանումները ավելի երկար են քան մյուս թարգմանություններինը: Այս երկար բաժինները օգնում են ավելի հեշտ տեսնել ընդհանուր թեմամները:
3. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV) - կատարելագործված բառացի թարգմանություն է: Սա կազմում է միջանկյալ կետ հետևյալ երկու ժամանակակից թարգմանությունների միջև: Այս թարգմանության պարբերությունների բաժանումները բավականին օգտակար են թեմաները ճիշտ որոշելու համար:
4. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV)- դինամիկ հավասարազոր թարգմանություն է հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից: Սա փորձում է Աստվածաշունչը թարգմանել այնպես, որ ժամանակակից անգլիախոս ընթերցողը կամ քարոզիչը կարողանա հասկանալ հունարեն տեքստի իմաստը: Հաճախ, հատկապես Ավետարաններում, պարբերությունների բաժանումը ավելի շատ կապված է խոսացողի հետ քան թեմայի, այնպես ինչպես NIV (Նոր Միջազգային Թարգմանություն) է: Մեկնաբանության այսպիսի մոտեցումը օգտակար չէ: Հետաքրքիր է նշել, որ թե UBS⁴ և թե TEV հրատարակված են նույն կազմակերպության կողմից, բայց նրանց պարբերությունների բաժանումները տարբեր են:
5. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB)- դինամիկ հավասարազոր թարգմանություն է, հիմնված ֆրանսերեն կաթոլիկ թարգմանության վրա: Սա շատ օգտակար է համեմատած եվրոպական մոտեցման հետ պարբերությունների բաժանումների առումով:
6. 1995-ի Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշնչի վերստուգած թարգմանությունը (NASB), որը բառացի թարգմանություն է: Այս մեկնաբանության մեջ ես օգտվել եմ այս թարգմանությունից:

Երրորդ սկզբունք

Երրորդ սկզբունքը կայանում է Աստվածաշնչի տարբեր թարգմանություններ կարդալու մեջ, որպեսզի կարողանալ ընկալել լայնամասշտաբ հնարավոր իմաստը (իմաստային դաշտ/ semantic) որ կարող են ունենալ աստվածաշնչյան բառերն ու արտահայտությունները: Հաճախ հունարեն արտահայտությունը կամ բառը կարելի է հասկանալ մի քանի ձև: Այս տարբեր թարգմանությունները օգնում են նկատել այդ առանձնահատկությունները և օգնում հասկանալ ու բացատրել հունարեն ձեռագրերի տարբերությունները: Սրանք չեն ազդում վարդապետական հարցերի վրա, բայց օգնում են մեզ ավելի մոտ լինել բնագրին:

Այս մեկնաբանությունը ուսումնասիրողին առաջարկում է մեթոդ, բավականին արագ ստուգելու իր սեփական հասկացողությունը տեքստի վերաբերյալ: Այն չի նշանակում ինչ-որ միանշանակ մեկնաբանություն, այլ ավելի հակված է տալ լրացուցիչ տեղեկություն և մտածելու կարողություն: Հաճախ, այլ աստվածաշնչյան հնարավոր մեկնաբանություններ օգնում են մեզ ձերբազատվել սեփական տեսակետներից և չլինել այդքան սահմանափակ, դոգմատիկ և աղանդավորական: Մեկնաբանները պետք է պատկերացում ունենան հնարավորինս շատ մեկնաբանությունների մասին, որպեսզի գիտակցե, թե որքան երկիմաստ կարող են լինել հին տեքստերը: Ապշեցուցիչ է, թե ինչքան քիչ համաձայնություն կա քրիստոնյաների միջև, որոնք իրենց համար Աստվածաշունչը հռչակում են որպես ճշմարտության աղբյուր:

Ժամանակին այս սկզբունքները օգնել են ինձ հաղթահարել շատ համոզմունքներ, բառացիորեն պարտադրելով ինձ ծայրաստիճան ուշադիր վերաբերվելու հին բնագրերին և ձեռագրերին: Հույս ունեմ, որ դրանք օրհնություն կլինեն նաև ձեզ համար:

Բոբ Աթլի
Հունիս 27, 1996

ԻՆՉՊԵՍ ՃԻՇՏ ԿԱՐԴԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ: ՍՏՈՒԳՎԱԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Իր մեկնաբանություններում հաջորդում է դոկտոր Բոբ Աթլիի հերմենևտիկ փիլիսոփայության և դրանում օգտագործված ընթացակարգերի հակիրճ բացատրությունը:

Կարո՞ղ ենք մենք ճանաչել ճշմարտությունը: Որտե՞ղ է այն գտնվում: Կարո՞ղ ենք այն ստուգել տրամաբանությամբ: Կա՞ր արդյոք գերագույն հեղինակություն: Կա՞ր արդյոք գերագույն հեղինակություն: Կա՞ր արդյոք իրականում ինչ-որ անկասկած և կատարյալ մի բան, որը կարող է շարժել մեր կյանքը և ամբողջ աշխարհը: Ո՞րն է կյանքի իմաստը: Ինչու՞ ենք մենք այստեղ: Ու՞ր ենք գնում: Այս հարցերն այն հարցերն են, որոնց շուրջ լրջորեն խորհել են մտավորականները և որոնք հանգիստ չեն տվել մարդկային բանականությանը ժամանակի սկզբից սկսած (Ժող. 1:13-18; 3:9-11): Ես հիշում եմ իմ անձնական որոնումները իմ սեփական կյանքի կենտրոնի համար, ինչի շուրջ ամեն ինչ պետք է պատվի: Ես Հիսուսին, որպես իմ կյանքի Տեր ու Փրկիչ ընդունել եմ փոքր հասակում, հիմնականում հիմնվելով իմ ընտանիք վկայությունների վրա: Ես երբ չափահաս դարձա, իմ և իմ աշխարհի մասին հարցերը նույնպես մեծացան: Պարզ մշակութային և կրոնական կլիմաները իմաստ չմտցրեցին այն գործնական կյանքի փորձառության մեջ, որի մասին ես կարդացել կամ առընչվել եմ: Դա շփոթության, փնտրտությունների, կրքոտ ցանկությունների ժամանակն էր, և հաճախ անհույս լինելու զգացողությունը, որը գոյություն ուներ դաժան, իրական աշխարհում, որտեղ ես ապրում էի:

Շատերը պնդում էին, որ իրենք ունեն այս հիմնական հարցերի պատասխանները, բայց ուշադիր և երկար մտածելուց հետո, ես հայտնաբերեցի, որ այդ պատասխանները հիմնված էին (1) անձնական փիլիսոփայությունների, (2) հին առասպելների, (3) անձնական փորձառությունների, կամ (4) հոգեբանական պատկերացումների վրա: Իսկ ինձ հարկավոր էր որոշ պնդումներ, որոշակի ապացույցներ, խելացի փաստարկներ, որի վրա կարող էի կառուցել իմ աշխարհայացքը, իմ ամբողջականության կենտրոնը, իմ կյանքի իմաստը: Ես այդ ամենը ձեռք բերեցի Աստվածաշնչի ինքնուրույն սերտորոշության ժամանակ: Ես սկսեցի փնտրել ապացույցներ վստահելի լինելու մասին, որոնք գտա (1) Աստվածաշնչի պատմական վստահելիությունը, ինչը հաստատվում էր հնէաբանների կողմից, (2) Հին Կտակարանի մարգարեությունների ճշտագրիտ իրականացումը, (3) 1600 տարիների ընթացքում գրված աստվածաշնչյան պատգամի համաձայնեցվածությունն ու միասնականությունը, և (4) մարդկանց անձնական վկայությունները, որոնց կյանքերը ամբողջությամբ փոխվել էին Աստվածաշնչի հետ շփվելուց հետո: Քրիստոնեություն, որպես հավատքի միացյալ համակարգ, ունի կարողություն լուծելու մարդկային կյանքի բարդ հարցերն ու խնդիրները: Այդ ամենը միասին ոչ միայն ինձ տվեց հստակ աշխարհայացքի համակարգ, այլ աստվածաշնչյան հավատքի փորձառություն, որն իմ կյանքում բերեց ուրախություն և կայունություն:

Ես հասկացա, որ գտել էի իմ կյանքի այդ ամբողջականության կենտրոնը՝ Քրիստոսը, որին ես ճանաչեցի Սուրբ Գրքի միջոցով: Դա հիասքանչ փորձառություն էր, զգացմունքային թեթևացում: Սակայն ես մինչև հիմա հիշում եմ այն ցնցումն ու ցավը, երբ իմ առջև բացվեցին այն փաստերը, թե ինչքան շատ հիմնավորված, բայց տարբեր մեկնաբանություններ կան, երբեմն նույնիսկ նույն եկեղեցիների և աստվածաբանական դպրոցների միջև: Աստվածաշնչի ներշնչվածությունը կամ վստահելիությունը հաստատելը ընթացքի վերջը չէր, այլ միայն սկիզբը: Ինչպե՞ս կարող եմ վստահել կամ մերժել տարբեր և իրարամերժ մեկնաբանությունները հասկանալու համար բարդ աստվածաշնչյան տեքստերը, եթե նրանցից ամեն մեկը առանձին ներկայացնում է դրա հեղինակությունը և վստահության արժանի լինելը: Այս առաջադրանքը դարձավ իմ կյանքի նպատակն ու հաբատքի ուխտագնացությունը: Ես գիտեի, որ իմ հավատքն առ Քրիստոս բերել էր

ինձ մեծ խաղաղություն և ուրախություն: Իմ միտքը փափագում էր գտնել ինչ-որ բացարձակ ճշմարտություններ (1) իմ մշակույթի արժեքների հետ կապված (փոստ-մոդեռնիստական); (2) իրար բախվող կրոնական համակարգերի դոգմատիզմը (աշխարհի կրոններ); և (3) հարանվանական գոռոզամտություն: Իմ որոնումների ընթացքում իրական վստահելի մոտեցումների հին գրականության մեկնաբանության ժամանակ, ես զարմանալի կերպով հայտնաբերեցի իմ սեփական շփոթությունները՝ պատմական, մշակութային, հարանվանական և գործնական փորձառության հետ կապված: Ես հաճախ կարդացել եմ Աստվածաշունչը, որպեսզի գտնեմ պնդումներ իմ կարծիքների և տեսանկյունների համար: Ես օգտագործեցի այն որպես դոգմայի աղբյուր, որպեսզի գրոհեմ ուրիշների վրա, վերահաստատելով իմ սեփական անհուսալի և անկայուն կարծիքները: Այնքան ցավալի էր ինձ համար ընդունել այդ փաստը:

Չնայած, ես երբեք չեմ կարող ամբողջությամբ օբյեկտիվ լինել, ես կարող եմ Աստվածաշնչի ավելի լավ ընթերցող լինել: Ես կարող եմ սահմանափակել իմ շեղումները ճանաչելով և ընդունելով դրանց առկայությունը: Ես դեռևս ազատագրված չեմ դրանցից, բայց դիմադրել եմ իմ իմ տկարությունները: Մեկնաբանը հաճախ Աստվածաշունչը ճիշտ ընթերցելու ամենավատ թշնամին է: Թույլ տվեք ինձ, սիրելի ընթերցող, թվարկել կանխակարծիքներից մի քանիսը, որոնց վրա է հիմնված Աստվածաշնչի իմ ուսումնասիրությունը, որպեսզի դուք կարողանաք ինձ հետ միասին ստուգել դրանք:

I. Կանխակարծիքներ

1. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչն միակ ճշմարիտ Աստծո միակ ներշնչված հայտնությունն է: Ուստի, այն պետք է մեկնաբանվի բուն աստվածային հեղինակի (Մուրբ Հոգու) մտադրության լույսի ներքո, մարդ-գրողների միջոցով, որոնք ապրել են որոշակի պատմական իրավիճակներում:
2. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը գրվել է սովորական մարդու համար և բոլոր մարդկանց համար: Աստված գտավ այնպիսի միջոց, որպեսզի հստակ մեզ ասի այն ամենը, ինչ եղել է տվյալ պատմական և մշակութային կոնտեքստի մեջ: Աստված չի թաքցնում ճշմարտությունը- Նա ուզում է, որ մենք հասկանանք: Աստվածաշունչը չպետք է մեզ համար նշանակի մի բան, որը չի նշանակել առաջին ընթերցողի կամ լսողի համար: Այն հասկանալի է ամենահասարակ մարդու համար, և իր մեջ պարունակում է սովորական մարդկային հաղորդակցության ձևեր և մեթոդներ:
3. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչն ունի ամբողջական, միավորված պատգամ և նպատակ: Այն չի հակասում ինքն իրեն, չնայած որ իր մեջ պարունակում է դժվար և պարադոքսային հատվածներ: Այսպիսով, Աստվածաշնչի լավագույն մեկնաբանը հենց ինքն՝ Աստվածաշունչն է:
4. Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր հատված (բացի մարգարեություններից) ունի մեկ և միայն մեկ իմաստ՝ հիմնված բուն, ներշնչված հեղինակի մտադրության վրա: Չնայած մենք երբեք չենք կարող բացարձակ վստահ իմանալ հեղինակի մտադրությունը, շատ ցուցիչներ կօգնեն մեզ որոշել դրանք.
 - ա. գրական ժանրը՝ ընտրված պատգամի փոխանցման համար
 - բ. պատմական կոնտեքստը և/կամ որևէ իրավիճակ, որը առիթ է հանդիսացել տեքստը գրելու համար
 - գ. ամբողջ գրքի գրական կոնտեքստը, ինչպես նաև յուրաքանչյուր գրական բաժին
 - դ. գրական բաժինների կառուցվածքի ուրվագիծը կամ պլանը, կապված ամբողջ պատգամի հետ


- ե. յուրահատուկ քերականական առանձնահատկություններ պատգամը փոխանցելու համար
- զ. ընտրված բառեր՝ պատգամը ներկայացնելու համար

Այս պահերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը միանգամայն անհրաժեշտ է աստվածաշնչյան տեքստի ուսումնասիրության համար: Բայց նախքան Աստվածաշնչի ճիշտ ընթերցանության իմ մեթոդը բացատրելը, թույլ տվեք նկարագրել մի քանի ոչ պիտանի մեթոդներ, որոնք օգտագործվում են մեր օրերում, ստեղծելով մեկնաբանության բազմազանություն, որոնցից պետք է համառորեն խուսափել:


II. Անհամապատասխան կամ ոչ պիտանի մեթոդներ

1. Անտեսելով աստվածաշնչյան գրքերի գրական կոնտեքստը, և օգտագործելով յուրաքանչյուր նախադասություն, արտահայտություն կամ նույնիսկ առանձին բառեր, իբրև հաստատված ճշմարտություն, որը ոչ մի կապ չունի հեղինակի մտադրության կամ ավելի լայն կոնտեքստի հետ: Սա հաճախ կոչվում է «անհրաժեշտ ապացույցներ տեսքի մեջ»:
2. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, փոխարինելով ենթադրյալ պատմական կոնտեքստով, որն ունի շատ քիչ կամ ընդհանրապես չունի հիմք բուն տեքստից:
3. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, այն կարդալ որպես առավոտյան լրագիր, որը հիմնականում գրված է ժամանակակից անհատ քրիստոնյաների համար:
4. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, փորձել այլաբանորեն մեկնաբանել այն, փոխելով տեքստի իմաստը փիլիսոփայական/աստվածաբանական քննարկման, որը ոչ մի կապ չունի առաջին ունկնդիրների և բուն հեղինակի մտադրությանը:
5. Անտեսելով ուղերձի իմաստը, փոխարինելով ինչ-որ մեկի սեփական աստվածաբանական համակարգի հետ, սիրած վարկածիկամ կենսական նպատակահարմարությամբ, որը ոչ մի կապ չունի բուն հեղինակի նպատակի և պատգամի իրական իմաստի հետ: Այսպիսի բան հաճախ պատահում է Աստվածաշնչի սկսնակ ընթերցողների հետ, օգտագործելով այս օրինակը սեփական հեղինակությունը պնդելու համար: Սա հաճախ վերաբերվում է որպես «ընթերցողի արձագանքը» (ինչ է այն նշանակում ինձ համար) մեկնաբանությանը:

Բոլոր գրավոր ինֆորմացիայի մարդկային հաղորդակցության մեջ գոյություն ունի երեք կապակցված բաղադրիչներ:



Անցյալում Աստվածաշնչի ընթերցանության տարբեր մեթոդներ կենտրոնացել են երեք բաղադրիչներից մեկի վրա: Բայց որպեսզի իրապես հաստատվի Աստվածաշնչի եզակի ներշնչվածությունը, այս սխեման ավելի հարմար է:



Իրականում, բոլոր երեք բաղադրիչները պետք է ներգրավված լինեն մեկնաբանության գործընթացի մեջ: Երբ իմ առջև դրված է առաջադրանք, գտնել ինչ-որ մի բանի պնդում, իմ ամբողջ մեկնաբանությունը կենտրոնացվում է առաջին երկու բաղադրիչների վրա՝ բուն հեղինակը և տեքստը: Հնարավոր է այս ամենի միջով չափ առկա է իմ ոչ ճիշտ գործածումը, որի հետ ես ստիպված եմ եղել բախվել (1) տեքստերին չհիմնավորված այլաբանական կամ հոգևոր իմաստ տալ և (2) «ընթերցողի արձագանքը» մեկնաբանություն (ինչ է այն նշանակում ինձ համար): Չարաշահում կարող է ծագել յուրաքանչյուր փուլում: Մենք միշտ պետք է ստուգենք մեր շարժատիթերը, համոզմունքները, ուսումնասիրության մեթոդները և գործնական կիրառությունները: Բայց ինչպե՞ս այս ամենը հսկել, եթե չորվի մեկնաբանության հստակ սահմաններ, հստակ չափանիշներ: Եվ հենց այս իրավիճակում է հեղինակի մտադրությունը և տեքստի կառուցվածքը ներկայացնում են մի շարք չափանիշներ, որոնք թույլ են տալիս ինձ որոշել հնարավոր մեկնաբանության թույլատրելի սահմանները:

Այսպիսով Աստվածաշնչի ընթերցանության այս ոչ պիտանի մեթոդների լույսի ներքո, որո՞նք են Աստվածաշնչի ճիշտ ընթերցանության և մեկնաբանության այն մի քանի հնարավոր մոտեցումները, որոնք տալիս են որոշակի վստահության աստիճան և տրամաբանորեն չեն հակասում իրար:

III. Աստվածաշնչի ճիշտ ընթերցանության հնարավոր մեթոդները

Այստեղ ես չեմ քննարկում մեկնաբանության հատուկ ժանրերի յուրահատուկ մեթոդներ, այլ ներկայացնում եմ ընդհանուր հերմենևտիկական սկզբունքներ, որ ընդունելի են ամեն տեսակ աստվածաշնչյան տեքստերի համար: Լավ գիրք է տարբեր ժանրերի մեկնաբանության առանձնահատկությունների մասին «Ինչպե՞ս կարդալ Աստվածաշունչը իր բոլոր արժեքներով» Գորդոն Ֆի և Դուգլաս Ստուարտ, տպագրված Չոնդերվան» (How To Read The Bible For All Its Worth, by Gordon Fee and Douglas Stuart, published by Zondervan):

Իմ մեթոդի մեջ, նախևառաջ, կենտրոնանում եմ այն ընթերցողի վրա, ով ինքնուրույն չորս անգամ կարդում է աստվածաշնչյան տեքստը, և ամեն անգամ թույլ տալիս, որ Սուրբ Հոգին մեկնաբանի դրա նշանակությունը: Այդ կերպ, Սուրբ Հոգին տեքստը և ընթերցողը հարտնվում են առաջին տեղում և ոչ թե երկրորդական: Այս մոտեցումը նաև պաշտպանում է ընթերցողին մեկնաբանների կողմից հասցվելիք մեծ ներգործությունից: Մի անգամ այսպիսի արտահայտություն եմ լսել «Աստվածաշունչը ծատ լույս է սփռում մեկնաբանությունների վրա»: Եվ սա չի նշանակում, որ տեքստի ուսումնասիրության համար բավարար չեն մեկնաբանությունները, բայց դրանք կարելի է օգտագործել զգույշ և համապատասխան ժամանակին:

Մենք պետք է կարողանանք մեր մեկնաբանությունների համար պնդումներ գտնել հենց տեքստից: Հինգ բնագավառներ, որոնք տալիս են մեզ, համենայնդեպս, որոշակի վստահություն:

1. պատմական կոնտեքստը

2. գրական կոնտեքստ
3. քերականական կառուցվածքներ (շարահյուսություն)
4. այն ժամանակվա բառային կիրառությունը
5. համապատասխան գուգահեռ հատվածներ
6. ժանրը

Մեր մեկնաբանությունը պետք է լինի բանական և տրամաբանական: Աստվածաշունչը մեր միակ հավատքի և ճիշտ գործնական ապրելակերպի աղբյուրն է: Ցավալի է, որ քրիստոնյաները հաճախ չեն համաձայնվում այն բանի հետ, ինչ սովորեցնում է Աստվածաշունչը, կամ ինչ-որ այն պնդում է: Ընթերցանության չորս շրջանները անհրաժեշտ են այն բանի համար, որ կարողանանք տեսնել բոլոր անհրաժեշտ առանձնահատկությունները ճիշտ մեկնաբանելու համար:

1. Ընթերցանության առաջին շրջան
 - ա. Մեկ շնչով կարդացեք գիրքն ամբողջությամբ: Կարդացեք այն ևս մեկ անգամ ուրիշ թարգմանությունով, ցանկալի է ուրիշ թարգմանության տեսանկյունից
 - (1) բառացի (NKJV, NASB, NRSV)
 - (2) դինամիկ հավասարազոր (TEV, JB)
 - (3) վերապատմում (Living Bible, Amplified Bible)
 - բ. Գտեք ամբողջ գրվածքի կենտրոնական նպատակը: Որոշեք նրա թեման:
 - գ. Առանձնացրեք (եթե հնարավոր է) գրական բաժինը, գլուխը, պարբերությունը կամ նախադասությունը, որը հստակ արտահայտում է այս գլխավոր նպատակը կամ թեման:
 - դ. Որոշեք ստեղծագործության գրական ժանրը
 - (1) Հին Կտակարան
 - ա) Եբրայերեն պատմություն
 - բ) Եբրայերեն պոեզիա (իմաստուն գրականություն, սաղմոս)
 - գ) Եբրայերեն մարգարեություն (արձակ բանաստեղծական)
 - դ) Օրենսգիրք
 - (2) Նոր Կտակարան
 - ա) Պատմություններ (Ավետարաններ, Գործք)
 - բ) Առակներ (Ավետարաններ)
 - գ) Նամակներ/թղթեր
 - դ) Վախճաբանական գրականություն
2. Ընթերցանության երկրորդ շրջան
 - ա. Նորից կարդացեք գիրքն ամբողջությամբ, փորձելով գտնել հիմնական թեմաները կամ քննարկվող հարցերը:
 - բ. Ընդգծեք գլխավոր թեմաները, մեկ նախադասությամբ շարադրեք դրանց բովանդակությունները:
 - գ. Համեմատեք ձեր եզրակացությունը այս ամենի մասին սսերտողության գրականության հետ:
3. Ընթերցանության երրորդ շրջան
 - ա. Նորից կարդացեք գիրքն ամբողջությամբ, փորձելով գտնել պատմական իրավիճակը և հատուկ իրավիճակը, որն առիթ թ հանդիսացել այդ գիրքը գրվելու համար:

- բ. Թվարկեք պատմական առանձնահատկությունները, որոնք նշված են տվյալ գրքում
 - (1) հեղինակը
 - (2) գրվելու տարեթիվը
 - (3) ում համար է գրվել
 - (4) ինչի համար է գրվել
 - (5) մշակութային կոնտեքստի առանձնահատկությունները, որոնք կապված են գրվելու նպատակի հետ
 - (6) ակնարկ պատմական մարդկանց և իրադարձությունների մասին
- գ. Ընդարձակեք ձեր ուսումնասիրությունը պարբերության մակարդակի վրա և հատկապես գրքի այն հատվածը, որն ուզում եք մեկնաբանել: Միշտ գտեք և ընդգծեք գրական բաժինը: Սա կարող է լինել մի քանի գլուխներ կամ պարբերություններ: Սա կօգնի ձեզ հասկանալ հեղինակի տրամաբանությունն ու տեքստի կառուցվածքը:
- դ. Ստուգեք պատմական իրավիճակի մասին ձեր եզրակացությունները՝ օգտագործելով տեղեկատու ձեռնարկներ:

4. Ընթերցանության չորրորդ շրջան

- ա. Կարդացեք ուսումնասիրվող հատվածը կրկին մի քանի թարգմանություններով
 - (1) բառացի (NKJV, NASB, NRSV)
 - (2) դինամիկ հավասարազոր (TEV, JB)
 - (3) վերապատմում (Living Bible, Amplified Bible)
- բ. Փնտրեք գրական կամ քերականական կառուցվածքներ
 - (1) կրկնվող արտահայտություններ, Եփ. 1:6,12,13
 - (2) կրկնվող քերականական կառուցվածքներ, Հռ. 8:31
 - (3) հակասող գաղափարներ
- գ. Պարզեք հետևյալ պահերը
 - (1) կարևոր բանալի տերմիններ
 - (2) անսովոր տերմիններ
 - (3) կարևոր քերականական կառուցվածքներ
 - (4) բարդ բառեր, արտահայտություններ և նախադասություններ
- դ. Փնտրեք համապատասխան գուգահեռ հատվածները
 - (1) փնտրեք ամենահստակ ուսուցանող հատվածը ձեր թիմային համապատասխան, օգտվելով, ա) «սխտեմատիկ աստվածաբանություն» գրքերից, բ) աստվածաշնչյան թարգմանություն մեկնաբանություններով և տեղեկատվական նյութերով, գ) համաբարբառներից
 - (2) Փնտրեք հնարավոր պարադոքսային զույգեր նույն թեմային պատկանող: Շատ աստվածաշնչյան ճշմարտություններ կան «դիալեկտիկական զույգերի» մեջ; հարանվանական շատ բախումներ առաջանում են տեքստը կիսով չափ ընդունելու համար: Ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է և մենք պետք է փնտրենք ամբողջ պատգամը որպեսզի պահենք մեր մեկնաբանության մեջ սուրբգրային հավասարակշռությունը:
 - (3) Փնտրեք գուգահեռներ նույն գրքի մջ, նույն հեղինակի մոտ և նույն ժանրի տեքստերի մեջ; Աստվածաշունչը իր իսկ սեփական լավագույն մեկնաբանն է, որովհետև այն ունի մեկ հեղինակէ՛ Սուրբ Հոգին:

- ե. Օգտվեք լրացուցիչ ուսուցողական նյութերից, ստուգելու համար ձեր դիտարկումները պատմական կոնտեքստի և կոնկրետ դեպքի շուրջ, կապված գիրքը գրելու հետ
- (1) ուսուցողական Աստվածաշնչեր
 - (2) աստվածաշնչյան հանրագիտարաններ, ձեռնարկներ և բառարաններ
 - (3) աստվածաշնչյան ներածություններ
 - (4) աստվածաշնչյան մեկնաբանություններ (այս փուլում թույլ տվեք հավատացյալներին անցյալի և ներկայի օգնել ձեզ և ուղղել ձեր անձնական սերտողությունը):

IV. Աստվածաշնչի մեկնաբանության կիրառությունը

Հիմա մենք կնայենք կիրառության հարցերին: Դուք բավականին ժամանակ ծախսեցիք, որպեսզի հասկանաք տեքստի սկզբնական նշանակությունը; հիմա ձեր առջև դրված է առաջադրանք դա ճիշտ կիրառել ձեր կյանքում, ձեր մշակույթում: Ես որոշում եմ աստվածաշնչյան տեքստ հեղինակությունը որպես «այն բանի հասկացողություն, թե ինչ է ասել հեղինակն իր ժամանակին, և դրա կիրառությունը մեր օրերում»:

Կիրառությունը պետք է հետևի բուն հեղինակի մտադրության մեկնաբանությանը, թե ժամանակի մեջ և թե տրամաբանությամբ: Մենք չենք կարող կիրառել Աստվածաշնչի հաստատված մեր օրերում մինչև որ չհասկանանք թե ինչ նշանակություն ունեն դա այն ժամանակվա մարդկանց համար, ում համար որ գրվել է դա: Չի կարելի աստվածաշնչյան տեքստին իմաստ տալ, որը երբեք չի բովանդակել:

Այստեղ ձեր ուղեցույցը կլինի մանրամասն ուսումնասիրությունը պարբերությունների մակարդակով (ընթերցանության ցիկլ #3): Կիրառությունը պետք է կատարվի պարբերության մակարդակով և ոչ թե բառի: Բառերն ունեն նշանակություն միայն կոնտեքստում, արտահայտություններն ունեն իմաստ միայն կոնտեքստում, նախադասություններն ունեն իմաստ միայն կոնտեքստում: Միակ ներշնչված անձը, որը ներգրավված է մեկնաբանության գործընթացում դա բուն հեղինակն է: Մենք միայն հետևում ենք նրա առաջնորդությանը Մուրբ Հոգու լուսավորությամբ: Բայց լուսավորումը ներշնչանք չէ: «Այսպես է ասում Տերը» ասելու համար մենք պետք է ամբողջությամբ ենթարկվենք բուն հեղինակի ,տաղրությանը: Կիրառությունը պետք է կապված լինի հիմնականում ամբողջ գրվածքի, հատուկգրական բաժնի և պարբերության մակարդակի մտքի զարգացումը ընդհանուր մտադրության հետ:

Թույլ մի տվեք մեր օրերի խնդիրներն ու պահանջները մեկնաբանեն Աստվածաշունչը, թող Աստվածաշունչը խոսի: Իհարկե, դա մեզանից շատ ջանք է պահանջում, որ կարողանանք տեքստից սկզբունքներ քաղել: Եվ դրանք կգործեն միայն այն ժամանակ, երբ տեքստը հաստատի դա: Դժբախտաբար, շատ անգամ մեր սկզբունքներից շատերը հենց «մերն են», և ոչ թե այն ինչ տեքստն իրականում պարունակում է:

Աստվածաշունչը կիրառելու ժամանակ, շատ կարևոր է հիշել, որ (բացի մարգարեությունից) ամեն մի աստվածաշնչյան տեքստ ունի միայն մեկ իմաստ: Այդ իմաստը կապված է բուն հեղինակի մտադրությանը, որը ներկայացնում է իր օրերի ճգնաժամերն ու կարիքները: Շատ հնարավոր կիրառություններ կարող են դուրս բերվել այս մեկ իմաստից: Տեքստի կիրառությունը հիմնված կլինի կոնկրետ մարդկանց կարիքներից, բայց պետք է կապված լինի բուն հեղինակի տված իմաստին:

V. Մեկնաբանության հոգևոր ասպեկտը

Մինչև այս պահը ես քննարկել եմ տրամաբանական և տեքստային գործընթացը, որպես կարևոր հիմք՝ աստվածաշնչյան տեքստը մեկնաբանելու և կիրառելու համար: Հիմա թույլ տվեք համառոտ շարադրել մեկնաբանության գործընթացի հոգևոր կողմը: Այստեղ ինձ շատ են օգնում հետևյալ քայլերը

1. Աղոթք Սուրբ Հոգու օգնության համար (հմմտ. 1 Կոր. 1:26-2:16).
2. Աղոթք անձնական ներման և գիտակցական մեզբից մաքրվելու համար (հմմտ. 1 Հովհ. 1:9).
3. Աղոթք Աստծուն ճանաչելու մեծ ցանկություն ունենալու համար (հմմտ. Սաղ. 19:7-14; 42:1; 119:1).
4. Բացահայտված ճշմարտության անհապաղ կիրառում քո սեփական կյանքում
5. Մնացեք խոնարհ և պատրաստ սովորելու

Շատ դժվար է պահել հավասարակշռությունը տրամաբանական գործընթացի և Սուրբ Հոգու հոգևոր առաջնորդության միջև: Հետևյալ մեջբերումներն օգնել են հավասարակշռության մեջ պահել այդ երկուսը

1. Ջեյմս Ու. Սայր «Սուրբ Գրքի Աղավաղում», էջ 17-18 (James W. Sire, Scripture Twisting, pp. 17-18):
«Լուսավորումը պայծառացում է բոլոր Աստծո ժողովրդի միտքը, և ոչ թե միայն ինչ-որ հոգևոր բարձր խավի: Աստվածաշնչյան քրիստոնեության մեջ չկա գուրու դասակարգ, ոչ հատուկ լուսավորվածներ, ոչ հատուկ մարդիկ, որոնց միջոցով է միայն ճիշտ մեկնաբանությունը տրվում: Եվ քանի որ Սուրբ Հոգին է տալիս հատուկ պարգևներ իմաստության, գիտության և հոգևոր խորաթափանցության, Նա չի նշանակում այդ պարգևներով օժտված քրիստոնյաներին լինելու Իր Խոսքի միակ հեղինակավոր մեկնաբանողները: Բայց Իր ժողովրդից ամեն մեկը պատասխանատու է սովորելու, խորհելու և մտածելու ամեն ինչ Աստվածաշնչի միջոցով, որը հեղինակություն է բոլորի համար և նաև նրանց համար, ում Աստված տվեց բացառիկ կարողություններ: Ամփոփելով ասեմ, որ ամբողջ այս գրքի ընթացքում ես պնդում եմ, որ աստվածաշունչը Աստծո ճշմարիտ հայտնությունն թ ամբողջ մարդկությանը, այն հանդիսանում է անձեռնմխելի հեղինակություն ամեն ինչում, ինչի մասին որ այն չբացահայտված գաղտնիք չէ, բայց կարող է բավականին լավ հասկանալի լինել սովորական մարդու համար՝ ցանկացած մշակույթ ներկայացնող»:
2. Կյորկեգորա, Բերնարդ Ռամ «Բողոքական աստվածաշնչյան մեկնաբանություն», էջ 75 (Kierkegaard, found in Bernard Ramm, Protestant Biblical Interpretation, p. 75):
Համաձայն Կյորկեգորայի Աստվածաշնչի քերականական, լեքսիկոնային և պատմական սերտորությունը անհրաժեշտ էր, բայց նախևառաջ կարևոր է Աստվածաշնչի ճիշտ ընթերցանությունը: «Որպեսզի Աստվածաշունչը կարդացվի որպես Աստծո Խոսք, պետք է կարդալ այն սաստիկ վախենալով, ծածուկ, լարված սպասումով, Աստծո հետ հարաբերություն ունենալով: Աստվածաշունչ կարդալ չմտածելով կամ անփութորեն, կամ ակադեմիական և մասնագիտական մոտեցմամբ, նշանակում է Աստվածաշունչը չկարդալ որպես Աստծո Խոսք: Բայց երբ մարդը կարդում է այն, որպես սիրային նամակ, այդժամ նա իրականում կարդում է այն որպես Աստծո Խոսք»:
3. Հ. Հ. Ռոլուեյ «Աստվածաշնչի պատշաճությունը», էջ 19 (H. H. Rowley in The Relevance of the Bible, p. 19):

«Աստվածաշնչի ոչ մի մտային հասկացություն, որքան էլ որ այն ամբողջական լինի» չի կարող բացահայտել նրա բոլոր գանձերը: Այսպիսի հասկացողությամբ չի կարելի չարաշահել, քանի որ այն հանդիսանում է անհրաժեշտ բաղկացուցիչ մասը, որը ապահովում է ամբողջական հասկացողությունը: Բայց, որպեսզի ամբողջական լինի, այն պետք է հոգևոր գանձերը առաջնորդի հոգևոր հասկացողության: Իսկ հոգևոր հասկացողության: Իսկ հոգևոր հասկացողության համար անհրաժեշտ է ավելին քան միայն մտային զգոնությունը: Հոգևոր բաները կարելի է տեսնել միայն հոգևոր տեսողությամբ, դրա համար Աստվածաշունչ ուսումնասիրող մարդը պետք է գտնվի հոգևոր զգայունության իրավիճակում, ունենա խիստ փափագ Աստծուն փնտրելու, որպեսզի իրեն հանձնի Աստծուն, եթե նա ուզում է անցնել իր գիտական հետազոտությունը այս ամենահարուստ ժառանգության բացահայտմանը հասնելով»:

VI. Այս մեկնաբանության մեթոդը

«Մեկնաբանության ուղեցույց»-ը նախատեսված է Աստվածաշնչի ձեր մեկնաբանության գործընթացի մեջ օգնել ձեզ հետևյալ կերպ

1. Հակիրճ պատմական ակնարկ, որը ներկայացնում է աստվածաշնչյան յուրաքանչյուր գիրք: «Ընթերցանության #3 շրջան» անելուց հետո ստուգեք այս տեղեկությունը:
2. Յուրաքանչյուր գլխի վերջում ներկայացվում է կոնտեքստի տեսությունը: Սա կօգնի ձեզ տեսնելու, թե ինչ կառուցվածք ունի գրական բաժինը:
3. Յուրաքանչյուր գլխի կամ գրական բաժնի սկզբում պարբերության բաժանումները և պատկերավոր վերադիրները ներկայացված են մի քանի ժամանակակից թարգմանություններով
 - ա. Հունարեն Նոր Կտակարանի չորրորդ վերստուգված սրբագրություն, հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից (UBS⁴)
 - բ. 1995-ի Նոր Ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչի վերստուգած թարգմանությունը (NASB),
 - գ. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV)
 - դ. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV)
 - ե. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV)
 - զ. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB)

Պարբերությունների բաժանումները ներշնչված չեն: Նրանք պետք է հաստատվեն կոնտեքստի հիման վրա: Համեմատելով մի քանի ժամանակակից թարգմանություններ, որոնք կատարված են տարբեր թարգմանչական տեսությունների և աստվածաբանական տեսանկյուններից, մենք կարող ենք վերլուծել բուն հեղինակի մտքի ենթադրյալ կառուցվածքը: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ գլխավոր ճշմարտություն: Սա կոչվել է «գլխավոր թեմա» կամ «տեքստի կենտրոնական միտք»: Այս միացնող միտքը բանալին է ճիշտ պատմական և քերականական մեկնաբանության: Երբեք չի կարելի մեկնաբանել, քարոզել կամ սովորեցնել հիմնվելով մեկ պարբերությունից փոքր հատվածի վրա: Նաև հիշեք, որ յուրաքանչյուր պարբերություն կապված է իրեն շրջապատող պարբերությունների հետ: Ահա թե ինչու պարբերության համար կարևոր է ունենալ ամբողջ գրքի պլանը: Մենք պետք է կարողանանք հետևել թեմայի տրամաբանական զարգացմանը ըստ ներշնչված հեղինակի:

4. Բոք Աթլեի մոտեցումն այսպիսին է, որ ճիշտ մեկնաբանություն ստանալու համար պետք է կատարել համար առ համար սերտողություն: Սա ստիպում է մեզ հետևել բուն

հեղինակի մտքերին: Նշումները մեզ օօգտակար տեղեկություն են տալիս մի քանի բաժիններում, դրանք են

- ա. գրական կոնտեքստ
- բ. պատմական, մշակութային առանձնահատկություններ
- գ. քերականական ինֆորմացիա
- դ. բառային սերտոդություն
- ե. կարևոր գուգահեռ հատվածներ

5. Որոշակի դեպքերում մեկնաբանության մեջ, 1995-ի Նոր Ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչի վերստուգած թարգմանությունը (NASB), լրացված է մի քանի այլ ժամանակակից թարգմանությունների հղումներով:

- ա. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV), - սա բառացի թարգմանություն է, հիմնված հին հունարեն ձեռագրերի ավանդության վրա, որը կոչվում է Textus Receptus (համընդհանուր ընդունված տեքստ):
- բ. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV), որը բառացի տարբերակն է Եկեղեցիների Ազգային Խորհրդի կողմից, որը Վերստուգված Ստանդարտ Թարգմանությունն է:
- գ. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV), դինամիկ հավասարագոր թարգմանություն է հրատարակված ամերիկյան Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից:
- դ. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB), որը անգլերեն թարգմանություն է հիմնված ֆրանսերեն կաթոլիկ դինամիկ հավասարագոր թարգմանության վրա

6. Նրանք, ովքեր հունարեն կարդալ չեն կարող, համեմատելով անգլերեն թարգմանությունները կկարողանան լուծել շատ խնդիրներ, որոնց հետ առնչվում են տեքստն ուսումնասիրելու ժամանակ

- ա. ձեռագրային տարբերակներ
- բ. բազմիմաստ բառեր
- գ. քերականորեն բարդ տեքստեր և կառուցվածք
- դ. Երկիմաստ, անորոշ տեքստեր: Չնայած անգլերեն թարգմանությունները չեն կարող լուծել այս խնդիրները, նրանք նշում են տեքստի այն հատվածները, որոնք պահանջում են ավելի խորը և մանրակրկիտ ուսումնասիրություն:
- ե. Յուրաքանչյուր գլխի վերջում կան կարևոր հարցեր քննարկման համար, որոնք կօգնեն կենտրոնացնել ձեր ուշադրությունը այդ գլխի ընդհանուր թեմաների մեկնաբանության արդյունքների վրա:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՊԱԳԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Վախճանաբանության մասին ուսումնասիրության տարիների ընթացքում ես սովորել եմ, որ շատ քրիստոնյաներ չունեն կամ չեն ցանկանում զարգացած, համակարգված, վերջին շրջանի ժամանակագրություն: Կան քրիստոնյաներ, որոնք կենտրոնանում են քրիստոնեության այս բնագավառի վրա՝ աստվածաբանական, հոգեբանական կամ դավանաբանական պատճառներով: Այս քրիստոնյաները կարծես թե անհանգիստ են դառնում, թե ինչպես է այն վերջանալու և ինչ-որ կերպ կամենում են ավետարանի հրատապությունը: Հավատացյալները չեն կարող ազդել Աստծո վախճանաբանական (վերջնական) օրակարգի վրա, սակայն նրանք կարող են մասնակցել ավետարանի տարածմանը (տես Մաթ. 28:19-20; Ղուկ. 24:46-47; Գործք 1:8): Շատ հավատացյալներ հաստատում են Քրիստոսի երկրորդ գալուստը և Աստծո խոստումների վերջավորության գագաթնակետը: Մեկնաբանության խնդիրները ծագում են այն բանից, թե ինչպես հասկանալ այս ժամանակավոր կուլմինացիան՝ աստվածաշնչային մի քանի պարադոքսներից:

1. լարվածությունը Հին Ուխտի մարգարեական տեսակների և Նոր Ուխտի առաքելական տեսակների միջև
2. լարվածությունը Աստվածաշնչի մոնոթեիզմի/մեկ Աստված (բոլորի համար մեկ Աստված) և Իսրայելի ընտրվածների (հատուկ մարդկանց) միջև,
3. լարվածությունը աստվածաշնչյան ուխտերի և խոստումների պայմանական ասպեկտի միջև («եթե ...ապա») և Աստծո անպայմանական հավատարմությունը մարդկության փրկության համար
4. Միջին Արևելքի գրական ժանրերի և ժամանակակից արևմտյան գրական մոդելների միջև լարվածությունը
5. Աստծո թագավորության միջև առկա լարվածությունը որպես ներկա, բայց և ապագա:
6. լարվածությունը Քրիստոսի անմիջական վերադարձի հավատքի միջև և այն համոզմունքը, որ նախ որոշ դեպքեր պետք է լինեն:

Եկեք մեկ առ մեկ քննարկենք այդ լարվածությունները:

ԱՌԱՋԻՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ (Հին Կտակարանի ռասայական, ազգային և աշխարհագրական կատեգորիաները և աշխարհի բոլոր հավատացյալները)

Հին Կտակարանի մարգարեները կանխատեսում են Երուսաղեմում կենտրոնացած Պաղեստինում հրեական թագավորության վերականգնումը, որտեղ երկրագնդի բոլոր ազգերը հավաքվում են՝ փառաբանելու և ծառայելու Դավիթական թագավորին, բայց ոչ Հիսուսը, ոչ էլ որևէ Նոր Կտակարանյան առաքյալ երբևէ չի կենտրոնանում այս ժամանակացույցի վրա (տես Մաթ. 5:17-19): Արդյո՞ք Նոր Կտակարանի հեղինակները բաց են թողել վերջին ժամանակների մասին վճռական իրադարձությունները:

Աշխարհի վերջի մասին տեղեկատվության մի քանի աղբյուրներ կան:

1. Մարգարեները (Եսայիա, Միքա, Մաղաքիա)
2. Հին Կտակարանի վախճանաբանական գրքերի հեղինակները (տես Եզ. 37-39; Դանիել 7-12; Զաքարիա)
3. միջկտակարանյան, անկանոն հրեական վախճանաբանական գրքեր (ինչպես 1 Ենոք, որը ենթադրում է Հուդայում)

4. Հիսուսն ինքը (տես Մաթ. 24; Մարկ. 13; Ղուկ. 21)
5. Պողոսի գրվածքները (տես 1 Կոր. 15; 2 Կոր. 5; 1 Թեա. 4-5; 2 Թեա. 2)
6. Հովհաննեսի գրվածքները (1 Հովհաննես և Հայտնություն)

Արդյոք դրանք բոլորը հասակորեն սովորեցնում են վերջին ժամանակների մասին (հրադարձություններ, ժամանակագրություն, մարդիկ): Եթե ոչ, ինչու: Միթե ներշնչված չեն (բացառությամբ հրեական միջկտակարանյան գրվածքները):

Հոգին հայտնեց ճշմարտությունները Հին Կտակարանի հեղինակներին այնպիսի տերմիններով և կատեգորիաներով, որ նրանք կարողանային հասկանալ: Սակայն պրոգրեսիվ հայտնության միջոցով Հոգին ընդլայնել է այս Հին Կտակարանյան վախճանաբանական գաղափարները տիեզերական առումով («Քրիստոսի խորհուրդը», տես Եփ. 2: 11-3: 13): Ահա որոշակի օրինակներ.

1. Հին Կտակարանում Երուսաղեմ քաղաքը օգտագործվում է որպես փոխաբերություն Աստծո ժողովրդի (Միոն) համար, սակայն արտացոլում է նոր Կտակարանի մեջ որպես տերմին արտահայտելով Աստծո ընդունումը բոլոր ապաշխարած, հավատացյալ մարդկանց («Նոր Երուսաղեմը» Հայտ. 21-22): Աստծո նոր ժողովրդի (հավատացյալ հրեաները և հեթանոսները) բառացի, ֆիզիկական քաղաքի մեջ աստվածաբանական ընդլայնումը, որը Աստծո խոստումն է, փրկելու մեղավոր մարդկությանը Ծննդ. 3: 15, նախքան հրեա կամ հրեական մայրաքաղաք լինելը: Նույնիսկ Աբրահամի կանչը (տես Ծննդ. 12: 1-3) ներգրավեց հեթանոսներին (տես Ծննդ. 12: 3; Ելից 19: 5):
2. Հին Կտակարանում Աստծո ժողովրդի թշնամիները Մերձավոր Արևելքի շրջապատող ժողովուրդներն են, բայց Նոր Կտակարանում դրանք ընդարձակվել են բոլոր անհավատների, հակա-աստվածային, սատանայական ներշնչված մարդկանց վրա: Ճակատամարտը տեղափոխվել է աշխարհագրական, տարածաշրջանային հակամարտությունից դեպի համաշխարհային տիեզերական հակամարտություն (տես Կողոսացիս):
3. Հին Կտակարանում անբաժանելի է երկրի խոստումը (Ծննդոց գրքում նախահայրերին տրված խոստումները, տես Ծննդ. 12: 7; 13:15; 15: 7,15,16; 7: 8), այժմ դարձել է ամբողջ երկիրը: Նոր Երուսաղեմը իջնում է վերաստեղծված երկիր, այլ ոչ թե միայն Մերձավոր Արևելք կամ բացառապես այդտեղ (տես Հայտ. 21-22):
4. Հին Կտակարանի մարգարեական գաղափարների որոշ այլ օրինակներ են ընդարձակվում
 - ա. Աբրահամի սերունդը հիմա հոգևորապես է թլփատված (տես Հռ. 2: 28-29)
 - բ. Ուխտի ժողովուրդի մեջ այժմ մտնում են հեթանոսները (տես Ուվ.1: 10; 2:23, մեջբերված է Հռ. 9: 24-26; նաև Ղև. 26:12; Ելից 29: 45, մեջբերված է 2 Կոր. 6:16-18 և Ելից 19: 5; 2 Օր. 14: 2, մեջբերված է Տիտոս 2:14)
 - գ. տաճարը այժմ Հիսուսն է (տես Մաթ. 26:61; 27:40; Հովի. 2:19-21) և Նրա միջոցով տեղական եկեղեցին (տես 1 Կոր. 3:16) կամ անհատ հավատացյալը (տես 1 Կոր. 6:19)
 - դ. նույնիսկ Իսրայելը և նրան բնորոշ նկարագրող Հին Կտակարանյան արտահայտությունները վերաբերում են Աստծո ողջ ժողովրդին (այսինքն, «Իսրայել», տես Հռ. 9: 6; Գաղ. 6:16, այսինքն, «քահանաների թագավորություն», տես 1 Պետ. 2: 5, 9-10; Հայտ. 1: 6)

Մարգարեական տեսակը կատարվել է, ընդլայնվել և այժմ ավելի ընդգրկուն է: Հիսուսն ու Առաքելական գրողները չեն ներկայացնում վերջին ժամանակն այնպես, ինչպես Հին Կտակարանի մարգարեները (տես Մարտին Ուինգարդեն, Թագավորության ապագան մարգարեության և իրականացման մեջ/ Martin Wyngaarden, The Future of The Kingdom in Prophecy and Fulfillment): Ժամանակակից թարգմանիչները, ովքեր փորձում են Հին Կտակարանի տեսակները դարձնել բառացի կամ նորմատիվ շեղում են Հայտնության գիրքը, այն դարձնելով տիպիկ հրեական գրքի և ուժով իմաստավորում Հիսուսի և Պողոսի երկիմաստ արտահայտությունները: Նոր Կտակարանի գրողները չեն մերժում Հին Կտակարանի մարգարեներին, սակայն ցույց են տալիս իրենց վերջնական համընդհանուր նշանակությունը: Ոչ մի կազմակերպված, տրամաբանական համակարգ չկա Հիսուսի կամ Պողոսի վախճանաբանության մեջ: Նրանց նպատակը հիմնականում փրկարար է կամ հովվական:

Այնուամենայնիվ, նույնիսկ Նոր Կտակարանում կա լարվածություն: Վախճանաբանական իրադարձությունների հստակ համակարգվածություն չկա: Զանազան կերպով Հայտնութիւնը զարմանալի կերպով օգտագործում է Հին Կտակարանյան ակնարկներ՝ նկարագրելու վերջին ժամանակները Հիսուսի ուսմունքների փոխարեն (տես Մաթ. 24; Մարկ. 13): Այն հետևում է Եզեկիելի, Դանիելի և Զաքարիայի նախաձեռնած գրական ժանրին, սակայն զարգացրած միջկտակարանյան ժամանակաշրջանում (հրեական ապոկալիպտիկ գրականություն): Դա, թերևս, Հովհաննեսի կերպն էր՝ կապելու Հին և Նոր Ուխտերը: Այն ցույց է տալիս մարդկային ապստամբության հնադարյան օրինակը և Աստծո նվիրումը փրկությանը: Սակայն պետք է նշել, որ թեև Հայտնությունը օգտագործում է Հին Կտակարանի լեզուն, մարդկանց և իրադարձությունները, դրանք վերամեկնաբանվում են Հռոմի առաջին դարի լույսի ներքո (տես Հայտ. 17):

ԵՐԿՐՈՐԴ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ (մոնոթեիզմը ընդդեմ ընտրված ժողովրդի)

Աստվածաշնչյան շեշտը մեկ անձնական, հոգևոր, ստեղծող-փրկարար Աստծո վրա է (տես Ելից 8:10; Ես. 44:24; 45: 5-7,14,18,21-22; 46: 9; Եր. 10: 6-7): Հին Կտակարանի յուրահատկությունը իր օրերում իր մոնոթեիզմի վրա էր (տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ): Բոլոր շրջապատող ազգերը պոլիթեիստ էին/բազմաստված: Աստծո մեկ լինելը Հին Կտակարանի հայտնության սիրտն է (տես 2 Օր. 6: 4): Ստեղծագործությունը մի փուլ է Աստծո և մարդկության միջև եղած փոխհարաբերության համար, որոնց ստեղծել է Իր պատկերով և նմանությամբ (տես Ծննդ. 1:26-27): Սակայն մարդկությունը ապստամբեց, մեղք գործելով Աստծու սիրտ, առաջնորդության և նպատակի դեմ (տես Ծննդ. 3): Աստծո սերը և նպատակը այնքան ուժեղ էր և համոզիչ, որ Նա խոստացավ փրկել մեղավոր մարդկությանը (տես Ծննդ. 3:15):

Լարվածությունը ծագում է այն ժամանակ, երբ Աստված ընտրում է օգտագործել մեկ մարդու, մեկ ընտանիքի, մեկ ազգի, որպեսզի հասնի մնացած մարդկանց: Աստծո Աբրահամին ընտրելը (տես Ծննդ. 12; 15; 17; 18) և հրեաներին, որպես քահանաների թագավորություն (տես Ելից 19: 4-6), առաջ բերեց հպարտություն ծառայության փոխարեն, ներգրավելու փոխարեն բացառում: Աբրահամի Աստծո կանչը ընդգրկում էր ողջ մարդկության նպատակային օրհնությունը (տես Ծննդ. 12:3): Պետք է հիշել և ընդգծել, որ Հին Կտակարանի ընտրությունը ծառայության համար էր, այլ ոչ թե փրկության: Ամբողջ Իսրայելը երբեք ուղիղ չի եղել Աստծո հետ, երբեք հավիտյան փրկված չի եղել՝ հիմնվելով միայն իր ծննդյան իրավունքի վրա (տես Հովհ. 8: 31-59; Մաթ. 3: 9), այլ անձնական հավատքով և հնազանդությամբ (տես Ծննդ. 15: 6, մեջբերված է Հռ. 4: 3, 9, 22; Գաղ. 3:6): Իսրայելը կորցրեց իր առաքելությունը (եկեղեցին է այժմ քահանաների թագավորությունը, տես Հայտ. 1: 6; 1 Պետ. 2: 5,9) և մանդատը վերածեց արտոնության, ծառայությունը հատուկ կարգավիճակի: Աստված ընտրեց մեկին՝ բոլորին ընտրելու համար:

ԵՐՐՈՐԴ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ (պայմանական ուխտերն ընդդեմ անպայմանական ուխտերի)

Պայմանական և անպայմանական ուխտերի միջև գոյություն ունի աստվածաբանական լարվածություն կամ պարադոքս: Անշուշտ, ճշմարիտ է, որ Աստծո փրկագնման նպատակը / պլանը անպայմանական է (տես Ծննդ. 15: 12-21): Այնուամենայնիվ, մանդատով մարդու պատասխանը միշտ պայմանական է:

«Եթե...ապա» ձևը հայտնվում է Հին և Նոր Կտակարաններում: Աստված հավատարիմ է; մարդկությունը՝ անհավատարիմ: Այս լարվածությունը շատ շփոթություն է առաջացրել: Թարգմանիչները հակված են կենտրոնանալ միայն մեկ «երկրնորանքի եղջյուրի» վրա՝ Աստծո հավատարմությունը կամ մարդկային ջանքերի, Աստծո գերիշխանությունը կամ մարդու ազատ կամքը: Երկուսն էլ աստվածաշնչյան են և անհրաժեշտ:

Սա վերաբերում է վախճանաբանությանը, Աստծո Հին Կտակարանի խոստումները Իսրայելին: Եթե Աստված խոստանում է, ապա դա հաստատում է: Աստված կապված է Իր խոստումներին; Իր հեղինակության հարցն է (տես Եզ. 36: 22-38): Անպայմանական և պայմանական ուխտերը հանդիպում են Քրիստոսում (տես Եսայիա 53), այլ ոչ թե Իսրայելի: Աստծո վերջնական հավատարմությունը կայանում է այն բոլորի փրկագնման մեջ, ով կապաշխարհի և կհավատա, ոչ թե ով է ձեր հայրը / մայրը: Քրիստոսն է, ոչ թե Իսրայելը, Աստծո բոլոր ուխտերի և խոստումների բանալին: Եթե Աստվածաշնչում կա աստվածաբանական փակագիծ կամ միջանկյալ միտք, ապա դա Եկեղեցին չէ, այլ Իսրայելը (տես Գործք 7 և Գաղ. 3):

Ավետարանի հոչակման համաշխարհային առաքելությունը անցել է Եկեղեցուն (տես Մաթ. 28:19-20; Ղուկ. 24: 47; Գործք 1:8): Այն դեռևս պայմանական ուխտ է: Սա չի նշանակում, որ Աստված ամբողջովին մերժել է հրեաներին (տես Հռ. 9-11): Վերջին ժամանակներում հավատացյալ Իսրայելի համար կլինի տեղ և նպատակ (տես Զաք. 12:10):

ՉՈՐՐՈՐԴ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ (Մերձավոր արևելյան գրական տեսակները և արևմտյան տեսակները):

3. Աստված դեռ սիրում է ընկած, ապստամբ, եսակենտրոն մարդկությանը: Աստծո բարկությունը կնիքների և փողերի մեջ փրկագնման համար է (տես Հայտ. 9: 20-21; 14: 6-7; 16: 9,11; 21: 6բ-7; 22:17):
4. Աստված ոչ միայն վերականգնում է ընկած մարդկությունը, այլ նաև ընկած ստեղծագործությանը (տես Հո. 8: 18-25): Յուրաքանչյուր փուլում չարը սրբվելու է: Աստծո հերթական փորձը Ավետարանի միջոցով հասնելու կորած մարդկությանը՝ մեծարում է Աստծո ողորմած բնութագիրը: Սկավառակների դատաստանները ըմբոստ չարի արդյունք են, այլ ոչ թե չսիրող Աստծո: Աստված միայն դատում է և մեկուսացնում է չարը, երբ կրկին ու կրկին մերժում է ապաշխարել: Շատ դեպքերում գիրքը արդարացնում է Աստծու դատավճիռը՝ ընկած, անհաշտ մարդկության վրա: Գիրքն ավարտվում է ավետարանի կոչով (տես Հայտ. 22:17):

Դ. Այս գիրքը չպետք է դիտվի որպես իրադարձությունների, ժամանակների և Երկրորդ Գալուստի ձևի ժամանակագրական աղյուսակ: Այն հաճախ մեկնաբանվել է որպես «գաղտնիք» արևմտյան պատմության մեջ (յոթ եկեղեցիները, որպես ժամանակաշրջան):

Յուրաքանչյուր սերունդ իր պատմությունները պարտադրեց ապոկալիպտիկ խորհրդանիշների մեջ. ամեն ոք մինչ այժմ սխալվել է:

Այս մարգարեությունների մանրամասները ավելի ակնհայտ կլինեն Հակաքրիստոսի պատճառով տառապող հավատացյալների վերջին սերնդի համար (տես 2 Թես. 2): Բառացի մեկնաբանությունը պատճառ է հանդիսացել, որ այս գիրքը անտեսվի ոմանց կողմից (Կավլին), ուրիշների կողմից արժեզրկվի (Լյութեր, «ոչ առաքելական, ոչ մարգարեական»), և չափից շատ ընդգծվի ուրիշների կողմից (հազարամյակիստներ):

ԲՈՒԻ ՄԵՎՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

- Ա. Մենք պետք է հաշվի առնենք Հին Կտակարանյան կողմը
1. Հին Կտակարանյան ապոկալիպտիկ ժանրը բարձր խորհրդանշական գրական տեսակ է:
 2. Բազմաթիվ ակնարկներ են դուրս հանվել Հին Կտակարանից (ոմանք հաշվարկում են, որ 404 համարներից 275-ը ընդգրկում են ակնարկներ Հին Կտակարանից): Այս խորհրդանիշների իմաստը վերահաստատվել է առաջին դարի հռոմեական իրավիճակի լույսի ներքո:
 3. Մարգարեական նախանշանը վերցնում է ընթացիկ իրադարձությունները՝ ցույց տալու վախճանաբանական իրադարձությունները: Հաճախ այդ առաջին դարի պատմական կատարումները մատնանշում են վերջին ժամանակի պատմական իրականացումները:
- Բ. Գրքի ընդհանուր կառուցվածքը օգնում է մեզ տեսնել հեղինակի նպատակը
1. Կնիքները, փողերը և սկավառակները հիմնականում վերաբերում են նույն ժամանակահատվածին (6-16 գլուխները): Հայտնությունը դրամա է հաջորդական գործողություններով:
 2. Հնարավոր է, որ Հայտ. 17-19-ը զուգահեռ են Հայտ. 20-22-ին: 19-րդ գլխի մասերը (այսինքն, Հայտ. 19: 11-21) ամփոփվում են Հայտ. 20: 7-10-ում:
 3. Տեսեք Սկզբնական Դրույթներ, Գ. կետը, յոթ գրական բաժինները:
- Գ. Պատմական կոնտեքստը պետք է հաշվի առնել գրքի ցանկացած մեկնաբանության մեջ
1. Կայսրի պաշտամունքի ներկայությունը
 2. Տեղական հալածանքները Արևելյան մարզերում
 3. Աստվածաշունչը չի կարող նշանակել այն, ինչը երբեք չի նշանակում: Հայտնության մեկնաբանությունը պետք է առաջին հերթին վերաբերի Հովհաննեսի օրերին: Այն կարող է ունենալ բազմակի իրականացումներ կամ կիրառումներ, սակայն դրանք պետք է հիմնավորվեն առաջին դարի մեջ:
- Դ. Որոշ գաղտնի տերմինների իմաստը մեզ համար կորել է՝ մեր մշակութային, լեզվական և էկզիստենցիալ իրավիճակի շնորհիվ: Հնարավոր է, վերջին ժամանակների իրադարձություններն իրենք լույս կգցեն այս խորհրդանիշների պատշաճ մեկնաբանման վրա: Զգույշ եղեք չպարտադրել այս ապոկալիպտիկ դրամայի բոլոր մանրամասները: Ժամանակակից թարգմանիչները պետք է փնտրեն գլխավոր ճշմարտությունը յուրաքանչյուր տեսիլքի մեջ:
- Ե. Եկեք ամփոփեմ մեկնաբանության որոշ բանալի տարրերը
1. Սիմվոլիզմի պատմական ծագումը
 - ա. Հին Կտակարանի թեմաները, Հին Կտակարանի ակնարկները

- բ. Հին Մերձավոր Արևելքի դիցաբանությունը
 - գ. Միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականությունը
 - դ. Հունա-հռոմեական առաջին դարի իրավիճակը
2. Հեղինակն ինքն է սահմանում իր սիմվոլիզմը
- ա. Ջրույցներ հրեշտակային ուղեցույցների հետ
 - բ. Երկնային երգչախմբերի օրհներգը
 - գ. Հեղինակն ինքն է արտահայտում իմաստը
3. Գրքի կառուցվածքը (դրամատիկ գուգահեռականություն)

Ձ. Լրացուցիչ օգնություն

1. Հայտնության Գրքի իմ երկու սիրված մեկնաբաններն են Ջորջ Էլդոն Լադը և Ալան Ֆ. Ջոնսոնը: Նրանք համաձայն չեն իրար հետ: Այնքան անհամաձայնություն կա աստվածավախ, կրթված, անկեղծ աստվածաբան գիտնականների միջև, որ զգուշության խոսքը տեղին է: Թույլ տվեք մեջբերել Ալան Ջոնսոնի Ջոնդարվանի հրատարակած Հայտնության մեկնաբանությունից մի հատված.

«Հաշվի առնելով պատկերների և տեսիլքների մանրակրկիտ օգտագործումը Հայտ. 4: 1-ից մինչև Հայտնության վերջը և այն հարցը, թե ինչպես է այս նյութը վերաբերում 1-3-րդ գլուխներին, զարմանալի չէ, որ մեկնաբանները տարբերվում են այս գլուխների վերաբերյալ ունեցած իրենց կարիծիքներով: Խնդիրներից մեկը մեկնաբանությունն է; ինչ են նշանակում պատկերները և տեսիլքները: Մյուս խնդիրը ընդգրկում է ժամանակագրությունը; երբ են այդ բաները տեղի ունենալու: Բացի այդ, արդյո՞ք Հովհաննեսը մեկնաբանում է իր մշտական Հին Կտակարանյան պատկերները Հին Կտակարանի աղբյուրների ճշգրիտ չափանիշներով, թե՞ ազատ է վերանայել այս պատկերները: Ո՞րն է խորհրդանշական, իսկ ո՞րը բառացի: Այս հարցերի պատասխանները որոշելու են մեկնաբանի մոտեցումը: Քանի որ այս հարցերից մի քանիսը կարող են դոգմատիկ պատասխաններ ունենալ, կարիք կա առանձին մոտեցումների հանդուրժողականություն, այն հույսով, որ Հոգին կարող է օգտագործել բաց մտքի քննարկում, որը մեզ կառաջնորդի հետագա Ապոկալիպսիսի իմաստի մեջ» (էջ 69):

2. Հայտնության կապը Հին Կտակարանի հետ ընդհանուր ներածութեան համար ես խորհուրդ եմ տալիս Ջոն Պ.Միլտոնի *Մարգարեությունը մեկնաբանել* և Ջոն Բրայթի *Հին Կտակարանի հեղինակությունը* / John P. Milton's Prophecy Interpreted and John Bright's The Authority of the Old Testament: Հայտնության կապը Պողոս Առաքյալի հետ լավ քննարկման համար ես խորհուրդ եմ տալիս Ջեյմս Ս. Ստյուարտի *Մարդ Քրիստոսում* / James S. Stewart's A Man In Christ:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»](#))

Սա սերտորոշության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ձեր խոսքերով գրեք ամբողջ գրքի կենտրոնական թեման:

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրականության տեսակը (ժանրը)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»](#))

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Երկրորդ անգամ կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. և այլն

ՀԱՅՏՆՆՈՒԹՅՈՒՆ 1:1-20

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ*

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Ներածությունն և ողջույնի խոսք	Ներածությունն և գոհություն	Նախաբանը	Ներածություն	Նախաբան
1:1-3	1:1-3	1:1-2 1:3	1:1-3	1:1-3
	Ողջունում է յոթ եկեղեցիներին	Ներածական ողջույնի խոսք	Ողջունում է յոթ եկեղեցիներին	Դիմել և ողջունել
1:4-5ա	1:4-8	1:4-5ա	1:4-5ա	1:4-8
1:5բ-7		1:5բ-7	1:5բ-6 5:7	
5:8		5:8	5:8	
Քրիստոսի տեսիլքը	Մարդու Որդու տեսիլքը	Նախապատրաս- տական տեսիլք	Քրիստոսի տեսիլքը	Նախնական տեսիլքը
1:9-11	1:9-20	1:9-11	1:9-11	1:9-16
1:12-16		1:12-16	1:12-20	
1:17-20		1:17-20		1:17-20

* Չնայած պարբերությունների բաժանումները ներշնչված չեն, բայց դրանք օգնում են հասկանալ և հետևել հեղինակի մտադրությանը: Յուրաքանչյուր ժամանակակից թարգմանություն բաժանել և վերլուծել է պարբերությունները: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ միտք: Յուրաքանչյուր տարբերակ ընդգրկում է այդ թեման իր իսկ ձևով: Երբ դուք կարդում եք տեքստը, հարցրեք ինքներդ ձեզ, թե որ թարգմանությունն է համապատասխանում թեմաների և համարների բաժանումների ձեր հասկացությանը:

Յուրաքանչյուր գլխում մենք պետք է նախ կարդանք Աստվածաշունչը և փորձենք որոշել թեմաները (պարբերությունները), ապա համեմատենք մեր հասկացողությունը ժամանակակից տարբերակների հետ: Միայն այդ ժամանակ, երբ հասկանաք հեղինակի մտադրությունը, հետևելով նրա տրամաբանությանը և շարադրանքին, դուք կկարողանաք ճիշտ հասկանալ Աստվածաշունչը: Միայն հեղինակն է ներշնչված-ընթերցողներն իրավունք չունեն փոխել կամ փոփոխելու նրա պատգամը: Աստվածաշնչի ընթերցողները պատասխանատվություն են կրում ներշնչված ճշմարտությունը իրենց կյանքի մեջ կիրառելու համար:

Բոլոր տեխնիկական տերմիններն ու հասկանումները ամբողջությամբ ներկայացված են հետևյալ փաստաթղթերում. [Հունական Քերականական Կառուցվածքի Համառոտ Մահմանումները](#), [Տերտուլյանի Քրեմադատություն և Բառարան](#):

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ *(«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)*

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց

դաբանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 1:1-3:22

- Ա. Հայտ. 1:1-8 ամբողջ մարգարեության նախաբանն է: Առաջին երեք համարները ներկայացնում են հեղինակին, ժամանակը, ժանրը և օրհնությունը:
1. Հեղինակը Հովհաննեսն է (տարածված հրեական անուն)
 2. Ժամանակը մոտ է (Հայտ. 1:1բ, 3գ):
 3. Պատգամը հաղորդվում է տեսիլքներով, որը մեկնաբանվում է հրեշտակի միջնորդությամբ և կոչվում է «մարգարեություն» (Հայտ. 1:3): Առաջին երեք գլուխները շատ նման են առաջին դարի նամակների նորմալ ոճին:
 4. Օրհնությունն այն մարդկանց համար է, ովքեր կարդում են խոսքը և հնազանդվում՝ հավատարիմ մնալով նրա հորդորին, անգամ հալածանքների մեջ:
- Բ. Հաջորդ չորս համարները (4-7) դիմում են ստացողներին յոթ եկեղեցիների (Հայտ. 1:11) և նրանց յոթ հոգիների ձևով (տես Հայտ. 1:4,20; 3:1; 4:5; 5:6): Այս բաժինը նշվում է
1. ՅԱՀՎԵՆ բնութագրվում է (Հայտ. 1:4)
 2. Հիսուսը բնութագրվում է (Հայտ. 1:5,6բ,7)
 3. Հավատացյալները բնութագրվում են (Հայտ. 1:6ա)
 4. ՅԱՀՎԵՆ խոսում է (Հայտ.1:8)
- Գ. 1:9-3:22 համարները Հիսուսի վերջին խոսքերն են Իր Եկեղեցուն(ներին): Հայտ. 1:9-20 և յոթ եկեղեցիներից յուրաքանչյուրի սկզբում Հիսուսը բնութագրվում է Հին Կտակարանյան անուններով, որոնք օգտագործվում են ՅԱՀՎԵՒ համար:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 1:1-3
¹Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը, որ Աստուած տուաւ իր ծառաներին ցոյց տալու, ինչ որ շուտով պիտի լինի, եւ իմացրեց իր հրեշտակի ձեռովն ուղարկելով իր Յովհաննէս ծառային. ²Որ վկայեց Աստուծոյ խօսքին եւ Յիսուս Քրիստոսի վկայութեանը, որ տեսաւ: ³Երանելի եւ այս մարգարեութեան խօսքերը կարդացողը եւ լսողները, եւ սորանում գրուածները պահողները. որովհետեւ ժամանակը մօտեցել է:

- 1:1 «**յայտնութիւնը**» Այս հունարեն *apocalypsis* տերմինը հանդիպում է գրքում միայն այստեղ: Այն եկել է հունարեն երկու տերմիններից, որոնք նշանակում են «թաքնված վայրից» կամ «ինչ-որ բան բացահայտել կամ բացել»: Այն օգտագործվել է մի քանի իմաստներով (BAGD էջ 92):
1. ճշմարտության հայտնությունը - Ղուկ. 2:32; Հռ. 16:25; 1 Կոր. 14:6,26; Գաղ. 1:12; Եփ. 1:17
 2. գաղտնիքը բացահայտված է - Եփ. 2:11-3: 13
 3. հայտնությունը տեսիլքով / երագով - 2 Կոր. 12:1,7; Գաղ. 2:2

4. գաղտնիքներ, որոնք վերաբերում են վերջին ժամանակներին – Ղուկ. 17:30; 1 Կոր. 1:7; 2 Թեա. 1:7; 1 Պետ. 1:7,13; 4:13; 5:1

Այս գրքում այն նշանակում է ճշմարտություն Աստուծոց, Հիսուս Քրիստոսի միջոցով, միջամտված տեսիլքներով և հրեշտակային մեկնաբանությամբ: Այն կենտրոնանում է ներկա չարի և գալիք արդարության հաղթանակի վրա Աստծո գերբնական միջամտության միջոցով: Աստված անմիջապես կկարգավորի բոլոր բաները:

- **«Հիսուս Քրիստոսի»** Սա կամ օբյեկտիվ սեռական հոլով է, որը վերաբերում է Հիսուս Քրիստոսի մասին պատգամին (Գաղ. 1:12) կամ էլ ստորադասական սեռական հոլով, որը վերաբերում է Հիսուս Քրիստոսի կողմից տրված պատգամին:
- **«Հիսուս»** Այս եբրայերեն անունը նշանակում է «ՅԱՀՎԵՆ փրկում է», «ՅԱՀՎԵՆ փրկություն է», «ՅԱՀՎԵՆ բերում է փրկություն»: Այն նույնն է, ինչ Հին Կտակարանյան «Հեսու» անունը: «Հիսուսը» բխում է եբրայերեն «*hosea*» փրկություն բառից, ավելացված Աստծո ուխտի անվանը՝ «ՅԱՀՎԵ» (տես Հատուկ Թեմա: Աստծո Անունները, Կող.1:3): Դա Աստծո կողմից նշանակված անուն էր Տիրոջ հրեշտակի միջոցով (տես Մաթ. 1:21):
- **«Քրիստոսի»** Սա եբրայարեն «*messiah*» տերմինի հունարեն համարժեքն էր, որը նշանակում էր «օծյալ»: Դա ենթադրում էր, որ «մեկը կանչված է և հազեցած Աստծո կողմից կունկրես գործի համար»: Հին Կտակարանում առաջնորդների երեք խմբեր՝ քահանաներ, թագավորներ և մարգարեներ օծվել են: Հիսուսը կատարեց այդ երեք օծյալ պաշտոնները (տես Եբ. 1:2-3): Տես Հատուկ Թեմա: Մեսիա ստորև:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԵՍԻԱ (Դան.9:26-ից)

SPECIAL TOPIC: MESSIAH (from Dan. 9:26)

Այս տերմինը թարգմանելու դժվարությունը «Մեսիա» կամ «օծյալ» (BDB 603, KB 645) տերմինի հետ կապված տարբեր օգտագործումների պատճառն է: Տերմինը օգտագործվել է անձի վրա հատուկ յուղ լցնելու համար, որը ցույց է տալիս Աստծո կանչը և սպառազինումը՝ հանձնարարված առաջնորդության առաջադրանքի համար:

1. օգտագործվում էր հրեա թագավորների համար (օր. I Թագ. 2:10; 12: 3; 24: 6,10; 2 Թագ. 19:21; 23:1; Սաղ. 89:51; 132: 10,17; Ողբ 4:20; Ամբ. 3:13; Դան. 9:25 «Օծյալ Իշխան»)
2. օգտագործվում էր հրեա քահանաների համար (օր. «օծյալ քահանաներ», Ելից 29:7; օր. Ղն. 4: 3,5,16; 6:15; 7:36; 8:12; հնարավոր է Սաղ. 84: 9-10; և 133: 2)
3. օգտագործվում էր Նախահայրերի և մարգարեների համար (տես Օննդ. 26: 7; 1 Մնաց. 16:22; Սաղ. 105:15, որը վերաբերվում է ուխտի մարդկանց հավաքականորեն, հավանաբար Ամբ. 3:13)
4. օգտագործվում էր մարգարեների համար (տես 3 Թագ. 19:16; հավանաբար 1 Մնաց. 29:22)
5. օգտագործվում էր Կյուրոսի համար (տես Ես. 45: 1)
6. # 1 և # 2 համակցված են Սաղմոս 110 և Ջաքարիայի 4
7. օգտագործվում էր Աստծո հատուկ գալստյան համար, Դավիթական թագավորը բերելու է արդարութեան նոր դարաշրջան
 - ա. Հուդայի ցեղից (տես Օննդ. 49:10)
 - բ. Հեսեի տնից (հմմտ. 2 Թագ. 7)
 - գ. համընդհանուր թագավորում (տես Սաղ. 2; Ես. 9: 6; 11: 1-5; Միք. 5: 1-4)
 - դ. ծառայություն կարիքավորներին (տես Ես. 61: 1-3)

Ես անձամբ հակված եմ «օծյալը» նույնականացնել Հիսուս Նազովրեցու հետ(տես Հովհ. 1:41,

4:25), քանի որ

1. հավիտենական Թագավորության ներկայացնելը Դանիել 2-րդ գլխում չորրորդ կայսրության ընթացքում
2. «մարդու որդու» ներկայացնելը Դանիել 7:13-ում, որին տրվում է հավիտենական թագավորություն
3. փրկության մասին մտքերը Դանիել 9:24-ում, որը մատնանշում է ընկած, մեղավոր աշխարհի պատմության գագաթնակետը
4. Հիսուսը մեջբերում է Դանիելի գրքից Նոր Կտակարանում (տես Մատթ. 24:15; Մարկ. 13:14)

Պետք է ընդունել, որ սա հազվագյուտ տիտղոս է Հին Կտակարանում, հնարավոր է, միայն Դան. 9:25): Պետք է նաև համաձայնել, որ Հիսուսը չի համապատասխանում Մեսիայի ընդհանուր նկարագրությանը

1. ոչ մի առաջնորդ Իսրայելում
2. ոչ պաշտոնապես օծված քահանայի կողմից
3. ոչ միայն Իսրայելի փրկիչը
4. ոչ միայն «մարդու որդին», այլև ցնցող «Աստծո Որդին»

▪ **«որ Աստուած տուաւ»** Հիսուսը ոչ սովորեցրեց, ոչ էլ որևէ բան արեց առանց Հորից հայտնություն կամ թույլտվություն ստանալու (տես Հովհ. 3:11-13, 31-36; 4:34; 5:19-23,30; 6:38; 7:16; 8:26,28-29,40; 12:49-50; 14:10,24; 15:15); Աստվածաբանորեն սա Հովհաննեսի գրվածքերի բնութագիրն է:

▪ **«տուաւ իր ծառաներին ցոյց տալու, ինչ որ շուտով պիտի լինի»** Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է այս բացման պարբերությունը արտացոլված Հայտ. 22:6-21-ում: Սա առաջին դարի գրական տեխնիկան էր:

Արևելահայերեն **«ինչ որ շուտով պիտի լինի»**

Արևմտահայերեն **«ինչ որ շուտով պիտի ըլլա»**

NASB, NKJV, Peshitta **«այն բաները, որոնք պետք է տեղի ունենան կարճ ժամանակից»**

NRSV, REB **«ինչ որ շուտով պետք է տեղի ունենա»**

TEV **«ինչը պետք է տեղի ունենա շատ շուտով»**

NJB **«ինչը շատ շուտով տեղի կունենա»**

Ժամանակի տարրը շատ կարևոր է ամբողջ գրքի մեկնաբանման համար, քանի որ այն հատուկ հայտարարում է, որ Հովհաննեսի ուղերձը կարևոր է իր օրվա, ինչպես նաև ապագայի համար: «Պետք է» (*dei*) տերմինը նշանակում է «որը պարտադիր է, որը բարոյապես անհրաժեշտ է, որը պատշաճ է կամ անխուսափելի» (տես Հայտ .22:6): Տես Հատուկ Թեմա՝ Շուտ վերադարձը ստորև:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՇՈՒՏ ՎԵՐԱԴԱՐՁ

SPECIAL TOPIC: SOON RETURN

«Շատ շուտով տեղի կունենա» գաղափարը համեմատիր Հայտ. 1:3; 2:16; 3:11; 22: 7,10,12,20: Դա կարող է լինել Հին Կտակարանյան ենթադրություն Դան. 2:28, 29 և 45: Հայտնության գրքում Հովհաննեսը երբեք չի մեջբերում Հին Կտակարանը, բայց շատ ակնարկներ է արել: 404 համարների, հնարավոր է 275-ը ունեն Հին Կտակարանյան նախադրյալներ: Թարգմանիչները բաժանվել են այս արտահայտության մեկնաբանության մեջ, իրենց աստվածաբանական ենթադրությունների պատճառով, որոնք վերաբերում են Հայտնություն գրքի նպատակին.

1. հանկարծակի
2. երբ սկսվի արագորեն տեղի կունենա
3. շուտով սկսելու է
4. անպայման տեղի է ունենալու
5. անմիջապես

Այս տերմինի օգտագործումը Հայտ. 22: 7, 12, 20-ում ցույց է տալիս, որ Հովհաննեսը ակնկալում էր, որ այդ իրադարձությունները տեղի էին ունենալու արագ իր կյանքի ընթացքում (տես ամբողջական ծանուցումը Հայտ. 10: 6; 22: 3): Քանի որ այս գրքի գրվածքի և մեր օրերի միջև կա 2000 տարվա բացը, շատերն ասում են, որ Հովհաննեսը սխալ էր: Այնուամենայնիվ, անհապաղ ժամանակի օգտագործումը կարծես թե բնորոշ է Հին Կտակարանի մարգարեական գրականությանը, որն օգտագործում էր ներկա իրադարձությունների պատկերները վերջին ժամանակի իրադարձությունների համար:

1. Հովհաննեսն օգտագործեց առաջին դարի Հռոմը է նկարագրելու աշխարհի վերջը (վերջին օրերը)
2. Եսայիան և Եզեկիելը օգտագործեցին վերականգնված (հետգերության) Հուդան
3. Դանիելն օգտագործել է Եպիփանես IV Անտիոքացին

Արդարության նոր դարաշրջանի գալը հույս ու քաջալերանք է հավատացյալների յուրաքանչյուր սերնդի համար, բայց միայն մեկը, վերջինը կփորձառի այն:

Ոչ ոք չի կարող բացատրել, թե ինչու Հիսուսի վերադարձը այդքան երկար ժամանակ է պահանջել, երբ այն շուտ էր ակնկալվում (Մաթ. 10:23; 16:28; 23:36; 24:34): Նոր Կտակարանում լարվածություն կա Հիսուսի ցանկացած պահի վերադարձի և հետաձգված *parousia* -յի միջև (տես Հատուկ Թեմա: Ուշացած Երկրորդ Գալուստ): Տես նաև D. Brent Sandy, *Plowshares and Pruning Hooks*, էջ 101-102, որպես խստության և անսպասելիության մարգարեական խորհրդանշան տերմինի համար, էջ 173-175:

- **«հաղորդեց այն»** Սա բառացիորեն «նշանավորեց» է (*semainō*) (տես NKJV): «Նշանները» գրական կառույցներից մեկն են, որը Հովհաննեսն օգտագործում է իր Ավետարանում իր պատգամը հաղորդելու համար (*semeion*, տես Հայտ. 12:33; 18:32; 21:19): Սա կարող է Հին Կտակարանի հղում լինել ուղղված Հին Կտակարանի մարգարեներին (տես Ես. 7:11,14; 8:18; 19:20; 20:3; 37:30; 38:7,22; 55:13; 66:19; Եր. 10:2; 32:20-21; 44:29 և Եզ. 4:3; 14:8; 20:12,20): Այն փաստը, որ այս գիրքը կոչվում է «հայտնություն», «նշանների» և «մարգարեության» միջոցով, մեզ հուշում է այս գրքի գրական ժանրը: Ժամանակակից «apocalyptic» գրական տերմինը օգտագործվում է ժանրը նկարագրելու համար, որը անհայտ էր Հովհաննեսին:

- **«իր ծառաներին»** Այս ներածական համարում, այս արտահայտությունը վերաբերում է Առաքյալների կողմից գրված գրքի հեղինակին: Գրքի այլ հատվածներում հոգնակին օգտագործվում է Աստծո մարգարեների/ սուրհանդակների / քարոզիչների համար (տես Հայտ. 10:7; 11:18; 22:6):

Այնուամենայնիվ, գրքի այլ հատվածներում անունը օգտագործվում է բոլոր հավատացյալների համար (տես Հայտ. 7:3; 19:2,5; 22:3), որը ենթադրում է, որ բոլոր հավատացյալները պետք է վկաներ լինեն (տես Մաթ. 28:18-20; Կող. 4: 6; 2 Տիմ. 2:24-25; 1 Պետ. 3:15): Հիսուսն այն օրինակն է, որին պետք է հետևել (տես Հայտ. 1:5; 3:14; Հովհ. 20:21): Շատերը սպանվելու են, ինչպես Հիսուսը (տես Հայտ. 6:9; 12:17; 17:6; 18:24; 20:4): Հիշեք, գրքի թեման՝ մահվան ժամանակ հավատարիմ լինելն է: Ես (Հիսուս) հաղթել եմ:

- **«Յովհաննես»** Ի տարբերություն շատ ապոկալիպտիկ հեղինակների, Հովհաննեսը բացահայտեց իրեն և կազմեց իր մարգարեական վկայությունը յոթ նամակների տեսքով (1-3 գլուխներ): Ումանք ժխտում են Հովհաննես Առաքյալի Հայտնության գրքի հեղինակ լինելը, քանի որ

նա անանուն է իր մյուս գրվածքներում (ինքն իրեն «սիրելի աշակերտ» է կոչում իր Ավետարանում և «երեց»՝ 2 և 3 Հովհաննեսում), բայց իրեն հայտնում է Հայտ. 1:4, 9; 22:8:

1:2 «Յիսուս Քրիստոսի վկայութեանը» Ինչպես Հայտ. 1:1, սա կարող է լինել կամ նպատակ, Հիսուսի մասին վկայություն կամ ստորադասական սեռական հոլով, վկայություն տրված Հիսուսի կողմից: Երբեմն Հովհաննեսի գրվածքներում կա նպատակաուղղված երկիմաստություն, որը միավորում է երկու իմաստները:

1:3 «Երանելի են» Սա յոթ երանելիներից/օրհնություններից առաջին է այս գրքում (տես Հայտ. 1:3; 14:13; 16:15; 19:9; 20:6; 22:7,14): Այն փաստը, որ նրանք ովքեր կարդում են՝ երանելի են, ցույց է տալիս ոչ միայն նրա ներշնչված բնույթը, այլ նաև այդ օրվա և ամենօրյա մարդկանց վերաբերմունքը:

- **«կարդացողը»** NRSV ավելացնում է «բարձրաձայն», որը ենթադրում է հանրային ընթերցում (տես 1 Տիմ. 4:13): Սուրբ գրքի ընթերցումը սկզբում կատարվում էր եկեղեցու հատուկ վերապատրաստված անդամների կողմից, ինչպես նաև ժողովարանում (*cantor*): Եկեղեցին ընդունեց վաղ ժողովարանի պաշտամունքի ձևերը (տես Ղուկ. 4:16; Գործք 13:15; Կող. 4:16; 1 Թես. 5:27): Մենք ունենք պատմական հաստատում Սուրբ Գրքի հանրային ընթերցանության վերաբերյալ Հուստինոս Նահատակի կողմից, 167թ., ով նշում է, որ եկեղեցին կարդում է մի հատված Ավետարաններից և մի հատված էլ Սարգարեններից:

- **«լսողները, ... եւ պահողները»** Այս լսելը և կատարելը (երկուսն էլ ներկա ներգործական դերբայներ են) երբայերեն «*Shema*» տերմինի էությունն են (տես 2 Օր. 5:1; 6:4-6; 9:1; 20:3; 27:9-10; Ղուկ. 11:28): Ուշադրություն դարձրեք օրհնության պայմանական բնույթին: Նրանք, ովքեր լսում են, պետք է արձագանքեն: Այս «եթե...ապա» երկուսն էլ Հին Կտակարանյան և Նոր Կտակարանյան ուխտի օրինակ են: Օրհնությունը կապված է ոչ միայն գիտելիքի, այլ նաև ապրելակերպի հետ:

- **«այս մարգարեութեան»** Այս տերմինը վերաբերում է ինչպես այս գրքի աստվածային բովանդակությանը, այնպես էլ գրական ժանրին: Այս գիրքը մի նամակի համադրություն է (1-3 գլուխ), ապոկալիպտիկ ներկայացում (կնիքներ, փողեր, սկավառակներ) և մարգարեություն (տես Հայտ. 22:7,10,18,19): Կարևոր է հիշել, որ «մարգարեությունը» ուներ երկու իմաստներ. (1) ուղղված ներկա լսողներին Աստծո պատգամով և (2) ցույց տալ, թե ինչպես է գործող հավատքը ազդում հետագա իրադարձությունների վրա: Այն և՛ հռչակում է, և՛ կանխատեսում: Տես Ներածական Հոդվածը:

- **«Ժամանակը մտնեցել է»** Սա կրկին ցույց է տալիս մարգարեության առնչությունն իր առօրյայում (տես Հայտ. 22:10, մեկ այլ օրինակ Հն. 16:20): Տես Հատուկ Թեմա: Շուտ վերադարձը, Հայտ. 1:1:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 1:4-7
Յովհաննես, եօթը եկեղեցիներիդ, որ Ասիայումն էք, շնորհք լինի ձեզ հետ եւ խաղաղութիւն նորանից որ է, եւ որ էր, եւ որ գալու է, եւ այն եօթը Հոգիներիցը, որ նորա աթոռի առաջին են. Եւ Յիսուս Քրիստոս հաւատարիմ վկայիցը, որ մեռելներից անդրանիկը՝ եւ երկրի թագաւորների իշխանն է. նորան որ մեզ սիրեց եւ մեր մեղքերիցն լուացաւ մեզ իր արիւնովն, Եւ մեզ թագաւորներ եւ քահանաներ արաւ Աստուծոյ եւ իր Հօր համար. նորան փառք եւ զօրութիւն յաիտեանս յաիտենից. Ամէն: Դ՛հա նա գալիս է ամպերով. Եւ ամեն աչք կ'տեսնէ նորան, եւ նորանք որ խոցեցին նորան. Եւ նորա վերայ կոծ կ'անեն երկրի ամեն ազգերը. Այո, Ամէն:

1:4 «ԵՕՐՔ ԵԿԵՂԵԳԻՆԵՐԻՊ» Անշուշտ, անորոշ է թե ինչու էր ուղղված միայն յոթ եկեղեցիներին: Կան մի քանի տեսություններ

1. ոմանք պնդում են, որ դրանք եղել են այն եկեղեցիները, որոնց հետ Հովհաննեսն առանձնահատուկ ծառայողական հարաբերություններ է ունեցել
2. ոմանք պնդում են, որ դրանք ձևավորել են փոստային երթուղի Ասիայի հռոմեական նահանգում
3. յոթ թիվը մեծ նշանակություն ուներ հրեաների համար, հատկապես միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականության մեջ

Այն Ծննդոց 1-ում օրերի կատարելության թիվն էր: Հետևաբար, այն հավանաբար օգտագործվում էր երկու բառացի իմաստներով - Հովհաննեսը գրել էր մի քանի եկեղեցիներին, որոնք ձևավորվել էին Փոքր Ասիայի հռոմեական փոստային երթուղով - և խորհրդանշորեն որպես միջոց անդրադառնալով բոլոր ժամանակների բոլոր եկեղեցիներին: Տես Հատուկ Թեմա՝ ստորև:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՄԻՄՎՈԼԻԿ ԹՎԵՐԸ
SPECIAL TOPIC: SYMBOLIC NUMBERS IN SCRIPTURE

- Ա. Որոշ թվեր կիրառվում էին թե՛ որպես թիվ և թե՛ որպես խորհրդապատկեր.
1. Մեկ – Աստված (օր. 2 Օր.6:4; Եփ. 4:4-6)
 2. Չորս – ամբողջ երկիրը (այսինքն՝ չորս անկյունները, չորս կողմերը, օր. Ես. 11:12; Եր. 49:36; Դան. 7: 2; 11:4; Զաք. 2: 6; Մաթ. 24:31; Մարկ. 13:29; Հայտ. 7:1)
 3. Վեց – մարդու անկատար լինելը (7-ից մեկով պակաս, օր. Հայտ.13:18)
 4. Յոթ – աստվածային կատարելությունը (արարչագործության յոթ օրերը): Ուշադրություն դարձրեք Հայտնության գրքում սիմվոլիկ կիրառությունը.
 - ա. յոթ աշտանակները, Հայտ. 1:12,20; 2:1
 - բ. յոթ աստղերը, Հայտ. 1:16,20; 2:1
 - գ. յոթ եկեղեցիները, Հայտ. 1:20
 - դ. Աստծո յոթ հոգիները, Հայտ. 3:1; 4:5; 5:6
 - ե. յոթ ճրագակալները, Հայտ. 4:5
 - զ. յոթ կնիքները, Հայտ. 5:1,5
 - է. յոթ եղջյուրները և յոթ աչքերը, Հայտ. 5:6 27
 - ը. յոթ հրեշտակները, Հայտ. 8:2,6; 15:1,6,7,8; 16:1; 17:1
 - թ. յոթ փողերը, Հայտ. 8:2,6
 - ժ. յոթ որոտները, Հայտ.10:3,4
 - ի. յոթ հազարը, Հայտ.11:13
 - լ. յոթ գլուխները, Հայտ. 13:1; 17:3,7,9
 - խ. յոթ պատուհանները, Հայտ. 15:1,6,8; 21:9
 - ծ. յոթ սկավառակները, Հայտ.15:7; 21:9
 - կ. յոթ թագավորները, Հայտ. 17:10
 5. Տաս – ամբողջականություն
 - ա. կիրառված Ավետարաններում՝
 - (1) Մատթ.20:24; 25:1,28
 - (2) Մարկ.10:41
 - (3) Դուկ.14:31; 15:8; 17:12,17; 19:13,16,17,24,25
 - բ. կիրառված Հայտնության մեջ՝
 - (1) Հայտ. 2:10, նեղության տաս օրերը
 - (2) Հայտ.12:3; 17:3,7,12,16, տաս եղջյուրները
 - (3) 13:1, տաս թագերը
 - գ. 10-ի բազմապատիկները Հայտնության մեջ

(1) 144,000=12x12x1000, տես Հայտ. 7:4; 14:1,3

(2) 1,000=10x10x10, տես Հայտ. 20:2,3,6

6. Տասներկու – մարդկանց խումբ

ա. Հակոբի տասներկու որդիները (Բարայելի տասներկու ցեղերը, Ծննդ.35:22; 49:28)

բ. տասներկու պուները, Ելից 24:4

գ. Քահանայապետի լանջապանակի տասներկու քարերը, Ելից 28:21; 39:14

դ. Սրբարանի սեղանի վրա տասներկու առաջավորության հացերը (տասներկու ցեղերի համար Աստծո մատակարարման խորհրդապատկերը), Ղևտ.25:5; Ելից 25:30

ե. տասներկու լրտեսները, 2 Օր.1:23;

զ. Տասներկու քարերը տանողները, Հեսու 3:22; 4:2,3,4,8,9,20

է. տասներկու առաքյալները, Մատթ.10:1

ը. գործածված Հայտնության մեջ՝

(1) տասներկու հազար կնքվածները, Հայտ. 7:5-8

(2) տասներկու աստղերը, Հայտ.12:1

(3) տասներկու դարպասները, տասներկու հրեշտակները, տասներկու ցեղերը, Հայտ. 21:12

(4) հիմքի տասներկու քարերը, տասներկու առաքյալների անունները, Հայտ. 21:14

(5) Նոր Երուսաղեմը տասներկու հազար ասպարեզ էր, Հայտ. 21:16

(6) տասներկու մարգարիտներից շինված տասներկու դարպասները, Հայտ. 21:12

(7) կենաց ծառը՝ տասներկու տեսակի պտուղներով, Հայտ. 22:2

7. Քառասուն – ժամանակի համար կիրառվող թիվ՝

ա. երբեմն քառացիորեն (ելիցը և անապատում թափառելը, օր. Ելից 16:35); 2 Օր.2:7; 8:2

բ. կարող է քառացի կամ սիմվոլիկ իմաստ ունենալ՝

(1) ջրհեղեղը, Ծննդ.7:4,17; 8:6

(2) Մովսեսը Սինա լեռան վրա, Ելից 24:18; 34:28; 2 Օր.9:9,11,18,25

(3) Մովսեսի կյանքի փուլերը.

(ա) քառասուն տարի Եգիպտոսում

(բ) քառասուն տարի անապատում

(գ) քառասուն տարի Բարայելին առաջնորդելիս

(4) Հիսուսը քառասուն օր ծոմ պահեց, Մատթ.4:2, Մարկ.1:13; Ղուկ.4:2

գ. Նկատեք (համաբարբառի միջոցով) շատ անգամ այս թիվը Աստվածաշնչում հայտնվում է ժամանակի նշանակությամբ:

8. Յոթանասուն – մարդկանց համար ամբողջական թիվ

ա. Բարայել, Ելից 1:5

բ. յոթանասուն երեցները, Ելից 24:1,9

գ. վախճանաբանական, Դան.9:2,24

դ. միսիոներական թիվ, Ղուկ.10:1,17

ե. ներում (70x7), Մատթ.18:22

Բ. Լավ հղումներ

1. Ջոն Ջ. Դեյվիս, Աստվածաշնչյան Թվաբանություն (John J. Davis, Biblical Numerology)

2. Դ. Բրենթ Սենդի, Մաճեր և Մանգաղներ (D. Brent Sandy, Plowshares and Pruning Hooks)

ՀՄՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵԿԵՂԵՑԻ (*ekklesia*)

SPECIAL TOPIC: CHURCH (*ekklesia*)

Այս հունարեն *ekklesia* տերմինը երկու բառերից է կազմված «դուրս» և «կանչված»: Այս բառն ունեւր աշխարհիկ օգտագործում (այսինքն՝ քաղաքացիներին կանչել են ժողովի, տես Գործք 19:32,39,41) և Մեպտուազինդում այս տերմինը օգտագործվում է կրոնական իմաստով Իսրայելի «համայնքի» համար (*Qahal*, BDB 874, KB 1078, տես Թվոց 16:3; 20:4; 2 Օր. 31:30): Վաղ եկեղեցին իրեն համարում էր որպես Հին Կտակարանի Աստծո ժողովրդի շարունակություն: Նրանք էին նոր Իսրայելը (տես Հռ. 2: 28-29; Գաղ. 3:29; 6:16; 1 Պետ. 2: 5,9; Հայտ. 1: 6), Աստծո համաշխարհային առաքելության իրականացումը (տես Ծննդ. 3:15; 12:3; Ելից 19:5-6; Մատթ. 28:18-20; Ղուկ.24:47; Գործք 1:8; տես Հատուկ Թեմա: ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

Այս տերմինը մի քանի իմաստներով օգտագործվում է Ավետարաններում և Գործքում

1. աշխարհիկ քաղաքային ժողով, Գործք 19:32,39,41
2. Աստծո համամարդկային ժողովուրդը Քրիստոսում, Մատթ. 16:18 և Եփեսացիս թուղթը
3. Քրիստոնյա հավատացյալների տեղական համայնքը, Մատթ. 18:17; Գործք 5:11 (այս համարներում Երուսաղեմի եկեղեցին); Գործք 13:1; Հռ. 16:5; 1 Կոր. 16:19; Կող. 4:15; Փիլիմոն 2
4. Իսրայել ժողովուրդը միասին, Գործք 7:38, Ստեփանոսի քարոզում
5. տարածաշրջանում Աստծո ժողովուրդը, Գործք 8:3; Գաղ. 1: 2 (Հուդա կամ Պաղեստին)

Եկեղեցին հավաքված ժողովուրդ է, ոչ թե շենք: Հարյուրավոր տարիներ չեն եղել եկեղեցական շինություններ: Հակոբոս թղթում (ամենահին քրիստոնեական գրքերից մեկը) եկեղեցուն ասվում է «*synagōgē*» (ժողովարան): Եկեղեցու համար այս տերմինը հանդիպում է միայն Հակոբոսում (տես Հակ. 2: 2; 5:14):

▪ **«Ասիայումն էք»** Սա վերաբերում է Թուրքիայի ժամանակակից երկրի արևմտյան հատվածին, որը մեծ մասամբ Փրուգիայի հին երկիրն էր, որը դարձավ «Փոքր Ասիայի» հռոմեական նահանգը:

▪ **«Չնորհք լինի ձեզ հետ եւ խաղաղութիւն»** Սա ողջունի ավանդական ձև էր, որը հաճախ է երևում Պողոսի գրվածքներում: Շատերը պնդում են, որ քրիստոնյաները փոխել են ավանդական հունարեն գրական ողջույնը «*charein*»-ից (տես Հակ. 1:1) *charis* քրիստոնեական ողջունի, նմանատիպ հնչողությանը, ինչը նշանակում է «չնորհք»: «Խաղաղություն» բառը կարող էր անդրադառնալ եբրայերեն «*shalom*» տերմինին, դրանով իսկ համադրելով հունարեն և եբրայերեն ողջունները, որպեսզի վերաբերվեն եկեղեցիների երկու խմբերին: Սակայն սա պարզապես ենթադրություն է:

▪ **«նորանից որ է, եւ որ էր, եւ որ գալու է»** Սա, անշուշտ տիտղոս է անփոփոխ Աստծո Ուխտի համար (տես Մաղ. 102:7; Մաղ. 3:6; Հակ. 1:17): Դրա քերականական ձևը անհարմար է հունարենով, բայց արտացոլում է արամերենի ֆոնը: Բառային արտահայտությունը սա է «այն Մեկից ով է, այն Մեկից ով էր և այն Մեկը ով գալու է» (տես Հայտ. 4:8): Այս արտահայտությունը արտացոլում է Հին Կտակարանյան Ուխտի «Ես եմ» տիտղոսը (ՅԱՀՎԵ, տես Ելից 3:14, տես ՀՄՏՈՒԿ ԹԵՄԱ:ԱՍՏՈՒ ԱՆՈՒՆԵՐԸ, Հայտ. 1:8): Այս արտահայտությունն օգտագործվում է Հայր Աստծո համար Հայտ. 1:4 և 8, և Հիսուս Քրիստոսի համար, Հայտ. 1:17 և 18-ում (տես Եբ. 13:8): Տիտղոսների նպատակաուղղված փոխանցումը ՅԱՀՎԵԻՑ-Հիսուս՝ միակ միջոցն էր, որ Նոր Կտակարանյան հեղինակները հաստատեցին Հիսուսի աստվածությունը:

Աստծո այս եռակի արտահայտությունը, որպես անցյալ, ներկա և ապագա, փոփոխվել է Հայտ. 11:17 և 16:5, որը երկրորդ գալուստն է փողերի ձայնի վերջում, միայն ներկան և անցյալը, քանի որ ապագան (վերջի ժամանակը) եկել է:

▪ **«եւ այն եօթը Հոգիներիցը, որ նորա աթոռի առաջին են»** Տես Հատուկ Թեմա՝ ստորև:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳՐՔԻ ՅՈԹ ՀՈԳԻՆԵՐԸ

SPECIAL TOPIC: SEVEN SPIRITS IN REVELATION

Այս յոթ հոգիների ինքնությանը վերաբերող մի քանի տեսություններ են եղել:

1. Քանի որ այս արտահայտության առաջին հանդիպումը ընկած է Հայր Աստծուն (այսինքն, Հայտ. 1: 4) և Հիսուս Քրիստոսին (այսինքն, Հայտ. 1: 5) վերաբերող մտքերի միջև, շատ մեկնաբաններ պնդել են, որ դա անպայման վերաբերում է Սուրբ Հոգուն (նշում է NASB- ը «Հոգին» մեծատառով է): Դա հնարավոր է, բայց ոչ հավաստի: Այս նույն արտահայտությունը նաև օգտագործվում է Հայտ. 3: 1; 4: 5 և 5: 6-ում: Այս մյուս դեպքերում էլ համոզիչ չէ, որ դա վերաբերում է Սուրբ Հոգուն, եթե չընդունվի Չաքարիա 4-ի ակնարկը:
2. Ոմանք հավատում են, որ դա ակնարկ է Ես. 11: 2-ին Սեպտուագինդից, որտեղ նշված են Հոգու յոթ պարզները: Սակայն Մագորեթիկ տեքստում նշված են միայն վեց պարզները:
3. Նրանք, ովքեր միջկտակարանյան հրեական ակունքներից են, դրանք նմանեցնում են Աստծո գահի առջև յոթ հրեշտակների ներկայության հետ (տես Հայտ.8: 2):
4. Ոմանք նրանց կապում են այն հրեշտակների կամ յոթ եկեղեցիների պատգամաբերների հետ, որոնք հիշատակվում են Հայտ. 1:20:

Ուշադրություն դարձրեք, որ Հայտ. 1:20- ը նույնականացնում է

1. յոթ աստղերը (տես Հայտ. 1: 16,20; 2: 1) որպես յոթ եկեղեցիների հրեշտակները (տես Հայտ. 2-3)
2. յոթ ճրագակալները (տես Հայտ. 1: 12,13,20; 2: 1) յոթ եկեղեցիներն են:

Բայց չկա «յոթ հոգիների» նույնականացումը: Վերոնշյալ թիվ 4-ը ենթադրություն է, բայց առանց կոնկրետ տեքստային աջակցության: Յոթը կարևոր խորհրդանշական թիվ է Աստվածաշնչում: Տես Հատուկ Թեմա: Սուրբ Գրքի սիմվոլիկ թվերը:

1:5 «Եւ Յիսուս Քրիստոս հաւատարիմ վկայիցը» Սա երեք արտահայտություններից առաջինն է, որը նկարագրում է Հիսուս Քրիստոսին: Այս բացող համարները զուգահեռ են Հայտ. 20:6-21: «Հավատարիմ» ուներ Հին Կտակարանյան իմաստ մեկի մասին, ով հավատարիմ է, ճշմարիտ և հուսալի (տես Ես. 55:3-5): Ինչպես Աստծո գրված խոսքն է (Աստվածաշունչը) վստահելի, այնպես էլ Նրա վերջնական հայտնությունը, Կենդանի խոսքը, Հիսուսը (տես Հայտ. 3:14): Ավետարանը պատգամը է, որին պետք է հավատալ, մարդ, որին պետք է ընդունել, և այն կյանքը, որը ապրեց այդ մարդը:

«Հավատարիմ վկան» հունարեն արտահայտությունը կարող է նշանակել

1. «Իմ վկան, Իմ հավատարիմը» որպես երկու արտահայտություն, տես Հայտ. 2:13 (անձնական դերանունի ավելացմամբ)
2. «հավատարիմ և ճշմարիտ Վկա», տես Հայտ. 3:14 («և ճշմարիտ»-ի ավելացմամբ)

▪ **«մեռելներից անդրանիկը»** Տես Հատուկ Թեմա՝ ստորև:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆԴՐԱՆԻԿ

SPECIAL TOPIC: FIRSTBORN

Այս «անդրանիկ» (*prōtotos*) բառը Աստվածաշնչում կիրառվում է մի քանի տարբեր իմաստներով:

1. Բառի ՀԿ-յան ծագումը վերաբերում է
 - ա. անդրանիկ զավակը պատկանում է ՅԱՀՎԵԻՆ (BDB 114, KB 131, տես Ելից 13:2,12; 22:29; 34:19; Թվոց 3:13)
 - բ. ընտանիքում անդրանիկ զավակի նախապատվությանը (տես 2 Օր.21:17; Սաղ.89:27; Ղուկ. 2:7; Հռ.8:29; Եբր.11:28)

2. Բառի կիրառությունը Կող.1:15-ում խոսում է Հիսուսի վերաբերյալ որպես առաջին ստեղծագործության, որը հնարավոր է լինի ՀԿ-յան մի մեջբերում Առ.8:22-31-ից կամ Աստծո գործակիցը՝ օգնականը, արարչագործության ժամանակ (տես Հովհ.1:3; 1 Կոր.8:6; Կող. 1:15-16; Եբր.1:2)
3. Բառի կիրառությունը Կող.1:15,18; 1 Կոր.15:20,23; Հայտ.1:5-ում վերաբերում է մեռելներից անդրանիկը լինելուն
4. Բառի կիրառությունը ՀԿ-ում Մեսիայի անվան հետ է կապված (տես Սաղ.89:27; Եբր.1:6; 12:23); սա մի անուն է, որը համախմբում է Հիսուսի առաջնահերթության և Նրա կենսորոնական դերի մի քանի առանձնահատկությունները:

▪ **«Էւ երկրի թագաւորների իշխանն է»** Այս արտահայտությունը, ինչպես նախորդը, ակնարկ է Սաղ. 89:27 (Սաղ. 72:11; Ես. 48:23), որը խոսում է Հիսուսի մասին, որպես խոստացյալ Մեսիա: Այն նաև արտացոլում է Հովհաննեսի արձագանքը՝ ուղղված

1. հռոմեական կայսրության արևելյան նահանգների կայսրի երկրպագությանը
2. «Թագավոր թագավորաց» արքայական Միջագետքյան արտահայտության օգտագործմանը (տես Հայտ. 11:15; 17:14; 19:16)

▪ **«նորան որ մեզ սիրեց»** Սա ներկա ներգործական դերբայ է, «Հիսուսը շարունակում է սիրել մեզ» իմաստով: Այս հաստատումը շատ կարևոր է յոթ եկեղեցիներից հինգի թույլ կողմերի և ձախողումների (տես 2-3 գլուխներ) լույսի ներքո:

▪ **«Էւ մեր մեղքերիցն լուացաւ»** Սա աօրիստ ներգործական դերբայ է: Վուլգատ և Ղպտի տարբերակները, ինչպես նաև մի քանի կրճատված հունարեն ձեռագրեր և King James Version ունեն «լվացված» (*louō*) բայը, որոնք արտահայտված են հենց «լվանալ» (*luō*) բառով: Հին դպիրները պատրաստում էին Նոր Կտակարանի տեքստեր, երբ մեկը կարդում էր բարձրաձայն, իսկ մյուսները գրի էին առնում այն:

«Ազատեց» տերմինը (լրացումներով) գտնվում է հին հունարեն ձեռագրերում P¹⁸, 8* (նախդիրով), 8², A, և C, իսկ «լվանալ» գտնվել է միայն ուշ մեծատառ ձեռագրերում, P (վեցերորդ դար) և 046, ինչպես նաև մի քանի ուշ մեծատառ (ընթացիկ հունարեն ձեռագիր) ձեռագրերում: Այսպիսով, «ազատեց» կամ «լվաց»-ը նախընտրելի ընթերցում է: UBS⁴ տալիս է «ազատեց»-ը «որոշակի» վարկանիշով: Տես Հատուկ Թեմա: Տեքստային քննադատություն:

▪ **«իր արիւնովն»** Սա ակնհայտ ակնարկ է գոհաբերությանը (տես Ղևտ. 1-7), Հիսուս Քրիստոսի վճռական քավությանը (տես Հայտ. 5:9; 7:14; 12:11; Մարկ. 10:45; 2 Կոր. 5:21; Ես. 52:13-53:12): «Իր արյունով» է հերթական ավետարանի ճշմարտությունը (տես Հռ. 3:25; Եփ. 1:7; 2:13; Կող. 1:20; 1 Պետ. 1:18-19: Ինչ-որ կերպ Աստծո խորհրդի մեջ, Նրա արդարությունն ու ողորմությունը բոլոր մեղավոր մարդկության համար հանդիպում է Հիսուսի փոխանորդ մահվան մեջ (տես Եբ. 9:11-28): Տես Հատուկ Թեմա՝ ստորև:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՎԱՂ ԵԿԵՂԵՑՈՒ KERYGMA

SPECIAL TOPIC: THE KERYGMA OF THE EARLY CHURCH

Քրիստոնեության մասին այնքան շատ տեսակետներ կան: Մեր օրերը կոչվում են կրոնական բազմակարծություն/պլուրալիզմ, ինչպես առաջին դարում: Անձամբ ես լիովին ներառում եմ և ընդունում բոլոր այն խմբերը, ովքեր պնդում են, որ ճանաչում և վստահում են Հիսուս Քրիստոսին: Մենք երբեմն չենք համաձայնվում այս կամ այն հարցի շուրջ, բայց հիմնականում քրիստոնեությունը ամբողջը Հիսուսի մասին է: Այնուամենայնիվ, կան խմբեր, որոնք պնդում են, որ քրիստոնյա են, որոնք թվացյալ են «կարծես թե» կամ «նորահավատ ակտիվիստ»: Ինչպե՞ս կարող եմ ասել

տարբերությունը:

Լավ կան երկու եղանակներ.

Ա. օգտակար գիրք է *The Kingdom of the Cults* by Walter Martin իմանալու համար, թե արդի ադանդավորական խմբերն ինչի են հավատում (իրենց տեքստերից):

Բ. Վաղ եկեղեցու քարոզները, հատկապես Պետրոս և Պողոս առաքյալների, Գործքում, մեզ տալիս են հիմնական ուրվագիծ, թե ինչպես են առաջին դարի ներշնչված հեղինակները քրիստոնեությունը ներկայացրել տարբեր խմբերի: Այս վաղ «հոչակումը» կամ «քարոզելը» (որոնց ամփոփումն է Գործքը) հունարեն կոչվում են *kerygma*: Հիսուսի մասին ավետարանի հիմնական ճշմարտությունները Գործք Առաքելոց գրքից.

1. կատարում է շատ Հին Կտակարանյան մարգարեություններ - Գործք 2: 17-21,30-31,34; 3: 18-19,24; 10:43; 13: 17-23,27; 33: 33-37,40-41; 26: 6-7,22-23
2. ՅԱՀՎԵԻ կողմից ուղարկված, ինչպես որ խոստացել էր - Գործք 2:23; 3:26
3. կատարեց հրաշքներ, հաստատելու Իր ուղերձը և հայտնելու Աստծո գույթը - Գործք 2:22; 3:16; 10:38
4. հանձնվել, մերժվել - Գործք 3: 13-14; 4:11
5. խաչված - Գործք 2:23; 3: 14-15; 4:10; 10:39; 13:28; 26:23
6. հարություն առավ - Գործք 2: 24,31-32; 3: 15,26; 4:10; 10:40; 13:30; 17:31; 26; 23
7. բարձրացվեց Աստծու աջ կողմը նստեց - Գործք 2: 33-36; 3: 13,21
8. կրկին կգա - Գործք 3: 20-21
9. նշանակված Դատավոր - Գործք 10:42; 17:31
10. ուղարկեց Սուրբ Հոգին - Գործք 2: 17-18,33,38-39; 10: 44-47
11. Փրկիչ բոլոր նրանց համար, ովքեր հավատում են - Գործք 13: 38-39
12. ուրիշ Փրկիչ չկա - Գործք 4:12; 10: 34-36

Ահա ճշմարտության այս առաքելական սյուների շարձագանքելու մի քանի եղանակներ.

1. Ապաշխարել - Գործք 2:38; 3:19; 17:30; 26:20
2. Հավատալ - Գործք 2:21; 10:43; 13: 38-39
3. Մկրտվել - Գործք 2:38; 10: 47-48
4. Ստանալ Հոգին - Գործք 2:38; 10:47
5. Բոլորը կարող են գալ դեպի - Գործք 2:39; 3:25; 26:23

Այս սխեման ծառայեց որպես վաղ եկեղեցու կարևոր հոչակումը, թեև Նոր Կտակարանի տարբեր հեղինակներ կարող են մի մասը թողնել կամ ընդգծել իրենց գրվածքներում այլ մանրամասներ: Մարկոսի ամբողջ Ավետարանը սերտորեն հետևում է *kerygma* -ի Պետրինի տեսանկյունին: Մարկոսը ավանդաբար համարվում է որպես Պետրոսի քարոզները կառուցող, քարոզված Հռոմում, գրված Ավետարանում: Մատթեոսը և Դուկասը հետևում են Մարկոսի հիմնական կառուցվածքին:

1:6 «արա» Սա աօրիստ ներգործական սահմանական է: Ինչպես Հիսուսն ազատեց մեզ մեր մեղքերից (Հայտ. 1:5), Նա նաև մեզ քահանաներ և թագավոր արեց՝ Իրեն ներկայացնելու համար:

Արևելահայերեն «թագավորներ եւ քահանաներ արաւ Աստուծոյ»

Արևմտահայերեն «թագավորներ եւ քահանաներ ըրաւ Աստուծոյ»

NASB «քահանաներ, թագավորներ Իր Աստծո»

NKJV «թագավորներ և քահանաներ Իր Աստծո»

NRSV «թագավորներ, քահանաներ, ծառայելով Իր Աստծուն»

TEV, NJB «քահանաների թագավորություն, ծառայելու իր Աստծուն»

Սա ակնարկ է Իսրայելի համար օգտագործվող Հին Կտակարանյան տերմիններին Ելից 19:6 և Ես. 61:6, որտեղ ազգը համարվում էր քահանաների թագավորություն: Աստված ընտրեց Աբրահամին ընտրելու Իսրայելին՝ կորսված աշխարհը ընտրելու համար (տես Ծննդ. 3:15; 12:3): Իսրայելը նախատեսված էր վկայության ազգ լինելու համար (այսինքն, քահանաներ), սակայն նրանք ձախողեցին ավետարանչական այս հանձնարարության մեջ (տես Եզեկ. 36:22-38): Հետևաբար, Աստված ընտրեց Եկեղեցուն՝ հասնելու աշխարհին (տես Մաթ. 28:19-20; Ղուկ. 24:47; Գործք 1:8): Այն նույն արտահայտությունները, որոնք օգտագործվել են Իսրայելի համար, այժմ օգտագործվում են Եկեղեցու համար (տես Գաղ. 3:29; 6:16; Փիլ. 3:3; 1 Պետ. 2:5,9; Հայտ. 1:6; 5:10; 20:6):

Կարևոր է նշել «հավատացյալների քահանայության» հավաքական, աստվածաշնչյան շեշտադրումը: Արևմտյան քրիստոնեությունը գերադասեց անհատի տեղը և դերը, և թերագնահատեց աստվածաշնչյան հավաքականությունը: Քրիստոսի մարմնի Նոր Կտակարանյան փոխաբերությունը (տես 1 Կոր. 12) նմանատիպ փոխաբերություն է: Հին Կտակարանյան տիտղոսը երբեք չի նշանակել, արդարացնել հավատացյալների անհատական ազատությունը: Այս շեշտադրումը զարգացավ Մարտին Լյութերի և նրա կաթոլիկ եկեղեցու պատմական պայքարից: Այս կոնտեքստի ուշադրության կենտրոնում ավետարանչությունն է (տես Հայտ. 1:7), ներառելով յուրաքանչյուր հավատացյալի, փորձելով հասնել Աստծո պատկերով ստեղծված յուրաքանչյուր կորսված և կարիքավոր մարդուն, որոնց համար Քրիստոսը մահացավ (տես Հովհ. 3:16; 1 Տիմ. 2:4; 2 Պետ. 3:9; 1 Հովհ. 2:2; 4:14): Տես Հատուկ Թեմա՝ ստորև:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ Է
SPECIAL TOPIC: CHRISTIANITY IS CORPORATE**

- Ա. Պողոսը և Պետրոսը օգտագործում են ՀՈԳՆԱԿԻ փոխաբերություններ՝ Աստծո ժողովրդի համար
 1. մարմին (տես 1 Կոր. 12: 12-20)
 2. դաշտ (տես 1 Կոր. 3: 9)
 3. շենք (տես 1 Պետ. 2:4-5)
- Բ. «Մուրբ» տերմինը միշտ ՀՈԳՆԱԿԻ է (բացի Փիլ. 4:21, բայց նույնիսկ այնտեղ նաև հավաքական է)
- Գ. Մարտին Լյութերի Ռեֆորմացիայի շեշտադրումը «հավատացյալի քահանայության» վրա (այսինքն՝ հոգու իրավասությունը) աստվածաշնչային ենթադրությունն է: Իրականում Աստվածաշունչը խոսում է «հավատացյալների քահանայության» մասին (տես Ելից 19: 6; 1 Պետ. 2: 5,9; Հայտ. 1: 6):
- Դ. Յուրաքանչյուր հավատացյալ օժտված է պարզկենտրոն ընդհանուր բարիքի համար (տես 1 Կոր. 12: 7)
- Ե. Միայն համագործակցությամբ կարող է Աստծո ժողովուրդը արդյունավետ լինել: Ծառայությունը համագործակցող է (տես Եփ. 4: 11-12):

- **«Աստուծոյ եւ իր Հօր համար»** Այս արտահայտությունը կարող է թվալ, որ արժեզրկում է Որդու աստվածության լիությունը (տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐԸՈՐԴՆԻԹՅՈՒՆ, Հայտ. 22:17), բայց դա իրականում Հիսուսի ենթակայությունը հաստատելու միջոց է մարմին հագած ժամանակ: Նույն արտահայտությունն օգտագործվում է Պողոսի կողմից Հռ. 15:6: Հավասարության իմաստը կարելի է տեսնել Հայտ. 3:21; 14:1:

- **«նորան փառք եւ զօրութիւն»** «Փառք» տերմինը Հին Կտակարանյան առևտրային տերմինն է (օգտագործելով գնումները կշռելու համար), որը նշանակում է «ծանր լինել», որը ծանր էր (օրինակ, ոսկին) արժեքավոր էր: Այս տերմինը օգտագործվում է Աստծո պայծառության, վեհության, սրբության, փառքի *Shekinah* ամպի օգնությամբ, Ելից գրքում: Փառքը հաճախ վերագրվում էր Հայր

Աստծուն Նոր Կտակարանում (տես Հռ. 11:36; 16:27; Եփ. 3:21; Փիլ. 4:20; 1 Տիմ. 1:17; 2 Տիմ. 4:18; 1 Պետ. 4:11; 5:11; 2 Պետ. 3:18; Հուդա 25; Հայտ. 1:6; 5:13; 7:12): Տես Հատուկ Թեմա՝ Փառք Հայտ. 15:8:

Հայր Աստծուն ուղված «տիրապետություն» տերմինը աստվածաբանորեն նման է Որդու ենթակայությանը (տես Հովհ. 17): Հիտուսը Հոր գործ անողն է բոլոր բաներում, բայց նպատակը Հորը փառավորելն է (տես 1 Կոր. 15:27-28):

▪ **«յախտեանս յախտենից»** Այս բառը բառացիորեն նշանակում է «դարե դար»: Այս *aiōnos* կրկնակի օգտագործումը, եզակի ապա հոգնակի, տարածված է Հայտնության գրքում (տես Հայտ. 1:18; 4:9,10; 5:13; 7:12; 10:6; 11:15; 15:7; 19:3; 20:10; 22:5): Ջարմանալի է, որ վաղ հույն ականատեսները բաց են թողել երկրորդը (MSS P¹⁸, A, P): UBS⁴ չի կարող որոշել, թե որ ընթերցանությունն է բնօրինակը: Տես Հատուկ Թեմա՝ ստորև:

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՀԱՎԻՏՅԱՆ (ՀՈՒՆԱՐԵՆ ԻՂԻՈՍԱ)

SPECIAL TOPIC: FOREVER (GREEK IDIOM)

Մեկ հունարեն իդիոմատիկ արտահայտություն է «դարեց դար» է (տես Ղուկ. 1:33; Հռ. 1:25; 11:36; 16:27; Գաղ. 1: 5; 1 Տիմ. 1:17), որը կարող է արտացոլել երբայերեն *'olam*: Տես Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*, էջ 319-321, և Հատուկ Թեմա: Հավիտյան (*'Olam*).

Դրա հետ կապ ունեցող այլ արտահայտություններ «մինչև վերջ, հավիտյան» (տես Մատթ. 21:19; Մարկ. 11:14; Ղուկ. 1:55; Հովհ. 6:58, 8:35, 12:34; 13: 8; 14:16; 2 Կոր.9: 9) և «դարեց դար» (տես Եփ. 3:21): Թվում է այս հունարեն իդիոմաների «ընդմիջտ, հավիտյան» միջև տարբերություն չկա: «Դարեր» տերմինը կարող է լինել ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՎ ռաբիական քերականական կառուցվածքի պատկերավոր իմաստով, որը կոչվում է «ՄԵԾՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎԸ», կամ այն կարող է վերաբերել մի քանի «դարաշրջանների» գաղափարին, հրեական իմաստով «ամբարշտության դարաշրջան», «գալիք ժամանակը» կամ «արդարության դարաշրջանը» (տես Հատուկ Թեմա: Այս դարաշրջանը և Գալիք դարաշրջանը):

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՀԱՎԻՏՅԱՆ ('OLAM)

SPECIAL TOPIC: FOREVER ('olam)

Երբայերեն *'olam* բառի ստուգաբանությունը օրօ (BDB 761, KB 798) անորոշ է (NIDOTTE, հատոր 3, էջ 345): Այն օգտագործվում է մի քանի իմաստներով (սովորաբար որոշվում է կոնտեքստով): Մրանք միայն ընտրված օրինակներ են:

1. հին բաներ

ա. ժողովուրդներ, մարդիկ, Ծննդ. 6: 4; 1 Թագ. 27: 8; Երեմ. 5:15; 28: 8

բ. վայրեր, Ես. 58:12; 61: 4

գ. Աստված, Մաղ. 93: 2; Առ. 8:23; Ես. 63:16

դ. բաներ, Ծննդ. 49:26; Հոբ 22:15; Մաղ. 24: 7,9; Ես. 46: 9

ե. ժամանակ, 2 Օր. 32: 7; Ես. 51: 9; 63: 9,11

2. ապագա ժամանակը

ա. մեկի կյանքը, Ել. 21: 6; 2 Օր. 15:17; 1 Թագ. 1:22; 27:12

բ. չափազանցություն թագավորի համար, 3 Թագ. 1:31; Մաղ. 61: 7; Նեեմ. 2: 3

գ. շարունակական գոյություն

(1) երկիրը, Մաղ. 78:69; 104: 5; Ժող. 1: 4

(2) երկինքը, Մաղ. 148: 5

դ. Աստծո գոյությունը

(1) Ծննդ. 21:33

(2) Ել. 15:18

(3) 2 Օր. 32:40

(4) Սաղ. 93: 2

(5) Ես. 40:28

(6) Երեմ. 10:10

(7) Դան. 12: 7

ե. ուխտը

(1) Ծննդ 9: 12,16; 17: 7,13,19

(2) Ելից 31:16

(3) Ղևտ. 24: 8

(4) Թվոց 18:19

(5) 2 Թագ. 23: 5

(6) Սաղ. 105: 10

(7) Ես. 24: 5; 55: 3; 61: 8

(8) Երեմ. 32:40, 50: 5

զ. հատուկ ուխտ Դավիթի հետ

(1) 2 Թագ. 7: 13,16,25,29; 22:51, 23: 5

(2) 3 Թագ. 2: 33,45; 9: 5

(3) 2 Մնաց. 13: 5

(4) Սաղ. 18:50; 89: 4,28,36,37

(5) Ես. 9: 7; 55: 3

է. Աստծո Մեսիան

(1) Սաղ. 45: 2; 72:17, 89: 35-36; 110: 4

(2) Ես. 9: 6

ը. Աստծո օրենքները

(1) Ելից 29:28, 30:21

(2) Ղևտ. 6: 18,22; 7:34; 10:15, 24: 9

(3) Թվոց 18: 8,11,19

(4) Սաղ. 119: 89,160

թ. Աստծո խոստումները

(1) 2 Թագ. 7: 13,16,25; 22:51

(2) 3 Թագ. 9: 5

(3) Սաղ. 18:50

(4) Ես. 40: 8

ժ. Աբրահամի հետնորդները և Խոստացյալ երկիրը

(1) Ծննդ. 13:15; 17:19; 48: 4

(2) Ելից 32:13

(3) 1 Մնաց. 16:17

ի. ուխտի տոները

(1) Ելից 12:14, 17,24

(2) Ղևտ. 23: 14,21,41

(3) Թվոց 10: 8

լ. Հավիտենական, հավերժություն

(1) 3 Թագ. 8:13

(2) Սաղ. 61: 7-8; 77: 8; 90: 2; 103: 17; 145: 13

(3) Ես. 26: 4; 45:17

(4) Դան. 9:24

խ. Սաղմոսներն ասում են, թե ինչ կանեն հավատացյալները հավիտյան

- (1) կգոհանան, Սաղ. 30:12; 79:13
- (2) կկենան Նրա ներկայության մեջ, Սաղ. 41:12; 61: 4,7
- (3) կվստահեն Նրա ողորմածությանը, Սաղ. 52: 8
- (4) կփառաբանեն Տիրոջը, Սաղ. 52: 9
- (5) փառաբանություններ կերգեն, Սաղ. 61: 8; 89: 1
- (6) կհռչակեն Նրա արդարությունը, Սաղ. 75: 7-9
- (7) կփառաբանեն Նրա անունը, Սաղ. 86:12; 145: 2
- (8) կօրհնեն Նրա անունը, Սաղ. 145: 1

ճ. օգտագործվում է Եսայիայի մեջ՝ նկարագրելու նոր ժամանակաշրջանը

- (1) հավիտենական ուխտ, Ես. 24:5; 55:3; 61: 8
- (2) ՅԱՀՎԵՆ հավիտենական վեմ է, Ես. 26: 4
- (3) հավիտենական ուրախություն, Ես. 35:10; 51:11; 61: 7
- (4) հավիտենական Աստված, Ես. 40:28
- (5) հավիտենական փրկություն, Ես. 45:17
- (6) հավիտենական ողորմություն (հեսեդ), Ես. 54: 8
- (7) հավիտենական նշան, Ես. 55:13
- (8) հավիտենական անուն, Ես. 56:5; 63: 12,16
- (9) հավիտենական լույս, Ես. 60: 19,20

Ես. 33:14-ում գտնվում չարի հավիտենական պատիժին վերաբերող բացասական կողմնորոշումը, «հավիտենական այրվել»: Եսայիան հաճախ օգտագործում է «կրակ» բառը՝ նկարագրելու Աստծո զայրույթը (կարդա Ես. 9: 18,19; 10:16; 47:14), բայց միայն Ես. 33:14 այն նկարագրվում է որպես «հավիտենական»:

3. թե հետևի թե առաջ ժամանակի մեջ («հավիտենականությունից հավիտենականություն»)

ա. Սաղ. 41:13 (գովաբանություն առ Աստված)

բ. Սաղ. 90: 2 (Աստված Ինքը)

գ. Սաղ. 103: 17 (Տիրոջ սիրառատ ողորմությունը)

Հիշեք, կոնտեքստը որոշում է տերմինի իմաստի չափը: Հավիտենական ուխտերը և խոստումները պայմանական են (այսինքն, Երեմիա 7, տես Հատուկ Թեմա: Ուխտ): Եղեք ուշադիր կարդալով ձեր ժամանակակից տեսակետը ժամանակի մասին կամ ձեր ՆԿ սիստեմատիկ աստվածաբանությունը ամեն ՀԿ օգտագործման յուրաքանչյուր խոսքի մեջ: ՆԿ ունիվերսալիզացնում է ՀԿ խոստումները (տես Հատուկ Թեմա: Հին Կտակարանի ապագայի կանխատեսումներն ընդդեմ Նոր Կտակարանի կանխատեսումների):

▪ **«Ամեն»** Սա Հին Կտակարանյան եբրայերեն «հավատք» տերմինի ձևն է (տես Ամբ. 2:4): Դրա սկզբնական ստուգաբանություն էր «լինել հաստատուն կամ վստահ»: Այնուամենայնիվ, կոնտեքստը փոխեց այն, ինչը պետք է հաստատվեր (տես 2 Կոր. 1:20): Այն օգտագործվել է փոխաբերականորեն ինչ-որ մեկի համար, ով հավատարիմ, անսասան, վստահելի է (Հիսուսի տիտղոսը, Հայտ. 3:14; Կոր. 1:20): Տես Հատուկ Թեմա՝ ստորև:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՄԵՆ
SPECIAL TOPIC: AMEN

I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

- Ա. «Ամեն» տերմինը առաջացել է եբրայերեն բառից
1. «ճմարտություն» (*emeth*, BDB 49)
 2. «ճմարտություն» (*emun, emunah*, BDB 53)
 3. «հավատք» կամ «հավատարմություն»

4. «վստահություն» (*dmn*, BDB 52)

- Բ. Այս բառի ստուգաբանության համաձայն նշանակում է մարդ, ով ունի ֆիզիկական կայուն դիրքորոշում և ոտքերի վրա հաստատ կանգնած է: Հակառակը կլինի մեկը, ով անկայուն է, սայթաքում է (տես Սաղ. 35:6; 40:2; 73:18; Եր. 23:12) կամ գայթակղվում (տես Սաղ. 73:2): Այս բառացի օգտագործման արդյունքում մշակվեց փոխաբերական իմաստ հետևյալ հասկացողություններն արտահայտելու համար՝ հավատարիմ, հուսալի, անձնվեր և վստահելի (տես Ամբ. 2: 4):
- Գ. Հատուկ օգտագործում (տես Հատուկ Թեմա: Հավատք, վստահություն, հուսալիություն և հավատարմություն Հին Կտակարանում)
1. սյուն, 4 Թագ. 18:16 (1 Տիմ. 3:15)
 2. հավաստիացում, վստահություն, Ելից 17:12
 3. կայունություն, Ելից 17:12
 4. կայունություն, Ես. 33: 6
 5. ճշմարիտ, 1 Թագ. 10:6; 17:24; 22:16; Առ. 12:22
 6. ամուր, հաստատ, 2 Մնաց. 20:20; Ես. 7: 9
 7. հուսալի (Թորա), Սաղ. 119: 43,142,151,160
- Դ. Հին Կտակարանում օգտագործվում են երկու այլ եբրայերեն տերմիններ ակտիվ հավատքի համար:
1. bathach (BDB 105), վստահություն
 2. yra (BDB 431), վախ, հարգանք, երկրպագություն (տես Ծննդ. 22:12)
- Ե. Հավատք կամ վստահելիություն բառի իմաստից զարգացավ կրոնական օգտագործման ձև, որ ուրիշի ճշմարիտ կամ հավաստի միտքը հաստատելու համար էր օգտագործվում (տես Թվ. 5: 22; 2 Օր. 27: 15-26; 3 Թագ. 1:36; 1 Մնաց. 16: 36; Նեեմ. 5:13; 8: 6; Սաղ. 41:13; 72:19; 89:52; 106: 48; Եր. 11: 5; 28: 6):
- Զ. Այս տերմինի աստվածաբանական բանալին ոչ թե մարդկության հավատարմությունն է, այլ ՅԱՀՎԵԻ (տես Ելից 34: 6; 2 Օր. 32:4; Սաղ. 108:4; 115: 1; 117: 2; 138: 2): Մեղավոր մարդկության միակ հույսը ՅԱՀՎԵԻ ողորմած, հավատարիմ, ուխտի նվիրվածությունն է և Նրա խոստումները: Նրանք, ովքեր ճանաչում են ՅԱՀՎԵԻՆ, պետք է լինեն Նրա նման (տես Ամբ. 2: 4): Աստվածաշունչը մարդկության մեջ Աստծո պատկերի վերականգնելու պատմությունն է (տես Ծննդ. 1: 26-27): Փրկությունը վերականգնում է Աստծո հետ մտերմիկ փոխհարաբերություն ունենալ մարդկության ունակությունը: Հենց սրա համար ենք մենք ստեղծվել:

II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

- Ա. «Ամեն» բառի օգտագործումը, որպես կրոնական հավաստիության վերջնական հաստատում, տարածված է Նոր Կտակարանում (տես 1 Կոր. 14:16; Հայտ. 1: 7; 5:14; 7:12):
- Բ. Աղոթքին մոտ գտնվող տերմին, որը օգտագործվում է Նոր Կտակարանում (տես Հռ. 1:25; 9: 5; 11:36; 16:27; Գաղ. 1: 5; 6:18; Եփ. 3:21; Ֆիլ. 4:20; 2 Թես. 3:18; 1 Տիմ. 1:17; 6:16; 2 Տիմ. 4:18):
- Գ. Հիսուսը միակն է, ով օգտագործեց տերմինը (կրկնապատկված Հովհ. 25 անգամ, այսինքն, Հովհ. 1:51; 3: 3,5,11 և այլն), ներկայացնելու նշանակալի մտքեր (տես Ղուկ. 4:24; 12: 37; 18: 17,29; 21:32; 23:43):
- Դ. Այն օգտագործվում է որպես կոչում Հիսուսի համար Հայտ. 3: 14 (տես նաև 2 Կոր. 1:20, հնարավոր է տիտղոս ՅԱՀՎԵԻ համար Ես. 65:16):
- Ե. Հավատարմության կամ հավատքի, հուսալիության կամ վստահության գաղափարը արտահայտվում է հունարեն *pistos* կամ *pistis* տերմիններով, որը թարգմանվում է անզլերեն, որպես «վստահություն», «հավատք» (տես Հատուկ Թեմա: Հավատք կամ

1:7 «Ահա նա գալիս է ամպերով» Այս համարը, հավանաբար, բացականչություն է եղել Հայտ. 1:1 հրեշտակի կողմից: Դա ակնհայտ հղում է Քրիստոսի Երկրորդ Գալստյանը: Տես Հատուկ Թեմա՝ ստորև:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՄՊԵՐՈՎ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ

SPECIAL TOPIC: COMING ON THE CLOUDS (several Hebrew words, but mostly *anan*, BDB 777, KB 857)

4. Արտեմիսի (լատիներեն՝ Դիանա) տաճարի տեսավայրն էր, որն այդ օրերի աշխարհի յոթ հրաշալիքներից մեկն էր: Այն 425'x220' չափսի, 127 սյուներով, որոնք 60' բարձրության էին և դրանցից 86-ը ոսկեգօծ էին (տես Pliny's Hist' Nat. 36:97): Կարծիք կար, որ Արտեմիսի պատկերը օդերևույթ էր՝ մետեոր, որը հիշեցնում էր կանացի բազմակուրծք կազմվածք: Սա նշանակում էր, որ քաղաքում կային շատ կուլտային պոռնիկներ (տես Գործք 19): Քաղաքը շատ անբարո և բազմամշակույթ էր:
5. Պողոսը այս քաղաքում ավելի քան երեք տարի մնաց (տես Գործք 18:18բ; 20:13):
6. Ավանդույթն ասում է, որ Պաղեստինում Մարիամի մահից հետո այն դարձավ Հովհաննեսի տունը:

Բ. Զմիռունիա

1. Այն ենթադրաբար հիմնադրել է Ամագոնը (ուժեղ կին առաջնորդ), որը կոչվում էր Զմիռունիա: Հովհաննեսի օրոք այն մոտ 200 000-ոց քաղաք էր:
2. Այն տեղակայված էր Էգեյան ծովում: Այն ուներ իդեալական բնական նավահանգիստ և, հետևաբար, առևտրային կենտրոն էր, որին գերազանցում էր միայն Փոքր Ասիայում գտնվող Եփեսոսը: Այն շատ հարուստ քաղաք էր:
3. Լիդիացիները քանդել են մոտավորապես 600թ.ա., սակայն վերակառուցվել է Լիզեմիկոսի կողմից Ալեքսանդր Մեծի ծրագրերից հետո, ուր ծովային զեփյուռը անցավ ամեն փողոցով:
4. Դա նաև ազատ քաղաք էր, քանի որ այն օգնել էր հռոմեական զինվորներին վերականգնվել Միտրադատցիների կողմից պարտություն կրելուց հետո:
5. Դա Ռոմա աստվածուհու (195թ.ա) և կայսրի երկրպագության պաշտամունքի կենտրոնն էր: Այնտեղ էր Տիրերիոս կայսրի առաջին տաճարը (26թ.):
6. Դա կրոնական կենտրոն էր Կիրելեի երկրպագության համար և Հովերի պանթեոնով: Կա նույնիսկ ավանդույթ, որ Հովերը ծնվել է այստեղ: Նրա բազմաթիվ տաճարները գտնվում էին Ակրոպոլիսում, Պագոս անունով, ոսկե ճանապարհով, Ջևսի և Կիրելեի տաճարի միջև:
7. Այն ունեցել է շատ ակտիվ հակաքրիստոնեական հրեա բնակչություն:
8. Այն քաղաքն էր, որտեղ Պոլիկարպը (Հովհաննես Առաքյալի աշակերտը) նահատակվել է 155 թ.ա.:

Գ. Պերգամոն

1. Այն մեծ հարուստ քաղաք էր և Փոքր Ասիայի մայրաքաղաքն էր (սկսած 282թ.ա.), չնայած տեղակայված չէր մեծ առևտրային ճանապարհին:
2. Այն պարծենում է Հռոմեական աշխարհի ամենամեծ գրադարանով Ալեքսանդրիայից, Եգիպտոսից դուրս: Այն ունեցել է ավելի քան 200 հազար մագաղաթ:
3. Մագաղաթի ստեղծումը եղել է այստեղ: Այն մշակվել է կենդանիների մաշկից, որոնք օգտագործվել են գրելու համար: Այս գրելու միջոցը մշակվել է, քանի որ Ալեքսանդրիան, Եգիպտոսը, հրաժարվել է վաճառել եղեգնյա պապիրուս: Սա է պատճառը, որ նրանց թագավորը, Յեուսենես II (197-159 թ.ա.) փորձել է վարձել Ալեքսանդրիա գրադարանավար, Արիստոփանեսին: Երբ Պողոմեոսյան թագավոր Եպիփանես Ալեքսանդրիացին (205-182թ.ա.) պարզել է, նա ձեռքակալել է գրադարանավարին և բռնագրավել Պերգամոնի պապիրուսը: Այս երկու ուսումնական կենտրոնների միջև իրական մրցակցություն է եղել: Հետագայում Էնթոնին Պերգամոնի գրադարանը ուղարկեց Ալեքսանդրիա՝ որպես նվեր Կլեոպատրային:

4. Դա բժիշկ Գալենի տունն էր և Ասկլեպիոս բուժական արվեստի կենտրոնը: Նույնիսկ ասվում է, որ Ասկլեպիոսը «Պերգամոնի աստվածն» էր: Այս աստծո խորհրդանիշն օձ էր:
5. Այն նաև ունեցել է տաճար Ռոմայի և Օգոստինոս Կայսրի համար (29թ.) և Կայսրի պաշտամունքի վարչական կենտրոնն էր (*neokopros*): Նրա հավատարմությունը Հռոմին հայտնի էր:
6. Հայտնի էր իր պաշտամունքի և հունական պանթեոնի պաշտպանության համար: Կար Ջեսի հսկայական տաճարը ակրոպոլիսի վրա, որտեղից երևում էր ամբողջ քաղաքը: Նրա ձևը գահի նման էր (այսինքն, սատանայի գահը):

Դ. Թվատիրե

1. Դա ավելի փոքր առևտրակենտրոն քաղաք էր: Կան շատ արձանագրություններ իր բազմաթիվ և ծաղկող առևտրի համաքարությունների մասին, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփական հովանավոր աստվածը: Այն գտնվում էր Պերգամոնի և Սարդիսի միջև հիմնական ճանապարհի վրա, որը շարունակվում էր դեպի Ֆիլադելֆիա և Լավոդիկե: Այն հայտնի էր իր բրդի արտադրանքով: Ծիրանավաճառ Լիդիան (տես Գործք 16:14) այս քաղաքից էր:
2. Այն ընդլայնվել է Սելեուսուս Նիկիեթեոնի կողմից, որը իր մակեդոնացի զինվորներին բնակեցրել է այստեղ:
3. Այն ունեցել է մի քանի տաճարներ տեղական աստվածներին նվիրված
 - ա. Տյուրիմնոս (Ապոլլոն) – արևի աստվածը
 - բ. Արտեմիս (Դիանա) - սիրո աստվածուհին
 - գ. Սիբիլ Սամամբեն -տեղական կին բախտագուշակ

Ե. Սարդես

1. Դա մեծ, հարուստ հնագույն քաղաք էր: Տարիներ շարունակ Լիդիայի կայսրության հարուստ մայրաքաղաքն էր, իր բարձրորակ ռազմական դիրքի շնորհիվ՝ տեղակայված 1500 մետր բարձրության լեռնաձյուղի վրա: Այն հիշատակվում է պարսկական արձանագրություններում, քանի որ Կյուրոս Մեծը գրավել է քաղաքը: Նշվում է նաև Աբդիա 1:20: Դա մեծապես պակասել էր Հովհաննեսի օրոք:
2. Այն հայտնի էր իր ներկված բրդի արտադրանքի համար: Գործընթացն այնտեղ է ստեղծվել, ուստի նրանք պնդում էին դա:
3. Մայր աստվածուհու՝ Կիբելեի երկրպագության կենտրոնն էր: Տաճարի ավերակները դեռևս երևում են ակրոպոլիսում: Այս պաշտամունքի անկարգությունները հայտնի էին և տարածվում էին Հռոմեական կայսրության ամբողջ տարածքով:

Զ. Ֆիլադելֆիա

1. Այն գտնվում էր լեռնաշղթայի վրա և պաշտպանված էր ջրով: Սա շատ ցանկալի ռազմական դիրք էր դարձել: Դա յոթ քաղաքներից նորագույնն էր: Այն հիմնադրվել է Աթալլուս II- ի կողմից (159 – 138Ք.ա.):
2. Այն գտնվում էր Սարդեսի խոշոր առևտրային ճանապարհի վրա, և այն ծաղկում էր:
3. Այն գտնվում էր հիանալի գյուղատնտեսական տարածքում, հատկապես խաղողի համար: Բաքոս կամ Դիոնիսոսը նրա գլխավոր աստվածներից մեկն էր: Այն նաև եղել է ակտիվ երկրաշարժի տարածք և ավերվել է 17թ.-ին

հակայական երկրաշարժի ժամանակ, որը նաև ոչնչացրել է տարածքի տասը ուրիշ խոշոր քաղաքներ: Այնուամենայնիվ, այս շրջանում շարունակվեց ցնցումները, և բնակչությունը տեղափոխվեց շրջակա ծայրամաս:

4. Դա նաև կայսրի պաշտամունքի կենտրոնն էր (ինչպես Ջոյունիան և Պերգամոնը), որը հավանաբար նահանգներ եկեղեցիների հետապնդումների մեծ մասի աղբյուրն էր:
5. Հելլենիստական մշակույթի խոշոր կենտրոն և ագրեսիվ կերպով տարածում էր իր ազդեցությունը: Թվում է, թե այդ նպատակի համար էլ հիմնվել է Միսիայի, Լիդիայի և Պրուգիայի սահմանին:

Է. Լավոդիկե Լիքուս գետի վրա

1. Դա Լիքուս գետի հովտում գտնվող երեք քաղաքներից մեկն էր (մյուս քաղաքներն են Կոդոսիան և Հերապոլիսը): Եկեղեցիներ են հիմնվել այս երեք քաղաքներից յուրաքանչյուրում, հավանաբար, Պողոսի միջոցով դարձի եկած Եպափրասի կողմից (տես Կող. 1:17; 4: 12-13):
2. Այն հիմնադրվել է Մելեկյան իշխան Անտիոքոս II- ի կողմից, ով իր կնոջ՝ Լավոդիկեի անունով է անվանակոչել 250 Ք.ա.: Այն գտնվում էր Ֆիլադելֆիայի նման ռազմականորեն պաշտպանված վայրում:
3. Այն տեղակայված էր արևելյան / արևմտյան խոշոր առևտրային ճանապարհի վրա: Նշվում էր որպես բանկային կենտրոն:
4. Այն տեղակայված էր բերրի գյուղատնտեսական և հովտային շրջաններում, հատկապես, հատուկ սև ոչխար բազմացնելու համար, ինչի համար հայտնի էր դարձել աշխարհով մեկ: Այն զանգվածային արտադրում էր սև արտաքին հագուստ, որը կոչվում էր «*trimeta*»:
5. Այն ուներ շատ մեծ հրեական բնակչություն:
6. Այն, ինչպես և Պերգամոնը, բժշկության աստված Ասկլեպիոսի պաշտամունքի կենտրոն էր: Քաղաքը եղել է բժշկական դպրոցի մաս, որը հայտնի էր ականջի և աչքի բալզամով:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 2:1
¹Եփեսոսի եկեղեցու հրեշտակին գրիր. Սա է ասում այն եօթն աստղերն իր աջ ձեռքումն ունեցողը, որ եօթը ոսկի ճրագակայների մէջ ման է գայիս.

2: 1 «հրեշտակին» Եբրայերեն և հունարեն հրեշտակ բառը կարող է նշանակել պատգամաբեր: Դա կարող է վերաբերել

1. հովիվին (տես Մաղ. 2: 7)
2. եկեղեցու հրեշտակին (տես Դանիել 10)
3. առանձին համայնքների եզակի հոգին կամ բնույթը

Այս նույն արտահայտությունը ներկայացնում է յուրաքանչյուր նամակը (տես Հայտ. 2: 1, 8, 12, 18; 3: 1, 14):

▪ **«եկեղեցու»** Այս հունարեն բառը տերմինը *ekklesia* երկու՝ «դուրս» և «կանչել» հունարեն տերմինների համադրությունն է: Այն օգտագործվել է Մեպտուագինդում՝ եբրայերեն *qahal* կամ «Իսրայելի ժողով» տերմինը թարգմանելու համար: Վաղ քրիստոնյաներն այն օգտագործել են, իրենց նույնացնելով

1. իրենք իրենց համարում էին Աստծո ժողովուրդ, ինչպես Իսրայելը
2. Աստծո կողմից կանչված, ինչպես փրկության, այնպես էլ ծառայության համար Տես Հատուկ Թեմա Հայտ. 1:4:

- **«եօթն աստղերն իր աջ ձեռքումն ունեցողը»** Սա Հիսուսի նկարագրությունն է, որը վերցված է Հայտ. 1:16-ից: Այս յոթ աստղերը վերաբերում էին եկեղեցիներին (տես 1:20): «Պահել» տերմինը (ներկա ներգործական դերբայ) խոսում է ամուր, հաստատ, համոզված լինելու մասին (տես Հովհ. 10: 28): Ոչինչ և ոչ ոք չէր կարող բաժանել այս եկեղեցիները Հիսուսից (տես Հռ. 8: 31-39), բացառությամբ եթե հրաժարվեն ապաշխարել և հետևել Նրան: Միայն անհավատությունը կարող է բաժանել:
- **«իր աջ ձեռքումն»** Սա անտրոպոմորֆիկ (Աստծո մասին ֆիզիկական տերմիններով) փոխաբերություն է իշխանության և հեղինակության համար (տես Հայտ. 1: 16,17,20; 2: 1; 5: 1,7):
- **«ման է գալիս»** Այս անտրոպոմորֆիկ փոխաբերությունը օգտագործվում է Ծննդոց 3: 8-ում, որպես Աստծո ներկայության խորհրդանիշ մարդկության հետ (տես Ղև. 26: 12):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎՈՒՄ Է ՈՐՊԵՍ ՄԱՐԴ (ԱՆՏՐՈՊՈՄՈՐՖԻԿ ԼԵԶՈՒ) SPECIAL TOPIC: ANTHROPOMORPHIC LANGUAGE TO DESCRIBE DEITY

- I. Այս տեսակ լեզուն (այն է, Աստված նկարագրվում է մարդկային տերմիններով) շատ տարածված է Հին Կտակարանում (որոշ օրինակներ)
 - Ա. Ֆիզիկական մարմնի մասեր
 1. աչքեր - Ծննդ. 1: 4,31; 6:8; Ելից 33:17; Թվոց 14:14; 2 Օր. 11:12; Զաք. 4:10
 2. ձեռքեր - Ելից 15:17; Թվոց 11:23; 2 Օր. 2:15
 3. թև, բազուկ - Ելից 6:6; 15:16; Թվոց 11:23; 2 Օր. 4:34; 5:15
 4. ականջներ - Թվոց 11:18; 1 Թագ. 8:21; 4 Թագ. 19:16; Սաղ. 5: 1; 10:17; 18: 6
 5. դեմք,երես - Ելից 33:11; Ղև. 20:3,5,6; Թվոց 6:25; 12:8; 2 Օր. 31:17; 32:30; 34:10;
 6. մատ - Ելից 8:19; 31:18; 2 Օր. 9:10; Սաղ. 8: 3
 7. ձայն - Ծննդ. 3: 9,11,13; Ելից 15:26; 19:19; 2 Օր. 26:17; 27:10
 8. ոտքեր - Ելից 24:10; Եզեկ. 43: 7
 9. մարդկային կերպարանք - Ելից 24:9-11; Սաղ. 47; Ես. 6:1; Եզեկ. 1:26
 10. Տիրոջ հրեշտակը - Ծննդ. 16:7-13; 22:11-15; 31: 11,13; 48:15-16; Ելից 3: 4,13-21; 14:19; Դատ. 2: 1; 6: 22-23; 13: 3-22
 - Բ. Ֆիզիկական գործողություններ (տես օրինակները)
 1. խոսելով որպես ստեղծագործության մեխանիզմ - Ծննդ. 1: 3,6,9,11,14,20,24,26
 2. Եղեմում քայլելը (այսինքն, ձայնը) - Ծննդ. 3: 8; Ղև. 26:12; 2 Օր. 23:14
 3. Նոյան տապանի դուռը փակելը - Ծննդ. 7:16
 4. զոհերը հոտոտելը - Ծննդ. 8:21; Ղևտ. 26:31; Ամովս 5:21
 5. ներքև իջնելը - Ծննդ. 11:5; 18:21; Ելից 3: 8; 19: 11,18,20
 6. Մովսեսին թաղելը - 2 Օր. 34:6
 - Գ. Մարդկային զգացմունքներ (որոշ օրինակներ)
 1. զղջալ / ապաշխարել - Ծննդ. 6: 6,7; Ելից 32:14; Դատ. 2:18; 1 Թագ. 15: 29,35; Ամովս 7: 3,6
 2. զայրույթ - Ելից 4:14; 15:7; Թվոց 11:10; 12:9; 22:22; 25: 3,4; 32: 10,13,14; 2 Օրին. 6:5; 7:4; 29:20
 3. նախանձ - Ելից 20:5; 34:14; 2 Օրին. 4:24; 5:9; 6:15; 32: 16,21; Հեսու 24:19
 4. ատել / զզվել - Ղև. 20:23; 26:30; 2 Օրին. 32:19
 - Դ. Ընտանեկան տերմիններ (որոշ օրինակներ)

1.	Հայր
ա.	Իսրայելի - Ելից 4:22; 2 Օր. 14:1; Ես. 1:2; 63:16; 64:8; Եր. 31:9; Ովս. 11:1
բ.	թագավորի -2 Թագ. 7: 11-16; Մաղ. 2: 7
գ.	հայրական գործողությունների փոխաբերություններ - 2 Օրին. 1:31; 8:5; 32:6-14; Մաղ. 27:10; Առ. 3:12; Երեմ. 3: 4,22; 31:20; Ովս. 11:1-4; Մաղ. 3:17
2.	Ծնող - Ովսեն 11:1-4
3.	Մայր - Ես. 49:15; 66: 9-13 (կերակրող մոր նման)
4.	Երիտասարդ հավատարիմ սիրեկան- Ովսեն 1-3
II.	Այս տեսակ լեզվի օգտագործման պատճառները
Ա.	Անհրաժեշտ է Աստծուն բացահայտել Իրեն մարդկանց: Չկա այլ բառապաշար, քան ընկած, աշխարհիկ բառեր: Աստծո մասին շատ տարածված գաղափարն այն է, որ Նա արական է, քանի որ Աստված հոգի է:
Բ.	Աստված վերցնում է մարդկային կյանքի առավել իմաստալից կողմերը և դրանք օգտագործում՝ մեղավոր մարդկությանը Իրեն բացահայտելու համար (հայր, մայր, ծնող, սիրեկան)
Գ.	Չնայած անհրաժեշտ է ժամանակների համար (Ծննդ. 3:8), Աստված չի ուզում սահմանափակվել որևէ ֆիզիկական կերպարանքով (տես Ելից 20; 2 Օրին. 5)
Դ.	Վերջնական անտրոպոմորֆիզմը Հիսուսի մարմնացումն է: Աստված դարձավ ֆիզիկական, շոշափելի (տես. 1 Հովհ.1:1-3): Աստծո պատգամը դարձավ Աստծո Խոսքը (տես. 1 Հովհ.1:1-18):
III.	Լավ կարճ քննարկման համար տես Գ. Բ. Քայիրդ, <i>Աստվածաշնչի լեզուն և պատկերները</i> ,/ G. B. Caird, <i>The Language and Imagery of the Bible</i> , գլուխ 10, «Անտրոպոմորֆիզմ», Մտանդարտ Աստվածաշնչի Համաշխարհային Հանրագիտարան», էջ 152-154 /"Anthropomorphism," in <i>The International Standard Bible Encyclopaedia</i> :

▪ «**ուսկի ճրագակալների**» Սա չի վերաբերում Խորանի աշտանակին, այլ յոթ եկեղեցիների ևս մեկ խորհրդանիշ է (տես Հայտ. 1: 12-13):

▪ «**է ասում**» Հիսուսի վերջին խոսքերը Իր Եկեղեցուն Մաթ. 28: 18-20 կամ Գործք 1: 7-11 չէ, այլ Հայտնություն 2-3:

Արևելահայերեն Աստվածաշունչ: ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 2:2-7
 ²Գիտեմ քո գործերը եւ քո աշխատութիւնը եւ քո համբերութիւնը. Եւ որ չարերին չես կարողանում համբերել, եւ փորձեցիր նորանց որ առաքեալ են ձեռնադրում, եւ չեն, եւ գտար որ սուտ են: ³Եւ նեղութիւններ կրեցիր եւ համբերութիւն ունիս, եւ իմ անունի համար աշխատեցիր, եւ չ'ըուլացար: ⁴ Բայց քեզ դէմ այս ունիս, որ քո առաջին սէրը թողել ես: ⁵Արդ յիշիր, թէ որտեղից վայր ընկար, եւ գղջա, եւ առաջի գործերն արա. է ապա թէ ոչ՝ կ'գամ շուտով քեզ մօտ, եւ քո ճրագակալը կ'շարժեմ իր տեղիցը եթէ չ'ապաշխարես: ⁶Բայց այս բանն ունիս, որ Նիկողայոսեանների գործերն աստու՛մ ես, որոնք ես էլ եմ աստու՛մ: ⁷Ով որ ականջ ունի, թող լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին. Ով որ յաղթում է՝ նորան կեանքի ծառիցն ուտել կ'տամ, որ Աստուծոյ դրախտի մէջ է:

2: 2 «Գիտեմ» Սա *oida* վաղակատար ներգործական սահմանական ձևն է, բայց թարգմանվում է որպես ներկա: Հիսուսը տեսնում, հասկանում և հոգում է Իր եկեղեցիների համար: Նրա մտահոգությունը ներառում է թե՛ հաստատում և թե՛ կարգապահություն (որը ծնողական սիրո ձև է): Այս նույն արտահայտությունը կրկնվում է բոլոր յոթ նամակների մեջ (տես Հայտ. 2: 2, 4, 13, 19; 3: 1,8,15):

Հին Կտակարանի այս տերմինը ենթադրում է մտերմիկ և անձնական փոխհարաբերություններ (տես Ծննդ. 4: 1; Եր. 1: 5):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԻՄԱՆԱԼ, ԳԻՏԵՆԱԼ, ՃԱՆԱԶԵԼ (որպես օրինակ հիմնականում կիրառելով 2 Օրինացը)

SPECIAL TOPIC: KNOW (using mostly Deuteronomy as a paradigm)

Երբայերեն «գիտենալ, իմանալ» (*yada*, BDB 393, KB 390) բառը ունի *Qal* -ի մի քանի իմաստ (իմաստային դաշտը):

1. հասկանալ բարին և չարը - Ծննդ. 3:22; 2 Օր. 1:39; Ես. 7:14-15; Հովնան 4:11
2. իմանալ հասկանալով - 2 Օր. 9:2,3,6; 18:21
3. իմանալ փորձառաբար - 2 Օր. 3:19; 4:35; 8:2,3,5; 11:2; 20:20; 31:13; Հեսու 23:14
4. մտածել, քննարկել - 2 Օր. 4:39; 11:2; 29:16
5. անձնապես ճանաչել
 - ա. մարդու - Ծննդ. 29:5; Ելից 1:8; 2 Օր. 22:2; 33:9; Եր. 1:5
 - բ. աստծու - 2 Օր. 11:28; 13:2,6,13; 28:64; 29:26; 32:17
 - գ. ՅԱՀՎԵԻՆ - 2 Օր. 4:35,39; 7:9; 29:6; Ես. 1:3; 56:10-11
 - դ. սեռական կապի միջոցով - Ծննդ. 4:1,17,25; 24:16; 38:26
6. սովորած հմտություն կամ գիտություն - Ես. 29:11,12; Ամովս 5:16
7. իմաստուն լինել - 2 Օր. 29:4; Առակ. 1:2; 4:1; Ես. 29:24
8. Աստծո գիտությունը
 - ա. Մովսեսի - 2 Օր. 34:10
 - բ. Իսրայելի - 2 Օր. 31:21

Աստվածաբանորեն # 5 շատ կարևոր է: Աստվածաշնչյան հավատքը ամենօրյա, աճող և մտերմիկ շփում է Աստծո հետ (տես Հատուկ Թեմա: *Koinōnia*): Դա միայն համոզմունք չէ կամ բարոյական կյանք: Դա անձնական հավատքի հարաբերություն է: Սա է պատճառը, որ Պողոսը օգտագործեց քրիստոնեական ընտանիքը Եփ. 5: 22-6: 9, որպեսզի ցույց տա Քրիստոսի սերը եկեղեցու հանդեպ:

▪ **«քո գործերը եւ քո աշխատությունը»** Սա ակտիվ եկեղեցի էր, բայց նրանք մոռացել էին Քրիստոսի հետ հաղորդակցվելու առաջնահերթությունը (տես Հայտ. 2: 4): Չափից շատ լավ բաներ են կողոպտել նրանց լավագույնից (տես Գաղ. 3: 1):

▪ **«համբերությունը»** Այս տերմինը ենթադրում է կամավոր, ակտիվ, կայուն համբերություն: Սա գիրքի հիմնական թեման է (տես Հայտ. 1: 9; 2: 2, 3, 19; 3:10; 13:10; 14:12): Համբերությունը պետք է հավասարակշռված լինի անվտանգության հետ (տես Հայտ. 2: 7,11,17,26; 3: 5,11-12,21): Աստվածաշնչյան ճշմարտությունների մեծ մասը ներկայացված է դիալեկտիկական, թվացյալ պարադոքսային, զույգերով: Երկուսն էլ հավասարապես ճշմարիտ են, բայց առանձին ոչ մեկը ճշմարիտ չէ: Փրկությունը նախնական ապաշխարությունն ու հավատքն է, որին հետևում է ապրելակերպի ապաշխարությունը, հավատքը, հնազանդությունը, ծառայությունը և հաստատակամությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ

SPECIAL TOPIC: PERSEVERANCE

Աստվածաշնչյան վարդապետությունները, կապված քրիստոնեական կյանքի հետ, դժվար է բացատրել, որովհետև դրանք ներկայացվում են տիպիկ արևելյան դիալեկտիկական զույգերով (տես Հատուկ Թեմա: Արևելյան Գրականություն [աստվածաշնչյան պարադոքսներ]): Այս զույգերը թվում են իրար հակասող, բայց երկուսն էլ աստվածաշնչյան են: Արևմուտքի քրիստոնյաները հակված են ընտրելու մեկ ճշմարտությունը և մերժելու և արժեզրկելու դրան հակասող մյուս ճշմարտությունը:

Ահա որոշ օրինակներ.

1. Փրկությունը միայն Քրիստոսին վստահելու սկզբնական որոշումն է, թե՞ սրբացման գործընթաց ամբողջ կյանքի ընթացքում, որպես Քրիստոսի աշակերտ:
2. Փրկությունը սուվերեն Աստծո շնորհքի ընտրությունն է, թե՞ մարդու հավատքի արդյունքն ու ապաշխարհության արձագանքն Աստծո կանչին:
3. Փրկությունը դա մեկ անգամ ստացած, անհնարին կորցնել, թե՞ հավատացյալը պետք է շարունակաբար ջանք թափի դրան հասնելու և պահելու համար:

Համբերության թեման քննարկման առիթ է հանդիսացել հավատացյալներին ամբողջ եկեղեցու պատմության ընթացքում: Խնդիրը սկսվում է Նոր Կտակարանում հանդիպող ակնհայտ իրարամերժ տեքստերից.

1. համարներ վստահություն մասին
 - ա. Հիսուսի պնդումները Հովհաննեսի Ավետարանում (Հովհ. 6:37; 10:28-29)
 - բ. Պողոսի պնդումները (Հռ. 8:35-39; Եփ. 1:13; 2:5,8-9; Փիլ. 1:6; 2:13; 2 Թես. 3:3; 2 Տիմ. 1:12; 4:18)
 - գ. Պետրոսի պնդումները (1 Պետ.1:4-5)
2. տեքստեր համբերելու կարիքի համար
 - ա. Հիսուսի պնդումները Սինոպտիկ Ավետարաններում (Մաթ. 10:22; 13:1-9,24-30; 24:13; Մարկ. 13:13)
 - բ. Հիսուսի պնդումները Հովհաննեսի Ավետարանում (Հովհ. 8:31; 15:4-10)
 - գ. Պողոսի պնդումները (Հռ. 11:22; 1Կոր. 15:2; 2 Կոր. 13:5; Գաղ. 1:6; 3:4; 5:4; 6:9; Փիլ. 2:12; 3:18-20; Կող. 1:23; 2 Տիմ. 3:2)
 - դ. Եբրայեցիա թղթի հեղինակի պնդումները (2:1; 3:6,14; 4:14; 6:11)
 - ե. Հովհաննեսի պնդումները (1 Հովհ. 2:6; 2 Հովհ.9; Հայտ. 2: 7,17,26; 3: 5,12,21; 21: 7)

Աստվածաշնչյան փրկության աղբյուրը սուվերեն Երրորդության սիրո, ողորմության և շնորհքի արտահայտությունն է: Ոչ մեկ մարդ չի կարող փրկվել առանց Սուրբ Հոգու նախաձեռնության (հմմտ. Հովհ. 6:44,65): Աստված անում է առաջին քայլը և հաստատում բոլոր կանոնները, բայց և պահանջում, որ մարդիկ արձագանքեն Իր կանչին՝ հավատքով և ապաշխարհությամբ, թե մեկ անգամ սկզբում և թե շարունակաբար ամբողջ կյանքի ընթացքում: Աստված հարաբերություններ է հաստատում մարդու հետ ուխտի հիման վրա: Կան արտոնություններ և պատասխանատվություններ:

Փրկությունը առաջարկվում է բոլոր մարդկանց: Հիսուսի մահը լուծեց ընկած արարչագործության մեղքի խնդիրը: Աստված հոգացել է փրկության ճանապարհը և ուզում է, որ նրանք, որ ստեղծված են Իր պատկերով և նմանությամբ, արձագանքեն Իր սիրուն և ինչ-որ առաջարկվում է Հիսուսի միջոցով: Եթե ցանկանում եք ավելի շատ բան իմանալ այս հարցի մասին, ոչ կալվինիստական տեսանկյունից, կարող եք կարդալ հետևյալ գրքերը.

1. Dale Moody, *The Word of Truth*, Eerdmans, 1981 (էջ 348-365)
2. Howard Marshall, *Kept by the Power of God*, Bethany Fellowship, 1969
3. Robert Shank, *Life in the Son*, Westcott, 1961

Աստվածաշունչը խոսում է այս բնագավառում երկու տարբեր խնդիրների մասին (1) ապահովագրության երաշխիք ապրելու անպտուղ և եսասեր կյանքով, (2) քաջալերելով նրանց, ովքեր ծառայության մեջ են և պայքարում են անձնական մեղքի դեմ: Խնդիրն այն է, որ սխալ խմբերը վերցնում են սխալ պատգամը և սահմանափակ աստվածաշնչյան հատվածների հիման վրա աստվածաբանական համակարգեր շինում: Որոշ քրիստոնյաներ պետք ունեն միայն փրկության վստահությանը վերաբերող հատվածներ, մյուսներին նախազգուշացումներ և զգոնություն: Ո՞ր խմբին ես դու պատկանում:

Կա պատմական աստվածաբանական հակասություն, որտեղ Օգոստինոսը հակասում է Պելագիուսին իսկ Կալվինը՝ Արմինիուսի (կիսա-Պելագյան): Խնդիրը ներառում է փրկության հարցը.

Եթե մեկը իսկապես փրկված է, արդյո՞ք պետք է համբերի հավատքի և պտուղ բերելու:

Կալվինիստները շարունակում են հետևել աստվածաշնչյան այն տեքստերին, որոնք հաստատում են Աստծո գերիշխանությունը և պահելու զորությունը (Հովհ. 10:27-30; Հռ. 8:31-39; 1 Հովհ. 5:13-18; 1 Պետ.1:3-5) և ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ ինչպես ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԵՐԸ Եփ. 2: 5,8:

Արմինիականները շարունակում են հետևել այդ աստվածաշնչյան տեքստերին, որոնք զգուշացնում են հավատացյալներին «պահել», «կառչել» կամ «շարունակել» (Մատթ. 10:22; 24:9-13; Մարկ. 13:13; Հովհ.15:4-6; 1 Կոր. 15:2; Գաղ. 6: 9; Հայտ. 2: 7,11,17,26; 3: 5,12,21; 21: 7): Ես անձամբ չեմ հավատում, որ Եբրայեցիս 6 և 10-ը կիրառելի են, բայց շատ արմինիականներ դրանք օգտագործում են որպես նախազգուշացում ընդդեմ հավատուրացության: Մատթեոս 13 և Մարկոս 4 Մերմնացանի առակը վերաբերվում է ակնհայտ հավատքի հարցին, ինչպես որ Հովհ. 8:31-59: Ինչպես որ կալվինիստները մեջբերում են ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐ՝ փրկությունը նկարագրելու համար, արմինիականներն էլ մեջբերում են ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ հատվածները, ինչպես 1 Կոր. 1:18; 15: 2; 2 Կոր. 2:15:

Սա կատարյալ օրինակ է, թե ինչպես են աստվածաբանական համակարգերը չարաշահում մեկնաբանության ապացույց-տեքստային մեթոդը: Սովորաբար առաջնորդող սկզբունքը կամ գլխավոր տեքստը օգտագործվում է աստվածաբանական ցանցի ստեղծման համար, որով դիտվում են բոլոր մյուս տեքստերը: Զգուշացեք ցանկացած աղբյուրի ցանցերից: Նրանք գալիս են արևմտյան տրամաբանությունից, ոչ թե հայտնությունից: Աստվածաշունչը արևելյան գիրք է: Այն ներկայացնում է ճշմարտությունը լարվածությամբ լցված, թվացյալ պարադոքսալ գույգերով: Քրիստոնյաները պետք է հաստատեն և ապրեն լարվածության մեջ: Նոր Կտակարանը ներկայացնում է ինչպես հավատացյալների անվտանգությունը, այնպես էլ հավատքի և բարեպաշտության շարունակման պահանջը: Քրիստոնեությունը նախապաշարմունք է ապաշխարության և հավատքի համար, հետևում է ապաշխարության և հավատքի շարունակական արձագանքին: Փրկությունը ոչ թե ապրանք է (տոմս դեպի երկինք, կամ ապահովագրություն հրդեհից), այլ փոխհարաբերություն: Դա որոշում է և աշակերտություն: Այն նկարագրված է Նոր Կտակարանում բոլոր ԲԱՅԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԸՆՎ:

ԱՕՐԻՍՏ (ավարտված գործողություն), Գործք 15:11; Հռ. 8:24; 2 Տիմ. 1: 9; Տիտոս 3: 5

ՎԱՂԱԿԱՏԱՐ (ավարտված գործողությունը շարունակական արդյունքներով), Եփ. 2: 5,8

ՆԵՐԿԱ (շարունակական գործողություն), 1 Կոր. 1:18; 15: 2; 2 Կոր. 2:15

ԱՊԱԳԱ (ապագա իրադարձություններ կամ որոշակի իրադարձություններ), Հռ. 5: 8,10; 10:9; 1 Կոր. 3:15; Փիլ. 1:28; 1 Թես. 5: 8-9; Եբր. 1:14; 9:28

Արևելահայերեն «չարերին»

Արևմտահայերեն «չարերուն»

NASB «չար մարդիկ»

NKJV «նրանք, ովքեր չար են»

NRSV «չարագործներ»

TEV «չար մարդիկ»

NJB, REB «չար մարդիկ»

Peshitta «նրանք, ովքեր անաստված են»

Սա բառացիորեն *kakous (kakos)*, որը հաճախ օգտագործվում է «չար մարդկանց» համար: Հռոմանիշ *ponēros* կարող է օգտագործվել չարի համար (չեզոք) կամ չար մարդկանց և, ի վերջո, չարի (արական, տես Մատթ. 5:37; 13:38; Հովհ. 17:15): Կոնտեքստը և օգտագործումը հաստատում են, որ

այս տեքստը պետք է վերաբերվի եկեղեցում (կեղծ ուսուցիչների) կամ, հնարավոր է, համայնքում, «վաստ մարդկանց» (տես Հռ. 2: 9; 13: 4):

Kakos օգտագործվում է ընդամենը երկու անգամ Հայտնության Գրքում, այստեղ և Հայտ. 16: 2, որտեղ օգտագործվում է նկարագրելու «Աստծո բարկության սկավառակների» արդյունքները (այսինքն, ցավ, կսկիծ):

▪ **«փորձեցիր»** Այս հունարեն տերմինը (*peirazō*) նշանակում էր փորձարկել լավ կամ վատ (մեծամասնության) մտադրություններով (տես Հայտ. 2: 2,10; 3:10): Կապակցված տերմինը (*peirasmōs*) ուներ ոչնչացման տեսակետից փորձարկման ենթատեքստ: Հավասարակշռությունը հանդիպում է 1 Հովհ. 4: 1-ում, որտեղ հավատացյալները պետք է փորձեն (*dokimazō*), հավանություն տալու նրանց, ովքեր պնդում են, որ խոսում են Աստծո անունից: Հավատացյալներին կոչ է արվում քննել նրանց, ովքեր պնդում են, որ խոսում են Աստծո անունից, որը հանդիպում է երկու Կտակարաններում էլ (տես 2 Օր. 13:1-5; 18: 22; Մատթ. 7: 15-23; 1 Հովհ. 4: 1-6):

Նոր Կտակարանում լարվածություն կա, կապված հավատացյալների հետ, ովքեր քննադատաբար դատում էին միմյանց (տես Մատթ. 7:1-5): Այնուամենայնիվ, քրիստոնյաները կոչված են գնահատելու միմյանց ղեկավարության դերերի համար (տես Մատթ. 7: 5,6,15; 1 Կոր. 5: 1-12; 1 Տիմ. 3; 1 Հովհ. 4: 1-6): Վերաբերմունքն ու շարժառիթը պատշաճ գնահատման բանալիներն են (տես Գաղ. 6:1; Հռ. 2: 1-11; 14: 1-23; Հակ. 4: 11-12):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՒՆԱՐԵՆ «ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ, ՓՈՐՁ» ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԱՆՔՆԵՐԸ

SPECIAL TOPIC: GREEK TERMS FOR TESTING AND THEIR CONNOTATIONS

Կան երկու հունարեն տերմիններ, որոնք ունեն ինչ որ մեկին նպատակի համար փորձելու գաղափարը:

1. *Dokimazō, Dokimion, Dokimasia*

Այս բառը մետալուրգիական տերմին է՝ կրակով փորձելու ինչ-որ բանի իրական, ազնիվ լինելը (այսինքն, փոխաբերական իմաստով ինչ-որ մեկին) (տես Հատուկ Թեմա: Կրակ): Կրակը հայտնում է մետաղի իրական լինելը՝ այրման, թրծման միջոցով (այսինքն, մաքրում է, գտում): Այս ֆիզիկական գործընթացը դարձավ Աստծո և / կամ Մատանայի և / կամ մարդկանց համար ուրիշներին փորձելու հզոր իդիոմա: Այս տերմինը օգտագործվում է միայն դրական իմաստով՝ փորձվում է և ընդունվում որպես պիտանի (տես Հատուկ Թեմա. Աստված փորձում է/ստուգում Իր ժողովրդին [Հին Կտակարան]):

Նոր Կտակարանում այն օգտագործվում է փորձելու համար

- ա. Եզները, Ղուկ. 14:19
- բ. ինքներս մեզ - 1 Կոր. 11:28
- գ. մեր հավատքը, Հակոբոս 1: 3
- դ. նույնիսկ Աստծուն – Եբր. 3: 9

Ենթադրվում էր, որ այս փորձությունների արդյունքները կլինեն դրական (տես Հռ. 2:18; 14:22; 16:10; 2 Կոր. 10:18; 13: 3,7; Ֆիլ 2:27; 1 Պետ. 1:7), հետևաբար տերմինը տալիս է գաղափար, երբ ինչ որ մեկը փորձվում է և ապացուցվում որպես

- ա. Արժանի, կարևոր
- բ. Լավ, բարի
- գ. Անկեղծ, ազնիվ
- դ. Արժեքավոր, կարևոր
- ե. պատվավոր

2. *Peirazō, Peirasmus*

Այս տերմինը ունի ստուգման լրացուցիչ իմաստ, որը սխալը գտնելու կամ մերժելու համար է:

Այն օգտագործվում է կապված անապատում Հիսուսի փորձության հետ:

- ա. Նկարագրում է Հիսուսին ծուղակը գցելու փորձի մասին (տես Մատթ. 4: 1; 16: 1; 19: 3; 22:18, 35; Մարկ. 1:13; Ղուկ. 4: 2; Եբր. 2:18):
- բ. Այս տերմինը (*peirazōn*) օգտագործվում է որպես տիտղոս սատանայի համար Մատթ. 4: 3; 1 Թես. 3: 5 (այն է «փորձիչը»):
- գ. Օգտագործումը
 - 1) Այն օգտագործվել է Հիսուսի կողմից, նախագուշացում, որ մարդիկ չփորձեն Աստծուն (տես Մատթ. 4: 7; Ղուկ. 4:12, [կամ Քրիստոսի տես 1 Կոր. 10: 9]):
 - 2) Այն նաև նշանակում է, փորձել մի բան անել, որը ձախտվել է (տես Եբր.11:29):
 - 3) Այն օգտագործվում է, երբ հավատացյալները փորձությունների կամ փորձանքների մեջ են հայտնվում (տես 1 Կոր. 7: 5; 10: 9, 13; Գաղ. 6:1; 1 Թես. 3: 5; Եբր. 2:18; Հակ. 1: 2, 13, 14; 1 Պետ. 4:12; 2 Պետ. 2: 9):

▪ **«նորանց որ առաքեալ են ձեւանում»** «Առաքյալների» տերմինի այս օգտագործումը չի վերաբերում Տասներկուսին, այլ ընդգրկում տերմինի կիրառմանը (տես Գործք 14:14; Հռ. 16: 7; 1 Կոր. 15:7; Գաղ. 1:19; Եփ. 4:11; 1 Թես. 2: 6): Նոր Կտակարանը հաճախ է խոսում սուտ առաքյալների կամ ուսուցիչների մասին (տես Մատթ. 7: 15-16; 24:24; Գործք 20:29; 2 Կոր. 11: 13-15; 1 Հովհ. 4: 1 և բոլոր հովվական թղթերում): Այս եկեղեցին ճշգրտորեն բացահայտել էր այդ կեղծ առաքյալներին և մերժել էր դրանց:

2: 3 Այս եկեղեցին հավատարիմ էր դժվարին հանգամանքների, նույնիսկ հալածանքների մեջ: Նրանք չէին ուրացել Քրիստոսին կամ հոգնել բարի գործեր անելուց (տես Գաղ. 6: 9; Եբր. 12: 3; Հակ. 5: 7-8): Տես ծանուցում Հայտ. 2: 7-ում:

2:4

Արևելահայերեն **«քո առաջին սերը թողել ես»**

Արևմտահայերեն **«քու առաջուան սերդ ձգեցիր»**

NASB, NKJV, Peshitta **«դուք թողել եք ձեր առաջին սերը»**

NRSV **«դուք լքել եք նախ սիրած սերը»**

TEV **«դուք ինձ չեսք սիրում հիմա, ինչպես նախկինում»**

NJB **«դուք հիմա պակաս սեր ունեք, քան նախկինում»**

REB **«այն սերը, որն առաջին անգամ զգացել եք, կորցրել եք»**

Կային մի քանի տեսություններ, որոնք վերաբերում էին դրան.

1. TEV և Charles Williams թարգմանությունները ենթադրում են, որ դա նշանակում է սեր Քրիստոսի հանդեպ:
2. Ջեյմս Մոֆթսը ենթադրում է, որ այն նշանակում է միմյանց հանդեպ սեր:
3. Հերշել Հոբբսը իր մեկնաբանության մեջ ենթադրում է, որ դա նշանակում է սեր կորսվողի հանդեպ:
4. Յ. Բ. Ֆիլիպսը իր թարգմանության մեջ միացնում է բոլոր վերը նշվածները:
5. Ոմանք կարծում են, որ դա վերաբերում է երկրորդ սերնդի հավատացյալների խնդրին (տես Դատ. 2: 7-10):
6. Ոմանք դա համարում են որպես սառը ուղղափառ անսեր եկեղեցի (տես 1 Կոր. 13):

2: 5 «իշիր» Սա ներկա ներգործական հրամայական է նշանակում է «միշտ հիշել»: Հավատացյալներին հաճախ զգուշացվում է հիշել իրենց նախկին վիճակը մեղքի մեջ և նոր դիրքը Քրիստոսի միջոցով Աստծո շնորհքի և ողորմության մեջ:

▪ **«որտեղից վայր ընկար»** Սա վաղակատար ներգործական սահմանական է: Թողնելով իրենց «առաջին սերը» դարձել էր անտեսված վիճակի կարգավորում:

▪ **«զղջա, եւ առաջի գործերն արա»** Սրանք երկու ասորիստ ներգործական հրամայականներ են: Ուշադրություն դարձրեք, որ եկեղեցին որպես ամբողջություն կանչված է վճռական ապաշխարության (տես 2 Մնաց. 7:14) և ակտիվ սեր ունենալ Քրիստոսի, իրար հանդեպ եւ կորածների համար:

Ապաշխարությունը կարևոր է Աստծո հետ հավատքի փոխհարաբերության համար (տես Մատթ. 3: 2; 4:17; Մարկ. 1:15; 6:12; Ղուկ.13: 3,5; Գործք 2:38; 3:19; 20:21): Եբրայերեն տերմինը նշանակում է գործողությունների փոփոխություն, իսկ հունարենում դա նշանակում է մտքի փոփոխություն: Ապաշխարությունը պատրաստակամություն է փոխվել եսակենտրոն կյանքից՝ Աստծո կողմից տեղեկացված և ղեկավարված կյանքի: Այն կոչ է անում դարձի գալ եսի գերակայությունից և ստրկությունից: Հիմնականում դա նոր կեցվածք է, նոր աշխարհայացք, նոր տեր: Ապաշխարությունն Աստծո կամքն է Իր պատկերով ստեղծված Ադամի յուրաքանչյուր մեղավոր զավակի համար (տես Եզ. 18: 22,23, 32 և 2 Պետ. 3: 9):

Նոր Կտակարանյան հատվածը, որը լավագույնս արտահայտում է ապաշխարության մասին տարբեր հունարեն տերմինները 2 Կոր. 7: 8-12 է:

1. *lupē*, «վիշտ» կամ «ցավ» Հայտ. 2: 8 (երկու անգամ), Հայտ. 2: 9 (երեք անգամ), Հայտ. 2:10 (երկու անգամ), Հայտ. 2:11
2. *metamelomai*, «խնամքից հետո», Հայտ. 2: 8 (երկու անգամ), Հայտ. 2: 9
3. *metanoō*, «ապաշխարել», «մտքով», Հայտ. 2: 9, 10

Հակադրությունը կեղծ ապաշխարության (*metamelomai*, տես Հուդա՝ Մատթ. 27:3 և Եսավ՝ Եբր. 12: 16-17) և ճշմարիտ ապաշխարության միջև է (*metanoō*, տես Պետրոս՝ Հովհ. 21: 15-23; Մատթ. 26:75; Մարկ 14:72; Ղուկ. 22:62):

Ճշմարիտ ապաշխարությունը աստվածաբանորեն կապված է

1. Հիսուսի քարոզչությունը Նոր Ուխտի պայմաններում (տես Մատթ. 4:17; Մարկ. 1:15; Ղուկ. 13: 3,5)
2. Առաքյալների քարոզները Գործքում (*kerygma*, Գործք 3: 16,19; 20:21)
3. Աստծո գերիշխան պարզը (տես Գործք 5:31; 11:18 և 2 Տիմ. 2:25)
4. կորչել, կործանվել (տես 2 Պետրոս 3.9)

Ապաշխարությունը ընտրովի չէ:

▪ **«ապա թէ ոչ՝ կ'զամ շուտով քեզ մօտ»** Սա այս գրքում տարածված թեման է: Քրիստոսը շուտով գալիս է (տես Հայտ. 1: 2,3; 2: 5,16,25; 3: 3,11): Հին Կտակարանում Աստծո գալուստը կարող էր բերել օրհնություն կամ դատաստան: Այս կոնտեքստում Քրիստոսը գալիս է խրատելու Իր Եկեղեցուն (տես 1 Պետ. 4:17): Հետևաբար, այն ունի ժամանակավոր, ինչպես նաև վախճանաբանական կողմնորոշում:

▪ **«եւ քո ճրագակալը կ'շարժեմ իր տեղիցը»** Ճրագակալը խորհրդանշում է ամբողջ եկեղեցին: Սա կարող էր ցույց տալ Քրիստոսի ներկայության ու օրհնության հեռանալը: Ամբողջ համայնքը կանգնած չէր հավատուրացության առաջ, այլ նրանք կորցրել էին իրենց արդյունավետ ծառայությունը: Սա վերաբերում է նաև Պերգամոնի (տես Հայտ. 2:16); Թվատիրեի (տես Հայտ. 2: 22-23); Սարդեսի (տես Հայտ. 3: 3); և Լավոդիկեի (տես Հայտ. 3:19) եկեղեցիներին: Հնարավոր է, որ այս

Եկեղեցիներից յուրաքանչյուրը տառապում էր Նիկողոսիանների կեղծ ուսմունքով, որը նպաստում էր հեթանոսական մշակույթի հետ փոխզիջմանը:

▪ **2: 6 «որ Նիկողայոսեանների գործերն ասում էս»** Շատ ենթադրություններ են եղել այն մասին, թե ովքեր են եղել այդ Նիկողայոսյանները և ինչ են հավատացել: Միակ աստվածաշնչյան աղբյուրը, որ մենք ունենք, Հայտ. 2: 6, 14-15 է: Ենթադրությունը սկսվեց վաղ Եկեղեցում մոտ 180թ., երբ Իրենեոսն ու Հիպոլիտոսը ենթադրեցին, որ դրանք «յոթից» մեկի հետևորդներն էին, որոնք ընտրվեցին Գործք 6: 5-ում, Նիկողայոս անունով: Սա ամբողջովին անհիմն է: Իրենեոսը իր գրքում, *Contra-heresies*, 3: 11: 7, ենթադրեց, որ նրանք երկրորդ դարի Կյուրենիան գնոստիցիզմի հետևորդներն էին: Յուսեբիոսը իր գրքում, *Ecclesiastical History*, 3: 29: 1, ասում է, որ այս հատուկ աղանդը երկար չի տևել:

Հայտնություն 2: 14-15-ում Բաղասամի ուսմունքները և Նիկողայոսիանների ուսմունքները նման են: Կա հնարավոր ստուգաբանական կապ նրանց հունարեն անունների միջև; այն նշանակում է «նվաճող» և «ժողովուրդ» (շատ նման Նիկողեմոս անվանը): Ակնհայտ է, որ երկուսն էլ խրախուսում էին հավատացյալներին մասնակցել հեթանոսական պաշտամունքի գործողություններին, որը ներառում էր ծիսական սեքսուալ գործունեություն: Այս իմաստով Նիկողայոսիաններն ու Բաղասայանցները (տես Թվոց 25: 1-9; 31: 16-18) շատ նման են Հեզագրեյի ուսմունքներին (տես Հայտ. 2: 20):

2: 7 «Ով որ ականջ ունի, թող լսե ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին» Այս հորդորը կրկնվում է յոթ եկեղեցիների նամակների մեջ (տես Հայտ. 2: 7,11,17,29; 3: 6,13,22): Դա մի արտահայտություն էր, որը եկել էր Հիսուսի խոսքերից (տես Մատթ. 11:15; 13: 9, 43): Հոգևոր ճշմարտությանը պետք է արձագանքել մտքով և ձեռքով: Սա նման է երբայերեն *shema* տերմինին, «լսեք այնպես, որ անեք» (տես 2 Օր. 5: 1; 6: 4; 9: 1; 20: 3; 27: 9-10):

▪ **«Եկեղեցիներին»** Տես Հատուկ Թեմա Հայտ. 1:4

▪ **«Ով որ յաղթում է»** Կա շարունակական աստվածաբանական շեշտադրում հավատացյալների հաստատականության/ համբերության վրա (տես Հայտ. 2: 7,11,17,25-26; 3: 4-5,11-12,21): Սա ճշմարիտ ապաշխարության փորձառական ապացույցն է (տես Մատթ. 24:13; Գաղ. 6: 9): Ջոնաթան Էդվարդսն ասել է. «Անշուշտ, ընտրության ապացույցն այն է, որ մինչև վերջ է տարվում»: Ու. Թ. Քոները ասել է, «Փրկութեան համար ընտրված մարդու փրկությունը Աստծո մտքում է ու նպատակը հաստատված հավիտենականությունից առաջ, բայց դա պայմանավորված է հավատքով, իսկ հավատքը համբերում է և հաղթում»: Տես Հատուկ Թեմա Հայտ.2:2:

▪ **«Ռբան կեանքի ծառիցն ուտել կ'տամ, որ Աստուծոյ դրախտի մեջ է»** Սա ակնարկ է Եդեմի պարտեզի ծառին (տես Ծննդ. 2: 9): Երբ մարդիկ սկսեցին համագործակցել Աստծո և կենդանիների հետ այգու մեջ, այնպես էլ Աստվածաշունչն ավարտվում է նույն ձևով (տես Ես. 11: 6-9; Հայտ. 22: 2,14,19):

«Ռբախտ» տերմինը պարսկական բառ էր՝ ազնվականի ցանկապատած այգու համար, որը օգտագործվել է Մեպտուագինդում՝ Եդեմի պարտեզը թարգմանելու համար (տես Եզ. 28:13; 31: 8): Սա յոթ եկեղեցիների նամակներում հանդիպող Մեսիական ժամանակաշրջանի բազմաթիվ հղումներից մեկն է:

«Ռբախտ» տերմինը օգտագործվում է երկու իմաստով, 1) Ղուկաս 23: 4-ում կարող է վերաբերել *Sheol/Hades* -ի արդար հատվածին (տես Հատուկ Թեմա Հայտ. 1:8): Հիսուսը զոջացող ավագակին ասում է, որ այդ օրը Իր հետ դրախտում կլինի (Հիսուսը վերադարձավ երկինք 40 օր

հետո, տես Հովհ. 20:17) և (2) 2 Կոր. 12: 3-ը վերաբերում է Աստծո ներկայությանը, Աստծո երկնային նստավայրին («երրորդ երկինք»):

Աստծո նպատակը Իր պատկերով և նմանությամբ ստեղծված մարդկության համար (Ծննդ. 1: 26-27; 5: 1; 9: 6), միշտ եղել է հավիտենական կյանքը: Ծննդոց 3-ի անկումը և ամբողջ Աստվածաշունչը փաստում է Աստծո նվիրվածությունը մարդկության փրկագնամանը և Նրա հետ հավիտենական ընկերակցությանը: Այս ընկած աշխարհը, այս բացը լրիվ հաղորդակցության մեջ, Աստծո ցանկությունը չէր, այլ մարդկության ամոթը: Աստված կվերականգնի ստեղծագործությունը Իր նպատակների համար:

Արևելահայերեն Աստվածաշունչ: ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 2:8-11

⁸Եւ Զմիտնիայի եկեղեցու հրեշտակին գրիր. Սա է ասում Առաջինը եւ Վերջինը որ մեռած էր, եւ կենդանացաւ: ⁹Գիտեմ քո գործերը եւ նեղութիւնը եւ աղքատութիւնը. բայց դու հարուստ ես. Եւ գիտեմ նորանց հայեոյանքը որ ասում են թէ իրանք Հրեայ են եւ չեն, այլ սատանայի ժողովք են: ¹⁰Բնաւ մի վախենար այն բաներիցը որ կրելու ես. Ահա բանասարկուն ձեզանից բանտի մեջ է գցելու, որ փորձուիք, եւ նեղութիւն կ'ունենաք տասն օր. հաւատարիմ եղիր մինչեւ ի մահ, եւ կեանքի պսակը կ'տամ քեզ: ¹¹Ով որ ականջ ունի թող լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին. Ով որ յաղթում է, երկրորդ մահիցը չի վնասուիլ:

2: 8 «Առաջինը եւ Վերջինը» Սա Հիսուսի համար կրկնվող տիտղոսներից/անուններից մեկն է, որը հանդիպում է Հայտ. 1:17 և 22:13: Սկզբում այն վերաբերում էր ՅԱՀՎԵԻՆ (տես Ես. 41:4; 44:6; 48:12): Դա հումանիշ է «Ես եմ Ալֆան և Օմեղան» (տես Հայտ. 1: 8; 21: 6; 27:13) և «սկիզբն ու վերջը» արտահայտությանը (տես Հայտ. 21:6; 22: 13): Տես ամբողջ ծանուցումը Հայտ. 1: 8-ում:

▪ **«որ մեռած էր, եւ կենդանացաւ»** Սա կարող էր լինել ապտակ Կիբելեի բնության պաշտամունքի, մայր աստվածուհուն: Հին պտղաբերության կրոններից շատերը իրենց աշխարհայացքը հիմնեցին բնության անհատական ցիկլերի, ձմեռային մահվան և գարնան վերածննդի վրա: Կոնտեքստում սա աստվածաբանորեն կապված է 1:18; 5: 6, որտեղ Հիսուսը գառն է, որը սպանվեց, բայց այժմ կենդանի է: Այն ընդգծում է Հիսուսի մեկ անգամ բոլորի համար (չկրկնվող) փոխարինող մահը և հարությունը (տես Եբր. 7: 27; 9: 12,28; 10:10):

2: 9 «Գիտեմ քո գործերը եւ նեղութիւնը եւ աղքատութիւնը» Սրանք երկու հզոր հունարեն բառեր են: Նրանք կարևոր են, քանի որ Զմիտնիա քաղաքը շատ բարգավաճ էր: Այն փաստը, որ եկեղեցին աղքատ էր թվում, ենթադրում է տնտեսական հալածանք: Աստվածաբանական նշանակություն ունի, որ Հայտնության գրքում հավատացյալները կրում են «նեղություններ» անհավատներից և չարից, իսկ անհավատները կրում են «Աստծո բարկությունը»: Տես բոլոր նշումները, Հայտ. 7:14-ում: Հավատացյալները միշտ պաշտպանված են (կնքված, տես Հատուկ Թեմա Հայտ.7:2) աստվածային դատաստանից:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆԵՂՈՒԹՅՈՒՆ(thlipsis)

SPECIAL TOPIC: TRIBULATION (thlipsis)

Այստեղ պետք է աստվածաբանական տարբերություն լինի Պողոսի և Հովհաննեսի այս տերմինի (*thlipsis*) օգտագործման միջև:

Ա. Պողոսի օգտագործումը (որը արտացոլում է Հիսուսի օգտագործումը)

1. ընկած աշխարհի մեջ ներգրավված խնդիրները, տառապանքները, չարը
 - ա. Մաթ. 13:21
 - բ. Հռ. 5: 3
 - գ. 1 Կոր. 7:28

	դ.	2 Կոր. 7: 4
	ե.	Եփ. 3:13
2.		անհավատների կողմից առաջացած խնդիրները, տառապանքները, չարությունը
	ա.	Հռ. 5: 3; 8:35; 12:12
	բ.	2 Կոր. 1: 4,8; 6:4; 7:4; 8: 2,13
	գ.	Եփ. 3:13
	դ.	Փիլ. 4:14
	ե.	1 Թեա. 1: 6
	զ.	2 Թեա. 1: 4
3.		վերջի ժամանակի խնդիրներ, տառապանքներ, չարիք
	ա.	Սաթ. 24: 21,29
	բ.	Մարկ. 13: 19,24
	գ.	2 Թեա. 1: 6-9
Բ.		Հովհաննեսի օգտագործումը
1.		Հովհաննեսը Հայտնության գրքում առանձնահատուկ տարբերություն է դնում <i>thlipsis</i> և <i>orgē</i> կամ <i>thumos</i> (բարկություն) միջև: <i>Thlipsis</i> այն է, ինչ անհավատները անում են հավատացյալներին, իսկ <i>orgē</i> և <i>thumos</i> այն է, ինչ Աստված է անում անհավատների հետ:
	ա.	<i>thlipsis</i> - Հայտ. 1: 9; 2: 9-10,22; 7:14
	բ.	<i>orgē</i> – Հայտ. 6: 16-17; 11:18; 16:19; 19:15
	գ.	<i>thumos</i> – Հայտ. 12:12; 14: 8,10,19; 15: 1,7; 16: 1; 18: 3
2.		Հովհաննեսն օգտագործում է նաև տերմինը իր Ավետարանում՝ արտացոլելու բոլոր ժամանակների հավատացյալների դիմագրավելու խնդիրները, Հովհ. 16:33:

▪ **«բայց դու հարուստ ես»** Հավատացյալները չեն կարող դատել կամ չափել իրենց դիրքը Քրիստոսում աշխարհիկ չափանիշներով (տես Մատթ. 6:33):

Արևելահայերեն «հայհոյանքը»
Արևմտահայերեն «հայհոյութիւնը»

NASB, NKJV, Peshitta «հայհոյանք»
NRSV, NJB, REB «գրպարտություն»
TEV «չար բաներ է ասել ձեր դեմ»

Սա բառացիորեն «հայհոյանք» տերմինն է, որն ունի Հին Կտակարանյան իմաստ «վիրավորել, անարգել» և սովորաբար օգտագործվում էր ՅԱՀՎԵԻ բանավոր հարձակումների հետ կապված (տես Ղև. 24: 13-23): Հին Կտակարանում երկու անգամ «օրհնված» (*barak*) տերմինն օգտագործվում է հայհոյանքի իմաստով (տես 3 Թագ. 21:10,13): Կոնտեքստում այս հրեա կրոնասերները պնդում են, որ ճանաչում են Աստծուն («օրհնեք Աստծուն»), բայց ոչ (տես Մատթ. 7:21-23):

▪ **«որ ասում են թե իրանք Հրեայ են եւ չեն»** Շատ նմանատիպ արտահայտություն է օգտագործվում Հայտ. 3: 9-ում, այնտեղ ակնհայտ է, որ նրանք ռասայական հրեաներն են, ովքեր պնդում են, որ Աստծո ժողովուրդն են, բայց իրականում չեն (տես Հովհ. 8:44; Հռ. 2: 28-29; 9: 6; Գաղ. 3:29; 6:16): Գործքից և Գաղատացիսից մենք գիտենք, որ հրեաները մեծ հակառակություն են արել ավետարանի հռչակման համար (տես Գործք 13:50; 14: 2, 5, 19; 17:5):

Հայտնություն 2:13-ը ցույց է տալիս, որ սա վերաբերում է կայսերական պաշտամունքի տեղական կուլտերին, որոնք կոչվում էին Կոնցիլիա, որը պահանջում էր, որ քրիստոնյաները Կեսարի «Տեր» կոչեին և խնկարկեն նրան տարին մեկ անգամ:

- **«սատանայի ժողովք»** Հովհաննեսը տեսնում էր աշխարհը սուր հակադրությամբ՝ Աստված ընդդեմ Սատանայի: Սատանան (տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԱՏԱՆԱ, Հայտ. 12:3) հաճախ հիշատակվում է գրքում (տես Հայտ. 2: 9,13; 3: 9; 12: 9,10; 20: 2,7): Նա զրպարտում է հավատացյալներին և զորացնում նրանց հալածողներին: Այս հակամարտությունը կամ դուալիզմը հոգևոր ոլորտում բնութագրում է ապոկալիպտիկ գրականությունը: Ադամի զավակների սրտերն ու մտքերը հսկելու համար կա պայքար:

2:10 «մի վախենար» Սա ներկա չեզոք կամ կրավորական (deponent) հրամայական է բացասական մասնիկով, որը սովորաբար նշանակում է դադարեցնել գործողությունը: Այս եկեղեցիները վախեցած էին: Հալածանքները նրանց փրկության և Աստծո օրհնությունների նշանն էին (տես Մաթ. 5: 10-12):

- **«բանասարկուն ձեզանից բանտի մեջ է գցելու»** Չար առաջնորդների ետևում թաքնված է չարի գերբնական անձնավորված ուժը (տես Եփ. 6: 10-19):

Սատանա տերմինը Հին Կտակարանյան անվանումն է և նկարագրությունը: Նրա Աստծո կողմից տրված առաջադրանքն էր ապահովել ապստամբ, եսակենտրոն այլընտրանք մարդկությանը և դրանով մեղադրել նրանց, երբ նրանք փորձության մեջ են ընկնում (տես Ծննդոց 3; Հոբ 1-2; Զաք. 3): Հին Կտակարանում կա չարի զարգացում: Սատանան ստեղծվել է որպես ծառա և ընթացքում դարձել թշնամի (տես Ա. Բ. Դավիդսոն *Հին Կտակարանի Աստվածաբանություն/An Old Testament Theology* by A. B. Davidson, էջ 300-306):

Անշուշտ ենթադրություն է, որ Եսայիա 14-ի խիստ փոխաբերական լեզուն, որը ուղղակիորեն վերաբերում է Բաբելոնի ամբարտավան թագավորին, և Եզեկիել 28-ին, որը ուղղակիորեն վերաբերում է Տյուրոսի հպարտ թագավորին, ի վերջո նույնացվում է Սատանայի հոգևոր հպարտության ու ընկնելու հետ: Եզեկիել 28-ի լեզուն վերցված է Եդեմի պարտեզի նկարագրությունից: Դժվար է ընդունել մարդկային, պատմական, հեթանոս թագավորի նկարագրությունը հրեշտակային տերմիններով, որոնք վերցված են Եդեմից (Ծննդոց 3): Սակայն Եզեկիելը նույն բանն անում է Եգիպտոսի թագավորի հետ 31-րդ գլխում: Նա նկարագրվում է որպես հսկա ծառ Եդեմի պարտեզում:

Բոլոր հավատացյալները ցանկանում են ավելի շատ տեղեկություններ ստանալ, հատկապես Աստծո ծագման, հրեշտակների, չարի և այլնի մասին: Մենք պետք է զգույշ լինենք փոխաբերական, մարգարեական նկարագրությունը դոգմատիկ աստվածաբանություն չդարձնելու համար: Շատ ժամանակակից աստվածաբանություն գալիս է մեկուսացված, պատկերավոր տեքստերը խառնված ժամանակակից հասկացությունների հետ, ինչպես աստվածաբանական, այնպես էլ գրական (Դանթե և Միլտոն):

Նոր Կտակարանում նա կոչվում է սատանա (տես Հայտ. 12: 9,12; 20: 2,10), որը հունարեն բաղադրյալ տերմին է, որը նշանակում է «նետել», «զրպարտել» կամ «մեղադրանքներ ներկայացնել»: Սա կրկին արտացոլում է մեղադրելու և գայթակղելու իր պարտականությունը: Այս տերմինները հոմանիշ են Հայտնության մեջ (տես Հայտ. 12: 9; 20: 2): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆՁՆԱԿԱՆ ՉԱՐԸ, Հայտ. 12:9

- **«որ փորձուիք»** Այս տերմինը օգտագործվում է երկու իմաստներով. (1) հավատացյալները փորձվում են, որպեսզի երևա իրենց իսկական հավատքը և ավելի զորանան (տես Հայտ. 2: 10; Գործք 14: 27; Հռ. 5: 3-4; 8: 17-19; Եբր. 5 :8; Հակ. 1: 2-4; 1 Պետ. 4: 12-19); (2) անհավատները փորձվում են ցույց տալու իրենց անհավատությունը և արժանի պատիժը (տես Հայտ. 3:10): Հայտնության մեջ

քրիստոնյաների փորձությունները կոչվում են «նեղություններ», իսկ անհավատները ենթարկվում են «Աստծո բարկությանը»:

Կային երկու հունարեն թարգմանություններ, որ թարգմանել են «փորձ», «փորձել» կամ «գայթակղել»: Մեկը ունեցել է «փորձարկել ոչնչացման համար» իմաստը (*peirasmos, peirasmō*): Մյուս տերմինները (*dokimos, dokimazo*) օգտագործվել են «փորձել հավանություն տալու համար»: Սատանան փորձում է ոչնչացնել; Աստված փորձում է զորացնելու համար (տես 1 Թես. 2: 4; 1 Պետ. 1: 7; Ծննդ. 22: 1; Ելից 16: 4; 20:20; 2 Օր. 8: 2,16; 13: 3; Դատ. 2:22; 2 Մնաց. 32: 31): Տես Հատուկ Թեմա Հայտ. 2:2:

- **«տասն օր»** «Տաս օր» արտահայտության մասին շատ շահարկումներ են եղել.
 1. ոմանք ասում են, որ այն վերաբերում է Հովհաննեսի օրոք Ջոյունիա քաղաքում բառացիորեն տաս օր տևած հալածանքին
 2. ուրիշներն ասում են, քանի որ տասը ամբողջ թիվ է, այն պարզապես նշանակում է հալածանքի ամբողջական օրերի քանակը
 3. ոմանք ասում են, որ այն վերաբերում է հալածանքի անորոշ ժամանակաշրջանինԼավ նորությունն այն է, որ այն ունի վերջ: Հալածանքը կավարտվի:

Այնուամենայնիվ, ապոկալիպտիկ գրքում հաստատ չես կարող իմանալ, արդյոք թվերը օգտագործվում են փոխաբերական թե բառացիորեն: Եթե թիվը հաճախ էր օգտագործվում Հին Կտակարանում և միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականության մեջ խորհրդանշական իմաստով, ապա հավանաբար այն պատկերավոր է: Առավել հաճախ օգտագործվող խորհրդանշական թվերն են 3, 4, 6, 7, 10, 12 և դրանց բազմապատիկները (տես Հատուկ Թեմա Հայտ. 1:4):

- **«հաստարիմ եղիր մինչև ի մահ»** Սա ներկա չեզոք կամ կրավորական (*deponent*) հրամայական է, որը շեշտում է հավատացյալի հավատքը պահելու անհրաժեշտությունը, նույնիսկ եթե այն նշանակում է ֆիզիկական մահ (տես Մատթ. 2:13; 12: 11; 10:22; 24:13; Դուկ. 12:4; Գաղ. 6: 9): Որոշ հավատացյալներ սպանվել և սպանվում են: Սա Աստծո ինքնիշխանության պարադոքսն է և ընկած աշխարհում մեր փորձառությունը:

- **«եւ կեանքի պսակը կ'տամ քեզ»** Սա հաղթողի թագն էր, որը կոչվում էր «*stephanos*» (տես 1 Կոր. 9:25): Դա քրիստոնյա նահատակների վարձատրությունն էր: Մենք Եռուսեբիոսի «Եկեղեցական պատմությունից»/Eusebius' *Ecclesiastical History*, 4:15 սովորում ենք, որ կային շատ նահատակներ, այդ թվում Ջոյունիայի եպիսկոպոս Պոլիկարի: Նոր Կտակարանում հիշատակվում են նաև այլ պսակներ (պարգևներ) (տես 2 Տիմ. 4: 8; Հակ. 1: 12; 1 Պետ. 5: 4; Հայտ. 3:11):

Հովհաննեսը կյանքի համար օգտագործում է *zoē* տերմինը՝ հավիտենական կյանքի, հարության կյանքի համար (տես Հովհ. 1: 4; 3: 15, 36; 4: 14, 36; 5: 24,26,29,39,40; 6: 27,33,35,40,47,48,51,53,54,63,68; 8:12; 10: 10,28; 11:25; 12: 25,50; 14: 6; 17: 2 , 3; 20:31; Հայտ. 2: 7,10; 3: 5; 13: 8; 17: 8; 20: 12,15; 21: 6,27; 22: 1,2,14,17,19) : Ճշմարիտ կյանքը շատ ավելին է, քան ֆիզիկական գոյությունը:

<p>ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՎԱՐՉՔԵՐԻ ԵՎ ՊԱՏԻՇՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ SPECIAL TOPIC: DEGREES OF REWARDS AND PUNISHMENT</p> <p>Ա. Աստծուն պատշաճ կամ ոչ պատշաճ արձագանքը հիմնված է մարդու գիտելիքի մակարդակի վրա: Որքան պակաս գիտելիք ունի մարդը, այնքան քիչ պատասխանատու է: Հակառակը նույնպես ճշմարիտ է (տես Դուկ. 12:45):</p> <p>Բ. Աստվածձանաչությունը գալիս է երկու հիմնական եղանակով</p> <ol style="list-style-type: none">1. ստեղծագործություն (տես Սաղ. 19; Հռ. 1-2)
--

2. Սուրբ Գիրք (տես Սաղ. 19; 119, Հիսուսը, ինչպես հայտնված է Նոր Կտակարանում)
- Գ. Հին Կտակարանի ապացույց
1. վարձքեր
 - ա. Ծննդ. 15: 1 (սովորաբար կապված է երկրային վարձատրության, հողի և որդիների հետ)
 - բ. Ղև. 26: 1-13; 2 Օր. 28: 1-14,58-68 (ուխտի հնազանդությունը բերում է օրհնություն)
 - գ. Դան. 12: 3
 2. պատիժներ – Ղև. 26: 14-39; 2 Օր. 27: 15-26; 28: 15-37 (ուխտի անհնազանդությունը բերում է անեծք)
 3. Անձնական, ուխտի արդարության համար վարձքի Հին Կտակարանյան ձևը փոփոխվում է մարդկային մեղքի պատճառով: Այս փոփոխությունը երևում է Հոբի գրքում և Սաղ. 73-ում (այսինքն, «երկու ճանապարհ», տես 2 Օր. 30:15,19; Սաղ. 1): Նոր Կտակարանը ակտիվացնում է կենտրոնացումը գործից դեպի միտք (տես Լեռան քարոզը, Մաթ. 5-7):
- Դ. Նոր Կտակարանի ապացույց
1. վարձք (փրկությունից դուրս)
 - ա. Մարկ. 9:41
 - բ. Մաթ. 5: 12,46; 6: 1-4,5-6,6-18; 10: 41-42; 16:27; 25: 14-23
 - գ. Ղուկ. 6:23, 35; 19: 11-19, 25-26
 2. պատիժներ
 - ա. Մարկ. 12:38-40
 - բ. Ղուկ. 10:12; 12: 47-48; 19: 20-24; 20:47
 - գ. Մաթ. 5:22,29,30; 7:19; 10: 15,28; 11: 22-24; 13: 49-50; 18:6; 25: 14-30
 - դ. Հակ. 3: 1
- Ե. Ինձ համար միակ նմանությունը, որն իմաստ ունի, օպերայից է: Ես օպերա չեմ գնում, այնպես որ ես չեմ հասկանում նրանց: Որքան ավելի շատ գիտեի պուժեի, երաժշտության և պարի դժվարության և խճճվածության մասին, այնքան ավելի շատ կգնահատեի կատարումը: Ես հավատում եմ, որ երկինքը կլցնի մեր բաժակները, բայց կարծում եմ, որ մեր երկրային ծառայությունը որոշում է բաժակի չափը:
- Հետևաբար, գիտելիքը և այդ գիտելիքի արձագանքը հանգեցնում է վարձքերի եւ պատիժների (տես Մաթ. 16:7, Ղուկ. 12:48; 1 Կոր. 3: 8,14; 9: 17,18; Գաղ. 6: 7; 2 Տիմ. 4:14): Կա հոգևոր սկզբունք՝ մենք հնձում ենք այն, ինչ ցանում ենք: Ոմանք ավելի շատ են սերմանում և ավելի շատ են հնձում (տես Մաթ. 13: 8, 23):
- Զ. «Արդարության պսակը» մերն է Հիսուս Քրիստոսի կատարած գործի շնորհիվ (տես 2 Տիմ. 4:8), սակայն նկատեք, որ «կյանքի պսակը» կապված է նեղությունների ժամանակ համբերելու հետ (տես Հակ. 1:12; Հայտ. 2: 10; 3: 10-11): Քրիստոնյա առաջնորդների համար «փառքի պսակը» կապված է նրանց կենսակերպի հետ (տես 1 Պետ. 5:1-4): Պողոսը գիտեր, որ նա ունի անապականացու թագ, բայց նա գործածում է ծայրահեղ ժուժկալություն (տես 1 Կոր. 9:24-27):
- Քրիստոնեական կյանքի առեղծվածն այն է, որ ավետարանը բացարձակապես ձրի է Քրիստոսի կատարած գործի շնորհիվ, սակայն, երբ մենք պետք է արձագանքենք Քրիստոսի Աստծո առաջարկին, մենք պետք է նաև արձագանքենք Աստծո զորացմանը քրիստոնեական կյանքի համար: Քրիստոնեական կյանքը գերբնական է, ինչպես փրկությունը, բայց մենք պետք է ընդունենք և պահենք այն: Չրի բայց ամեն բան արժեցող պարադոքսը, վարձքերի և սերմանել / հնձելու խորհուրդն է:
- Մենք չենք փրկվում բարի գործերով, այլ լավ գործերի համար (տես Եփ. 2: 8-10): Լավ գործերը այն ապացույցն են, որ մենք հանդիպել ենք Նրան (տես Մաթ. 7): Փրկության

ուղորտում մարդկային արժանիքները հանգեցնում են ոչնչացման, բայց աստվածահաճո կյանքը վարձատրվում է:

2:11 «Ով որ յաղթում է» Սա նույնպես հերթական հորդոր է հավատարմության համար (տես Հայտ. 2: 7,17,26; 3: 5,12,21; 21: 7): Անշուշտ, շեշտը դրվում է հաստատականության/ համբերության վրա (տես Հատուկ Թեմա Հայտ.2:2):

▪ **«Երկրորդ մահիցը չի վնասուիլ»** Սա երկակի բացասական կառուցվածք է աօրիստ կրավորական ստորադասականի հետ, որը ցույց է տալիս Աստծո վերջնական խնամքը նրանց համար, ովքեր նահատակված են (տես Հայտ. 12: 11): «Երկրորդ մահը» վերաբերում է դժոխքին կամ Աստծո հետ հաղորդակցվելու հավիտենական բաժանմանը (տես Հայտ. 20: 6,14; 21: 8):

▪ **«Ով որ ականջ ունի թող լսե՛»** Սա հոգևոր ուշադրության և խոհեմության համար հերթական հորդորն է (տես Հայտ. 2: 7,11,17,29; 3: 6,13,22; 13: 9):

Արևելահայերեն Աստվածաշունչ: ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 2:12-17

¹²Եւ Պերգամոնի եկեղեցու հրեշտակին գրիր. Սա է ասում սրած երկսայրի սուրն ունեցողը: ¹³Գիտեմ քո գործերը, եւ թե՛ որ տեղ ես բնակվում, ուր որ սատանայի աթոռն է. Եւ իմ անունը պահում ես, եւ իմ հաւատքը չ'ուրացար այն օրերը, որ իմ Անտիպաս հաւատարիմ վկան սպանուեցաւ ձեր մէջ. Ուր որ սատանան է բնակվում: ¹⁴Բայց քեզ դէմ մի քիչ բաներ ունիմ. Որ այդ տեղ Բաղասամի վարդապետութիւնը պահողներ ունիս որ Բաղակին սովորեցրեց, գայթակղութիւն դնել Իսրայէլի որդկանց առաջին, որ նորանք կուռքի մատաղ ուտեն եւ պոռնկութիւն անեն: ¹⁵Այսպէս դու էլ Նիկողայոսեանների վարդապետութիւնը պահողներ ունիս, որ ես ատում եմ: ¹⁶Ապաշխարիր, ապա թե՛ ոչ՝ շուտով քեզ մօտ կ'գամ, եւ կ'պատերազմեմ նորանց հետ իմ բերանի սրովը: ¹⁷Ով որ ականջ ունե թող լսե՛ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին. Ով որ յաղթում է այն թագգրած մանանայիցն ուտել կ'տամ նորան. Եւ սպիտակ խիճ կ'տամ նորան. Եւ այն խիճի վերայ մի նոր անուն գրուած, որ ոչ որ չ'գիտե, բացի նա որ առնում է:

2:12 «սրած երկսայրի սուրն ունեցողը» Սա նույն հղումն է փառավորյալ Հիսուսի մասին, որը հանդիպում է Հայտ. 1:16: Դա Հին Կտակարանյան փոխաբերություն է ՅԱՀՎԵԻ համար (տես Ես. 11: 4; 49: 2): Այն օգտագործվում է Նոր Կտակարանում Աստծո խոսքի թափանցող ուժի համար (տես Հայտ. 2:16; 2 Թես. 2: 8; Եբր. 4:12):

2:13 «Գիտեմ թե՛ որ տեղ ես բնակվում» «Բնակվել» Հին Կտակարանում նշանակում էր «մշտապես ապրել ինչ որ ... հետ»: Այս հավատացյալները բախվեցին ուժեղ տեղական իշխանության և դիվային ուժերի հետ: Հիսուսը գիտեր նրանց և նրանց վտանգավոր իրավիճակը: Նա նրանց հետ էր:

▪ **«ուր որ սատանայի աթոռն է»** Այս արտահայտության մի քանի հնարավոր մեկնաբանություններ են եղել.

1. Այն կարող էր վերաբերել Զևսի մեծ գահին, որը գտնվում էր Պերգամոնում:
2. Դա կարող էր վերաբերել բժշկության աստծուն, Ասկլեոպոսին, որի խորհրդանիշը օձ էր:
3. Թվում է, որ ամբողջ քաղաքը նման էր հսկա գահի Ակրոպոլիսի պատճառով, որը հարյուր ոտնաչափ բարձր էր կանգնած քաղաքից:
4. Դա կարող է լինել հղում Կոնցիլիա տեղական կազմակերպությանը նպաստելու կայսեր երկրպագությանը, որը շատ զորեղ էր Պերգամոնում:

Պատմական կոնտեքստի շնորհիվ # 1 կամ # 4-ը լավագույնն են:

- **«Եւ իմ անունը պահում ես»** Սա ներկա ներգործական սահմանական է: Այն ցույց է տալիս անվան նշանակությունը, որը ներկայացնում է անձի բնույթը: Հավատացյալները վստահում են կանչելով Նրա անունը (տես Հովհ. 1:12; 3:18; Հռ. 10: 9-13) և երկրպագության միջոցով կանչելով Նրա անունը (տես Ծննդ. 4:26; 12: 8; 26:25) և համբերելով կանչելով Նրա անունը (տես Հովհ. 17:11-12):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԻՐՈՋ ԱՆՈՒՆԸ (Նոր Կտակարան)

SPECIAL TOPIC: THE NAME OF THE LORD (NT)

Սա տարածված Նոր Կտակարանյան արտահայտություն է եկեղեցում Աստված Երրորդության անձնական ներկայության և ակտիվ գործության համար: Դա կախարդական բանաձև չէր, այլ կոչ Աստծո բնավորությանը:

Հաճախ այս արտահայտությունը վերաբերվում է Հիսուսին որպես Տեր (տես Փիլ. 2:11)

1. մկրտության ժամանակ, երբ անձը դավանում է Հիսուսին (տես Հռ. 10:9-13; Գործք 2:21,38; 8: 12,16; 10:48; 19: 5; 22:16; 1 Կոր. 1 : 13,15; Հակ. 2: 7)
2. դևեր հանելու ժամանակ (տես Մաթ. 7:22; Մարկ. 9:38; Ղուկ. 9:49; 10:17; Գործք 19:13)
3. բժշկության ժամանակ (տես Գործք 3: 6,16; 4:10; 9:34; Հակ. 5:14)
4. ծառայության ժամանակ (տես Մատթ. 10:42; 18: 5; Ղուկ. 9:48)
5. եկեղեցու կարգապահության ժամանակ (տես Մատթ. 18: 15-20)
6. հեթանոսներին քարոզելու ժամանակ (տես Ղուկ. 24:47; Գործք 9:15; 15:17; Հռ. 1: 5)
7. աղոթքի մեջ (տես Հովհ. 14: 13-14; 15: 7,16; 16:23; 1 Կոր. 1: 2)
¹⁴Եւ Լաւոդիկէի եկեղեցու հրեշտակին գրիր. Սա է ասում Ամէնը, հաւատարիմ եւ ճշմարիտ Վկան, Աստուծոյ արարածների Սկիզբը: ¹⁵Գիտեմ քո գործերը որ ոչ ցուրտ ես եւ ոչ տաք. Ո՛հ թէ ցուրտ լինէիր կամ տաք: ¹⁶Ուրեմն որովհետեւ գաղջ ես, եւ ոչ տաք եւ ոչ ցուրտ, քեզ պիտի փսխեմ իմ բերանիցը: ¹⁷Որովհետեւ ասում ես, թէ Ես հարուստ եմ եւ մեծացայ, եւ ոչ բանի կարօտ չեմ. Բայց չ'գիտես թէ դու թշուառ, եւ ողորմելի, եւ աղքատ, եւ կոյր, եւ մերկ ես: ¹⁸Ես խրատ եմ տալիս քեզ, և ինձանից կրակում փորձուած ոսկի առ, որ հարստանաս, եւ սպիտակ հանդերձներ՝ որ հագնիս, որ քո մերկութեան ամօթը չ'երեւի. Եւ դեղ դիր աչքերիդ որ տեսնես: ¹⁹Ես որոնց որ սիրում եմ յանդիմանում եմ, եւ խրատում եմ. Ուրեմն ջանք արա եւ ապաշխարիր: ²⁰Ահա ես դռան առաջին կանգնած եմ եւ թակում եմ. եթէ մէկը լսէ իմ ձայնը եւ դուռը բանայ, կ'մտնեմ նորա մօտ եւ ընթրիք կ'անեմ նորա հետ, եւ նա ինձ հետ: ²¹Ով որ յաղթում է, կ'տամ նորան, որ ինձ հետ նստի իմ աթոռի վերայ, ինչպէս ես էլ յաղթեցի եւ նստեցի իմ Հօր հետ նորա աթոռի վերայ: ²²Ով որ ականջ ունի թող լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին:

3:14 «Ամէնը» Սա ՅԱՀՎԵԻ անունն է «Ամէնի Աստվածը» Ես. 65:16: «Ամեն» տերմինը «հավատալ» կամ «հավատք» բառի Հին Կտակարանյան ձևն է (տես Ծննդ. 15:16; Ամբ. 2: 4): Այն սովորաբար ընդգծում է հավատարմությունը կամ վստահությունը (տես 1: 6; 2 Կոր. 1:20): Տես հատուկ Թեմա Հայտ.1:6:

- «հաւատարիմ եւ ճշմարիտ Վկան» Սա կարող է մեկ այլ արտահայտություն լինել առաջին գլխից (տես Հայտ. 1: 5): Սեպտուագիանում այս երկու ածականները կիրառվում են ՅԱՀՎԵԻ համար: Հնարավոր է, որ *emeth*, որը «հավատք», «հավատալ» կամ «վստահություն» եբրայերեն բառն է թարգմանվել է որպես *pistos* (հավատարիմ) և *alētheia* (ճշմարտություն): Այս երկու հունարեն տերմինները հաճախ օգտագործվում են Հիսուսի համար Հայտնության գրքում (տես Հայտ. 3:14; 19:11; 21: 5; 22: 6):

Արևելահայերեն «Աստուծոյ արարածների Սկիզբը»
Արևմտահայերեն «Աստուծոյ արարածներուն Սկիզբը»

NASB, NKJV, Peshitta «Աստծո ստեղծագործության Սկիզբը»
NRSV «Աստծո ստեղծագործության ծագումը»

TEV «Աստծո բոլոր ստեղծագործության ծագումը»

NJB «Աստծո ստեղծագործության Սկզբունքը»

Սա ակնարկ է թե Ծննդ. 1: 1 և թե Հովհ. 1: 1: «Սկիզբը» (եբրայերեն *bereshith*) և «ծագում» (հունարեն *arshē*) տերմիններն ունեն երկու իմաստներ. (1) մեկնարկ կամ (2) ծագում, աղբյուր:

Այս արտահայտությունն օգտագործվել է չորրորդ դարի Արիոս / Աթանասիոս (Տրինիտարիան) հակասությունների մեջ և ակնարկ է Առ. 8: 22-31-ի: Իմաստությունը ՅԱՀՎԵԻ առաջին ստեղծագործությունն էր, և իմաստության միջոցով մնացած ամեն ինչը ստեղծվեց: Սա հավանաբար, Հովհաննեսի «*logos*» գործածության սկիզբն է Իր Ավետարանում (տես Հովհ.1:1): Սա Քրիստոսի նախագոյ լինելու մասին ամենաուժեղ հատվածներից մեկն է (տես Հովհ.1: 1; 8: 57-58; 2 Կոր. 8:4; Փիլ. 2: 6-7; Կող. 1:17) ինչպես նաև արարչագործության մեջ Քրիստոսի` Հոր գործակալը լինելու մասին (տես Հովհ. 1: 3; 1 Կոր. 8:16; Կող.1: 15,18; Եբր. 1: 2):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԿԻՉԲ/ՕՍԳՈՒՄ

SPECIAL TOPIC: ARCHĒ (ARCHĒ)

Հունարեն *archē* տերմինը նշանակում է ինչ-որ բանի «սկիզբ» կամ «ծագում»:

1. ստեղծված կարգի սկիզբը (տես Հովհ. 1: 1; Եբր. 1:10)
2. ավետարանի սկիզբը (տես Մարկ. 1: 1; Փիլ. 4:15; 2 Թեա. 2:13; Եբր. 2: 3; 1 Հովհ. 1:1)
3. առաջին ականատեսները (տես Ղուկ. 1: 2)
4. նշանների սկիզբը (հրաշքներ, տես Հովհ. 2:11)
5. սկզբունքների սկիզբը (տես Եբր. 5: 12)
6. հավաստիացում, հիմնված ավետարանի ճշմարտությունների վրա (տես Եբր. 3:14)
7. սկիզբը, Կող. 1:18; Հայտ. 3:14

Այն օգտագործվել է «կանոն» կամ «հեղինակություն» բառի համար,

1. մարդկային իշխանությունների համար
 - ա. Ղուկ. 12:11
 - բ. Ղուկ. 20:20
 - գ. Հռ. 13:3; Տիտոս 3:1
2. հրեշտակային իշխանությունների համար
 - ա. Հռ. 8: 38
 - բ. 1 Կոր. 15:24
 - գ. Եփ. 1:21; 3:10; 6:12
 - դ. Կող. 1:16; 2: 10,15
 - ե. Հուդա 1: 6

Հուդա գիրքի այս կեղծ ուսուցիչները արհամարհեցին բոլոր իշխանությունները` երկրային և երկնային: Նրանք անտիստիան ազատամիտներ են: Նրանք իրենց և իրենց ցանկությունները դրեցին Աստծուց, հրեշտակներից, քաղաքացիական իշխանություններից և եկեղեցական առաջնորդներից առաջ:

3:15 «ոչ ցուրտ ես եւ ոչ տաք» Սա կարող է ակնարկ լինել գաղջ ջրի մասին, որ այս քաղաքի բնակիչները ստիպված էին խմել տեղի տաք աղբյուրների պատճառով: Նման մեղադրանք է առաջադրվում Մարդեսի եկեղեցու դեմ (տես Հայտ. 3: 1):

3:16 «քեզ պիտի փսխեմ իմ բերանիցը» Հայտ. 2: 5; 3: 3,16,17-ի զգուշացումները ցնցող են, երբ հասկացվում է, որ դրանք ուղղված են առաջին դարի տեսանելի եկեղեցիներին: Սա ոչ թե փրկության կորուստ է, այլ արդյունավետ ծառայության կորուստ (տես Հայտ. 3:19; Եբր. 12:5-13):

3:17 «Որովհետև ասում ես, թե Ես հարուստ եմ եւ մեծացայ, եւ ոչ բանի կարօտ չեմ» 17 և 18-րդ համարները պատմական ակնարկ է Լավոդիկեյին որպէս բանկային կենտրոն, ներկված բրդի կենտրոն և աչքի բալասանի կենտրոն: Նրանց բարգավաճման ողբերգությունն այն էր, որ կարծում էին, թե այնքան շատ ունեին, բայց իրականում դա այդպես չէր (տես Հայտ. 3: 1):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

SPECIAL TOPIC: WEALTH

- I. Հին Կտակարանի ընդհանուր հայացքը
 - Ա. Աստված ամեն բանի սեփականատերն է
 - 1. Ծննդոց 1-2
 - 2. 1 Մնացորդաց 29:11
 - 3. Սաղմոս 24:1; 50:12; 89:11
 - 4. Եսայիա 66:2
 - Բ. Մարդիկ հարստության տնտեսներն են Աստծո նպատակների համար
 - 1. 2 Օրինաց 8:11-20
 - 2. Ղևտացոց 19:9-18
 - 3. Հոբ 31: 16-33
 - 4. Եսայիա 58: 6-10
 - Գ. Հարստությունը կարող է ծառայել պաշտամունքի մի մասն
 - 1. երկու տասանորդ
 - ա. Թվոց 18:21-29; 2 Օրինաց 12: 6-7; 14: 22-27
 - բ. 2 Օրինաց 14: 28-29; 26: 12-15
 - 2. Առակաց 3:9
 - Դ. Հարստությունը համարվում է Աստծո կողմից պարզև՝ ուխտի հավատարմության համար
 - 1. 2 Օրինաց 27-28
 - 2. Առակաց 3:10; 8: 20-21; 10:22; 15: 6
 - Ե. Նախազգուշացում ուրիշների հաշվին հարստանալու դեմ
 - 1. Առակաց 21:6
 - 2. Երեմիա 5: 26-29
 - 3. Ովսեա 12: 6-8
 - 4. Միքիա 6:9-12
 - Զ. Հարստությունն ինքնին մեղք չէ, եթե դա կյանքում առաջնահերթ չէ դառնում
 - 1. Սաղմոս 52:7; 62:10; 73: 3-9
 - 2. Առակաց 11:28; 23: 4-5; 27:24; 28: 20-22
 - 3. Հոբ 31: 24-28
- II. Առակաց Գրքի յուրահատուկ հայացքը
 - Ա. Հարստությունը պետք է ձեռք բերվի անձնական ջանքերի, աշխատանքի շնորհիվ
 - 1. անգործությունը և ծուլությունը դատապարտելի է – Առ. 6: 6-11; 10: 4-5,26; 12: 24,27; 13:4; 15:19; 18:9; 19: 15,24; 20:4, 13; 21:25; 22:13; 24: 30-34; 26: 13-16
 - 2. ժրաջան աշխատասիրությունը գովելի է – Առ. 12:11,14; 13:11
 - Բ. Աղքատություն-հարստություն, արդարություն -չարություն –Առ. 10:1; 11: 27-28; 13:7; 15: 16-17; 28: 6,19-20
 - Գ. Իմաստությունը (ճանաչել Աստծուն և Նրա Խոսքը և ապրել այդ գիտելիքով) ավելի լավ է, քան հարստությունը – Առ. 3:13-15; 8: 9-11,18-21; 13:18
 - Դ. Նախազգուշացումներ և հորդորներ
 - 1. նախազգուշացումներ

- ա. զգուշացեք ուրիշի համար (գրավ) երաշխավոր լինելուց – Առ. 6:1-5; 11:15; 17:18; 20:16; 22:26-27; 27:13
 - բ. զգուշացեք չար կերպերով հարստանալուց (Առ.1:19; 10: 2,15; 11: 1; 13:11; 16:11; 20: 10,23; 21:6; 22: 16,22; 28: 8
 - գ. Պարտք չվերցնեք –Առ. 22:7
 - դ. Մի աշխատիր հարստանալ -Առ. 23:4-5
 - ե. հարստությունը չի օգնի դատաստանի օրը -Առ. 11:4
 - զ. հարստությունը շատ «ընկերներ» ունի-Առ. 14:20; 19: 4
2. հորդորներ
- ա. Առատաձեռնությունը գովելի է – Առ. 11:24-26; 14:31; 17:5; 19:17; 22: 9,22-23; 23:10-11; 28:27
 - բ. Արդարությունը ավելի լավ է, քան հարստությունը –Առ. 16:8; 28: 6,8,20-22
 - գ. աղոթեք կարիքի համար, ոչ թե առատության-Առ. 30:7-9
 - դ. աղքատին տալ նշանակում է Աստծուն տալ – Առ. 14:31

III. Նոր Կտակարանի ընդհանուր հայացքը

Ա. Հիսուս

1. հարստությունը ստեղծում է յուրահատուկ գայթակղություն, վստահելու ինքներս մեզ և մեր ռեսուրսներին՝ Աստծո և Նրա ռեսուրսների փոխարեն
 - ա. Մատթեոս 6:24; 13:22; 19:23
 - բ. Մարկոս 10: 23-31
 - գ. Ղուկաս 12: 15-21,33-34
 - դ. Հայտնություն 3:17-19
2. Աստված կհոգա մեր ֆիզիկական կարիքները
 - ա. Մատթեոս 6:19-34
 - բ. Ղուկաս 12:29-32
3. ով ցանի նա էլ կհնձի (թե հոգևոր և թե ֆիզիկական)
 - ա. Մարկոս 4:24
 - բ. Ղուկաս 6: 36-38
 - գ. Մատթեոս 6:14; 18:35
4. ապաշխարությունը ազդում է հարստության վրա
 - ա. Ղուկաս 19: 2-10
 - բ. Ղևտացոց 5:16
5. տնտեսական շահագործումը դատապարտելի է
 - ա. Մատթեոս 23:25
 - բ. Մարկոս 12:38-40
6. վերջին դատաստանը կապված է, թե ինչպես ենք օգտագործում հարստությունը -Մատ. 25: 31-46

Բ. Պողոս

1. գործնական տեսակետ, ինչպես Առակացը (աշխատանք)
 - ա. Եփեսացիս 4:28
 - բ. 1 Թեսաղոնիկեցիս 4:11-12)
 - գ. 2 Թեսաղոնիկեցիս 3: 8,11-12
 - դ. 1 Տիմոթեոս 5: 8
2. հոգևոր տեսակետ Հիսուսի նման (նյութականը փչանում է, բավարարված լինել)
 - ա. 1 Տիմոթեոս 6: 6-10 (բավարարվածություն)

- բ. Փիլիպպեցիս 4: 11-12 (բավարարվածություն)
- գ. Եբբայեցիս 13: 5 (բավարարվածություն)
- դ. 1 Տիմոթեոս 6: 17-19 (առատաձեռնություն և վստահություն Աստծուն, ոչ թե հարստությանը)
- ե. 1 Կորնթացիս 7: 30-31 (նյութական բաների վերափոխումը)

IV. Եզրակացություններ

- Ա. Չկա սիստեմատիկ աստվածաշնչյան աստվածաբանություն հարստության վերաբերյալ:
- Բ. Աստվածաշնչում այս թեմայի վերաբերյալ հստակ, որոշակի հատված չկա, ուստի այն պետք է հասկանալ տարբեր տեքստերի միջոցով: Փորձեք չհիմնվել առանձին, իրար հետ կապ չունեցող տեքստերի վրա:
- Գ. Առակները, որոնք գրվել են իմաստունների կողմից, ունեն տարբեր տեսակետ, քան աստվածաշնչյան այլ ժանրի գրքերը: Առակներն ունեն գործնական և անհատական կենտրոնացում: Այն հավասարակշռված է և պետք է հավասարակշիռ լինի մյուս Գրվածքների կողմից (տես Եր. 18:18):
- Դ. Մեր օրերում մարդիկ պետք է վերլուծեն հարստության հանդեպ ունեցած իրենց մոտեցումներն ու գործածումը Աստվածաշնչի լույսի ներքո: Եթե առաջնորդվենք կապիտալիստական կամ կոմունիստական թեորիաներով, ապա մեր առաջնահերթությունները սխալ կլինեն: Ինչու և ինչպես կարելի է հաջողության հասնել դա ավելի կարևոր հարց է, քան թե որքան է կուտակել:
- Ե. Հարստության կուտակումը պետք է հավասարակշռված լինի ճշմարիտ երկրպագության և պատասխանատու տնտես լինելու հետ (տես 2 Կոր. 8-9):

3:18 «ինձանից...առ» Սա կարող է լինել ակնարկ Ես. 55: 1-3, որտեղ Աստծու փրկության առաջարկը ձրի էր, բայց նկարագրվում էր որպես արժեք:

- **«սպիտակ հանդերձներ»** Տես ծանոթագրություն Հայտ. 3: 4-ում:
- **«որ քո մերկութեան ամօթը չ'երեւի»** Հին Կտակարանում մերկությունը պարտության, դատաստանի և աղքատության նշան էր:

3:19 «յանդիմանում եմ» Այս հունարեն *elegchō* բառը օգտագործվում է «բացահայտել և այդպիսով բուժել կամ ուղղել» իմաստով (տես Հովհ. 3:20; Եփ. 5: 11-14):

- **«եւ խրատում եմ»** Աստծո կողմից խրատվելը նշան է, որ մենք իր ընտանիքի անդամն ենք (տես Հոբ 5:17; Առ. 3:12; Սաղ. 94:12; Եբբ.12: 6):
- **«ջանք արա»** Սա ներկա ներգործական հրամայական է: Այն նույն բառի արմատից է, ինչպես «տաք» կամ «եռացող» (*zestos*) բառերը, որոնք օգտագործվում են Հայտ. 3: 15-16: Ճանաչելը և ծառայելը Աստծուն, պետք է լինի բոցավառ փափագով և ապրելակերպով:
- **«եւ ապաշխարիր»** Սա աօրիստ ներգործական հրամայական է: Այս յոթ նամակների մեջ կրկնվող պնդում կա, որ քրիստոնյաները, ոչ միայն անհավատները, պետք է ապաշխարեն և վերադառնան Քրիստոսին՝ հասունության, կայունության և ուրախության համար (տես Հայտ. 2: 5, 16, 22; 3: 3, 19): Ապաշխարությունը ապրելակերպ է, ոչ միայն նախնական գործողություն:

3:20 «Ահա ես դռան առաջին կանգնած եմ եւ թակում եմ» Սա վաղակատար ներգործական սահմանական է «Ես կանգնած եմ և շարունակում եմ կանգնած մնալ դռան մոտ», որին հաջորդում է ներկա ներգործական սահմանականը «և շարունակում եմ թակել»։ Թեև այս եկեղեցին գովեստի խոսք չի ստացել, այն ջերմ հրավեր է ստացել։ Սա նչ թե քրիստոնյա դառնալու հրավերը է, այլ եկեղեցու անդամների համար հրավեր՝ վերադառնալու Քրիստոսի հետ կենսական հաղորդակցությանը։ Այս համարը հաճախ օգտագործվում է կոնտեքստից դուրս, որը վերաբերում է ավետարանչությանը։

«Դռան» փոխաբերությունը օգտագործվել է Ավետարաններում (տես Մարկ. 13: 28-29; Ղուկ. 12:36), որպես Քրիստոսի շուտափույթ գալստյան մոտեցում։ Տես Հատուկ Թեմա։ Դուռը, Հայտ. 3:7:

▪ **«Եթե մեկը լսե իմ ձայնը եւ դուռը բանայ»** Սա երրորդ կարգի պայմանական նախադասություն է, որը ներառում է պոտենցիալ, բայց ոչ կոնկրետ գործողություն։ Աշխարհի շատ մասերում թակելը ուղեկցվում է բանավոր ողջույնով։ Նկատեք կամային տարրը՝ անձը / եկեղեցին պետք է արձագանքի և բացի դուռը։ Սա Աստծո բոլոր մարդկանց հետ փոխհարաբերությունների ուխտի կողմն է։ Նա ձեռնարկում է նախաձեռնությունը, նա սահմանում է օրակարգը, բայց մարդիկ պետք է արձագանքեն։ Բացի այդ, նկատեք, որ պատասխանը ոչ թե նախնական է, այլ շարունակական։ Փրկությունը ապրանք չէ, այլ ապրելակերպի հարաբերություններ։ Այն ունի իր վերելքներն ու վայրէջքները, բայց էկզիստենցիալ հաղորդակցությունը հաստատ է։

▪ **«կ'մտնեմ նորա մօտ եւ ընթրիք կ'անեմ նորա հետ, եւ նա ինձ հետ»** Սա խաղաղության գոհաբերության միտքն է (տես Ղևտացոց 3 և 7), հաղորդակցման ժամանակ, որտեղ Աստված խորհրդանշականորեն ուսում էր մատուցողի հետ։ Մյուսները դա համարում են ակնարկ վախճանաբանական Մեսիական ճաշկերույթին։

Ճաշի համար օգտագործվող տերմինը օրվա վերջի ճաշի մասին է, որն ընտանեկան հաղորդակցության և ընկերակցության հիմնական ժամանակն էր։ Արևելքում ուտելը միշտ եղել է ուխտի, բարեկամության և հաղորդակցության նշան։

3:21 «կ'տամ նորան, որ ինձ հետ նստի իմ աթոռի վերայ» Սա մտերմիկ ընկերակցության և ներգրավման զորավոր պատկեր է։ Նոր Կտակարանում շատ ակնարկներ կան, որ հավատացյալները թագավորելու են Քրիստոսի հետ (տես Հայտ. 2:26, 27; Ղուկ. 22:30; Մատթ. 19:28; 1 Կոր. 6: 2; 2 Տիմ. 2:12; Հայտ. 20: 4)։ Հայտնություն 22: 5-ը խոսում է քրիստոնյաների հավիտենական թագավորության մասին Քրիստոսի հետ։ Տես Հատուկ Թեմա։ Թագավորել Աստծո թագավորությունում, Հայտ. 5:10:

▪ **«ինչպես ես էլ յաղթեցի եւ նստեցի իմ շօր հետ նորա աթոռի վերայ»** Հրաշալի է իմանալ, որ Հիսուսը արդեն հաղթել է աշխարհին (տես Հովհ.16:33; Եփ. 1:21-22) և որ Նա արդեն նստած է Հոր աջ կողմում (տես Եփ. 1:20; 1 Հովհ. 2: 1 և Հայտ. 22: 1) և որ Նա ցանկանում է, որ մենք միանանք Նրան Նրա հաղթանակի մեջ։

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար։ Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո։ Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ։ Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա։

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ։ Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են։

1. Ինչու՞ վերջին օրերի Հովհաննեսի մարգարեությունը սկսվում Փոքր Ասիայի յոթ (և միայն յոթ) եկեղեցիների նամակներով:
2. Ինչու՞ է յուրաքանչյուր նամակ սկսվում գլուխ 1-ում հանդիպող Քրիստոսի նկարագրությունով:
3. Ինչպե՞ս են այս նամակներ վերաբերում Եկեղեցուն:
4. Ինչպե՞ս կմեկնաբանեք այս եկեղեցիներին ուղղված այս խիստ զգուշացումները:
5. Ինչպե՞ս է «մեկ անգամ փրկված, միշտ փրկված» վարդապետությունը վերաբերում նախազգուշացումներին և կոչ անում համբերության այս նամակներում:
6. Ինչու՞ 3: 20-ը փրկության խոստում չէ:
7. Ինչպե՞ս է հաջորդ գրական բաժինը կապվում յոթ եկեղեցիների նամակներին: Արդյո՞ք Աստված վերջին ժամանակներում պահելու է հավատացյալներին հալածանքից, այլ ոչ թե առաջին դարի հավատացյալներին:

ՀԱՅՏՆՆՈՒԹՅՈՒՆ 4 -5

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Երկնային պաշտամունքը	Երկնքի աթոռը	Աստծո և Գառան փառքի տեսիլքները	Երկրպագությունը երկնքում	Աստված վատահում է աշխարհի ապագան Գառնուկին
4:1-6ա	4:1-11	4:1-6ա	4:1-6ա	4:1-11
4:6բ-11		4:6բ-11	4:6բ-8 4:9-11	
Գիրքը և Գառը	Գառը վերցնում է գիրքը		Գիրքը և Գառը	
5:1-14	5:1-7	5:1-5 5:6-10	5:1-5 5:6-10	5:1-5 5:6-10
	5:8-14	5:11-14	5:11-14	5:11-14

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ *(«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)*

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դաբանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ

Ա. Այս երկու գլուխները կազմում են մեկ գրական բաժին: 4-րդ գլուխը Աստծուն ներկայացնում է որպես Արարիչ (*Elohim* բուն իմաստը, Աստված որպես արարիչ, ողջ կյանքը պահող, տես

Սաղ. 104-ի), իսկ 5-րդ գլուխը ցույց է տալիս Աստծո Գառանը (Հիսուսին) որպես Փրկիչ (ՅԱՀՎԵԻ լրացուցիչ իմաստը, Աստված որպես Փրկիչ, Ազատագրող և ուխտ կապող Աստված, Սաղ. 103): Մեծ գրական կոնտեքստը շարունակում է յոթ կնիքների բացումը: Սակայն կնիքները սկսվում են 6-րդ գլխից և շարունակվում 8:1-ով:

- Բ. 4 գլուխը ձևավորում է Հայտնության գրքի հիմնական թեման (ՅԱՀՎԵԻ անվտանգ փառքը և իշխանությունը): Այս երկնային գահի տեսարանը նման է Եբ. 8 և 9 երկնային խորանին: Այս շարժառիթը (Աստծո երկնային փառքը) ձևավորում է վաղ հրեական միստիցիզմի հիմնական նպատակը:
- Գ. Հայտնության գիրքը հիմնականում այն չէ, թե երբ և ինչպես է Երկրորդ Գալուստը; դա մարդկության պատմության մեջ առաջին հերթին Աստծո ինքնիշխանությունն է: Այս երկու գլուխները կարևոր են գրքի նպատակը հասկանալու համար:
- Դ. Այս երկու գլուխներից ակնհայտ է, որ Հովհաննեսն օգտագործում էր ապոկալիպտիկ լեզու՝ նկարագրելու հոգևոր ճշմարտությունը: Հովհաննեսն օգտագործեց պատկերներ Հին Կտակարանի ապոկալիպտիկ հատվածներից, մասնավորապես, Եզ. 1 և 10 գլուխներ; նաև 2:9,10; Դան. 4; 7:13-14, ինչպես նաև անթիվ հիշատակումներ հրեա միջկտակարանյան ապոկալիպտիկ գրվածքներից, ինչպես, օրինակ, 1 Ենովք: Եթե դա ճիշտ է, ապա չափազանց անտեղի է, որ Հայտնությունը հայտնվի բառացի, ամբողջովին պատմական մեկնաբանական ցանցի մեջ, հատկապես այն ժամանակ, երբ մենք ուժով մտցնում ենք մեր օրերի իրադարձությունները, մեր մշակույթը, մեր աշխարհագրական տեղանքը հին ապոկալիպտիկ գրքի մանրամասների մեջ: Մա ոչ մի իմաստով չի ենթադրում, որ Հայտնությունը ճշմարիտ չէ: Դա չէր նշանակում մեկնաբանել որպես պատմական պատմություն; ավելի լավ հերմենևտիկ մոդել կարող է լինել Հիսուսի առակները (տես Fee և Stuart, *How To Read The Bible For All Its Worth*, էջ 256):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 4:1-11

¹Եւ սորանից յետոյ տեսայ, եւ ահա մի բացուած դուռ երկնքումը, եւ այն առաջին ձայնը, որ լսեցի փողի պէս որ խօսում էր ինձ հետ, ասեց. Վեր ելիր այստեղ, եւ ես ցոյց տամ քեզ ինչ որ լինելու է սորանից յետոյ: ²Եւ ես շուտով Հոգում եղայ. Եւ ահա մի աթոռ կար երկնքումը. Եւ աթոռի վերայ մէկը նստած: ³Եւ նստողը յասպիս եւ սարդիոն քարի երեւոյթի նման էր. ⁴Եւ աթոռի չորս կողմովը ծիածան կար զմրուխտի երեւոյթի նման. Եւ աթոռի չորս կողմովը քսանեւչորս աթոռներ, եւ այն աթոռների վերայ քսանեւչորս երեցներ նստած՝ սպիտակ հանդերձներ հագած, եւ իրանց գլուխներին ոսկի պսակներ: ⁵Եւ աթոռիցը փայլատակներ եւ որոտունք եւ ձայներ էին դուրս գալիս. Եւ եօթը դամբարներ՝ կրակով բորբոքուած աթոռի առաջին, որոնք Աստուծոյ եօթը հոգիներն են: ⁶Եւ աթոռի առաջին ապակեայ ծով կար ակնվանու նման, եւ աթոռի մէջ եւ աթոռի չորս կողմովը չորս կենդանիք՝ առաջից եւ ետեւից լիքն աչքերով: ⁷Եւ առաջին կենդանին առիւծի նման էր, եւ երկրորդ կենդանին՝ գուարակի նման, եւ երրորդ կենդանին մարդի նման երես ուներ, եւ չորրորդ կենդանին թռչող արծուի նման: ⁸Եւ չորս կենդանիների իւրաքանչիւրը վեց թեւ ունէին, իրանց չորս կողմովը եւ ներսեանց լիքն էին աչքերով. Եւ հանգստութիւն չ'ունէին ցերեկ եւ գիշեր ասելով. Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր Աստուած ամենակարող, որ էր, եւ որ է, եւ որ գալու է: ⁹Եւ երբոր այն կենդանիները փառք, եւ պատիւ, եւ գոհութիւն են տալիս աթոռի վերայ նստողին որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից, ¹⁰Քսանեւչորս երեցները ընկնում են աթոռի վերայ նստողի առաջին, եւ երկրպագում նորան, որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից եւ իրանց պսակները գցում են աթոռի առաջին եւ ասում. ¹¹Արժանի ես, Տէր,

որ առնես փառքը, եւ պատիւը, եւ զօրութիւնը. որ դու ստեղծեցիր ամեն բաները եւ քո կամենալովը կան եւ ստեղծուեցան:

4:1

Արևելահայերեն «Եւ սորանից յետոյ տեսայ»

Արևմտահայերեն «Այս բաներէն ետքը տեսայ»

NASB, NKJV «այս բաներից հետո Ես տեսա»

NRSV «դրանից հետո Ես նայեցի»

TEV «այս պահին Ես ունեի մեկ այլ տեսիլք և տեսա»

NJB «ապա իմ տեսիլքում տեսա»

Այս քերականական բանաձևը, աննշան փոփոխությամբ, նույնպես գտնվում է Հայտ. 7:1,9; 15:5; 18:1 և հնարավոր է Հայտ. 19:1: Սա տեսիլքների շարք է: Հատկանշական է, որ մարգարեական տեսիլքները պայմանավորված էին ուխտի պայմանով, ընդգծելով «եթե..ապա» Աստծո ուխտը Իսրայելի հետ: Իսրայելի ներկայիս հավատքը որոշեց իր ապագա վախճանը: Սա նաև Հովհաննեսի տեսիլքի ճշմարտությունն է Հայտնության մեջ:

1. Հիսուսի խոսքերն ուղղված յոթ եկեղեցիներին՝ պայմանական են: Նրանց արձագանքը Նրա նախազգուշացմանը որոշեց իրենց ապագան:
2. Կնիքների և շեփորների դատողությունները նույնպես պայմանական են: Աստված ցանկանում է, որ անհավատներն ապաշխարեն և ընդունեն Իրեն:

Ինչպես Հին Կտակարանում, Աստծո համընդհանուր փրկության ծրագիրը (տես Ծննդ. 3:15; 15:12-2; 17:1-8, ինչպես նաև Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29) պայմանականորեն հիմնված չէ Նրա խոստումների վրա, այնպես էլ պայմանականորեն հիմնված է (տես 12: 1, Հայտնություն 2-3) մարդկային ուխտի պատասխանի վրա: Այս համընդհանուր փրկության ծրագիրը նշվում է 4 և 5 գլուխների երկնային տեսարաններում:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՅԱՀՎԵՆ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

SPECIAL TOPIC: YHWH'S ETERNAL REDEMPTIVE PLAN

Ես պետք է խոստովանեմ ձեզ՝ ընթերցողներին, որ ես կողմնակալ եմ այս պահին: Իմ սխտեմատիկ աստվածաբանությունը կալվինիզմը կամ դիսպենսացիոնալիզմը չէ, այլ Մեծ Պատվիրանի ավետարանչականությունը (տես Մատ. 28:18-20; Դուկ. 24:46-47; Գործք 1:8): Ես հավատում եմ, որ Աստված հավիտենական ծրագիր է ունեցել մարդկության փրկության համար (օրինակ, Ծննդ. 19:3-5; 12:3; Ելից 19:5-6; Եր. 31: 31-34; Եզ. 18; 36: 22-39; Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29; Հո. 3: 9-18,19-20,21-31), բոլոր նրանց, որոնք ստեղծված են Իր պատկերով և նմանությամբ (տես Ծննդ. 1:26-27): Ուխտերը միավորված են Քրիստոսում (տես Գաղ. 3: 28-29; Կող. 3:11): Հիսուսը Աստծո խորհուրդն է, որը թաքնված էր, բայց հիմա բացահայտված (տես Եփ. 2: 11-3: 13): Սուրբ Գրքի հիմնական բանալին Նոր Կտակարանի ավետարանն է, այլ ոչ թե Իսրայելը:

Այս նախնական հասկացողությունը գունավորում է իմ Սուրբ Գրային բոլոր մեկնաբանությունները: Ես բոլոր տեքստերը կարդում եմ դրա միջոցով: Դեա, անշուշտ, մի կողմնակալություն է (բոլոր թարգմանիչներն ունեն դրանք), բայց դա Սուրբ Գրային տեղեկացված ենթադրություն է:

Ծննդոց 1-2-ի ուշադրության կենտրոնում ՅԱՀՎԵՆ ստեղծում է մի վայր, որտեղ Նա և Իր ամենաբարձր ստեղծագործությունը՝ մարդկությունը, կարող են հաղորդակցվել (տես Ծննդ. 1: 26,27; 3: 8): Տիզիկական ստեղծագործությունը այս միջանձնային աստվածային ծրագրի փուլ է:

1. Սուրբ Օգոստինոսը այն բնութագրում է որպես աստվածային միջամտությամբ ձևավորված փոս յուրաքանչյուր մարդու մեջ, որը կարող է լցվել միայն Աստծո կողմից:

2. Ք.Ս. Լյուիսը այս մոլորակը անվանեց «դիպած, ձեռք տված մոլորակ» (այսինքն, պատրաստված է Աստծո կողմից մարդկանց համար):

Հին Կտակարանը ունի բազմաթիվ ակնարկներ այս աստվածային ծրագրի մասին:

1. Ծննդոց 3:15-ը առաջին խոստումն է, որ ՅԱՀՎԵՆ չի թողնի մարդկությանը մեղքի և ապստամբության սարսափելի խառնաշփոթում: Այն չի վերաբերվում Իսրայելին, քանի որ չկա Իսրայել, կամ ուխտի ժողովուրդ, մինչև Աբրահամի կանչը Ծննդոց 12-ում:
2. Ծննդոց 12:1-3 ՅԱՀՎԵՆ Աբրահամի նախնական կանչն է և հայտնությունը, որը կդառնա ուխտի ժողովուրդը, Իսրայելը: Բայց նույնիսկ այս նախնական կանչը Աստված կանխատեսել էր ամբողջ աշխարհի համար: Ծանուցում 12: 3:
3. Ելից 20-ում (2 Օր. 5) ՅԱՀՎԵՆ Իր օրենքը տվեց Մովսեսին, որպեսզի ուղղորդի իր հասուկ ժողովուրդը: Նշենք, որ Ելից 19: 5-6, ՅԱՀՎԵՆ հայտնում է Մովսեսին, որ կունենա եզակի հարաբերություններ Իսրայելի հետ: Եվ նաև այն, որ նրանք ընտրված են, ինչպես Աբրահամը, աշխարհը օրհնելու համար (տես Ելից 19: 5, «ամբողջ երկիրը Իմն է»): Իսրայելը պետք է լինի մեխանիզմ ազգերի համար՝ ճանաչելու ՅԱՀՎԵՆ և Նրան գրավելու համար: Ցավոք, նրանք ձախողեցին (տես Եզ. 36:22-38):
4. 3 Թագ. 8 Սողոմոն տաճարը ընծայում է, որպեսզի բոլորը կարողանան գալ ՅԱՀՎԵՆ մոտ (տես 3 Թագ. 8: 43,60):
5. Սաղմոսներում- 22:27-28; 66:4; 86: 9 (Հայտ. 15:4)
6. Մարգարեների միջոցով ՅԱՀՎԵՆ շարունակում էր բացահայտել իր համընդհանուր փրկության ծրագրերը:
 - ա. Եսայիա 2: 2-4; 12: 4-5; 25:6-9; 42: 6,10-12; 45:22; 49: 5-6; 51: 4-5; 56:6-8; 60: 1-3; 66: 18,23
 - բ. Երեմիա - 3:17; 4: 2; 16:19
 - գ. Միքիա 4:1-3
 - դ. Մադաքիա 1:11

Այս համընդհանուր շեշտադրումը նպաստում է «նոր ուխտի» առաջացմանը (տես Եր. 31: 31-34; Եզ. 36:22-38), որը կենտրոնանում է ՅԱՀՎԵՆ ողորմության վրա, այլ ոչ թե մեղավոր մարդկանց գործերի: Կա «նոր սիրտ», «նոր միտք» և «նոր ոգին»: Հնազանդությունը վճռական է, բայց դա ներքին բան է, ոչ միայն արտաքին (տես Հռ. 3: 21-31):

Նոր Կտակարանը հստակ ամրապնդում է համընդհանուր փրկության ծրագիրը մի քանի ձևով:

1. Մեծ Պատվիրանը- Մատթ. 28: 18-20; Ղուկ. 24:46-47; Գործք 1:8
2. Աստծո հավիտենական ծրագիրը (այսինքն, կանխատեսված) – Ղուկ. 22:22; Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29
3. Աստված ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն- Հովհ. 3:16; 4:42; Գործք 10:34-35; 1 Տիմ. 2: 4-6; Տիտոս 2:11; 2 Պետ. 3: 9; 1 Հովհ. 2: 2; 4:14
4. Քրիստոսը միավորում է Հին և Նոր Կտակարանները- Գաղ. 3: 28-29; Եփ. 2: 11-3: 13; Կող. 3:11: Բոլոր մարդկային խոչընդոտները և տարբերությունները վերացվում են Քրիստոսով: Հիսուսը «Աստծո խորհուրդն է», որը թաքնված է, բայց հիմա հայտնված (Եփ. 2: 11-3: 13):

Նոր կտակարանը կենտրոնանում է ոչ թե Իսրայելի, այլ Հիսուսի վրա: Ավետարանն է կենտրոնական, ոչ թե ազգությունը կամ աշխարհագրական շրջանը: Իսրայելը առաջին հայտնությունն էր, բայց Հիսուսը վերջնական հայտնությունն է (տես Մատթ. 5: 17-48):

Հուսով եմ, ժամանակ կտրամադրեք կարդալու [Հատուկ Թեմա: Ինչու՞ Նոր Կտակարանի ուխտի խոստումները այդքան տարբերվում են Նոր Կտակարանի ուխտի խոստումներից:](http://www.freebiblecommentary.org) Դուք կարող եք գտնել այն առցանց www.freebiblecommentary.org.

▪ **«Էւ ահա մի բացուած դուռ երկինքումը»** Սա վաղակատար կրավորական դերբայ է, որը նշանակում է, որ դուռը բացվել է Աստծո կողմից (կրավորական սեռ) և բաց մնացել (վաղակատար եղանակ): Սա մարդկության ինքնության Աստծո հայտնությունն արտահայտելու այլ միջոց է: Դա շատ նման է Հայտ. 19:11; Եզեկ. 1:1; Մաթ. 3:16; Հովհ. 1:51 և Գործք 7:55-56: Տես Հատուկ Թեմա՝ Հայտ. 3:7:

«Երկինք» բառը օգտագործվում է ավելի քան 50 անգամ Հովհաննեսի գրվածքներում և միշտ եզակի թվով, բացառությամբ մեկ անգամ Հայտ. 12:12: Այս փոփոխության ճշգրիտ իմաստը, եզակի թվից անցումը հոգնակիի՝ աստվածաբանորեն անորոշ է: Ռաբբիները քննարկեցին, թե արդյոք գոյություն ունի երեք կամ յոթ երկինք (տես 2 Կոր. 12:2): Հովհաննեսը կենտրոնանում է մի երկինքի վրա, որտեղ Աստված է բնակվում: Նա ընտրում է, որ մենք տեսնենք Նրա տիրույթի մեջ: Թեև երկրում քառս կա, սակայն երկինքում չի լինելու:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐԿԻՆՔՆԵՐԸ

SPECIAL TOPIC: THE HEAVENS AND THE THIRD HEAVEN

Հին Կտակարանում «երկինք» տերմինը սովորաբար ՀՈԳՆԱԿԻ է (այսինքն, *shamayim*, BDB 1029): Եբրայերեն տերմինը նշանակում է «բարձրություն»: Աստված բնակվում է բարձունքում: Այս գաղափարը արտացոլում է Աստծո սրբությունը և տրանսցենդենցիան:

Ծննդոց 1: 1-ում ՀՈԳՆԱԿԻ «երկինքներ ու երկիր» դիտվում է որպես Աստծո ստեղծած (1) այս մոլորակի վերևում գտնվող մթնոլորտը կամ (2) բոլոր իրականությունը (այսինքն, հոգևոր և ֆիզիկական): Այս հիմնական հասկացությունից են այլ տեքստերը վերցրել, ասելով, որ երկինքի մակարդակներ կան «երկինքների երկինքը» (հմմտ.Սաղ. 68:33) կամ «երկինքը և երկինքների երկինքը» (տես 2 Օր. 10:14; 3 Թագ. 8:27; Նեեմ. 9: 6; Սաղ. 148: 4): Ռաբբիները մտածում էին, որ կարող է լինել

1. երկու երկինք (այսինքն, R. Judah, Hagigah 12)
2. երեք երկինք (Test. Levi 2-3, Ascen. of Ես. 6-7, Midrash Tehillim Սաղ. 114: 1)
3. հինգ երկինք (III Baruch)
4. յոթ երկինք (R. Simonb. Lakish; II Enoch 8; Ascen. of Ես. 9:7)
5. տասը երկինք (II Enoch 20:3, 22:1)

Այս բոլորը նախատեսված էր ցույց տալու Աստծո առանձնացումը ֆիզիկական արարչագործությունից և / կամ Նրա տրանսցենդենտ լինելը: Ռաբբիական հուդայականության մեջ ամենատարածված երկնային թիվը յոթն էր: A. Cohen, *Everyman's Talmud* (էջ 30) ասում է, որ դա կապված էր աստղագիտության ոլորտների հետ, բայց ես կարծում եմ, որ դա վերաբերում է յոթը կատարյալ թիվ լինելուն (այսինքն ստեղծագործության յոթ օրերը ներկայացնում են Աստծո հանգիստը Ծննդ. 2:2):

Պողոսը, 2 Կոր. 12: 2-ում հիշատակում է «երրորդ» երկինքը (հունարեն *ouranos*), որպես Աստծո անձնական, փառահեղ ներկայության ճանաչման միջոց: Պողոսը անձնական հանդիպում ունեցավ Աստծո հետ:

▪ **«Էւ այն առաջին ձայնը, որ լսեցի փողի պես»** Փողի պես ձայնը հիշատակված է Հայտ. 1:10 (տես ծանոթագրություն): Սկզբում դա նշանակում է, որ Հիսուսը խոսում է, բայց քանի որ 4 և 5 գլուխները գրական բաժին են, և Հիսուսը չի ներկայացվում մինչև 5:5,9-10,12,13, սա, հավանաբար, վերաբերում է հայտնող հրեշտակին (ապոկալիպտիկ գրականության բնութագիր): Հրեշտակի ձայնը և փողի հնչելը վերաբերում են Երկրորդ Գալուստի Պողոսի նկարագրությանը (տես 1 Թես. 4:16):

▪ **«Վեր ելիր այստեղ»** Դիսպենսացիոնալիստները ենթադրել են, որ դա եկեղեցու աննկատ հափշտակությունն է, Հայտնության գրքի իրենց ենթադրյալ հասկացության պատճառով (բոլոր Հին

Կտակարանյան մարգարեությունները բառացիորեն պետք է կատարվեն; եկեղեցին և Իսրայելը լիովին առանձին են, եկեղեցին աննկատ հափշտակվելու է դեպի երկինք, որպեսզի Հին Կտակարանյան մարգարեությունները կարողանան կատարվել երկրային Իսրայելի համար): Հաճախ այս մեկնաբանությունն աջակցվում է լռությունից բանավեճի միջոցով, քանի որ «եկեղեցի» բառը չի երևում Հայտ. մեջ 3 գլխից հետո (բացառությամբ Հայտ. 22:10): Այնուամենայնիվ, տեքստում ոչինչ չկա ենթադրելու, որ Հովհաննեսից բացի ոչ ոք չի կանչվել երկինք:

Հայտ. 4:5 «փայլատակներ» և «որոտմունք»-ի պատճառով սա կարող է ակնարկ լինել Մովսեսին որպես կանչված (տես Ելից 19:20,24) Մինա լեռան վրա ստանալու Աստծո հայտնությունը (տես Ելից 19-20, հատկապես, 19:16,19):

Ուշադրություն դարձրեք Աստծո ձայնին, որը նման էր փողի ձայնին Ելից 19:19 (տես Հատուկ Թեմա: Իսրայելի Եղջյուրները, Հայտ. 1:10):

▪ **«ինչ որ լինելու է սորանից յետոյ»** Այս արտահայտությունը կարող է ակնարկ լինել Դան. 2:29,45: Եթե այդպես է, ապա դա վերաբերում է մի շարք պատմական իրադարձությունների, այլ ոչ թե հետագա իրադարձություններին: Հայտնությունը ինչ-որ բաներ չէր առաջին դարում և շատ հեռավոր ապագայում, այլ այն իրադարձությունները, որոնք.

1. կրկնվում են ամեն դարաշրջանում (տես Մաթ. 24:4-14)

2. արտացոլում են Քրիստոսի առաջին և երկրորդ գալստյան միջև եղած ժամանակահատվածը (գրքի յոթ գրական բաժինները)

Այս արտահայտությունը նման է Հայտ. 1:1-ին: Աստծո խոսքն ու կամքը (*dei*) պետք է անցնեն: Այստեղ ժամանակի տարրը (այսինքն, կարճ ժամանակով) դուրս է մնացել, բայց վստահությունը մնում է: Աստված կիրագործի Իր փրկության ծրագիրը:

4:2 «Եւ ես շուտով Հոգում եղայ» Հովհաննեսը նկարագրվում է որպես Հոգում եղող Հո. 1:10; 17:3 և 21:10: Սա կարող է նման լինել Եզեկիելի հետ պատահածին Եզեկ. 8:1-4; 11:1, Հիսուսի՝ Մաթ. 4:8; Փիլիպոսի՝ Գործք 8:39-40 և Պողոսի հետ պատահածին 2 Կոր. 12:1-2: Անկախ նրանից, թե դա հոգևոր տրանս կամ ֆիզիկական կերպարանափոխում է, այն անորոշ է:

▪ **«Եւ ահա մի աթոռ կար երկնքումը. Եւ աթոռի վերայ մեկը նստած»** «Աթոռ» (*thronos*) տերմինը օգտագործվում է այս գրքում ավելի քան 47 անգամ: Աստծո թագավորումը այս երկնային տեսիլքի կենտրոնական դիզայնն է (4 և 5 գլուխներ): Աթոռը խորհրդանշական, ապոկալիպտիկ ցույց տալու ձև է, որ ՅԱՀՎԵՆ վերահսկում է բոլոր պատմությունները: Աստված հոգևոր, հավիտենական, անձնական հոգի է, Նա աթոռին չի նստում (տես Հատուկ Թեմա Հայտ. 2:1):

Մարգարեության և ապոկալիպտիկ ժանրերի մի նպատակը Աստծո գիտելիքն ու ապագա իրադարձությունների վերահսկումն է: Ամբողջ պատմությունը հայտնի է և նպատակային (*telos*, Մաթ. 24:14; 1 Կոր. 15 24-28):

Աթոռը նկարագրված է որպես «կար»: Այս անկատար ժամանակը կարող է ունենալ երկու իմաստ՝ (1) այն միջոց եղել է կամ (2) պարզապես ստեղծվել է: Դա կարող է ակնարկ լինել Դան. 7:9, «աթոռներ դրվեցին»:

4:3 «Եւ նստողը ... նման էր» Հովհաննեսը չի պատրաստվում նկարագրել Աստծո տեսքը, քանի որ հրեական մտածողության մեջ դա չափազանց տեղին չէր (տես Ելից 33:17-23; Ես. 6:5): Բայց նա Աստծո փառքը կնկարագրի երեք թանկարժեք ադամանդների գույներով: Ադամանդները նաև օգտագործվում են Եզեկ. 28:13 նկարագրելու երկնային (Աստծո պարտեզ) պատկերը:

Արևելահայերեն «յասայիս»

Արևմտահայերեն «յասայիս»

NASB, NKJV,
NRSV, TEV «յասպիս»
NJB «ադամանդ»

Հին գրականության մեջ ադամանդների ճշգրիտ գույնն ու անունը շատ անորոշ է: Ակնեղենների և գույների անունները փոփոխվել են երկրե երկիր և դարեդար: Յասպիսն առաջին քարն էր, որը գտնվել է քահանայապետի կրծքանշանի վրա, որը նշված է Ելից 28:17-21: Այս քարը, կարծես, մաքուր քար է: Դա կարող է կապված լինել «ապակիների ծովի» հետ (տես Հայտ. 4:6; 15:2, 21:11,18,21): Դա կարող է վերաբերել մեր ադամանդին:

Արևելահայերեն «սարդիոն»
Արևմտահայերեն «սարդիոն»

NASB, NKJV «սարդիոն»
NRSV, TEV «կարնեյան»
NJB «ռուբին»

Սարդիոնը ալ կարմիր քար էր: Դա Քահանայապետի կրծքանշանի վերջին քարն էր: Դա կարող է ակնարկ լինել Աստծուն, լինելով Առաջինը և Վերջինը, շեշտը դնելով Հուդայի Մեսիական ցեղի վրա (զմբուխտ ծիածանը): Այս երկու քարերն թվակված են հին գրվածքներում որպես ամբողջ ոսկեգործության ամփոփագիր:

▪ **«Եւ աթոռի չորս կողմովը ծիածան կար զմրուխտի երեւոյթի նման»** Զմրուխտը Հուդայի քարն էր Քահանայապետի կրծքանշանի վրա: Ծիածանի շեշտադրումը խիստ առաջարկված էր, բայց կան երկու հիմնական տեսություններ

1. Ոմանք դա տեսնում են որպես ակնարկ Ծննդ 9:16, որտեղ ծիածանը Աստծո ուխտի պահպանության խորհրդանիշն է և նշանը; որ ջրհեղեղն ավարտված է; դատաստանի մեջ խոստում ու ողորմություն եղավ:
2. Ոմանք դա վերաբերում են Եզեկ. 1:28, ՅԱՀՎԵԻ փառքի խորհրդանիշը:

Անկախ նրանից, որ ծիածանը դատաստանի կամ ուխտի նշանն է, անորոշ է, բայց ակնհայտորեն անսովոր ծիածան էր, քանի որ այն կանաչ գույնի էր և ոչ թե պարզապես նորմալ լույսի ճառագայթում:

4:4 « Եւ աթոռի չորս կողմովը քսանեւչորս աթոռներ» Քսանչորս աթոռների պատճառը վիճարկվել է:

1. ոմանք այն տեսնում են որպես կապված Ահարոնյան քահանայության պատվերների հետ, տեղծված Դավիթի կողմից 1 Մնաց. 24:7-19
2. ուրիշներն այն տեսնում են որպես ակնարկ երկնային խորհրդին, որը նշվում է 3 Թագ. 22:19; Ես. 24:23; Դան. 7:9-10,26
3. մինչ օրս ուրիշներն էլ դա համարում են որպես Իսրայելի տասներկու ցեղերի և տասներկու առաքյալների համադրություն, որը խորհրդանշում է Աստծո ամբողջական ժողովուրդը (տես Հայտ. 21:12,14)

Զարմանալի է, որ այս թիվը չի համապատասխանում հրեա միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականությանը:

▪ **«քսանեւչորս երեցներ նստած»** Կան նաև շատ բանավեճեր այս երեցների ինքնության մասին: Կան երկու խոշոր տեսություններ՝

1. Նրանք ներկայացնում են հավատացյալներին.

- ա. պատկերված սպիտակ հանդերձներով (տես 1 Կոր. 9:25; 1 Թեո. 2:19; 2 Տիմ 4:8; Հակ. 1:12; 1 Պետ. 5:4)
 - բ. հրեշտակները երբեք չեն ասել, որ դնում են պսակներ և նստում են աթոռների վրա (տես Հայտ. 4:4, 10)
 - գ. դրանք ցուցակներում են, որոնք հատկապես ընդգրկում են հրեշտակներին (տես Հայտ. 5:11)
 - դ. Հայտ. 5:9-10, Vulgate, Peshitta, և հետագայում Textus Receptus-ը ներառում է երեցներին փրկագնման երգերի մեջ
2. Նրանք ներկայացնում են հրեշտակները.
- ա. հրեշտակները սպիտակ հանդերձներ են հագնում (տես Մաթ. 28:3; Հովհ. 20:12; Մարկ. 16:5; Գործք 1:10; Հայտ. 15:6 և Դան. 10:5,6)
 - բ. այդ երեցները միշտ հայտնվում են կենդանի արարածների հետ, ինչպես Հայտ. 5:11,14, որոնք կարծես թվարկված են հրեշտակի երեք տարբեր հրահանգներով
 - գ. Երեցներից մեկը հանդես է գալիս որպես հայտնող հրեշտակ (տես Հայտ. 5:5)
 - դ. Ես. 24:23 Աստծո երկնային խորհրդի հրեշտակները կոչվում են «երեցներ»
 - ե. Հայտ. 5:10-ի տեքստային վկայությունը ենթադրում է, որ երեցը չի ներառում իրեն փրկված մարդկության երգի մեջ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐԵՑ

SPECIAL TOPIC: ELDER

- I. Հին Կտակարանյան կիրառությունը
- Ա. օգտագործվում է Աստծու հրեշտակների համար, որոնք կազմում են հրեշտակային խորհուրդը (BDB 278, KB 278, տես. Ես. 24:23): Այս նույն տերմինաբանությունն օգտագործվում է Հայտնության հրեշտակային արարածների համար (տես Հայտ. 4: 4,10; 5: 5,6,8,11,14; 7: 11,13; 11:16; 14: 3; 19: 4):
 - Բ. օգտագործվում է ցեղային առաջնորդների համար (*zaqen*) Հին Կտակարանում (տես Ելից 3:16; Թվոց 11:16): Ավելի ուշ Նոր Կտակարանում այս տերմինը կիրառվում է մի խումբ առաջնորդների համար Երուսաղեմից, ովքեր կազմում էին հրեաների գերագույն ասյանը՝ Սենեդրիոնը (տես Մատթ. 21:23; 26:57): Հիսուսի օրերում այս յոթանասուներկու անդամներից բաղկացած մարմինը կառավարվում էր կոռումպացված քահանայության կողմից (այսինքն, ոչ թե Ահարոնի ցեղից, այլ հռոմեական իշխանների կողմից նշանակված):
- II. Նոր Կտակարանյան կիրառությունը
- Ա. օգտագործվում է Նոր Կտակարանի եկեղեցու տեղական առաջնորդների համար: Դա երեք հոմանիշ տերմիններից մեկն էր (հովիվ, վերակացու և երեց, տես Տիտոս 1: 5,7; Գործք 20: 17,28): Պետրոսն ու Հովհաննեսը օգտագործում են այն՝ ներառելով իրենց ղեկավարության խմբի մեջ (տես 1 Պետ. 5: 1; 2 Հովհ. 1; 3 Հովհ. 1):
 - Բ. 1 Պետ. 1: 1 և 5-ում կա բառախաղ երեց (*presbuteros*) տերմինի մասին: Տերմինն ակնհայտորեն օգտագործվում է որպես առաջնորդության կոչում (տես հ.1) և տարիքի նշանակում (տես հ. 5): Միանգամայն զարմանալի է, որ այս տիպիկ հրեական տերմինի, օգտագործված հրեական ցեղերի առաջնորդության նշանակության համար, որ դա հիմնականում հունարեն տերմին էր «եպիսկոպոս» կամ «վերակացու» (*episcopos*), որը կիրառվում էր ղեկավարվող պաշտոնի համար հունական քաղաք-պետություններում: 1 Պետրոսը օգտագործում է հրեական տերմիններ՝ հեթանոս հավատացյալներին դիմելու համար:

Պետրոսը իրեն անվանում է «երեցընկեր», *presbuteros* տերմինը և *syn* ՆԱԽԴԻՐԸ, ինչը ենթադրում է «համատեղ մասնակցություն»: Պետրոսը չի հաստատում իր Առաքելական

իշխանությունը (տես 2 Հովհ. 1, որտեղ մեկ այլ Առաքյալ իրեն անվանում է «երեց»), բայց զգուշացնում է (այսինքն, «հորդորում եմ», ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ), տեղական առաջնորդներին՝ գործել և ապրել

1. Քրիստոսի օրինակի լույսի ներքո
2. Նրա մոտավուտ վերադարձի լույսի ներքո

Վաղ եկեղեցիները չեն վճարել ղեկավարության դիրքերը, սակայն ճանաչում էին Աստծո կողմից տրված ծառայության ու առաջնորդության պարզները յուրաքանչյուր տեղական եկեղեցում: Պարզների այս հաստատումը պետք է հավասարակշռված լինի մշակութային «տարիքային իմաստության» ակնածանքով, հատկապես հրեա հավատացյալների շրջանում: Հետևաբար, Պետրոսը անդրադառնում է երկու տիպի առաջնորդությանը:

Նաև նկատեք, որ «երեցները» ՀՈԳՆԱԿԻ են: Սա կարող է վերաբերվել (1) մի շարք տնային եկեղեցիների առաջնորդներին (տես Գործք 20:17) կամ (2) տարբեր հոգևոր պարզներ առաջնորդների մեջ (տես Եփ. 4:11), որը հստակ ասում է, որ ծառայությունը բոլոր հավատացյալների համար է: Սա զուգահեռ է «քահանաների թագավորություն» հասկացությանը (տես 1 Պետ. 2: 5, 9):

- Գ. օգտագործվում է եկեղեցում մեծահասակ տղամարդկանց համար, պարտադիր չէ, որ ղեկավարության մեջ (տես I Տիմ. 5: 1; Տիտոս 2: 2):

▪ **«ոսկի պսակներ»** Սուրբ Գրքում ոչ մի տեղ չի ասվում, որ հրեշտակները պսակներ են կրում (նույնիսկ հզոր հրեշտակը Դանիել 10-ում): Անդունդից սկսած դիվային հորդաները նկարագրվում են որպես նմանություն ոսկե պսակներին, Հայտ. 9:7:

4:5 «Եւ աթոռիցը փայլատակներ եւ որոտմունք եւ ձայներ էին դուրս գալիս» Սա նման է Ելից 19:16-19, որը նկարագրում է ֆիզիկական երևույթները, որոնք շրջապատում են Աստծո ներկայությունը Սինա լեռան վրա: Այս արտահայտությունները նշում են Աստծո ներկայությունը (տես Հայտ. 11:19) կամ Նրա դատաստանը (տես Հայտ. 8:5; 16:18):

▪ **«եօթը դամբարներ՝ կրակով բորբոքուած»** Սա վերաբերում է յոթ առանձին լամպերի (ջահեր), ոչ թե մեկ սկավառակների, որն ունի յոթ ձողեր (տես Ելից 25:37, Չաք. 4:2): Նրանք գործում են այնպես, ինչպես մյուս բոլոր «յոթը», որոնք վերաբերում են Աստծո ներկայությանը:

▪ **«որոնք Աստուծոյ եօթը հոգիներն են»** Այս նույն արտահայտությունն օգտագործվում է Հայտ. 1:4; 3:1 և 5:6: Այն հաճախ մեկնաբանվում է որպես հղում Սուրբ Հոգուն հիմնված 1:4-ի վրա, սակայն մյուսներից ոչ մեկը չի հաստատում այդ մեկնաբանությունը: Այս արտահայտությունը, հավանաբար, հավասարեցվում է եկեղեցիների (յոթ աստղեր, Հայտ. 3:1, յոթ դամբարներ, Հայտ. 4:5) կամ Գառան ամենագետի և ամենատեսի հետ (Հայտ. 5:6): Տես Հատուկ Թեմա: Յոթ Հոգիները, Հայտ. 1:4:

4:6 «ապակեայ ծով կար ակնվանու նման» Այս արտահայտության վերաբերյալ բազմաթիվ տեսություններ կան՝

1. այն վերաբերում է տաճարում գտնվող լվացարանին (3 Թագ. 7:23; 2 Մնաց. 4:2-6)
2. այն վերաբերում է Ելից 24:9-10 նշված ապակե ծովի գաղափարին:
3. Դա Աստծո շարժական աթոռի կառույցի մի մասն է Եզեկ. 1:22,26; 10:1
4. դա Աստծո սրբության բաժանման խորհրդանիշն է (տես Հայտ. 15:2):

Այս ծովը հեռացվել է Հայտ. 21:1, ցույց տալով մարդկության մեղքի անեծքը (տես Ծննդոց 3) և բաժանումը հեռացվել է: Տես Ծանոթագրություն 21:1-ում:

▪ **«չորս կենդանիք»** Այս կենդանի արարածները նկարագրված են Հայտ. 4:6-8: Նրանք Եզեկ. 1:5-10 և 10:1-17 *cherubim* և Ես. 6:2,3 *seraphim* համադրություն են: Թների և դեմքերի թվերը տարբեր են,

բայց դա մարդկային / կենդանական / հրեշտակների բաղկացուցիչ պատկերն է, որոնք շրջապատում են Աստծո աթոռը (տես Հայտ. 4:6,8,9; 5:6,8,11,14; 6:1,3,5,7; 7:11; 14:3; 15:7; 19:4):

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՔԵՐՈՎԲԵ

SPECIAL TOPIC: CHERUBIM (BDB 500, KB 497)

- Ա. Հրեշտակային էակների մի քանի տեսակներից մեկը հիշատակված Հին Կտակարանում (այսինքն, քերովբե, սերովբե, հրեշտակապետեր, պատգամաբեր հրեշտակներ): Այս հատուկ տեսակը պահպանում էր սուրբ վայրերը (տես Ծննդ. 3:24; Ելից 25:18-22; 3 Թագ. 8:6-7):
- Բ. Ստուգաբանությունը հայտնի չէ.
 - 1. Աստծո և մարդու միջև աքքադերենի «բարեխոս» կամ «միջնորդ» բառից:
 - 2. Եբրայերենից սա հավանաբար բառախաղ է «կառք /chariot/» և «հրեշտակ, քերովբե /cherub/» բառերի (տես Եզ. 1; 10)
 - 3. Ոմանք ասում են դա նշանակում է «հրաշափառ, պայծառ արտաքին՝ տեսք»
- Գ. Ֆիզիկական տեսքը. Աստվածաշնչում իրարից տարբերվող նկարագրությունների և հնագույն Մերձավոր Արևելքում գտնված տարբեր կենդանակերպ-մարդկանց պատկերների պատճառով սա դժվար է հաստատելը: Ոմանք կապում են նրանց.
 - 1. Միջագետքի թևավոր ցուլի հետ
 - 2. Եգիպտոսի թևավոր արծվառնյունների հետ, որոնք կոչվում են «գրիֆներ»
 - 3. Տյուրոսի թագավորի գահատեղի Քերամում՝ թևավոր արարածների հետ
 - 4. Եգիպտոսի Սֆինքսի և նմանատիպ պատկերների հետ, որոնք գտնվել են Աքքադ թագավորի Սամարիայի փղոսկրե պալատում
- Դ. Ֆիզիկական նկարագրությունը
 - 1. Քերովբեն Մերովբեին իրենց տեսքով կապված լինելու հատվածը՝ Եսայի 6 գլուխ:
 - 2. Նրանց տարբեր կերպարանքների օրինակներ
 - ա. Դեմքերի քանակը
 - (1) Երկու - Եզեկ. 41:18
 - (2) Չորս - Եզեկ. 1:6,10; 10:14,16,21,22
 - (3) Մեկ - Հայտ. 4:7
 - բ. Թևերի քանակը
 - (1) Երկու - 3 Թագ. 6:24
 - (2) Չորս - Եզեկ. 1:6,11; 2:23; 10:7,8-21
 - (3) Վեց (Եսայի 6:2-ի Մերովբեի պես) - Հայտ. 4:8
 - 3. Այլ կերպարանքներ
 - ա. Մարդու ձեռքեր – Եզ. 1:8; 10:8,21
 - բ. Ոտքեր
 - 1) Ուղիղ, առանց ծնկի - Եզեկ. 1:7
 - 2) Հորթի ոտքեր - Եզեկ. 1:7
 - 4. Ֆլավիոս Ջոզեֆուսը ընդունում է, որ ոչ ոք չգիտի թե ինչպիսին են քերովբեները (տես՝ Հրեաների Հնությունները, VIII:3:3):
- Ե. Աստվածաշնչյան վայրերը և նպատակները.
 - 1. Կենաց ծառի պահապանները, Ծննդ. 3:24 (հավանաբար փոխաբերորեն կիրառված Սատանայի համար Եզեկ. 28:14,16)
 - 2. Խորանի պահապանը
 - ա. Ուխտի Տապանակի վրա՝ Ելից 25:18-20; Թվոց 7:89; 1 Թագ. 4:4
 - բ. Վարագույրի և ծածկոցի վրա պատկերված՝ Ելից 26:1,31; 36:8,35
 - 3. Սողոմոնի Տաճարի պահապանը
 - ա. Սրբության Սրբոցում երկու մեծ փորագրված Քերովբեները՝ 3 Թագ. 6:23-28; 8:6-

7; 2 Մնաց. 3:10-14; 5:7-9

- բ. Ներքին սրբարանի պատերի վրա՝ 3 Թագ. 6:29,35; 2 Մնաց. 3:7
- գ. Մաքրման թաշտերին միացված պանելների վրա՝ 3 Թագ. 7:27-39
- 4. Եզեկիելի Տաճարի Պահապանը
 - ա. Պատերի և դռների վրա փորագրված՝ Եզեկ. 41:18-20,25
- 5. Աստվածության փոխադրամիջոցի հետ կապված.
 - ա. հավանաբար քամու համար փոխաբերություն՝ 2 Թագ. 22:11; Սաղմ. 18:10; 104:3-4; Ես. 19:1
 - բ. Աստծո գահի պահապանը՝ Սաղմ. 80:1; 99:1; Ես. 37:16 91
 - գ. Աստծո շարժական գահի կառքի պահապանը՝ Եզեկ. 1:4-28; 10:3-22; 1 Մնաց. 28:18
- 6. Հերովդեսի Տաճարը - նկարված պատերի վրա (այսինքն՝ պահապան, տես՝ Թալմուդ “Yoma” 54ա)
- 7. Հայտնության գահի տեսարանը (այսինքն՝ պահապան, տես Հայտ. 4-5):

▪ **«առաջից եւ ետեւից լիքն աչքերով»** Սա կարող է վերաբերել չորս դեմքի աչքերից յուրաքանչյուրին կամ դա կարող է լինել Աստծո ամենատեսության աստվածաշնչյան փոխաբերություն (տես Հայտ. 4:8; Եզեկ. 1:18; 10:12):

4:7 «առիծի...գուարակի...մարդի...արծուի» Սա ակնհայտ ակնարկ է Եզեկ. 1:6,10: Ռաբբիական գրականության մեջ դրանք թվարկված են որպես Աստծո ստեղծագործության տարբեր կարգերից ամենաուժեղներ: Իրենեոսը (120-202) օգտագործել է այս չորս տարբեր երեսները՝ նկարագրելու Ավետարանի չորս գրողներին (եկեղեցական ավանդույթը, վերջապես, հաստատել է Հովհաննեսին՝ արծիվ, Ղուկասին՝ մարդ, Մարկոսին՝ ցուլ, Մաթեոսին՝ առյուծ), բայց դա շատ ենթադրություն և այլաբանական է: Այս բաղադրյալ արարածները խորհրդանշական են, ոչ թե բառացի: Իմանալով, որ Հին Կտակարանը շեշտը դնում է Աստծո ստեղծագործության կարգերին, բաղադրյալ մարդկային և կենդանի արարածները Ղևտացիների պես անմաքուր կլինեին: Սա ոչ թե պատմական պատմություն է իրական դեպքերի և իրադարձությունների մասին, այլ խիստ խորհրդանշական ժանր, որը ձգտում է նկարագրել վերջնական, հոգևոր ճշմարտությունները. այս դեպքում Աստված որպես կենդանի (8,9հ.), Սուրբ (8հ.), և ամեն բանի ստեղծող (11հ.):

4:8 «Սուրբ, Սուրբ, Սուրբ» Այս կենդանի արարածները կրկնում են Հիսուսի *seraphim* երգը Ես. 6:2,3: Սա Հայտնության գրքում գտնված բազմաթիվ օրհներգերից առաջինն է (տես 4:8,11; 5:9-10,12,13; 7:12; 11:17-18; 12:10-12; 15:3-4; 16:5-7; 18:2-8; 19:1-3, 6-7): Հաճախ օրհներգերը տեսիլքները թարգմանելու միջոց են: Մեկ այլ խորհրդանիշ, ինչպես ապակե ծովը, այն գործում է որպես Աստծո վերջնական սրբության երբայերեն գերազանցություն:

▪ **«Տէր Աստուած ամենակարող»** Սրանք Հին Կտակարանյան երեք կոչումներ էին Աստծո համար (տես Հայտ. 1:8).

1. ՏԵՐ = ՅԱՀՎԵ (տես Ելից 3:14; Սաղ. 103)
2. ԱՍՏՎԱԾ = *Elohim* (տես Սաղ.104)
3. Ամենակարող = *El Shaddai*, Աստծո նահապետական անունը (տես Ելից 6:3)

Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՕՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Հայտ. 1:8:

▪ **«որ էր, եւ որ է, եւ որ գալու է»** Այս արտահայտությունը կրկնվող կոչում է (տես Հայտ. 1:4; 4:8; տես ամբողջական գրառում Հայտ. 1:4): Սա բառախաղ է Աստծո ուխտի անունով, ՅԱՀՎԵՆ, որը

գալիս է «լինել» բայից: Այս նույն թեման կրկնվում է Հայտ. 4:9 և 1 «Նրան, ով հավիտյանս հավիտենից կենդանի է» արտահայտության մեջ (տես Հայտ. 10:6; 15:7):

4:9-11 Սա հունարենով մեկ նախադասություն է, որը ցույց է տալիս, որ վերջնական պաշտամունքը պատկանում է Նրան, ով նստում է աթոռին և ապրում է հավիտյան (տես Սաղ. 47; Դան 4:34; 12:7): Սա կարող է ակնարկ լինել հրեշտակային սպասավորներին, որոնք կոչվում են երկնային խորհուրդ (տես 3 Թագ. 22:19; Հոբ 1:6; Դան 7:10) կամ հրեական «ներկայության հրեշտակները» (այսինքն, Տոբիտ 12:15):

4:9 «կենդանիները» Այս հրեշտակային արարածները հաճախ հիշատակվում են այս գրքում (տես Հայտ. 5:6,8,14; 6:1; 7:11; 14:3; 15:7; 19:4):

4:10 «իրանց պսակները գցում են աթոռի առաջին» Սա նրանց ճանաչման խորհրդանիշն է, որ Աստված արժանի է ամեն պատվի ու գոհության: Իրենց պսակներ ունենալու պատճառը ինչ էլ որ լիներ, նրանք հասկացան, որ իշխանությունն Աստծուց էր:

4:11 «դու ստեղծեցիր ամեն բաները» Երեցներն ու կենդանի արարածները զովաբանում են Աստծուն որպես Ամենակարող, Հավատարիմ և ամեն բանի միջնորդ: Սա *Elohim* անվան աստվածաբանական շեշտադրումն է (տես Ծննդ. 1; Հոբ 38-41; Սաղ. 104): Այս գլուխն օգտագործում է Աստծո երկու ամենաշատ օգտագործվող անունների աստվածային իմաստը՝ նկարագրելու Իր գործողությունները: Նոր Կտակարանի առաջադեմ հայտնությունը հստակեցնում է, որ Հիսուսը Հոր ստեղծագործության կատարողն էր (տես Հովհ. 1:3; 1 Կոր. 8:6; Կող. 1:16 և Եբ. 1:2):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 5:1-5

¹Եւ աթոռի վերայ նստողի աջ ձեռքումը մի գիրք տեսայ, որ ներսեւանց եւ դրսեւանց գրուած էր, եօթը կնիքով կնքուած: ²Եւ մի զօրաւոր հրեշտակ տեսայ որ մեծ ձայնով քարոզում էր. Ո՞վ է արժանի բանալ այս գիրքը եւ սորա կնիքները լուծել: ³Եւ ոչ ով՝ ոչ երկնքումը եւ ոչ երկրի վերայ եւ ոչ երկրի ներքեւումն, չէր կարողանում այն գիրքը բանալ, եւ ոչ էլ նայել նորա մէջ: ⁴Եւ ես շատ լաց էի լինում, որ ոչ ով չ'գտնուեցաւ արժանի այն գիրքը բանալու [եւ կարդալու] եւ ոչ նորա մէջ նայելու: ⁵Եւ երեցներից մէկն ասեց ինձ. Լաց մի լինիր, ահա յաղթեց առիծը որ Յուդայի ցեղիցն է՝ Դաւիթի Արամաւր, որ գիրքը բանայ եւ նորա եօթը կնիքները լուծէ:

5:1 «Եւ աթոռի վերայ նստողի աջ ձեռքումը» Այս արտահայտության ավելի լավ թարգմանությունը կլիներ «Իր աջ ձեռքի վրա» (Peshitta թարգմանել է անգլերեն, Lamsa և Amplified Bible-ի կողմից): Դա Աստծո գաղափարը չէ՝ սերտորեն կապվել գրքի հետ, բայց Աստված պահում է այն մեկի համար, ով վերցնում և բացում է այն:

«Աջ ձեռք» արտահայտությունը աստվածաշնչային անթրոպոմորֆիզմ է, որը նկարագրում է Աստծո գործունեությունն ու իշխանությունը (տես Հատուկ Թեմա՝ Հայտ. 2:1): Աստված չունի ֆիզիկական մարմին; Նա հոգևոր արարած է (տես Հովհ. 4:24), չստեղծված և հավիտենական:

▪ **«գիրք»** Հունարեն տերմինը «*biblion*» է, որը հետագայում օգտագործվել է ձեռագիր (գիրք) իմաստով: Շատ մեկնաբաններ համաձայն են, որ գրքեր չեն եղել մինչև երկրորդ դար, ուստի այն, ինչ ունենք այստեղ, պապիրոս կամ գլանաձև գիրք է (NKJV, NRSV, TEV և NJB): Այս գրքի իմաստի վերաբերյալ կան մի քանի տեսություններ:

1. Եզեկ. 2:8-10; և Հայտ. 10:8-11 գտնվող վայերի գիրքը:
2. այն գիրքը, որը մարդիկ չեն ցանկանում ընթերցել, քանի որ Աստված հոգևորապես կուրացրել է նրանց (տես Ես. 29:11; Հո. 11:8-10,25)

3. վերջին ժամանակների իրադարձությունները (տես Դան. 8:26)
4. Հռոմեական վերջին կամքը կամ վկայությունը, որը ավանդաբար կնքվեց յոթ կնիքներով
5. կյանքի գիրքը (տես Դան. 7:1; 12:1), որը հաճախ հիշատակվում է Հայտնության գրքում (տես 3:5; 17:8; 20:12,15)
6. Հին Կտակարանը (տես Կող. 2:14; Եփ. 2:15)
7. 1 Ենովք 81:1,2-ի երկնային տախտակները:

Իմ կարծիքով #1, #2 կամ #3 ասպեկտները լավագույնն են թվում; գլանաձև գիրքը մարդկության ճակատագրի և պատմության Աստծո գազաթնակետի գիրք է:

▪ **«որ ներսեւանց եւ դրսեւանց գրուած էր»** Հին աշխարհում սա շատ անսովոր էր պապիրուսի ետևի կողմում գրելու դժվարության պատճառով, թեև այն հիշատակվում է Եզեկ. 2:8-10 և Զաք. 5:3: Այն խորհրդանշում է Աստծո ամբողջական և լիակատար վերահսկողությունը պատմության և մարդկային վախճանի նկատմամբ:

Երկու դերբայերն էլ (գրավոր և կնքված), որոնք նկարագրում են այս գլանաձև գիրքը, վաղակատար կրավորական են: Առաջինն այն հատուկ քերականական ձևն է, որն օգտագործված է նկարագրելու Սուրբ Գիրքը որպես ներշնչանք (այսինքն, Հովհ. 6:45; 8:17; 10:34; և այլն): Երկրորդը արտահայտելու միջոց է, որ գլանաձև գիրքը պաշտպանված, պահպանված և պահված է Աստծո կողմից:

▪ **«եօթը կնիքով կնքուած»** Յոթ կնիքներն ունեն երկու հնարավոր ծագում:

1. Յոթը գերազանցության թիվն էր Օմնիոց 1, ուստի այն լիովին կնքվեց:
2. Հռոմեական կամքը կնքված էր յոթ կնիքներով:

Կնիքները փոքրիկ մուկեր էին, որոնք պարունակում էին սեփականատիրոջ դրոշմը, որտեղ կլինեք բացված գիրքը կամ գլանաձև գիրքը (տես Հատուկ Թեմա՝ Հայտ. 7:2): Հայտ. 6:1-8:1-ում այդ կնիքների խախտումը բերում է երկրի վրայի վայերին, բայց այս գրականության մեջ գլանաձև գրքի բովանդակությունը չի հայտնաբերվել: Որպես փաստ, գրքի կառուցվածքում յոթերորդ կնիքը սկսում է յոթ փողերը, որոնք յոթ կնիքներն են:

5:2 «մի գորաւոր հրեշտակ տեսայ» Ոմանք տեսնում են ստուգաբանական կապ Գաբրիել անվան հետ, որը նշանակում է «Աստծո զորավոր մարդ»: Մեկ այլ զորավոր հրեշտակ նշվում է Հայտ. 10:1 և 18:21: Հրեշտակային միջնորդությունը տարածված է հրեական միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականության մեջ:

▪ **«մեծ ձայնով քարոզում էր»** Նա դիմում էր բոլոր ստեղծագործությանը:

▪ **«Ո՞վ է արժանի բանալ այս գիրքը եւ սորա կնիքները լուծել»** «Արժանի» տերմինը առևտրային տերմին է, որը վերաբերում է զույգ կշեռքների օգտագործմանը: Դա նշանակում է «այն, ինչը համապատասխանում է»: Ինչ-որ բան դրված է կշեռքի մի կողմում, իսկ մյուսին ինչ դնել որպեսզի հավասարվի: Այն կարող է օգտագործվել բացասական կամ դրական իմաստով: Այստեղ դա անմեղ Փրկչի անգնահատելի արժեքն է: Միայն Հիսուսն էր հավասար փրկագնման գործին: Միայն Հիսուսն էր հավասար իրագործմանը: Միայն Հիսուսն է արժանի (տես Հայտ. 5:7, 9-10,12):

5:3 «Եւ ոչ ով՝ ոչ երկնքումը եւ ոչ երկրի վերայ եւ ոչ երկրի ներքեւումն, չէր կարողանում այն գիրքը բանալ, եւ ոչ էլ նայել նորա մեջ» Սա ցույց է տալիս հրեշտակների կամ մարդկանց ընդհանուր անհնազանդությունը, որոնք բերում են Աստծո կամքին: Ապստամբությունն ազդել է բոլորի վրա: Արարումը չի կարող օգնել իրեն: Ոչ ոք արժանի չէ:

5:4 «ես շատ լաց էի լինում» Սա անկատար ժամանակի բայ է, որը նշանակում է գործողության սկիզբ կամ կրկնվող գործողություն անցյալում: Սա նշանակում է «բարձրաձայն», որը բնորոշ է Հին Մերձավոր Արևելքին:

5:5 «երեցներից մեկն ասեց ինձ» Այստեղ երեցներից մեկը գործում է որպես հրեշտակային մեկնաբանող, ինչպես Դանիելի գիրքը: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ՝ ԵՐԵՑ Հայտ. 4:4:

- **«Լաց մի լինիր»** Սա ներկա հրամայական է ժխտական մասնիկով, որը սովորաբար նշանակում է դադարեցնել այն գործողությունը, որն արդեն ընթացքի մեջ է:
- **«առիծը որ Յուդայի ցեղիցն է»** Սա ակնարկ է Ծննդ. 49:9-10 (այսինքն 2 Եզդրաս 12:31,32): Մեսիան հաղթող առյուծն է (թագավորը) Հուդայի ցեղից:
- **«Դալիթի Արմատը»** Սա ակնարկ է 2 Թագ. 7 և հատկապես Ես. 11:1-10: Թագավորական Դավիթի Մեսիայի այս նույն գաղափարը կարելի է գտնել Եր. 23:5; 33:5 և Հայտ. 22:16:
- **«լուծե՛»** Սա ասորիստ ներգործական սահմանական է, որը ենթադրում է, որ դա կատարված փաստ է (այսինքն, Գողգոթան և դատարկ գերեզմանը): Ուշադրություն դարձրեք, որ Առյուծը չի պատրաստվում հաղթել իր գորությամբ, այլ Իր զոհաբերությամբ (տես Հայտ. 5:6):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 5:6-10

Արդյոք այս «երկու վկաների» միտքը հատուկ նշանակություն ունեցավ առաջին դարի հավատացյալների համար, որոնք ենթարկվում էին հալածանքների (հավանաբար, կայսրի պաշտամունքի կուլտերը): Սրան վերջնական պատասխան չես կարող տալ: Հովհաննեսի պատկերների ընտրությունը վերցված է մի քանի աղբյուրներից՝ Հին Կտակարանից, ապոկալիպտիկ գրականությունից, հունա-հռոմեական մշակույթից և երբեմն Մերձավոր արևելյան դիցաբանությունից (գլուխ 12): Արդյո՞ք առաջին ունկնդիրները ամբողջությամբ և լիովին հասկացան նրա աղբյուրները և սիմվոլիկան: Հավանական է ոչ, ոչ կոնկրետ ձևով, բայց նրանք հասկացան ժանրը: Նրանք պետք չունեն համոզելու բառացի պատմական իրականացում բոլոր մանրամասների համար:

Իմ միակ վախը նման դրույթ ասելիս այն է, թե ինչպես է Հին Կտակարանյան կանխագուշակող մարգարեությունը մեկնաբանվել ներշնչված Նոր Կտակարանյան հեղինակների կողմից: Հաճախ նրանք տեսել են Քրիստոսի կյանքում Հին Կտակարանյան մանրամասների բառացի իրականացում: Այս իրականացումներից մի քանիսը ռաբբիական բառախաղեր էին կամ տիպային / հակատիպային խորհրդանիշներ: Հոգու առաջնորդության ներքո (կամ Հիսուսի ուսմունքը, Ղուկ. 24: 13-35), Առաքյալների ընթացիկ պատմական իրավիճակը դիտվել է մարգարեական տեքստերի միջոցով: Այս նույնը բանը կարող է տեղի ունենալ նաև հալածվող հավատացյալների վերջին սերնդի համար: Այնուամենայնիվ, միջամտող մեկնաբանները ի վիճակի չեն կանխատեսել, թե այդ մանրամասներից որին պետք է մոտենալ աստվածաբանորեն կամ հերմենևտիկորեն: Ժամանակակից մեկնաբանները չպետք է համոզեն (1) իրենց պատմությունը այս ապոկալիպտիկ տեքստերում, ոչ էլ (2) այս խիստ խորհրդանշական ժանրի յուրաքանչյուր մանրուքի բառացի իրականացումը փնտրեն: Ժամանակը ցույց կտա!

Ե. Կնիքների և փողերի գրական օրինակները և պատկերները գրեթե նույնն են: Երկուսն էլ մարդկային պատմության ավարտին են բերում (տես Հայտ. 6: 12-17 և 11: 15-19):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 10:1-7

¹Եւ մի ուրիշ զօրաւոր հրեշտակ տեսայ երկնքիցը վայր գալիս, եւ ամպ հագած եւ գլխին ծիածան. Եւ նորա երեսը արեգակի նման. Եւ նորա ոտները կրակի սիւնի պէս: ²Եւ նա իր ձեռքումը մի փոքր գիրք ունէր բացած, եւ իր աջ ոտքը դրաւ ծովի վերայ, եւ ձախը հողի վերայ. ³Եւ մեծ ձայնով աղաղակեց ինչպէս առիւծն գոռում է. Եւ երբոր աղաղակեց, այն եօթը որոտմունքն իրանց ձայնովը խօսեցին: ⁴Եւ երբոր եօթը որոտմունքն իրանց ձայնովը խօսեին, պիտի գրէի. Եւ ձայն լսեցի երկնքիցը որ ասում էր. Կնքիր այն բաները որ եօթը որոտմունքը խօսեցին, եւ սորանք մի գրիր: ⁵Եւ այն հրեշտակը որ տեսայ ծովի վերայ եւ ցամաքի վերայ կանգնած, իր աջ ձեռքը դէպի երկինքը բարձրացրեց, ⁶Եւ երդուաւ յաիտեանս յաիտեանից Կենդանիովը, որ ստեղծեց երկինքը եւ ինչ որ նորանում է, եւ երկիրը եւ ինչ որ նորանում է, եւ ծովը եւ ինչ որ նորանում է. թէ այլևս ժամանակ չ'կայ: ⁷Բայց եօթներորդ

10: 1 «Եւ մի ուրիշ զօրաւոր հրեշտակ տեսայ երկնքիցը վայր գալիս» Ուշադրություն դարձրէք, որ Հովհաննէսը վերադառնում է երկիր Հայտ. 4-5 գլուխների տեսիլքից հետո (եթէ Հայտ. 4-ում Հովհաննէսի երկինք կանչվել եկեղեցու հափշտակությունն էր, արդյո՞ք սա եկեղեցու ընկնելն է): Այս հրեշտակը նկարագրված է այն տերմիններով, որոնք վերաբերում են Հին Կտակարանի ՅԱՀՎԵԻՆ և Քրիստոսին Հայտ. 1: 12-20-ում: Այդ պատճառով շատերը պնդել են, որ սա Քրիստոսն է: Այնուամենայնիվ, սա կասկածելի է հետևյալ պատճառներով.

1. Հայտնության գրքում Քրիստոսը երբեք չի անվանվում հրեշտակ
2. Հայտնության մեջ այլ հզոր հրեշտակներ կան թվարկված (տես Հայտ. 5: 2; 18:21)
3. Այս հրեշտակը երդվում է Աստծով Հայտ. 10: 6-ում, ինչը չի համապատասխանում Քրիստոսին
4. Դանիել 10-ում հրեշտակ կա, որը նույնպես նկարագրված է նույն տերմիններով

Այս մանրամասն նկարագրությունը կարող է հակադրել այս լույսի հրեշտակին խավարի հրեշտակի հետ Հայտ. 9: Ինչպես Հայտ. 9-ում հրեշտակին տրվում է ուղղություն, բայց այս հրեշտակն ինքնուրույն է դեկավարվում: Դա կարող է ակնարկ լինել Դան. 10: 5-6 գորավոր հրեշտակին կամ Իսրայելի հրեշտակապետ Միքայելին Դան. 10:13 և 12: 1:

- **«ամպ հագած»** Հին Կտակարանում ամպերը Աստծո յուրօրինակ փոխադրամիջոցն էր համարվում (տես Սաղ. 97:2; 104: 3; Դան. 7:13; Գործք 1:9):
- **«գլխին ծիածան»** Շատերը դա տեսնում են որպես ակնարկ Հայտ. 4: 3-ի և, ուստի, գործության և իշխանության մեկ այլ կոչում, որը հիշեցնում է Աստծուն: Ակնարկը կարող է լինել Եզ. 1:28, որտեղ ծիածանը հանդիսանում է ՅԱՀՎԵԻ շարժական գահը / կառքը:
- **«նորա երեսը արեգակի նման»** Սա հետևում է Քրիստոսի նկարագրությանը, որը հանդիպում է Հայտ. 1:16 (տես Մատթ. 17: 2):
- **«նորա ոտները կրակի սինի պէս»** Այս նկարագրությունը նույնպես նման է Քրիստոսին Հայտ. 1:15-ում:

10: 2 «նա իր ձեռքումը մի փոքր գիրք ուներ բացած» Այս փոքր գրքի մասին շատ քննարկումներ են եղել: Ոմանք դա համարում են Հայտ. 5: 1-ի փոքր գիրքը, այժմ բացված, բայց օգտագործված են երկու տարբեր հունարեն բառեր (Հայտ. 5: 1, *biblion*; Հայտ. 10: 2, *biblaridion*): Ոմանք դա կապում են Եզ. 2: 8-3: 14-ի հետ: Քանի որ սա հրեշտակ է և ոչ թե Քրիստոսը, Եզեկիելը ամենալավ ենթադրությունն է:

- **«եւ իր աջ ոտքը դրաւ ծովի վերայ, եւ ձախը հողի վերայ»** Հրեշտակի չափսը խոսում է համընդհանուր պատգամի մասին: Բաբբիները (Թալմուդում) քննարկել են Սանդեկֆոն անունով մի հրեշտակի մասին, որի հսկայական բարձրությունը նույնն էր, ինչպես 500 մղոն հեռավորությունը, մյուս հրեշտակներից ավելի բարձրահասակ (տես *Hagigah* 13բ):

10: 3 «Եւ մեծ ձայնով աղաղակեց ինչպէս առիւծն գոռում է» Այս տերմինը «մոնչալ» (*mukaomai*) սովորաբար օգտագործվում է եզների ձայնի համար (ցածր մոնչալ): Այնուամենայնիվ, ըստ երևույթին, տեղին է ասված, որ սա ակնարկ է Հին Կտակարանյան հատվածներին, որտեղ Աստված խոսում է որպես առյուծ (տես Եր. 25:30; Ովս. 11:10; Հովել 3:16; Ամովս 3: 8):

▪ **«այն եօթը որոտմունքն իրանց ձայնովը խօսեցին»** Այս յոթ որոտմունքների ինքնությունը վիճարկվում է: Այն կարող է լինել.

1. Սաղ. 29: 3-9 Աստծո յոթ «ձայների» ակնարկը
2. զուգահեռ յոթ կնիքներին և յոթ փողերին, որոնք Աստծո դատավճիռներն էին անհավատների նկատմամբ (տես Հայտ. 8: 5; 11:19; 16:18), նպատակը՝ փրկել
3. Աստծու գահից հնչող ձայն (տես Հայտ. 4: 5)
4. այն կարող է վերաբերել նաև Աստծո յոթ հոգիներին (տես Հայտ. 1: 4; 4: 5; 5: 6, Ես. 11:22)

10: 4 «Կնքիր» Աստվածաշնչում մի քանի տեղ կա, որտեղ մեկը ստացել է հայտնություն Աստծուց, բայց չի կարողացել բացահայտել այն: Նրանք են

1. Դանիելը (տես Դան. 8: 26; 12: 4,9)
2. Պողոսը (տես 2 Կոր. 12: 4)

Սակայն սա շատ զարմանալի դրույթ է: Հովհաննեսին ասվում է գրել այն, ինչ տեսնում է (տես Հայտ. 1: 11,19; 14:13; 19: 9; 21: 5): Հովհաննեսին ասվում է Հայտ. 22:10, որ այս մարգարեության խոսքերը չպետք է կնքվեն: Այն պետք է վերաբերվի միայն այս պատգամին:

10: 5 «իր աջ ձեռքը դեպի երկինքը բարձրացրեց» Այս ժեստը երդում տալու համար է (տես Ծննդ. 14:22; Ելից 6: 8; Թվոց 14: 30; 2 Օր. 32:40; Եզ. 20:15,28; Դան. 12: 7): Այս երդման ձևը շատ զարմանալի է իր իսկ կոչումներով Աստծո համար:

10: 6 «յաւիտեանս յաւիտենից» Աստծո այս բնութագիրը հիշեցնում է իր երկու ամենատարածված Հին Կտակարանյան անունները.

1. *ՅԱՀՎԵ* եբրայերեն «լինել» բայից (տես Ելից 3:14): «Ես եմ, որ Եմ» Աստծո ուխտի անունն էր; այն ընդգծեց Աստծուն որպես Փրկիչ և Ազատագրող (տես Ծննդ. 14:19; Ելից 20:11; Նեեմ. 9: 6; Սաղ. 146: 6):
2. *Էլշհիս*, որն օգտագործվում է Աստծո համար Ծննդ. 1-ում, որպես արարիչ, պահապան և երկրի վրա ամեն ինչով ապահովող (տես Ծննդ. 14:19; Ելից 20:11; Նեեմ. 9: 6; Սաղ. 146: 6):

Այս երդումը միջոց է՝ հրեշտակի ուղերձի հավաստիությունը հաստատելու համար:

▪ **«թէ այլես ժամանակ չկայ»** Սա կարող է լինել Հայտ. 6: 10-ի մարտիրոսների հարցի պատասխանը: Դա բառացիորեն նշանակում է «այդ ժամանակն (*chronos*) այլևս չի լինի»: Ժամանակի գաղափարը այս գրքում շատ հոսուն է մի քանի պատճառներով:

1. Կան երկու տարբեր հունարեն բառերը, որոնք արտահայտում են ժամանակը
ա. *chronos*, ժամանակի անցնելը (տես Հայտ. 10: 6)
բ. *kairos*, հատուկ ժամանակ, եղանակ/սեզոն կամ իրադարձություն (տես Հայտ. 1: 3; 11: 18; 12: 12,14)
2. Կան մի քանի դարձվածքներ, որոնք օգտագործվում են.
ա. «ինչ որ շուտով պիտի լինի» (տես Հայտ. 1: 1; 22: 6)
բ. «ժամանակը մոտեցել է» (տես Հայտ. 1: 3; 3:11; 22:10)
գ. «Ես շուտով գալիս եմ» (տես Հայտ. 2: 5,16; 22: 7,12,20)
դ. «Ես գողի պես եմ գալու» (տես Հայտ. 3: 3; 16:15)

Այս ամենը խոսում է շտապողականության մասին: Այնուամենայնիվ, որոշ հատվածներ խոսում են ուշացման մասին (տես Հայտ. 6:11; 10: 6; 14:13): Մեկ այլ դարձվածքն այն է, որ դատաստանի և պարզների օրը մոտեցել է, «արվում է» (տես 16:17, 21: 6) կամ «ժամանակը եկել է» (տես Հայտ. 11:18; 20:12):

Այս հոսուն լինելը օգտագործվել է տարբեր մեկնաբանական համակարգերի միջոցով՝ ժամանակի որոշակի ասպեկտը ընդգծելու համար (առաջին դար, ամեն ժամանակաշրջան կամ վերջին սերունդը): Հրեշտակի հանդիսավոր երդումը այն է, որ վերջին ժամանակի իրադարձությունները պետք է սկսվեն: Մարտիրոսների աղոթքները պատասխանվել են: Հայտնություն պետք է մեկնաբանվի իր առաջին ընթերցողների լույսի ներքո (տես John Bray, *Matthew 24 Fulfilled*):

10:7

Արևելահայերեն «Աստուծոյ խորհուրդն էլ կ'կատարուի»
Արևմտահայերեն «Աստուծոյ խորհուրդը պիտի կատարուի»

- NASB «Աստծո խորհուրդը ավարտվեց»**
- NKJV «Աստծո խորհուրդը կավարտվի»**
- NRSV, Peshitta «Աստծո խորհուրդը կկատարվի»**
- TEV «Աստված կկատարի իր գաղտնի պլանը»**
- NJB «Աստծո խորհուրդը կկատարվի»**

Տերմինն ունի մի քանի իմաստ.

1. Պողոսը հաճախ է խոսում հրեաների և հեթանոսների փրկագնման Աստծո հավիտենական ծրագրի մասին, որը Քրիստոսի հավատքի միջոցով է (տես Եփ. 2: 11-3: 13):
2. Հայտնությունը հաճախ վերաբերում է խորհուրդի տեսիլքի մի մասին (տես Հայտ. 1: 20; 17: 5,7):
3. Հայտ. 10: 7-ում դա վերաբերում է փրկության Աստծո հավիտենական ծրագրին, ինչպես Պողոսը արեց Հռ. 16: 25-26 և Եփ. 2: 11-3: 13:

Հնարավոր է, որ Հովհաննեսն այս տերմինը վերցրել է Դանիելից, մասնավորապես, գլուխ 2-ից (տես Դան. 2: 18,19,27,28,29,30,47): Եթե այդպես է, ապա դա վերաբերում է Իր գործողությունները բացահայտելու Աստծո կարողությանը: Աստված գիտի և հսկում է ամբողջ պատմությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՈՒ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ «ԽՈՐՀՈՒՐԴ»
SPECIAL TOPIC: MYSTERY IN THE GOSPELS

Ա. Մինտպոլիկ Ավետարաններում «խորհուրդը» օգտագործվում է Հիսուսի առակներից ստացված հոգևոր գաղափարներից:

1. Մարկոս 4:11
2. Մատթեոս 13:11
3. Ղուկաս 8:10

Բ. Պողոսը այն օգտագործում է մի քանի տարբեր ձևերով:

1. Իսրայելի մասնակի խստացումը թույլ կտա հեթանոսներին ընդգրկվել փրկության ծրագրում: Հեթանոսների այս հոսքը կգործի այնպես, որ կարթնացնի հրեաներին՝ ընդունելու մարգարեների կողմից մարգարեացած Հիսուսին (տես Հռ. 11: 25-32):
2. Ավետարանը հայտնի դարձավ հեթանոսներին, որոնք ընդգրկվեցին փրկության մեջ Քրիստոսի միջոցով (տես Հռ. 16: 25-27; Կող. 2: 2):
3. Հավատացյալների նոր մարմինները Երկրորդ Գալստյան ժամանակ (տես 1 Կոր. 15: 5-57; 1 Թես. 4:13-18):
4. Ամփոփելով բոլոր բաները Քրիստոսում (տես Եփ. 1: 8-11):
5. Հեթանոսներն ու հրեաները որպես ժառանգորդներ (տես Եփ. 2: 11-3: 13):
6. Քրիստոսի և Եկեղեցու միջև մտերմիկ հարաբերությունը նկարագրված է

ամուսնության տերմիններով (տես Եփ. 5: 22-33):

7. Հեթանոսներն ընդգրկված են ուխտի ժողովրդի մեջ և Քրիստոսի Հոգին բնակվում է նրանց մեջ, որպեսզի Քրիստոսի նման հասունություն ունենան, այսինքն, վերականգնելու մարդու մեջ Աստծո խեղաթյուրված պատկերը (տես Ծննդ. 1: 26-27; 5: 1; 6: 5, 11-13; 8:21; 9: 6; Կող. 1: 26-28):

8. Վերջին ժամանակի հակաքրիստոսը (տես 2 Թես. 2: 1-11):

9. Ավետարանի խորհուրդի մասին վաղ եկեղեցու հիմնը գտնվում է 1 Տիմ. 3:16.

Գ. Հովհաննեսի Հայտնության մեջ օգտագործվում է Հովհաննեսի ապոկալիպտիկ խորհրդանիշների իմաստը:

1. 1:20
2. 10: 7
3. 17: 5,6

Դ. Սրանք այն ճշմարտություններն են, որ մարդիկ չեն կարող բացահայտել; նրանք պետք է բացահայտվեն Աստծո կողմից: Այս հասկացությունները շատ կարևոր են Աստծո հավիտենական ծրագիրը բոլոր մարդկանց փրկագնման համար ճիշտ հասկանալու համար (տես Ծննդ. 3:15): Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ](#)

▪ «մարգարեներին»

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ

SPECIAL TOPIC: OT PROPHECY

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Սկզբնական պնդումներ

1. Հավատացյալ համայնքը չի համաձայնում, թե ինչպես պետք է մեկնաբանել մարգարեությունը: Այլ ճշմարտություններ են ստեղծվել որպես ուղղափառ դիրքորոշում դարերի ընթացքում, բայց ոչ այս մեկը:

2. Կան ՀԿ մարգարեության մի քանի լավ սահմանված փուլեր

ա. նախամիապետական

(1) ֆիզիկական անձիք, ովքեր կանչվել են մարգարեներ

(ա) Աբրահամ - Ծննդ. 20: 7

(բ) Մովսես - Թվ. 12: 6-8; 2 Օր. 18:15; 34:10

(գ) Ահարոն - Ելից 7: 1 (Մովսեսի խոսնակը)

(դ) Մարիամ - Ելից 15:20

(ե) Մովղադ և Եղադ - Թվ.11: 24-30

(զ) Դեբորա - Դատ. 4: 4

(է) անանուն - Դատ. 6: 7-10

(ը) Սամուել - Ա Թագ. 3:20

(2) հիշատակումներ մարգարեների մասին որպես խումբ- 2 Օր. 13: 1-5; 18: 20-22

(3) մարգարեական խումբ կամ զիլդիա/գունդ - 1 Թագ. 10: 5-13; 19:20; 3 Թագ. 20: 35,41; 22: 6,10-13; 4 Թագ. 2: 3,7; 4: 1,38; 5:22; 6: 1 և այլն:

(4) Մեսիան կոչվում էր մարգարե - 2 Օր. 18: 15-18

բ. չգրված միապետական (դիմում են թագավորին):

(1) Գադ – 1 Թագ. 22: 5; 2 Թագ. 24:11; 1 Մնաց. 29:29

(2) Նաթան - 1 Թագ. 7: 2; 12:25; 3 Թագ. 1:22

(3) Աքիա - 3 Թագ. 11:29

- (4) Յէու - 3 Թագ. 16: 1,7,12
- (5) անանուն - 3 Թագ. 18: 4,13; 20: 13,22
- (6) Եղիա - 3 Թագ. 18 - 4 Թագ. 2
- (7) Միքիա - 3 Թագ. 22
- (8) Եղիսե - 3 Թագ. 2: 9, 12-13

գ. դասական գրված մարգարեներ (դիմում են ժողովրդին, ինչպես նաև թագավորին)՝ Եսայիայից- Մաղաքիա (բացառությամբ Դանիելի)

Բ. Աստվածաշնչյան Տերմիններ

1. *Ro'eh* = «տեսանող» (BDB 906, KB 1157), 1 Թագ. 9: 9: Այս հղում ինքնին ցույց է տալիս անցումը դեպի *nabi* տերմինի: *Ro'eh* վերցված է «տեսնել» ընդհանուր տերմինից: Այս անձը գիտակցել է Աստծո ճանապարհները և ծրագրերը և Աստծո կամքը պարզելու հարցում խորհուրդ են տվել նրան դիմել:
2. *Hozeh* = «տեսանող» (BDB 302, KB 3011), 2 Թագ. 24:11: Դա հիմնականում հոմանիշ է *Ro'eh*-ին: Դա «տեսնել» տերմինի հազվագյուտ ձևերից է: Դերբայական ձևն առավել հաճախ է օգտագործվում՝ անդրադարձնալով մարգարեներին (այսինքն «ահա»):
3. *Nabi'* = «մարգարե» (BDB 611, KB 661), ծագել է աքքադերեն *Nabu* ԲԱՅԻՑ = «կանչել» և արաբերեն *Naba'a* = «հայտարարել»: Սա առավել տարածված տերմին է Հին Կտակարանում, որը բնութագրում է մարգարեին: Այն օգտագործվում է ավելի քան 300 անգամ: Ճշգրիտ ստուգաբանությունն անորոշ է, բայց «կանչել»-ը այժմ թվում է, լավագույն տարբերակն է: Հնարավոր է, որ լավագույն ըմբռնումը գալիս է ՅԱՀՎԵԻ նկարագրությունից՝ Մովսեսի կապը փարավոնի հետ Ահարոնի միջոցով (տես Ելից 4: 10-16; 7: 1; 2 Օր. 5: 5: Մարգարեն նա է, ով խոսում է Աստծուց՝ Իր ժողովրդին (Ամուս 3: 8; Երեմ. 1: 7,17; Եզեկ. 3: 4):
4. Բոլոր երեք տերմինները, որոնք օգտագործվում են մարգարեի պաշտոնի համար 1 Մնաց. 29:29; Սամուել - *Ro'eh*, Նաթան - *Nabi'* և Գադ - *Hozeh*:
5. *'ish ha - 'elohim* «Աստծո մարդ» արտահայտությունը նաև ավելի լայն նշանակություն ունի Աստծոխոսնակի համար: Այն օգտագործվում է մոտ 76 անգամ ՀԿ «մարգարեի» իմաստով:
6. «Մարգարե» տերմինը ունի հունական ծագում: Այն առաջացել է (1) *pro* = «առաջ» կամ «համար» և (2) *phemi* = «խոսել»:

II. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

- Ա. «Մարգարեություն» տերմինն ուներ ավելի լայն իմաստային դաշտ երբայերենում, քան անգլերենում: Հետևի պատմական գրքերը մինչև Թագավորաց գրքերը (բացառությամբ, Հռութի), հրեաների կողմից պիտակավորված են որպես «նախկին կամ վաղ մարգարեներ»: Թե Աբրահամը (Օննդ. 20: 7; Սաղ. 105: 5) և թե Մովսեսը (2 Օր. 18:18) նշված են որպես մարգարեներ (նաև Մարիամը Ելից 15:20): Հետևաբար, զգուշացեք ենթադրություն անել անգլերեն սահմանումից:
- Բ. «Մարգարեությունը կարող է իրավաչափորեն սահմանվել որպես պատմությունը հասկացող, որն ընդունում է նշանակությունը միայն աստվածային մտահոգության, աստվածային նպատակի, աստվածային մասնակցության առումով » - *Interpreter's Dictionary of the Bible*, հատոր 3, էջ 896:
- Գ. «Մարգարեն ոչ փիլիսոփա է, ոչ էլ սիստեմատիկ աստվածաբան, այլ ուխտի միջնորդ, որը Աստծո խոսքը մատուցում է Իր ժողովրդին, որպեսզի ձևավորի նրանց ապագան՝ բարեփոխելով նրանց ներկան» - «Մարգարեներ և Մարգարեություն», *Encyclopedia Judaica/ Հրեական Հանրագիտարան*, հատոր 13, էջ 1152:

III. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- Ա. Մարգարեության միջոցով Աստված խոսում է Իր ժողովրդի հետ, ուղղորդելով նրանց ներկյան և հույս տալով, որ վերահսկում է նրանց կյանքերն ու համաշխարհային իրադարձությունները: Նրանց ուղերձը հիմնականում կորպորատիվ է՝ հավաքական: Այն կոչված է սաստելու, հանդիմանելու, խրախուսելու, հավատք և ապաշխարություն ծնելու, և տեղեկացնելու Աստծո ժողովրդին Իր մասին և Իր ծրագրերի: Նրանք Աստծու ժողովրդին պահում են Աստծո ուխտերին հավատարիմ: Հավելելով ասենք, որ հաճախ այն օգտագործվում է Աստծո ընտրությունը խոսնակին հստակ հայտնելու համար (2 Օր. 13: 1-3; 18: 20-22): Մա, վերջ ի վերջո, պետք է վերաբերվի Մեսիային:
- Բ. Հաճախ, մարգարեն վերցնում էր իր օրերի պատմական կամ աստվածաբանական ճգնաժամը և դա կանխատեսում վախճանաբանական իմաստով: Պատմության այս վերջը ժամանակի տեսակետը եզակի է Իսրայելում և իր աստվածային ընտրության և ուխտի խոստումներին իմաստով:
- Գ. Մարգարեի պաշտոնը թվում է, հավասարակշռում է (Եր. 18:18) և զավթում է Քահանայապետի պաշտոնը որպես Աստծո կամքն իմանալու միջոց: Ուրիմն ու Թումիմը փոխանցում էին Աստծո խոսնակի բանավոր ուղերձը: Մարգարեի պաշտոնը թվում է Իսրայելիում անցել է Մադաքիայից հետո: Այն նորից չի հայտնվում 400 տարի անց Հովհաննես Մկրտիչով: Անորոշ է, թե ինչպես է Նոր Կտակարանի «մարգարեության» պարզևր առնչվում Հին Կտակարանի հետ: Նոր Կտակարանի մարգարեները (Գործք 11: 27-28; 13: 1; 14: 29,32,37; 15:32; 1 Կոր. 12: 10,28-29; Եփ. 4:11) նոր հայտնության կամ աստվածաշնչի հայտնողները չեն, այլ ուխտի իրավիճակներում Աստծո կամքի կանխատեսողներ:
- Դ. Մարգարեությունը բացառապես կամ հիմնականում կանխատեսող բնույթ չունի: Կանխատեսումը մեկ կերպ է հաստատելու իր պաշտոնը և իր պատգամը, բայց պետք է նշվի, որ «ոչ պակաս, քան 2% - ը ՀԿ մարգարեության Մեսիական է: Ոչ պակաս, քան 5% մասնավորապես նկարագրում է Նոր Ուխտը: Ոչ պակաս, քան 1% վերաբերում է սպասվող իրադարձություններին» (Fee and Stuart, *How to Read the Bible For All Its Worth*, էջ 166):
- Ե. Մարգարեներն Աստծուն ներկայացնում են ժողովրդին, իսկ քահանաները մարդկանց են ներկայացնում Աստծուն: Մա ընդհանուր դրույթ է: Կան բացառություններ, ինչպիսիք Ամբակումն է, ով հարցերով է խոսում Աստծո հետ:
- Զ. Պատճառներից մեկը, որ դժվար է հասկանալ մարգարեներին, այն է, որ մենք չգիտենք, թե ինչպես են կառուցված նրանց գրքերը: Դրանք ժամանակագրականորեն չեն դասավորված: Նրանք, կարծես, թեմատիկ են, սակայն միշտ չէ, որ այդպես է: Հաճախ չկա ակնհայտ պատմական միջավայր, ժամկետներ կամ հստակ բաժանում պատգամների միջև: Այդ գրքերը դժվար են
 1. կարդալ մեկ շնչով
 2. ուրվագծել ըստ թեմայի
 3. պարզել կենտրոնական ճշմարտությունը կամ հեղինակային մտադրությունը յուրաքանչյուր պատգամում:

IV. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Հին Կտակարանում կարծես թե «մարգարե» և «մարգարեություն» գաղափարի զարգացում կա: Վաղ Իսրայելում կար մարգարեների ընկերություն, որը գլխավորում էր ուժեղ խարիզմատիկ առաջնորդ, օրինակ Եղիան կամ Եղիսեն: Երբեմն «մարգարեների որդիներ» արտահայտությունը օգտագործվում էր այս խմբի համար (4 Թագ. 2): Մարգարեները բնութագրվում էին էքստազի ձևերով (1 Թագ. 10: 10-13; 19: 18-24):

- Բ. Մակայն, այդ ժամանակն արագ անցավ դեպի անհատ մարգարեների: Կային այնպիսի մարգարեներ (թե ճշմարիտ և թե կեղծ) ովքեր հանդես էին գալիս թագավորի հետ և ապրում էին պալատում (Գաղ, Նաթան): Բացի այդ, եղել են անկախ, երբեմն Իսրայելի հասարակությունից բոլորովին անկապ (Ամովս): Նրանք եղել են թե տղամարդ և թե կին (4 Թագ. 22:14):
- Գ. Մարգարեն հաճախ հայտնում էր ապագան, պայմանավորված մարդու անմիջական պատասխանի հետ: Հաճախ մարգարեի խնդիրն էր բացել Աստծո տիեզերական ծրագիրը Իր ստեղծագործության համար, որի վրա չի ազդում մարդու արձագանքը: Այս տիեզերական վախճանաբանական ծրագիրը յուրահատուկ է Հին Մերձավոր Արևելքում մարգարեների շրջանում: Կանխատեսումը և Ուխտի հավատարմությունը մարգարեական պատգամների երկվորյակ կենտրոնական մտքերն են (հմմտ. Fee and Stuart, էջ 150): Սա ենթադրում է, որ մարգարեները հիմնականում ուշադրություն էին դարձնում կենտրոնական մտքի վրա: Նրանք սովորաբար, բայց ոչ բացառապես, ուղերձով դիմում էին ժողովրդին:
- Դ. Մարգարեական նյութի մեծ մասը բանավոր էր ներկայացվում: Ավելի ուշ դա խմբավորվեց ըստ թեմայի, ժամանակագրության կամ այլ Մերձավոր արևելյան գրականության օրինակների, որոնք չեն հասել մեզ: Քանի որ դա բանավոր էր, այն կառուցված չէր գրավոր արձակի տեսքով: Սա դժվարացնում էր գիրքը ուղիղ կարդալը և դժվար էր հասկանալ առանց կոնկրետ պատմական ֆոնի:
- Ե. Մարգարեները օգտագործել են մի քանի օրինակներ՝ իրենց պատգամները փոխանցելու համար:
 1. Դատարանի տեսարան - Աստված Իր ժողովրդին տանում է դատարան, հաճախ դա ամուսնալուծության դեպք է, որտեղ ՅԱՀՎԵՆ մերժում է իր կնոջը (Իսրայելին) իր անհավատարմության համար (Ովսէէ 4; Միքիա 6):
 2. Թաղման արարողություն - այս տեսակ պատգամի հատուկ չափման միավոր և դրան բնորոշ «վայ» արտահայտությունը առանձնացնում է տալով դրան հատուկ ձև (Եսայիա 5; Ամբակում 2):
 3. Ուխտի օրհնության ազդարարում - Ուխտի պայմանական բնույթն ընդգծվում է, իսկ հետևանքները, թե դրական և թե բացասական, ասված են ապագայի համար (2 Օր. 27-28):

V. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼՈՒ ՕԳՏԱԿԱՐ ՈՒՂԵՅՈՒՅՑՆԵՐԸ

- Ա. Գտեք բուն մարգարեի (խմբագրի) մտադրությունը՝ նշելով յուրաքանչյուր պատգամի պատմական և գրական կոնտեքստը: Մովորաբար դա իր մեջ ունենում է Իսրայելի Մովսիսական Ուխտի խախտելը այս կամ այն կերպ:
- Բ. Կարդալ և մեկնաբանել ամբողջ պատգամը, ոչ թե պարզապես մի մասը. ուրվագծել այն ըստ բովանդակության: Տեսեք, թե ինչպես է դա առընչվում շրջակա պատգամների հետ: Փորձեք ուրվագծել ամբողջ գիրքը:
- Գ. Ենթադրենք հատվածի բառացի մեկնաբանությունը մինչև ինչ - որ բան տեքստում ինքնին չմատնանշի փոխաբերական իմաստը, ապա այլաբանական լեզուն դարձրեք արձակ:
- Դ. Վերլուծել խորհրդանշական գործողությունը պատմական և զուգահեռ հատվածների լույսի ներքո: Հիշեք, որ այս հին Մերձավոր Արևելյան գրականությունն ոչ արևմտյան է և ոչ էլ ժամանակակից գրականություն:
- Ե. Զգուշությամբ մոտեցեք կանխատեսմանը:
 1. Արդյո՞ք նրանք բացառապես հեղինակի օրվա համար են:
 2. Արդյո՞ք նրանք հետագայում իրագործվեցին Իսրայելի պատմության մեջ:
 3. Արդյո՞ք նրանք դեռ գալիք իրադարձություններ են:

4. Արդյո՞ք նրանք ունեն ժամանակակից իրականացում և նաև գալիքի իրականացում:
 5. Թույլ տվե՞ք, որ Աստվածաշնչի հեղինակները, և ոչ թե ժամանակակից, առաջնորդեն ձեր պատասխանները:
2. Հատուկ մտահոգություններ
1. Արդյո՞ք կանխատեսումը որակավորվում է պայմանական պատասխանով:
 2. Արդյո՞ք համոզիչ է, թե ում է մարգարեությունը հասցեագրված (և ինչու):
 3. Արդյո՞ք կա հավանականություն թե աստվածաշնչորեն և / կամ պատմականորեն բազմակի իրականացման համար:
 4. ՆԿ հեղինակները ներշնչանքով կարողացան տեսնել Մեսիային ՀԿ շատ տեղերում, որոնք ակնհայտ չեն մեզ համար: Նրանք կարծես, օգտագործում են տիպաբանություն կամ բառախաղ: Քանի որ մենք ներշնչված չենք, ավելի լավ է այս մոտեցումը թողնենք նրանց:

VI. ՕԳՏԱԿԱՐ ԳՐՔԵՐ

- Ա. *A Guide to Biblical Prophecy* by Carl E. Amending and W. Ward Basque
- Բ. *How to Read the Bible for All Its Worth* by Gordon Fee and Douglas Stuart
- Գ. *My Servants the Prophets* by Edward J. Young
- Դ. *Plowshares and Pruning Hooks: Rethinking the Language of Biblical Prophecy and Apocalyptic* by D. Brent Sandy
- Ե. *New International Dictionary of Old Testament Theology and Exegesis*, հատոր 4, էջ 1067-1078

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 10:8-11

⁸Եւ այն ձայնն որ երկնքիցը լսեցի դարձեալ խօսեց ինձ հետ եւ ասեց. Գնա առ այն բաց գրքոյկը, որ ծովի եւ ցամաքի վերայ կանգնած հրեշտակի ձեռքին է: ⁹Եւ ես գնացի հրեշտակի մօտ եւ ասեցի նորան. Տուր ինձ այդ գրքոյկը. Եւ նա ասեց ինձ. Առ եւ կեր սորան, եւ սա կ'դառնանայ փորումդ, բայց բերանումդ քաղցր կ'լինի մեղրի պէս: ¹⁰Եւ գրքոյկն առայ հրեշտակի ձեռքիցը եւ կերայ նորան. Եւ բերանումս քաղցր էր մեղրի պէս. Եւ երբոր կերայ նորան, դառնացաւ փորումս: ¹¹Եւ ասեց ինձ. Պէտք է դու դարձեալ մարգարէանաս ժողովուրդների եւ ազգերի եւ լեզուների եւ շատ թագաւորների վերայ:

10: 8 «այն ձայնն որ երկնքիցը լսեցի դարձեալ խօսեց ինձ հետ» Խոսողի ինքնության մասին շատ ենթադրություններ են եղել: Ոմանք պնդել են, որ դա Աստված է, կամ Քրիստոսը, կամ Սուրբ Հոգին կամ զորավոր հրեշտակներից մեկը:

Հայտ. 10:11-ում ձայնը հոգնակի է, հավանաբար վերաբերում է Սուրբ Երրորդությանը: Հին Կտակարանում Աստծո համար օգտագործվող հոգնակիները (*էլոհիմ* անունը և «մենք» Ծննդ. 1:26; 3:22; 7:11; Ես. 6: 8) բացատրվել են մի քանի ձևով:

1. քերականական ձևը կոչվում է «մեծության հոգնակիությունը», որտեղ հոգնակին ուժեղացնում է գաղափարը կամ տերմինը
2. ՅԱՀՎԵՆ հրեշտակների խորհրդի մասին հավաքական է խոսում (տես 3 Թագ. 22:19; Հոբ 1:6; 2: 1; Եր. 23:18; Դան. 7:10)
3. Սուրբ Երրորդության գաղափարի նախնական ձևը (տես Սաղ. 110:1; Զաք. 2: 8; 17:10) Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍԾՈՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Հայտ. 1:8

10: 9 «Առ եւ կեր սորան» Սա ակնարկ է Եզ. 2: 8-3: 14 կամ Եր. 15: 16-17: Սա խորհրդանշում է, որ հանձնարարվել է խոսել Աստծո պատգամը: Փոքրիկ գիրքը խորհրդանշում է Աստծո պատգամը, որը պարունակում է հավատացյալների վստահությունը (մեղր, տես Սաղ. 19: 10-11-11; 119: 103) և

անհավատների դատաստանը (դառը): Այս գիրքը նույնը չէ, ինչ որ Հիսուսը բացում է գլուխ 6-ում: Դա վերաբերում է ամենակարող հրեշտակի պատգամին (տես Հայտ. 10: 7-11):

10:11 «Եւ ասեց ինձ» Ջորավոր հրեշտակը կամ Սուրբ Երրորդությունը հաստատում է Հովհաննեսին, որպես մարգարեությունը գրող և խոսող:

▪ **«Ժողովուրդների եւ ազգերի եւ լեզուների եւ շատ թագաւորների»** Այս տերմինաբանությունն օգտագործվում է թե անհավատների (տես Հայտ. 11: 9; 13: 7-8; 14: 6; 17:15) և թե հավատացյալների համար (այսինքն, մինչև Դատաստանի Օրը տես Հայտ. 7: 9; 15: 4 և Դատաստանի Օրից հետո, տես Հայտ. 21: 24,26; 22: 2): Այս համարը կարող է վերաբերել ավետարանի քարոզչությանը (տես Հայտ. 10: 11; 14: 6) բոլոր ազգերին (տես Մատթ. 24:14; Մարկ. 13:10) կամ Աստծո բարկության հետագա ժամանակավոր դատաստանների կանխատեսումը:

ՀԱՅՏԵՆՈՒԹՅՈՒՆ 11

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 11:1-6

¹Եւ ինձ մի եղեգ տրուեցաւ գաւազանի նման. Եւ հրեշտակը կանգնած էր եւ ինձ ասում էր. Վեր կաց եւ չափիր Աստուծոյ տաճարը եւ սեղանը եւ նորանում երկրպագողներին: ²Եւ գալիթը, որ տաճարիցը դուրս է, դուրս գցիր եւ մի չափիր, որովհետեւ նա հեթանոսներին է տրուած. Եւ սուրբ քաղաքը կոխ կ'տան քառասուններկու ամիս: ³Եւ իմ երկու վկաներին կ'տամ, եւ հազար երկու հարիւրելւաթսուն օր կ'մարգարեանան քուրճ հագած: ⁴Սորանք են այն երկու ձիթենիները եւ երկու ճրագակալները, որ երկրի Աստուծոյ առաջին կանգնած են: ⁵Եւ եթէ մէկը կամենայ նորանց վնասել կրակ է դուրս գալիս նորանց բերանիցը եւ լափում է նորանց թշնամիներին. Եւ եթէ մէկը կամենայ վնասել նորանց՝ այսպէս պիտի սասակէ: ⁶Սորանք իշխանութիւն ունին երկինքը փակելու որ անձրեւ չ'գայ նորանց մարգարեութեան օրերումը. Եւ իշխանութիւն ունին ջրերի վերայ նորանց արիւն դարձնելու, եւ երկիրն ամեն կերպ պատուհասներով հարուածելու քանի անգամ որ կամենան:

11:1 «եղեգ տրուեցաւ գաւազանի նման» Նախորդ բաժիններում Հովհաննեսը նայում էր թե ինչպէս են հրեշտակները առաջադրանքներ կատարում, սակայն յոթերորդ փողի մեջ Հովհաննեսը ներգրավվում է գործողության մեջ:

«Եղեգ տրվեց» տերմինը (*kalamos*, այս իմաստով օգտագործվում է միայն այստեղ), հնարավոր է, արտացոլում են գետի եղեգների Հին Կտակարանյան օգտագործումը, որոնք օգտագործվել են որպես հորիզոնական չափման գործիքներ (տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ Հայտ. 19:11): Դրանք ութ և քսան ոտնաչափ երկարության մեջտեղն էին (տես Եզեկ. 40:5-42:20):

▪ **«Վեր կաց եւ չափիր»** Չափումը (1) խոստացված աճի և պաշտպանության նշանն էր (տես Եր. 31:38-40; Հայտ. 21:15): Դա կարող է ակնարկ լինել Եզեկիելի վերջին ժամանակի տաճարին (տես 40-48) կամ Չաքարիայի նոր Երուսաղեմին (տես Չաք. 1:16; 2:1-13) կամ (2) դատաստանին (տես 2 Թագ. 8:2; 4 Թագ. 21:13; Ես. 28:17; Ողբ Եր. 2:3): Այստեղ, ինչպէս 7-րդ գլուխը կնքելը, դա հավատացյալների Աստծո պաշտպանության նշանն է: Եթէ այս միջամտությունը զուգահեռ է 7-րդ գլխին, ապա այս տաճարը Աստծո ողջ ժողովուրդն է (հավատացյալ հրեաները և հեթանոսները): Այդ դեպքում էլ նույնպէս զուգահեռ կլինի 12-րդ գլխին:

▪ **«Աստուծոյ տաճարը եւ սեղանը եւ նորանում երկրպագողներին»** Այս տաճարի ինքնությունը կախված է մեկի մեկնաբանական ենթադրություններից:

1. Եթե ենթադրենք, որ Հովհաննեսի պատկերները կազմված են Եզեկ. 40-48-ից, ապա սա բառացի վերջին ժամանակի տաճարն է Երուսաղեմում (տես 2 Թես. 2:4):
2. Այնուամենայնիվ, եթե ենթադրենք Ջաք. 2-ին տրված ակնարկը, ապա պատկերը Աստծո քաղաքն է՝ նոր Երուսաղեմը:
3. Եթե ենթադրենք երկնային տաճարը (տես Հայտ. 7:15; 11:19; 15:58; Եբ. 9:23), այնուհետև Հայտ. 7:9 բազմությունը (եկեղեցին, և Հայտ. 12 կինը) կարող է լինել ուշադրության կենտրոնում (տես Հայտ. 21:15-16):

Հետաքրքիր է նշել, որ Հովհաննեսն ասել է, չափիր մարդկանց, ովքեր երկրպագում էին այնտեղ: Սա անսովոր տերմինաբանություն է: Այս պատկերը ներառում է ավելին, քան պարզապես շենքը: Սա պատկեր է, որը գատում է հավատացյալներին անհավատներից, ովքեր փորձառելու են Աստծո բարկությունը: Հետևաբար, դա գուցա հեռ է Աստծո նշանին, որը հավատացյալների ճակատների վրա է լինելու (տես Հայտ. 7:3-4):

11:2 «գալիթը, որ տաճարիցը դուրս է» Արտաքին գալիթի այս գաղափարը պատմականորեն վերաբերում է Հերովդեսի տաճարի հեթանոսների գալիթին: Մի քանի Հին Կտակարանյան ակնարկներ կան ուղղված Երուսաղեմի և տաճարի գաղափարին, որը տրվեց հեթանոսների կողմից (տես Սաղ. 79:1-7; Ես. 63:18; Դան. 8:13; Ջաք. 12:3; Սեպտուագինտում): Հիսուսը, կարծես, ուղիղ ակնարկ է անում Դան. 8:13-ին Ղուկ. 21:24-ում:

- **«հեթանոսներին»** Տես ծանոթագրություն Հայտ. 2:26 և 10:11:
- **«քառասուններկու ամիս»** Տես Հատուկ Թեմա՝ ստորև

ՀՍՏՈՒՎ ԹԵՄԱ: ՔՍՈՍՍՈՒՆԵՐԿՈՒ ԱՄԻՍ (Դանիելից)

SPECIAL TOPIC: FORTY-TWO MONTHS (from Daniel)

«Քառասուններկու ամիս» արտահայտությունը մարգարեաբար հալածանքի ժամանակաշրջանի առանձնահատկությունն է: Արտաքին աստիճանի տապալումը առակ է Աստծո ժողովրդի համար, որը պատմության տարբեր ժամանակաշրջաններում անհավատների գերակայության տակ է լինում՝ Անտիոքոս Եպիփանեսը, 70թ. հռոմեական և վերջում՝ հակաքրիստոսի:

Աստվածաշնչում քառասուններկու ամիսը, կամ նրա համարժեքը, հիշատակվում է մի քանի անգամ: Ծագումը կարծես Դանիելի գիրքն է:

1. Դանիել 7:25; 12: 7-ում նշված է «մի ժամանակ և ժամանակներ և կես ժամ» կամ 1277 օր (ենթադրելով «ժամանակը» հավասար է մեկ տարի), տես Հայտ. 12:14
2. Դանիել 8:14-ում նշված է 2300 իրիկուն-առավոտ
3. Դանիել 12:11-ում նշված է 1290 օր
4. Դանիել 12:12-ում նշված է 1335 օր: Նմանատիպ ձևակերպում հանդիպում է Հայտ. 11: 3; 12: 6 (1260 օր) և 11: 2; 13: 5 (42 ամիս):

Այս հանելուկային արտահայտությանը նայելու մեկ այլ ձև է՝ տեսնել որպես հաջորդականություն, մեկ, երկու, բայց ոչ երրորդ: Հետևաբար, Աստծո կողմից սահմանափակ քանակությամբ ժամանակ, որի ժամանակ հեթանոս թագավորությունները հալածում են Աստծո ժողովրդին: Աստված, Դանիելի գրքում, լիովին վերահսկում է (տես Դան. 7: 4,6,11,12,18,22,25,26,27):

Երբ այս բոլոր երևույթները հաշվի են առնվում, դրանց բազմազանությունը կարծես թե խոսում է թվերի խորհրդանշական բնույթի մասին (տես Հատուկ Թեմա: Միմվոլիկ թվերը Սուրբ Գրքում), մինչդեռ քառասուններկու ամսվա մոտ լինելը կարծես թե ցույց է տալիս, որ դա խորհրդանշական թիվ է հալածանքի ժամանակաշրջանի համար: Քանի որ երեք ու կեսը յոթի կեսն է, կարծես, հղում է հալածանքի ամբողջ ժամանակահատվածին, որը կրճատվում է (տես Մատթ. 24:22):

▪ **«սուրբ քաղաքը»** Սա կարող է վերաբերել Երուսաղեմին (տես Ես. 51:1; Մաթ. 27:53): Այնուհանդերձ, հետևելով Հայտ. 3:12 տաճարի մեկնաբանությանը, ինչպես վերաբերում է Նոր Կտակարանի հավատացյալներին, նույն ձև պետք է հետևել այս արտահայտությանը: Հայտնության հետագա զրույթներում այն վերաբերում է Աստծո Նոր Կտակարանի ժողովրդին (տես 20:9; 21:2,10, 22:19):

Հովհաննեսը փոխաբերություններ է հանում Հին Կտակարանից, բայց դրանք հղում Աստծո Նոր Կտակարանի ժողովրդին: Եկեղեցին բաղկացած է հավատացյալ հրեաներից և հեթանոսներից: Հայտնության մեջ ռասայական շեշտադրում չկա հրեաների և հեթանոսներ միջև: Տարբերություն չկա հրեա թե հույն (տես 1 Կոր. 12:13; Գաղ. 3:28; Կող. 3:11):

11:3 «իմ երկու վկաներին կ'տամ» Սա կարծես ենթադրում է Հայր Աստծուն, ով խոսում է, քանի որ Հիսուսը հիշատակվում է Հայտ. 11:8-ում (չնայած կա հունարեն ձեռագրերի խնդիր դերանունի հետ, որը բացակայում է P⁴⁷-ում և Ռ):

▪ **«երկու վկաներին»** Այս երկու հզոր քարոզիչների ինքնության մասին շատ տեսություններ կան.

1. Զաք. 4:3,11,14 ակնարկը (տես Հայտ. 11:4): Սկզբում սա վերաբերում էր վերադարձող Դավիթի սերնդին՝ Զորաբարելին և վերադարձող քահանայապետական սերնդին՝ Հեսուին, որոնք երկու Հոգով առաջնորդվող առաջնորդներ էին (երկու ձիթենիներ), ովքեր վերադարձել էին Բաբելոնյան գերությունից (այսինքն Աստծո վերականգնված ժողովուրդը):
2. Երկու ճրագակալները (տես 1:20) կարող են նշանակել երկու հավատարիմ եկեղեցիներ, Զմյուսնիան, 2:8-11 և Ֆիլադելֆիա, 3: 7-13:
3. Երկու վկաները կարող են վկայություն լինել գավիթում (տես Թվոց 35:30; 2 Օր. 17:6; 19:15):
4. Այս երկու վկաների նկարագրությունը ենթադրում է Եղիային (երկինքը փակեց Հայտ. 11:6-ից, 3 Թագ. 17:1; 18:1; Ղուկ. 4:25; Հակ. 5:17 և կրակով պատասխանեց, 3 Թագ. 18:24,38; 4 Թագ. 1:10,12) և Մովսեսին (ջուրը արյան վերածեց Հայտ. 11:6-ից, տես Ելից 7:17-19): Նրանցից երկուսն էլ եղել են Հիսուսի այլակերպման ժամանակ լեռան վրա (տես Մաթ. 17:4):
5. 1 Ենովք 90:31-ի միջկտակարանյան ապոկալիպտիկ գիրքը և երկու վաղ եկեղեցու հայրերը, Տերտուլիանը և Հիպոլիտոսը, պնդել են, որ նրանք Հին Կտակարանի այն երկուսն են, ովքեր չեն մահացել բնական մահով՝ Ենովքը (տես Ծննդ. 5:21-24) և Եղիան (տես 4 Թագ. 2:11):
6. NJB-ի ծանոթագրությունը պնդում է, որ այն վերաբերում է Պետրոսին և Պողոսին, երկուսն էլ նահատակվեցին Հռոմում Ներոնի օրոք (եջ 435):

Անձամբ ես նրանց տեսնում եմ որպես Աստծո ողջ ժողովրդի վկայության խորհրդանիշ, յոթ կնիքների և դադար, յոթ փողի և դադար զուգահեռ կառուցվածքի պատճառով: Հետևաբար, 144,000 (հավատացյալ հրեաները) և անթիվ խումբը (հավատացյալ հեթանոսները), ինչպես նաև երկու վկաները, վերաբերում են եկեղեցուն:

▪ **«քուրձ հազած»** Սա կարող է լինել կամ (1) սուզի և ապաշխարության նշան (տես Ծննդ. 37:34; 2 Սամ. 3:31); կամ (2) պարզապես մարգարեի սովորական քուրձ (տես 4 Թագ. 1:8; Ես. 20:2; Զաք. 13:4):

▪ **«հազար երկու հարիւրելվաթուն օր կ'մարգարեանան»** Երեսուն օր քառասուներկու ամիսը տևում է հազար երկու հարյուր վաթսուն օր: Ավետարանը հոչակվելու է հալածանքի այս ժամանակաշրջանում անհավատ ազգերի կողմից (տես Մաթ. 24:8-14, 21-22): Այս խորհրդանշական համարը գալիս է Դան. 7:25; 12:7 և հաճախ օգտագործվում է Հայտնության մեջ (տես 12:6; 13:5):

11:4 «Երկու ձիթենիները» Սա ակնարկ է Ջորաբաբելին, վերադարձող արքայալների Դավիթի սերնդին և Հեսուին, վերադարձող արքայալների Ահարոնյան սերնդին (տես Չաք. 4:3, 11, 14): Սա կարող է ենթադրել, որ ավետարանի վերջին ժամանակների վկայությունը կներկայացնի արքայական Մեսիական և քահանայական Մեսիական շեշտադրումները (Հիսուսը որպես Թագավոր և Քահանայապետ, Սաղ. 110, Եբ. 1:3): Այս երկու ներշնչված ապաշխարության քարոզիչներն են բերում Աստծո լույսը (տես Չաք. 4) ապստամբ աշխարհին (ապստամբ Իսրայելը այժմ ապստամբ մարդկությունն է, տես Ես. 6:9-11; 43:8-13; Եբ. 5:21-29; Եզեկ. 12:2):

11:5 «Եւ եթէ մէկը կամենայ նորանց վնասել...Եւ եթէ մէկը կամենայ վնասել» Սրանցից երկուսն էլ առաջին կարգի պայմանական նախադասություններ են, որոնք ենթադրում են, որ կան մարդիկ, ովքեր ցանկանում են վնասել նրանց, բայց նրանք Աստծո կողմից կպաշտպանվեն մինչև նրանց առաքելության ի կատար ածվելը:

▪ **«կրակ է դուրս գալիս նորանց բերանիցը եւ լափում է նորանց թշնամիներին»** Ուշադրություն դարձրեք, որ իշխանությունն իրենց բերանում է, որը ենթադրում է պատգամի զորությունը, որը նրանք հոչակել են: Հայտնության մեջ բերանը զենք է, լեզուն՝ սուրը (տես 9:17; 19:15; Եբ. 4:12):

11:6 Այս Հին Կտակարանյան գործողությունները հիշեցնում են Եղիային (տես 1 Կոր. 17:1) և Մովսեսին (տես Ելից 7:17-19):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 11:7-10
⁷Եւ երբոր իրանց վկայութիւնը կ'կատարեն, այն ժամանակ անդունդիցը դուրս եկող գագանը կռիւ կ'տայ նորանց հետ, եւ կ'յաղթէ նորանց եւ կ'սպանէ նորանց: ⁸Եւ նորանց դիէրը ընկած կ'մնան այն մեծ քաղաքի հրապարակումը, որի անունն հոգեւորապէս Մոդոմ եւ Եգիպտոս է կոչվում. որտեղ մեր Տէրն էլ խաչուեցաւ: ⁹Եւ կ'տեսնեն ժողովուրդներից եւ ցեղերից եւ լեզուներից եւ ազգերից նորանց դիէրը երեք օր եւ կէս, եւ թող չեն տալ որ նորանց դնեն գերեզմանների մէջ: ¹⁰Եւ երկրի վերայ բնակողները կ'ուրախանան եւ կ'խնդան. եւ իրար ընծաներ կ'ուղարկեն. որ այս երկու մարգարէները չարչարեցին երկրի վերայ բնակողներին:

11:7 «անդունդիցը դուրս եկող գագանը» Եթէ սա ակնարկ է Դան. 7, ապա Դան. 7-ում հիշատակված գագանը բոլոր չորս կենդանիների բաղադրյալ պատկերն է, որը կանգնած է վերջին ժամանակի վերջնական Նեոի համար (տես 2 Թես. 2:3):

«Անդունդը» դների տունն է (տես Հայտ. 9:1, 20:1): Գագանի այս գաղափարը դրսևորվում է Հայտ. 13 և 17:

▪ **«կռիւ կ'տայ նորանց հետ, եւ կ'յաղթէ նորանց եւ կ'սպանէ նորանց»** Սա ակնարկ է Դան. 7:21, որոնք լիովին բացատրվում են Հայտ. 13: Այստեղ արտահայտությունը կարող է ենթադրել, որ երկու վկաներ խորհրդանշական են մարդկանց մեծ թվով (տես Հայտ. 13:7, այսինքն, Աստծո ժողովուրդը): Ուշադրություն դարձրեք, որ նրանք չեն խուսափել հալածանքներից և մահից::

11:8 «նորանց դիէրը ընկած կ'մնան հրապարակումը» Դիէրը ընկած լինելու այս նվաստացումը արհամարանք արտահայտելու ձև էր (տես Հայտ. 11:9; 2 Օր. 28:26; Սաղ. 79:2; Եբ. 7:33; 8:2; 16:4; 19:7; 34:20): Այնուամենայնիվ, Աստված նրանց տեսանելի մարմիններն օգտագործել էր Իր զորության հզոր հարության դրսևորման և նրանց պատգամի հաստատման մեջ:

▪ **«այն մեծ քաղաքի»** Սա կարծես Երուսաղեմի նկարագրությունն է. սակայն փոխաբերական լեզուն ենթադրում է հոգևոր պայքարը երկրային թագավորության և երկնային թագավորության միջև: Ահա իմ պատճառները

1. «Այդ մեծ քաղաք» արտահայտությունը օգտագործվում է Բաբելոնի կամ Հռոմի համար (տես Հայտ. 16:19; 17:18; 18:10,16,18,19,21).
2. Թեև Երուսաղեմը Սողոմ է կոչվում Եզեկ. 16:46-49 և Ես. 1:9-10, այն երբեք չի կոչվել Եգիպտոս; Սողոմն ու Եգիպտոսը, կարծես թե, մեղքի և ստրկության համար փոխաբերություններ են:
3. «Որտեղ Տերը խաչված էր», կարծես թե վերաբերում է Երուսաղեմին, բայց դա կարող էր լինել այս աշխարհի նեոի թագավորությունների մասին խոսելու մեկ այլ միջոց:
4. «Ժողովուրդներ և ցեղեր և լեզուներ և ազգեր», Հայտ. 11: 9 ենթադրում է
 - ա. մի քաղաք, որտեղ ներկա կլինի ամբողջ աշխարհը, որը համապատասխանում է Հռոմին ավելի լավ, քան Երուսաղեմին
 - բ. «քաղաքը» որպես ապստամբ մարդկության փոխաբերություն (տես Ծննդ. 4:17; 10:8-10)
5. «Նրանք, ովքեր բնակվում են երկրի վրա, կուրախանան նրանց վրա և կտոնեն» Հայտ. 11:10 ենթադրում է, որ այս երկու վկաների պատգամը ոչ միայն հրեաների, այլ նաև ամբողջ աշխարհի անհավատների համար էր:

Սա նկարագրում է ընթացիկ պայքարը երկրի թագավորությունների և Մեսիական թագավորության միջև (տես Հայտ. 11:15), մասնավորապես Դան. 2 և Սաղ. 2:

11:9 «ժողովուրդներից և ցեղերից և լեզուներից և ազգերից» Տես ծանոթագրություն Հայտ. 10:11:

▪ **«երեք օր և կէս»** Հայտ. 11:9-ը միավորված Հայտ. 11:11-ի հետ միասին, հավասարեցնում է յոթ թիվը, որոնք հաճախ են օգտագործվում Հայտնության մեջ: Այս իրադարձությունը Աստծո կատարյալ ժամանակահատվածն էր:

11:10 «կ'իսնդան. և իրար ընծաներ կ'ուղարկեն» Ոմանք դա տեսնում են որպես Պուրիմի խեղաթյուրված տոն (տես Եսթեր 9:19,22): Ավելի հավանական է ակնարկը Հովհ. 16:20 («աշխարհը կուրախանա»): Այս անհավատ աշխարհի ուրախությունը բացահայտում է երկու վկաների պատգամի գորությունը, սակայն անհավատները չապաշխարհեցին (տես Հայտ. 9:20-21; 16:9,11):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 11:11-13
 11Եւ երեքեկէս օրից յետոյ Աստուածանից կենդանի հոգի եկաւ մտաւ նորանց մէջ, և նորանք իրանց ոտների վերայ կանգնեցին. Եւ մեծ վախ ընկաւ նորանց տեսնողների վերայ: 12Եւ մեծ ձայն լսեցի երկնքիցը որ ասում էր նորանց. Վեր ելէք այստեղ. Եւ վեր ելան երկինքն ամպով. Եւ նորանց թշնամիները տեսան նորանց: 13Եւ նոյն ժամումը մեծ շարժ եղաւ, և քաղաքի տասներորդ բաժինը կործանուեցաւ, և այն շարժումից եօթը հազար մարդիկ սպանուեցան. Եւ մնացեալները մեծ վախով բռնուեցան, և փառք տուին երկնքի Աստուծուն:

11:11 «երեքեկէս օրից» Սա ակնարկ է Դանիելից և հալածանքի խորհրդանշական ժամանակաշրջան է: Տես ամբողջական գրառումը Հայտ. 11:9:

▪ **«Աստուածանից կենդանի հոգի եկաւ մտաւ նորանց մէջ»** Սա ակնարկ է Եզեկ. 37, չորս սկզբների հովիտը: Սա եգիպտական "*ruach*" բառախաղ է, որը նշանակում է շունչ, քամի և ոգի (ինչպես հունարեն *pneuma* բառը):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ
SPECIAL TOPIC: SPIRIT IN THE BIBLE

- I. Հին Կտակարան (*ruah*, BDB 924, KB 1197; տես Հատուկ Թեմա: Շունչ, Քամի, Հոգի [ՀԿ])
- Ա. Սոնոթեիստիկ Աստծո գործողությունները (այսինքն, Հոգին, որն օգտագործվում էր Հին Կտակարանում մոտ 90 անգամ)
1. դրական, Ծննդոց 1: 2
 2. բացասական, 1 Թագ. 16: 14-16,23; 3 Թագ. 22: 21-22; Ես. 29:10
- Բ. Աստծո կողմից տրված կյանքի ուժը մարդկության մեջ (այսինքն, Աստծո շունչը, տես Ծննդ. 2: 7)
- Գ. Մեպտուազինոյը *ruah* թարգմանում է *pneuma* (օգտագործվում է մոտ 100 անգամ LXX-ում)
- Դ. Ավելի ուշ ռաբիական գրքերում, ապոկալիպտիկ գրվածքում և Մեռյալ ծովի գրառումներում, որոնց վրա ազդել է զրադաշտականությունը, *pneuma* օգտագործվում է հրեշտակների և դևերի համար
- II. Հունարեն տերմինները
- Ա. *pneō*, փչել
- Բ. *pnoē*, քամի, շունչ
- Գ. *pneuma*, հոգի, քամի
- Դ. *pneumatikos*, վերաբերում է հոգուն
- Ե. *pneumatikōs*, հոգևորապես, հոգեպես
- III. Հունական փիլիսոփայական ֆոնը (*pneuma*)
- Ա. Արիստոտելը օգտագործեց այս տերմինը որպես կյանքի ուժ, որը զարգանում է ծննդից մինչև ինքնադաստիարակումը:
- Բ. Ստոյիկյանները օգտագործեցին տերմինը որպես հոմանիշ *psuchē*-ին (շունչ), նույնիսկ *nous* (միտք)՝ հինգ ֆիզիկական զգայարանների և մարդկային ինտելեկտի իմաստով:
- Գ. Հունական մտածելակերպում տերմինը դարձավ համարժեք աստվածային գործողության (այսինքն, գուշակություն, մոգություն, օկուլտիզմ, մարգարեություն և այլն):
- IV. Նոր Կտակարան (*pneuma*, տես Հատուկ Թեմա: Հոգին Նոր Կտակարանում)
- Ա. Աստծո հատուկ ներկայությունը, գորությունը և սպառազինումը
- Բ. Հոգին կապված է Աստծո գործունեության հետ եկեղեցում (հիմնականում Հովհաննեսի գրվածքներում)
1. մարգարեություն
 2. հրաշքներ
 3. համարձակություն քարոզելու ավետարանը
 4. իմաստություն (այսինքն, ավետարանը)
 5. ուրախություն
 6. բերում է նոր ժամանակաշրջանը
 7. դարձի գալ (այսինքն, քաշել և բնակվել)
 8. Քրիստոսանմանություն
 9. հատուկ պարզներ ծառայության համար
 10. աղոթում է հավատացյալների համար
- Հոգին արթնացնում է մարդկության ցանկությունը Աստծո հետ հաղորդակցվելու համար, որի համար նրանք ստեղծվել են: Այս հաղորդակցությունը հնարավոր է Հիսուսի, Աստծո Մեսիայի անձնավորության և աշխատանքի շնորհիվ (տես Հատուկ Թեմա: Մեսիա): Նոր հոգևոր զարթոնքը հանգեցնում է ապրելու, ծառայելու և վստահելու Քրիստոսին:
- Գ. Դա կարելի է լավագույնս հասկանալ մի կողմից որպես հոգևոր շարունակություն Սուրբ Հոգու հետ, իսկ մարդկությունը որպես ֆիզիկական արարած այս մոլորակի,

- մյուս կողմից էլ Աստծո պատկերով ստեղծված հոգևոր արարած:
- Դ. Պողոսը Նոր Կտակարանյան հեղինակ է, որը զարգացնում է Հոգու / հոգու աստվածաբանությունը:
1. Պողոսն օգտագործում է Հոգին՝ հակադրելով մարմնին (այսինքն, մեղավոր բնությանը)
 2. Պողոսն օգտագործում է հոգին՝ հակադրելով ֆիզիկականին
 3. Պողոսն օգտագործում է Հոգին / հոգին՝ հակադրելով մարդկային մտածողությանը, գիտակցումին և էությանը
- Ե. Որոշ օրինակներ 1 Կորնթացիսից
1. Սուրբ Հոգին, 1 Կոր. 12: 3
 2. Աստծո գործությունն ու իմաստությունը փոխանցվեց Սուրբ Հոգու միջոցով, 1 Կոր. 2: 4-5
 3. Աստծո գործողությունները հավատացյալի մեջ
 - ա. նոր մտածելակերպ, 1 Կոր. 2:12; 14: 14,32
 - բ. նոր տաճար, 1 Կոր. 3:16; 6: 19-20
 - գ. նոր կյանք (այսինքն, բարոյականություն), 1 Կոր. 6: 9-11
 - դ. մկրտությամբ խորհրդանշված նոր կյանքը, 1 Կոր. 12:13
 - ե. մեկ Աստծո հետ (այսինքն, դարձի գալ), 1 Կոր. 6:17
 - զ. Աստծու իմաստությունը, ոչ թե աշխարհի իմաստությունը, 1 Կոր. 2: 12-15; 14: 14,32,37
 - է. յուրաքանչյուր հավատացյալի հոգևոր պարզև ծառայության համար, 1 Կոր. 12 և 14
 4. հոգևորը ի տարբերություն ֆիզիկականի, 1 Կոր. 9:11; 10:3; 15:44
 5. հոգևոր ոլորտը ի տարբերություն ֆիզիկական ոլորտի, 1 Կոր. 2:11; 5:5; 7:34; 15:45; 16:18
 6. մարդու հոգևոր և ներքին կյանքին վերաբերող մի ձև, որը տարբերվում է ֆիզիկական մարմնից, 1 Կոր. 7:34
- Զ. Մարդիկ ստեղծագործությունից ապրում են երկու ոլորտներում (այսինքն՝ ֆիզիկական և հոգևոր): Մարդը Աստծո հետ մտերմիկ հարաբերությունից հեռացավ (Օննդոց 3): Քրիստոսի կյանքի, ուսմունքների, մահվան, հարության և խոստացված վերադարձի միջոցով, Հոգին գործում է մեղավոր մարդկանց՝ հավատալու ավետարանին (տես Հովհ. 6:44-65), որտեղ նրանք վերականգնվում են Աստծո հետ հաղորդակցվելու համար: Հոգին Երրորդության այն անձն է, որը բնութագրում է արդարության նոր դարաշրջանը: Հոգին Հայր Աստծո գործակալն է և Որդու փաստաբանը այս «Ժամանակաշրջանում» (տես Հատուկ Թեմա: Հիսուսը և Հոգին): Խնդիր կա, որովհետև նոր ժամանակաշրջանը ժամանակի ընթացքում է եղել, մինչդեռ մեղավոր ապստամբ հին ժամանակաշրջանը դեռ գոյություն ունի: Հոգին հինը փոխակերպում է նորի, նույնիսկ այն ժամանակ, երբ երկուսն էլ գոյություն ունեն:

11:12 «Եւ մեծ ձայն լսեցի երկնքիցը որ ասում էր նորանց. Վեր ելէք այստեղ»: Որոշ մարդիկ տեսնում են եկեղեցու աննկատ հափշտակությունը Հայտ. 4:1, որտեղ Հովհաննեսը տարվեց երկինք, մյուսները տեսնում են այստեղ, Եկեղեցու միջ-նեղության աննկատ հափշտակությունը, որ այս երկու վկաները կանչվում են երկինք այս համարում: Այստեղ նորից մեր ենթադրությունները և աստվածաբանական հորիզոնները վարում են խորհրդանշական, երկիմաստ տեքստերի մեկնաբանություն:

▪ **«Եւ վեր ելան երկինքն ամպով»** Մա աստվածային փոխադրամիջոց է: Մեսիան գնում էր երկնքի ամպերի վրայով Դան. 7:13: Հիսուսը երկինք բարձրացավ ամպերի միջով (տես Գործք 1:9):

Հիսուսը կվերադառնա երկնքի ամպերի վրա (տես Մաթ. 24:30; 26:64; Մարկ. 13:26; 1 Թես. 4:17; Հայտ. 1:7; 14:14):

11:13 «նոյն ժամումը մեծ շարժ եղաւ, եւ քաղաքի տասներորդ բաժինը կործանուեցաւ» Հայտնության մեջ յոթ համարներ կան երկրաշարժի վերաբերյալ (տես Հայտ. 6:12; 8:5; 11:13,19; 16:18): Սա ցույց է տալիս Աստծո շարունակական, սահմանափակ դատաստանը անհավատների վրա: Դա կարող է ակնարկ լինել Եզեկ. 38:17-23:

▪ **«մնացեալները մեծ վախով բռնուեցան, եւ փառք տուին երկնքի Աստուծուն»** Շատ քննարկումներ կան «մնացյալները» տերմինի ինքնության մասին: Դա կարող է վերաբերել

1. Երուսաղեմի (տես Զաք. 12:10) կամ Հռոմի բառացի բնակիչներին
2. նրանք, ովքեր փրկվել են նեղության ժամանակ, այսինքն, նրանք, ովքեր իսկապես ապաշխարում են
3. հավատացյալ հրեաներին, Հռ. 11
4. մարդիկ, ինչպես Նաբուգոդոնոսորը և Կյուրոսը, ովքեր վախենում էին Աստծո գործերից, բայց չապաշխարհեցին:

Հայտ. 9:20-21; 14:7-8 և 16:10 պատճառով # 4 լավագույն տարբերակն է:

Սակայն, Հայտ. 16:9-ում, փառք տալը կապված է ապաշխարության հետ: Անշուշտ, հնարավոր է, որ այդ (հրեաները կամ հավատացյալները) հավատացին: Սա է Աստծո դատաստանի վերոհիշյալ նպատակը (տես Հայտ. 9:20-21; 16:9,11)

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 11:14

¹⁴Երկրորդ վայն անցաւ, եւ երրորդ վայր գալիս է շուտով:

11:14 Սա անցման բաժանում է (տես Հայտ. 9:12; 12:12):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 11:15-16

¹⁵Եւ եօթներորդ հրեշտակը փողը փչեց, եւ մեծ ձայներ եղան երկնքումն որ ասում էին. Աշխարհքի թագաւորութիւնները մեր Տիրոջը եւ նորա Քրիստոսինը եղան. Եւ նա կ'թագաւորէ յաիտեանս յաիտենից: ¹⁶Եւ քսանեւչորս երեցները որ Աստուծոյ առաջին իրանց աթոռների վերայ նստած էին, իրանց երեսների վերայ ընկան եւ երկրպագեցին Աստուծուն, ասելով.

11:15 **«Աշխարհքի թագաւորութիւնները»** KJV և NKJV թարգմանում են «այս աշխարհի թագավորությունները»: Հոգնակին չկա հնագույն հունարեն ձեռագրերից որևէ մեկում:

▪ **«եղան»** Սա աօրիստ չեզոք (deponent) սահմանական է: Սա ընկած մարդկության իշխանության թագավորության ավարտի և մեր Աստծո թագավորության սկիզբի նկարագրությունն է (տես 12:10): Սուրբ Հոգու նոր դարաշրջանը լիովին գալիս է: Սա հաստատում է ամփոփման տեսությունը, որ Երկրորդ Գալուստը տեղի է ունենում դատաստանի երեք փուլերից յուրաքանչյուրի վերջում: կնիքները (տես Հայտ. 6:12-17), փողերը (տես Հայտ. 11:15-18), և սկավառակները (տես Հայտ. 19): Հայտնությունը ոչ թե ժամանակագրական, հերթական կարգով է, այլ յոթ փուլերով դրամատիկ տեսարան, որոնցից յուրաքանչյուրը դիտում է նույն ժամանակաշրջանը, բայց կնիքները, փողերն ու սկավառակները դատաստանի հաջորդական և ուժեղացված աստիճաններում (1/4, 1/3, լրիվ):

▪ **«մեր Տիրոջը եւ նորա Քրիստոսինը»** Ուշադրություն դարձրեք, թե ինչպես են սերտորեն կապված Հայրն ու Որդին (տես Մաղ. 2): Ուշադրություն դարձրեք նաև, որ 1 Կոր. 15:24-28 և Եփ. 5:5-ի շեշտադրումը արդեն կատարվել է: Ոմանք տեսնում են ակնարկ Զաք. 14:9 որը հնարավոր է, քանի որ

Հովհաննեսի ապոկալիպտիկ պատկերների սիրելի աղբյուրները Դանիելի, Եզեկիելի և Ջաքարիայի մեջ են:

▪ **«Եւ նա կ'թագաւորէ յաւիտեանս»** Դա վերաբերում է մեր Աստծո հավիտենական թագավորությանը (տես Ելից 15:18; Սաղ. 10:16; 29:10; Ես. 9:6-7; Դան. 2:44; 4:34; 7:14,27; Ջաք. 14:9; Ղուկ. 1:33; 1 Թես. 4:17, 2 Պետ. 1:11), ոչ թե Քրիստոսի հազարամյայի թագավորությանը (տես Հայտնություն 20): Սա իսկապես կատարում է Հիսուսի աղոթքը Մաթ. 6:10, որ Աստծո կամքը կատարվի երկրի վրա, ինչպես որ երկնքում է:

Աստծո Թագավորությունը Ավետարաններում և Հայտնության մեջ գլխավոր թեմա է: Ներկայիս իրականության (հետհազարամյա և ոչհազարամյա) և նրա ապագայի իրականացման (պատմական նախահազարամյա և դիսպենսացիոնալ նախահազարամյա) միջև գոյություն ունի սահունություն և լարվածություն: Այս նույն սահունությունը նաև իր երկրային ասպեկտի (հազարամյակ) և հավիտենական ասպեկտի միջև է: Որոշ վերլուծաբաններ, դպրոցներ և հարանվանություններ մնում են սահունության մեկ ասպեկտի վրա, բայց անտեսում կամ ծռում են մյուսները՝ հարմարեցնելով իրենց ենթադրություններին և աստվածաբանական համակարգերին: Արևմուտքի ժողովրդի համար դժվար է հասկանալ արևելյան գրականության սահունությունը, պատկերավոր լեզուն և լարվածությունը, հատկապես դրա ապոկալիպտիկ ժանրը: Մեր Աստվածը և Նրա Քրիստոսը թագավորել են, թագավորում են և թագավորելու են; մանրամասները կարևոր չունեն: Որոշ ժամանակ լինելու է երկրային մեսիական թագավորությունը (տես 1 Կոր. 15:23-28); ազգային Իսրայելը ունենալու է որոշակի մաս (տես Հռ. 11): Այնուամենայնիվ, Հայտնության գրքի պատկերներն ու խորհրդանիշները վերաբերում են տիեզերական Եկեղեցուն, ոչ թե Իսրայելին (տես Դան. 2: 34-35,44): Ես անձամբ բաց եմ թողնում հնարավորությունը, որ Իսրայելը մասնակցում է վերջին ժամանակների իրադարձություններին՝ Աստծո տված խոստումը Աբրահամի սերունդներին (տես Ես. 9: 6-7; Ջաք. 12:10), հիմնված Աստծո բնույթի վրա (տես Եզ. 36: 22-38):

11:16 «քսանեչորս երեցները» Տես Հատուկ Թեմա 4:4:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 11:17-18

¹⁷Գոհանում ենք քեզանից, Տէր Աստուած Ամենակալ, որ էիր եւ ես, [եւ որ գալու ես] որ քո մեծ զօրութիւնն առար եւ թագաւորեցիր: ¹⁸Եւ ազգերը բարկացան, եւ եկաւ քո բարկութիւնը, եւ մեռելների ժամանակը որ դատուին. Եւ որ վարձքը տաս քո ծառայ մարգարէներին եւ սուրբերին, եւ քո անունից վախեցողներին՝ փոքրներին եւ մեծերին, եւ երկիրն ապականողներին ապականես:

11:17-18 Օրհնության այս աղոթքը գրված է բանաստեղծական ձևով NKJV, NRSV և TEV, իսկ NASB, NJB-ի արձակ ձևով: Աղոթքի և օրհնության այս պոռթկումները հաճախ նախորդ տեսիլքների լավագույն մեկնաբաններն են (երգերի և հրեշտակային մեկնաբանությունների հետ միասին):

11:17 «Տէր Աստուած Ամենակալ» Այս խոսքը վերաբերում է Աստծո երեք հիմնական Հին Կտակարանյան կոչումներին:

1. ՅԱՀՎԵ, Աստծո ուխտը, որպես Փրկիչ (տես Ելից 3:14; Սաղ. 103)
2. *Էլոհիմ/Elohim*, Արարիչ Աստծվածը որպես հայթայթող և աջակցող (տես Ծննդ. 1:1; Սաղ. 104)
3. *Էլ Շադայ/El Shaddai* (տես 1:8), զորավոր կամ կարեկից Աստվածը, որը աստվածության նահապետական անունն էր (տես Ելից 6:3)

Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՕՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Հայտ. 1:8:

Արևելահայերեն «որ էիր եւ ես»

Արևմտահայերեն «որ է ս եւ որ էիր»

NASB «ով ես և ով էիր»
NKJV «Այն մեկը որ է, որ էր և որ գալու է »
NRSV «ով ես և ով էիր»
TEV «Այն մեկը որ է, որ էր»
NJB «Նա ով է, նա ով էր»

Ուշադրություն դարձրեք, որ Աստծո այս ընդհանուր ապագայի ասպեկտը (բացառությամբ որոշ տասնվեցերորդ դարի վերջին կրճատված հունարեն ձեռագրերից) դուրս է եկել այն պատճառով, որ Աստված սկսեց թագավորել: Այս վերջին երեք ժամանակագրական ասպեկտները երբեք չեն հիշատակվում Հայտնության գրքում: Թագավորությունը եկել է (տես 11:15-16): Սա վկայում է այն մասին, որ կնիքների, փողերի և սկավառակների միջև գուգահեռ փոխհարաբերությունների ամփոփման տեսությունը ճշմարիտ է:

Արևելահայերեն «որ քո մեծ զորությունն առար եւ թագաւորեցիր»
Արևմտահայերեն «որ քու մեծ զորութիւնդ առիր ու թագաւորեցիր»

NASB «որովհետև դու վերցրել ես քո մեծ զորությունը և սկսել թագավորել»
NKJV «Որովհետև քո մեծ զորությունը վերցրեցիր և թագավորեցիր»
NRSV «որովհետև քո մեծ զորությունը վերցրեցիր և թագավորեցիր»
TEV «որ վերցրեցիր ձեր մեծ զորությունը և սկսեցիր ղեկավարել»
NJB «Քո մեծ զորությունն ընդունելու և քո թագավորությունը սկսելու համար»

Սա վաղակատար ներգործական սահմանական է, որին հաջորդում է աօրիստ ներգործական սահմանականը: Իշխանությունը միշտ եղել է Նրանը, բայց Նրա թագավորությունը հիմա է սկսվել (*ingressive* աօրիստ):

11:18 «ազգերը բարկացան» Սա ակնարկ է Սաղ. 2; 46:6; և Եզեկ. 38-39-ը (և հավանաբար, Եսթերի ապոկալիպտիկ ներածությունը Սեպտուագիստում): Հեթանոսների այս բարկությունը կարելի է դիտարկել երկու ձևով:

1. ընկած աշխարհային համակարգը աստում է Աստծուն, Նրա ծրագրերը, Նրա իշխանությունը և Նրա ժողովրդին
2. վերջին ժամանակին ապստամբություն կլինի Աստծո դեմ, որը բնութագրվում է պատերազմով (Արմազեդոն, այսինքն, Հայտ. 20)

▪ **«Ձեր գայրույթը եկավ»** Սա կարող է ակնարկ լինել Սաղ. 2 կամ 110:5-6: Սա հունարեն *orgē* տերմինն է: Տես ամբողջական գրառումը Հայտ. 7:14:

▪ **«Ժամանակը եկաւ»** Տիրոջ օրը որոշ դատաստանի օր է և ուրիշների համար վարձատրություն: Այս երկու ասպեկտները կարելի է տեսնել Մաթ. 25:31-46 և Հայտ. 20:11-15: Ամբողջ մարդկությունը (փոքրերը և մեծերը) մի օր կկանգնեն Աստծո առաջ և հաշիվ կտան իրենց կյանքի համար (տես Գաղ. 6:7; 2 Կոր. 5:10):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՅՆ ՕՐԸ
SPECIAL TOPIC: THAT DAY

Այս արտահայտությունը «այն օրը» կամ «այդ օրը» ութերորդ դարի մարգարեների խոսելաձևն էր՝ Աստծո այցելության (ներկայության) մասին, ինչպես դատաստանի այնպես էլ վերականգնելու

համար:

Ուվսէէ		Ամովս		Միքիս	
դրական	բացասական	դրական	բացասական	դրական	բացասական
1:11	1:5		1:14(2)		2:4
	2:3		2:16		3:6
2:15			3:14	4:6	
2:16	4:5		5:18 (2)		5:10
2:18	5:9		5:20		7:4
2:21	6:2		6:3	7:11(2)	
	7:5		8:3	7:12	
	9:5	9:11	8:9 (2)		
	10:14		8:10		
			8:13		

Այս օրինակը բնորոշ է մարգարեներին: Աստված ժամանակին մտադիր է հանդես գալ ընդդէմ մեղքի, սակայն Նա նաև առաջարկում է ապաշխարության և ներման օր նրանց, ովքեր փոխում են իրենց սրտերը և գործողությունները (ստանում են նոր սիրտ, նոր միտք և նոր հոգի, տես. Եզ. 36:22-27): Աստծո փրկագնման և վերականգնման նպատակը կավարտվի: Նա կունենա ժողովուրդ, ովքեր կարտացոլեն Իր հատկանիշները: Արարչագործության նպատակը (հաղորդակցությունը Աստծո և մարդկության միջև) կիրականանա:

- **«մեռելների ժամանակը որ դատուին»** Աստծո վերջին ժամանակի դատաստանը քննարկվում է Մարթ. 25 և Հայտ. 20: Այս արտահայտությունը հաստատում է Հայտնության մեկնաբանությունը յոթ գործողություններում (տեսարաններ), որտեղ ժամանակի վերջը տեղի է ունենում յուրաքանչյուր բաժնից հետո (հատկապես հստակ է կնիքների, փողերի և սկավառակների):
- **«քո ծառայ մարգարեներին»** Այս ճշգրիտ արտահայտությունն արտահայտվում է Հայտ. 10:7: Հովհաննեսն ինքն իրեն որպես մարգարե է ընդունում և իր գիրքը որպես մարգարեություն, հետևաբար այս տերմինը հաճախ օգտագործվում է Հայտնության գրքում: Գրեթե կարելի է ասել, որ այս տերմինը օգտագործվում է «առաքյալ» կոչման փոխարեն (տես 10:7; 11:10,18; 16:6; 18:20,24, 22:6,9): Տես Հատուկ Թեմա: Նոր Կտակարանի մարգարեություն, Հայտ. 16:6:
- **«սուրբերին»** «Սուրբեր» տերմինը վերաբերում է Քրիստոսով հավատացյալների դիրքորոշմանը, այլ ոչ թե իրենց անմեղությանը: Պետք է նաև նկարագրել նրանց առաջադիմական Քրիստոսանամանությունը: Տերմինը միշտ հոգնակի է բացառությամբ Փիլ. 4:21: Սակայն նույնիսկ այս կոնտեքստում այն հավաքական էր: Քրիստոնյա լինելը պետք է լինի համայնքի, ընտանիքի, մարմնի մաս: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄՈՒՐԲԵՆԸ, Հայտ. 5:8: Այս նշանակումը, անշուշտ, ներկայացնում է Աստծո Նոր Կտակարանյան ժողովրդին՝ եկեղեցուն:
- **«փոքրներին եւ մեծերին»** Այս համարում հիշատակված թվացյալ երկու խումբ կա՝ մարգարեներ և սուրբեր: Այս «փոքր և մեծ» արտահայտությունը հանդիպում է Հայտ. 19:5: Հովհաննեսի Ավետարանում այն սիրելի արտահայտություն էր (տես Հայտ. 13:16; 19:5,18; 20:12; 19:5, ակնարկ էր Սաղ. 115:13, որը ներառում էր տվյալ խմբի բոլոր անդամներին):

▪ **«երկիրն ապականողներին ապականես»** Ընկած մարդկության այս բնութագիրը արտացոլում է Ծննդ. 3 և Հռ. 8:18-22: Չար մարդիկ թույլ են տալիս ազահ լինել, ինքնուրույն օգտագործել, չարաշահել և սխալ գործածել Աստծո ֆիզիկական ստեղծագործությունը:

Դա կարող է մեկնաբանվել որպես չար մարդկություն, որը ստիպում է Աստծուն դատաստան անել երկրի վրա (ջրհեղեղ, Ծննդ. 6-9; Եգիպտոսի պատուհասները, Ելից 7-12; ուխտի անեծքները, 2 Օր. 27-28); կամ երկիրը կրակով կայրի 2 Պետ. 3:10): Հայտնության մեջ կնիքները ոչնչացնում են 1/4, փողերը 1/3, իսկ սկավառակները, ընդհանուր առմամբ, երկրային ֆիզիկական ոչնչացումը:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 11:19

19Եւ Աստուծոյ տաճարը որ երկնքումն էր բացուեցաւ, եւ երեւեցաւ Աստուծոյ տապանակը իր տաճարումը, եւ եղան փայլատակներ եւ ձայներ եւ որոտմունքներ, եւ շարժ եւ մեծ կարկուտ:

11:19 «Աստուծոյ տաճարը որ երկնքումն էր բացուեցաւ» Հիշեք, որ այս տեսիլքը սկսվեց երկնքում բացված մի դռնով (տես Հայտ. 4:1; 15:5): Այժմ կարելի է տեսնել Աստծո երկնային տաճարի ներքին խորանը (տես Եբ. 8:5; 9:23-28):

Երբ Հիսուսը մահացավ, տաճարի վարագույրը պատռվեց վերից վար, նշելով, որ Աստծուն մոտենալը այժմ հասանելի լինի Քրիստոսի միջոցով (տես Մաթ. 27:51; Մարկ 15:38; Ղուկ. 23:45; ակնարկելով Եբ. 9:8; 10:20): Այստեղ նույն սիմվոլիկան կրկնվում է: Աստված հասանելի է բոլորի համար: Երկնային ներքին խորանն այժմ լիովին բաց է և տեսանելի:

▪ **«Աստուծոյ տապանակը»** Ուխտի տապանակը կորել էր Բաբելոնյան արքայի ժամանակ (կամ Եգիպտոսի փարավոն Սիսակի կողմից, 3 Թագ. 14:25): Այն խորհրդանշում է Աստծո ներկայությունը, երբ Իսրայելը Հորդանան գետով անցավ Ավետյաց երկիր: Այն նաև խորհրդանշում է Աստծո ուխտի խոստումները, որոնք կարող են վերաբերել խորհուրդին (տես Հայտ. 10:7), Աստծո փրկության ծրագիրը բոլոր մարդկանց համար (տես Հռ. 16:25-26): Հին Կտակարանում միայն քահանայապետը կարող էր մոտենալ սրբարանի այս հատվածին, տարին մեկ անգամ Քավության օրվա առթիվ (տես Ղն. 16): Այժմ Աստծո ժողովուրդը կարող է գալ Աստծո ներկայության մեջ:

▪ **«փայլատակներ եւ ձայներ եւ որոտմունքներ, եւ շարժ եւ մեծ կարկուտ»** Սա շատ նման է Հայտ. 8:5 և 16:18-21, որոնք արտացոլում են Ելից 9:24 և 19:16-19:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Ո՞րն է այս դադարի նպատակը:
2. Ինչու՞ շատ թարգմանիչներ փորձում են Հայտ. 10-ի հրեշտակը նույնացնել Քրիստոսի հետ:
3. Ի՞նչ է Հայտ. 10:7-ում հիշատակված Աստծո խորհուրդը:
4. Ի՞նչ էր այն փոքրիկ գիրքը, որը պատվիրված էր Հովհաննեսին ուտել:
5. Ովքե՞ր են երկու վկաները: Ի՞նչ էր նրանց պատգամը:

6. Արդյո՞ք Հայտ. 11: 9-ը նկարագրում է Երուսաղեմ քաղաքը թե՛ հակաաստվածային աշխարհի թագավորությունները: Ինչու՞ :
7. Թվարկե՛ք Հին Կտակարանի ակնարկները, որոնք հանդիպում են այս դադարի ժամանակ:

ՀԱՅՏՆՆՈՒԹՅՈՒՆ 12-14

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Կինը և վիշապը	Կինը, երեխան և վիշապը	Կնոջ, երեխայի և վիշապի տեսիլքը	Կինը և վիշապը	Կնոջ և վիշապի տեսիլքը
12:1-6	12:1-6	12:1-6	12:1-2 12:3-6	12:1-6
	Մատանան շարտվում է երկնքից			
12:7-12	12:7-12	12:7-9	12:7-9	12:7-12՝
(10)	Կինը հալածվում է	12:10-12	12:10-12	
(11)		(10)		
(12)		(11)		
12:13-17	12:13-17	12:13-17	12:13-18	12:13-17
Երկու գազանները	Գազանը ծովից	Երկու գազանները	Երկու գազանները	Վիշապը իր զորությունը հանձնում է գազանին
12:18	12:18	12:18		12:18-13:10
13:1-4	13:1-10	13:1-4	13:1-4	
13:5-8		13:5-8	13:5-8	
13:9-10	Գազանը ցամաքից	13:9-10	13:9-10	Մուտ մարգարեն որպես գազանի ծառա
13:11-18	13:11-18	13:11-18	13:11-17 13:18	13:11-17 13:18
144,000-ի երգը	Գառը և 144,000	Դադար	Գառը և Նրա ժողովուրդը	Գառան գործընկերները
14:1-5	14:1-5	14:1-5	14:1-5	14:1-5
Երեք հրեշտակների պատգամները	Երեք հրեշտակների հռչակումը		Երեք հրեշտակները	Հրեշտակները հայտարարում են դատաստանի օրը

14:6-7	14:6-13	14:6-7	14:6-7	14:6-7
14:8		14:8	14:8	14:8
14:9-12		14:9-11	14:9-11	14:9-13
		14:12	14:12	
14:13		14:13	14:13	
			14:13b	
Երկրի հունձքը	Երկրի հունձքը հասել է		Երկրի հունձքը	Հեթանոսների հունձքը և խաղողի որթի բերքը
14:14-16	14:14-16	14:14-16	14:14-16	14:14-16
	Բարկության խաղողի հասնելը			
14:17-20	14:17-20	14:17-20	14:17	14:17-20
			14:18-20	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ («Աստվածաշնչյան քննարկության լավ ուղեցույց»)
Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դաբանալի է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 12:1-17

Ա. Մեկ այլ դադար սկսվում է Հայտ. 12: 1-ից և շարունակվում է մինչև Հայտ. 14:20: Սա մեկ ուրիշ յոթերի շարք է: Այս գրական բաժինը նկարագրում է հոգևոր բախումը երկիմաստ տերմինների մեջ

1. երկու թագավորությունները
2. երկու քաղաքները
3. երկու սպանված վկաները և նրանց սպանողները

- Բ. 1-6 համարները բնութագրում են բարի և չարի վերջնական (տիեզերական) պատերազմը դիցաբանական հասկացությունների մեջ՝ վերցված Հին Մերձավոր Արևելքի մշակույթներից (տես Գրանտ Օսբորն, *Հերմենևտիկ պարույրը/Grant Osborne, The Hermeneutical Spiral* էջ 229):
1. Բաբելոնյան արարչագործության պատմությունը - Թիամաթ (քառս), յոթ գլխանի հրեշ, որը գցեց երկնքի աստղերի մեկ երրորդը, ի տարբերություն Մարդուկի, Բաբելոն քաղաքի գերագույն չաստվածի, որը սպանում է նրան և դառնում է պանթեոնի գլխավորը:
 2. Եգիպտական առասպելը – Սեթ (Թիֆոն), կարմիր վիշապը ընդդեմ Իսիսի (Հաթոր), որը ծնեց Հորուսին: Հետագայում նա սպանեց Սեթին:
 3. Ուգարիթիկ Բաալ լեգենդ - Յամ (ջրերը) ընդդեմ Բաալի: Բաալը սպանում է Յամին:
 4. Պարսկական առասպելը - Ազի Դաբակա (չար վիշապ) ընդդեմ Ահուրա Մազդայի որդու (բարձր բարի չաստված):
 5. Հունական առասպելը - Պիտոնը (օձ / վիշապ) ընդդեմ հղի Լետոյի (նա ծնում է Ապոլոնին, որն էլ սպանում է Պիտոնին):
- Գ. Շատ դժվար է իմանալ, թե ինչպես կարելի է մեկնաբանել այս գլուխը: Ոմանք փորձում են մեկնաբանել այն պատմական տերմիններով, բայց թվում է, որ դա խորհրդանշական է այս դարաշրջանի հակա-աստվածային թագավորությունների և մեր Քրիստոսի նոր դարաշրջանի թագավորության միջև (տես Հայտ. 11:18; Մաղ. 2): Հետևաբար, սա պատմական ակնարկ է նաև Քրիստոսի ծնունդի և շեշտը դնում Մեսիական թագավորության գալստյան վրա: Սա անհատի (Մեսիայի) և խմբի (Աստծո ժողովրդի) դուալիզմ է ընդդեմ անհատի (սատանայի) և խումբ (դիվային ներշնչված անհավատների): Այս նույն դուալիզմը երևում է Եսայիայի Ծառայի Երգերում: Ծառան ազգային Իսրայելն է (տես Ես. 41-50), բայց նաև Մեսիան (տես Ես. 52: 13-53: 12):
- Դ. Պողոսը քննարկում է Քրիստոսի տիեզերական տիրապետությունը Կողոսացիս 1-2-ում (նաև Եբ.1: 2-3):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 12:1-6

¹Եւ մի մեծ նշան երեւեցաւ երկնքումը. Մի կին՝ արեգակն իր վերայ առած. Եւ լուսինը նորա ոտների տակ. Եւ նորա գլխի վերայ տասնեւերկու աստղերի պսակ: ²Եւ նա յղի լինելով՝ աղաղակում էր երկունք քաշելով եւ չարչարուելով որ ծնէ: ³Եւ մի ուրիշ նշան երեւեցաւ երկնքումը. եւ ահա մի մեծ վիշապ կրակի պէս կարմիր. որ եօթը գլուխ ուներ եւ տասն եղջիր, եւ նորա գլուխների վերայ եօթը թագ. ⁴Եւ նորա ազին քաշում էր երկնքի աստղերի երրորդ բաժինը, եւ նորանց գցեց երկրի վերայ եւ վիշապը կանգնած էր այն կնկայ առաջին որ պիտի ծնէր, որ երբոր ծնէ, կուլ տայ նորա զաւակին: ⁵Եւ նա մի արու զաւակ ծնեց, որ պիտի բոլոր ազգերին երկաթէ զաւազանով հովուէ եւ նորա որդին յափշտակուեցաւ Աստուծոյ մօտ եւ նորա աթոռի մօտ: ⁶Եւ կինը փախաւ անապատը, ուր Աստուածանից պատրաստուած տեղ ուներ, որ այնտեղ կերակրեն նորան հազար երկու հարիւրելվաթսուն օր:

12: 1 «Եւ մի մեծ նշան երեւեցաւ երկնքումը» Այս Հայտնության «յոթ նշանների» սկիզբն է: Սա Հովհաննեսի Ավետարանում հաճախ օգտագործվող հատուկ աստվածաբանական տերմին է (*sēmeion*) (տես Հովհ. 2: 11,23; 3: 2; 4:54; 6: 2,14,30; 7:31; 9:16; 10: 41; 11:47; 12: 18,37; 20:30): Այն այժմ յոթ անգամ է հանդիպում Հայտ. 12: 1 և 19:20 միջև, երկնքում նշաններ երեք անգամ (տես Հայտ. 12: 1,3; 15: 1) և նշաններ երկրի վրա չորս անգամ (տես Հայտ. 13: 13,14; 16:14; 19:20):

▪ **«երկնքումը»** Այս հավանաբար նշանակում է «երկնքում, ամպերում» և ոչ թե հենց բուն երկնքում: Հին Կտակարանում երկինք (ներ) տերմինը կարող է վերաբերել երկրի վրա գտնվող մթնոլորտին (տես Ծննդ. 1: 1,8-9,17,20; Սաղ. 104: 2-3) կամ այն վայրը, որտեղ Աստված է բնակվում (տես Սաղ. 11: 4; 103: 19; Ես. 66: 1; 2 Կոր.12): Այս երկինքաստությունն է պատճառը, որ ռաբբիները սկսեցին շահարկել երկինքների թվերը՝ երեք կամ յոթ:

Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐԿԻՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԻՆՔԸ, Հայտ. 4:1

▪ **«Մի կին...իր վերայ առած»** Այս կինը գեղեցիկ նկարագրված է որպես Հայտ. 17: 4-ի մեծ պռոնիկ, որը խորհրդանշում է հակա Աստվածային աշխարհի կայսրությունները՝ Բաբելոնը, Հռոմը և վերջին ժամանակի Նեոի աշխարհի համակարգը: Հովհաննեսի պատկերների աղբյուրի վերաբերյալ երկու տեսություններ են եղել.

1. Ծննդոց 3, որտեղ կա կին, օձ և տղա-երեխա
2. Հին Կտակարանում «ծնելու» մյուս խիստ ենթադրությունները (տես Ես. 26:17-18 Սեպտուագինդում և Ես. 66: 7-13)

Իսրայելը նկարագրվում է որպես կին, ով ծնում է (տես Միքիա 4:10), հետևաբար, այս կինը ներկայացնում է Աստծո ճշմարիտ ժողովուրդը (տես Հայտ. 12: 1-6), սակայն Հայտ. 12: 13-17 նա կլինի Նոր Կտակարանի ժողովուրդը, որը փախչելու է վիշապի գայրությից: Այլ տեսությունների համար տես Ալյան Ջոնսոնի *Հայտնությունը/Alan Johnson's Revelation*, էջ 117-119:

Ֆ.Ֆ. Բրյուսի *Հարցերի պատասխանները/ Answers to Questions* F. F. Bruce գրքում ասել է. «Կինը, որի մասին ես կարող եմ մտածել որպես Մեսիական համայնք կամ «Աստծո Իսրայել» հատկապես այն երևում է պաղեստինյան տեղական եկեղեցում՝ մայր եկեղեցու գերագանցությունը ... «Նրա սերնդի մնացորդը» լինելու է աշխարհի մյուս վայրերի քրիստոնյաները՝ Հայտ. 13: 7-ի հարձակման թիրախը» (էջ 140):

Ջորջ Ռ. Բեյլի-Մյուրեյն *Աստվածաշնչի նոր մեկնաբանության/ New Bible Commentary* George R. Beasley-Murray մեջ ասել է «Հին աշխարհի կրոնական մարդիկ ցավ քաշող կնոջը դիտում էին որպես կենդանակերպի տասներկու աստղերով պսակված աստվածուհի, հրեան դա հասկանում էր որպես Մայր Սիոն (տես Ես. 26:16; 27: 1; 49: 14-25; 54: 1-8; 66: 7-9), բայց Հովհաննեսի համար նա ներկայացնում էր Մեսիական համայնքի «Մորը»՝ հին և նոր ուխտերի Աստծո հավատացյալ ժողովուրդը» (էջ 1441):

▪ **«տասներկու աստղերի»** Այստեղ կրկին մեր ենթադրությունները թելադրում են մեկնաբանությունը:

1. Եթե դա Հին Կտակարանն է, ապա այն վերաբերում է տասներկու հրեական ցեղերին
2. Եթե դա միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականությունն է, ապա այն վերաբերում է կենդանակերպի նշաններին
3. Եթե դա Նոր Կտակարանն է, ապա այն վերաբերում է տասներկու Առաքյալներին

Տասներկուսը կանոնավոր աստվածաշնչյան խորհրդանշական թիվ է կառուցվածքի, կազմակերպության, խմբի համար: Տես Հատուկ Թեմա: Տասներկու թիվը Հայտ. 7:4-ում:

Սակայն 12-րդ գլխի իմաստը պայմանավորված չէ Հովհաննեսի սիմվոլիզմի պատշաճ նույնականացման հետ, այլ կոնտեքստի կենտրոնական ճշմարտությամբ: Այս սկզբունքը պետք է պահպանվի: Մենք չպետք է

1. ստիպենք մանրամասները
2. որոշ բաներ ընտրեք բառացիորեն և որոշ բաներ խորհրդանշականորեն
3. մեր մեկնաբանությունները ստիպել մեր պատմական իրավիճակի մեջ

12: 2 Ծննդաբերության ցավերը օգտագործվել են որպես խորհրդանիշ

1. սպասված, բայց հանկարծակի դեպքերի համար
2. ակնկալվող իրադարձության հետ կապված ցավի կամ խնդիրների համար
3. մեծ ներուժ ունեցող նոր բաների սկզբի համար

Հրեաները հավատում էին, որ «նոր դարաշրջանի» գալը կհանգեցնի հալածանքների և խնդիրների (տես Ես. 13: 8; 21:3; 26:17; 66:7-13; Մատթ. 24: 8; Մարկ. 13: 8; 1 Թես. 5: 3): Հովհաննեսն օգտագործում է այս գաղափարը՝ սատանայի և նրա հետևորդների և Աստծո և Նրա հետևորդների միջև եղած հակամարտությունը նկարագրելու համար (տես Ես. 66: 7-24):

Աշխարհի իրադարձությունները գնալով վատանալու են, բայց Աստված վերահսկում է պատմության մեջ (սա նախահազարամյայի և ոչ հազարամյայի տեսակետն է, իսկ հետհազարամյան ավելի լավատեսական է համաշխարհային պատմության մասին): Նրա հետևորդները պաշտպանված են հալածանքների և հաղթանակած ժամանակավոր պարտության մեջ, անգամ ֆիզիկական մահվան մեջ (տես Հովհ. 16: 20-21): Հարց է. «Ինչպե՞ս է Աստված պաշտպանելու Իր հետևորդներին»: Նրա կնիքը նրանց ճակատներին պաշտպանում է նրանց «Աստծու բարկությունից», բայց ոչ անհավատների հալածանքներից (նեղությունից): Աստված նրանց կողմն է, նրանց հետ և սիրում է նրանց, բայց էլի շատերը մահանալու են:

12: 3 «մեծ վիշապ՝ կրակի պես կարմիր. որ եօթը գլուխ ուներ եւ տասն եղջիր, եւ նորա գլուխների վերայ եօթը թագ» Մա է չարի և մեծ զորության նկարագրությունը (տես 13:1 և 17:3): Եղջյուրներն ու գլուխները խորհրդանշում են կատարյալ զորություն (տես Դան. 7) իսկ թագերը ներկայացնում են Բրիստոսի թագավորական տեղի չարի յուրացման փորձը:

«Վիշապ» տերմինը կարող է ակնարկել Հին Կտակարանը

1. Ծննդոց 3-ի օձը
2. քառսի երկու չար հրեշները
 - ա. Ռահաբը (տես Մաղ. 89:10; Ես. 51: 9-10)
 - բ. Լևիաթանը (տես Մաղ. 74:13-14; 104: 26; Հոբ 3: 8; 7: 12; 41:1; Ես. 27:1; Ամովս 9:3)
2. Նոր Կտակարանում չարի համար բազմաթիվ անուններ կան
 - ա. «սատանա/*satan*», 33 անգամ
 - բ. «սատանա/*devil*», 32 անգամ
 - գ. «փորձիչ» (տես Մատթ. 4: 3; 1 Թես. 3: 5)
 - դ. «չարը» (տես Մատթ. 6:13; 13:19; 1 Հովհ. 5:18)
 - ե. «թշնամի» (տես Մատթ. 13:39)
 - զ. «դևերի իշխան» (տես Մատթ. 9:34; 12:24)
 - է. «այս աշխարհի իշխանը» (տես Հովհ.12: 31; 14:30; 16:11)
 - ը. «օղի իշխանության իշխան» (տես Եփ. 2: 2)
 - թ. «այս աշխարհի աստվածը» (տես 2 Կոր. 4: 4)
 - ժ. «Բելիար» (տես 2 Կոր. 6:15)
 - ի. «Բեղզեբուդ» (տես Մարկ. 3:22; Դուկ. 11: 15,18-19)
 - լ. «վիշապ» (տես Հայտ. 12: 3,4,7,9; 20: 2)
 - խ. «օձ» (տես Հայտ. 12: 9,15; 20: 2)
 - ծ. «չարախոս» (տես Հայտ. 12: 10, 15)
 - կ. «ոսոխ թշնամին» (տես 1 Պետ. 5: 8)
 - հ. «մոնչացող, գոռոզ առյուծ» (տես 1 Պետ. 5: 8)

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՍՍՏԱՆԱ

SPECIAL TOPIC: SATAN

Այս թեման շատ բարդ է մի քանի պատճառներով.

1. Հին Կտակարանը չի բացահայտում բարու ոլիերիմ թշնամու, այլ որպես այլ ՅԱՀՎԵԻ

ծառա (տես A. B. Davidson, *OT Theology*, էջ 300-306), որն առաջարկում է մարդկությանը այլընտրանք և մեղադրում է մարդկությանը անհրավության մեջ: Կա միայն մեկ Աստված (տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ), մեկ գործություն/իշխանություն, մեկ պատճառ Հին Կտակարանում՝ ՅԱՀՎԵՆ (տես Ես. 45: 7; Ամովս 3: 6):

2. Աստծո անձնական ռիսկերի թշնամու գաղափարը զարգացել է միջաստվածաշնչյան (ոչ կանոնական) գրականության մեջ, պարսկական դուալիստիկ կրոնների ազդեցության ներքո (գրահադաշտական կրոն): Մա, իր հերթին, մեծապես ազդեց ռաբիական հուդայականության և էսսենական համայնքի վրա (այսինքն, Մեռյալ Ծովի մագաղաթները):

3. Նոր Կտակարանը զարգացնում է Հին Կտակարանյան թեմաները զարմանալիորեն սթափ, բայց ընտրովի, կատեգորիաներում:

Եթե մեկը չարի ուսումնասիրությանը մոտենում է աստվածաշնչյան աստվածաբանության տեսանկյունից (յուրաքանչյուր գիրք կամ հեղինակ կամ ժանր ուսումնասիրված և ուրվագծված է առանձին), ապա չարի տարբեր տեսակետներ են բացահայտվում:

Այնուամենայնիվ, եթե մեկը չարի ուսումնասիրությանը մոտենում է համաշխարհային կրոնների կամ արևելյան կրոնների ոչ աստվածաշնչյան կամ հավելյալ աստվածաշնչյան մոտեցումով, ապա Նոր Կտակարանյան զարգացման մեծ մասը ներկայացված է պարսկական դուալիզմի և հունա-հռոմեական սպիրիտիզմի տեսանկյունից:

Եթե մեկը ենթադրաբար հավատարիմ է Գրքի աստվածային հեղինակությանը (ինչպես ես եմ), ապա Նոր Կտակարանի զարգացումը պետք է դիտվի որպես պրոգրեսիվ հայտնություն: Քրիստոնյաները պետք է հսկեն հրեական ժողովրդական բանահյուսությանը կամ արևմտյան գրականությանը (Դանտե, Միլթոն) թույլ չտալու հետագա ազդեցություն գաղափարի վրա: Հայտնության այս բնագավառում կա խորհուրդ և անորոշություն: Աստված ընտրել է չհայտնել չարի բոլոր կողմերը, դրա ծագումը (տես Հատուկ Թեմա: Արուսյակ), նրա զարգացումը, նրա նպատակը, բայց հայտնում է նրա պարտությունը:

Հին Կտակարանում «սատանա» կամ «մեղադրող» տերմինը (BDB 966, KB 1317) կարող է վերաբերել երեք առանձին խմբերի

1. մարդ մեղադրողներ (տես 1 Թագ. 29: 4; 2 Թագ. 19:22; 3 Թագ. 11: 14,23,25; Սաղ. 109: 6)
2. հրեշտակային մեղադրողներ (տես Թվոց 22: 22-23; Հոբ 1-2; Զաք. 3: 1)
3. դիվային մեղադրողներ (տես 1 Մնաց. 21:1; 1 Թագ. 22:21; Զաք 13:2)

Հետագայում միայն միջկտակարանյան ժամանակահատվածում Մենդոց 3-ի օձը նույնանում է սատանայի հետ (այսինքն Իմաստության Գիրք 2.23-24; II Ենոք 31:3), և նույնիսկ ավելի ուշ դա դառնում է ռաբիական տարբերակ (տես *Sot* 9 և *Sanh* 29): Մենդոց 6-ի «Աստծո որդիները» հրեշտակ են դառնում I Ենոք 54:6: Ես սա նշում եմ, ոչ թե հաստատելու աստվածաբանական ճշգրտությունը, այլ ցույց տալու նրա զարգացումը: Նոր Կտակարանում այս Հին Կտակարանյան գործունեությունները վերագրվում է հրեշտակային, անձնավորված չարին (տես 2 Կոր. 11:3; Հայտ. 12: 9):

Անձնավորված չարի ծագումը դժվար է կամ անհնար (կախված է ձեր տեսանկյունից) որոշել Հին Կտակարանից: Դրա պատճառներից մեկը Իսրայելի խիստ մոնոթեիզմն է (տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ, ինչպես նաև 3 Թագ. 22:20-22; Ժող. 7:14; Ես. 45:7; Ամովս 3:6): Բոլոր պատճառները (տես Ես. 45:7; Ամովս 3:6) վերագրվում են ՅԱՀՎԵՆ, ցույց տալու Նրա եզակիությունն ու գերակայությունը (տես Ես. 43:11; 44:6,8,24; 45:5-6,14,18,21,22):

Հնարավոր տեղեկությունների աղբյուրներն են (1) Հոբ 1-2, որտեղ սատանան «Աստծո որդիներից» մեկն է (այսինքն, հրեշտակները) կամ 2) Եսայիա 14 և Եզեկիել 28, որտեղ հպարտ մերձավոր արևելքի թագավորներ (Բաբելոն և Տյուրոս) հնարավոր է, որ նկարագրում են սատանայի հպարտությունը (տես 1 Տիմ. 3: 6):

Ես այս մոտեցման վերաբերյալ խառը զգացումներ ունեմ: Եզեկիելը օգտագործում է Եդեմի պարտեզի փոխաբերությունը, ոչ միայն Տյուրոսի թագավորի համար, որպես սատանա (տես Եզ. 28:12-16), այլ նաև Եգիպտոսի թագավորի համար, որպես Բարի և չարի գիտության ծառ (Եզեկիել 31): Այնուամենայնիվ, Եսայիա 14, հատկապես հհ. 12-14-ը, կարծես, նկարագրում է հրեշտակային ապստամբությունը հպարտության միջոցով: Եթե Աստված ուզում էր մեզ բացահայտել սատանայի բնությունը և ծագումը, սա շատ շեղունակ ձև և տեղ է դա անել: Մենք պետք է զգուշանանք սիստեմատիկ աստվածաբանության միտումը տարբեր կտակարանների, հեղինակների, գրքերի և ժանրերի փոքր, երկիմաստ մասերը վերածելու և դրանք որպես մեկ աստվածային հանելուկ համադրելու:

Ես համաձայն եմ Ալֆրեդ Էդերսհայմի հետ (*The Life and Times of Jesus the Messiah*, հատոր 2, հավելվածներ XIII [էջ 748-763] և XVI [էջ 770-776]), որ ռաբբիական հուդայականությունը մեծ ազդեցության ենթարկվել պարսկական դուալիզմի և դիվային շահարկումների կողմից: Ռաբբիները այս ոլորտում ճշմարտության լավ աղբյուր չեն: Հիսուսը արմատապես տարբերվում է այս բնագավառում ժողովարանի ուսմունքներից: Կարծում եմ, որ ՅԱՀՎԵԻ ոխերիմ թշնամու գաղափարը զարգացել է երկու պարսկական դուալիզմի բարձր չաստվածների, *Ahkiman* և *Ormaza* կողմից, և այնուհետև մշակվել ռաբբիների կողմից ՅԱՀՎԵԻ և սատանայի աստվածաշնչյան դուալիզմի մեջ:

Նոր Կտակարանում, անշուշտ, պրոգրեսիվ հայտնություն կա չարի անձնավորության, բայց ոչ այնքան ճարտար, որքան ռաբբիները: Այս տարբերության լավ օրինակն է «պատերազմը երկնքում»: Սատանայի անկումը տրամաբանական անհրաժեշտություն է, բայց մանրունքները հայտնի չեն (տես Հատուկ Թեմա: Սատանայի և Նրա հրեշտակների անկումը): Նույնիսկ այն, ինչ տրված է, ծածկված է ապոկալիպտիկ ժանրի մեջ (տես Հայտ. 12: 4, 7, 12-13): Թեև սատանան պարտված է Հիսուսով և արքայված երկիր, նա դեռ գործում է որպես ՅԱՀՎԵԻ ծառա (տես Մաթ. 4: 1; Ղուկ. 22: 31-32; 1 Կոր. 5: 5, 1 Տիմ. 1:20):

Այս ոլորտում մենք պետք է ընդլայնենք մեր հետաքրքրասիրությունը: Գոյություն ունի գայթակղության և չարի անձնական ուժ, սակայն կա միայն մեկ Աստված, և մենք դեռևս պատասխանատու ենք մեր ընտրությունների համար: Կա հոգևոր պատերազմ, փրկությունից առաջ և հետո: Հաղթանակը կարող է միայն գալ և մնալ Երրորդության միջոցով: Չարը պարտվել է և կվերցվի (տես Հայտն. 20:10):

12: 4 «նորա ազին քաշում էր երկնքի աստղերի երրորդ բաժինը, եւ նորանց զցեց երկրի վերայ» Քանի որ «երկնքի աստղերը» տերմինը շատ հաճախ է օգտագործվում Հին Կտակարանում՝ կապված Աստծո սուրբերի հետ (տես Ծննդ. 15: 5; Եր. 33:22; Դան. 12:3), ոմանք ենթադրել են, որ սա վերաբերում է սրբերի, բայց կոնտեքստը կարող է վերաբերել հրեշտակներին (տես Դան. 8:10; 2 Պետ. 2: 4; Հուդա 1: 6): Ընկած հրեշտակները (այսինքն, ընկած աստղերը) ընդհանուր միտք են ապոկալիպտիկ գրականության մեջ (այսինքն 1 Ենք):

Սատանան պատկերված է երկնքի հրեշտակների հետ Աստծո առաջ Հորի 1-2 և Զաքարիա 3: Նա, հնարավոր է, «ծածկող քերովբե» էր (տես Եզ. 28: 12-18): Այս նկարագրությունը, օգտագործելով փոխաբերություններ Եդեմի պարտեզից, չի համապատասխանում Տյուրոսի թագավորին, բայց թագավորի հպարտությունն ու ամբարտավանությունը նման էր սատանային (ես ավելի ու ավելի անհարմար եմ զգում այս մոտեցման հետ, քանի որ Եզ. 31 Եգիպտոսի թագավորը նկարագրված է որպես բարի և չարի գիտության ծառ: Եզեկիելը պարբերաբար օգտագործում է Եդեմական տերմիններ՝ նկարագրելու թագավորներին): Հին Կտակարանում սատանան Աստծո թշնամին չէ, այլ մարդկության (տես Հայտ. 12:10): Սատանան չար չի ստեղծվել, այլ զարգացել և դարձել է բոլոր բարի և սուրբ բաների գլխավոր թշնամին (տես A. B. Davidson's *An Old Testament Theology*, էջ 300-306): Մի քանի անգամ ասվում է, որ նա դուրս է գցվել երկնքից (տես Ես. 14: 12; Եզ. 28:16; Ղուկ. 10:18; Հովհ. 12:31; և Հայտ. 12: 9,12): Խնդիրն այն է, երբ: Այն է

1. Հին Կտակարանի ժամանակ
 - ա. նախքան մարդու ստեղծվելը
 - բ. Հոբից որոշ ժամանակ անց, նախքան Եզեկիել 28-ը
 - գ. հետզերության շրջանում, բայց Չաքարիայից հետո
2. Նոր Կտակարանի ժամանակ
 - ա. Հիսուսի փորձությունից հետո (տես Մատթ. 4)
 - բ. յոթանասունի առաքելության ընթացքում (տես Ղուկ. 10:18)
 - գ. ապստամբության վերջի ժամանակի պահին (տես Հայտ. 12: 9):

Զարմանալի է, որ կարծում ես թե աստղերի երրորդ մասը վերաբերում է հրեշտակներին, որոնք ապստամբեցին Աստծո դեմ և ընտրեցին հետևել սատանային: Եթե այդպես է, ապա դա կարող է լինել միակ Սուրբգրային հիմքը, որ Նոր Կտակարանի դեերը կապված են ընկած հրեշտակների հետ (տես Հայտ. 12: 9,12): Մեկ-երրորդ թիվը կարող է կապված լինել փողերի պատիժների ժամանակ սահմանափակ կործանմանը (տես 8: 7-12; 9: 15,18) և ոչ թե կոնկրետ քանակի: Կամ, դա կարող է ներկայացնել սատանայի պարտությունը հրեշտակների մի մասի հետ ճակատամարտում: Հնարավոր է նաև, որ այն պարզապես արտացոլում է Բաբելոնի հնագույն առասպելը: Տեսեք կոնտեքստային մտքեր, Բ. Կետը:

Այս պահին օգտակար է հիշել, որ թեև այս հարցը հետաքրքիր է, հավանաբար, հեղինակի մտադրությունը չէր այս կոնտեքստում քննարկել (1) դիվայինի ծագումը; (2) սատանայի անկումը; կամ (3) կամ հրեշտակային ապստամբությունը երկնքում: Ապոկալիպտիկ գրականության մեջ տեսիլքի հիմնական թեման կարևոր է, բայց ներկայացման անմիջականությունը, մանրամասները և պատկերները դրամատիկ, խորհրդանշական, գեղարվեստական են: Դա մեր հետաքրքրասիրությունն է և հարգանքը Աստվածաշնչի նկատմամբ, որը մղում է մեր մանրամասն, տրամաբանական, վարդապետական ձևակերպումները: Զգույշ եղեք մանրամասները ստիպելուց; ապոկալիպտիկ գրականությունը հաճախ ճշմարիտ աստվածաբանությունը ներկայացնում է պատկերավոր շրջանակներում: Ճիշտ է, բայց խորհրդանշականորեն ներկայացված է:

▪ **«կույ տայ նորա զաւակին»** Այս երեխան վերաբերում է խոստացված Մեսիային (տես Հայտ. 12: 5): Սատանան ցանկանում է խոչընդոտել Աստծո ծրագրերը յուրաքանչյուր մակարդակում, թե փրկագնման տիեզերական ծրագիրը (անանպայմանական ուխտերը) և թե փրկագնման անհատական ծրագիրը (պայմանական ուխտերը, տես Մատթ. 13:19; 2 Կոր. 4: 4):

12: 5 «Եւ նա մի արու զաւակ ծնեց» Մա կարող է ակնարկ լինել Ես. 66: 7-8: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է Հովհաննեսը Հիսուսի մարմնացումից անցնում դեպի վախճանաբանական թագավորությանը: Նրանց միջև ընկած բոլոր բաները կատարվում են Հովհաննեսի Ավետարանում, բայց ոչ Հայտնության մեջ:

▪ **«որ պիտի բոլոր ազգերին երկաթ գաւազանով հովուէ»** Մա ակնարկ է Մաղ. 2: 9 կամ 110: 5-6 և հետևաբար, Մեսիական է (այսինքն, տես Ես.9:4): Հայտ. 19:15-ում այս արտահայտությունն օգտագործվում է Մեսիայի համար, իսկ Հայտ. 2: 26-27 դա օգտագործվում է սուրբերի համար: Մեսիայի (անհատի) և հավատացյալ համայնքի (համայնքային) միջև գոյություն ունի սահունություն, ինչպես որ Եսայիայի Ծառայի երգերում (այն է Իսրայել ազգը, տես 42: 1-9,19; 49: 1- 7; 50: 4-11; 52: 13-53: 12): Քանի որ չարն այժմ կառավարում է ազգերին, նոր առաջնորդ է գալու և մի օր ամբողջովին ինքն է թագավորելու:

▪ **«եւ նորա որդին յափշտակուեցաւ Աստուծոյ մօտ եւ նորա աթոռի մօտ»** Ոմանք կարծում են սա Քրիստոսի համբարձումն է, բայց մենք բաց ենք թողնում այս գրական միավորի այն կետը, որ Քրիստոսի պատմական կյանքի մասին խիստ ակնարկ չանենք: Հովհաննեսը, Հայտնության գրքում

չի քննարկում Հիսուսի երկրային կյանքը կամ մահը: Նա աստվածաբանորեն տեղափոխվում է մարմնավորումից դեպի բարձրանալը: Հայտնության ուշադրության կենտրոնում է փառավորված, մեծարված Քրիստոսը (տես Հայտ. 1: 4-20): Հովհաննեսի Ավետարանի ներկայացումը Հայտնության մեջ կենտրոնանում է ապաշխարության և Աստծուն փառք տալու վրա: Սա չի նշանակում արժեզրկել Հիսուսի կենտրոնական դերը (տես Հայտ. 5: 9,12; 7:14; 12:11), այլ կենտրոնանալ Նրա հավիտենական թագավորությունը բերելու դերի վրա (տես 1 Կոր. 15:25-28); Հոր և Որդու թագավորությունը:

12: 6 «կինը փախաւ անապատը» Շատերն այստեղ ակնարկ են տեսնում Ելիցի և անապատում թափառելու ժամանակաշրջանի մասին, որը հանդիպում է այս կոնտեքստում: Անապատի թափառելու ժամանակները ռաբբիների կողմից դիտվում էր որպէս ՅԱՀՎԵԻ և Իսրայելի միջև միավորման ժամանակաշրջան: Այս ժամանակահատվածում Նա հոգաց նրանց բոլոր կարիքները և մտերմիկ հարաբերության մեջ էր նրանց հետ:

▪ **«Աստուածանից պատրաստուած տեղ»** Թեև ընդհանուր կոնտեքստը արտացոլում է անապատում թափառելու ժամանակաշրջանը, այս արտահայտությունը կրում է այլ պատմական ենթադրություններ:

1. Եղիան Քերիթ հեղեղատի մոտ (տես 3 Թագ. 17: 1-7)
2. Եղիայի փախուստը Սինայի քարայր (տես 3 Թագ. 19:1-14)
3. յոթ հազար հավատարիմ (տես 3 Թագ. 19:18)
4. նրանք, ովքեր փախան Երուսաղեմի կործանումից 70թ-ին (տես Մատթ. 24:15-20; Մարկ. 13:12-18)

▪ **«հազար երկու հարիւրելւաթսուն օր»** Կրկին, սա կարծես թե հստակ չէ, բայց սահմանափակ է հալածանքների ժամանակաշրջանը: Այս նույն ժամանակահատվածը վերաբերում է մի քանի տարբեր ձևերի, որոնք հավասար են երեք ու կես տարվար:

1. «մի ժամանակ, և ժամանակներ և կես ժամանակ» (տես Դան. 7:25; 12:7; Հայտ. 12:14)
2. «2300 իրիկուն և առավոտ» (տես Դան. 8:14)
3. «քառասուներկու ամիս» (տես Հայտ. 11:2; 13:5); «1260 օր» (տես Հայտ. 11: 3; 12: 6); «1290 օր» (տես Դան.12:11); և «1335 օր» (տես Դան. 12: 12):

Յոթը կատարյալ թիվ է երբայերեն թվաբանության մեջ (տես Ծննդ. 1: 1-2: 3): 7-ից մի հաս պակասը խոսում է մարդկային անկատարության մասին և 666-ի (տես Հայտ. 13: 17-18) վերջնական անկատար մարդն է՝ հակաքրիստոսը (տես 2 Թես. 2): Նույն ձևով երեք ու կեսը խորհրդանշում է սահմանափակ, բայց անորոշ, հալածանքների ժամանակաշրջան: Տես ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: 42 ԱՄԻՍ, Հայտ. 11:2:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 12:7-10ա
 7Եւ պատերազմ եղաւ երկնքումը. Միքայելը եւ նորա հրեշտակները պատերազմեցին վիշապի դէմ. Եւ պատերազմեց վիշապը եւ իր զօրքերը. 8Եւ չ'կարողացան դէմ կենալ, եւ ոչ էլ տեղ գտնուեցաւ նորանց համար երկնքումը: 9Եւ վայր գցուեցաւ մեծ վիշապը՝ այն առաջի օձը, որ Բանասրկու եւ սատանայ է կոչվում, այն բովանդակ աշխարհքը մոլորեցնողը վայր գցուեցաւ երկրի վերայ եւ իր հրեշտակներն էլ իրան հետ վայր գցուեցան: 10Եւ մեծ ձայն լսեցի որ ասում էր երկնքումը.

12: 7 «պատերազմ եղաւ երկնքումը»

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՊԱՏԵՐԱԶՄ ԵՐԿՆՔՈՒՄ (Հայտնություն 12: 7-9)
SPECIAL TOPIC: WAR IN HEAVEN (from Revelation 12:7-9)

Այս պատերազմի ժամանակի մասին շատ քննարկումներ են եղել: Կարծես Հիսուսը այս մասին հիշատակում է Ղուկ. 10:18 և Հովհ. 12:31-ում: Սակայն իրադարձության ժամանակագրությունը նկարագրելու փորձը չափազանց բարդ է.

1. մինչև Ծննդոց 1: 1 (ստեղծագործությունից առաջ)
2. Ծննդոց 1: 1 և 1: 2 միջև (բացի տեսությունը)
3. Հին Կտակարանում Հոբի 1-2-ից հետո (սատանան երկնքում)
4. Հին Կտակարանում 3 Թագ. 22:21-ից հետո (սատանան երկնային ժողովքում)
5. Հին Կտակարանում Ջաքարիա 3-ից հետո (սատանան երկնքում)
6. Հին Կտակարանում, ինչպես Ես. 14:12; Եզ. 28:15 և 2 Ենովք 29: 4-5 (Արևելյան թագավորները դատապարտվեցին)
7. Նոր Կտակարանում Հիսուսի փորձությունից հետո (տես Մատթ. 4)
8. Նոր Կտակարանում յոթանասունի առաքելության ընթացքում (տեսավ, որ Սատանան երկնքից ընկնում է, տես Ղուկ. 10:18)
9. Նոր Կտակարանում Երուսաղեմի հաղթական մուտքից հետո (այս աշխարհի իշխանը դուրս է գցվում, տես Հովհ. 12: 31)
10. Նոր Կտակարանում Հիսուսի հարությունից և համբարձումից հետո (տես Եփ. 4:8; Կող. 2:15)
11. վերջնական ժամանակահատվածում (տես Հայտ.12: 7, հնարավոր է, որ սատանան փոթորիկ բարձրացրեց երեխային փնտրելու համար)

Մենք պարզապես պետք է դա տեսնենք որպես Աստծո և չարի զորքերի միջև գոյություն ունեցող հավիտենական պայքար: Այս պատերազմը պատրաստվում է ջախջախիչ պարտություն հասցնել վիշապին և նրա զորքին: Հայտնություն 20-ում նրանք հեռացվում և մեկուսացվում են: Տես Հատուկ Թեմա: Սատանայի և նրա հրեշտակների անկումը (Հայտ.12: 4):

▪ **«Միքայելը»** Աստվածաշնչում անուն ունեցող ընդամենը երկու հրեշտակ կա (այն է Միքայել, Գաբրիել): Այս հրեշտակը կոչվում է Իսրայել ազգի հրեշտակը Դան. 10: 13,21 և 12: 1: Նա կոչվում է հրեշտակապետ Հուդա 1: 9-ում: Նրա անունը նշանակում է «ով նման է Աստծուն»: Ոմանք դա համարում են մեկ այլ անուն Քրիստոսի համար, բայց դա կարծես թե շատ հեռուն է գնում: Աստծուն չի կարող սպառնալ չարի ապստամբությունը: Աստվածաշունչը երկիմաստ չէ, ինչպես պարսկական զրադաշտականությունը: Աստված հրեշտակին օգտագործելով հաղթում է չարին (թեև իրականում դա Քրիստոսի փրկագործությունն էր):

Իրավական փոխաբերության մեջ Միքայելը պաշտպանն է, իսկ սատանան գործում է որպես մեղադրյալ իսկ ՅԱՀՎԵՆ Դատավորն է: Միքայելը հաղթում է գործը

1. Քրիստոսի զոհաբերական մահվան, հարության և համբարձման շնորհիվ (տես Հայտ. 12:16)
2. եկեղեցու հավատարիմ վկայի շնորհիվ (տես Հայտ. 12: 11բ)
3. եկեղեցու համբերության շնորհիվ (տես Հայտ. 12: 11գ)

▪ **«պատերազմեց վիշապը եւ իր զորքերը»** Ստույգ ասել թե ովքեր են Սատանայի հրեշտակները դժվար է աստվածաշնչորեն նկարագրել: Շատերը նրանց համարում են որպես դիվային (տես Մատթ. 25: 41; Եփ. 6: 10): Բայց միշտ կա տարտարոսը գցված հրեշտակների հարցը (տես 2 Պետ. 2:4) և այն հրեշտակները, որոնք հիշատակված են Հայտ. 9:14, որոնք ակնհայտորեն վերահսկվում են Աստծո կողմից, բայց ակնհայտ չար հրեշտակներ են: Հրեշտակային աշխարհում հակամարտության մեծ մասը պարզապես անբացատրելի է (տես Դանիել 10):

Կա նաև շարունակական քննարկում, որը վերաբերում է Հին Կտակարանի ընկած հրեշտակների և Նոր Կտակարանի դների միջև եղած փոխհարաբերություններին: Այս թեմայի շուրջ Աստվածաշունչը լռում է: Միջաստվածաշնչյան ապոկալիպտիկ գրականությունը (մասնավորապես

1 Ենովք) պնդում է, որ Ծննդ. 6: 1-4-ի կիսով չափ հրեշտակ և կիսով չափ մարդու որդին Նոր Կտակարանի դևերն են, որոնք փնտրում են մարդկային մարմիններ՝ վերաբնակվելու համար: Սա պարզապես ենթադրություն է, բայց դա ցույց է տալիս, թե ինչ էին առաջին դարի հրեաները մտածում այս թեմայի մասին:

Աօրիստ ինֆինիտիվը չի համապատասխանում այս կոնտեքստին: Հնարավոր է, սեմիթիզմ է և կարող է թարգմանվել «պետք է պայքարել» (տես Ալան Ջոնսոն *Աստվածաշնչյան Մեկնաբանություն*/Alan Johnson *Expositor's Bible Commentary*, հատոր 12, «Հայտնություն», էջ 519, ծանոթագրություն # 7; Սա Հայտնության գրքի իմ սիրելի մեկնաբաններից մեկն է):

12: 8 Սա առաջինն է իրախուսական խոսքերի շարքում ուղղված հալածվող Եկեղեցուն: Հայտ. 12: 8, 11, 14-ը մեծ միախառնություն է տալիս Աստծո ժողովրդին, որը առաջին դարում և ամեն մի դարում հալածանքների էր ենթարկվում: Սատանան արդեն երկու անգամ պարտություն է կրել, մի անգամ, երբ փորձում է սպանել Երեխային (տես Հայտ.12:4), իսկ հիմա փորձում է շարժել Աստծո գահը (տես Հայտ. 12: 7-9); նա նաև պարտվելու է, երբ փորձելու է վերացնել Աստծո ժողովրդին երկրի երեսից:

▪ **«ոչ էլ տեղ գտնուեցաւ նորանց համար երկնքումը»** Սա նշանակում է, որ սատանան որոշ ժամանակով երկնքում է եղել (տես Հոբ 1-2; Զաք. 3; և 3 Թագ. 22: 21): Ուշադրություն դարձրեք հոգնակի դերանունին, որը նշանակում է, որ մյուս հրեշտակները սատանայի հետ միասին են:

12: 9 «վայր զցուեցաւ մեծ վիշապը՝ այն առաջի օձը, որ Բանասարկու եւ սատանայ է կոչվում» Այստեղ և Հայտ. 20: 2 (տես Սողոմոնի Բնաստությունը 2:24) միակ տեղն է, որտեղ սատանան ակնհայտորեն նույնացվում է Ծննդոց 3-ի օձի և անուղղակիորեն 2 Կոր. 11: 3: «Սատանա» տերմինը հունարեն «զրպարտիչ» է, իսկ «սատանա» բառը եբրայերեն «հակառակորդ» բառն է (տես 2 Թագ. 19:22; 3 Թագ. 11:14): Նրանք երկուսն էլ շեշտում են չարի գործառույթը որպես եղբայրներին զրպարտող (տես Հայտ. 12:10): «Սատանա» տերմինը Հին Կտակարանում սովորաբար հատուկ գոյական է, բայց դա երեք առանձնահատուկ դեպքերում է, (1) Հոբ 1-2; (2) Զաք. 3: 1-3; և (3) 1 Մնաց. 21: 1: «Վայր զցվեց », տես Հայտ. 12: 4 և 7-ում:

ՀՍՏՈՒՎ ԹԵՄԱ: ԱՆՁՆԱԿԱՆ ՉԱՐԸ

SPECIAL TOPIC: PERSONAL EVIL

I. ՍՍՏԱՆԱՆ ՇՍՏ ԲԱՐԴ ԹԵՄԱ Է

Ա. Հին Կտակարանը չի բացահայտում է բարու ռիսերիմ թշնամուն, այլ ՅԱՀՎԵԻ սպասավորը, որը մարդկությանը առաջարկում է այլընտրանք և մեղադրում մարդկությանը անիրավության մեջ (A. B. Davidson, *Old Testament Theology*, էջ 300-306):

Բ. Աստծո անձնական ռիսերիմ թշնամու գաղափարը զարգացել է միջաստվածաշնչյան (ոչ կանոնական) գրականության մեջ պարսկական կրոնի (գրադաշտության) ազդեցության տակ: Սա էլ, իր հերթին, մեծապես ազդել է ռաբունական հուդաիզմի վրա (Իսրայելի գերությունը Բաբելոնում, Պարսկաստան):

Գ. Նոր Կտակարանը զարգացնում է Հին Կտակարանի թեմաները զարմանալիորեն կատարյալ կերպով, բայց ընտրողաբար, ըստ կատեգորիաների:

Եթե մեկը մոտենում է չարի մասին ուսումնասիրությանը աստվածաշնչյան աստվածաբանության տեսանկյունից (յուրաքանչյուր գիրք կամ հեղինակ կամ ժանր ուսումնասիրվում և ուրվագծվում է առանձին), ապա չարի մասին շատ տարբեր տեսակետներ են բացահայտվում:

Եթե, այնուամենայնիվ, մեկը մոտենում է չարի մասին ուսումնասիրությանը համաշխարհային կրոնների կամ արևելյան կրոնների ոչ աստվածաշնչյան կամ լրացուցիչ

աստվածաշնչյան մոտեցումով, ապա շատ Նոր Կտակարանյան զարգացումներ ստվերապատված են Պարսից դուալիզմով և հունա-հռոմեական սպիրիտիզմով /ոգեհարցությամբ:

Եթե մեկը կանխակարծիքորեն հավատարիմ է Սուրբ Գրքի աստվածային հեղինակությանը (ինչպես ես եմ), ապա Նոր Կտակարանի զարգացումը պետք է դիտարկել որպես առաջադեմ հայտնություն: Քրիստոնյաները պետք է զգուշանան հրեական բանահյուսությունից կամ անգլերեն գրականությունից (այսինքն, Դանթե, Միլթոն), որպեսզի ավելի հստակ լինի գաղափարը: Իհարկե, հայտնության այս ոլորտում կա առեղծված և անորոշություն: Աստված ընտրել է չբացահայտել չարի բոլոր ասպեկտները, նրա ծագումը (տես Հատուկ Թեմա: Արուսյակ), նրա նպատակը, բայց Նա հայտնել է նրա պարտությունը:

II. ՄԱՏԱՆԱՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Հին Կտակարանում «աստանա» (BDB 966) կամ «մեղադրող» տերմինը կարծես թե, վերաբերում է երեք առանձին խմբերի:

Ա. Մարդուն մեղադրողներ (1Թագ.29: 4; 2Թագ.19:22; 3Թագ. 11: 14,23,25; Սաղ. 109: 6,20,29)

Բ. հրեշտակին մեղադրողներ (Թվոց 22: 22-23; Զաք. 3: 1)

1. Տիրոջ Հրեշտակը - Թվ. 22: 22-23

2. Սատանան - 1 Մնաց. 21:1; Հոբ 1-2; Զաք. 3: 1

Գ. դևերին (հավանաբար սատանան) մեղադրողներ (3 Թագ. 22:21; Զաք. 13: 2)

Միայն ավելի ուշ միջկտակարանյան ժամանակահատվածում է Օննդոց 3-ի օձը նույնացվեց սատանայի հետ (տես Գիրք Իմաստության 2: 23-24; 2 Ենովք 31: 3) և նույնիսկ ավելի ուշ սա դարձավ ռաբունական տարբերակ (տես *Sot9* և *Sanh.* 29): Օննդոց 6 «Աստծո որդիները» դարձան 1 Ենովքի 54: 6 չար հրեշտակները: Նրանք դարձան չարի ծագումը ռաբունական աստվածաբանության մեջ: Ես սա նշում եմ, ոչ թե պնդելու դրա հոգևոր ճշգրտությունը, այլ ցույց տալու դրա զարգացումը: Նոր Կտակարանում այս հինկտակարանյան գործողությունները վերագրված են հրեշտակային, անձնավորված չարին (այսինքն, սատանային) 2 Կոր. 11: 3; Հայտն 12: 9:

Անձնավորված չարի ծագումը դժվար կամ անհնար է (կախված ձեր տեսանկյունից) որոշել Հին Կտակարանից: Պատճառներից մեկը Իսրայելի ուժեղ միաստվածությունն է (տես 2 Օր. 6:4-6; 3 Թագ. 22: 20-22; Ժող. 7:14; Ես. 45: 7; Ամովս 3: 6): Բոլոր պատճառահետևանքային կապը վերագրված էր ՅԱՀՎԵԻՆ՝ ցույց տալու Նրա եզակիությունը և առաջնայնությունը (տես Ես. 43:11, 44: 6,8,24; 45: 5-6,14,18,21,22):

Հնարավոր տեղեկատվության աղբյուրներն են (1) Հոբ 1-2, ուր սատանան «Աստծո որդիներից» մեկն է (այսինքն, հրեշտակները), կամ (2) Եսայիա 14; Եզեկիել 28, որտեղ հպարտ հարևան արևելյան թագավորները (Բաբելոն և Տյուրոս) օգտագործվում են՝ ցույց տալու սատանայի հպարտությունը (տես 1 Տիմ. 3: 6): Ես ունեմ խառը զգացմունքներ այս մոտեցման մասին: Եզեկիելը օգտագործում է Եդեմի Պարտեզի փոխաբերությունները ոչ միայն Տյուրոսի թագավորի համար որպես սատանա (տես Եզեկ. 28: 12-16), այլ նաև Եգիպտոսի թագավորի, որպես բարու և չարի գիտության ծառ (Եզեկիել 31): Մակայն, Եսայիա 14, մասնավորապես հհ. 12-14, նկարագրում են հրեշտակային խռովությունը հպարտության միջոցով: Եթե Աստված ուզում է բացահայտել մեզ համար սատանայի առանձնահատուկ բնությունն ու ծագումը, սա շատ անուղղակի ձև և տեղ է դա անելու համար (տես Հատուկ Թեմա: Արուսյակ): Մենք պետք է հսկենք սիստեմատիկ աստվածաբանության միտումը՝ վերցնելու տարբեր Կտակարաններից, հեղինակներից, գրքերից և ժանրերից փոքր, երկիմաստ մասեր և համադրել դրանք որպես մեկ աստվածային

III. փազլի կտոր:
ՄԱՏԱՆԱՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Alfred Edersheim (*The Life and Times of Jesus the Messiah*, հատ. 2, հավելվածներ XIII [էջ 748-763] և XVI [էջ 770-776]) ասում է, որ ռաբունական Հուդայականության վրա արդեն չափազանց ազդել է Պարսից դուալիզմը և դիվային մտորմունքը: Ռաբբիներն ճշմարտության համար լավ աղբյուր չեն այս ոլորտում: Հիսուսը արմատապես տարբերվում է ժողովարանի ուսմունքներից: Ես կարծում եմ, որ հրեշտակային միջնորդության և ընդդիմության ռաբունական գաղափարը Սինա սարի վրա Մովսեսին օրենքը տալու ժամանակ, դուռ բացեց դեպի ՅԱՀՎԵԻ, ինչպես նաև մարդու ռիսերիմ-հրեշտակային թշնամու գաղափարի համար: Կան երկու բարձր չաստվածներ Պարսից (գրադաշտական) դուալիզմի մեջ,

1. *Ahura Mazda*, ավելի ուշ կոչվեց *Ohrmazd*, որը ստեղծող աստված էր, բարի աստվածը
2. *Angra Mainyu*, ավելի ուշ կոչվեց *Ahriman*, կործանող հոգի, չար աստվածը

Նրանք պայքարում են երկրի վրա որպես մարտի դաշտ գերակայության համար: Այս դուալիզմը զարգացավ ՅԱՀՎԵԻ և սատանայի հուդայական սահմանափակ դուալիզմի մեջ:

Անշուշտ Նոր Կտակարանում կա պրոգրեսիվ հայտնություն, որպես չարի զարգացում, բայց ոչ այնպես մշակված ինչպես ռաբբիներն են հոչակում: Այս տարբերության լավ օրինակ է «պատերազմ երկնքում»: Սատանայի անկումը տրամաբանական անհրաժեշտություն է, բայց առանձնահատկությունները չեն տրված (տես Հատուկ Թեմա: Սատանայի Անկումը և Նրա Հրեշտակները): Նույնիսկ այն, ինչ տրված է քողարկված է ապոկալիպտիկ ժանրի ներքո (տես Հայտ. 12: 4,7,12-13): Չնայած սատանան պարտվել է և արտաքսվել երկիր, նա դեռ գործում է որպես ՅԱՀՎԵԻ սպասավոր (տես Մատթ. 4: 1; Ղուկ. 22: 31-32; 1 Կոր. 5: 5; 1 Տիմ. 1:20):

Մենք պետք է սանձենք մեր հետաքրքրասիրությունը այս ոլորտում: Կա գայթակղության և չարի անձնական ուժ, բայց կա միայն մեկ Աստված և մարդկությունը դեռ պատասխանատու է իր ընտրության համար: Կա հոգևոր պայքար, փրկությունից թե առաջ և թե հետո: Հաղթանակը միայն կարող է գալ և մնալ Սուրբ Երրորդության միջոցով: Չարը արդեն պարտված է և վերանայու է (տես Հայտ. 20:10):

▪ **«բովանդակ աշխարհքը մոլորեցնողը»** Այս նկարագրում է չարի առաքելությունը: Ինչպես ավետարանն է տիեզերական (տես Մատթ. 28: 18-20; Ղուկ. 24:47; Գործք 1:8), այնպես էլ հակաավետարանը: Լավագույն գիրքը, որը ես կարդացել եմ Աստվածաշնչում Սատանայի զարգացման մասին ծառայից՝ թշնամի, A. B. Davidson's *A Theology of the Old Testament*, էջ 300-306: Սատանայի առաքելությունը նկարագրված է 2 Կոր. 4: 4; 1 Պետ. 5: 8; Հայտ. 13:14; 19:20; 20: 3,8,10; 2 Հովհ. 7: Դժվար է պատկերացնել սատանային, որպես Աստծո ծառա, բայց համեմատիր 2 Թագ. 24: 1-ը 1 Մնաց. 21: 1-ի հետ:

▪ **«այն վայր զգուեցաւ երկրի վերայ»** «Վայր զգված» տերմինը այս կոնտեքստում օգտագործվում է մի քանի անգամ; երկու անգամ Հայտ. 12: 9; Հայտ.12:10 և Հայտ. 12:13-ում: Այն նաև օգտագործվում է Հայտ. 19:20; 20: 3,10,14,15 և հնարավոր է ակնարկ Ես. 14:12 կամ Ղուկ. 10: 18; և հավանաբար Հովհ. 12:31:

Երկիրը դառնում է սատանայի գործունեության ոլորտը: Տես Սատանայի անկումը, Հայտ. 12:4 և 7:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 12:10բ-12

Հիմա փրկութիւնը եւ զօրութիւնը եւ թագաւորութիւնը եղաւ մեր Աստուծուն, եւ իշխանութիւնը եղաւ նորա Օծեալին, որ վայր գցուեցաւ մեր եղբայրների չարախօսը, որ չարախօսում էր նորանցից Աստուծոյ առաջին ցերեկ եւ գիշեր. ¹¹Եւ նորանք յաղթեցին նորան՝ Գառի արիւնովը եւ իրանց վկայութեան խօսքովը. եւ չ'սիրեցին իրանց հոգին մինչեւ ի մահ: ¹²Սորա համար ուրախացէք, ով երկինք, եւ որ բնակուած էք նորանում. վայր երկրին եւ ծովին, [եւ նորանցում բնակողներին] որ Բանասարկուն վայր իջաւ ձեզ մօտ, որ մեծ բարկութիւն ունի, գիտենալով, որ քիչ ժամանակ ունի:

12: 10բ-12 Սա երկնքում բարձր ձայնով մեկի պատգամն է:

12:10 «փրկութիւնը եւ զօրութիւնը եւ թագաւորութիւնը եղաւ մեր Աստուծուն, եւ իշխանութիւնը եղաւ նորա Օծեալին» Սա գրական է համարժեք է Հայտ. 11: 15-18: Վերջը արդեն ներկա է, և Աստված հաղթանակած է: Սա շատ օգտակար էր մի խումբ հավատացյալների համար, որոնք տառապում էին ծայրահեղ հալածանքներով, անգամ մահով:

▪ **«մեր եղբայրների չարախօսը»** Սա ցույց է տալիս, որ Հայտ. 12: 10-ի ձայնը հրեշտակ չէր, բայց, հավանաբար, հավատացյալներ, հնարավոր է Հայտ. 6: 9-11-ի նահատակները:

Երբայերեն սատանա բառը նշանակում է «մեղադրող»: Մենք տեսնում ենք սատանային այս դերում, Հոբ 1: 9-11 և Զաք. 3: 1:

▪ **«որ չարախօսում էր նորանցից Աստուծոյ առաջին ցերեկ եւ գիշեր»** Սատանան երկնքից դուրս է գցվում, մինչդեռ նա դեռ չարախոսում է հավատարիմներից Աստծո առաջ: Սա այս ժանրի սահունությունն է: Նրա գործությունը կտրված է, բայց նա դեռ ակտիվ է (սակայն, սահմանափակված է Աստծո կողմից, տես Հոբ 1-2):

12:11 «Եւ նորանք յաղթեցին նորան՝ Գառի արիւնովը եւ իրանց վկայութեան խօսքովը» Հաղթանակն արդեն հաղթած է Աստծո Մեսիայի փոխարինող քավության շնորհիվ (տես Հայտ. 1: 5; 7:14; 1 Պետ. 1:18-19; 1 Հովհ.1:7): Այս քավությունը ներառում է երկունս էլ

1. Աստծո շնորհքը Քրիստոսի զոհաբերական մահվան միջոցով (տես Մարկ. 10:45; 2 Կոր. 5:21)
2. հավատացյալներից հավատքի արձագանք է պահանջվում (տես Հայտ. 6: 9; Մարկ. 1:15; Հովհ. 1:12; 3:16; Գործք 3:16; Գործք 3:19; 20:21)և այդ հավատքի բաժնեկցում՝ ապրելակերպ և բանավոր)

Այս արտահայտությունը շատ նման է Հայտ. 14:12-ում: Հայտ.12: 11-ի և 17-ի միջև շատ նմանություն կա: Հայտնություն 11-ում երևում է նկարագրություն փրկության մասին, իսկ Հայտ. 12:17 կարծես նկարագրում է քրիստոնեական հաստությունը և հաստատականությունը: Ուշադրություն Քրիստոսի հաղթանակը տեղի է ունենում Գողգոթայում, այլ ոչ թե հազարամյակի ընթացքում:

Արևելահայերեն «եւ չ'սիրեցին իրանց հոգին մինչեւ ի մահ»

Արևմտահայերեն «եւ իրենց կեանքը չսիրեցին մինչեւ մահ»

NASB «և նրանք չսիրեցին իրենց կյանքը նույնիսկ մինչև մահ»

NKJV «և նրանք չսիրեցին իրենց կյանքը մինչև ի մահ»

NRSV «քանի որ մահվան առջև չեն կանգնել կյանքին»

TEV «պատրաստ էին հրաժարվել իրենց կյանքից և մահանալ»

NJB «քանի որ նույնիսկ մահվան առջև նրանք չեն կապվում կյանքի հետ»

Առաջին դարի հավատացյալներն ու նրանց ընտանիքները սարսափելի մահեր ունեցան (ինչպես բոլոր ժամանակներում): Նրանք կնքված և պաշտպանված են Աստծո կողմից, սակայն նրանք ենթակա են հալածանքների անհավատների կողմից: Քրիստոսի հանդեպ նրանց հավատքն ավելի ուժեղ էր, քան մահվան վախը (տես Հայտ. 2: 10; Մարկ. 8:35; 13:13; Ղուկ. 14:26; Հովհ. 12:25):

12:12 «Սորա համար ուրախացե՛ք, ով երկինք, եւ որ բնակուած էք նորանում» Սա ներկա չեզոք հրամայական է (տես Հայտ. 18:20): Դա կարող է ակնարկ լինել Սաղ. 96:11 կամ Ես. 49:13: Երկինքը պետք է ուրախանա, քանի որ սատանան դուրս է գցվում, բայց վայ երկրին:

«Երկինք» բառի հոգնակին օգտագործվում է Հին Կտակարանում որպես (1) երկրի վրայի մթնոլորտը (տես Ծննդ.1) և (2) տեղը, որտեղ Աստված է բնակվում: Այս կոնտեքստում դա # 2 է:

«Բնակվել» տերմինը (NASB, NKJV, NRSV) կամ «այնտեղ ապրել» (TEV, NJB) տերմինը «խորան» բառի գոյականից է առաջացել: Դա նշանակում է մշտական բնակություն հաստատել Աստծո հետ (տես Հայտ. 7: 15; 12:12; 13: 6; 21: 3 և Հովհ. 1:14 Քրիստոսը մեզ հետ):

- **«բարկություն»** Տես ամբողջական գրառումը, Հայտ. 7:14:
- **«գիտենալով, որ քիչ ժամանակ ունի»** Սա, կարծես, վերաբերում է Քրիստոսի համբարձման (տես Գործք 1:9-11) և Երկրորդ Գալստյան միջև եղած ժամանակահատվածին, որը Հովհաննեսն ու առաջին դարի քրիստոնյաները մտածում էին, որ այն շատ շուտ է լինելու: Արդեն գրեթե 2000 տարի է; յուրաքանչյուր սերունդ ունի Տիրոջ ցանկացած պահի վերադարձի հույսը: Հավատացյալներին զգուշացրել էին այս ուշացման մասին 2 Թես. և Մատթ. 24: 45-51: Զգուշացե՛ք, որ հետաձգումը չնվազեցնի հավատքը (տես 2 Պետ. 3: 3-4):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՇԻՆ ՀԵՍՈՒՄԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ, ԲԱՅՑ ՈՉ ԴԵՆ (ՆԿ պարադոքսը)
SPECIAL TOPIC: THE ANY-MOMENT RETURN OF JESUS VS. THE NOT YET (NT paradox)

- Ա. Նոր Կտակարանի վախճանաբանական հատվածները արտացոլում են Հին Կտակարանի մարգարեական հասկացողությունը, որը վերջին ժամանակները դիտում է ժամանակակից երևույթների միջոցով:
- Բ. Մատթ. 24, Մարկ. 13 և Ղուկ. 21-ը այնքան բարդ են մեկնաբանելու համար, քանի որ միաժամանակ մի քանի հարց են լուծում, թե:
 1. Ե՞րբ է Տաճարը կործանվելու:
 2. ո՞րն է Մեսիային վերադառնալու նշանը:
 3. Ե՞րբ է այս ժամանակը ավարտվելու (տես Մատթ. 24:3):
- Գ. Վախճանաբանական հատվածների Նոր Կտակարանյան ժանրը սովորաբար ապոկալիպտիկ և մարգարեական լեզվի համադրությունն է, որը միտումնավոր երկիմաստ և խիստ խորհրդանշական է (տես D. Brent Sandy, *Ploswhares and Pruning Hooks: Rethinking the Language of Biblical Prophecy and Apocalyptic*):
- Դ. Նոր Կտակարանում մի քանի հատվածներ (տես Մատթ. 24, Մարկ. 13, Ղուկ. 17 և 21, 1 և 2 Թեսաղոնիկեցիս և Հայտնություն) վերաբերում են Երկրորդ Գալուստին: Այս հատվածները շեշտում են.
 1. դեպքի ճշգրիտ ժամանակը անհայտ է, բայց դեպքը որոշակի է
 2. մենք կարող ենք իմանալ իրադարձությունների ընդհանուր ժամանակը, բայց ոչ կոնկրետ ժամանակը
 3. դա տեղի կունենա հանկարծակի և անսպասելիորեն
 4. մենք պետք է աղոթքով, պատրաստ և հավատարիմ լինենք հանձնարարված առաջադրանքներին:
- Ե. Գոյություն ունի աստվածաբանական պարադոքսալ լարվածություն

1. ցանկացած պահի վերադարձը (տես Ղուկ. 12: 40,46; 21:36; Մատ.24: 27,44) և
 2. այն փաստը, որ պատմության մեջ որոշ իրադարձություններ պետք է լինեն (Ջ. ստորև)
- Չ. Նոր Կտակարանը նշում է, որ որոշ իրադարձություններ կլինեն Երկրորդ գալուստից առաջ.
1. Ավետարանը քարոզվելու է ամբողջ աշխարհին (տես Մաթ. 24:14; Մարկ. 13:10)
 2. մեծ հավատուրացությունը/ավերածի պղծությունը (Մաթ. 24:10-13,21; 1 Տիմ. 4:1; 2 Տիմ. 3:1; 2 Թես. 2:3)
 3. «մեղքի մարդու» հայտնություն (տես Դան. 7: 23-26; 9: 24-27; 2 Թես. 2: 3)
 4. խափանողի վերցվելը (տես 2 Թես. 2: 6-7)
 5. հուսով եմ, որ հրեաների արթնությունը (տես Չաք. 12:10; Հռ.11)
- Է. Ղուկաս 17: 26-37-ը գուցահեռ չէ Մարկոսին: Այն ունի մասնակի Սինոպտիկ գուցահեռություն Մաթ. 24: 37-44-ի հետ:
- Ը. Քրիստոսի շուտ վերադարձի քննարկման համար, տես Հատուկ Թեմա: Շուտ Վերադարձը
- Թ. Հետաձգված վերադարձի քննարկման համար, տես Հատուկ Թեմա: Հետաձգված Երկրորդ Գալուստը

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 12:13-17

¹³Եւ երբոր տեսաւ վիշապը, թէ վայր գցուեցաւ երկրի վերայ, ընկաւ այն կնկայ ետեւից որ արու գաւակը ծնեց: ¹⁴Եւ այն կնկան երկու մեծ արծուի թեւ տրուեցաւ, որ թռչի անապատն իր տեղը. ուր որ կերակրվում է մի ժամանակ, եւ ժամանակներ եւ կէս ժամանակ օձի երեսիցը: ¹⁵Եւ օձն իր բերանիցը գետի պէս ջուր թափեց այն կնկայ ետեւից, որ նորան ընկողմէ: ¹⁶Եւ երկիրն օգնեց այն կնկան, եւ երկիրն իր բերանը բացաւ եւ այն գետը կուլ տուաւ որ վիշապն իր բերանիցը թափեց: ¹⁷Եւ վիշապը բարկացաւ այն կնկայ վերայ, եւ գնաց պատերազմ անելու նորա միւս գաւակների հետ, որ Աստուծոյ պատուիրանքները պահում են, եւ Յիսուսի [Քրիստոսի] վկայութիւնն ունին:

12:13 «կնկայ» Հնարավոր է, որ սկզբից «կինը» վերաբերում էր Հին Կտակարանի հավատացյալ համայնքին: Այժմ այն վերաբերում է Նոր Կտակարանի Աստծո ժողովրդին (տես Հայտ. 12:17; 13: 7): *Նոր Կտակարանում Բառային պատկերները/Word Pictures in the New Testament*, հատոր 6, A. T. Robertson նրան կոչում է «ճշմարիտ Իսրայելը երկրի վրա» (էջ 395):

12:14 «այն կնկան երկու մեծ արծուի թեւ տրուեցաւ» Այս արծվի թևերը խորհրդանշում են Աստծո պաշտպանությունը և հոգատարությունը (տես Ելից 19:4; 2 Օր. 32:11; Սաղ. 36:7; 57: 1; 63: 7; 90: 1,4; և Ես. 40:31): Սա կարող է լինել մեկ այլ ակնարկ նոր ելիցի/արտագաղթի համար:

- **«որ թռչի անապատն իր տեղը»** Անապատը դիտվում է որպես աստվածային պահպանության վայր, որը հիշատակվում է Իսրայելի պատմության մեջ անապատում թափառելու շրջան (տես Հայտ. 12: 6): Դա մեծ խրախուսանք կլինի նեղություն կրող եկեղեցու համար:
- **«մի ժամանակ, եւ ժամանակներ եւ կէս ժամանակ»** Սա ակնարկ է Դան. 7:25; 12: 7: Այս արտահայտության մասին լրիվ նշումը տես Հայտ. 11:2 և 12:6:

12:15 «օձն իր բերանիցը գետի պէս ջուր թափեց» Սրա համար ճշգրիտ Հին Կտակարանյան գուցահեռ չկա: Դա կարող է փոխաբերություն լինել, կապված Աստծո բարկության հետ Ովս. 5: 10-ում կամ նեղությունների և ցավերի ժամանակների համար փոխաբերություններ, ինչպես Սաղ. 18: 4; 124: 4-5: Բայց քանի որ 12-րդ գլխում շատ պատկերներ կան Հին Մերձավոր Արևելքի ստեղծագործության առասպելներից, հնարավոր է վերաբերում է ջրային քառսին, բարու և չարի չարագործության առաջնային պայքարին, կարգուկանոնը ընդդեմ քառսին:

Բնությունը պայքարում էր Բարաքի և Դեբորայի համար, քանանական Հասոր քաղաք և նրա գորագլուխ Սիսարայի դեմ.

1. անձրևը կանգնեցրեց նրանց մարտակառքերը (տես Դատ. 5: 4)
2. նույնիսկ աստղերը (կարծում էին որպես հրեշտակային ուժեր) կովեցին Սիսարայի դեմ (տես Դատ. 5: 20)

12:17 «... եւ գնաց պատերազմ անելու նորա միւս զաւակների հետ» Չարը փորձեց ոչնչացնել Մեսիական համայնքին,

1. կործանելով Մեսիային
2. կործանելով մայր եկեղեցուն
3. կործանելով բոլոր Մեսիական հետևորդներին

«Պատերազմ անել» արտահայտությունը հոգևոր, քաղաքական և տնտեսական հակադրությունների փոխաբերությունն է: Սա ակնարկ է Դան. 7:21 (տես Հայտ. 11: 7; 13: 7): Այս հալածանքը Քրիստոսի միջոցով եկեղեցու հաղթանակի վկայությունն է (տես Փիլ. 1:28):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Նկարագրեք յոթերորդ փողի բովանդակությունը:
2. Ինչու է Ուխտի տապանակի տեսիլքը այնքան քաջալերող այս առաջին դարի քրիստոնյաների համար:
3. Ո՞վ է Հայտնության 12-ի կինը:
4. Ե՞րբ է տեղի ունեցել այս պայքարը երկնքում:
5. Ինչպե՞ս են դևի հրեշտակները կապվում դիվայինին:
6. Ի՞նչ է նշանակում «մի ժամանակ, ժամանակներ և կես ժամանակ» արտահայտությունը Դանիելի և Հայտնության մեջ:
7. Ինչպե՞ս է այս հատվածը խրախուսում առաջին դարի հալածվող քրիստոնյաներին:

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 13:1-18

- Ա. Գլուխ 13-ը Հայտ. 12: 13-17-ի պատկերների հետագա զարգացումն է:
- Բ. Այս գլխի Հին Կտակարանյան ֆոնը Դանիել 7 է: Դանիելի կանխատեսած չորս Մերձավոր Արևելյան կայսրությունները միավորված են այս մեկ վերջնական, տիեզերական, հակա-Աստվածային, վերջին ժամանակի թագավորության մեջ:
- Գ. Առաջին դարի կայսրի երկրպագությունը (հատկապես Փոքր Ասիայում) զագանի երկրպագության մի պատմական իրականացում է, ինչպես կլիինի մեղքի մարդու հետ վերջին ժամանակին (տես 2 Թես. 2) և Դան. 7-ի փոքր եղջյուրը (տես Հայտ. 13: 8,11,20,25), որը դուրս է գալիս չորրորդ թագավորությունից՝ Հռոմից:

- Դ. Գազանը նույնացվել է երկու ձևով
1. Որպես շարունակական, կեղծ ուսմունք / ուսուցիչ (ներ) (տես 1 Հովհ. 2: 18,22; 4: 3; 2 Հովհ. 7): Այն հոգնակի է և եզակի, ներկա և ապագա:
 2. Որպես իրական մարդ, հնարավոր է չար մարդկանց նախապատկերը պատմության մեջ (Անտիոքոսը, Հռոմեական կայսրերը, Հիտլերը և այլն, բայց ի վերջո անձնավորված է վերջին ժամանակի կերպարի մեջ, տես 2 Թես. 2: 1-10):

Ե. Ստորև տես Հատուկ Թեմա

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
SPECIAL TOPIC: HUMAN GOVERNMENT

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Սահմանումը - Կառավարությունը դա մարդկային հասարակության մեջ ձևավորված ներքին համակարգ է, որի նպատակն է հայթայթել և պաշտպանել նրա ֆիզիկական կարիքները (տես Ծննդ. 4 և 11): Մարդիկ սոցիալական արարածներ են, նույնիսկ մինչև անկումը (տես Ծննդ. 2:18): Ընտանիքները, ցեղերը, ազգերը կազմում են հասարակություն, համայնք:

Բ. Նպատակը – Աստծո կամքն էր, որ լինել կարգ ու կանոն, և ոչ թե անարխիա:

1. Մովսեսական օրենսդրությունը, մասնավորապես Դեկալոգը, Աստծո կամքն է մարդկության համար հասարակության մեջ: Այն հավասարակշռության մեջ է պահում երկրպագությունը և կյանքը:
2. Սուրբ Գիրքը չի առաջարկում կամ պաշտպանում որևէ իշխանության ձև, չնայած հին Իսրայելի թեոկրատիան երկնքում ակնկալվող ձևն է: Ոչ ժողովրդավարությունը, ոչ էլ կապիտալիզմը աստվածաշնչյան ճշմարտությունն չէ: Քրիստոնյաները պետք է համապատասխան կերպով գործեն իշխանության ցանկացած համակարգում: Քրիստոնյայի նպատակը ավետարանչությունն ու ծառայությունն է, ոչ թե հեղափոխությունը: Բոլոր իշխանությունները անցողիկ են:

Գ. Մարդկային իշխանության ծագումը

1. Հռոմեական կաթոլիկությունը պնդել է, որ մարդկային իշխանությունը ծագում ունի, նույնիսկ մինչև անկումը: Արիստոտելը, կարծես թե, առաջին անգամ է առաջադրել այս նախադրյալը: Նա ասում է, որ «մարդը քաղաքական կենդանի է», և դա նշանակում է, որ իշխանությունը «գոյություն ունի լավ կյանքի խթանման համար»:
2. Բողոքականությունը, հատկապես Մարտին Լյութերը, պնդել է, որ մարդկային իշխանությունը հիմք է դրվել անկման ժամանակ: Նա այն անվանում է «Աստծո ձախ ձեռքի թագավորությունը»: Նա ասում էր, որ «Վատ մարդկանց վերահսկելու Աստծու ճանապարհը՝ վատ մարդկանց վերահսկելն է»:
3. Կարլ Մարքսը պնդել է, որ իշխանությունն այն միջոցն է, որով մի քանի էլիտա վերահսկում է մարդկային զանգվածները: Նրա համար իշխանությունն ու կրոնը նույն դերը են խաղում:

II. ԱՍՏՎԱԾՍԵՆՉՅԱՆ ՆՅՈՒԹ

Ա. Հին Կտակարան

1. Իսրայելը այն օրինակն է, որը կօգտագործվի երկնքում: Հին Իսրայելում ՅԱՀՎԵՆ էր թագավորը: Թեոկրատիա տերմինը օգտագործվում է՝ նկարագրելու Աստծո ուղղակի իշխանությունը, ղեկավարումը (տես 1 Թագ. 8:

- 4-9):
2. Աստծո գերիշխանությունը մարդկային իշխանությունների մեջ կարելի է հստակ տեսնել Նրա նշանակման մեջ
 - ա. բոլոր թագավորները, Դան. 2:21; 4: 17,24-25
 - բ. Մեսիական թագավորությունը, Դան. 2: 44-45
 - գ. Նաբուգոդոնոսոր (նեո-բաբելոնյան), Եր. 27:6; Դան. 5:28
 - դ. Կյուրոս II (Պարսից), 2 Մնաց. 36:22; Եզրաս 1:1; Ես. 44:28; 45: 1
 3. Աստծո ժողովուրդը պետք է հնազանդ և հարգալից լինի նույնիսկ գրաված և զավթիչ իշխանություններին;
 - ա. Դանիել 1-4, Նաբուգոդոնոսոր (նեո- բաբելոնյան)
 - բ. Դանիել 5, Բաղդասար (նեո- բաբելոնյան)
 - գ. Դանիել 6, Դարեհ (Պարսից)
 - դ. Եզրաս և Նեեմիա (Պարսից)
 4. Վերականգնված Հուդան պետք է աղոթեր Կյուրոսի և նրա սերունդների թագավորության համար
 - ա. Եզրաս 6:10; 7:23
 - բ. Հրեաները պետք է աղոթեին քաղաքացիական իշխանության, Mishnah, Avot 3: 2

Բ. Նոր Կտակարան

1. Հիսուսը հարգում էր մարդկային իշխանություններին
 - ա. Մատթ.17: 24-27, նա վճարեց տաճարի հարկը (կրոնական և քաղաքացիական իշխանությունները համարվում էին մեկ, տես 1 Պետ. 2:17)
 - բ. Մատթ.22: 15-22; Մարկ. 12:13-17; Ղուկ.20: 20-26, Նա պաշտպանեց կայսրին հարկ տալը և այդպիսով հարգանք ցուցաբերեց հռոմեական քաղաքացիական իշխանության հանդեպ
 - գ. Հովհ.19:11, Աստված թույլ է տալիս, որ քաղաքացիական իշխանությունը գործի
2. Պողոսի խոսքերը մարդկային իշխանությունների համար
 - ա. Հռ.13:1-5, հավատացյալները պետք է հնազանդվեն քաղաքացիական իշխանություններին, քանի որ դրանք հաստատվում են Աստծո կողմից
 - բ. Հռ.13:6-7, հավատացյալները պետք է հարկ վճարեն և պատվեն քաղաքացիական իշխանություններին
 - գ. 1 Տիմ. 2: 1-3, հավատացյալները պետք է աղոթեն քաղաքացիական իշխանությունների համար
 - դ. Տիտոս 3: 1, հավատացյալները պետք է ենթարկվեն քաղաքացիական իշխանություններին
3. Պետրոսի խոսքերը մարդկային իշխանությունների համար
 - ա. Գործք 4: 1-31; 5:29, Պետրոսն ու Հովհաննեսը Սինեդրիոնի առաջ (սա ցույց է տալիս քաղաքացիական անհնազանդության աստվածաշնչյան նախադեպը)
 - բ. 1 Պետ. 2: 13-17, հավատացյալները պետք է հնազանդվեն քաղաքացիական իշխանություններին՝ հասարակության բարօրության և ավետարանչության համար
4. Հովհաննեսի խոսքերը մարդկային իշխանությունների համար
 - ա. Հայտ.17, Բաբելոնի պոռնիկը աջակցում է մարդկային իշխանության, որը կազմակերպված է և գործում է Աստծուց հեռու

III. ԱՄՓՈՓԻՉ ՄՏՔԵՐ

- Ա. Մարդկային իշխանությունը (ընկած աշխարհում) դրվում է Աստծո կողմից: Սա «թագավորների աստվածային իրավունքը» չէ, այլ իշխանության աստվածային խնդիրը (այսինքն՝ կարգ ու կանոն և ոչ թե քառս): Ոչ մի կառավարման ձև մյուսից առավել չէ:
- Բ. Դա հավատացյալների կրոնական պարտականությունն է՝ հնազանդվել և աղոթել քաղաքացիական իշխանությունների համար:
- Գ. Հավատացյալները պատշաճ կերպով պետք է պաշտպանեն մարդկային իշխանություններին՝ հարկեր վճարելով:
- Դ. Մարդկային իշխանությունները կարգ ու կանոն հաստատելու և պահպանելու համար են: Նրանք Աստծո ծառաններն են այս գործի կատարման համար:
- Ե. Մարդկային իշխանությունը վերջնական և գերագույն համակարգը չէ: Այն սահմանափակված է իր հեղինակությամբ: Հավատացյալները պետք է գործեն իրենց խղճի համեմատ և չկատարեն իշխանությունների պահանջները, եթե դրանք անցնում են Աստծո դրած սահմանները: Ինչպես Օգոստինոսն է պնդել *The City of God* գրքում, ասելով, որ մենք երկու պետության քաղաքացիներ ենք, մեկը ժամանակավոր, իսկ մյուսը՝ հավիտենական (տես Փիլ.3:20): Մենք պատասխանատվություն ունենք երկուսում էլ, բայց Աստծո թագավորությունն է գերագույնը: Աստծո հանդեպ մեր պատասխանատվությունը թե անհատական է, և թե ընդհանուր:
- Զ. Մենք պետք է խրախուսենք հավատացյալներին ժողովրդավարական համակարգում, ակտիվորեն մասնակցելու կառավարության գործընթացին և հնարավորության դեպքում իրականացնել Սուրբ Գրքի ուսմունքները:
- Է. Սոցիալական փոփոխությունը պետք է նախորդի անհատի դարձի գալուն: Իշխանության մեջ գոյություն չունի տևական վախճանաբանական հույս: Բոլոր մարդկային իշխանությունները, թեև Աստծո կամքով է և օգտագործում է Աստծո կողմից, հանդիսանում են մեղավոր համակարգ առանց Աստծո: Այս գաղափարը արտահայտվում է Հովհաննեսի «աշխարհ» տերմինի օգտագործման մեջ (տես 1 Հովհ. 2:15-17):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 12:18-13:6

18 Եւ ծովի աւագի վերայ կանգնեց:

¹Եւ տեսայ ծովիցը մի գագան դուրս գալիս, որ եօթը գլուխ ուներ եւ տասը եղջիր, եւ նորա եղջիրների վերայ տասը թագ, եւ նորա գլուխների վերայ հայհոյութեան անուն: ²Եւ այն գագանը որ տեսայ ինձու նման էր, եւ նորա ոտները արջի ոտների նման, եւ նորա բերանն առիւծի բերանի նման. եւ վիշապը տուաւ նորան իր գորութիւնը եւ իր աթոռը եւ մեծ իշխանութիւն: ³Եւ տեսայ նորա գլուխներից մէկը մեռնելու չափ խոցուած. Եւ նորա մահի վերքը ողջացաւ. եւ բոլոր երկիրը զարմացաւ այն գագանի ետեւիցը: ⁴Եւ երկրպագեցին այն վիշապին, որ իշխանութիւն տուաւ այն գագանին, եւ երկրպագեցին գագանին ասելով. Ո՞վ է այս գագանի նման. Կամ ո՞վ է կարող դորա հետ պատերազմել: ⁵Եւ նորան տրուեցաւ մի բերան մեծ մեծ բաներ եւ հայհոյանք խօսող, եւ իշխանութիւն տրուեցաւ նորան քառասուններկու ամիս իր ուզածն անելու: ⁶Եւ նա իր բերանը բացաւ Աստուծոյ դէմ հայհոյանքով, որ հայհոյէ նորա անունին եւ նորա խորանին, եւ երկնքումը բնակողներին:

12: 18 «Եւ ծովի աւագի վերայ կանգնեց» NASB, NKJV և NJB սկսում են Հայտ. 13 այս արտահայտությամբ (այն է Հայտ. 12: 18), մինչդեռ TEV- ը եզրափակում է Հայտ.12-ը դրանով:

Կա ձեռագիր տարբերակ «կանգնեց» բայի հետ կապված Հայտ.12:18 և 13: 1-ում:

1. «կանգնեց» վերաբերում է Հայտ. 12-ի հրեշին / վիշապին - MSS P⁴⁷, 8, A, C (NASB, NRSV, TEV, REB, NET, NIV)
2. «Ես կանգնեցի», որը վերաբերում է Հովհաննեսին Հայտ. 13-ում - MSS P, 046, 051 (NKJV, NJB)

UBS⁴ #1-իը տարբերակին տալիս է "Բ" վարկանիշ (գրեթե որոշակի):

«Ծովը» կարող է ակնարկ լինել Դան. 7:2-3: Դա խորհրդանշում էր

1. ամբողջ մարդկությանը (տես Ես. 17:12-13; 57:20; Հայտ. 17:15)
2. քառսի ուժերը (տես Ծննդ. 1; Ես. 51:9-10)

▪ **«Ես տեսայ ծովիցը մի գազան դուրս գալիս»** Վայրի գազանը (տես Հայտ. 13:14,15; 15:2; 16:13; 15:8) առաջին անգամ հիշատակվում է առանց ազդանշանի Հայտ. 11:7-ում, որպես անդունդից դուրս եկող (տես Հայտ. 17:8): Թվում է թե վերաբերում է «նեոին» 1 Հովհ. 2:18ա,22; 4:3; 2 Հովհ. 1:7, որը նաև հայտնի է որպես «անօրենության մարդ» 2 Թես. 2:3: Այս գազանի նույն նկարագրությունը հանդիպում է Հայտ. 12:3 և 17:3,8:

«Ծովից դուրս է գալիս» արտահայտությունը մեկնաբանվել է մի քանի ձևով:

1. բառացիորեն, ինչպես միջկտակարանյան հրեական գրականության մեջ, ինչպես Լևիաթանը և 12:11-ին, որպես բեհեմոթ
2. ակնարկ է Դան. 7, որտեղ գազանը դուրս է գալիս ծովի միջից Հայտ. 13:3 և երկրի վրայից Հայտ. 13:17, որը հումանիշ է Դան. 7, բայց Հովհաննեսն առանձնացրել է վերջին գազանների երկու առանձին վերջին ժամանակի չար անձնավորությունների՝ ծովի գազանը, Հայտ. 13:1 և երկրային գազանը, Հայտ. 13:11
3. ընկած մարդկության խորհրդանիշը (մասնավորապես, Հայտ. 17:15; և նաև Դան. 7:2-3; Ես. 17:12-13; 57:20)

Պատճառը, որ 13-րդ գլխի երկու գազանները հիշատակվում են որպես ծովից և երկրից դուրս եկողներ (1) քանի որ այս գլուխը հետևում է Դան. 7 այսքան սերտորեն (2), քանի որ նրանք միավորվել են ամբողջ աշխարհը ներկայացնելու համար: Հնարավոր է նաև, որ այս երկու գազանները և սատանան Երրորդության չար նմանակումն են:

▪ **«Էօթը գլուխ ուներ եւ տասը եղջիւր, եւ նորա եղջիւրների վերայ տասը թագ»** Սա հենց վիշապը չէ (տես Հայտ. 12:3), բայց շատ նման է (տես Հայտ. 17:3, 7-12): Տասը եղջյուրները խոսում են լիակատար գործության մասին; յոթ գլուխները ներկայացնում են չարի կատարյալ դրսևորումը, իսկ տասը թագերը՝ պնդում արքայության: Չարը հաճախ լավի կեղծիքն է: Սա Քրիստոսի մի քանի նմանակումներից առաջինն է:

▪ **«հայհոյութեան անուն»** Հունարեն ձեռագրերը հավասարապես բաժանված են հոգնակիի (MS A) «անուններ» (NRSV, NJB) և եզակիի (MSS P47, 8, C, P) «անուն» միջև (NKJV, TEV): UBS⁴ չի կարող որոշել, թե որն է ինքնատիպ: Որն է ճշմարիտը, սա ակնհայտորեն ակնարկ է Դան. 7:8,11,20,25 կամ 11:36: Այս հայհոյական կոչումները կապված են (1) աստվածության պահանջի կամ (2) չար կոչումների հետ (տես Հայտ. 17:3):

13:2 «գազանը որ տեսայ ինձու նման էր...արջի...առիծի» Մի քանի գազանների այս համադրությունը մեկ այլ ակնարկ է Դան. 7:4,5,6 որտեղ այն վերաբերում է մի շարք թագավորների, բայց այստեղ սիմվոլիկան փոխվել է մեկ առաջնորդի անձնավորված նեոի աշխարհակարգերի բաղադրիչի մեջ (տես Դան 7.24):

▪ **«վիշապը տուաւ նորան իր գորութիւնը եւ իր աթոռը եւ մեծ իշխանութիւն»** Սա զուգահեռ է 2 Թես. 2:9, որը խոսում է սատանայի ներշնչված գործության մասին: Գազանը սատանան չէ, այլ նրա

գերբնական ուժեղ մարդկային դրսևորումը կամ նրա մարմնացումը (տես Հայտ. 13:4,12): Սա Քրիստոսի մեկ այլ նմանեցում է (տես Հայտ. 5:6):

13:3 «տեսայ նորա գլուխներից մեկը մեռնելու չափ խոցուած» Սա վաղակատար կրավորական դերբայ է, որը սինթետիկորեն գուգահեռ է Հայտ. 5:6 Գառանը: Սա Հիսուսի մահվան և հարության այլ նմանեցում է:

▪ **«Եւ նորա մահի վերքը ողջացաւ»** Արդյո՞ք սատանան ունի այդ մարդուն վերակենդանացնելու կարողություն, թե դա խորամանկություն է, խաբեություն կամ կեղծիք (տես Հայտ. 13:15): Սատանան նմանեցնում է Աստծո գործությունը Քրիստոսի համբարձման հետ:

Սա կարող է պատմական ակնարկ լինել *"Nero redivivus"* առասպելին, որը պնդեց, որ Ներոնը կվերադառնա կյանք և կվերադառնա արևելյան մեծ բանակի (պարթևների) հետ և կհարձակվի Հռոմի վրա (տես *Sibylline Oracles*, III-V գրքեր):

▪ **«Եւ բոլոր երկիրը զարմացաւ այն գագանի ետեւիցը»** Սատանան հրաշքներ կգործի՝ համոզելու անհավատ աշխարհին հետևել իրեն (տես Մաթ. 24:24; Մարկ. 13:22; 2 Թես. 2:9; Հայտ. 13:5; 17:8), որը Քրիստոսի մեկ այլ նմանեցում է: Աշխարհը տպավորված է երկու վկաների գործությամբ Հայտ. 11:13; այժմ նրանց անկայունությունը երևում է գագանին իրենց երկրպագության մեջ:

13:4 «երկրպագեցին այն վիշապին...եւ երկրպագեցին գագանին» Չարը ցանկանում է ոչ միայն քաղաքական գործություն, այլ նաև կրոնական երկրպագություն (տես Հայտ. 13:8): Սատանան ցանկանում է երկրպագություն (տես Հայտ. 13:12, 14:9,11; 16:2; 19:20; Մաթ. 4:8-9): Նա ցանկանում է նմանվել Աստծուն (տես հնարավոր է Ես. 14:12-15): Անուղղակիորեն դա կապված է օձի խաբելու հետ Ծննդ. 3:5; և Մաթ. 4:9; Ղուկ. 4:5-7:

▪ **«Ո՞վ է այս գագանի նման»** Այս արտահայտության համար երեք առաջարկված ծագում կա: Ոմանք դա տեսնում են որպես

1. նմանեցում ՅԱՀՎԵՅԻ կոչման համար, հանդիպում է Ելից 15:11; Սաղ. 35:10; 113:4
2. ՅԱՀՎԵՅԻ նմանեցում, Ես. 40:18-22; 43:11; 44:6,8,9-20; 45:6
3. հղում Լևիաթանին և Բեհեմոտին հրեական ապոկալիպտիկ գրականության մեջ (Հին Կտակարանում մեկ օրինակ է Հոբ 41, մասնավորապես, Հայտ. 13:33-34)

13:5 Հայտ. 13:5-7 և Հայտ. 13:14-15-ում կան մի քանի կրավորական բայեր, որոնք ենթադրում են, որ այդ թույլտվությունը տրվել է սատանայի կողմից և, ի վերջո, Աստծո կողմից (տես Հոբ): Աստված օգտագործում է սատանային Իր նպատակների համար: Չարը հայտնում է իր շարժառիթները իր իսկ մտքերով ու խոսքերով:

▪ **«մի բերան մեծ մեծ բաներ խօսող»** Սա ակնարկ է

1. «գագան»-ին Դան. 7:8,11,20,25; 11:36
2. Անտիոքոս 4 Եպիփանեսը, Դան. 8; 1 Մակաբ. 1:24
3. «մեղքի մարդ»-ուն 2 Թես. 2:4
4. Մաթ. 24:15 ավերածի պոզությունը, որը վերաբերում է Հռոմի գերիշխանության տակ գտնվող Երուսաղեմի ներխուժմանը և ոչնչացմանը, իսկ հետո կայսրին, Տիտոսին, մ.թ. 70

Սա լավ օրինակ է, թե ինչպես է այս խորհրդանիշների պատմական կենտրոնացումը փոխվում: Դան. 8 այն վերաբերում է միջաստվածաշնչյան ժամանակաշրջանի Անտիոքոս 4 Եպիփանեսին; Մաթ. 24 այն վերաբերում է մ.թ. 70 Երուսաղեմի ոչնչացմանը և Դան. 7 (և հնարավոր է Դան. 11:36-39), այն վերաբերում է վերջին ժամանակների նեոի գործունեությանը:

- **«քառասուններկու ամիս իր ուզածն անելու»** Սա ուղիղ ակնարկ է Դան. 7:25: Այն առաջին անգամ հիշատակվում է Հայտ. 11:2-3: Դա փոխաբերություն է, որը նշանակում է հալածանքի ժամանակաշրջան: Տես Հատուկ Թեմա Հայտ. 11:2 և գրառում Հայտ. 12:6:

13:6 «նա իր բերանը բացաւ հայիոյանքով» Այս համարում կա երկու կամ երեք հայիոյանք Աստծո անվան, Աստծո խորանի և Աստծո ժողովրդի դեմ: Դա կախված է նրանից, թե ինչպես են թարգմանում այս հունարեն արտահայտությունը:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 13:7-10

7Եւ նորան իշխանութիւն տրուեցաւ որ սուրբերի հետ պատերազմ անէ եւ նորանց յաղթէ. եւ իշխանութիւն տրուեցաւ նորան ամեն ցեղի եւ լեզուի եւ ազգի վերայ. **8**Եւ կ'երկրպագեն նորան երկրի վերայ բոլոր բնակողները, որոնց անունները գրուած չեն Գառի կեանքի գրքի մէջ որ աշխարհքի սկզբիցը հետէ մտրթուած է: **9**Եթէ մէկն ականջ ունի թող լսէ: **10**Եթէ մէկը գերութեան քաշէ, գերութեան պիտի քաշուի. եթէ մէկը սրով սպանէ, պիտի սրով սպանուի. այստեղ է սուրբերի համբերութիւնը եւ հաւատքը:

13:7 «նորան իշխանութիւն տրուեցաւ որ սուրբերի հետ պատերազմ անէ եւ նորանց յաղթէ» Սա աօրիստ կրավորական սահմանական է և աօրիստ ներգործական ինֆինիտիվ: Կրավորական սեռի ազդեցությունը այն է, որ Աստված թույլ է տվել դա տեղի ունենալ: Մենք չենք հասկանում այն ամենը թե ինչ կա հետևում պահված, բայց Հայտնության գրքից պարզ է, որ Աստված վերահսկում է ողջ պատմությունը: Այս պատերազմը Իր սուրբերի հետ հիշատակվում է Դան. 7:21,25: Այն վերաբերում է Աստծո ժողովրդի ֆիզիկական մահվանը: Կա ժամանակ, երբ թշնամին կարծես թե հաղթող է (Գողգոթայի նման), բայց Հայտնությունը և Դանիելը սովորեցնում են, որ այս հաղթանակը կարճ ժամանակով է: Ուշադրություն դարձրեք, որ Աստծո ժողովուրդը պաշտպանված է Աստծո բարկությունից, այլ ոչ թե գազանի և նրա հետևորդների բարկությունից: Աստված թույլ է տալիս, որ չարն ակնհայտ հաղթի, որպեսզի բացահայտի իր իսկական մտադրությունները և բնությունը:

- **«սուրբերի»** Տես Հատուկ Թեմա Հայտ. 5:8:
- **«եւ իշխանութիւն տրուեցաւ նորան ամեն ցեղի եւ լեզուի եւ ազգի վերայ»** Այս արտահայտությունը ցույց է տալիս, (1) որ Հայտնությունը պետք է ավելի լայն իմաստով մեկնաբանվի, քան միայն Հռոմեական կայսրությունը, այս համընդհանուր ընդգրկուն արտահայտության պատճառով կամ (2) որ դա վերաբերում է կայսրության լայն իրադարձությանը:

13:8 «երկրի վերայ բոլոր բնակողները» Սա կրկնվող արտահայտություն է, որը վերաբերում է անհավատներին Հայտնության մեջ (տես Հայտ. 3:10; 6:10; 8:13; 11:10; 13:8,12,14; 17:8):

- **«որոնց անունները գրուած չեն Գառի կեանքի գրքի մէջ որ աշխարհքի սկզբիցը հետէ մտրթուած է»** Անհասկանալի է, թե արդյոք «աշխարհի սկզբից» արտահայտությունը պետք է ընդունվի (1) «մեր անունը գրված է» (տես RSV, NRSV, TEV, NJB և 17:8; Եփ. 1:4) կամ (2) «Գառը մտրթված է» (տես KJV, NKJV և 1 Պետ. 1:19-20): Այս տեքստի բառի իմաստը և Հայտ. 17:8 ենթադրում է, որ այս արտահայտությունը հավանաբար նկարագրում է հավատացյալների անունները, որոնք գրված են կյանքի գրքում, նույնիսկ արարչագործությունից առաջ:

«Աշխարհի սկզբից» արտահայտությունը օգտագործվում է Նոր Կտակարանում մի քանի անգամ (տես Մարթ. 25:34; Հովհ. 17:24; Եփ. 1:4; 1 Պետ. 1:19-20): Շատ նմանատիպ արտահայտություններ կան Մարթ. 13:35; Դուկ. 11:50; Եբ. 4:3; 9:26 և Հայտ. 17:8: Այս

արտահայտությունների միացությունը ցույց է տալիս Աստծո փրկության գործունեությունը, նախքան աշխարհի ստեղծումը: Հավատացյալները ապահով են Քրիստոսի մեջ (տես Հայտ. 7:4; 11:1; 13:8): Չարը սահմանափակվում է գերիշխան Աստծո կողմից (այս գլխի կրավորական բայերի քանակը և ժամանակը սահմանափակ է): Կարճ ասած, վատ է նայվում, բայց նայեք մեծ պատկերին:

▪ **«Կյանքի գիրքը»** Դան. 7:10 և Հայտ. 20:11-15 հասկանում ենք, որ նշված են երկու փոխաբերական գրքեր՝ կապված մարդկային ճակատագրով

1. Կյանքի գիրքը, որտեղ գրված են նրանց անունները, ովքեր անձամբ ճանաչում են Աստծուն (Հին Կտակարան) և ընդունել են Քրիստոսին (Նոր Կտակարան) [տես Ելից 32:32-33; Մադ. 69:28; Դան. 12:1; Ես. 4:3; 34:16; Ղուկ. 10:20; Փիլ. 4:3; Եբ. 12:23; Հայտ. 13:8; 17:8; 20:15; 21:27]
2. Մարդկանց գործերի գիրքը, որը գրի է առնում մարդկային գործունեությունը ինչպես դրականը, այնպես էլ բացասականը (տես Մադ. 56:88; 139:16; Ես. 65:6; Մադ. 3:16)

Սրանք ակնհայտորեն փոխաբերություններ են, բայց նրանք ճշգրիտ կերպով նկարագրում են Աստծո կարողությունը՝ ճանաչելու նրանց, ովքեր Իրենն են և պահելու նրանց, ովքեր մերժվել են Նրա պատասխանատվությունից (տես Գաղ. 6:7):

▪ **«մոլորուած է»** Տես ծանոթագրություն Հայտ. 5:12:

13:9 «Եթէ մէկն ականջ ունի թող լսէ» Սա յոթ եկեղեցիների նամակներում կրկնվող թեմա է (տես Հայտ. 2:7,17; 3:6,13,22): Այն, ինչպես մյուս արտահայտությունները, Հայտ. 13:9-10, առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրվում է ճշմարիտ՝ հեղինակի գրական նպատակների համար: Այն փաստը, որ այս արտահայտությունները վերաբերում են եկեղեցիներին, կարծես ենթադրում են, որ հաջորդ արտահայտությունը (10հ.) նույնպես ուղղված է Աստծո ժողովրդին:

13:10 Այս համարը կարող է ակնարկ լինել Եբ. 15:2 կամ 43:11, որը խոսում է Աստծո դատաստանի մասին: «Սպանել» բայի հետ կապված մի քանի հունարեն ձեռագիր տարբերակ կա: Սա տվել է այս համարի տարբեր անգլերեն թարգմանություններ:

1. KJV և NKJV այս երկու արտահայտությունները վերաբերում են Աստծո ժողովրդին հալածողներին:
2. RSV և NRSV առաջին կետը վերաբերում է հալածվող քրիստոնյաներին, իսկ երկրորդ կետը՝ նեոի հալածողներին:
3. Երրորդ հնարավոր մեկնաբանությունը (TEV և NJB) այն է, որ երկու կետերը վերաբերում են հալածվող քրիստոնյաներին:

Այն փաստը, որ թարգմանություններում շատ տարբերություն կա, ցույց է տալիս անորոշությունը: Ակնհայտ է հոգևոր ճշմարտությունը, որ Աստված վերահսկում է ողջ պատմությունը: Միակ հարցն այն է, թե արտահայտությունն ում էր ուղղված՝

1. քրիստոնյաներին՝ քաջալերելու նրանց հավատարիմ մնալ (տես Մաթ. 26:52, Փիլ. 1:28)
2. հալածողներին՝ հավաստիացնելու, որ նրանք մի օր հաշիվ կտան Աստծո առաջ իրենց ընտրության և գործողությունների համար:

Արևելահայերեն «այստեղ է սուրբերի համբերությունը եւ հաւատքը»

Արևմտահայերեն «Հոս է սուրբերուն համբերութիւնն ու հաւատքը»

NASB «Այստեղ է սուրբերի հաստատակամությունն ու հավատքը»

NKJV «Այստեղ է սուրբերի համբերությունն ու հավատքը»

NRSV «Այստեղ է սուրբերի համբերատարությունն ու հավատքի կոչը»

TEV «Սա կոչ է անում Աստծո ժողովրդին համբերատարության և հավատքի համար»

NJB «Ահա թե ինչու սուրբերը պետք է հաստատակամություն և հավատք ունենան»

Հայտ. 13:9 և Հայտ. 13:10-ի վերջը ցույց են տալիս, որ այս արտահայտությունը պետք է վերաբերի Աստծո ժողովրդին (տես Մաթ. 26:52): Այս համարը նկարագրում է նաև ճշմարիտ հավատացյալներին (տես Հայտ. 14:12;12:11,17): Նրանք քաջալերվում են դիմանալու մինչև վերջ (տես Հայտ. 2:3,7,11,17,26; 3:5,12,21; 21:7): Համբերությունը ճշմարիտ փրկության վկայությունն է (տես 1 Հովհ. 2:19): Տես ծանոթագրություն և Հատուկ Թեմա Հայտ. 2:2:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 13:11-18

¹¹Եւ ես տեսայ մի ուրիշ գազան դուրս գալիս երկրիցը, եւ երկու եղջիւր ունէր գառի նման. Բայց խօսում էր վիշապի նման: ¹²Եւ այն առաջի գազանի բոլոր իշխանութիւնը բանեցնում էր նորա առաջին. Եւ այնպէս էր անում, որ երկիրը եւ նորա վերայ բնակողները երկրպագեն այն առաջի գազանին որի մահի վերքը ողջացել էր: ¹³Եւ մեծ նշաններ է անում, որ երկնքիցը կրակ էլ է վայր բերել տալիս երկրի վերայ մարդկանց առաջին: ¹⁴Եւ մոլորեցնում է երկրի վերայ բնակողներին այն նշաններովը որ տրուած էին նորա ձեռքը, որ գործէ գազանի առաջին, ասելով երկրի բնակողներին որ պատկեր շինեն այն գազանին որ սուրի վերքն ունէր եւ ապրեց: ¹⁵Եւ տրուեցաւ նորան, որ հոգի տայ գազանի պատկերին, որ պատկերը խօսի էլ. Եւ անէ էլ՝ որ նորանք, որ չ'երկրպագեն գազանի պատկերին, սպանուին: ¹⁶Եւ ստիպում է ամենին՝ փոքրերին եւ մեծամեծներին, հարուստներին եւ աղքատներին, ազատներին եւ ծառաներին, որ նորանց դրոշմ տայ նորանց աջ ձեռքումը կամ նորանց ճակատումը: ¹⁷Եւ որ ոչ ով չ'կարողանայ գնել կամ ծախել բացի նորանից, որ գազանի դրոշմը կամ նորա անունն ունի կամ նորա անունի համարը: ¹⁸Այստեղ է իմաստութիւնը. Ով որ միտք ունի թող գազանի թիւր համարէ. որ մարդի թիւ է, եւ նորա թիւը վեց հարիւր վաթսուներկեց է:

13:11 «Եւ ես տեսայ մի ուրիշ գազան դուրս գալիս երկրիցը» Սա ակնարկ է Դան. 7:17, շատերը ենթադրում էին, որ այս երկու գազանները Աստծո երկու վկաների նմանեցումն են, Հայտ. 11:13-14 մյուսները ենթադրում էին, որ վիշապը և երկու գազանները Երրորդության նմանեցումն են:

Որպես ծովից դուրս եկող գազան ակնարկ է Լևիաթան (տես Հոբ 41:1-34), ջրային քառսի հնագույն վարպետը, այսպիսով երկրից դուրս եկող գազանն ակնարկ է *Behemoth* (տես Հոբ 40:15-24), համապատասխան երկրային հրեշին (սա ոչ մի կերպ չի վերաբերում դինոզավրերին, այլ հին արևելյան դիցաբանությանը):

Այս գազանները չարության (քառս) և ապստամբության խորհրդանիշներն են Աստծո ստեղծած կարգի մեջ (տես Սաղ. 74:12-14; Հոբ 3:8; Ես. 51:9-11; Ամովս 9:3): Երբեմն Լևիաթանը կոչվում է *Ռախսաբ* («անմաքուրը», այսինքն օձը, տես Ես. 51:9): Մյուս տեղերում *Ռախսաբը* Եգիպտոսի անունն է (Նեղոսը, այսինքն, ոլորապտույտ գետը, Սաղ. 87:4; Ես. 30:7 և հնարավոր է, Եզեկ. 32, հատկապես Հայտ. 13:2-3):

▪ «երկու եղջիւր ունէր գառի նման. Բայց խօսում էր վիշապի նման» Գառնուկին ուղղված հղումը Քրիստոսի ակնհայտ նմանեցումն է (տես Հայտ. 5:6): Նրա ձայնը և / կամ պատգամը բացահայտում է իր իսկական բնավորությունը: Հետագայում Հայտնության մեջ երկրորդ գազանն անընդհատ հիշատակվում է որպես կեղծ մարգարե (տես Հայտ. 16:13; 19:20; 20:10): Նա փառք չի փնտրում իր համար, բայց կոչ է անում աշխարհին երկրպագել գազանին (տես Հայտ. 13:12): Սա Սուրբ Հոգու աշխատանքի նմանեցումն է՝ (տես Հովհ. 14-16) խթանելու Քրիստոսը: Այսպիսով, մենք ունենք պիղծ երրորդություն՝

1. սատանան որպես Հայր Աստծո նմանեցում
2. ծովի գազանը, որպես Աստծո Որդու նմանեցում
3. երկրային գազանը, որպես Աստծո Սուրբ Հոգու նմանեցում

13:13 «մեծ նշաններ է անում» Սա հանդիսանում է ներկա ժամանակի բայ, ինչը նշանակում է, որ նա շարունակում է հրաշքներ գործել: Ակնկալվում էր, որ կեղծ ուսուցիչները վերջին ժամանակներին կկարողանան հրաշքներ գործել և առաջնորդել նույնիսկ ընտրված մոլորվածներին, եթե դա հնարավոր է (տես Մաթ. 24:24; Մարկ. 13:22; 2 Թես. 2:9-11; Դիդարիս 16:3,4): Հրաշքները ինքստիքյան Աստծո նշանները չեն (տես Ելից 7:8-13): Սա Քրիստոսի ծառայության մեկ այլ նմանեցում է:

▪ **«որ երկնքիցը կրակ էլ է վայր բերել տալիս երկրի վերայ մարդկանց առաջին»** Սա նման է Եղիային 3 Թագ. 18:38, որը կարող է լինել Հայտ. 11:5 հանդիպած երկու վկաների նկարագրության աղբյուրը: Դա կարող է վերաբերել այն կրակին, որը վայր է ընկել որպես Աստծո դատաստան Եզեկ. 38:22 կամ 39:6: Սա կարող է լինել այլ

1. երկու վկաների նմանեցում
2. Աստծո Հին Կտակարանի գործերի նմանեցում
3. Պենտեկոստեի նմանեցում Գործք 2-ում

13:14 «սուրի վերքն ուներ եւ ապրեց» «Վերք» բառը (*plēge*, տես Հայտ. 13:3,12,14) սովորաբար թարգմանվում է «ժանտախտ» Հայտնության մեջ (տես 9:18,20; 11:6, 15:1,6,8; 16:9,21; 18:4,8; 21:9; 22:18) NRSV ծանոթագրությունները ունեն

1. Հայտ. 13:3 «իբ մահվան վերքը»
2. Հայտ. 13:12 «որի մահվան վերքը»
3. Հայտ. 13:14 «սուրի վերքն ուներ»

Այդ թարգմանությունների աստվածաբանական նպատակն է ցույց տալ, որ նեռը ոչ թե անձ է, այլ աշխարհակարգ: Տերմինը կարող է օգտագործվել փոխաբերական իմաստով որպես «ճակատագրի հարված» կամ պատուհաս (տես BAGD, էջ 674), սակայն դրա հիմնական իմաստը հարված է կամ վերք:

«Եվ ապրեց» ուղեկցող արտահայտությունը ցույց է տալիս, որ «պատուհաս» լավագույն թարգմանությունը չէ կապված գազանի հետ այս համարներում: Վերջին ժամանակների գաղափարը հակա-Աստված հակաքրիստոսը առաջնորդում են ազգերին ապստամբության մեջ կանխագուշակվել է Հին Կտակարանում, Եզեկ. 38-39; Զաք. 14; Դան. 7:21-27; 9:24-27; 11:36-39 և միջնադարյան ապոկալիպտիկ գրականության մեջ, Sibylline Oracles, գիրք III; 4 Եզրաս 5.4,6 եւ Apocalypse of Baruch XL և Նոր Կտակարանում, 2 Թես. 2:3,8-9:

13:15 «տրուեցաւ նորան, որ հոգի տայ գազանի պատկերին» Այլ վայրում այս երկրային գազանը կոչվում է կեղծ մարգարե (տես Հայտ. 16:13; 19:20; 20:10): Թերևս սա է վնասված կյանք փոխաբերությունը (այսինքն՝ եբրայերեն *ruah* = շունչ) շարժման մեջ (տես Եզեկ. 37):

13:16 «նորանց դրոշմ տայ նորանց աջ ձեռքումը կամ նորանց ճակատումը» Քանի որ սուրբերը կնքվել են Աստծո համար (տես Հայտ. 13:16; 14:9), այստեղ չարը նմանակում է Աստծո գործողությանը դրոշմելով իր սեփականը: Հունարեն բառը ենթադրում է կենդանական ապրանքանիշ կամ կնիք պետական փաստաթղթի վրա: Նշանի գտնվելու վայրի պատճառով ոմանք կարծում են, որ դա եղել է

1. հրեական թալիսմանի խեղաթյուրված ձև (տես 2 Օր. 6:8)
2. վերաբերելով առաջին դարի հռոմեական մշակույթին, որտեղ ստրուկները պիտակավորված էին սեփական անունով
3. զինվորները դաջվում էին իրենց գեներալների պատվին

13:17 Գազանի դրոշմը վերաբերում է սննդամթերքի և հնարավոր է, աշխատանքի ձեռքբերմանը: Աստծո ժողովուրդը պաշտպանված չէ այս տնտեսական առանձնահատկությունից:

13:17-18 «նորա անունի» Հնագույն լեզուները օգտագործել են իրենց այբուբենի տառերը նաև թվերի համար: Քանի որ Հիսուսի անվան եբրայերեն բաղաձայն հնչյունները ավելացնում են մինչև 888-ը (տես Sibylline Oracles, 1.324), ուրեմն գազանի անունը, սատանայի վերջին ժամանակների մարմնավորումը, ավելացնում է մինչև 666: Վեցը մեկով պակաս է կատարյալ 7 թվից (տես Ծննդ. 1:1-2:3, արարչագործության յոթ օրերը); կրկնվելով երեք անգամ, այն ձևավորում է Եբրայերենի գերադրական աստիճանը (տես Ես. 6:3; Եր. 7:4):

Հնարավոր է նաև այն, որ վեցը մարդկային թիվն է, այն կարող է վերաբերել ոչ սուրբ երրորդության յուրաքանչյուր անձի անձնավորությանը՝ վիշապին (սատանա), ծովային գազանին (նեռ) և երկրային գազանին (սուտ մարգարե): Ինձ թվում է, որ առաջին գազանը հակա-աստված քաղաքական համակարգի անձնավորություն է, իսկ երկրորդ գազանը հակա-աստված կրոնական համակարգի անձնավորություն է: Մենք շարժվում ենք դեպի 17-րդ գլխի մեծ պոռնիկը, հակա-աստված աշխարհակարգի մարմնավորումը, Դան. 7: Արդյոք դա հնագույն Բաբելոնն է, առաջին դարի Հռոմը կամ վերջին ժամանակների բաղադրիչ աշխարհի թագավորությունը, ցույց է տալիս, որ մարդկության պատմությունը շարժվում է դեպի վերջնական հակամարտության «աշխարհի այս աստվածը» (տես 2 Կոր. 4:4) և նրա մինիստերն ընդդեմ արարչագործության Աստծո և Իր Մեսիայի միջև (Սաղ. 2):

13:18 «նորա թիւը վեց հարիւր վաթսունևվեց է» Կոնսենսուս չկա, թե ում է այդ թիվը վերաբերում: Անհամար կանխատեսումներ են եղել, բայց ոչ մեկը վերջնական չէ: Ահա իմ կարծիքով երեք լավագույն տեսությունները:

1. Քանի որ գոյություն ունի ձեռագիր տարբերակ 666 և 616-ի միջև, հնարավոր է օգտագործել Ներոն Կայսերին: Հունարեն տառերը թարգմանվել են եբրայերեն հավասար 666, իսկ հունարեն տառերը թարգմանվել են լատիներեն հավասար 616:
2. Քանի որ եռապատկված կրկնությունը հաշվվում է եբրայերեն գերադրական աստիճանի համար, 666-ը կարող է նշանակել ամենաչար մարդ:
3. Քանի որ կոնտեքստում նշվում է Երրորդության նմանեցումը, երեք աստվածային անձերն արտացոլվում են 777-ի մեջ, իսկ երեք կեղծվածները՝ 666:

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 14:1-20

Ա. Հնարավոր է, որ Հայտ. 14-ը պատասխան է Հայտ. 12 և 13-ի ճնշող չարի ներկայացմանը: Ես վստահ եմ, որ ընթերցողները մտածում են, թե ինչ է լինելու սուրբերի հետ այս վերջին սարսափելի հալածանքների ժամանակ:

Բ. Ոմանք «յոթի» համար մեկ այլ գրական կառուցվածք են տեսել Հայտ. 14: 6-20-ում: Կա յոթ հրեշտակների մի շարք, բայց այս կառուցվածքը կարծես թե աստվածաբանական նշանակություն չունի:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 14:1-5
¹Եւ տեսայ եւ ահա Գառը կանգնած էր Սիօն սարի վերայ, եւ նորա հետ հարիւր քառասունեչորս հազար հոգիքը, որ [նորա անունը էւ] նորա Հօր անունը գրած ունէին իրանց ճակատների վերայ: ² Եւ ձայն լսեցի երկնքիցը՝ շատ ջրերի ձայնի պէս, եւ մեծ որոտմունքների ձայնի պէս. եւ քնար ածողների ձայնի պէս լսեցի, որ իրանց քնարներն ածում էին: ³ Եւ երգում էին մի նոր երգ աթոռի առաջին եւ չորս կենդանիների առաջին եւ երեցների առաջին. Եւ ոչ ով չէր կարող ուսանել այն երգը բացի այն հարիւր քառասունեչորս հազարներից, որ երկրից փրկուել էին: ⁴ Սորանք են որ կանանց հետ

Նիսանուեցան, որովհետեւ կոյս են. սորանք են որ Գառի ետեւից գնում են ուր որ նա գնայ. սորանք փրկուեցան մարդկանցից Աստուծուն եւ Գառին իբրեւ երախայրի: Եւ նորանց բերանումը նենգութիւն չճանուեցաւ, որովհետեւ անարատ են [Աստուծոյ աթոռի առաջին:]

14: 1 «Գառը» Սա հղում է Մեսիայի համար (տես Հայտ. 5: 6,8,12-13; 13: 8; Ես. 53: 7; Հովի. 1: 29,36; 1 Պետ. 1: 18-19):

▪ **«կանգնած էր Միօն սարի վերայ»** Այս արտահայտությունը հասկանալու բազմաթիվ տեսություններ կան:

1. այն է Մորիա լեռը և Երուսաղեմի տաճարը (տես Ես. 24:23; Հովել 2:32)
2. այն երկնային Երուսաղեմն է (տես Եբր. 11:10,16; 12: 22-23; 13:14; Գաղ. 4:26)
3. այն անկանոն գրքում հանդիպող ապոկալիպտիկ սիմվոլ է, 2 Եզդրաս 2: 42-47; 13: 35,39-40
4. այն վերաբերում է Հին Կտակարանյան հատվածներին, որոնք խոսում են Աստծո ժողովրդի վերջին ժամանակի հավաքի մասին (տես Սաղ. 48; Ես. 24: 23; Հովել 2:32; Միքիա 4: 1,7; Աբդիա 17,21հհ.)
5. Այս ֆոնի վրա, ինչպես այս բաժնի մի քանի այլ հատվածներ, Սաղմոս 2-ը, մասնավորապես, Հայտ. 14: 6-ը:

Հիշեք, որ մեկնաբանները այս տեսիլքներից յուրաքանչյուրը կապում են

1. Հին Կտակարանյան հատվածներին կամ պաղեստինյան վայրերին
2. միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականությանը
3. առաջին դարի հունա-հռոմեական պատմությանը

Ինձ համար Հին Կտակարանյան այդ պատկերները, սկսած 6-րդ գլխից, վերաբերում են Նոր Կտակարանի Աստծո ժողովրդին (հավատացյալ հրեաներին և հեթանոսներին), սուրբերին, եկեղեցուն: Այս դեպքում, դա ակնարկ է երկնային տաճարին (տես Եբր. 8: 2; 9: 11,24):

▪ **«եւ նորա հետ հարիւր քառասունէչորս հազար հոգիքը»** Սա նույն խումբն է

1. փրկվածների, ինչպես Հայտ. 5: 9-ում
2. կնքվածների Հայտ. 7: 4-8-ում կնքված (տես ամբողջական ծանոթագրություն Հայտ. 7: 4-ում)
3. Գառան արյամբ լվացվածների, Հայտ. 7: 14-17

Հետևաբար, իմ կարծիքով, դա Նոր Կտակարանի Աստծո ժողովրդ համար է, սրբերի, եկեղեցու: 144 000-ի ինքնության մասին լրիվ նշումը տես Հայտ. 7: 4-ը: Ավելի վաղ համարներում դրանք կնքված էին, բայց և հալածվում էին, բայց այստեղ նրանք հաղթական են:

▪ **«որ [նորա անունը եւ] նորա Հօր անունը գրած ունէին իրանց ճակատների վերայ»** Սա վերաբերում է մեկ անվանը թե՞ երկուսին: Այն կարող է վերաբերել Ես. 9: 6-ի տիտղոսներին:., որոնք վերաբերում են թե Հոր և թե Որդուն: Սրանք են կնքված են և պատկանում են Աստծուն (տես Հայտ. 7): Տես նշում Հայտ. 7: 2-ում:

14: 2 «ձայն լսեցի երկնքիցը» Այս նկարագրող արտահայտությունը օգտագործվում էր Աստծո ձայնի համար Եզ. 43: 2, Հիսուսի ձայնի համար Հայտ. 1:15 և երկնային բազմության ձայնի համար Հայտ. 19: 6-ում: Հաճախ այն օգտագործվում է ցույց տալու համար, որ խոսողը երկնքում է (տես Հայտ. 4: 5; 11:19; 16: 8):

14: 3 «Եւ երգում էին մի նոր երգ աթոռի առաջին» Սա ակնարկ է Հայտ. 5: 9-ին: «Նրանք» կարող են լինել (1) հրեշտակային արարածները, որոնք երգ են երգում Հայտ. 5: 9 կամ (2) հարյուր

քառասունչորս հազարի երգը Հայտ. 14: 3 և 15: 2 ամփոփիչ մասում: Այս նոր երգը ակնարկ է Ես. 42:10 և հնարավոր է Սաղ.33:3; 40:3; 96: 1; 98:1; 144:9; 149: 1: Խոստացված Հոգու նոր ժամանակը եկել է:

- **«երեցների»** Տես Հատուկ Թեմա Հայտ. 4: 4-ում:
- **«որ երկրից փրկուել էին»** Մա Հին Կտակարանյան գաղափարն է մոտ բարեկամի, երբ ձեռք է բերում ընտանիքի անդամի ազատ արձակման (*go'el*, այն է Հռութ և Բողո) իրավունքը: Մա օգտագործվում է նրանց համար, ում համար Քրիստոսը մահացավ (տես Հայտ. 5: 9; 7:14): Տես Հատուկ Թեմա: Փրկագին/ փրկություն Հայտ. 5:9:

14: 4 «Սորանք են որ կանանց հետ չ'խառնակուեցան» Այս համարի վերաբերյալ շատ քննարկումներ են եղել, քանի որ ենթադրվում է, որ սա 7-րդ գլխի 144,000-ից ընտրված, ամուրի տղամարդկանց խումբ է: Այնուամենայնիվ կարծում եմ, որ այս արտահայտությունները կարող են բացատրվել խորհրդանշական, կամ առնվազն, Հին Կտակարանյան տերմիններով և երբեք չի նախատեսվել հասկանալ բառացիորեն: «Կանանց հետ պղծված, խառնված չ'էին» արտահայտությունը կարելի է հասկանալ մի քանի ձևով:

1. դա բառացիորեն վերաբերում է ամուրիությանը
2. այն վերաբերում է գազանի կամ մեծ պռնիկի հետ հոգևոր շնությանը (տես Հայտ. 14: 8; 17: 2; 18: 9)
3. այն վերաբերում է յոթ եկեղեցիներին տրված հատուկ պատվերներին (տես Հայտ. 2: 14,20,22; 3: 4)
4. այն վերաբերում է երկրպագության կամ ճակատամարտի պատրաստվելու Հին Կտակարանի ծիսական մաքրմանը (տես Ելից 19:14-15; 2 Օր. 23: 9-10; 1 Թագ. 21:4-5; 2 Թագ. 11:6-13)
5. դա պարզապես ակնարկ է Հին Կտակարանի Աստծո ժողովրդի անվան համար, «Միոնի կույս դուստր» (տես 4 Թագ. 19:21; Եր. 18:13; Ողբ 2:13; Ամովս 5:2; 2 Կոր. 11:2; Եփ. 5:27):

Պետք է պնդել, որ ամուսնացած զույգերի միջև սեռական հարաբերությունը ոչ հոգևոր գործունեություն չէ: Սեռական հարաբերությունը (ամուսնությունը) Աստծո գաղափարն է, երկիրը լցնելու Իր կերպը, Իր պատվերը (տես Ծննդ. 1: 28; 9: 1): Ամուրիությունը, անշուշտ, հոգևոր պարզ է ծառայության համար (տես 1 Կոր. 7), բայց դա սուրբ վիճակ չէ: Հունական ասկետիզմը աստվածաշնչյան չէ (ոչ նախաամուսնական և ոչ էլ ամուսնության ընթացքում սեռական գործողությունը):

- **«սորանք են որ Գառի ետեից գնում են ուր որ նա գնայ»** Մա խոսում է աշակերտության և ծառայության մասին (տես Հովհ. 7:17; 10: 4):
- **«սորանք փրկուեցան մարդկանցից Աստուծուն եւ Գառին իբրեւ երախայրի»** Այս տերմինը օգտագործվել է Հին Կտակարանում, ցույց տալով Աստծո տեր լինելը ողջ բերքի վրա (տես Ելից 23:19; 34:76): Նոր Կտակարանում խոսքը վերաբերում է եկեղեցուն (տես Եբր. 12: 23; Հակ. 1:18), Հիսուսի ժողովրդին, որոնք հարության առաջին պտուղներն են (տես 1 Կոր. 15:20,23; Հայտ. 1:5):

14: 5 «սորանք բերանումը նենգութիւն չ'գտնուեցաւ» Այս տերմինի մասին մի քանի հնարավոր տարբերակներ կան.

1. այն վերաբերում է նույն արտահայտությանը Հայտ. 21: 27 և 22: 15
2. դա վերաբերում է կայսրի երկրպագությանը, երբ քրիստոնյաները երբեք չեն ենթարկվել հալածողների հրամանին, չ'ասելով, «Կայսրը Տեր է»,

3. դա Հին Կտակարանում պղծության խորհրդանիշն է (տես Սաղ. 32: 2; Մով. 3:13)
4. դա կարող է վերաբերել անհավատությանը, ինչպես Հռ. 1:25; 1 Հովհ. 2: 22

▪ **«որովհետև անարատ են»** Սա բառացիորեն նշանակում է «առանց թերության» (տես Փիլ. 3: 6): Սկզբում այն վերաբերում էր գոհաբերվող կենդանիներին, սակայն օգտագործվում էր մարդկանց համար փոխաբերական իմաստով (տես Նոյը, Ծննդ. 6: 9,17 և Հոբբ, Հոբ 1: 1): Այն կիրառվում է Հիսուսի համար Եբր. 9:14 և 1 Պետ. 1:19: Քրիստոսանման կյանքին վերաբերող մեկ այլ ձև է: Քրիստոսանմանությունը Աստծո կամքն է Իր ժողովրդի համար (տես Ղև. 19:1; 2 Օր.18:13; Մատթ. 5:48; 1 Պետ. 1:16):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆՄԵՂ, ԱՆԱՐԱՏ, ՀԱՆՑԱԶՈՒԻՐԿ, ԱՌԱՆՑ ՆԱԽԱՏԻՆՔԻ
SPECIAL TOPIC: BLAMELESS, INNOCENT, GUILTLESS, WITHOUT REPROACH

Ա. Բացման սահմանումներ

1. Այս գաղափարը աստվածաբանորեն նկարագրում է մարդու սկզբնական վիճակը (այսինքն՝ Ծննդոց 1, Եդեմի Պարտեզը):
2. Մեղքը և ապատամբությունը թուլացրեցին կատարյալ փոխհարաբերության այս կարգավիճակը (այսինքն՝ Ծննդոց 3):
3. Մարդկությունը (արու և էգ) փափագում է Աստծո հետ իր փոխահարաբերության վերականգնման, քանի որ նրանք ստեղծվել են Նրա պատկերով ու նմանությամբ (այսինքն՝ Ծննդ. 1:26-27):
4. Աստված մեղավոր մարդկության հետ գործ ունեցավ մի քանի կերպերով
 - ա. աստվածավախ առաջնորդների միջոցով (այսինքն՝ Աբրահամ, Մովսես, Եսայի)
 - բ. գոհաբերության համակարգի միջոցով (այսինքն՝ Ղևտացոց 1-7)
 - գ. աստվածահաճո օրինակների միջոցով (այսինքն՝ Նոյ, Հոբ)
5. Ի վերջո Աստված ուղարկեց Մեսիային
 - ա. որպես Իր իսկ կատարյալ հայտնությունը (տես Հովհ. 1:1-14; Կող. 1:13-17; Եբր. 1:2-3)
 - բ. որպես մեղքի համար կատարյալ գոհ (տես Մարկ. 10:45; 2 Կոր. 5:21)
6. Քրիստոնյաները անմեղ են դառնում
 - ա. օրինական ճանապարհով՝ Քրիստոսի փոխանորդական արդարությամբ (տես Հռ. 4:3,6,8, 11,22,23,24; Հակ. 2:23)
 - բ. աստիճանաբար Սուրբ Հոգու կատարած գործի միջոցով (Հովհ. 16:8-11)
 - գ. Քրիստոնեության նպատակը Քրիստոսանմանությունն է (տես Հռ. 8:28-30; 2 Կոր. 3:18; Գաղ. 4:19; Եփ. 1:4; 4:13; 1 Թես. 3:13; 4:3; 5:23; 2 Թես. 2:13; Տիտ. 2:14; 1 Պետ. 1:15), որը իրականում Ադամի և Եվայի մեջ մարդկության կողմից կորցրած Աստծո պատկերի վերականգնումն է:
7. Երկինքը Եդեմի Պարտեզի կատարյալ փոխհարաբերության վերականգնումն է: Երկինքը Նոր Երուսաղեմն է, որն իջնելու է Աստծո ներկայությունից (տես Հայտ. 21:2) սրբագործված երկիր (տես 2 Պետ. 3:10): Աստվածաշունչը սկսում և ավարտվում է միևնույն թեմաներով:
 - ա. Աստծո հետ մտերմիկ, անձնական փոխհարաբերություն
 - բ. պարտեզի միջավայրում (Ծննդոց 1-2 և Հայտնություն 21-22)
 - գ. մարգարեական խոսքով՝ կենդանիների ներկայությունը և նրանց հետ միասին ապրելը (տես Եսայիա 11:6-9)

Բ. Հին Կտակարան

1. Գոյություն ունեն այնքան շատ եբրայերեն բառեր, որոնք կրում են կատարելության, անմեղության, անարատության նշանակությունը, որ դժվար կլինի անվանել և ցույց

տալ բոլոր մանրակրկիտ առնչությունները՝ կապերը:

2. Ահա այն հիմնական տերմինները, որոնք կրում են կատարելության, անմեղության կամ անարատության նշանակությունը (համաձայն Robert B. Girdlestone, Synonyms of the Old Testament, էջ 94-99).

ա. *shalom* (BDB1022, KB 1532)

բ. *thamam* (BDB1070, KB 1743)

գ. *calah* (BDB478, KB 476)

3. Մեպտուազինդ (այսինքն՝ վաղ եկեղեցու Աստվածաշունչը) եբրայերեն այս գաղափարները թարգմանում է կոյնե հունարեն տերմինների, որոնք կիրառվում են Նոր Կտակարանում (տես ստորև Գ. կետը)

4. Հիմնական նշանակությունը կապված է զոհաբերության համակարգի հետ

ա. *amōmos* (BDB 1071, տես Ելից 29:1; Ղև. 1:3,10; 3:1,6; Թվոց 6:14)

բ. *amiantos* և *aspilus* նաև ունեն հեթանոսական նշանակություն

Գ. Նոր Կտակարան

1. Օրինական գաղափարը

ա. Եբրայերենում օրինական հեթանոսական իմաստը թարգմանվում է *amōmos* (BDB 1071, տես Եփ. 5:27; Փիլ. 2:15; 1 Պետ. 1:19)

բ. Հունարենում օրինական նշանակությունները (տես 1 Կոր. 1:8; Կող. 1:22)

2. Քրիստոսն է անմեղ, անբիժ և անարատը (*amōmos*, տես Եբ. 9:14; 1 Պետ. 1:19)

3. Քրիստոսի հետևորդները պետք է հետամուտ լինեն Նրան (*amōmos*, տես Եփ. 1:4; 5:27; Փիլ. 2:15; Կող. 1:22; 2 Պետ. 3:14; Հուդա 1:24; Հայտ. 14:5)

4. Այս գաղափարը նաև կիրառվում է եկեղեցու առաջնորդների համար

ա. *aneglētos*, «առանց դատապարտության» (տես 1 Տիմ. 3:10; Տիտոս 1:6-7)

բ. *anepileptos*, «քննադատությունից վեր» կամ «առանց նախատիների» (տես 1 Տիմ. 3:2; 5:7; 6:14; Տիտոս 2:8)

5. «Անարատ» գաղափարը (*amiantos*) կիրառվում է՝

ա. Քրիստոսի համար (տես Եբր. 7:26)

բ. Քրիստոնյայի ժառանգության համար (տես 1 Պետ. 1:4)

6. «Լիարժեքության» կամ «ամբողջականության» գաղափարը (*holoklēria*) (տես Գործք 3:16; 1 Թես. 5:23; Հակ. 1:4)

7. «Առանց մեղադրանքի», «անհանցանք անմեղություն» գաղափարը փոխանցվում է *amemptos* տերմինի միջոցով (տես Ղուկ. 1:6; Փիլ. 2:15; 3:6; 1 Թես. 2:10; 3:13; 5:23)

8. «Մեղադրանքի ենթակա չլինելու» գաղափարը փոխանցվում է *amōmētos* (տես 2 Պետ. 3:14)

9. «Անբիժ», «անարատ» գաղափարը հաճախ կիրառվում է այնպիսի հատվածներում, որտեղ կան վերը նշված տերմիններից որևէ մեկը նույնպես (տես 1 Տիմ. 6:14; Հակ. 1:27; 1 Պետ. 1:19; 2 Պետ. 3:14)

- Դ. Եբրայերենում և հունարենում կիրառված բառերի քանակը, որոնք փոխանցում են այս գաղափարի իմաստը, ցույց է տալիս դրա կարևորությունը: Աստված հոգացել է մեր կարիքը Քրիստոսի միջոցով և այժմ մեզ կոչ է անում Նրա նման լինելու: Հավատացյալները պաշտոնապես, իրավաբանորեն՝ դատական կարգով, հռչակված են «ճիշտ», «արդար», «անմեղ» Քրիստոսի գործի շնորհիվ: Այժմ հավատացյալները պետք է գրավեն իրենց դիրքը: «Քայլենք լույսի մեջ, ինչպես Նա է լույսի մեջ» (տես 1 Հովհ. 1:7): «Քայլենք մեր կոչմանն արժանի» (տես Եփ. 4:1,17; 5:2,15): Հիսուսը վերականգնել է Աստծո պատկերը մեր մեջ: Մտերմիկ փոխհարաբերությունը այժմ հնարավոր է, սակայն հիշեք, որ Աստված ուզում է այնպիսի մարդիկ, որոնք այս կործանվող աշխարհում (այսինքն՝ ազգերի մեջ) կարտացոլեն Իր բնավորությունը, ինչպես Իր Որդին արեց: Մենք կանչված ենք սրբության (տես Մատթ.

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 14:6-7

Ճե տեսայ մի ուրիշ հրեշտակ թռչելիս երկնքի մեջ, որ յախտենական աւետիք ունէր, որ աւետարանէր երկրի վերայ բնակողներին. Եւ ամեն ազգի եւ ցեղի եւ լեզուի եւ ժողովրդի: Մե մեծ ձայնով ասում էր. Վախեցէք Աստուածանից եւ փառք տուէք նորան. Որովհետեւ նորա դատաստանի ժամը եկաւ. եւ երկրպագեցէք երկինքը եւ երկիրը եւ ծովը եւ ջրերի աղբիւրները Ստեղծողին:

14: 6 «Եւ տեսայ մի ուրիշ հրեշտակ թռչելիս երկնքի մեջ» Հայտ. 8:13 –ում կա մի արծիվ, որը թռչում է երկնքում, ինչը նշանակում է, որ տեսանելի է և կարող է հոչակել ողջ երկրին:

▪ **«որ յախտենական աւետիք ունէր, որ աւետարանէր երկրի վերայ բնակողներին»** Այս արտահայտությունը «հավիտենական ավետարան» հանդիպում է միայն այստեղ: Հատկանշական է, որ «ավետարանը» այստեղ այն մարդկանց համար է, ովքեր ապրում են երկրի վրա, և դա հաճախ օգտագործվում է անհավատների համար Հայտնության մեջ: Ոմանք դա տեսնում են որպես Մատթ. 28: 18-20-ի կատարում, կամ ավելի կոնկրետ Մատթ. 24:14 և Մարկ. 13:10-ի: Այս ավետարանի բովանդակությունը շատ նման է Հովհաննես Մկրտչի ուղերձին (տես Ղուկ. 3: 3-14) կամ Հիսուսի խոսքը չարի մասին Մատթ. 4:10-ում: Դատաստանի ուղերձը այս ավետարանի կարևոր բաղադրիչն է: 6-7 համարները կարևոր են, քանի որ նրանք ցույց են տալիս, որ Աստծո կողմից ուղարկված բոլոր դատաստանները մեղավոր մարդկության վրա փրկագնման նպատակով են (տես Հայտ.9: 20-21; 16: 9, 11):

Հայտ. 14:12-ում ճշմարիտ հավատացյալները բնութագրվում են որպես (1) նրանք, ովքեր պահում են (այն է ներկա դերբայ) Աստծո պատվիրանները և (2) պահում են (այն է նույն ներկա դերբայը) հավատքը Հիսուսի հանդեպ:

▪ **«Եւ ամեն ազգի եւ ցեղի եւ լեզուի եւ ժողովրդի»** Տես նշում Հայտ. 10:11-ում:

14: 7 «Վախեցէք Աստուածանից եւ փառք տուէք նորան» Սա աօրիստ կրավորական (deponent) հրամայական է և աօրիստ ներգործական հրամայական: Հայտ. 14: 7-ում երեք աօրիստ հրամայականներ կան: Մարդկանց պատվիրված է արձագանքել Աստծուն վճռական հավատքի գործողությունով (տես Հովհ.1:12; Հռ.10: 9-13): Հայտ.11:13-ում ընկած մարդկությունը կարծես թե Աստծուն փառք է տալիս, սակայն արագորեն հեռանում է գագանի հրաշքների պատճառով 13-րդ գլխում (Սերմնացանի առակի նմանատիպ աստվածաբանությամբ, Մատթ. 13; Մարկ, 4; Ղուկ. 8):

▪ **«Որովհետեւ նորա դատաստանի ժամը եկաւ»** «Ժամը» տերմինը նշանակալի է Հովհաննեսի Ավետարանում (տես Հովհ. 2: 4; 4: 21,23; 5: 25,28; 7:30; 8:20; 12: 23,27; 13: 1; 16: 21,32; 17: 1): Այն խոսում է ներկա իրադարձության աստվածային ժամանակի մասին (Տիրոջ Օրը, տես Հայտ. 14:15 և 9:15):

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ԺԱՄԸ (hōra)

SPECIAL TOPIC: THE HOUR (hōra)

«Ժամ» տերմինը Ավետարաններում կիրառվում է մի քանի տարբեր ձևերով, ինչպես

1. ժամանակի համար (տես Մատթ. 8:13; 26:40; Ղուկ. 7:21; Հովհ. 11:9)
2. փորձության և փարձանքի ժամանակի համար փոխաբերություն (տես Մատթ. 10:19; Մարկ.13:11; Ղուկ.12:12)
3. փոխաբերություն Հիսուսը սկսում է Իր ծառայությունը (տես Հովհ. 2: 4; 4:23)
4. դատաստանի օրվա համար փոխաբերություն (այն է Երկրորդ Գալուստը, տես Մատթ. 24: 36,44; 25:13; Մարկ.13:32; Հովհ. 5:25,28)

5. Հիսուսի չարչարանքների համար փոխաբերություն (տես Մատթ. 26:45; Մարկ. 14: 35,41; Հովհ. 7:30; 8:20; 12: 23, 27; 13:1; 16: 32; 17:1)

- **«երկրպագեցեք ...Ստեղծողին»** Սա ևս մեկ աօրիստ ներգործական հրամայական է, որը վճռական հրաման է:
- **«երկինքը եւ երկիրը եւ ծովը եւ ջրերի աղբյուրները»** Սա նման է Գործք 14:15-ում արձանագրված հաստատմանը, որը մեջբերում է Օսնդ. 14:19; Ելից 20:11 կամ Սաղ. 146: 6: Աստված նկարագրվում է որպես ստեղծող, ինչպես Հոբ 38-41-ում: Միակ անսովոր արտահայտությունն է «ջրի աղբյուրները», որոնք ոմանք համարում են
 1. կապված է հրեշտակների վաղ պատուհասների հետ (տես Հայտ. 8: 10)
 2. ի տարբերություն ոչ խմելու ծովի ջրի

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 14:8

⁸Եւ մի ուրիշ հրեշտակ եկաւ նորա ետեւից ասելով. Ընկա՛ւ, ընկա՛ւ Բաբելոն մեծ քաղաքը, որովհետեւ իր պռոնկութեան բարկութեան զինուցը խմեցրեց բոլոր ազգերին.

14: 8 «Ընկա՛ւ, ընկա՛ւ Բաբելոն մեծ քաղաքը» Բայը ոչ միայն կրկնվում է, այլ առաջին անգամ հանդիպում է հունարեն նախադասության մեջ՝ ընդգծելով այդ աօրիստ ներգործական սահմանականները: Հայտնության գիրքը շատ դժվար է մեկնաբանել, քանի որ գաղափարները ընդարձակվում են տարբեր վայրերում (գազանը հակիրճ հիշատակվում է Հայտ. 11: 7-ում, բայց լիարժեք չի քննարկվում մինչև գլուխ 13-ը): Բաբելոնի անկման մասին ամբողջական քննարկումը հանդիպում է Հայտ. 16:19 և 17: 1-18: 24: Այն խոսում է Հռոմի համար (տես 1 Պետ. 5:13; II Baruch 11: 1; 67: 7; Sibylline Oracles 5: 143, 159, 424), բայց ի վերջո դա վերաբերում է բոլոր մարդկային հասարակություններին, որոնք կազմակերպված են և գործում են Աստծուց հեռու: Այս մարդկային ինքնաբավությունը անկման անմիջական արդյունքն է (տես Օսնդոց 3) և առաջին անգամ արտահայտվեց Բաբելոնի աշտարակաշինության ժամանակ (տես Օսնդոց 10-11): Համաշխարհային կայսրությունները դառնում են ավելի հակաԱստվածային, որը վերջին ժամանակներում կրեթի նեոի թագավորությանը (տես Դան. 2: 7-8): Սա կարող է ակնարկ լինել Ես. 21: 9; Եր. 51: 8:

- **«որովհետեւ իր պռոնկութեան բարկութեան զինուցը խմեցրեց բոլոր ազգերին»** Ակնարկը Եր. 51: 7-8 (տես Հայտ. 17: 2,4; 18: 3): «Բարկություն» տերմինը հունարեն «*thumos*» տերմինն է, որը վերաբերում է զգացմունքների բորբոքմանը (տես ամբողջ նշումը Հայտ. 7: 14, տես 17: 2,3; 18: 3): Նրանք, ովքեր խմում են Բաբելոնի զինին, խմելու են ՅԱՀՎԵԻ զինին (տես Հայտ. 14: 9):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 14:9-12

⁹Եւ մի երրորդ հրեշտակ եկաւ նորանց ետեւից մեծ ձայնով ասելով. Ով որ երկրպագութիւն է անում գազանին եւ նորա պատկերին եւ դրոշմ ընդունում իր ճակատի կամ իր [աջ] ձեռքի վերայ, ¹⁰Այնպիսին Աստուծոյ սրտմտութեան զինուցը պիտի խմէ, որ անխառն անուած է նորա բարկութեան բաժակի մէջ. Եւ պիտի տանջուի կրակի եւ ծծմբի մէջ սուրբ հրեշտակների եւ Գառի առաջին: ¹¹Եւ նորանց տանջանքի ծուխը վեր է ելնում յալիտեանս յալիտենից. Եւ հանգիստ չ'ունին ցերեկ եւ գիշեր նորանք որ երկրպագեցին գազանին եւ նորա պատկերին, եւ ով որ էլ ընդունում է նորա անունի դրոշմը: ¹²Այստեղ է սուրբերի համբերութիւնը. Այստեղ են Աստուծոյ պատուիրանքները եւ Յիսուսի հաւատքը պահողները:

14: 9 «Եթե ...» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, երկու բայերով՝ «երկրպագություն է անում» և «ընդունում է»: Որոշ մարդիկ, շատ մարդիկ, կկատարեն այս

կոապաշտական գործողությունները: Մա Աստծո Մեսիային ընդունելու ճիշտ հակառակն է Հայտ. 14: 7 և 12: Նրանք, ովքեր փորձառելու են Աստծո բարկությունը (տես Հայտ. 14: 10):

14:10 «Աստուծոյ սրտմտութեան զինուցը պիտի խմէ» Մարդիկ ունեն միայն երկու հոգևոր տարբերակ՝ Աստված կամ չարը: Հունարեն բարկություն *orgē* տերմինը վերաբերում է «հաստատված ընդդիմությանը»: Տես նշումը, Հայտ. 7:14-ում: Ակնարկը Ես. 51:17 կամ Եր. 25: 15-16 (տես Հայտ. 16:19; 19:15): Հավատացյալները փորձառելու են Բաբելոնի բարկությունը (տես Հայտ.14: 8), իսկ անհավատները՝ Աստծո բարկությունը (տես Հայտ. 14:10):

Տերմինների այս տարօրինակ համադրությունը (բառացիորեն «խառնել չխառնվողը») նշանակում է, որ Աստծո բարկության զինին խառնվել է այլ տարրերի հետ, որպեսզի այն չափազանց հարբեցնող լինի, սակայն չի խառնվում, քանի որ ջուրը տակն է նստում: «Գավաթ» տերմինը հաճախ օգտագործվում էր Հին Կտակարանում Աստծո դատաստանի համար (տես Ես. 51: 17,22; Եր. 25: 15-17,27-29; Սաղ. 75: 8): Հիսուսը խմեց Աստծո զայրույթի բաժակը ողջ մարդկության համար (տես Մարկ.14:36): Անհավատ աշխարհը հավատքով չի արձագանքի Նրան, ուստի նրանք ճաշակելու են գավաթը:

**ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԱԼԿՈՀՈԼԻ ԵՎ ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆՂԵՊ
SPECIAL TOPIC: BIBLICAL ATTITUDES TOWARD ALCOHOL AND ALCOHOL ABUSE**

- I. Աստվածաշնչյան տերմիններ
- Ա. Հին Կտակարան
1. *Yayin* - Մա ընդհանուր տերմին է զինու համար (BDB 406, KB 409), որն օգտագործվում է 141 անգամ: Ստուգաբանությունն անորոշ է, քանի որ դա չունի հրեական արմատ: Դա միշտ նշանակում է թթվեցրած մրգահյութ, սովորաբար խաղողի: Որոշ բնորոշ հատվածներ Ծննդ. 9:21; Ելից 29:40; Թվոց 15: 5,10:
 2. *Tirosh* - Մա «նոր զինին» է (BDB 440, KB 1727): Մերձավոր Արևելքի կլիմայական պայմաններից ելնելով թթվեցումը շուտ է սկսվել, հյութ քամելուց վեց ժամ անց: Այս տերմինը վերաբերվում է զինու թթվեցման գործընթացին: Որոշ բնորոշ հատվածներ, տես 2 Օր. 12:17; 18: 4; Ես. 62: 8-9; Ովս. 4:11:
 3. *Asis* – Մա ակնհայտորեն ալկոհոլային խմիչքներ է («քաղցր զինի», BDB 779, KB 860, օրինակ Հովել 1: 5; Ես. 49:26):
 4. *Sekar* – Մա «թունդ խմիչք» տերմինն է (BDB 1016, KB 1500): Եբրայերեն արմատն օգտագործվում է «հարբած» կամ «հարբեցող» տերմինի մեջ: Դրա վրա ինչ - որ բան է ավելացված , որպեսզի այն ավելի հարբեցնող լինի: Այն գուցահեռ է *yayin* (տես Առ. 20: 1; 31: 6; Ես. 28: 7):
- Բ. Նոր Կտակարան
1. *Oinos* – *yayin*-ի հունարեն համարժեքն է
 2. *Neos oinos* (նոր զինի)- *tirosh*-ի հունարեն համարժեքը (հմմտ. Մարկ. 2:22)
 3. *Gleuchos vinos* (քաղցր զինի, *asis*) - զինի թթվեցման վաղ փուլում (հմմտ. Գործք 2:13)
- II. Աստվածաշնչյան օգտագործում
- Ա. Հին Կտակարան
1. Գինին Աստծո պարզն է (Ծննդ 27:28, Սաղ. 104: 14-15; Ժող. 9: 7; Ովս. 2: 8-9; Հովել 2: 19,24; Ամովս 9:13; Զաք. 10: 7):
 2. Գինի զոհաբերության արարողության մի մասն է (Ելից 29:40; Ղև. 23:13; Թվոց 15: 7,10; 28:14, 2 Օր. 14:26; Դատ. 9:13):
 3. Գինին օգտագործվում է որպես դեղորայք (2 Թագ. 16: 2; Առ. 31: 6-7):
 4. Գինի կարող է իսկական խնդիր լինել (Նոյ - Ծննդ 9:21; Ղովտ - Ծննդ 19: 33,35;

Սամսոն - Դատ. 16; Նաբադը - 1 Թագ. 25:36; Ուրիան - 2 Թագ. 11 : 13; Ամնոնը - 2 Թագ. 13:28; Էլան - 3 Թագ. 16: 9; Բենադադ - 3 Թագ. 20:12; իշխանները - Ամովս 6: 6 և տիկնայք - Ամովս 4):

5. Գինին կարելի է չարաշահել (Առ. 20:1; 23: 29-35; 31: 4-5; Ես. 5: 11,22; 19:14; 28: 7-8; Ովսէէ 4:11):

6. Գինին արգելվում էր որոշակի խմբերի (քահանաներին ծառայության ժամանակ, Ղև. 10: 9; Եզեկ. 44:21; Ուղտավորները, Թվ. 6 և իշխանները, Առ. 31: 4-5, Եսայի 56: 11-12; Ովսէէ 7: 5):

7. Գինին օգտագործվում է վախճանաբանական իմաստով (Ամովս 9:13; Հովել 3:18; Ջաք. 9:17):

Բ. Ոչ աստվածաշնչյան գրքեր

1. Չափավոր գինին շատ օգտակար է (Ժող. 31:27-33):

2. Ռաբբիներն ասում են «Գինին բոլոր դեղերից մեծագույնն է, որտեղ գինին բացակայում է, դեղերն են անհրաժեշտ դառնում» (BB 58B):

Գ. Նոր Կտակարան

1. Հիսուսը մեծ քանակությամբ ջուրը փոխեց գինու (Հովհ. 2: 1-11):

2. Հիսուսը գինի խմեց (Մատթ. 11: 18-19; Դուկ. 7: 33-34; 22: 17):

3. Պետրոսը մեղադրվում է հարբեցողության մեջ «նոր գինի» Պենտեկոստեի Օրը (Գործք 2:13):

4. Գինի կարող է օգտագործվել որպես դեղամիջոց (Մարկ. 15:23; Դուկ. 10:34; 1 Տիմ. 5:23):

5. Առաջնորդները չպետք է չարաշահող լինեն: Սա չի նշանակում լրիվ ձեռնպահ մնալ(1 Տիմ. 3: 3,8; Տիտոս 1: 7; 2: 3; 1 Պետ. 4: 3):

6. Գինին օգտագործվում է վախճանաբանական իմաստով (Մատ. 22:1; Հայտ. 19: 9):

7. Հարբեցողությունն արտահայտում էր ավստասանք ինչ որ առիթի դեպքում (Մատթ. 24:49; Դուկ.12:45; 21:34; 1 Կոր. 5: 11-13; 6:10; Գաղ. 5:21; 1 Պետ. 4: 3; Հռ. 13 : 13-14):

III. Աստվածաբանական ներմբռնում

Ա. Դիալեկտիկական լարվածություն

1. Գինին Աստծո պարզն է:

2. Հարբեցողությունը մեծ խնդիր է:

3. Հավատացյալները, որոշ մշակույթներում, պետք է սահմանափակեն իրենց ազատությունները հանուն Ավետարանի (Մատթ. 15: 1-20; Մարկ. 7: 1- 23; 1 Կոր. 8-10; Հռ. 14):

Բ. Տրված սահմաններից դուրս գալու միտում

1. Աստված է բոլոր լավ բաների աղբյուրը
ա. Ուտելիք –Մարկ. 7:19; Դուկ. 11:44; 1 Կոր. 10: 25-26

բ. ամեն ինչ մաքուր է - Հռ. 14: 14, 20; 1 Տիմ. 4: 4

գ. ամեն բան օրինավոր է - 1 Կոր. 6:12; 10:23

դ. բոլոր բաները մաքուր են- Տիտոս 1:15

2. Մեղավոր մարդկությունը չարաշահել է Աստծո բոլոր պարզները՝ հանելով դրանք Աստծո կողմից տրված սահմաններից դուրս:

Գ. Չարաշահումը մեր մեջ է և ոչ թե իրերի: Ֆիզիկական ստեղծագործության մեջ ոչ մի չար բար չկա (տես վերը Բ. 1):

IV. Առաջին դարի հրեական մշակույթն ու խմորումը/թթվեցումը

Ա. Խմորումը շատ շուտ է սկսվում, խաղողը ճզմելուց մոտավորապես 6 ժամ անց

- Բ. Հրեական ավանդույթն ասում է, որ երբ մի փոքր փրփուր է հայտնվում մակերեսին (դա խմորումի նշան է), այն ենթակա է գինու-տասանորդի (*Ma aseroth* 1: 7): Այն կոչվում էր «նոր գինի» կամ «քաղցր գինի»:
- Գ. Հիմնական խմորումը/թթվեցումը ավարտվում է մեկ շաբաթ հետո:
- Դ. Երկրորդական խմորումը տևում էր մոտ 40 օր: Այս վիճակում դա համարվում է «հնացած գինի» և կարող էր առաջարկվել գոհասեղանի ծառայության ժամանակ (*Edhuyyoth* 6:1):
- Ե. Գինին, որը հանգստացել էր իր նստվածքի մեջ (հին գինի) համարվում էր լավը, բայց նախքան օգտագործելը պետք էր լավ քամել:
- Զ. Գինին համարվում էր պատրաստ կամ տարիքով թթվեցումից սովորաբար մեկ տարի հետո: Երեք տարի էր ամենաերկար ժամանակահատվածը, որ գինին կարող էր ապահով պահվել: Այն կոչվում էր «հին գինի» և պետք է բացվեր ջրով:
- Է. Միայն վերջին 100 տարիների ընթացքում ստերիլ միջավայրի և քիմիական հավելումների պատճառով խմորումը կամ թթվեցումը երկարել է: Հին աշխարհը չի կարող կանգնեցնել թթվեցման բնական գործընթացը:

V. Եզրափակիչ մտքեր

- Ա. Համոզվեք, որ ձեր փորձառությունը, աստվածաբանությունը և աստվածաշնչյան մեկնաբանությունը չեն արժեզրկում Հիսուսին և առաջին դարի հրեական / քրիստոնեական մշակույթը: Նրանք ակնհայտորեն ոչ ամբողջապես չիմող էին:
- Բ. Ես չեմ քարոզում ակոհոլի սոցիալական օգտագործումը: Սակայն, շատերը չափազանցել են Աստվածաշնչի դիրքորոշումը այս թեմայի շուրջ և այժմ պնդում են, որ բարձրակարգ արդարությունը հիմնված է մշակութային / հարանվանական կողմնակալության վրա:
- Գ. Ինձ համար Հռ. 14 և 1 Կոր. 8-10 գլուխները տալիս են պատկերացում և ուղեցույց՝ հիմնված սիրո և հարգանքի վրա, դեպի մեր հավատակիցները և ավետարանի տարածումը մեր մշակույթներում, ոչ անձնական ազատությունը, ոչ էլ դատապարտող քննադատությունը: Եթե Աստվածաշունչը միակ աղբյուրն է հավատքի և գործունեության, ապա մենք պետք է վերանայենք այդ հարցը:
- Դ. Եթե մենք հակված ենք ամբողջական չափավորությանը որպես Աստծո կամք, ինչ ենք ենթադրում Հիսուսի մասին, ինչպես նաև այն ժամանակակից մշակույթները, որոնք պարբերաբար օգտագործում են գինի (օրինակ Եվրոպա, Իսրայել, Արգենտինա):

▪ **«Եւ պիտի տանջուի կրակի եւ ծծմբի մեջ»** Սա ակնարկ է Սողոմի և Գոմորի վրա Աստծո դատաստանի մասին (տես Ծննդ. 19: 24,28; Ղուկ. 17:29; կամ, ընդհանուր առմամբ, դատաստանը Սաղ. 11: 6; Ես. 34: 8-11; Եզ. 38: 22): Տանջանքը երկու գագանների (տես 19:20), չարի (տես 20:10) և անապաշխար մարդկության վախճանն է (տես 20:15; 21: 8):

Կրակը եղել է Աստծո սրբության Հին Կտակարանյան փոխաբերությունը (տես Թվոց 9: 15-16, և այլն): Այն օգտագործվել է որպես մաքրման միջոց (տես Ղև. 8: 17,32; 9: 11,24; 13:32, 55, 57 և այլն) և դատաստանի (տես Ղև. 10: 1-2; Թվոց 11: 1-3, և այլն): Դատավճռի հետ այս համագործակցումը ընդլայնվեց, որպեսզի նկարագրի դատաստանի վայրը: Հիսուսն օգտագործեց Հինոմի (*Gehenna*) որդիների հովտում Երուսաղեմի հարավային աղբանոցը որպես հավիտենական պատժի խորհրդանիշ (տես Հայտ. 20:10, 14-15):

14:11 «նորանց տանջանքի ծուխը վեր է ելնում յաիտեանս յաիտենից» Կուզենայի հավատալ ունիվերսալիզմին կամ առնվազն երկրորդ հնարավորությանը՝ Ավետարանին արձագանքելու համար, սակայն, ըստ Սուրբ Գրքի, մարդիկ պետք է արձագանքեն Աստծո առաջարկին հավատքով

(տես Մարկ.1:15; Գործք 3:16,19; 20:21), մինչ նրանք ապրում են (տես Եր. 9:27); եթե հրաժարվում են արձագանքել, հետևանքները վերջնական են և հավիտենական (տես Մարկ. 9: 47-48; Մատթ. 25: 46; Հովհ. 5: 29; Գործք 24:15; 2 Թեա. 1: 6-9): Անօրենի մշտական պատիժը համեմատվում է սրբերի անցողիկ տառապանքների հետ: Սա սատարում է «նրանք գիշեր ու ցերեկ հանգստություն չեն ունենալու» արտահայտությանը, իսկ Հայտ. 14: 13-ում սուրբերը հանգիստ են ունենալու:

Սա հեշտ թեմա չէ քննարկելու համար: Աստծո սերը և Նրա սիրտը փրկության համար հակասում են հավիտենական պատժի վճռին: Հայտնության գրքի Աստծո դատաստանների մեծամասնությունը փրկության համար է, ինչպես Եգիպտոսի պատուհասները և 2 Օր. 27-29-ի ուխտի անեծքները: Մակայն Աստծո վերջնական մերժումը մշտական է. Դա կարգապահության համար է, այլ ոչ թե պատժի: Սա այնքան դժվար է հասկանալ, զգացմունքայնորեն ընկալել: Այն ընդգծում է ավետարանչության անհրաժեշտությունը:

Նախքան այս թեման թողնելը, թույլ տվեք ձեզ հետ կիսել մի միտք, որը ես ունեցել եմ այս ոլորտում: Որքան վատ է դժոխքը մարդկության համար, այնքան ավելի վատ է Աստծո համար: Աստված ստեղծեց մարդուն Իր պատկերով հաղորդակցվելու համար: Ամբողջ ստեղծագործությունները բեմ է Աստծո համար՝ հանդիպելու և ճանաչելու մարդկանց: Աստված սիրում է Ադամի բոլոր որդիներին ու դուստրերին (տես Եզ.18: 32; 1 Տիմ. 2: 4; 2 Պետ. 3: 9): Նա սիրում է նրանց այնքան, որ պատրաստ էր ուղարկել իր Որդուն՝ նրանց փոխարեն մեռնելու համար (տես Հովհ.3:16; 2 Կոր.5:21): Բայց Նա ընտրել է, որ մեղավորները պետք է արձագանքեն Իրեն վստահությամբ, հավատքով, ապաշխարությամբ, հնազանդությամբ, ծառայելով, երկրպագությամբ և համբերությամբ: Աստված ոչ մեկին չի ուղարկում դժոխք, այլ անհավատներն են իրենց ուղարկում (տես Հովհ. 3: 17-21): Դժոխքը բաց է, արյունահոսող ցավ Աստծո սրտում, որը երբեք չի բուժվի: Վստահ չեմ, որ Աստված երբևէ կունենա «լավ օր»: Օհ՛, կամավոր ապստամբության ցավը գոհաբերվող սիրո դեմքին:

14:12 Համբերությունը ամբողջ գրքի հիմնական թեման է (տես Հայտ. 1: 9; 2: 7,11,17,19,26; 3: 5,10,12,21; 13:10; 21: 7) . Աստծո ժողովուրդը հավատարիմ են եղել նույնիսկ հալածանքի մեջ: Տես ամբողջ նշումը, Հայտ. 2: 2-ում:

- **«սուրբերի»** տես Հատուկ Թեմա, Հայտ. 5:8
- **«Աստուծոյ պատուիրանքները եւ Յիսուսի հաւատքը պահողները»** Հավատացյալների նմանատիպ նկարագրություն հանդիպում է Հայտ. 12:17: Ուշադրություն դարձրեք, որ շեշտը դրվում է Հիսուսի հետ անձնական հավատքի հարաբերության վրա, որին հետևում է հնազանդության ապրելակերպը (տես Հայտ. 12: 17; Դուկ. 6: 46):
 - Հասուն քրիստոնեությունը բաղկացած է
 1. անձ, որին պետք է ողջունել (անձնական հարաբերություն Քրիստոսի հետ)
 2. ճշմարտություններ այդ մարդու մասին, որին պետք է հավատալ (Նոր Կտակարանի վարդապետական ճշմարտություններ)
 3. կյանք, որ պետք է ապրել այդ մարդու նման (ամենօրյա Քրիստոսանմանություն)Բոլոր երեքը պահանջվում են հասուն, առողջ, աճող հավատքի համար:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 14:13
¹³Եւ երկնքից մի ձայն լսեցի որ ասում էր ինձ. Գրիբ, Երանելի են այն մեռելները որ Տէրումն են ննջում այսուհետեւ. Այո, Հոգին ասում է որ իրանց աշխատանքիցը հանգիստ կ'առնեն, եւ նորանց գործերը գնում են նորանց ետեւից:

14:13 «Երանելի են» Սա յոթը երանելիներից երկրորդն է Հայտնության գրքում (տես Հայտ.1: 3; 14:13; 16:15; 19: 9; 20: 6; 22: 7,14):

▪ **«այն մեռելները որ Տերումն են ննջում»** Սա վերաբերում է մարտիրոսներին (ինչպես և 144,000), սակայն մահվան ճշգրիտ ժամանակը անորոշ է: Որոշ մեկնաբաններ դա կապում են Հովհաննեսի ժամանակաշրջանի հետ, իսկ ոմանք՝ վերջին ժամանակների հետ: Չնայած ժամանակի տարրն անորոշ է, կարևոր է իմանալ, որ Աստծո սրբերի մահը թանկ է Նրա համար (տես Սաղ. 116: 15):

Թեև այս խումբը բաղկացած է քրիստոնյա մարտիրոսներից, լավագույնն է այն որպես «վկաներ» մեկնաբանել՝ հավատացյալների ավելի ընդհանուր իմաստով: Առաջին դարում ոչ բոլոր հավատացյալները սպանվեցին, ոչ բոլորն էն սպանվելու վերջի նեղությունների ժամանակ, բայց բոլոր հավատացյալները պետք է հավատարիմ մնան Քրիստոսին: Այս փոխաբերությունը ընդգրկուն է, ոչ թե բացառող:

▪ **«նորանց գործերը գնում են նորանց ետեւից»** Դա քրիստոնեության պարադոքսն է, որ որպես հավատացյալներին Հոգին մեզ տալիս է պարզներ փրկության ժամանակ՝ արդյունավետ ծառայության համար և Քրիստոսի մարմնի համար (տես 1 Կոր. 12: 7,11): Աստված կանչում է, սպառազինում և ստանում հավիտենական պտուղներ անկատար հավատացյալների միջոցով: Դա Նրա պարզն է, Նրա Հոգին, որը գորացնում է, բայց սուրբերը վարձք են ստանում իրենց հավատարմության, մատչելիության և հաստատակամության համար (տես Հատուկ Թեմա, Հայտ. 2:10): Հավատացյալները չեն փրկվում գործերով (ինքնուրույն ջանքերով), բայց նրանք փրկվում են քարի գործերի համար (տես Եփ. 2: 8-9, 10): Աստծո կամքը յուրաքանչյուր հավատացյալի համար Քրիստոսանման ծառայությունն է (տես Հռ. 8: 29; Գաղ. 4:19; Եփ. 1: 4):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 14:14-16

¹⁴Եւ տեսայ, եւ ահա մի սպիտակ ամպ, եւ ամպի վերայ մէկը նստած մարդի Որդու նման, որ իր գլխի վերայ ոսկի պսակ, եւ իր ձեռքումը սուր գերանդի ունէր: ¹⁵Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս եկավ տաճարիցը, որ մեծ ձայնով աղաղակում էր ամպի վերայ նստողին. Ուղարկիր քո գերանդին եւ հնձիր. Որովհետեւ քո ժամանակն եկաւ հնձելու, որ երկրի հունձքը հասել է: ¹⁶Եւ ամպի վերայ նստողը վայր գցեց իր գերանդին երկրի վերայ, եւ երկիրը հնձուեցաւ:

14: 14-16 Գոյություն ունեն երկու տարբեր հունձք (տես 4 Եզրաս 13: 10-11), նկարագրված Հայտ. 14: 14-16 և 17-19-րդ համարներում: Առաջինը հացահատիկային բերքն է, իսկ երկրորդը՝ խաղողի բերքը: Եթե այս տարբերությունը կարելի է պահպանել (Հովել 3: 13-ում երկու հունձքերը դիտվում են որպես մեկ դատաստան), առաջինը վերաբերում է արդարների հունձքին (տես Մատթ. 9: 37-38; 13: 30,38; Մարկ. 4: 26-29; Ղուկ. 10: 2; Հովհ. 4: 35-38), իսկ երկրորդ խաղողի հունձքը նշված է Ես. 63: 2-6; Եր. 51:33; Ողբ 1:15; Հովել 3:13 և Հայտ. 19:15 վերաբերում է ամբարիշտներին:

14:14 «եւ ահա մի սպիտակ ամպ, եւ ամպի վերայ մէկը նստած մարդի Որդու նման, որ իր գլխի վերայ ոսկի պսակ» 6 և 10 գլուխներում ինքնության նույն խնդիրները վերաբերում են այս համարներին: Արդյո՞ք սա աստվածային Մեսիայի նկարագրությունն է (տես Դան. 7:13), թե մեկ այլ ծառայող հրեշտակի՝ Նրա կողմից ուղարկված: Կարծում եմ, դա ևս մեկ զորավոր հրեշտակ է

1. սա հրեշտակների շարքից է (տես Հայտ.14: 15,17,18)
2. Մատթ. 13:39, 41-42, 49-50-ում ասվում է, որ հրեշտակները հավաքելու և բաժանելու են մարդկանց վերջին ժամանակում (ոմանք օրհնության իսկ ոմանք դատաստանի համար)
3. հրեշտակը պատվիրում է նրան (տես Հայտ. 14:15)

14:15 Սա ակնարկ է Հովել 3:13:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 14:17-20

¹⁷Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս եկաւ տաճարիցը որ երկնքումն է, որ սա էլ սուր գերանդի ունէր: ¹⁸Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս եկաւ սեղանիցը որ իշխանութիւն ունէր կրակի վերայ, եւ մեծ աղաղակով գոչեց սուր գերանդին ունեցողին ասելով. և Ուղարկիր քո սուր գերանդին եւ երկրի այգու ողկոյզները քաղիր, որովհետեւ նորա խաղողը հասել է: ¹⁹Եւ հրեշտակն իր գերանդին գցեց երկրի վերայ, եւ երկրի այգու խաղողը քաղեց, եւ գցեց Աստուծոյ բարկութեան մեծ հնձանի մէջ: ²⁰Եւ հնձանը կոխուեցաւ քաղաքիցը դուրս, եւ դուրս եկաւ արիւնը հնձանիցը մինչեւ ձիերի սանձքը հազարեւեց հարիւր ասպարեզի չափ:

14:17 «մի ուրիշ հրեշտակ դուրս եկաւ տաճարիցը որ երկնքումն է» Սա վերաբերում է երկնային հոգևոր խորանին (տես Եբ. 8: 2; 9: 11, 23-24):

14:18 «որ իշխանութիւն ունէր կրակի վերայ» Հրեշտակները գորություն ունեն քամու վրա (տես Հայտ. 7: 1), կրակի վրա (տես Հայտ. 14: 18) և ջրի վրա (տես Հայտ. 16: 5): Սա արտացոլում է ռաբինական հուդայականության հասկացությունը, որ հրեշտակները ներգրավված են բնական աշխարհում: Թեև Նոր Կտակարանը չի ընդգծում դա, չի նշանակում, որ այն ճշգրիտ չէ (տես Եբ. 1: 7,14):

14:20 «քաղաքիցը դուրս» Ոմանք դա տեսնում են որպէս ակնարկ այն բանի, որ Քրիստոսը խաչվել է քաղաքից դուրս (տես Եբր. 13:12): Մյուսները դա համարում են պարզապէս ակնարկ Հին Կտակարանյան մաքրման օրենքներին, երբ անմաքուրները դուրս էին բերվում ճամբարից դուրս (տես Ղև. 8:17; 9:11): Այնուամենայնիվ, դա կարող է վերաբերել Երուսաղեմ քաղաքի շուրջ Աստծո թշնամիների հավաքելուն վերջին ժամանակներում (տես Մաղ. 2: 2,6; Դան. 11:45; Հովել 3: 12-14; 14: 1-4; իսկ միջկտակարանյան ապոկալիպտիկ 1 Ենք 53:1 գիրքը): Այստեղ կրկին խնդիրն այն է, թե որն է բառացի, իսկ որը պատկերավոր, երբ հարցը հասնում է գլխավոր մեկնաբանությանը:

▪ **«դուրս եկաւ արիւնը հնձանիցը մինչեւ ձիերի սանձքը հազարեւեց հարիւր ասպարեզի չափ»**
Սա կլինի մեծ պատերազմի արդյունքը, որը նկարագրվում է ավելի ուշ գլուխներում, կամ պարզապէս փոխաբերություն է խաղողի հյութի գույնից վերցված: Իրական հարցն այն է, թե արդյոք դա բառացի է կամ սիմվոլիկ: Արդյոք սա նկարագրում է ժամանակի / տարածության մեջ պայքարը, թե՞ բարու և չարի խորհրդանշական տիեզերական պայքարը: Ժանրը հակված է ավելի ուշը, բայց Հիսուսի Մատթ. 24; Մարկ. 13; և Ղուկ. 21 խոսքերը հակված են դեպի նախկինը:

Ճշգրիտ հեռավորությունն անորոշ է: Ոմանք ասում են (1) 165 մղոն; (2) 184 մղոն; կամ (3) 200 մղոն: Ստույգ բառերը 6,600 մղոն են: Սա անսովոր խորհրդանշական թիվ է: Ոմանք ասում են, որ այն վերաբերում է Դանից Բերսաբե հեռավորությանը, ինչը նշանակում է, որ դատաստանը խորհրդանշականորեն ընդգրկում է ողջ Սուրբ Երկիրը:

«Գինու ճզմելը» Հին Կտակարանյան փոխաբերություն է դատաստանի համար (տես Ես. 63: 3; Ողբ 1:15): Սա, հավանաբար, կարմիր խաղողի հյութի և արյան միջև նմանության պատճառով է: Այն նաև հիշատակվում է Հայտ. 19:15:

▪ **«Աստուծոյ բարկութեան»** Տես ամբողջ նշումը, Հայտ. 7:14-ում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Ո՞րն է կապը 7 և 14 գլուխների 144000-ի միջև:
2. Ինչի՞ն է վերաբերում Սիոն սարը:
3. Արդյո՞ք Հայտ. 14: 4-ում հանդիպող որակավորումները ընտրված ամուրիների խմբի նկարագրությունն է, թե Աստծո ողջ ժողովրդի նկարագրությունը:
4. Ո՞րն է Հայտ. 14:6 և 7-ի կարևորությունը:
5. Ո՞վ կամ ի՞նչ է Բաբելոնը:
6. Արդյո՞ք դժոխքը հավիտենական է:
7. Ո՞վ է ամպի վրա նստողը Հայտ. 14:14-16 և ինչու՞ :

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 15-16

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հրեշտակները վերջին պատուհասների հետ	Սկավառակի դատաստանի նախաբանը	Աստծո բարկության յոթ սկավառակները	Հրեշտակները վերջին պատուհասների հետ	Մովսեսի և Գառան երգը
15:1	15:1-16:1	15:1	15:1	15:1-4
15:2-4		15:2-4	15:2-4	Պատուհասների յոթ սկավառակները
15:5-8		15:5-16:1	15:5-8	15:5-8
Աստծո բարկության սկավառակները			Աստծո զայրույթի սկավառակները	
16:1	Առաջին սկավառակ: Չարաչար պալարներ		16:1	16:1
16:2	16:2	16:2	16:2	16:2
	Երկրորդ սկավառակ: Ծովը արյուն դառավ			
16:3	16:3	16:3	16:3	16:3
	Երրորդ սկավառակ: Ջրերը արյուն դարձան			
16:4-7	16:4-7	16:4-7	16:4-7	16:4-7
	Չորրորդ սկավառակ: Մարդիկ խորշակահար եղան			
16:8-9	16:8-9	16:8-9	16:8-9	16:8-9
	Հինգերորդ սկավառակ: Խավար և ցավ			
16:10-11	16:10-11	16:10-11	16:10-11	16:10-11

	Վեցերորդ սկավառակ: Եփրատի ջուրը ցամաքեց			
16:12-16	16:12-16	16:12-16	16:12-14	16:12-16
	Յոթերորդ սկավառակ: Երկիրը հիմքից շարժեց		16:15	
			16:16	
16:17-21	16:17-21	16:17-21	16:17-21	16:17-21

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան քննարկության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դաբանալի է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ ՀԱՅՏ. 15:1-16:21

Ա. Յոթ սկավառակները, որոնք ներկայացված են Հայտ. 15-ում և նկարագրված են Հայտ. 16-ում, երրորդն են աստվածային պատուհասների երեք շրջանների շարքում ուղարկված փրկության նպատակով (տես Հայտ. 9:20-21; 14:6-7; 16:9,11): Յուրաքանչյուր շրջան աստիճանաբար ավելի դաժան է դառնում. 1/4, 1/3 և ընդհանուր ոչնչացում (դատաստանը և չարի մեկուսացումը): Սա, հնարավոր է, հիմնված է 2 Օր. 27-28-ի «անեծք և օրհնություն» բաժնի վրա:

Բ. Այս շրջանների միջև կա գրական հարաբերություններ: Յոթերորդ կնիքը յոթ փողերն են: Առաջին չորս փողերը նույնպես ուղղակիորեն զուգահեռ են առաջին չորս սկավառակներին:

Գ. Յոթերորդ սկավառակը Բաբելոնի անկումն է, որն ընկած մարդկային հասարակության խորհրդանիշն է, որը կազմակերպված է և գործում է Աստծուց առանձին: Հովհաննեսի օրոք այն Հռոմն էր: Դան. 2-ում յուրաքանչյուր հաջորդական համաշխարհային կայսրություն դառնում է ավելի ու ավելի հակա-Աստվածային մինչև վերջին համաշխարհայինը, հակա-

Աստվածային կայսրությունը, որտեղ Մեսիան ծնվում է, որը Հռոմն է (տես Դան. 8 ներածություն www.freebiblecommentary.org):

- Դ. 15 և 16 գլուխները պատկերներ են նկարում Ելիցի փորձառությունից (ինչպես, Հայտ. 12-14): Այս վերջին ժամանակի չարից ազատվելը համարվում է որպես վերջնական Ելից (այսինքն, ազատվել):
- Ե. Գազանները և Բաբելոնի պռոնիկը (ապստամբ մարդկային հասարակությունը) պարտվում են Արմազեդոնում (Հայտ. 16:12-16), իսկ Սատանան պարտվում է Գոգի և Մագոգի (ապստամբ մարդկանց) հետ միասին ամենավերջում (տես Հայտ. 20:7-10): Քրիստոսի Երկրորդ Գալուստը Հայտ. 19 յոթերորդ կնիքի, յոթերորդ փողի և յոթերորդ սկավառակի դատաստանների ընդլայնումն ու կատարումն է: Սա Աստծո պատասխանն է մարտիրոսների հարցին Հայտ. 6:9-11:
- Զ. Վերջին ժամանակների պայքարի մեկնաբանման դժվարությունները հետևյալն են.
1. գրականության տեսակը, որտեղ նրանք արտահայտվում են, ապոկալիպտիկ / մարգարեական:
 2. դրանք վերաբերում են հաջորդական փուլերին, շրջաններին կամ դրամատիկական գործողություններին:
 3. խմբերի և խորհրդանիշների միջև գոյություն ունի սահունություն:
 4. դժվար է առանձնացնել առաջին դարի իրականացումը վերջին ժամանակի իրականացումից:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 15:1-3ա

¹Եւ տեսայ մի ուրիշ մեծ եւ զարմանալի նշան երկնքումը, եօթը հրեշտակ որ վերջի եօթը պատուհասներն ունէին. որովհետեւ Աստուծոյ բարկութիւնը նորանցով կատարուեցաւ: ²Եւ տեսայ իբրեւ ապակեղէն ծով կրակով խառնուած. Եւ նորանց որ յաղթում են գազանին եւ նորա պատկերին եւ նորա դրոշմին եւ նորա անունի թիւին, որ կանգնած էին ապակեղէն ծովի վերայ, եւ Աստուծոյ քնարներն ունէին: ³Եւ երգում էին Աստուծոյ ծառայ Մովսէսի երգը եւ Գառի երգը, ասելով.

15:1 «երկնքումը» Սա երրորդն է նշանների շարքում, որ Հովհաննէսը տեսավ երկնքում: Տես Հատուկ Թեմա Հայտ. 12:1:

▪ **«մեծ եւ զարմանալի»** Այս արտահայտությունը տեղի է ունենում միայն այստեղ և ցույց է տալիս Հին Կտակարանյան ակնարկ Հայտ. 15:3, որը կարող է լինել մի քանի վայրերից մեկը (այսինքն, 2 Օր. 32:3-4; Սաղ. 11:2; 139:14; կամ Ովսյա 14:9):

3-4 համարները կազմում են մեկ մեծ բաղադրյալ Հին Կտակարանյան ակնարկ մի քանի հնարավոր վայրերից:

▪ **«Աստուծոյ բարկութիւնը»** Տես ամբողջական գրառումը Հայտ. 7:14:

▪ **«ավարտված է»** Սա *teleō* աօրիստ կրավորական սահմանական է ավարտելու կամ իրականացնելու համար: Սկավառակերը ամբողջական և վերջնական դատաստանն են չլսող անհավատության վրա: Ապաշխարության և հավատքի այլ հույս չկա, միայն դատաստանը և մեկուսացումը:

Աստվածաբանորեն հնարավոր է, որ կնիքների, փողերի և սկավառակերի հաջորդականությունը Աստծո հույսը մարդկային ապաշխարության ցուցաբերման ձևն էր, բայց վերջում, Իր ընդհանուր դատաստանը, հեռացումը և չարի մեկուսացումը արդարացված է: Դժոխքը միակ տարբերակն է:

15:2 «Եւ տեսայ իբրեւ ապակեղէն ծով» Սա առաջին անգամ հիշատակվում է Հայտ. 4:6: Հայտ. 21:1 իր օգտագործման պատճառով, այն կարծես թէ փոխաբերություն է Աստծո սրբության համար, որը մեղավոր մարդկությանը պահեց Նրան մոտենալուց (այսինքն, հնարավոր է երկնքի ջրերի համար փոխաբերություն է): Մի օր այդ արգելքը կհեռացվի: Հին Կտակարանյան ակնարկ է կամ Ելից 24:10 կամ Եզեկ. 1:22; 10:1: Տես ամբողջական գրառումը Հայտ. 4:6:

▪ **«կրակով խառնուած»** Սա նոր տարր է, որը չհանդիպեց Հայտ. 4:6-ում: Կային բազմաթիվ տեսություններ:

1. դա մարդկային պատմության վրա ազդող արևի մայր մտնելն է
2. այն ներկայացնում է կրակ, որը պահված է Աստծո դատաստանի համար
3. այն մարտիրոսների արյունն է
4. դա կապված է Կարմիր ծովի և Մովսեսի երգի հաղթանակի հետ, քանի որ 15-րդ եւ 16-րդ գլուխների Հին Կտակարանյանի ֆոնը Ելիցի պատուհասներն են (տես Ելից 7-12; 15):

Արևելահայերեն «նորանց որ յաղթում են»

Արևմտահայերեն «Անոնք որ յաղթեցին»

NASB «նրանք, ովքեր հաղթել են»

NKJV «նրանք, ովքեր ունեն հաղթանակ»

NRSV «նրանք, ովքեր նվաճել են»

TEV «նրանք, ովքեր հաղթեցին»

NJB «նրանք, ովքեր պայքարել են»

Սկզբում սա, կարծես, վերաբերում էր մարտիրոսներին, բայց Հայտ. 12:11 ցույց է տալիս, որ այն պետք է կիրառել նրանց, ովքեր փորձվել են բնական մահով, բայց նրանք չեն երկրպագում զազանին (տես Հայտ. 20:4):

Արևելահայերեն «զազանին եւ նորա պատկերին եւ նորա դրոշմին եւ նորա անունի թիւին»

Արևմտահայերեն «զազանին ու անոր պատկերին եւ անոր անուան թիւին»

NASB «զազանին և նրա պատկերին և նրա անվան թվին»

NKJV «զազանի վրա, նրա պատկերով և նրա նշանի վրա»

NRSV «զազանը և նրա պատկերը և նրա անունը»

TEV «զազանին և նրա կերպարին և այն մեկի անունը, որը ներկայացված է թվերով»

NJB «զազանն ու մարդը, և նրա արձանի և նրա անվան թիվը»

Գազանը առաջին անգամ հիշատակվում է Հայտ. 11:7-ում: Գլուխ 13-ից ակնհայտ է, որ կան երկու վայրի զազաններ՝ մեկը սաստանայի մարմնացումն է (այսինքն, Քրիստոսի նմանեցումը), իսկ մյուսը, նրա սուտ մարգարեն է (այսինքն, Սուրբ Հոգու նմանեցումը): Հայտ. 13:18-ից մենք գիտենք, որ նրա թիվը 666 է, որը ոչ այնքան մարդու թիվն է, որքան մարդկային հասարակության ընկած ու ոչ աղեկվադ վիճակը (այսինքն, կառավարությունը), բացի Աստծուց:

- **«կանգնած էին ապակեղէն ծովի վերայ»** Որոշ թարգմանություններ ունեն «վրա» (NASB, NKJV), և ումանք ունեն «կողքին» (NRSV) կամ «կողմից» (TEV, NJB): Հունարեն նախդիների հիմնական իմաստը «վրա»-ն է: Այս փոխաբերությունը խոսում է այն մարդկանց մասին, ովքեր մոտենում են Աստծուն: Հայտնության մեջ «ծովը» կանգնում է սուրբ Աստծո և մեղավոր ստեղծագործության միջև: Այս ծովը լիովին հեռացված է Հայտ. 21:1, երբ լիակատար փոխհարաբերությունը վերականգնվում է (այսինքն վերականգնվում է Եդեմի պարտեզի փոխհարաբերությունը):

«Ապակե ծով» իմաստի մեկնաբանական տարբերակների համար տես ծանոթագրություն Հայտ. 4:6:

- **«Աստուծոյ քնարներն ունէին»** Հրեշտակները նկարագրվում են որպես քնարեր ունեցողներ Հայտ. 5:8 և 14:2: Այս կոնտեքստում այն վերաբերում է այն հավատացյալներին, ովքեր հոմանիշ են 14-րդ գլխի 144,000-ի հետ: Ինչպես հրեշտակները երգով երկրպագում էին Աստծո առաջ երկնքում, այժմ էլ հաղթական հավատացյալները:

15:3 «Եւ երգում էին Մովսէսի երգը եւ Գառի երգը» Սա ցույց է տալիս հին ուխտի և նոր ուխտի միասնությունը փրկության այս երգում: Մովսէսի երգը ակնարկ է Ելից 15:1-19, որտեղ Մովսէսը շնորհակալություն է հայտնում Աստծուն, Կարմիր ծովում փարավոնի պարտության համար: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ Հովհաննէսն ունեցել է 2 Օր. 32 իր մտքում, քանի որ առաջին արտահայտությունը կարող է ակնարկ լինել 2 Օր. 32:3-4: Գառան երգը նախկինում հիշատակվել է Հայտ. 5:9 և 14:3: Ուշադրություն դարձրեք, որ դա հավաքական երգ է, այլ ոչ թե անհատի փրկության երգ (տես Ծննդ. 3:15):

- **«Աստուծոյ ծառայ»** Սա հարգանք արտահայտող կոչում է Հին Կտակարանյան հերոսների համար՝ Մովսէսի, Հեսուի և Դավիթի պես: Դա կարող է Պողոսի «Քրիստոսի ծառայ» ծագումը լինել:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 15:3բ-4
 ՅԵՄԵՃ ԵՎ ՊԱՐՄԱՆԱՅԻ ԵՆ ՔՈ ՎՈՐԾԵՐՐԸ, ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱԿԱՅ, ԱՐԴԱՐ ԵՎ ՃՂՄԱՐԻՍ ԵՆ ՔՈ ՃԱՆԱՊԱՐԻՆԵՐԸ, ՈՎ ՍՈՒՐՔԵՐԻ ԹՊԱՊՈՐ: 4ՈՎ ԵՆ ՔԵՂԱՆԻՑ ՆՎԱԽՆՆԱՅ, ՈՎ ՏԵՐ, ԵՎ ՔՈ ԱՆՈՒՆՐ ՆՎՊԱՏԱՐԵՒ. ՈՐ ՄԻՎՅԱՆ ԴՈՒ ԵՍ ՍՈՒՐՔ. ՎԱՍՆՈՎԻ ԲՈՂՈՐ ԱՊՂԵՐԸ ԿՂՎԱՆ ԵՎ ՔՈ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՐԱՊԱՊՈՐԻՆ ԿՂԱՆՆԵՆ, ՈՐՈՎԻԵՍԵՒ ԵՎ ԻՐԱՄՈՆՔՆԵՐԸ յԱՅՏՆՈՒՆԵՂԱՆ:

- **«ՄԵՃ ԵՎ ՊԱՐՄԱՆԱՅԻ ԵՆ ՔՈ ՎՈՐԾԵՐՐԸ»** Սա բաղադրյալ ակնարկ է Սաղ. 40:5; 92:5; 111:2; 139:14 և Ովայա 14:9:

- **«ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱԿԱՅ»** Սա ակնարկ է Աստծո համար օգտագործվող երեք ամենաթանկ Հին Կտակարանյան կոչումներին (տես Հայտ. 1:8; 4:8; 11:7; 16:7):

1. «Տերը» վերաբերում է ՅԱՀՎԵԻՆ, Փրկչին, Քավիչին, Աստծո Ուխտին:
2. «Աստված» խոսքը վերաբերում է *Էլնհիլ*, Ստեղծողին, Պահողին և երկրի վրա ապրող բոլոր մարդկանց մասին հոգ տանողին:
3. Ամենակարողը վերաբերում է *El Shaddai*, Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծո հայրապետական անվանը (տես Ելից 6:3):

Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՈՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Հայտ. 1:8:

- **«ԱՐԴԱՐ ԵՎ ՃՂՄԱՐԻՍ ԵՆ ՔՈ ՃԱՆԱՊԱՐԻՆԵՐԸ»** Սրբերի տառապանքների միջև այս շեշտը մեծ նշանակություն ունի (տես 16:7): Դա կարող է ակնարկ լինել Ովայա 14:9:

Արևելահայերեն «սուրբերի Թապալոր»

Արևմտահայերեն «Ո՛վ Թագաւոր սուրբերու»

NASB, NRSV,

TEV, NJB «Ազգերի Թագավոր»

NKJV «սուրբերի Թագավոր»

Այս համարի երեք տարբեր թարգմանություններ կան ժամանակակից անգլերեն լեզվում:

1. «դարաշրջանի թագավոր» (ASV, NIV, REB) որը հանդիպում է հին հունարենում MSS P⁴⁷, ճ^{*2}, և C (տես 1 Տիմ. 1:17; 1 Եսովք 9:4)
2. «ազգերի թագավոր» (NRSV, TEV, NJB) որը հանդիպում է MSS ճ^a, A, P և շատ փոքրատառ ձեռագրերում (տես Հայտ. 15:4; Եր. 10:7)
3. «սուրբերի թագավոր» (NKJV) MSS 296, 2049 (Մեզգեր, *Տեքստային Մեկնաբանություն/Metzger, Textual Commentary*, էջ 753) որը գալիս է ուշ լատիներեն տեքստի թյուրմարմնումից

2-րդ տարբերակը հավանաբար բնօրինակն է: UBS⁴ տալիս է «B» վարկանիշ (գրեթե որոշակի):

15:4 «Ո՛վ է որ քեզանից չ՛վախենայ, ով Տէր, եւ քո անունը չ՛փառաւորէ» Սա է արարչագործության տրանսգենդենտ Սուրբ Աստվածը (տես Հայտ. 14:7; Եր. 10:7-10): Սակայն Նա փրկություն է առաջարկում բոլորին և բոլոր նրանց, ովքեր կվախենան Իրենից և կփառաբանեն Իր անունը:

▪ **«բոլոր ազգերը կ՛գան եւ քո առաջին երկրագութինն կ՛անեն»** Հին Կտակարանի մարգարեության մեջ բոլոր ազգերը մի օր կլինեն Երուսաղեմում (տես Մադ. 22:27; 66:4; 86:9; Ես. 2:2-4; 19:19-24; 27:13; 56:7; 66 19-24; Մադ. 1:11): Հովհաննեսն օգտագործում է Հին Կտակարանի մարգարեությունը և պատկերները՝ նկարագրելու համընդհանուր փրկությունը: Հին Կտակարանի Երուսաղեմը դարձավ հավատացյալ հրեաների և հեթանոսների երկնային Երուսաղեմը: Այս գիրքը չի կենտրոնանում հրեաներն ընդդեմ հեթանոսների վրա, ինչպես Հին Կտակարանում էր, այլ կենտրոնանում է հավատացյալներն ընդդեմ անհավատների վրա (համեմատեք Ես. 45:23 և Փիլ. 2:9-11): Տես կարևորագույն ներածությունը մեկնաբանության սկզբում:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 15:5-8

⁵Եւ սորանից յետոյ տեսայ, եւ ահա բացուեցաւ վկայութեան խորանի տաճարը երկնքումը: ⁶Եւ դուրս եկան տաճարիցը այն եօթը հրեշտակները, որ այն եօթը պատուհասներն ունէին, մաքուր եւ պայծառ կտաւ հագած, եւ ստինքների մօտով ոսկէ գօտիներ կապած: ⁷Եւ այն չորս կենդանիներից մէկն այս եօթը հրեշտակներին եօթը ոսկի սկաւառակ տուաւ յաւիտեանս յաւիտենից կենդանի Աստուծոյ բարկութիւնովը լիքը: ⁸Եւ տաճարը լցուեցաւ Աստուծոյ փառքից եւ նորա զօրութիւնից ելած ծուխովը. Եւ ոչ ով կարող չէր մտնել տաճարը, մինչեւ որ այն եօթը հրեշտակների եօթը պատուհասները կատարուին:

15:5 «ահա բացուեցաւ վկայութեան խորանի տաճարը երկնքումը» Հայտ. 4:1 երկնային դուռը բացվեց Հովհաննեսի համար; Հայտ. 11:19 ուխտի տապանակը հայտնվել է տաճարում, որ հավատացյալները տեսնեն: Այժմ ամբողջական երկնային խորանն է հայտնվում (տես Ելից 25:9,40; 38:21; Թվոց 10:11; 17:7; Գործք 7:44): Այս Հին Կտակարանյան ակնարկը զարգանում է Եր. 8:5 և 9:23: Այս գրական միավորումն օգտագործում է Ելից և անապատում թափառելու շրջանները, որպես Հին Կտակարանյան ֆոն: Սա խորհրդանշում է երկրորդ և վերջնական գերությունից դուրս գալը (մեղքի գերություն):

15:6 «մաքուր եւ պայծառ կտաւ հագած» Այս յոթ հրեշտակային արարածները գալիս են երկնային տաճարի ներքին մասից, որը ցույց է տալիս իրենց հեղինակությունը, քանի որ նրանք գալիս են Աստծո ներկայությունից: Ռաբբիական հուդայականության մեջ կան յոթ զորավոր հրեշտակներ, որոնք շրջապատում են Աստծո գահը, կոչվում են «ներկայության հրեշտակներ»:

Նրանց հագուստը նկարագրված է որպես (1) «կտավ» (*linon* կամ *linoun* [P⁴⁷]) որը հագնում էին Եգիպտոսում քահանաները Ելից 28:4 (UBS⁴, «B» վարկանիշ) կամ (2) ASV թարգմանում է սա որպես «թանկարժեք քար» (*lithon*), որը հետևում է հունարեն հնագույն A և C ձեռագրերին, և կարող է ակնարկ լինել Եզեկ. 28:13, որպես Եդեմի պարտեզի հրեշտակային հագուստ:

Եթե տեքստային քննադատության երկու հիմնական ենթադրությունները (տես Հավելված). (1) ամենադժվար ընթերցումը հավանաբար բնօրինակն է և 2) ընթերցանությունը, որը լավագույնս բացատրում է տարբերակները, հավանաբար բնօրինակն է, ապա «քարը» հավանական ընտրությունն է:

▪ **«եւ ստինքների մօտով ոսկե գօտիներ կապած»:** Սա շատ նման է Դան. 10:5 հանդիպող հրեշտակին կամ Քրիստոսի ինքնությանը Հայտ. 1:18: Դրանք ակնհայտորեն շատ հզոր հրեշտակներ են, որոնք ներկայացնում են Աստծուն կամ Քրիստոսին:

15:7 «եօթը ոսկի սկաւառակ տուաւ Աստուծոյ բարկութիւնովը լիքը» Այս ոսկեգույն սկավառակները հիշատակվում են Հայտ. 5:8, որտեղ նրանք պահում են սուրբերի աղոթքները: Կապ կա ամբողջ Հայտնության ընթացքում ուղղված Նրա հալածված երեխաների աղոթքներին և Աստծո բարկությանը անհավատների վրա (տես ծանոթագրություն Հայտ. 7:14):

▪ **«յաւիտեանս յաւիտենից կենդանի»** Այս երդումը հիմնված է ՅԱՀՎԵ տերմինի արմատական իմաստի վրա (տես Ելից 3:14): ՅԱՀՎԵՆ միակ Կենդանին է; մնացած բոլորն էլ կյանք են բխում Նրանից: Տես Հատուկ Թեմա: Աստծո Անունները, Հայտ. 1:18:

▪ «Հավիտյանս հավիտենից»-ի համար տես Հատուկ Թեմա Հայտ. 1:6:

15:8 «Եւ տաճարը լցուեցաւ Աստուծոյ փառքից եւ նորա զօրութիւնից ելած ծուխովը» Սա սովորական Հին Կտակարանյան նկարագրություն էր Աստծո ներկայության մասին (տես Ելից 19:18; 40:34; 3 Թագ. 8:10-11; 2 Մնաց. 5:13-14; Ես. 6:4): Սա ակնարկ է *Shekinah* փառքի ամպին, որը ներկայացրեց Աստծո ներկայությունը Իսրայելին Ելիցի ընթացքում: Բայց կոնտեքստային կապի պատճառով, որը սկավառակների հետ է, կարող է վերաբերել Աստծո զավակների աղոթքները արդարության համար ներկայացնող խունկի առատությանը:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓԱՌՔ (*doxa*)

SPECIAL TOPIC: GLORY (*doxa*)

«Փառք»-ի աստվածաշնչյան գաղափարը դժվար է սահմանել: LXX- ն օգտագործեց *doxa* –ն թարգմանելու ավելի քան քսան եբրայերեն բառեր: Այն բազմիցս տարբեր ձևերով օգտագործվել է Նոր Կտակարանում: Այն վերաբերում է Աստծուն, Հիսուսին, մարդկությանը և Մեսիական Թագավորությանը:

Հին Կտակարանում ամենատարածված եբրայերեն բառը «փառք»-ի համար (*kabod*, BDB 458, KB 455-458) սկզբում առևտրային տերմին էր, որը վերաբերում էր կշեռքի նժարներին («ծանր լինել», KB 455): Այն, ինչը ծանր էր, արժեքավոր էր կամ ուներ հատուկ գին: Հաճախ պայծառության գաղափարին ավելացվել է բառ՝ Աստծո մեծությունը արտահայտելու համար (տես Ելից 19: 16-18; 24:17; 33:18; Ես. 60: 1-2): Միայն Նա է արժանի և պատվավոր (տես Սաղ. 24: 7-10; 66: 2; 79: 9): Նա շատ փայլուն է, պայծառ ընկած մարդկության համար, ուստի Նա Իրեն ծածկում է ամպով, ձեռքով կամ

ծխով (տես Ելից 16: 7,10; 33: 17-23; Ես. 6: 5): ՅԱՀՎԵՆ կարող է ճշմարտապես երևալ միայն Քրիստոսի միջոցով (տես Հովհ. 1:18; 6:46; 12:45; 14: 8-11; Կող.1: 15; 1 Տիմ. 6:16; Եբր.1: 3; Հովհ. 4:12):

kabod բառի համար լիարժեք քննարկում, տես Հատուկ Թեմա: Փառք (Հին Կտակարան): Հավատացյալների փառքը այն է, որ նրանք հասկանում են ավետարանը և փառքը Աստծո մեջ, այլ ոչ թե իրենց (տես 1 Կոր. 1: 29-31; Եր. 9: 23-24): Մանրամասն քննարկման համար տես NIDOTTE, հատոր 2, էջ 577-587:

▪ **«ոչ ով կարող չէր մտնել տաճարը, մինչև որ այն եօթը հրեշտակների եօթը պատուհասները կատարուին»** Հնարավոր է սա նշանակում է, որ Աստծո բարկությունը չկանգնեց, երբ սկսվեց: Այս բարկությունը դժվար է աստվածաբանորեն փոխաբերել Հայտ. 16:9 և 11-ի հետ, ինչը նշանակում է, որ փրկությունը դեռևս նպատակն է, նույնիսկ սկավառակներում, այն դեռևս հույսն ու նպատակն է, որ Աստծո պատկերով ստեղծված ընկած մարդկությունը ապաշխարհի և վերադառնա Նրան:

ՀԱՅՏՆՆՈՒԹՅՈՒՆ 16

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 16:1

¹Եւ մեծ ձայն լսեցի տաճարիցը որ ասում էր այն եօթը հրեշտակներին. Գնացէք եւ Աստուծոյ բարկութեան սկաւառակները թափեցէք երկրի վերայ:

16: 1 «Եւ մեծ ձայն լսեցի տաճարիցը որ ասում էր այն եօթը հրեշտակներին» Հայտնություն 15: 8-ը ցույց է տալիս, որ սա պետք է լինի Աստծո ձայնը: Այս հրեշտակների վերջին խումբը ուներ վերջնական իշխանություն՝ Աստծո երկիրը ոչնչացնելու համար: Հին Կտակարանում մահվան հրեշտակը և կործանման հրեշտակը Աստծո ծառաներն են, և ոչ թե սատանայի:

▪ **«Գնացէք եւ Աստուծոյ բարկութեան սկաւառակները թափեցէք երկրի վերայ»** Սա Հին Կտակարանյան սիմվոլ է Աստծո դատաստանի համար անհավատ ազգերի վրա (տես Մաղ. 79: 6; Եր.10:25; Եզ. 22:31; Սոփ. 3: 8): Այս տերմինը հաճախ օգտագործվում է այս կոնտեքստում անհավատների վրա Աստծո բարկության համար (տես նշում Հայտ. 7:14, տես Հայտ.16: 1,2,3, 4,8,10,12,17):

1. նրանց հայհոյության պատճառով (տես Հայտ.16: 9)
2. նրանց հավատացյալներին հալածելու պատճառով (տես Հայտ.16: 6)
3. նրանց ապաշխարելուց համառորեն հրաժարվելու պատճառով (տես Հայտ. 9: 20-21; 16: 9-12)

«Աստծո բարկությունը» տես նշում Հայտ. 7:14-ում:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 16:2

²Եւ առաջինը գնաց եւ իր սկաւառակը թափեց երկրի վերայ, եւ չարաչար պալարներ եղան այն մարդկանց վերայ, որ գազանի դրոշմն ունէին եւ նորա պատկերին երկրպագում էին:

16: 2 Այս առաջին սկավառակը շատ նման է եգիպտական պատուհասներից մեկին (տես Ելից 9:10-11): Ումանք սա կապում են 2 Օր. 28:35 հետ, որը գտնվում է Մովսեսի ուխտի նորոգման անեծքների և օրհնությունների բաժնում: Նշենք, որ ինչպես եգիպտական պատուհասները, այս պատուհասները ազդում էին անհավատների վրա:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 16:3

³Եւ երկրորդը հրեշտակն իր սկաւառակը թափեց ծովը, եւ արիւն դառաւ մեռածի արիւնի նման. եւ

ամեն կենդանի շունչ սատակեց որ ծովումն էր:

16: 3-4 Երկրորդ և երրորդ սկավառակները զուգահեռ են երկրորդ և երրորդ փողերին (տես Հայտ. 8: 8-11) և նաև արտացոլում է Ելիցի պատուհասները Ելից 7: 17-21; Մաղ. 78:44:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 16:4-7

⁴Եւ երրորդ հրեշտակն իր սկաւառակը թափեց գետերի եւ ջրերի աղբիւրների մէջ եւ իարինն եղաւ:
⁵Եւ ձայն լսեցի ջրերի հրեշտակիցը որ ասում էր. Արդար ես, Տէր, որ ես եւ էիր եւ սուրբ՝ որ այս դատաստաններն արիք: Պրովիետեւ սուրբերի եւ մարգարէների արինը թափեցին. նորա համար էլ արին տուիք նորանց խմելու, որ արժան են: ⁷Եւ մի ուրիշը լսեցի սեղանիցը որ ասում էր. Այո, Տէր Աստուած Ամենակալ, ճշմարիտ եւ արդար են քո դատաստանները:

16: 5 «ջրերի հրեշտակիցը» Սա կարող է արտացոլել *I Enoch* 66: 2-ի միջկտակարանյան հրեական ապոկալիպտիկ տերմինաբանությունը: Հայտնության մեջ եղել է քամու հրեշտակ (Հայտ. 7: 1) և կրակի հրեշտակ (Հայտ. 14:8), ուստի անսովոր չէ, որ կա նաև ջրի հրեշտակ: Կրկին, հրեշտակային միջնորդությունը և գործունեությունը տարածված է միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականության մեջ: Մենք պետք է մեկնաբանենք Հայտնությունը իր ժանրի լույսի ներքո, իր օրվան համապատասխան, և ոչ թե վախճանաբանության մեր ժամանակակից արևմտյան աստվածաբանական համակարգերով:

- «Արդար ես» Սա ակնարկ է Մովսեսի երգին 2 Օր. 32 (հատկապես Հայտ. 16: 5), կամ հնարավոր է Սաղ. 119: 137:
- «որ ես եւ էիր» Ուշադրություն դարձրեք, որ ապագայի տարր չկա, ինչպես Հայտ. 1: 4,8; 4: 8, քանի որ չկա ապառնի ժամանակ (տես ամբողջ նշումը Հայտ. 11:17): Սա վերջն է! Սա նպատակային է; տեսք Հայտ. 1: 4- ի եռակի նշանակությունը: Ժամանակ այլևս չկա: Վերջը (այսինքն *Parousia*) հանդիպում է մի քանի անգամ Հայտնության մեջ, ոչ միայն Հայտ.19-ում: Կնիքներից, փողերից և սկավառակներից յուրաքանչյուրն ավարտվում է Երկրորդ Գալստյամբ և պատմության կուլմինացիայով: Ահա թե ինչու եմ կարծում, որ Հայտնության մեկնաբանման համար վերակապիտուլիացիայի տեսությունը լավագույնն է:

16: 6 «սուրբերի» Տես Հատուկ Թեմա Հայտ. 5:8:

- «մարգարէների» Հին Կտակարանի Մարգարեություն, տես Հատուկ Թեմա Հայտ. 10:7: Ստորև տես Հատուկ Թեմա

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ

SPECIAL TOPIC: NEW TESTAMENT PROPHECY

- I. Սա նույնը չէ, ինչ Հին Կտակարանի մարգարեությունը (BDB 611, KB 661; տես Հատուկ Թեմա: Մարգարեություն [Հին Կտակարան]), որն ունի ռաբբիական նշանակություն՝ ստանալու և արձանագրելու ՅԱՀՎԵԻ ներշնչված հայտնությունները (տես Գործք 3: 18,21; Հռ. 16:26): Միայն մարգարեները կարող էին Սուրբ Գիրք գրել:
 - A. Մովսեսը կոչվում էր մարգարե (տես 2 Օր. 18: 15-21):
 - B. Պատմական գրքեր (Հեսու - Թագավորներ (բացի Հռութից)) կոչվեցին «վաղ մարգարեներ» (տես Գործք 3:24):
 - C. Մարգարեները փոխարինեցի քահանայապետին, որպես Աստծուց տեղեկության աղբյուր (տես Եսայիա - Մաղաքիա)

Դ. Երբայերեն Կանոնի երկրորդ բաժինը «Մարգարեները» (տես Մատթ. 5:17; 22:40; Ղուկ. 16:16; 24:25, 27, Հռ. 3:21):

II. Նոր Կտակարանում մարգարեության գաղափարը կիրառվում է մի քանի տարբեր ձևերով:

Ա. Հին Կտակարանի մարգարեները և նրանց ներշնչված պատգամը (տես Մատթ. 2:23; 5:12; 11:13; 13:14; Հռ. 1:2)

Բ. վերաբերում է անհատին, այլ ոչ թե մարդկանց խմբին (այսինքն, Հին Կտակարանի մարգարեները հիմնականում Իսրայելին են խոսել)

Գ. Հովհաննես Մկրտիչը (տես Մատթ. 11:9; 14:5; 21:26; Ղուկ. 1:76) և Հիսուսը, որպես Աստծո Թագավորության քարոզիչներ (տես Մատթ. 13:57; 21: 11, 46; Ղուկ. 4:24; 7:16; 13:33; 24:19): Հիսուսը նաև պնդեց Իր մասին, որ ավելի մեծ է, քան մարգարեները (տես Մատթ. 11:9; 12:41; Ղուկ. 7:26):

Դ. Նոր Կտակարանի մյուս մարգարեները

1. Հիսուսի երկրավոր կյանքը, ինչպես արձանագրված է Ղուկասի Ավետարանում (այսինքն՝ Մարիամի հիշողությունները)

ա. Եղիսաբեթը (տես Ղուկ. 1: 41-42)

բ. Ջաքարիա (տես Ղուկ. 1: 67-79)

գ. Սիմեոն (տես Ղուկ. 2: 25-35)

դ. Աննա (տես Ղուկ. 2:36)

2. հեզնական կանխատեսումներ (տես Կայիափա, Հովհ. 11:51)

Ե. Ավետարանը հռչակող (ներառված է պարզևների ցանկում, 1 Կոր. 12:28-29; Եփ. 4:11)

Զ. Դեռևս շարունակվող պարզև եկեղեցում (տես Մատթ. 23:34; Գործք 13:1; 15:32, Հռ. 12:6; 1 Կոր. 12: 10, 28-29; 13:2; Եփ. 4:11): Երբեմն դա կարող է վերաբերել կանանց (տես Ղուկ. 2:36; Գործք 2:17; 21: 9; 1 Կոր. 11: 4-5):

Է. վերաբերվում է «Հայտնություն» վախճանաբանական գրքի մասերին (տես Հայտ. 1: 3; 22: 7,10,18,19)

III. Նոր Կտակարանի մարգարեները

Ա. Նրանք չեն տալիս ներշնչված հայտնություն մինևույն իմաստով, ինչպես դա անում էին Հին Կտակարանի մարգարեները (այսինքն, Աստվածաշունչը): Այս պնդումը հնարավոր է «հավատք» տերմինի շնորհիվ (այսինքն, ավարտված ավետարան) և օգտագործվում է Գործք 6:7; 13: 8; 14:22; Գաղ. 1:23; 3:23; 6:10; Ֆիլ. 1:27; Հուդա 3,20.

Այս գաղափարը պարզ է դառնում Հուդա 3 ամբողջ արտահայտությունից «որ մրցեք սրբերին միանգամ ավանդված հավատքով»: «Միանգամ ավանդված» հավատքը վերաբերվում է քրիստոնեության ճշմարտություններին, վարդապետություններին, հասկացություններին, աշխարհայացքների ուսմունքներին:

Ընդգծված «միանգամ ավանդված» արտահայտությունը հանդիսանում է աստվածաշնչյան հիմք՝ աստվածաբանորեն սահմանափակելով Նոր Կտակարանի գրվածքների ներշնչվածությունը և թույլ չտալով, որ հետագայում այլ գրվածքները հայտնություն համարվեն (տես Հատուկ Թեմա: Ներշնչանք):

Նոր Կտակարանում կան շատ «մոխրագույն գոնա»-ներ, որոնք անորոշ են, անհաստատ (տես Հատուկ Թեմա: Արևելյան Գրականություն (աստվածաշնչյան պարադոքս)), սակայն հավատացյալները հավատքով պնդում են, որ այն ամենը ինչ «անհրաժեշտ է» հավատքի և կյանքի ապրելակերպի համար կա Նոր Կտակարանում բավարար հստակությամբ: Այս գաղափարը բնութագրվել է այսպես կոչված «հայտնության եռանկյունի» անունով.

1. Աստված Իրեն հայտնել է ժամանակ-տարածություն պատմության մեջ (ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ):

2. Նա ընտրել է որոշ մարդկանց, որպեսզի նկարագրեն և բացատրեն Իր

գործողությունները (ՆԵՐՇՆՉԱՆՔ):

3. Նա Իր Հոգին տվեց՝ մարդկանց մտքերն ու սրտերը բացելու համար, որպեսզի հասկանան այդ գրվածքները, ոչ թե բացարձակ և վերջնական տեսքով, այլ արժանահավատ փրկության և արդյունավետ քրիստոնեական կյանքի համար (ԼՈՒՄԱՎՈՐՈՒՄ, տես Հատուկ Թեմա: Լուսավորում): Բանն այն է, որ ներշնչումը սահմանափակվում է Սուրբ Գրքի գրողներով: Չկան հեղինակային գրվածքներ, տեսիլքներ կամ հայտնություններ: Կանոնը փակված է: Մենք ունենք բոլոր ճշմարտությունները՝ Աստծուն ճիշտ արձագանքելու համար: Այս ճշմարտությունը լավագույնս երևում է, երբ համեմատում ենք աստվածաշնչյան գրողներին և տեսնում, թե որքան համահունչ են, սակայն անկեղծ և աստվածավախ հավատացյալները անհամաձայնության մեջ են լինում երբեմն: Ոչ մի ժամանակակից գրող կամ քարոզիչ չունի այն աստվածային առաջնորդության մակարդակը, որն ունեին Սուրբ Գրքի հեղինակները:

Բ. Նոր Կտակարանի մարգարեները ինչ-որ ձևով նման են Հին Կտակարանի մարգարեներին:

1. գալիք իրադարձությունների կանխատեսում (տես Պողոս, Գործք 27:22; Ագաբոս, Գործք 11:27-28; 21:10-11; այլ անանուն մարգարեներ, Գործք 20:23)
2. դատավճիռ կայացնել (տես, Պողոս, Գործք 13:11; 28:25-28)
3. խորհրդանշական գործողություններ, որոնք վառ կերպով ներկայացնում են իրադարձությունը (տես Ագաբոս, Գործք 21:11)

Գ. Նրանք քարոզում են Ավետարանի ճշմարտությունները, երբեմն կանխատեսելի եղանակներով (տես Գործք 11:27-28; 20:23; 21:10-11), բայց սա առաջնային ֆոկուսը չէ: 1 Կորնթացիսում մարգարեանալը հիմնականում կապված է ավետարանի հռչակումով (տես 1 Կոր. 14: 24,39):

Դ. Դրանք Սուրբ Հոգու ժամանակակից միջոցներն են, բացահայտելու Աստծո ճշմարտության ժամանակակից և գործնական կիրառությունները յուրաքանչյուր նոր իրավիճակի, մշակույթի կամ ժամանակաշրջանի համար (տես 1 Կոր. 14:3):

Ե. Նրանք բավականին ակտիվ գործում էին «Պողոս»-յան եկեղեցիների վաղ ժամանակաշրջանում (տես 1 Կոր. 11:4-5; 12:28,29, 13:2,8,9; 14:1,3,4,5,6,22, 24,29,31,32,37,39; Եփ. 2:20; 3: 5; 4:11; 1 Թես. 5:20) և հիշատակված են *Didache* (գրված առաջին կամ երկրորդ դարի վերջին, տարեթիվը անորոշ է) և Հյուսիսային Աֆրիկայի երկրորդ և երրորդ դարերի Մոնտանիզմում:

IV. Արդյո՞ք Նոր Կտակարանի պարզները դադարել են:

Ա. Այս հարցին դժվար է պատասխանել: Ճիշտ եզրահանգման գալու համար, նախ և առաջ պետք է հասկանալ հոգևոր պարզների նպատակը: Արդյո՞ք դրանք մտադրված են եղել Ավետարանի ճշմարտության վաղ քարոզչությունն իրականացնելու համար, հաստատել ավետարանի նախնական քարոզչությունը, թե՞ այսօր էլ շարունակում են միջոց հանդիսանալ ծառայության մեջ, թե՞ եկեղեցում և թե՞ կորսված աշխարհին հասնելու համար: արդյոք նրանք շարունակելու են եկեղեցի ծառայել իրեն և կորցրած աշխարհին:

Բ. Որտե՞ղ պետք է փնտրել այս հարցի պատասխանը: Եկեղեցու պատմության մեջ թե՞ միանշանակ Նոր Կտակարանում: Նոր Կտակարանում որևէ նշում չկա, որ հոգևոր պարզները ժամանակավոր էին: Նրանք, ովքեր փորձում են օգտագործել 1 Կոր. 13: 8-13-ը այս հարցը հիմնավորելու համար, չարաշահում են հեղինակի մտադրությունը

տվյալ հաստատումը վերաբերյալ, որը հաստատում է, որ բացի սիրուց ամեն բան պետք է անցնի և վերջանա:

- Գ. Ես հակված եմ ասելու, որ քանի որ Նոր Կտակարանը, ոչ թե եկեղեցու պատմությունն է գերագույն իշխանությունը, ապա հավատացյալները պետք է հաստատեն, որ պարզևները շարունակվում են: Սակայն, կարծում եմ, մշակույթը ազդում է մեկնաբանության վրա: Որոշ հստակ տեքստեր այլևս կիրառելի չեն (այսինքն՝ սուրբ համբույրը, կանայք գլուխները ծածկելը, տնային եկեղեցիները և այլն): Եթե մշակույթը ազդում է տեքստերի վրա, ապա ինչու ոչ եկեղեցու պատմությունը:
- Դ. Պարզապես սա այն հարցն է, որին չի կարելի որոշակիորեն, հստակ պատասխանել: Որոշ հավատացյալներ կողմնակից են այն բանի, որ պարզևները «դադարել են» իսկ ոմանք՝ ոչ: Այս ոլորտում, ինչպես շատ թարգմանչական հարցերում, հավատացյալի սիրտն է բանալին: Նոր կտակարանը երկիմաստ է և մշակույթային: Դժվարն այն է, թե ինչպես որոշել, որ տեքստերն են ազդում մշակույթի / պատմության վրա, իսկ որոնք են բոլոր ժամանակների և բոլոր մշակույթների համար (տես Fee and Stuart's *How to Read the Bible for All Its Worth*, էջ 14-19 և 69-77): Ահա ազատության և պատասխանատվության քննարկումները, որոնք գտնվում են Հո. 14: 1-15: 13 և 1 Կոր. 8-10 շատ կարևոր են: Թե ինչպես ենք մենք պատասխանում այս հարցին ունի կարևոր նշանակություն երկու պատճառներով,
1. Յուրաքանչյուր հավատացյալ պետք է հավատքով քայլի իր ունեցած լույսի ներքո: Աստված նայում է մեր սրտին և դրդապատճառներին:
 2. Յուրաքանչյուր հավատացյալ պետք է թույլ տա այլ հավատացյալներին քայլել իրենց հավատքի հասկացողության մեջ: Աստվածաշնչյան սահմաններում պետք է հանդուրժողականություն լինի: Աստված ուզում է, որ մենք սիրենք միմյանց, ինչպես որ Նա է սիրում:
- Ե. Ամփոփելով ասենք, որ քրիստոնեությունը հավատքի և սիրո կյանք է, ոչ թե կատարյալ աստվածաբանություն: Աստծո հետ հարաբերությունը, որը ազդում է մեր փոխհարաբերությունների վրա ուրիշների հետ, ավելի կարևոր են, քան հստակ տեղեկատվությունը կամ հավատքի կատարելությունը:

16: 7 «մի ուրիշը լսեցի սեղանիցը որ ասում էր» Զոհասեղանի եղջյուրներ արդեն խոսել էին Հայտ. 9:13: Սա կարծես վերաբերում է (1) հոգիներին, որոնք զոհասեղանի տակ են (տես Հայտ. 6: 9; 14:18) կամ (2) Աստծո զավակների աղոթքներին (տես Հայտ. 8: 3-5): Այն կարող է նաև պարզապես անձնավորման գրաֆիկական շեշտադրումը լինել:

- **«Տէր Աստուած Ամենակալ»** Տես նշումներ Հայտ. 15: 3-ում և Հատուկ Թեմա 1: 8:
- **«Ճշմարիտ եւ արդար են քո դատաստանները»** Սա կարող է ակնարկ լինել Սաղ.19:9; 119: 137: Սա օգտակար հիշեցում է այնպիսի սարսափելի հավաճանքի մեջ, որը քրիստոնյաների նկատմամբ է (տես Հայտ. 15: 4 և 19:2): Աստված մի օր բոլոր բաները շտկելու է:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 16:8-9
*Եւ չորրորդ հրեշտակն իր սկաւառակը թափեց արեգակի վերայ: *Եւ տրուեցաւ նորան որ մարդկանց խորշակահար անէ կրակով. Եւ խորշակահար եղան մարդիկ սաստիկ տաքով եւ հայհոյեցին Աստուծոյ անունին որ այս պատուհասների վերայ իշխանութիւն ունի. եւ չ'ապաշխարեցին որ փառք տան նորան:

16: 8 Այս չորրորդ սկավառակը նման է Հայտ. 6: 12-ի վեցերորդ կնիքին և շատ նման է Հայտ. 8: 12-ի չորրորդ փողին:

- **«տրուեցաւ նորան որ մարդկանց խորշակահար անէ կրակով»** Արևը անձնավորված է, ինչպես Սաղ. 19: 1-6: Աստված վերահսկում է երկնային մարմիններին (տես Ծննդ. 1: 14-19): Նրանք աստվածներ չեն: Նրանք գործում են որպես սուրհանդակներ (բնական հայտնություն) և նշաններ եղանակների համար (երկրագոյության համար):

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ԿՐԱՎ
SPECIAL TOPIC: FIRE (BDB 77, KB 92)
 Սուրբ Գրքում կրակը ունի թե՛ դրական և թե՛ բացասական նշանակություն:

Ա. Դրական

1. տաքացնում է (տես Ես.44:15; Հովհ.18:18)
2. լուսավորում է (տես Ես.50:11; Մատթ.25:1-13)
3. եփում է (տես Ելից 12:8; Ես.44:15-16; Հովհ.21:9)
4. զտում է (տես Թվոց 31:22-23; Առ.17:3; Ես.1:25; 6:6-8; Եր. 6:29; Սաղ. 3:2-3)
5. Աստծո սրբությունը (տես Ծննդ.15:17; Ելից 3:2; 19:18; Եզ.1:27; Եբր.12:29)
6. Աստծո առաջնորդությունը (տես Ելից 13:21; Թվոց 14:14; 3 Թագ.18:24)
7. Աստծուց զորացում (տես Գործք 2:3)
8. Աստծո պաշտպանությունը (տես Ջաք.2:5)

Բ. Բացասական

1. այրում է (տես Հեսու 6:24; 8:8; 11:11; Մատթ.22:7)
2. բնաջնջում է (տես Ծննդ.19:24; Ղև.10:1-2)
3. բարկություն (տես Թվոց 21:28; Ես.10:16; Ջաք.12:6)
4. պատիժ (տես Ծննդ. 38:24; Ղև. 20:14; 21:9; Հեսու 7:15)
5. կեղծ վախճանաբանական նշան (տես Հայտ.13:13)

Գ. Աստծո բարկությունը մեղքի հանդեպ արտահայտվում է կրակի փոխաբերությամբ

1. Նրա բարկությունը վառվում է (տես Ովս.8:5; Սոփ.3:8)
2. Նա կրակ է թափում (տես Նաում 1:6)
3. հավիտենական կրակ (տես Երեմ.15:14; 17:4; Մատթ.25:41; Հուդա 7)
4. վախճանաբանական դատաստան (տես Մատթ.3:10; 5:22; 13:40; Հովհ.15:6; 2 Թես.1:7; 2 Պետ.3:7-10; Հայտ. 8:7; 16:8; 20:14-15)

Դ. Հրդեհը հաճախ հայտնվում է թեոֆանեպի մեջ

1. Ծննդ. 15:17
2. Ելից 3: 2
3. Ելից 19:18
4. Սաղ. 18: 7-15; 29: 7
5. Եզ. 1: 4,27; 10: 2
6. Եբր. 1: 7; 12:29

Ե. Աստվածաշնչում զետեղված շատ փոխաբերությունների պես (այսինքն՝ թթիամոր, առյուծ, և այլն) ըստ կոնտեքստի կրակը կարող է լինել օրհնություն կամ անեծք:

16: 9 «չ'ապաշխարեցին որ փառք տան նորան» Աստծո բարկության նպատակը կնիքների և փողերի մեջ փրկագնումն է (տես Հայտ. 9: 20-21; 14: 6-7; 16: 9, 11) , թեև համառ, ապստամբ մարդկությունը հրաժարվում է ապաշխարել: Սկավառակներում ապաշխարության հույսն անցել է; միայն մնում է դատաստան:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 16:10-11

¹⁰Եւ հինգերորդ հրեշտակն իր սկաւառակը թափեց գազանի աթոռի վերայ. եւ նորա թագաւորութիւնը խաւարուած եղաւ. Եւ իրանց լեզուները ծամում էին տանջանքիցը. ¹¹Եւ երկնքի Աստուծուն հայհոյեցին իրանց ցաւերի եւ պալարների պատճառովը. Եւ չ'ապաշխարեցին իրանց գործերիցը:

16:10 «հինգերորդ հրեշտակն իր սկաւառակը թափեց գազանի աթոռի վերայ» Սատանայի գահը տրվեց գազանին, Հայտ. 11: 7-ում: Նրա գործությունը նկարագրվում է Հայտ.13: 2- ում: Սա, կարծես, վերաբերում է իր վերջին ժամանակաշրջանի մայրաքաղաքին, մեկ համաշխարհային կառավարությանը:

▪ **«նորա թագաւորութիւնը»** Սատանան նմանակում է Աստծուն: Ինչպես Աստված ունի թագավորություն, այնպես էլ սատանան ունի թագավորություն: Այս մնացած գլուխներում Քրիստոսի միջոցով Աստծո ծառայությունը կրկնօրինակվում է չար երրորդության կողմից: Սատանայի թագավորությունը, գազանի միջով, միջազգային է (տես Հայտ. 13: 14-17):

▪ **«խաւարուած»** Սա ևս մեկ ակնարկ է եգիպտական պատուհասների մասին (տես Ելից 10: 21-23): Աստված վերահսկում է լույսը (տես Հայտ. 8: 12; 9: 2; Ծննդ. 1: 5, 14-18):

16:11 «երկնքի Աստուծուն հայհոյեցին» Այս անհավատները հասկանալու են իրենց ցավի աղբյուրը և պատճառը, բայց չեն ապաշխարելու և դառնալու Քրիստոսին: Եգիպտոսի պատուհասները Եգիպտոսի կեղծ աստվածներին մերկացնելու և պատճառ հանդիսանալու, որ եգիպտացիները վստահեն Իսրայելի Աստծուն: Երկրորդ Օրինաց 27-28-ի «անեծքները» ուղարկվել են անհավատ հրեաներին՝ հավատքի և հնազանդության մեջ վերականգնելու համար: Դատաստանն ունի փրկագնման նպատակ (բացառությամբ վերջինի):

«Երկնային Աստուած» կոչումը գործածվել է ավելի վաղ Հայտ. 11: 13-ում և արտացոլում է բաբելոնյան և պարսկական կոչումը, որը հաճախ օգտագործվում է Դանիելի կողմից (տես Դան. 2:18, տես իմ Դանիելի մասին մեկնաբանությունը www.freebiblecommentary.org կայքում:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 16:12-16

¹²Եւ վեցերորդ հրեշտակն իր սկաւառակը թափեց մեծ գետ՝ Եփրատի վերայ, եւ նորա ջուրը ցամաքեց որ արեւելքի թագաւորների ճանապարհը պատրաստուի: ¹³Եւ տեսայ՝ վիշապի բերանիցը եւ գազանի բերանիցը եւ սուտ մարգարէի բերանիցը երեք պիղծ հոգի էին դուրս գալիս գորտերի նման: ¹⁴Որովհետեւ նորանք դեւերի ոգիք են, որ նշաններ են անում, նորանք գնում են երկրի եւ բովանդակ տիեզերքի թագաւորների մօտ որ նորանց ժողովեն և Ամենակարող Աստուծոյ այն մեծ օրուայ պատերազմի համար: ¹⁵Ահա գալիս եմ գողի նման, երանի նորան որ արթուն է, եւ իր հանդերձները պահում է. որ մերկ ման չ'գայ, եւ նորա ամօթանքը չ'տեսնեն. ¹⁶Եւ ժողովեցին նորանց այն տեղ որ Եբրայեցերէն Արմազեղոն է կոչվում:

16:12 «վեցերորդ հրեշտակն իր սկաւառակը թափեց մեծ գետ՝ Եփրատի վերայ» Այս գետը հիշատակվում է Հայտ. 9: 13-19-ում, երբ դիվային բանակն անցնում է իր սահմանները՝ խոշտանգելու մարդկությանը: Եփրատի ակունքները Խոստացյալ Երկրի հյուսիսային սահմանին էին եւ Հռոմեական կայսրության արտաքին սահմանները: Այս փոխաբերական դիվային բանակի հնարավոր պատմական հիմքը պարթևական խաչաբլուրն էր: Այս կատաղի հակա-հռոմեական զավթիչները ահաբեկում էին հռոմեական լեզոններին:

▪ **«եւ նորա ջուրը ցամաքեց»** Շատ հաճախ Հին Կտակարանում ջրի չորացումը դիտվում է որպես Աստծո գործողություն, ինչպես օրինակ

1. Կարմիր ծովը (տես Ելից 14:21)
2. Հորդանան գետը (Հեսու 3:17)
3. Մարգարեական գրականության մեջ մի քանի հիշատակություններ (տես Ես. 11: 15-16; 44:27; Եր.51:36; Ջաք. 10:11)

Այս ֆիզիկական արարքը խորհրդանշում է, որ Աստված թույլ է տալիս, որ վերջին ժամանակների հակամարտությունը հասնի գագաթնակետին: Դա աստվածաբանական գուգահեռ է 2 Թես. 2: 6-7, «ինչ / ով խափանում է»:

▪ **«որ արևելքի թագավորների ճանապարհը պատրաստուի»** Շատ քննարկումներ են եղել այն մասին, թե ինչպես են Հայտ.16:12-ի «արևելքի թագավորները» կապվում Հայտ. 16:14 «ողջ աշխարհի թագավորների» հետ:

1. նրանք նույնն են
2. նրանք հակառակորդներ են (Ներոն ռեդիվիվուսի առասպելը և պարթևական բանակը)
3. արևելքի թագավորները վերաբերում է Աստծո բանակին

Եթե այդպես է, ապա դա ակնարկ է Աստված կանչում է Իր ժողովրդին Բաբելոնից (տես Ես. 41:2,25; 45:1-3; 46:11): Կոնտեքստից հնարավոր է, որ արևելքի թագավորները Աստծո գործիքներն են, որոնք հարձակվում են գազանի բանակի վրա (այսինքն, պատմական ակնարկ է Հռոմի վրա հարձակվող պարթևների): Սակայն Հայտ. 16:14 և 19 և 20 գլուխները ենթադրում են, որ գոյություն ունի միայն մեկ մարդկային բանակ և այն միավորված է Աստծո դեմ (տես Սաղ. 2; Եր. 25: 15-26):

16:13 «վիշապի...գազանի...սուտ մարգարեի» Սա առաջին անգամն է, որ երկրորդ գազանը (տես Հայտ. 13:11) կոչվում է «սուտ մարգարե», բայց այսուհետ նրան կդիմեն այս անունով ամեն անգամ (տես Հայտ. 16:13; 19:20; 21:10):

Այս երեքը վերաբերում են սատանայական երրորդությանը, որը պարտվելու է երկու փուլով երկու գազանները Արմազեղոնի հովտում (տես Հայտ. 16: 12-16) իսկ սատանան՝ Քրիստոսի երկրային իշխանության վերջում (տես Հայտ. 20: 7-10):

▪ **«երեք պիղծ հոգի էին դուրս գալիս գորտերի նման»** «Անմաքուր/պիղծ» տերմինը օգտագործվում է Նոր Կտակարանի ավետարաններում դևերի համար: Ինչու են դրանք բնորոշվում որպես գորտեր, մեծապես վիճարկվել է.

1. սա ևս մեկ հղում է եգիպտական պատուհասներին (տես Ելից 8: 6)
2. գրադաշտականության մեջ գորտերը վերջնական չարի խորհրդանիշն են
3. նրանք վերաբերում են անմաքուր կենդանիներին (տես Ղև.11: 10,31)

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԴԻՎԱԿԱՆ (ԱՆՄԱՔՈՒՐ ՈԳԻ) ՀՐԵՇՏԱԿՆԵՐ ԵՎ ԴԵՎԵՐ

SPECIAL TOPIC: The Demonic (unclean spirits) ANGELS AND DEMONS

Ա. Հնագույն ժողովուրդները հեթանոսներ էին: Նրանք մարդու հատկությունները վերագրում էին բնության, կենդանիների և բնական օբյեկտների ուժերին: Կյանքը բացատրվում էր այդ հոգևոր անձանց և մարդկության միջև եղած փոխգործակցության միջոցով:

Բ. Այս մարմնացումը դարձավ բազմաստվածություն/polytheism (շատ աստվածներ): Սովորաբար դիվայինը (*genii*) փոքր կամ ցածր աստվածներ էին կամ կիսաստվածներ/demigods (բարի կամ չար), որոնք ազդում էին մարդկային կյանքերի վրա:

1. Միջագետք, քառս և հակամարտություն
2. Եգիպտոս, դասակարգ և գործողություն
3. Քանան, տես W. F. Albright's *Archaeology and the Religion of Israel*, հինգերորդ հրատ. էջ 67-92

Գ. Հին Կտակարանը չի հաստատում կամ զարգացնում փոքր աստվածների, հրեշտակների կամ

դևերի թեման, հավանաբար, այն պատճառով, որ այնտեղ միաստվածության գաղափարը խիստ ընդունված էր (տես Հատուկ Թեմա Մոնոթեիզմ, տես Ելից 8:10; 9:14; 15:11; 2 Օր. 4:35, 39; 6: 4; 33:26; Մադ. 35:10; 71:19; 86: 6; Ես. 46: 9; Եր. 10: 6-7; Միք. 7:18): Սա նշում է հեթանոս ազգերի կեղծ աստվածներին (*Shedim*, BDB 993, տես 2 Օր. 32:17; Մադ. 106: 37) և նշում դրանցից մի քանիսի անունները:

1. *Se'im* (այծամարդ, սատիր կամ մագոտ դևեր/այծեր, տես BDB 972 III, KB 1341 III, Ղև. 17: 7; 2 Մնաց. 11:15; Ես. 13:21; 34:14)
2. *Lilith* /Լիլիթ (իգական, գայթակղող, հրապուրող դև, տես BDB 539, KB 528, Ես. 34:14)
3. *Mavet* (եբրայերեն տերմին մահվան համար օգտագործվում էր քանանական անդրշիրմյան աստծո համար, *Mot*, BDB 560, KB560, տես Ես. 28: 15,18; Եր. 9:21; ու հնարավոր է 2 Օր. 28:22):
4. *Resheph* (ժանտախտ, պատուհաս, կարկուտ, BDB 958, KB 958, տես 2 Օր. 32:24; Մադ. 78:48, Ամբ. 3: 5)
5. *Dever* (ժանտախտ, համաճարակ, BDB 184, տես Մադ. 91: 5-6; Ամբ. 3: 5)
6. *Az'azel* (անունը անորոշ է, բայց հնարավոր է, անապատի դև կամ լինի տեղի անուն, տես, BDB 736, KB 736, Ղևտ.16:8,10,26)

(Այս օրինակները վերցված են *Encyclopaedia Judaica*, հատոր 5, էջ 1523):

Սակայն, ՅԱՀՎԵԻՑ բացի չկա դուալիզմ կամ հրեշտակային անկախությունը Հին Կտակարանում: Սատանան ՅԱՀՎԵԻ ծառան է (տես Հոբ 1-2; Զաքարիա 3), ոչ թե անկախ, ինքնուրույն թշնամի (տես A. B. Davidson, *A Theology of the Old Testament*, էջ 300-306):

Դ. Հուդայականությունը զարգացավ բաբելոնյան գերության ընթացքում (586-538մ.թ.ա): Սրա վրա աստվածաբանորեն ազդել է պարսից զրադաշտության անձնավորած դուալիզմը, բարի, բարձր աստուածը կոչվում էր *Mazda* կամ *Ormazd* իսկ չար հակառակորդը՝ *Ahriman*: Դա թույլ տվեց հետգերության հուդայականության մեջ անձնավորված դուալիզմ ՅԱՀՎԵԻ և Իր հրեշտակների և սատանայի և նրա հրեշտակների կամ դևերի միջև:

Անձնավորված չարը հուդայական աստվածաբանության մեջ բացատրվում է և լավ փաստագրված է Alfred Edersheim's *The Life and Times of Jesus the Messiah*, հատ. 2 հավելված XIII (էջ 749-863) և XVI (էջ 770-776): Հուդաիզմը անձնավորում է չարը երեք ձևերով,

1. Սատանա կամ *Sammael*
2. չար մտադրություն (*yetzer hara*) մարդկության մեջ
3. Մահվան հրեշտակը

Էդերշեյմ/Edersheim բնութագրում է դրանք որպես (1) Մեղադրող, (2) Փորձիչ և (3)

Պատժող (հատոր 2, էջ 756): Կա մի նշանավորված աստվածաբանական տարբերություն հետեյիցի հուդայականության և չարի Նոր Կտակարանյան ներկայացման և բացատրության միջև:

Ե. Նոր Կտակարանը, հատկապես Ավետարանները, պնդում են չար հոգևոր էակների գոյությունը և ընդդիմությունը մարդկության և ՅԱՀՎԵԻ դեմ (հուդայականության մեջ սատանան մարդու թշնամին էր, բայց ոչ Աստծո): Նրանք հակառակ են Աստծո կամքին, կանոնին և թագավորությանը:

Հիսուսը հանդիմանեց և արտաքսեց այդ դիվային էակներին, նաև կոչելով (1) անմաքուր հոգիներ (տես Ղուկ. 4:36; 6:18) կամ (2) չար հոգիներ (տես Ղուկ. 7:21; 8: 2) մարդ արարածներից: Հիսուսը հստակ տարբերակեց հիվանդության (ֆիզիկական և մտավոր) և դիվականի միջև: Նա ցույց տվեց Իր ուժը և հոգևոր խորաթափանցությունը՝ ճանաչելով և քչելով այդ չար հոգիներին: Նրանք հաճախ ճանաչում էին Նրան և փորձում էին դիմել Նրան, բայց Հիսուսը մերժեց իրենց վկայությունը, պահանջելով նրանցից լռել և վնդում էր նրանց: Պիղծ հոգիներին սանձելը նշան է սատանայի արքայության պարտությանը:

Չարմանալիորեն տեղեկատվության պակաս կա Նոր Կտակարանի Առաքյալների նամակներում այս թեմայի մասին: Դներ հանելը երբեք չի նշվում որպես հոգևոր պարզև, ոչ էլ մեթոդաբանություն կամ ընթացակարգը է տված ապագա ծառայող կամ հավատացյալ սերունդների համար:

- Ձ. Չարը իրական է. չարը անձնական է; չարը ներկա է: Ոչ նրա ծագումը և ոչ էլ նրա նպատակը չի բացահայտվել: Աստվածաշունչը պնդում է նրա իրականությունը և ազդեցիվորեն հակառակվում է նրա ազդեցությանը: Իրականում չկա ոչ մի վերջնական դուալիզմ: Աստված է գերագույն հսկողություն իրականացնողը; չարը պարտված է և դատապարտված; և հեռացվելու է արարչագործությունից:
- Է. Աստծու ժողովուրդը պետք է դիմադրի չարին (տես Հակ. 4:7): Նրանք չեն կարող կառավարվել դրանով (տես 1 Հովհ. 5:18), բայց նրանք կարող են գայթակղվել և նրանց վկայությունն ու ազդեցություն կարող է վնասվել (տես Եփ. 6: 10-18): Չարը քրիստոնյայի աշխարհընկալման բացահայտված մասն է: Ժամանակակից քրիստոնյաները իրավունք չունեն վերանայել չարը (Rudolf Baltmann ապ-առասպելագույնը) ապ-անձնավորել չարը (սոցիալական կառույցները Paul Tillich), ոչ էլ փորձել բացատրել այն ամբողջությամբ հոգեբանական առումով (Sigmund Freud): Նրա ազդեցությունը համատարած է, բայց պարտված: Հավատացյալները պետք է քայլել Քրիստոսի հաղթանակով:

16:14 «նորանք դեների ոգիք են, որ նշաններ են անում» Ուշագրավ է նշել, որ այդ նշանները և հրաշալիքները բոլոր անհավատներին շեղելու համար են, բայց ոչ անգամ Աստծո զավակներից ամենափոքրին (տես Մատթ. 24:24; Մարկ.13:22; 2 Թես. 2:9-11): Այս վերջին գրական բաժինը (սկավառակները) համեմատություն են այն բանի, ինչ է լինելու Աստծո զավակների հետ և ինչ է լինելու երկրի բնակիչների հետ: Քրիստոսը խոսում է ճշմարտության, արդարության և ողորմության խոսքեր՝ երկրի վրա խաղաղություն բերելու համար, բայց սատանայական գորտի ոգիները խոսում են ստեր և հավաքում ազգերին պատերազմի համար:

- **«նորանք գնում են երկրի եւ բովանդակ տիեզերքի թագաւորների մօտ»** Սա կարող է ակնարկ լինել Մաղ. 2: 2, որը կազմում է Հայտնության այս վերջին գլուխների պատկերը:
- **«որ նորանց ժողովեն և Ամենակարող Աստուծոյ այն մեծ օրուայ պատերազմի համար»** Վերջին ժամանակի ճակատամարտի նկարագրությունը հանդիպում է Հայտ. 6: 2-8; 11: 7-10; 12:17; 16:14; 17:14; 19:19 և 20:8: Հնարավոր է, որանք բոլորը ներկայացնում են մեկ ճակատամարտ տարբեր տեսանկյուններից (այսինքն, զուգահեռականություն):

16:15 Այս չակերտավոր արտահայտությունը պարունակում է Քրիստոսի խոսքերը, որոնք Աստծո ժողովրդին խրախուսելու և զգուշացնելու համար են: Սա հավատացյալների յոթ օրհնություններից երրորդն է (տես Հայտ. 1: 3; 14:13; 16:15; 19: 9; 20: 6; 22: 7, 14):

- **«Ահա գալիս եմ գողի նման»** Հիսուսի այս խոսքերը (տես Մատթ. 24:43-44; Դուկ.12:39-40) ավելի վաղ օգտագործվել են Հայտ. 3: 3-ում և մեջբերվել 1 Թես. 5: 2 և 2 Պետ. 3:10-ում: Թվում է, թե դա ցանկացած պահի, Քրիստոսի հանկարծակի գալն է, *Parousia* դատաստանի ժամանակ (Երկրորդ Գալուստր):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՅԱՆ ՀԱՄԱՐ
SPECIAL TOPIC: TERMS FOR THE SECOND COMING
Կան մի քանի տերմիններ և արտահայտություններ, որոնք վերաբերում են Հիսուսի վերադարձին:
1. *parousia* (տես Հակ. 5: 7), որը նշանակում է «ներկայություն», օգտագործվել է

արքայական այցի համար (տես Մաթ. 24:3, 37, 39; 1 Կոր. 15:23; 1 Թես. 2:19; 3:13; 4:15; 5:23; 2 Թես. 2: 1,8; 2 Պետ. 1:16; 3: 4,12; 1 Հովհ. 2:28)

2. *epiphaneia*, «դեմ առ դեմ հանդիպել» (տես 1 Տիմ. 6:14; 2 Տիմ. 1:10; 4: 1,8; Տիտոս 2:13)
3. *apokalupis*, «բացահայտում» կամ «բացել, հայտնել» (տես 1 Կոր. 1:7; 2 Թես .1: 7; 1 Պետ. 1: 5, 13; 4: 13; 5: 1)
4. «Տիրոջ օրը» և այս արտահայտության տարբերակները (տես Հատուկ Թեմա: Տիրոջ օրը)

Նոր Կտակարանը որպես մի ամբողջություն գրված է Հին Կտակարանի աշխարհայացքի սահմաններում, որը հայտարարում էր.

1. ներկայի չարիքը, ապստամբող դարաշրջանը
2. արդարության գալիք նոր դարաշրջանը
3. սա իրականանալու էր Հոգու միջնորդությամբ Մեսիայի (Օծյալի) գործի շնորհիվ (Օծյալը; տես Հատուկ Թեմա: Մեսիա)

Զարգացող հայտնության աստվածաբանական ենթադրությունը պահնաջվում է, քանի որ Նոր Կտակարանի հեղինակները չնչին փոփոխության են ենթարկում Իսրայելի ակնկալիքը:

Մեսիայի ռազմական, ազգայնական նպատակաուղղվածությամբ (Իսրայել) գալստյան փոխարեն կան երկու գալուստներ: Առաջին գալուստը աստվածության մարմնացումն էր Հիսուս Նազովրեցու ծննդյան տեսքով: Նա եկավ որպես ոչ ռազմական, ոչ դատական՝ Եսայի 53-ի «չարչարվող ծառան», ինչպես նաև Ջաք. 9:9-ի ավանակի քուռակի հեզ հեծյալը (ոչ թե պատերազմ գնացող նծույզի կամ արքայական ջորու): Առաջին գալուստը Նոր Մեսիանիկ Դարաշրջանի՝ երկրի վրա Աստծո Արքայության հանդիսավոր բացումն արեց (տես Հատուկ Թեմա: Աստծո Թագավորությունը):

Մի իմաստով Արքայությունն այստեղ է, սակայն իհարկե, մյուս իմաստով այն դեռ հեռու է: Մեսիայի այս երկու գալուստների միջև եղած այս լարվածությունն է, որ ինչ-որ իմաստով երկու հրեական դարաշրջանների համընկման տեղ է հանդիսանում, որը ըստ Հին Կտակարանի անտեսանելի է կամ առնվազն անհստակ (տես Հատուկ Թեմա: Այս դարաշրջանը և գալիք դարաշրջանը): Իրականում այս երկակի գալուստները շեշտադրում են ամբողջ մարդկությանը՝ փրկելու ՅԱՀՎԵԻ նվիրումը (տես Ծննդ. 3:15; 12:3; Ելից 19:5 և մարգարեների քարոզները՝ հատկապես Եսայու և Հովնանի; տես Հատուկ Թեմա: ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը): Եկեղեցին չի սպասում Հին Կտակարանի մարգարեությունների իրականացմանը, քանի որ հիմնական մարգարեությունները վերաբերում են առաջին գալստյանը (տես *How to Read the Bible For All Its Worth*, էջ 165-166):

Իսկ հավատացյալները սպասում են հարուցյալ Արքաների Արքայի և Տերերի Տիրոջ փառավոր գալուստին, երկրի վրա, ինչպես որ երկնքում է, արդարության նոր դարաշրջանի ակնկալիք պատմական իրականացմանը (տես Մաթ. 6:10): Հին Կտակարանում ներկայացված դեպքերը անարժանահավատ չեն, սակայն անավարտ են: Նա վերադառնալու է ճիշտ այնպես, ինչպես մարգարեներն են կանխատեսել՝ ՅԱՀՎԵԻ գործությամբ և իշխանությամբ (տես Հատուկ Թեմա: Ինչու՞ են Հին Կտակարանի Ուխտի խոստումները տարբերվում Նոր Կտակարանի Ուխտի խոստումներից):

Երկրորդ Գալուստը աստվածաշնչյան տերմին չէ, սակայն հենց այս հասկացությունը ձևավորում է ամբողջ Նոր Կտակարանի աշխարհայացքը և կմախքը: Աստված ամեն ինչ իր ճիշտ տեղում կդնի: Աստծո և Իր պատկերով ստեղծված մարդկության միջև փոխհարաբերությունը կվերականգնվի (տես Հայտ. 21-22): Չարը կդատվի և կհեռացվի (տես Հայտ. 20:11-15): Աստծո նպատակները չեն կարող և չեն ձախողի:

▪ «երանի նորան որ արթուն է, եւ իր հանդերձները պահում է» Սա հավատարիմ հավատացյալներին տրված յոթ օրհնություններից երրորդն է (տես Հայտ. 1: 3; 14:13; 16:15; 19: 9; 20: 6; 22:7,14): Սա կարծես թե Մարկ.13:33-37; Ղուկ.12:37-ում հանդիպող վախճանաբանական զգուշացման

ամփոփումն է: Այս համարը պետք է դուրս գա, եթե Եկեղեցու աննկատ հափշտակության տեսությունը այս հալածանքից առաջ են հաստատված: Ապա, ու՛մ մասին է Հիսուսը խոսում: Տես Մատթ. 24: 37-42 առցանց՝ www.freebiblecommentary.org կայքում:

▪ **«որ մերկ ման չճայ, եւ նորա ամօթանքը չ՛տեսնեն»** Սա կարող է ակնարկ լինել Հայտ. 3:18: Հին Կտակարանում մերկությունը դատաստանի խորհրդանիշ էր (տես Եզ. 23:29; Ովսիա 2: 3; Ամովս 2:16; Միքիա 1: 8): Այնուամենայնիվ, դա չի վերաբերում փրկությունը կորցնելուն, այլ քրիստոնյաներին, ովքեր ամաչելու են իրենց գործունեության և հավատքի ապրելակերպի պակասության համար, Հիսուսի Երկրորդ Գալստյան Ժամանակ: Հիսուսի գալը, որպես Դատավոր և Հաղթող, որը ճիշտ այն է ինչին հրեաները սպասում էին Մեսիայի գալստյամբ, նկարագրված է Հայտ. 19: 11-16:

16:16 «Եւ ժողովեցին նորանց այն տեղ» Սա կրկնվում է Հայտ. 20: 8:

Արևելահայերեն **«որ Եբրայեցերէն Արմազեդոն է կոչվում»**
 Արևմտահայերեն **«որ Եբրայեցերէն Արմազեդոն կը կոչուի»**

NASB **«եբրայերեն կոչվում է Հար-Մազեդոն »**
 NKJV, NJB, REB **«եբրայերեն՝ Արմազեդոն»**
 NRSV **«եբրայերեն կոչվում է Հարմազեդոն»**
 TEV **«եբրայերեն՝ Արմազեդոն»**

Այս բառը մի քանի հունարեն ձեռագրերում տարբերվում է իր արտասանությամբ: Այս անունը նկարագրելու համար մի քանի տեսություններ են եղել (որոնք եբրայերեն կամ հունարեն գրականության մեջ ոչ մի տեղ չեն հանդիպում):

1. այն վերաբերում է «Մակեդոնի սարը» հյուսիսային քաղաքին, որը գտնվում է Մանասեի ցեղի տեղանքում, որը կառուցվել է բլրի վրա
2. այն վերաբերում է «Մակեդոնի քաղաքին», սակայն խնդիրն այն է, որ դա այդ քաղաքի ճշգրիտ ուղղագրությունը չէ
3. դա «ժողովի սարը» արտահայտության թարգմանությունն է Ես.14:13, որը վերաբերում է Աստծո գերագույն սարին, որի վրա հարձակվում է սատանան
4. այն վերաբերում է ամբողջ Խոստացյալ Երկիրին (այսինքն Եզ. 38:8,20,21; 39,2,4,17 նշված «Իսրայելի սարերին»)
5. այն վերաբերում է «պտղաբեր սարին», որը խորհրդանշում է Երուսաղեմը, բարի և չարի միջև այս վերջին մարտերի բազմաթիվ վայրերը (տես Հովել մարգարեությունը)
6. «Մակեդոն» -ի արմատական իմաստը կարող է նշանակել «կտրել կամ հարձակվել», այսինքն, հղում կատարելով «ոչնչացնող լեռանը» Եր.51:25, Հռոմի ոչնչացման խորհրդանիշը:

Հովհաննեսն ընտրել է մի քաղաք, որը հայտնի էր և մի փոքր փոխել է դրա ուղղագրությունը (տես *Տեքստային Քննադատություն/ Metzger, Textual Commentary*, էջ 755): Սա նման է իր Հայտ.7:5-8-րդ տասներկու ցեղերի ոչ ճիշտ ցանկին, որպեսզի ցույց տան նրանց խորհրդանշական բնույթը: Այս խորհրդանշական մեկնաբանությունը շարունակում է կիրառվել «եբրայերեն» արտահայտության մեջ, որը ցույց է տալիս սիմվոլիզմը, ինչպես Հայտ. 9:11: Ճիշտ է, որ Յեզրայելի կամ Էսդրաելոնի հարթավայրը շատ Հին Կտակարանյան ճակատամարտերի վայր էր (տես Դատ. 5: 19-21; 4 Թագ. 9:27; 23: 29-30; 2 Մնաց. 35: 22; Ջաք. 12:11): Միջագետքյան զորքերի հյուսիսային ներխուժման ճանապարհը դարձել էր չարի մշակութային խորհրդանիշը (տես Ես. 14:31; Եր. 1:13-14; 4: 6; 10:22; 46: 20-24; 47: 2-7; 50: 3,9,41; 51:48; Եզ. 38: 6,15; 39: 2):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 16:17-21

¹⁷Եւ եօթներորդ հրեշտակն իր սկաւառակը թափեց օդի վերայ. Եւ մեծ ձայն դուրս եկաւ երկնքի տաճարիցը եւ աթոռիցը որ ասում էր. Եղաւ ւ: ¹⁸Եւ եղան ձայներ եւ փայլատակներ եւ որոտումնք, եւ մեծ շարժ եղաւ է որ այնպիսի չէր եղած քանի որ մարդիկ երկրի վերայ են՝ այնպիսի մեծ շարժ էր. ¹⁹Եւ մեծ քաղաքը երեք կտոր եղաւ, եւ ազգերի քաղաքները վայր ընկան. եւ մեծ Բաբելոնը յիշուեցաւ Աստուծոյ առաջին, որ իր ցասման բարկութեան գինու բաժակը նորան տայ: ²⁰Եւ ամեն կղզի փախաւ, եւ սարերը չ՛գտնուեցան: ²¹Եւ երկնքիցը տաղանդաչափ մեծ մեծ կարկուտ էր իջնում մարդկանց վերայ, եւ մարդիկ հայհոյեցին Աստուծուն այն կարկտի հարուածի համար, որ սաստիկ մեծ է նորա պատուհասը:

16:17 «Եւ եօթներորդ հրեշտակն իր սկաւառակը թափեց օդի վերայ» Սա կարող է հղում լինել սատանայի թագավորությանը, որը հանդիպում Եփ. 2: 2: Երկրի վերևում գտնվող օդը առաջին դարի աշխարհի կողմից համարվում էր չար տիրույթը: Չարի հետ ճակատամարտն ավարտված է (տես Հայտ. 16: 17- 21):

16:18 Այս պատկերը մի քանի անգամ օգտագործվում է Հայտնության մեջ (տես Հայտ. 4: 5; 8: 5; 11:19; 16:18):

16:19 «մեծ քաղաքը» Ոմանք դա տեսնում են որպես հղում Երուսաղեմին Հայտ.11: 8-ի պատճառով: Սակայն ես կարծում եմ, որ նույնիսկ Հայտ. 11:8-ը Հռոմի խորհրդանիշն է (տես Հայտ. 11: 8; 16:19; 17:18; 18: 10,18-19,21): Հռոմը նկարագրվում է որպես Բաբելոնի մեծ պտռնիկ (տես Հայտ. 14: 8), որը անաստված հասարակության հնագույն նստավայրն էր: Հովհաննեսի օրերում Հռոմը այն կայսրի պաշտամունքի կենտրոնն էր, որը հալածեց Եկեղեցուն: Վերջին ժամանակաշրջանի հակաքրիստոսը կարող է լինել մեկ այլ համաշխարհային քաղաք: Հովհաննեսը շարունակում է նկարագրել ընկած մարդու, հակա-Աստվածային իշխանության վայրի ոչնչացումը Հայտ. 17-18-ում:

- **«երեք կտոր եղաւ»** Սա հնարավոր է ակնարկ է Եզ. 5-ի տեսիլքին, որը նկարագրում է բացարձակ պարտություն:
- **«ազգերի քաղաքները վայր ընկան»** Սա ցույց է տալիս մեր մարդկային իշխանությունների անարդյունավետ դաշինքը մեր Աստծո ն Երա Քրիստոսի դեմ (տես Սաղ. 2): Տես նշում Հայտ. 10: 11:
- **«մեծ Բաբելոնը յիշուեցաւ Աստուծոյ առաջին»** «Այն ժամանակ Աստված հիշեց» արտահայտությունը հաճախ Աստծո դատաստանի խորհրդանիշն է (տես Հայտ. 18: 5; 19:15): Դատաստանի այս հատուկ գավաթը քննարկվել է ավելի վաղ Հայտ. 14:10-ում:
- **«որ իր ցասման բարկութեան գինու բաժակը նորան տայ»** Հարբեցողությունը Աստծո դատաստանի համար Հին Կտակարանյան փոխաբերություն էր (տես Սաղ. 60: 3; 75:8; Ես. 51:17,22; Եր. 25:15-16, 27- 28):
«Բարկություն» *orgē* տերմինն է: Տես նշումը, Հայտ. 7:14-ում:

16:20 «ամեն կղզի փախաւ» Սա նման է վեցերորդ կնիքին (տես Հայտ. 6:14):

- **«սարերը չ՛գտնուեցան»** Սրանք Հին Կտակարանյան խորհրդանշական արտահայտություններ էին՝ վերջին ժամանակների աղետալի իրադարձությունների համար (տես Սաղ. 97: 5; Միքիա 1: 4; Նաում 1: 5):

16:21 «**մեծ մեծ կարկուտ**» Կարկուտը միշտ Աստծո դատաստանի նշանն է եղել (տես Հեսու 10:11; Ես. 28: 2): Սա ևս մեկ հնարավոր ակնարկ է եգիպտական պատուհասների մասին (տես Ելից 9: 23-24): Եզ. 38:22 կարկուտը օգտագործվում է Աստծո վերջին ժամանակի թշնամիների վրա: Կարկուտի կշիռը բազմազան է:

▪ **«տաղանդաչափ»** Սա բառացիորեն «տաղանդի քաշ» է: Հին Մերձավոր Արևելքում «տաղանդների» քաշը տարբերվում էր 45-ից մինչև 138 ֆունտ: Նրանց ճշգրիտ քաշը անհայտ է, բայց դրանք ակնհայտորեն չափազանցված են կշիռներով՝ ցույց տալու, որ նրանք կարող են պատճառել վնաս և մահ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Ի՞նչ է խորհրդանշում «ապակե ծովը»:
2. Ինչու՞ է Աստված ցույց տալիս Հովհաննեսին երկնային խորանի տեսիլքը:
3. Թվարկեք նմանությունները Եգիպտոսի պատուհասների և կնիքների, փողերի, սկավառակների միջև:
4. Ինչպե՞ս են Հայտ.16:12-ի արևելքի թագավորները կապվում Հայտ. 16:14-ի ամբողջ երկրի թագավորների հետ:
5. Ի՞նչ կամ որտե՞ղ է Արմազեդոնը: (Հայտ. 16:16)
6. Ինչի՞ն է վերաբերում «մեծ քաղաքը»: (Հայտ. 16:19)

ՀԱՅՏՆՆՈՒԹՅՈՒՆ 17-18

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Մեծ Պոռնիկը և Գազանը	Կարմիր Կինը և կարմիր Գազանը	Բաբելոնի անկումը	Հայտնի Պոռնիկը	Մեծ Պոռնիկը
17:1-6ա	17:1-6 (5)	17:1-6ա	17:1-2	17:1-7
	Կնոջ և Գազանի խմաստը		17:3-6ա	
17:6բ-14		17:6բ-8	17:6բ-8	
	17:7-18			Գազանի և Պոռնիկի խորհրդանիշը
				17:8
		17:9-14	17:9-11	17:9-11
			17:12-14	17:12-14
17:15-18		17:15-18	17:15-17	17:15-18
			17:18	
Բաբելոնի անկումը	Մեծ Բաբելոնի անկումը	Սուգ ընկած քաղաքի վրա	Բաբելոնի անկումը	Հրեշտակը հայտարարում է Բաբելոնի անկումը
18:1-3	18:1-8	18:1-3	18:1-3	18:1-3
				Կոչ Աստծո ժողովրդին փախչել
18:4-8	Աշխարհը սգում է Բաբելոնի անկման վրա	18:4-8	18:4-8	18:4-8
18:9-10	18:9-20	18:9-10	18:9-10	18:9-13
18:11-20		18:11-20	18:11-17ա	
				18:14
				18:15-17ա
			18:17բ-19	18:17բ-20
	Բաբելոնի		18:20	

	անկման վերջը			
18:21-19:4	18:21-24	18:21-24	18:21-23	18:21-24
			18:24-19:4	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դաբանալիս է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 17:1-18:24

- Ա. Այս երկու գլուխները մանրամասնորեն նկարագրում են Բաբելոնի կործանումը, որի անկումը ավելի վաղ հիշատակվել է Հայտ. 14: 8 և 16:19, ինչպես նաև 18: 2, 21: Դրանցից յուրաքանչյուրը տեղի է ունենում առանձին գրական բաժնում (12-14), (15-16) և (17-19): Սա կարող է լինել գուգահեռականության կամ ամփոփման մեկ այլ օրինակ:
- Բ. Այս երկու գլուխների Հին Կտակարանյան ֆոնը հանդիպում է թաղման ժամանակ հնչած սգո երգերում՝ գրված անաստված քաղաքների ընկնելուն հավանություն տալու համար.
 1. Բաբելոն (տես Ես. 13,14,21 և Եր. 50-51)
 2. Տյուրոս (տես Ես. 23 և Եզ. 26-28)
 3. Նինվե (տես Նաում)
 4. չար Երուսաղեմը (տես Ես. 1: 1-26; Եզ. 16: 51-52)
- Գ. Ընկած աշխարհի համակարգի այս գաղափարը, որը հակասում է Աստծուն ներկայացված է Մաղ. 2; Դան. 2; 7; 9: 24-27; Մատթ. 24; Մարկ. 13; Դուկ. 21; և 1 Հովհ. 2:15-20 համարներում:
- Դ. Հայտնությունն օգտագործում է Հին Կտակարանյան թաղման սգո երգերը՝ նկարագրելու Հռոմի անկումը, Հովհաննեսի օրվա հակա-աստվածային կայսրությունը: Այնուամենայնիվ, այս նույն անկախ, ամբարտավան, նյութապաշտ, հակա-աստվածային աշխարհի համակարգը ներկա է բոլոր ժամանակներում (տես 1 Հովհ. 2:18): Այն նաև ի վերջո կհայտնվի որպես վերջին ժամանակի իշխան և համաշխարհային կայսրություն (տես 2 Թեա. 2): Մանրամասները, որոնք կօգնեն Հովհաննեսի վերջին սերնդի ընթերցողներին բացահայտել վերջին ժամանակի հակաքրիստոսին կարող է հայտնվել վերջին օրերին: Խնդիրն այն է, որ հավատացյալների յուրաքանչյուր սերունդ փորձել է Հայտնությունը գործադրել իր օրերում:

Այս գիրքն ունի առաջին դարի, յուրաքանչյուր դարի և վերջին դարի համապատասխանություն: Լավ է չպարտադրել մանրամասները: Նրանք իմաստ ունեն (առաջին լսողներ); նրանք կրկին նշանակություն կունենան (վերջին սերունդը): Բայց հավատացյալների սերունդների մեծամասնության համար նրանք գաղտնիք են: Ավելի լավ է հաստատել յոթ գրական բաժինների կենտրոնական ճշմարտությունները: Սրանք հավիտյան կարևոր են: Եթե մանրամասները խստորեն բառացի են դառնում հալածվող հավատացյալների վերջին սերունդների համար, նրանց պետք չէ, որ մեկնաբանը նրանց ասի:

Ե. Ուիլյամ Հենդրիկսեն, Ավելի քան նվաճողներ/William Hendriksen, *More Than Conquerors* պնդում է Հայտնության բոլոր յոթ բաժինների զուգահեռությունը (տես ծանոթագրություն Գ. էջ 10): Դրանով նա պնդում է հավատացյալների թշնամիների անկման զուգահեռը (Սատանան, երկու գազանները և Բաբելոնը՝ հակաԱստվածային, հակաքրիստոսային աշխարհակարգը): Չնայած դրանց ոչնչացմանը վերաբերվում է առանձին (Սատանան, Հայտ. 20: 7-10; երկու գազանները, Հայտ. 19: 17-21; և Բաբելոնը, Հայտ. 18: 1-19: 4), դրանք իսկապես միաժամանակ են, կնիքների, փողերի և սկավառակների նման:

Շատ առումներով սա գրավիչ մեկնաբանական կառուցվածք է, որը տարածում է կնիքների (Հայտ. 4-7), փողերի (Հայտ. 8-11), և սկավառակների (Հայտ. 15-16) ակնհայտ զուգահեռությունը, Հայտ. 17-19 և Հայտ. 20-22:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 17:1-7

¹Եւ այն եօթը սկաւառակներն ունեցող եօթը հրեշտակներից մէկն եկաւ եւ խօսեց ինձ հետ ասելով. Եկ քեզ ցոյց տամ այն մեծ պտոնկի դատաստանը, որ այն շատ ջրերի վերայ նստում է, ²Որի հետ պտոնկուեցան երկրի թագաւորները եւ երկրի բնակիչները նորա պտոնկութեան գինովն արբեցին: ³Եւ ինձ առաւ տարաւ հոգով մի անապատ. Եւ տեսայ մի կին՝ նստած կարմիր գազանի վերայ՝ լիքը հայեոյութեան անուններով որ եօթը գլուխ ունէր եւ տասը եղջիւր: ⁴Եւ այն կինը որ ծիրանի եւ կարմիր էր հագած, եւ ոսկով եւ պատուական ակունքներով եւ մարգարիտներով զարդարուած մի ոսկի բաժակ ունէր իր ձեռքումը, լիքը զարշելութիւններով եւ իր պիղծ պտոնկութիւնովը, ⁵Եւ նորա ճակատումը գրուած էր մի անուն՝ Խորհուրդ, Մեծ Բաբելոն, պտոնիկների եւ երկրի զարշելիների մայրը: ⁶Եւ տեսայ այն կինը արբած սուրբերի արիւնովը եւ Յիսուսի վկաների արիւնովը. Եւ երբոր տեսայ նորան, մեծ զարմանքով զարմացայ: ⁷Եւ հրեշտակն ասեց ինձ. Ի՛նչու համար զարմացար. Ես ասեմ քեզ այդ կնկայ խորհուրդը, եւ այն գազանինը, որ նորան վեր է առել, որ եօթը գլուխը ունի եւ տասը եղջիւրը:

17: 1 «եօթը հրեշտակներից մեկն» Մեկ այլ հրեշտակ է նկարագրվում նույն կերպ Հայտ. 21: 9-ում: Հայտնություն 17-ի և 18-ի ժամանակագրական կապը և Հայտնություն 16-ում սկավառակների թափվելը

1. կարող է նախորդել սկավառակների թափվելուն
2. դա կարող է լինել սկավառակների արդյունքի հետագա նկարագրությունը

▪ «քեզ ցոյց տամ այն մեծ պտոնկի դատաստանը» Այս հոգևոր գայթակղությունը նկարագրվում է Հայտ. 17:5-ում, որպես «հզոր Բաբելոն՝ պտոնիկների մայրը», իսկ Հայտ. 18: 10-ում՝ որպես «մեծ քաղաք Բաբելոնը»: Ըստ ավելի վաղ գլուխների, այս անվանումները վերաբերում են ընկած աշխարհի համակարգին, որը ամփոփված է.

1. Դանիելի Բաբելոնը

2. Դանիելի միջաստվածաշնչյան Անտիոքոս IV- ը
3. Հովհաննեսի Հռոմեական կայսրը, ով իրեն աստված է համարում

17-րդ գլխում շքեղության և ազահության գայթակղիչ ուժը համընկնում է 18-րդ գլխի առևտրային ուժի հետ: Հին Կտակարանում երեք քաղաքները կոչվում են պոռնիկներ:

1. Տյուրոս (Փյունիկիա) Ես. 23: 15-16
2. Նինվե (Ասորեստան) Նաում 3: 4
3. Երուսաղեմ (անպտուղ Հուդա) Ես. 1:21; Եզ. 16: 31,35; 23

▪ **«այն շատ ջրերի վերայ նստում է»** Հին Կտակարանի ակնարկը Եր. 51: 11-14, որը վերաբերում է հին Բաբելոն քաղաքին, որը տեղակայված էր Եփրատ գետի ափին (ինչպես որ Նինվեն գտնվում էր Տիգրիս գետի վրա) և ուներ արհեստական ոռոգման և փոխադրման ջրանցքների ընդարձակ համակարգ: Սակայն, Հայտ. 17:15-ի լույսի ներքո, այս արտահայտությունը մեկնաբանվում է որպես միջազգային թագավորություն (տես Դան. 7: 2,3):

17:2

Արևելահայերեն «Որի հետ պոռնկուեցան երկրի թագավորները»
Արևմտահայերեն «Որուն հետ երկրին թագավորները պոռնկացան»

NASB «որի հետ երկրի թագավորները անբարոյականություն են գործել»
NKJV, NRSV, REB «որի հետ երկրի թագավորները պոռնկություն են գործել»
TEV «երկրի թագավորները սեռական անբարոյություն են գործել»
NJB «որի հետ երկրի բոլոր թագավորները մարմնավաճառություն են արել»

Այս պոռնկությունն ունի երկու հիմնական ասպեկտ.

1. առևտրային դաշինքներ (տես Տյուրոս, Ես. 23: 13-18; և Նինվե, Նաում 3: 4)
2. քաղաքական դաշինքները, որոնք ընդգրկում էին ազգերի աստվածների պայմանագրային երկրպագությունը վավերացման արարողություններում (տես Երուսաղեմը նույնպես կոչվում էր պոռնիկ Ես. 1:21 և Եր.3):
3. Հռոմեական կայսեր երկրպագությունը որպես աստված

▪ **«երկրի բնակիչները նորա պոռնկութեան գինովն արբեցին»** Սա ակնարկ է Եր. 51: 7: Այն նաև ներկայացված է Հայտ.14: 8-ում: «Նրանք, ովքեր բնակվում են երկրի վրա» արտահայտությունը կրկնվող թեմա է Հայտնության մեջ, որը ցույց է տալիս Աստծուց հեռացած մեղավոր, ընկած մարդկությունը (տես Հայտ. 3:10; 6:10; 8:13; 11:10; 13: 8,14 ; 17: 8):

«Խմել» Հին Կտակարանյան փոխաբերություն է դատաստանի համար (տես Սաղ. 75: 6-8):

17: 3 «Եւ ինձ առաւ տարաւ հոգով» Այս արտահայտությունն օգտագործվում է՝ Հովհաննեսի տեսիլքները ներկայացնելու համար (տես Հայտ. 1:10; 4: 2; 17: 3; 21:10): Շատ մեկնաբաններ Հայտնության կառուցվածքի մասին ունեցած իրենց պատկերացումները հիմնավորում են այս տեսիլքների վրա: Հիշեք, որ ապոկալիպտիկ գրականությունը խիստ կառուցվածքային ժանր է: Կառուցվածքը դառնում է բանալի մեկնաբանության մեջ:

- **«տարաւ ... մի անապատ»** Սա կարող է լինել
1. փոխաբերություն անվտանգ, ապահով վայրի համար (տես Հայտ. 12: 6,14, որտեղ դա ակնարկ է անապատում Իսրայելի թափառական շրջանի)
 2. մի տեղ, որտեղ ապրում են չարը և դևերը (այսինքն Ղև. 16: 8; 17: 7)

3. ակնարկ հին Բաբելոն քաղաքի, որի մասին խոսվում է Ես. 21: 1-10, որտեղ դա դատաստանի փոխաբերություն է

Հովհաննեսի պատկերները շատ հարթ են: Հայտ. 17: 1-ում կինը նստած է շատ ջրերի վրա (Եփրատ գետը), իսկ Հայտ. 17: 3-ում նա նստած է անապատում կարմիր գազանի վրա:

▪ **«Եւ տեսայ մի կին՝ նստած կարմիր գազանի վերայ»** «Կարմիր» տերմինը կարող էր վերաբերվել

1. սպանությանը, տես Հայտ. 17: 6-7

2. շքեղությանը, տես Հայտ. 18: 12-16

3. Սատանային՝ որպես կարմիր վիշապ, տես Հայտ. 12: 3

Գազանը մանրամասն նկարագրված է Հայտ. 13: 1-10-ում: Խոսքը վերաբերում է վերջին ժամանակի Նեոին (տես Դանիել 7: 9-14; 9: 24-27; 11: 36-45; 2 Թես. 2; 1 Հովհ. 2:18):

▪ **«լիքը հայհոյութեան անուններով»** Սա նման է Հայտ. 13: 1,5-6-ին: Այս տիտղոսները պատմականորեն կապված են Հռոմեական կայսրի ինքնագոյության հետ: Նրանք իրենց համար պահանջում էին տիտղոսներ, ինչպիսիք են «աստվածային», «փրկիչ», «տեր»: Գազանի վերջնական նպատակը ոչ թե համաշխարհային քաղաքական ուժն է, այլ կրոնական երկրպագությունը (տես Դան. 7: 8,20; 8: 11,25; 9: 36,37) որպես Սատանայի ներկայացուցիչ կամ մարմնացում (հավանաբար ներկայացված է Ես. 14: 13-14 և Եզ. 28: 16-17):

▪ **«որ եօթը գլուխ ուներ եւ տասը եղջիր»** Այս նկարագրությունը նման է կարմիր վիշապին (տես Հայտ. 12: 3) և ծովի գազանին (տես Հայտ. 13: 1): Նմանությունը նպատակ ունի ցույց տալ այս տարբեր հակա-աստվածային անձերի միասնությունը:

Թվային սիմվոլիզմում (1) յոթ գլուխները վերաբերում են «կատարյալ» գիտելիքին կամ վերջնական աշխարհի վերջին առաջնորդին, մինչդեռ (2) տասը եղջյուրները վերաբերում են ամբողջ ուժին կամ աշխարհիկ իշխանությանը (տես Հայտ. 17: 7,9,12,16):

17: 4 «Եւ այն կինը որ ծիրանի եւ կարմիր էր հագած» Այս գույները կարող են վերաբերվել թագավորական (մանուշակագույն/ծիրանի) և անբարոյականությանը (կարմիր) կամ պարզապես շքեղության, հարստության և ծաղկունության փոխաբերությանը (տես Հայտ. 18: 12,16):

▪ **«եւ ոսկով եւ պատուական ակունքներով եւ մարգարիտներով զարդարուած »** Սա երկրային և հոգևոր ուժի և դիրքի խորհրդանիշ է (Եզեկիելն օգտագործում է որպես Եդեմական փոխաբերություն՝ Տյուրոսի թագավորի հպարտության համար, տես Եզ. 28:13):

▪ **«ոսկի բաժակ»** Սա ակնարկ է Բաբելոն քաղաքին (տես Եր. 51: 7):

17: 5 «Եւ նորա ճակատումը գրուած էր մի անուն» Seneca's *Controversies* 1: 2 և Juvenal's *Satires* 6: 122-123, արձանագրված են, որ հռոմեական պոռնիկները ճակատի վրա ժապավեն էին կրում իրենց անունով կամ սեփականատիրոջ անունով: Սա կարող է պատմական ակնարկ լինել Հովհաննեսի օրերի կամ Հայտնության կոնտեքստում; դա կարող է լինել անհավատների ճակատի նշանի տեղեկությունը (տես Հայտ. 13: 16-17; 14: 9,11; 15: 2; 16: 2; 19:20; 20: 4), որը ընդօրինակում է Աստծո հավատացյալներին կնքելը (տես Հայտ. 7: 2; 9: 4):

Արևելահայերեն **«Խորհուրդ, Մեծ Բաբելոն»**

Արևմտահայերեն **«Խորհուրդ՝ Մեծ Բաբելոն»**

NASB	«խորհուրդը, Մեծ Բաբելոնը»
NKJV	«Խորհուրդը, Մեծ Բաբելոնը»
NRSV	«խորհուրդը: մեծ Բաբելոնը»
TEV	«գաղտնի նշանակություն: «Մեծ Բաբելոն »»
NJB	«անուն, ծպտյալ անուն: « Մեծ Բաբելոնը»

Որոշ տարաձայնություններ կան, թե «խորհուրդ, առեղծված» տերմինը պետք է լինի վերնագրի մի մասը, թե վերնագրի խորհրդանշական բնույթին անդրադառնալու միջոց (տես Հայտ. 17: 7): Բաբելոնը իր ծագումն ունի առաջին քաղաքակրթության մեջ, որը սկսվել է Նիմրոթի (Բաբել) կողմից, որը ապստամբեց Աստծո դեմ և ցրվեց Ծննդոց 11-ում: Այս գործածությունից և այն փաստից, որ Բաբելոնը Աստծո (Հուդա) ժողովրդին տարավ գերության, այն դարձավ չարի, կայսերական համաշխարհային զորության հոմանիշը: Հովհաննեսի օրոք այս գործությունը Հռոմն էր (տես 1 Պետ. 5:13):

17: 6 Այս համարը խոսում է հավատացյալների հավաճանքների և նահատակության մասին (տես Հայտ. 11: 7; 13: 7; Դան. 7:21):

- **«մեծ զարմանքով զարմացայ»** KJV- ն սա թարգմանում է որպես «մեծ հիացմունքով», բայց NKJV-ում «Ես հիացած էի մեծ զարմանքով» : Հովհաննեսը չէր հիանում նրանով, բայց շատ զարմացած էր նրա գործողություններից: Նրան թույլ էր տալիս հետապնդել և սպանել Աստծո ժողովրդին (տես Հայտ. 13: 5,7,15; 11: 7):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 17:8-14
⁸Գազանը որ տեսար, կար եւ չ'կայ, եւ անդունդիցն է դուրս գալու եւ կորուստն է գնալու, եւ կ'զարմանան երկրի վերայ բնակողները չ որոնց անունները գրուած չեն կեանքի գրքի մեջ աշխարհքի սկզբից հետէ, երբոր տեսնեն այդ գազանը որ կար, եւ չ'կայ, թէ եւ է: ⁹Այստեղ է այն միտքը որ իմաստութիւն ունի. այն եօթը գլուխը եօթն սարեր են որ կինը նորանց վերայ նստած է. Եւ եօթը թագաւորներ են. ¹⁰Հինգը ընկան, եւ մէկը կայ, միւսը դեռ չէ եկել. Եւ երբոր գայ մի քիչ ժամանակ պէտք է մնայ: ¹¹Եւ այն գազանը որ կար եւ չ'կայ, նա էլ ութերորդն է եւ այն եօթնիցն է, եւ կորուստն է գնում, ¹²Եւ այն տասը եղջիւրը որ տեսար, տասը թագաւորներ են. Որոնք դեռ թագաւորութիւն չեն առել, այլ թագաւորի պէս իշխանութիւն են անում մէկ ժամ այն գազանի հետ: ¹³Սորանք մէկ կամք ունին, եւ իրանց զօրութիւնը եւ իշխանութիւնը կ'տան գազանին: ¹⁴Սորանք պատերազմ կ'անեն Գառի հետ, եւ Գառը կ'յաղթէ նորանց, որովհետեւ տէրերի Տէր է, եւ թագաւորների Թագաւոր. եւ նորանք որ նորա հետ են, կոչուած, ընտրուած եւ հաւատարիմ են:

17: 8 «Գազանը որ տեսար, կար եւ չ'կայ, եւ ... դուրս գալու» Այս ժամանակագրական նկարագրությունը մեծ սարսափ է առաջացրել մեկնաբանների շրջանում:

1. Նրանցից ոմանք դա տեսնում են պատմական իմաստով, որը վերաբերում է մասնավորապես Ներոնի վերադարձի լեգենդին:
2. Մյուսները՝ որպես Դանիել 2-ին վերաբերող համաշխարհային կայսրությունների առաջխաղացում, որոնք զագաթնակետին են հասցնում հակա-Աստվածային վերջին ժամանակաշրջանի համակարգը:
3. Մյուսները դա դիտում են որպես Հայտ. 13: 3,12,14-ում նկարագրված գազանի վերջին գործունեության հետ կապված, որը կապված է Քրիստոսի ծառայության նմանակելուն:

4. Դա կարող է վերաբերել 1 Հովհաննեսի հակաքրիստոսի հոգու գաղափարին յուրաքանչյուր դարաշրջանում, որի գագաթնակետը վերջին օրերի Նեոն է (տես 1 Հովհ. 2: 18,22; 4: 3; 2 Հովհ. 7):

Սա մեկ այլ պարողիա է ՅԱՀՎԵԻ անվան շուրջ (տես Հայտ. 1: 4,8):

▪ **«անդունդիցն է»** Սա հունարեն տերմին է «խորության» համար պլֆա մասնիկով: Առաջին անգամ նշվում է Հայտ. 9: 1 և 11: 7-ում: Դա չարի և դևերի պատկերավոր կացարանն է: Տես նշում Հայտ. 9: 1-ում:

▪ **«կեանքի գրքի»** Տես նշումներ Հայտ. 5: 1 և 13: 8-ում:

▪ **«աշխարհքի սկզբից հետև»** Տես նշումներ Հայտ. 3: 5 և 13: 8-ում:

17: 9

Արևելահայերեն **«Այստեղ է այն միտքը որ իմաստություն ունի»**

Արևմտահայերեն **«Հոս պետք է իմաստություն ունեցող միտք մը»**

NASB, NKJV **«Ահա այն միտքը, որն ունի իմաստություն»**

NRSV **«Սա կոչ է անում միտք, որը իմաստություն ունի»**

TEV **«Սա կոչ է անում իմաստություն և հասկացողություն»**

NJB **«Սա կոչ է անում խելամտություն»**

Այս արտահայտությունը նման է Հայտ. 13: 18-ին, որն անդրադառնում է գագանի անվան թվին: Սուրբ Գրքի այս փոքրիկ գլուխկոտրուկը առաջացրել է բոլորին առաջ քաշելու իր տեսությունը: Այնուամենայնիվ, այն փաստը, որ կա մեկնաբանությունների այդպիսի բազմություն, ցույց է տալիս, որ մեր մեջ չափազանց իմաստուններ չկան (տես 1 Կոր. 1: 26-31): Ինձ համար Հովհաննեսի համար ուղղակի մեկ այլ միջոց է պնդելու իր գրածի խորհրդավոր, խորհրդանշական, ծպտյալ բնույթը (տես Frank Stagg, *New Testament Theology*, Ֆրենկ Սթագ, *Նոր Կտակարանի Աստվածաբանություն*, էջ 317):

▪ **«այն եօթը գլուխը եօթն սարեր են որ կինը նորանց վերայ նստած է»** Սա ակնարկ է Հռոմին: Հռոմը, ինչպես Երուսաղեմը, կառուցվել է յոթ բլուրների վրա: Այս արտահայտությունը հանդիպում է Հին Հռոմը նկարագրող շատ հին գրվածքներում: Հետևաբար, թարգմանիչները պարտական են գոնե այս ամենը տեսնել Հռոմեական կայսրության լույսի ներքո, չնայած ակնհայտ է, որ 17-րդ և 18-րդ գլուխների ամբողջ ակնարկը հակա-Աստվածային աշխարհի համակարգն է, որը կգործի վերջում և իրականում, յուրաքանչյուր ժամանակաշրջանի տեղում:

17: 10-11 Որոշ մեկնաբաններ սա համարում են հռոմեական կայսրերի շարքը՝ Օգոստինոս, Տիբերիոս, Կալիգուլա, Կլավդիոս և Ներոն, որպես «հինգը, ովքեր ընկել են»: Վեսպասյանը «ներկայումս եղածն է», իսկ Տիտոսը՝ «նա, ով կգա մի որոշ ժամանակ անց» (տես Ֆ. Ֆ. Բրյուսը, Հարցերի պատասխանները/ F. F. Bruce, *Answers to Questions*, էջ 141): Այս մեկնաբանությունը բավականին կամայական է; երեք համեմատաբար աննշան կայսրերը (Գալբա, Օթո և Վիտելիոս) ովքեր հավակնել են գահին 68-69թթ. աննկատ են մնացել: Այնուամենայնիվ, նույնիսկ այդ խնդիրներով, սա, կարծես կենտրոնում է Հայտ. 17:10 և 11-ին՝ շեշտը դնելով Ներոնի վերակենդանացման առասպելի վրա և Պարթյան զորքերի հետ վերադառնալով Հռոմի վրա հարձակվելու համար (սա կարող է բացատրել Հայտ. 17:16, տես *Sibyllian Oracles*, 5: 361-368):

Մյուսները տեսնում են, որ այս մարգարեությունը կատարվել է Դոմիտիոսի հալածանքների ժամանակ: Այս մեկնաբանության համար կան մի քանի հիմնական խոչընդոտներ.

1. կպահանջի, որ Հայտնությունը գրված լինի Վեսպասիանի օրոք, ինչը հակասում է հին եկեղեցական ավանդույթին, որ Հովհաննեսը գրել է Դոմիցիանի օրոք:
2. թվերի խորհրդանշական օգտագործումը ամբողջ գրքի ընթացքում

Ինչո՞ւ այս պատմականորեն բառացի դարձնել: Կրկին, սա կարող էր լինել մի բան, որ Հովհաննեսն արեց դիտավորյալ ցույց տալու իր տեսիլքների խորհրդանշական բնույթը, որոնք նախատեսված չէին ամբողջությամբ փակվելու որևէ պատմական ժամանակաշրջանի մեջ:

Մեկ այլ հավանական մեկնաբանությունն այն է, որ սա վերաբերում է Հին Կտակարանի կայսրությունների շարքին, որոնք Աստծո ժողովրդի թշնամիներն էին՝ Եգիպտոսը, Ասորեստանը, Բաբելոնը, Պարսկաստանը, Հունաստանը («հինգը ընկել են»), Հռոմը («մեկը կա»), վերջին ժամանակի հակա Աստվածային կայսրությունը («մյուսը դեռ չի եկել»): Այս մեկնաբանությունը տեղավորվում է հակա-աստվածային աշխարհի մի շարք կայսրությունների ընդհանուր օրինակին Դան. 2: 1-8 (տես George Ladd, *Revelation* / Ջ. Լադ, Հայտնություն, էջ 227-231):

Դեռևս մեկ այլ հին մեկնաբանություն է Հայտնության բոլոր թվերի և մանրամասների խորհրդանշական բնույթը, որը պարզապես կվերածի այս գլուխը Աստծո և չարի միջև վերջնական բախման մեկ այլ օրինակի (տես Ալան Ջոնսոնի *Հայտնությունը/Alan Johnson's Revelation*, էջ 152-153, 157-161):

Սա իմ ներքին բախումների լավ օրինակ է որպես մեկնաբան: Այնքան շատ տարբեր մեկնաբանություններ կան աստվածապաշտ գիտնականների կողմից, որոնց ես վստահում եմ: Առաջին տեսությունը իմ սիրելի գրող Ֆ. Ֆ. Բյուսին է: Հայտնություն գրքի հաջորդ երկու իմ սիրելի մեկնաբաններն են՝ Ջորջ Լադդը և Ալան Ջոնսոնը: Նրանք բոլորը համաձայն չեն: Կարևոր հարցն այն է, թե արդյոք տեքստը առաջին դարի Հռոմի (Բյուս), Հին Կտակարանի (Լադդ), կամ ապոկալիպտիկ պատկերների ակնարկ է (Ջոնսոն): Իմ անձնական ուսումնասիրության մեջ այս հարցում ես կարծում եմ, որ Ջոնսոնի տեսակետը լավագույնն է:

17:12 «Եւ այն տասը եղջիրը որ տեսար, տասը թագաւորներ են» Սա ակնարկ է Դան. 7: 7,23-24: Դանիել 7-ը վերջին ժամանակների Նեոի նկարագրությունն է: Ոմանք դա պատմականորեն կապում են Հռոմի տասը վասալ թագավորների հետ, իսկ ոմանք էլ գտնում են, որ դա Հայտ. 9-ի դների խումբն է: Շատերի համար Հայտնություն գրքում նշված թվերի խորհրդանշական բնույթը պարզապես ստիպում է ընդունել, որ Հայտ.17:12-ը վերաբերում է աշխարհի վերջին առաջնորդներին, բայց առանց կոնկրետացնելու:

Հայտնություն գրքի շատ բարդ, բառացի մեկնաբանություններ հիմնված են Հայտ. 17: 10-12-ի առանձնահատուկ մանրամասների վրա: Այս մարգարեությունները շատ հատուկ են, ինչը հակված է վերջին ժամանակների բառացի իրականացմանը: Այնուամենայնիվ, գրական ժանրի բնույթը մատնանշում է այս թվերի և մանրամասների սիմվոլիկ մեկնաբանությունը (համենայն դեպս նրանց համար, ովքեր հավանաբար հավատացյալների վերջին սերունդը չեն):

17:13 Այս համարը ցույց է տալիս չարի միասնությունը, մինչդեռ Հայտ. 17: 15-16-ը ցույց է տալիս չարի բաժանումը: Չարը, ի վերջո, շրջվելու է իր դեմ, ինչպես Հայտ. 16:12 – ում:

17:14 «Սորանք պատերազմ կ'անեն Գառի հետ» Գառը նույնացվում է Իր ժողովրդի հետ (տես Մատթ. 25: 35-40; Գործք 9: 4):

- **«Էւ Գառը կ'աղթէ նորանց... Էւ նորանք որ նորա հետ են»** Ուշադրություն դարձրեք սերտ նույնացումը Քրիստոսի հաղթանակի և Նրա ժողովրդի հաղթանակի միջև:

- **«որովհետեւ տերերի Տէր է, Էւ թագաւորների Թագաւոր»** Այս նույն տիտղոսը նշված է Հայտ. 19:16-ում որպես վերադարձող Մեսիայի բնութագիր: Դրա ծագումը հանդիպում է (1) ՅԱՀՎԵԻ

նկարագրության մեջ 2 Օր. 10:17; Մաղ. 136: 2-3 կամ (2) բարեկրոնյան տիտղոս, որն օգտագործվում է Նաբուգոդոնոսորի համար Դան. 2: 37,47: Այս արտահայտության թվի արժեքը արամերենով հավասար է 777-ի, չնայած որ դա նշված չէ տեքստում:

▪ **«կոչուած, ընտրուած եւ հաւատարիմ են»** Ուշադրություն դարձրէք նախասահմանության ակնարկին, որը հանդիպում է «ընտրված» և «կանչված» տերմիններով, բայց նաև նկատէք, որ դրանք կոչված են համբերության՝ կապված «հավատարմության» հետ: Մենք Նրանն ենք կանչով և հավատքով (ինչպես սկզբնական, այնպես էլ շարունակական): Տես Հատուկ Թեմա: Համբերություն, հաստատակամություն, Հայտ. 2:2:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 17:15-18

¹⁵Եւ ասեց ինձ. Այդ ջրերը, որ տեսար ուր որ պոռնիկը նստած է, ժողովուրդներ են, եւ բազմութիւններ եւ ազգեր եւ լեզուներ: ¹⁶Եւ տասը եղջիրը, որ տեսար գազանի վերայ, նորանք կ'ատեն պոռնկին, եւ նորան ամայի եւ մերկ կ'անեն, եւ նորա միսերը կ'ուտեն եւ կրակով կ'այրեն նորան: ¹⁷Որովհետեւ Աստուած դրաւ նորանց սրտերի մէջ որ նորա կամքն անեն, եւ միակամ լինեն, եւ իրանց թագաւորութիւնը տան գազանին և մինչեւ որ Աստուծոյ խօսքերը կատարուին: ¹⁸Եւ կինը, որ տեսար, այն մեծ քաղաքն է, որ թագաւորութիւն ունի երկրի թագաւորների վերայ:

17:15 Այս համարը ցույց է տալիս վերջին ժամանակների հակաստվածային առաջնորդի և նրա կայսրության համընդհանուր թագավորությունը: Տես նշում Հայտ. 10:11-ում:

17:16 Սա ակնարկ է Եզ. 16: 39-40; 23: 25-27; 28:18: Թվում է, թե դա վերաբերում է չարի ուժերի միջև ներքին բախումներին, ինչպես Հայտ. 16:12-ում: Այս հակասությունը Աստծո ռազմավարությունն էր (տես Հայտ. 17:17):

17:17 «սրտերի» Տես Հատուկ Թեմա Հայտ. 2:23

17:18 Այս հոյակապ քաղաքը հիշատակվում է Հայտ. 11: 8 և 16:19 -ում՝ ակնարկներով կամ Երուսաղեմը (դիսպենսացիոնալիստներ) կամ Հռոմը (պրետերիստներ): Գրական միավորի կոնտեքստը հուշում է հակաստվածային գործության կառույց, որը խորհրդանշվում է որպես քաղաք: Ո՞ր քաղաքը, ինչի՞րը դա չէ: Բանն այն է, որ Աստծուց լիովին զերծ կառավարական համակարգի գոյությունն է՝ մարդիկ, ովքեր փորձում են բավարարել իրենց բոլոր կարիքները (աթեիստական հումանիզմ):

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 18

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 18:1-3

¹Եւ սորանից յետոյ տեսայ մի հրեշտակ երկնքիցը վայր գալիս. Որ մեծ իշխանութիւն ունէր, եւ երկիրը լուսաւորուեցաւ նորա փառքիցը: ²Եւ զօրութեամբ աղաղակեց մեծ ձայնով եւ ասեց. Ընկա՛ւ, ընկա՛ւ մեծ Բաբելոնը, եւ եղաւ դեւերի բնակութիւն եւ ամեն պիղծ հոգու արգելանոց, եւ ամեն անսուրբ եւ աստելի թռչունի վանդակ: ³Որովհետեւ նորա պոռնկութեան բարկութեան զինուցը խմեցին բոլոր ազգերը, եւ երկրի թագաւորները նորա հետ պոռնկուեցան. եւ երկրի վաճառականները նորա զեղխութեան զօրութիւնիցը հարստացան:

18:1 «տեսայ մի հրեշտակ երկնքիցը վայր գալիս. Որ մեծ իշխանութիւն ունէր, եւ երկիրը լուսաւորուեցաւ նորա փառքիցը» Սա չափազանց հզոր հրեշտակ էր: «Իշխանություն» տերմինը (*exousia*) չի օգտագործվում զբքում մեկ այլ հրեշտակի համար: Հովհ. 5:27 օգտագործվում է Աստծո

իշխանությունը Հիսուսին տրվելու մասին: Հայտ. 22:16 Հիսուսն ասում է, որ Նա հրեշտակ ուղարկեց խոսելու համար որպես ներկայացուցիչ:

18:2 «Ընկա՛ւ, ընկա՛ւ մեծ Բաբելոնը» Սա Հայտնության գիրքը թարգմանելու դժվարության մեկ օրինակ է: Տեղեկատվության մի մասը բերված է տեսիլքի մի կետից, մասամբ զարգացած է մեկ այլ կետում, և լիովին զարգացած է մեկ այլ տեսիլքի մեջ (օրինակ, տես Հայտ. 11:8; 14:8 և 16:19-20 կամ սա կարող է լինել ամփոփման մեկ այլ օրինակ յոթ գրական բաժինների միջև: Սա ակնարկ է Ես. 21:9 և / կամ Եր. 51:8:

▪ **«Էւ եղաւ դէտրի բնակութիւն եւ ամեն պիղծ հոգու արգելանոց, եւ ամեն անսուրբ եւ ատելի թռչունի վանդակ»** Սա ակնարկ է հնագույն քաղաքների ավերակներին:

1. Բաբելոն (տես Ես. 13:21-22; 14:23; Եր. 50:39; 51:37)
2. Եդովմ (տես Ես. 34:10-15)
3. Նինվե (տես Սոփ. 2:14)

Հին Կտակարանում ասվում է, որ կենդանիները հաճախ ավերակ դարձած քաղաքներում էին թափառում: Սա և՛ ոչնչացման, և՛ չար հոգիների ներկայության խորհրդանիշն է (տես NEB): Այս թռչուններից շատերը ներկայացնում էին դևերին:

Հովհաննեսի գրվածքը շատ սահուն է: Այս համարը նկարագրում է քաղաքը, որպես ամայացած և դևերով բնակված, իսկ Հայտ. 19:3 նկարագրում է այն որպես այրված և մոխրագույն:

18:3 «նորա պոռնկութեան բարկութեան զինուցը խմեցին բոլոր ազգերը» Այս արտահայտությունը ակնարկ է Բաբելոնի ավերակների Հին Կտակարանյան մարգարեությանը (տես Եր. 51:7): Երեմիան առանձնահատուկ օգտագործում է հարբեցողությունը (այսինքն, «ոսկե գավաթը»), որպես ցանկության խորհրդանիշ հարստության համար:

▪ **«բարկութեան»** Սա բառացիորեն «զայրույթ» բառն է (*thumos*): Տես ամբողջական գրառումը Հայտ. 7:14:

▪ **«երկրի վաճառականները նորա զեղխութեան զօրութիւնիցը հարստացան»** Սա ակնարկ է ընկած մարդկության հիմնախնդրին՝ մարմնավորված վերջին ժամանակի հակա-աստված աշխարհակարգի եսակենտրոնության և նյութապաշտության մեջ: Կա մարդկանց երեք խումբ, որոնք սգում են մեծ պոռնիկի անկումը.

1. վաճառականները (տես Հայտ. 18:3,11-16)
2. երկրի թագավորները (տես Հայտ. 18:3,9-10)
3. առևտրական նավաստիները (տես Հայտ. 18:3,17-19)

Այս երեքը ներկայացնում են ամբողջ մարդկության տնտեսական համակարգերը:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 18:4-8

⁴Եւ մի ուրիշ ձայն լսեցի երկնքիցը որ ասում էր. Դուրս եկէք դորանից, ով իմ ժողովուրդ, որ մասնակից չ'իւնիք դորա մեղքերին, եւ որ դորա պատուհասիցը չ'ընդունիք. ⁵Վասնզի դորա մեղքերը հասան մինչեւ երկինքը, եւ Աստուած յիշեց դորա անիրաւութիւնները: ⁶Հատուցումն արէք դորան ինչպէս դա հատուցում տուաւ ձեզ, եւ երկուպատիկ տուէք դորան իր գործերի չափովը. այն բաժակը որ դա լցրեց, լցրէք դորա համար երկուպատիկ: ⁷Եւ որչափ որ իրան փառաւորեց եւ զեղխացաւ, այնչափ տանջանք եւ սուգ տուէք դորան. Որովհետեւ նա իր սրտումն ասում է. Թագուհի եմ նստած, եւ այրի չեմ, եւ բնաւ սուգ չեմ տեսնիլ: ⁸Նորա համար մէկ օրում պիտի գան դորա վերայ իր հարուածները՝ մահ, եւ սուգ, եւ սով, եւ կրակով կ'այրուի, որովհետեւ զօրաւոր է Տէր Աստուածը՝ դորա դատաստանն անողը:

18:4 «Դուրս եկէք դորանից, ով իմ ժողովուրդ, որ մասնակից չ'իինիք դորա մեղքերին, եւ որ դորա պատուհասիցը չ'ընդունիք» Սա Հին Կտակարանյան ակնարկ է Ես. 48:20; 52:11; Եր. 50:8,28; 51:6,9,45 կամ Ջաք. 2:6-7: Սա աօրիստ ներգործական հրամայական է, որը խոսում է Աստծո ժողովրդի հրատապության մասին, որը չի տարվում այս մեղավոր աշխարհային համակարգով:

18:5 «Վասնզի դորա մեղքերը հասան մինչեւ երկինքը» Սա ակնարկ է Ծննդ. 18:20-21 կամ Եր. 51: Աստծո համբերությունը օգտագործվում էր որպէս արդարացում՝ ապաշխարելու փոխարեն ավելի շատ մեղք գործելու համար (տես Հայտ. 2:21; Հռ. 2:4):

- **«Աստուած յիշեց»** Հաճախ Աստվածաշնչում, երբ Աստված հիշում է ամբարիշտների գործերը, այն հանգեցնում է դատաստանի (տես Հայտ. 16:19; Սաղ. 79:8; Ես. 64:9; Եր. 14:10; 17:1-4; 44:21-23; Հեաու 7:2; 8:13; 9:9; Ամովս 8:7):

18:6 «Հատուցումն արեք դորան ինչպէս դա հատուցում տուաւ ձեզ» Սա ակնարկ է ճշմարտությանը, որ մենք հնձում ենք այն, ինչ ցանում ենք (տես Գաղ. 6:7; ամբողջական ցանկի համար տես՝ www.freebiblecommentary.org): Այս ճշմարտությունը ներկայացված է Աստվածաշնչում տարբեր ձևերով (տես Սաղ. 137:8; Եր. 50:15,29; Մաթ. 7:2; Հայտ. 13:10):

- **«Երկուպատիկ տուեք դորան իր գործերի չափովը»** Սա ակնարկ է Եր. 16:18 և 17:18, բայց ճշմարտությունը արտահայտված է շատ կոնտրաստներում (տես Ելից 22:4-9; Սաղ. 75:7-8; Ես. 40:2): Այս դարձվածքը խոսում է ամբողջական և լիարժեք դատողության մասին, ինչպէս որ հաջորդ արտահայտությունը: Այս համարը շատ քաջալերական կլինի հալածվող քրիստոնյաների համար:

- **«այն բաժակը որ դա լցրեց, լցրեք դորա համար երկուպատիկ»** «Բաժակը» Հին Կտակարանյան փոխաբերություն է Աստծո դատաստանի համար (տես Սաղ. 11:6; 60:3; 75:6-8; Ես. 51:17,22; Եր. 25:15-16,27-28):

18:7 «Որովհետեւ նա իր սրտումն ասում է. Թագուհի եմ նստած, եւ այրի չեմ, եւ բնաւ սուզ չեմ տեսնիլ» Սա հատկապէս վերաբերում է Սոփ. 2:15 և Ես. 47:7-8): Դա ակնարկում է ինքնաբավություն և հպարտություն, որը կարող էր Սատանայի անկման (հնարավոր է ակնարկելով Ես. 14 և Եզեկ. 28), մարդկության անկման (տես Ծննդոց 3) և այս վերջին ժամանակի աշխարհային համակարգի աղբյուրը լինել: Խնդիրն ամբարտավան անկախությունն է:

18:8 «Նորա համար մէկ օրում պիտի գան դորա վերայ իր հարուածները» Սա հատուկ ակնարկ է Ես. 47:9: Մէկ օրում տեղի ունեցող վշտի գաղափարը կրկնվում է Հայտ. 18:17-19, որտեղ օգտագործվում է Հովհաննիսյան «ժամը» տերմինը: Սա մեծ քաջալերանք էր հալածվող քրիստոնյաների համար:

- **«կրակով կ'այրուի»** Սա կարող է ակնարկ լինել Ղև. 21:9: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿԸԱԿ Հայտ. 16:8:

- **«որովհետեւ զօրաւոր է Տէր Աստուածը՝ դորա դատաստանն անողը»** Սա ակնարկ է Եր. 50:34:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 18:9-10
ՅԵՒ լաց եւ կոծ կ'անեն դորա վերայ երկրի թագաւորները որ դորա հետ պոռնկուեցան եւ զեղխութիւն արին, երբոր կ'տեսնեն դորա այրուելու ծովիսը, ¹⁰Հեռու կանգնած դորա տանջանքի վախիցը, եւ կ'ասեն. Վա՛յ, վա՛յ քեզ, մեծ քաղաքդ Բաբելոն, զօրաւոր քաղաք. որ մէկ ժամում եկաւ քո

18:9-10 «երկրի թագավորները» Նրանք պետք է տարբերվեն Հայտ. 17:12,16-ում հիշատակված թագավորներից, որոնք մասնակցել են մեծ պոռնիկի ոչնչացմանը և անկմանը: Այս թագավորները, ըստ երևույթին, առևտրական ազգեր էին, որոնք շահեցին առևտրից հակա-աստված աշխարհային համակարգի հետ: Սա ակնարկ է Տյուրոսի հզոր առևտրային քաղաքին և իր հպարտ թագավորին Եզեկ. 26-28: 18-րդ գլխի մնացած մասը վերաբերում է բոլոր ընկած աշխարհային համակարգերի հետ կապված ինտոքսիկային առևտրային իշխանությանը:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 18:11-20

¹¹Եւ երկրի վաճառականները ողբ եւ սուգ կ'անեն նորա վերայ, որ այլ եւս ոչ ոք չէ առնում նորանց ապրանքը: ¹²Ոսկու եւ արծաթի եւ պատուական ակունքների եւ մարգարիտի եւ բեհեզի եւ ծիրանիի եւ մետաքսի եւ որդան կարմիրի ապրանքը, եւ ամեն խնկէ փայտը եւ ամեն փղոսկրեայ անօթը, եւ ամեն ազնիւ փայտից եւ պղնձից եւ երկաթից եւ մարմարիոնից շինած անօթը, ¹³Եւ կինամոնը եւ խունկերը եւ իւղը եւ կենդրուկը եւ զինին եւ ձկնը, եւ նաշիւր եւ ցորենը եւ արջառներն ու ոչխարները. Եւ ձիանքը եւ կառքերը, եւ մարմինները եւ մարդկանց հոգիները: ¹⁴Եւ քո հոգու ցանկացած պտուղները գնացին քեզանից, եւ ամեն շքեղ եւ լուսափայլ վայելչութիւնները գնացին քեզանից, եւ այլ եւս բնաւ չես գտնիլ նորանց: ¹⁵Եւ այս բաների վաճառականները, որ նորանից հարստացան հեռուից կ'կանգնեն նորա տանջանքի վախիցը լաց եւ սուգ անելով, կ'ասեն. ¹⁶Վա յ, վա յ մեծ քաղաք որ բեհեզ եւ ծիրանի եւ որդան կարմիր էիր հագած, եւ ոսկով եւ ազնիւ քարերով եւ մարգարիտով զարդարուած: ¹⁷Որովհետեւ մէկ ժամի մէջ այդչափ մեծութիւնը աւերակ եղաւ. եւ ամեն նաւավար եւ այն ամենն որ նաւով գնում են տեղ տեղ, եւ նաւաստիները եւ նորանք որ ծովումն են գործում, հեռուից կանգնեցին, ¹⁸Եւ աղաղակում էին նորա այրուելու ծուխը տեսնելով եւ ասում. Ո՞րն է այս մեծ քաղաքին նման: ¹⁹Եւ հող ցանեցին իրանց գլուխների վերայ, եւ մեծ ձայնով աղաղակեցին լաց եւ սուգ անելով եւ ասեցին. Վա յ, վա յ մեծ քաղաք որ նորանում հարստացան բոլոր ծովի վերայ նաւեր ունեցողները նորա պատուականութիւնիցը. Որովհետեւ մէկ ժամի մէջ աւերակ դառաւ: ²⁰Ուրախ եղէք նորա վերայ, երկինք եւ սուրբ առաքեալներ եւ մարգարէներ, որ Աստուած ձեր դատաստանը դատեց դորա վերայ:

18:11-19 «երկրի վաճառականները ողբ եւ սուգ կ'անեն նորա վերայ» Սա նման է Եզեկ. 27:

1. Հայտ. 18:11 – Եզեկ. 27:31,36
2. Հայտ. 18:12-13 – Եզեկ. 27:12,13,22
3. Հայտ. 18:15 – Եզեկ. 27:31,36
4. Հայտ. 18:17 – Եզեկ. 27:26-30
5. Հայտ. 18:18 – Եզեկ. 27:32
6. Հայտ. 18:19 – Եզեկ. 27:30-34

Այն նկարագրում է միջազգային առևտուրը.

1. արծաթ Իսպանիայից
2. լավ սպտակեղեն Եգիպտոսից
3. մետաքս Չինաստանից
4. խնկե փայտ հյուսիսային Աֆրիկայից
5. փղոսկր Աֆրիկայից
6. երկաթ Իսպանիայից կամ Սև ծովից
7. կինամոն Հնդկաստանից
8. ստրուկների առևտրի համընդհանուր պրակտիկան

Արևելահայերեն «կառքերը»
Արևմտահայերեն «կառքերը»

NASB, NKJV,
NRSV, NJB «կառքեր»
TEV «կառքեր»

Սա վերաբերում է մասնավոր չորս անիվներով շքեղ կառքերին, այլ ոչ թե մարտակառքերին:

18:14 «շքեղ եւ լուսավայլ» Սա բառախաղ է հունարեն *lipara* (շքեղ) և *lampra* (լուսավայլ) տերմիններով:

18:17 Սա ակնարկ է Եզեկ. 26-28 (Տյուրոս քաղաք), որտեղ այդ շքեղ տեղափոխման միջոցների եջ աշխատողները սգում էին, քանի որ ազդել էր իրենց սեփական ապրուստի վրա:

18:19 «հող ցանեցին իրանց գլուխների վերայ» Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍԳԱԼՈՒ ԾԵՍԵՐԸ Հայտ. 1:7:

18:20 «Ուրախ եղէք նորա վերայ» Սա ակնարկ է Եր. 51:48, թեև ոմանք դա տեսնում են որ վերաբերում է 2 Օր. 32:43 (Մեպտուազինտում), որպես տնտեսական գործընկերների վիշտ Բաբելոնի անկման պատճառով, այնպես որ հավատացյալները ուրախանում են:

▪ «Աստուած ձեր դատաստանը դատեց դորա վերայ» Գրքի ողջ ընթացքում, Աստծո դատաստանները կապված են Նրա զավակների աղոթքների հետ (տես Հայտ. 6:10):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 18:21-24

²¹Եւ մէկ զօրաւոր հրեշտակ մի քար առաւ մեծ ջաղացաքարի պէս եւ զցեց ծովի մէջ ասելով. Այսպէս ուժով պիտի վայր զցուի Բաբելոն մեծ քաղաքը, եւ այլ եւս չ'գտնուի: ²²Եւ քնարերգների, եւ երաժիշտների եւ սրնգահարների, եւ փողահարների ձայնը այլեւս պիտի չ'լսուի քո միջումը եւ այլեւս ոչ մի արհեստագէտ բնաւ չի գտնուիլ քեզանում. Եւ ջաղացի ձայն այլեւս չի լսուիլ քեզանում. ²³Եւ ճրագի լոյս այլեւս լոյս չի տալ քեզանում. Եւ փեսայի եւ հարսի ձայնը այլեւս բնաւ չի լսուիլ քեզանում. որովհետեւ քո վաճառականները երկրի մեծամեծներն էին. քո կախարդութիւնովը մոլորուեցան բոլոր ազգերը: ²⁴Եւ նորանում գտնուեցաւ մարգարէների եւ սուրբերի եւ երկրի վերայ բոլոր սպանուածների արիւնը:

18:21 «Եւ մէկ զօրաւոր հրեշտակ մի քար առաւ մեծ ջաղացաքարի պէս եւ զցեց ծովի մէջ» Սա ակնարկ է Եր. 51:63-64: Սա ուժեղ հաստիք է, որը ցույց է տալիս, որ Բաբելոնը երբեք վեր չի կենա: Փաստացիորեն, Հայտ. 18:21-33 կան վեց կրկնակի ժխտականներ, «անշուշտ», «ոչ մի դեպքում» և «երբեք, ոչ, երբեք»:

▪ «եւ այլ եւս չ'գտնուի» Սա ցույց է տալիս ընդհանուր, մշտական կործանում (տես Եզեկ. 26:21):

18:22-23 Սրանք էին Հին Մերձավոր Արևելքի ամենօրյա կյանքի հնչյունները: Աստծո դատաստանը վերջ է դնում այս անաստված հասարակությանը (տես Ես. 24:8; Եր. 7:34; 25:10, Եզ. 26:13):

18:23 «քո կախարդութիւնովը մոլորուեցան բոլոր ազգերը» Սա ակնարկ է Նաում 3: 4 համարի: Ուշադրություն դարձրեք, որ Հայտ. 18: 23-24-ում նշված են մեծ քաղաքի անկման երեք պատճառները:

1. հպարտություն և հարստություն (տես Ես. 23:8)
2. կռապաշտություն և կախարհություն (տես Դև. 19: 26,33; 2 Օր. 18: 9-12)
3. Աստծո ժողովրդի հալածանքը (տես Հայտ. 16: 6, 17: 6):

18:24 Սա ակնարկ է Եր. 51:49:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Արդյո՞ք Հայտ. 17 և 18 գլուխները գրական բաժիններ են: Եթե այո, ապա ինչո՞ւ:
2. Ինչո՞ւ է այսքան դժվար մեկնաբանել Բաբելոնի ընկնելու ժամանակը:
3. Ո՞վ է Բաբելոնը՝ մեծ պռոնիկը, վերաբերում Հովհաննեսի օրերում, մեր օրերում, և վերջին ժամանակում:
4. Ի՞նչ է անբարոյականությունը և գինին, որը հիշատակվում է Հայտ. 14:8; 17:2; 18:3 կապված այս աշխարհային համակարգի հետ:
5. Խնդրում եմ բացատրեք Հայտ. 17:10-11 ձեր մեկնաբանությունը:
6. Ո՞ր Հին Կտակարանյան գրքից է Հովհաննեսի ակնարկներից շատերը վերցված:

ՀԱՅՏՆՆՈՒԹՅՈՒՆ 19

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
(18:21-19:4)	Երկինքը ցնծում է Բաբելոնի վրա	Գովաբանություն դրախտում	(18:24-19:4)	Հաղթանակի երգեր երկնքում
Գառան հարսանիքի ընթրիքը	19:1-10	19:1-4	Գառան հարսանիքը	19:1-4
19:5-8		19:5-8	19:5-8	19:5-10
19:9-10		19:9-10	19:9 19:10ա-բ 19:10գ	
Ձիավորը սպիտակ ձիու վրա	Քրիստոսը սպիտակ ձիու վրա	Քրիստոսի և նրա երկնային զորքերի հաղթանակը	Ձիավորը սպիտակ ձիու վրա	Առաջին վախճանաբանական մարտը
19:11-16	19:11-16	19:11-16	19:11-16	19:11-16
	Գազանն ու նրա զորքերը պարտվեցին			
19:17-21	19:17-21	19:17-21	19:17-18 19:19-21	19:17-18 19:19-21

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ *(«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)*

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դաբանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ ՀԱՅՏՆՆՈՒԹՅՈՒՆ 19:1-21

- Ա. Հայտնության այս բաժնի գլխի բաժանումը կատարվել է անհամապատասխան տեղում (գլուխների բաժանումները, պարբերության բաժանումները, համարի բաժանումները, եզրակացությունը և կետադրությունը ներշնչված բնօրինակ հունարեն տեքստի մաս չեն կազմում): Հայտ. 19:1-10 ակնհայտորեն եզրափակիչ խոսք է Հայտն. 17:1-18:24 նկարագրված մեծ պոռնիկի ոչնչացման մասին: Ինչպես մարդիկ էին ուրախանում Ասորեստանի և Բաբելոնի անկման ժամանակ Հին Կտակարանում, այնպես էլ հիմա սուրբ հրեշտակներն են (տես Հայտ. 19: 4) ուրախանում Բաբելոնի պոռնիկի (այսինքն՝ մարդկային կառավարումը Աստուծոց գատ) անկումից, ինչպես հավատացյալներն էին անում Հայտ. 18:20:
- Բ. Հայտ. 19:1-10 օրհնության շարքը պատասխանում է 18:20-ին:
- Գ. Դա, ընդհանուր առմամբ, հասկացվում է որպես գլուխ, որը նկարագրում է Քրիստոսի Երկրորդ Գալուստը (տես Հայտ. 19:11-16): Բայց պետք է տեսնել, որ այս գլուխը փակում է դատաստանի մեկ այլ փուլ: Քրիստոսի վերադարձը նկարագրվում է այս գլխում շատ հրեական տերմիններով, որոնք, կարծես, բոլորովին տարբերվում են 1 Թես. 4:14-18 Պողոսի նկարագրությունից: Հրեաները ակնկալում էին, որ Մեսիան կվերադառնա Հայտն. 19:11-16-ում նկարագրված ձևով: Նոր Կտակարանը նկարագրում է Երկրորդ Գալուստը մի քանի տարբեր, բայց կապակցված ձևերով: Քրիստոսյանների մեծամասնությունը վերջին ժամանակը պատկերացնում են Հիսուսի Չիթենյաց լեռան վրայի քարոզով (տես Մաթ. 24; Մարկ. 13; Դուկ. 21) և Պողոսի «մեղքի մարդ» քննարկումներով (տես 2 Թես. 2):
- Դ. Հալածանքների ենթարկվածների համար Հիսուսը որպես Զինվոր, Պաշտպան և Դատավոր՝ մխիթարիչ էր:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 19:1-5ա

¹Եւ սորանցից յետոյ լսեցի շատ բազմութեան մեծ ձայնի պէս մի ձայն երկնքումը որ ասում էր. Ալէլուիա, փրկութիւնը եւ փառքը եւ պատիւը եւ զօրութիւնը մեր Տէր Աստուծուն: ²Որովհետեւ ճշմարիտ եւ արդար են նորա դատաստանները. Որովհետեւ նա այն մեծ պոռնիկին դատեց նորա պոռնկութիւնումը, եւ իր ծառաների արիւնի վրէժն առաւ նորա ձեռքիցը: ³Եւ երկրորդ անգամ ասեցին, Ալէլուիա. Եւ նորա ծուխը բարձրանում էր յաւիտեանս յաւիտենից: ⁴Եւ քսան եւ չորս երեցները եւ չորս կենդանիները վայր ընկան եւ երկրպագեցին Աստուծուն որ աթոռի վերայ նստած էր եւ ասեցին. Ամէն, Ալէլուիա: ⁵Եւ աթոռիցը մի ձայն դուրս եկաւ ասելով.

19:1 «լսեցի շատ բազմութեան մեծ ձայնի պէս մի ձայն երկնքումը» Սա ակնարկ է Եր. 51:48: 17-18 գլուխները ծանրանում են Երեմիա 50-51 (Բաբելոնի կործանումը) գլուխների վրա իրենց պատկերների պատճառով: Այս նույն արտահայտությունը կամ գաղափարը հանդիպում է նաև Հայտ. 11:15 (Երկրորդ Գալուստը յոթերորդ փողից հետո) և 19:6: Բազմաթիվ քննարկումներ են եղել այն մասին, թե ով կարող է լինել այդ բազմությունը, բայց պարզապես մտորմունք է, թե արդյոք դա հավատարիմ հրեշտակային ամբոխ է, փրկված մարդկություն, թե երկուսն էլ:

- «Ալէլուիա» Այս եբրայերեն տերմինը նշանակում է «գովաբանել ՅԱՀՎԵԻՆ» (BDB 237 II և 219): Սա այս տերմինի միակ դեպքն է Նոր Կտակարանում: Այս կոնտեքստում այն երևում է չորս անգամ՝ Հայտ. 19:1,3,4, և 6: Հին Կտակարանյան ֆոնն հանդիպում է սաղմոսների արտահայտությունների մեջ, օգտագործված ինչպես Զատիկի, Տաղավարահարաց տոների պատարագներում (տես Հայտ.

104:35; 105:45; 106:48; 111:1; 112:1; 113:1; 116:19; 117:2; 125:1,21; 146:1,10; 147:1; 148:1,14; 149:1,9; 150:1,6): Զուգահեռ արտահայտությունը հանդիպում է Հայտ. 19:5բ:

▪ **«փրկությունը»** Սա բնութագրում է Աստծո ցանկությունը ամբողջ մարդկության համար (տես Հայտ. 9:20-21; 14:6-7; 16:9,11; 21:7; 22:17; Եզեկ. 18:23,30-32; Հովհ. 3:16; 4:42; 1 Տիմ. 2:4; 4:10; 2 Պետ. 3:9; 1 Հովհ. 4:14): Դա կարող է վերաբերել ֆիզիկական փրկության Հին Կտակարանյան գաղափարին, բայց հավանաբար, վերաբերում է հավատացյալ անհատներին ամբողջ, հավիտենական, տիեզերական փրկության և ֆիզիկական ողջ արարչագործության համար (Գործք 3:21; Հռ. 8:18-25; Կող. 1:19):

▪ **«փառքը եւ պատիւը եւ զօրութիւնը»** Գրքի ամբողջ ընթացքում երկնային երգչախմբերը փառաբանում են Աստծուն երգերով: Հաճախ այդ փառաբանության երգերը անմիջական ենթատեքստը մեկնաբանելու բանալին են:

19:2 «Որովհետեւ ճշմարիտ եւ արդար են նորա դատաստանները» Սա կարող է ակնարկ լինել Սաղ. 19:9; 119:138 և 142: Աստծո դատաստանները տեղին են և արդար (դիտված է դատաստանի երեք փուլերում): Դա շատ քաջալերական կլիներ մի խումբ քրիստոնյաների համար, ովքեր հալածանքների էին ենթարկվում (տես Հայտ. 19:11; 15:3,4; 16:7):

▪ **«մեծ պտոնիկին»** Այս ընկած, հակա-Աստված աշխարհի համակարգը հանդես է գալիս մի քանի անուններով՝

1. մեծ քաղաքը
2. Բաբելոն
3. մարմնավաճառը (տես Հայտ. 14:8; 16:19-21; 17:1-18:24)

1-4 համարները շարունակում են կոնտեքստը Հայտ. 17 և 18:

▪ **«դատեց նորա պտոնկությունը»** Սա վերաբերում է նյութապաշտությանը, կռապաշտությանը կամ անբարոյական հեթանոսական պտոնաբերության երկրպագությանը կամ կայսեր երկրպագությանը (տես Հայտ. 2:14,20,21;9:21; 14:8; 17:2 ,4; 18:3):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿՈՐԾԱՆԵԼ, ԱՎԵՐԵԼ, ԱՊԱԿԱՆԵԼ (*phtheirō*)

SPECIAL TOPIC: DESTROY, RUIN, CORRUPT (*phtheirō*)

Այս *phtheirō* տերմինի հիմնական իմաստն է ոչնչացնել, կործանել, ավերել կամ փչացնել: Այն կարող է օգտագործվել

1. ֆինանսական զրկանք, կորուստ (հնարավոր է 2 Կոր. 7: 2)
2. ֆիզիկական ոչնչացում, կործանում (տես 1 Կոր. 3: 17 ա)
3. բարոյական ապականություն (տես Հռ. 1:23; 8:21; 1 Կոր. 15: 33,42,50; Գաղ. 6: 8; Հայտ. 19: 2)
4. սեքսուալ գայթակղություն (տես 2 Կոր. 11: 3)
5. հավիտենական ոչնչացում, կործանում (տես 2 Պետ. 2:12,19)
6. մարդկանց ավանդույթների ապականությունը (տես Կող. 2:22)

Հաճախ այս տերմինը օգտագործվում է նույն կոնտեքստում, ինչպես դրա բացասական հականիշը (տես Հռ. 1:23; 1 Կոր. 9:25; 15: 50,53): Դիտարկենք մեր երկրային ֆիզիկական մարմինների և մեր երկնային հավիտենական մարմինների միջև զուգահեռ հակադրությունները:

1. ապականությունն ընդդեմ անապականության, 1 Կոր. 15: 42,50
2. անհարգալիցը ընդդեմ փառքի, 1 Կոր. 15:43
3. տկարությունն ընդդեմ զորության, 1 Կոր. 15:43

4. ֆիզիկական մարմինն ընդդեմ հոգևոր մարմնի, 1 Կոր. 15:44
5. առաջին Ադամն ընդդեմ վերջին Ադամի, 1 Կոր. 15:45
6. երկրայինի պատկերն ընդդեմ երկնային պատկերի, 1 Կոր. 15:49

▪ **«Էլ իր ծառաների արիւնի վրէժն առաւ նորա ձեռքիցը»** Սա կարող է ակնարկ լինել 2 Օր. 32:43 կամ 4 Թագ. 9:7 (տես Հռ. 12:19): Աստված գործում է Իր սրբերի աղոթքների անունից (տես Հայտ. 6:9-11; Մաթ. 7:7-8; 21:22; Հովհ. 21:22; 14:13-14; 15:7,16; 16:23-24, 26; Հակ. 4:2; 1 Հովհ. 3:22; 5:14-16):

Հակա-Աստված աշխարհային համակարգը մշտապես ներգրավված է եղել Աստծո ժողովրդի հալածանքի և սպանության մեջ: Աստված թույլ է տալիս չարին բացահայտել իր իրական նպատակները (տես Հայտ. 13:5,7,15):

19:3 «Եւ նորա ծուխը բարձրանում էր յաիտեանս յաիտենից» Սա ակնարկ է Ես. 34:10, որը նկարագրում է համընդհանուր դատաստանը: Պետք է հիշել, որ գրական այս ժանրը (ապոկալիպտիկ) օգտագործում է խորհրդանիշներ՝ ճշմարտությունը փոխանցելու համար: Ճշմարտությունն այստեղ կարծես թե հնարավոր երկու կիզակետերից մեկն է.

1. հավիտենական պատիժ (տես Հայտ. 6:10; Մաթ. 3:12; 25:41; Ղուկ. 3:17; Մարկ. 9:43,48)
2. ամբողջական ոչնչացում (տես Ես. 34:8-10): Այս նույն ճշմարտությունը հանդիպում է Հայտ. 14:11

19:4 «քսան եւ չորս երեցները» Տես Հատուկ Թեմա՝ Հայտ. 4:4:

▪ **«Ամէն»** Այս տերմինը օգտագործվում է Հայտ. 1:6,7; 3:14; 5:14 և 7:12; 19:4; 22:20; և 22:21: Դա Հին Կտակարանի եբրայերեն «հավատք» բառն է (*emeth*, տես Ամբ. 2:4): Դրա սկզբնական ստուգաբանությունն էր՝ «ամուր լինել» կամ «վստահ լինել»: Այն Հին Կտակարանում կիրառվեց Աստծո հուսալիության նկատմամբ: Այնուամենայնիվ, Նոր Կտակարանում դրա օգտագործումը հիմնականում պատարագ է «համաձայն եմ» կամ «հաստատում եմ» իմաստով: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՄԵՆ Հայտ. 1:6:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏՔ, ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ (ԴՁՁ)

SPECIAL TOPIC: Believe, Trust, Faith, and Faithfulness in the Old Testament (ԴՁՁ)

I. Նախաբան

Պետք է նշել, որ այս աստվածաբանական հասկացողության կիրառությունն այնքան կարևոր է Նոր Կտակարանում, բայց այնքան էլ պարզ չի սահմանվում Հին Կտակարանում: Անշուշտ, կա այնտեղ, բայց ներկայացված է միայն բանալի հատվածներում և անձերի մեջ

Հին Կտակարանի կապակցումները

Ա. անհատը և համայնքը

Բ. անձնական հանդիպումը և ուխտի հնազանդությունը

Հավատքը թե անձնական հանդիպում է և թե առօրյա ապրելակերպ: Այն ավելի հեշտ է նկարագրել հավատարիմ անձի կյանքի մեջ, քան թե բառերով (այն է, բառային սերտություն): Այս անձնական ասպեկտը լավագույնս ներկայացված է

Ա. Աբրահամը և իր սերունդը

Բ. Դավիթը և Իսրայելը

Այս մարդիկ հանդիպեցին Աստծուն և նրանց կյանքերը ամբողջովին փոխվեցին (ոչ թե կատարյալ կյանքեր, այլ շարունակական հավատքի կյանք): Փորձությունները ցույց տվեցին իրենց հավատքի տկարություններն ու ուժերը, բայց սերտ, հուսալի հարաբերությունը շարունակվեց

ժամանակի ընթացքում: Այն փորձվեց և գտվեց, բայց այն շարունակվեց, որպես ապացույց նրանց նվիրվածության և ապրելակերպի:

II. Օգտագործվել է հիմնական արմատը

Ա. յճ (BDB 52, KB 63)

1. ԲԱՅ

ա. *Qal* հիմք – աջակցել, պաշտպանել, պահել, սնուցել, կերակրել (4 Թագ. 10:1,5; Եսթեր 2:7, ոչ աստվածաբանական կիրառություն)

բ. *Niphal* հիմք – համոզվել կամ հաստատել, հիմնել, պնդել, հավատարիմ լինել կամ վստահելի, հուսալի

(1) մարկանց, Ես. 8:2; 53:1; Եր. 40:14

(2) իրերին, Ես. 22:23

(3) Աստծուն, 2 Օր. 7:9; Ես. 49:7; Եր. 42:5

գ. *Hiphil* հիմք – հաստատ կանգնել, հավատալ, վստահել

(1) Աբրահամը հավատաց Աստծուն, Ծննդ. 15:6

(2) Իսրայելացիք Եգիպտոսում հավատացին, Ել. 4:31; 14:31 (Ժխտում է, 2 Օր. 1:32)

(3) Իսրայելացիք հավատացին ՅԱՀՎԵԻՆ, ով խոսեց Մովսեսի միջոցով Ել. 19:9; Սաղ. 106:12,24

(4) Աքազը չվստահեց Աստծուն, Ես. 7:9

(5) ով որ հավատա Նրան, Ես. 28:16

(6) հավատալ Աստծո մասին ճշմարտություններին, Ես. 43:10-12

2. ԳՈՅԱԿԱՆ (արական) - հավատարմություն (2 Օր. 32:20; Ես. 25:1; 26:2)

3. ՄԱԿԲԱՅ – ճշմարիտ, ես համամիտ եմ, թող այդպես լինի (տես 2 Օր. 27:15-26; 3 Թագ. 1:36; 1 Մնաց. 16:36; Ես. 65:16; Եր. 11:5; 28:6): Սա հոգևոր կիրառությունն էր «ամեն» բառի Հին և Նոր Կտակարաններում:

Բ. ռճ (BDB 54, KB 68) ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ ամրություն, հավատարմություն, ճշմարտություն

1. մարդկանց, Ես. 10:20; 42:3; 48:1

2. Աստծո, Ել. 34:6; Սաղ. 117:2; Ես. 38:18,19; 61:8

3. ճշմարտության, 2 Օր. 32:4; 3 Թագ. 22:16; Սաղ. 33:4; 98:3; 100:5; 119:30; Եր. 9:4; Զաք. 8:16

Գ. յճ (BDB 53, KB 62), հաստատականություն, կայունություն, հավատարմություն

1. ձեռքերի. Ել. 17:12

2. ժամանակի, Ես. 33:6

3. մարդկանց, Եր. 5:3; 7:28; 9:2

4. Աստծո, Սաղ. 40:11; 88:12; 89:2,3,6,9; 119:138

III. Գաղափարի կիրառությունն ըստ Պողոսի

Ա. Պողոսը ՅԱՀՎԵԻ և Հին Կտակարանի մասին իր նոր հասկացողությունը հիմնում է իր անձնական հանդիպումը Հիսուսի հետ Դամասկոսի ճանապարհին (տես Գործք. 9:1-19; 22:3-16; 26:9-18):

Բ. Նա գտավ Հին Կտակարանյան հենարան իր նոր հասկացողության համար երկու բանալի հատվածներում, որոնք օգտագործում են յճ արմատը:

1. Ծննդ. 15:6 – Աբրամի անձնական հանդիպումը նախաձեռնված էր Աստծո կողմից (Ծննդ. 12), արդյունքում հավատքի հնազանդ կյանք էր (Ծննդ. 12-22) : Պողոսն այդ մասին ակնարկում է Հռ. 4 և Գաղ. 3:

2. Ես. 28:16 – նրանք, ովքեր հավատում են դրան (Աստծո ստուգած և ամուր տեղադրած անկյունաքար) երբեք չեն

- ա. Հո. 9:33 «ամաչի» կամ «հուսահատվի»
- բ. Հո. 10:11 «ամաչի»
- 3. Ամբ. 2:4 – նրանք, ովքեր ճանաչում են հավատարիմ Աստծուն պետք է ապրեն հավատարիմ կյանքով (տես Եր. 7:28): Պողոսն օգտագործում է այս տեքստը Հռ.1:17-ում և Գաղ. 3:11-ում (նաև տես Եբր. 10:38):

IV. Գաղափարի կիրառությունը ըստ Պետրոսի

Ա. Պետրոսը կապակցում է

- 1. Ես. 8:14 – 1 Պետ. 2:8 (գլորման քար)
- 2. Ես. 28:16 – 1 Պետ. 2:6 (անկյունաքար)
- 3. Սաղ. 111:22 – 1 Պետ. 2:7 (անարգված քար)

Բ. Նա օգտագործում է յուրահատուկ լեզու, որը նկարագրում է Իսրայելին «ընտիր ազգ, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ»

- 1. 2 Օր. 10:15; Ես. 43:21
- 2. Ես. 61:6; 66:21
- 3. Ելից 19:6; 2 Օր. 7:6

Իսկ հիմա օգտագործում է այն Քրիստոսով եկեղեցու հավատքի համար(տես 1 Պետ. 2:5,9):

V. Գաղափարի կիրառությունը ըստ Հովհաննեսի

Ա. Տերմինի կիրառությունը Նոր Կտակարանում

«Հավատաց» տերմինը առաջացել է հունարեն (*pisteuō*) տերմինից, որը նաև կարող է թագմանվել «հավատալ», «հավատք», կամ «վստահություն»: Օրինակ, որպես գոյական Հովհաննեսը Ավետարանում չի հանդիպում, բայց որպես բայ հաճախ է օգտագործվում: Հովհ. 2:23-25 գոյություն ունի որոշակի անորոշություն ժողովրդի անկեղծության մեջ Հիսուս Նազովրեցուն, որպես Մեսիա ընդունելու առումով: Ուրիշ օրինակներ, երբ «հավատալ» տերմինը օգտագործվում է մակերեսորեն Հովհ. 8:31-59 և Գործք. 8:13, 18-24: Ճշմարիտ աստվածաշնչյան հավատքն ավելին է քան սկզբնական արձագանքը: Դրան անպայման պետք է հետևի աշակերտության գործընթացը (տես Մաթ. 13:20-22,31-32):

Բ. Օգտագործվում է ՆԱԽԴԻՐՆԵՐՈՎ

- 1. *eis* նշանակում է «մեջ»: Այս հատուկ քերականական կառուցվածքը ընդգծում է հետևյալ միտքը, երբ հավատացյալներն իրենց վստահություն/հավատքը դնում են Հիսուսի վրա
 - ա. Նրա անվանը (Հովհ. 1:12; 2:23; 3:18; 1 Հովհ. 5:13)
 - բ. Նրան (Հովհ. 2:11; 3:15,18; 4:39; 6:40; 7:5,31,39,48; 8:30; 9:36; 10:42; 11:45,48; 17:37,42; Մաթ. 18:6; Գործք. 10:43; Փիլ.1:29; 1 Պետ. 1:8)
 - գ. Ինձ (Հովհ. 6:35; 7:38; 11:25,26; 12:44,46; 14:1,12; 16:9; 17:20)
 - դ. Որդուն (Հովհ. 3:36; 9:35; 1 Հովհ. 5:10)
 - ե. Հիսուսին (Հովհ. 12:11; Գործք. 19:4; Գաղ. 2:16)
 - զ. Լույսին (Հովհ. 12:36)
 - է. Աստծուն (Հովհ. 14:1)
- 2. *en* նշանակում է «մեջ» ինչպես Հովհ. 3:15; Մարկ. 1:15; Գործք. 5:14
- 3. *epi* նշանակում է «մեջ» ինչպես, Մաթ. 27:42; Գործք. 9:42; 11:17; 16:31; 22:19; Հռ. 4:5,24; 9:33; 10:11; 1 Տիմ.1:16; 1 Պետ. 2:6
- 4. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՆՎԸ առանց ՆԱԽԴԻՐԻ ինչպես Գաղ. 3:6; Գործք. 18:8; 27:25; 1 Հովհ.3:23;5:10;
- 5. *hoti*, որը նշանակում է «հավատալ, որ» ցույց է տալիս եությունը այն բանի, թե ինչին հավատալ
 - ա. Հիսուսն Աստծո Սուրբն է (Հովհ. 6:69)

- բ. Հիսուսը – ԵՍ ԵՍ (Հովհ. 8:24)
- գ. Հիսուսը Հոր մեջ է և Նա Հոր մեջ (Հովհ. 10:38)
- դ. Հիսուսը Մեսիան է (Հովհ. 11:27; 20:31)
- ե. Հիսուսն Աստծո Որդին է (Հովհ. 11:27; 20:31)
- զ. Հիսուսն ուղարկված էր Հոր կողմից (Հովհ. 11:42; 17:8,21)
- է. Հիսուսը մեկ է Հոր հետ (Հովհ. 14:10-11)
- ը. Հիսուսը եկավ Հորից (Հովհ. 16:27,30)
- թ. Հիսուսն Իրեն ճանաչեցնում է Հոր ուխտի անվան հետ, «ԵՍ ԵՍ» (Հովհ. 8:24; 13:19)
- ժ. Մենք կապրենք Նրա հետ (Հռ. 6:8)
- ի. Հիսուս մեռավ և հարություն առավ (1 Թես. 4:14)

VI. Ամփոփում

Ա. Աստվածաշնչյան հավատքը մարդու արձագանքն է Աստծո խոսքին/խոստմանը: Աստված է միշտ նախաձեռնողը (տես Հովհ.6:44,65), բայց Աստծո հետ հաղորդակցվելու համար մարդիկ պետք է արձագանքեն (տես Հատուկ Թեմա: Ուխտ):

1. ապաշխարություն (տես Հատուկ Թեմա: Ապաշխարություն)
2. հավատք/վստահություն (տես Հատուկ Թեմաներ)
3. հնազանդություն
4. համբերություն (տես Հատուկ Թեմա: Համբերություն)

Բ. Աստվածաշնչյան հավատքը

1. անձնական հարաբերություն (ներքին հավատք)
2. աստվածաշնչյան ճշմարտության հաստատում (հավատքը Աստծո հայտնության մեջ, Սուրբ Գիրք)
3. համապատասխան հնազանդությամբ արձագանքել դրան (ամենօրյա հավատարմություն)

Աստվածաշնչյան հավատքը երկինք գնալու ուղեգիր չէ, ոչ էլ ապահովագրություն: Այն անձնական հարաբերություն է: Դա արարչագործության նպատակն է և մարդը, որը ստեղծվել է Աստծո պատկերով և նմանությամբ (տես Ծննդ. 1:26-27): Հարցը մտերմիկ հարաբերությունն է: Աստված փափագում է մտերմություն, և ոչ թե որոշակի աստվածաբանական չափանիշ: Բայց Սուրբ Աստծո հետ հաղորդակցվելու համար պահանջվում է, որ զավակները ցուցաբերեն «ընտանեկան» առանձնահատկություն (այն է, սրբություն, հմտ. Ղև. 19:2; Մաթ. 5:48; 1 Պետ. 1:15-16): Անկումը (հմտ. Ծննդ. 3) ազդեց մեր ճիշտ արձագանքելու կարողության վրա: Ուստի, Աստված գործեց մեր օգտին (հմտ. Եզ. 36:27-38), տալով մեզ «նոր սիրտ» և «նոր հոգի», որը կտա մեզ կարողություն, հավատքի և ապաշխարության միջոցով հաղորդակցվել Նրա հետ և հնազանդվել Նրան:

Երեքն էլ անհրաժեշտ են: Երեքն էլ պետք է լինեն անպայման: Նպատակն է ճանաչել Աստծուն (թե երբայական և թե հունական իմաստներով) և անդրադարձնել Նրա կերպարը մեր կյանքերում: Հավատքի նպատակը մեկ օր երկնքում հայտնվելը չէ, բայց ամեն օր Քրիստոսանման լինել:

Գ. Մարդկային հավատարմությունը արդյունքն է (ՆԿ), և ոչ թե (ՀԿ) Աստծո հետ հարաբերություն ունենալու համար; մարդու հավատքը Նրա հավատարմությանը; մարդու վստահությունը Նրա հուսալիությանը: Նոր Կտակարանի փրկության տեսանկյան սիրտը այն է, որ մարդիկ պետք է արձագանքեն սկզբում և շարունակաբար Աստծո շնորհքին և ողորմությանը, որը երևում է Քրիստոսի մեջ: Նա սիրեց, Նա ուղարկեց, Նա ապահովվեց, մենք պետք է արձագանքենք հավատքով և հավատարմաբար (հմտ. Եփ. 2:8-9 և 10):

Հավատարիմ Աստվածն ուզում է, որ հավատարիմ մարդիկ ցույց տան Իրեն անհավատ աշխարհում և նրանց առաջնորդեն անձնական հավատքի մեջ:

19:5 «Եւ արթոյցը մի ձայն դուրս եկաւ ասելով» «Մեր Աստված» արտահայտության պատճառով (Հայտ. 19:5բ), սա պետք է լինի հրեշտակ, այլ ոչ թե Աստված: Հիսուսը երբեք Աստծուն չի անվանում «մեր Աստված» (Michael McGill, *NT Transline*, էջ 1011):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 19:5բ-6ա

Օրհնեցէք մեր Աստուծուն, ով նորա բոլոր ծառաները, եւ նորանից վախեցողները, փոքրերը եւ մեծերը: Եւ ես լսեցի իբր մի մեծ բազմութեան ձայն եւ իբր շատ ջրերի ձայն, սաստիկ որոտմունքի ձայնի նման. Որ ասում էր.

- **«Օրհնեցէք մեր Աստուծուն»** Սա ակնարկ է Սաղ. 115:13; 134:1; 135:1: Տերմինը ներկա ներգործական հրամայական է, բայց այն ուրիշ տերմին է, քան «Ալելույա»-ն, որը հանդիպում է Հայտ. 19:1,3,4 և 6: Աստվածաբանորեն անսովոր է, որ հրեշտակն օգտագործեր «Մեր Աստված» բառերը, բայց Հայտ. 19:10-ը ցույց է տալիս, որ հրեշտակները ճանաչում են իրենց ոչ միայն սրբերի հետ ծառայության մեջ, այլ նաև սրբերի հետ՝ Հիսուսի վերաբերյալ իրենց վկայության մեջ:
- **«ով նորա բոլոր ծառաները, եւ նորանից վախեցողները, փոքրերը եւ մեծերը »** Սա ակնարկ է Սաղ. 115:13 (նախկինում օգտագործվում էր Հայտ. 11:18):

19:6 Այս նկարագրական արտահայտություններն օգտագործվել են

1. Աստծո համար Եզեկ. 43:2
2. հզոր հրեշտակի համար Դան. 10:6
3. Քրիստոսի համար Հայտ. 1:15
4. վերադարձված համայնքի համար Հայտ. 14:2
5. կոնտեքստում սա կարծես հրեշտակային երգչախումբ է

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 19:6բ-8

ՔԱլէլո փա, որովհետեւ Ամենակալ Տէր Աստուածը թագաւորեց: ԴՆդանք եւ ուրախ լինենք, եւ փառքը տանք նորան որ եկաւ Գառի հարսանիքը, եւ նորա կինը պատրաստեց իրան: Եւ տրուեցաւ նորան որ սպիտակ սուրբ եւ լուսափայլ բեհեզ հագնի. (որովհետեւ բեհեզը սուրբերի արդարութիւնն է):

▪ **«Ամենակալ Տէր Աստուածը»** Այս եռակի կոչումը Աստծո համար Հին Կտակարանից (ՅԱՀՎԵ, *Էլոհիմ* և *Էլ Շադայ*, տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՕՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ Հայտ. 4:8) տարբեր ձևերով է հանդիպում Հայտ. 1:8; 4:8; 11:7; 15:3; 16:7,14; 19:15; և 21:22:

«Մեր» դերանունը շատ անսովոր է, քանի որ այն խոսվում է հրեշտակի կողմից: Այնուամենայնիվ, դրա ընդգրկման համար տեքստային ապացույցներն ուժեղ են:

1. «Տերը մեր Աստվածը» MS ² - ի վաղ ուղղման մեջ (UBS⁴ այն դնում է սա տեքստում, բայց տալիս է նրան «C» վարկանիշ)
2. «Աստված, մեր Տերը» ^{*} MS բնօրինակում
3. հետագայում մի քանի հունարեն փոքրատառ տեքստերում՝ «մեր Աստվածը» (MSS 051, 209)
4. «Տեր Աստված» (MS A)
5. «Տեր» (Peshitta և Ղպտի վարկածներ)

▪ **«Թագավորեց»** Այս աօրիստ ժամանակի բայերի շուրջ շատ քննարկումներ եղան (տես Հայտ. 11:17): Ումանք դա տեսնում են, որ Աստված սկսեց թագավորել (ingressive կամ inceptive աօրիստ, տես Մաղ. 93:1; 97:1, NJB): Այնուամենայնիվ, Աստված միշտ թագավորել է (սահմանադրական կամ գնումիկ աօրիստ, տես Մաղ. 99:1): Ումանք դա տեսնում են, որ Աստված իշխում է երկրի վրա հիմա, ինչպես իշխում է երկնքում (culminative or effective աօրիստ, տես Մաթ. 6:10): Ժամանակի ավարտը և Աստծո արքայության սպառումը Հայտնության մեջ տեղի են ունենում մի քանի անգամ՝ դատաստանի տարբեր շրջանների վերջում (կնիքներ, փողեր, սկավառակներ): Մա, կարծես, զուգահեռ է Հայտ. 11:15-ին: Դա կարող է ակնարկ լինել Ես. 24:23; 52:7 կամ Միքիա 4:7: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԹԱԳԱՎՈՐԵԼ ԱՍՏՈՆ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ Հայտ. 5:10:

19:7 Հայտ. 19:7-ում առաջին բայերը ստորադասական են:

1. Ուրախ լինենք – ներկա ներգործական
2. Եկեք ուրախանանք – ներկա ներգործական

Երրորդ բայն ունի մի քանի տարբերակ

1. *dōsōmen* (անկանոն աօրիստ ներգործական ստորադասական) – MS P
2. *dōsomen* (ապառնի), «մենք փառք կտանք» – MSS α^2 , A
3. *dōmen* (աօրիստ ներգործական ստորադասական) – MS α^*

1-ին և 3-րդ համարները պետք է թարգմանվեն առաջին երկու բայերի նման՝ «փառք տանք»: 2-րդ համարը պետք է թարգմանվեր «մենք փառք կտանք» (RSV): UBS⁴ #1-ին տալիս է «C» վարկանիշ: UBS³ տվեց դրան «D» վարկանիշ: Կոմիտեն չէր կարողանում որոշել, թե որն է բնօրինակը:

▪ **«փառքը տանք նորան»** Մա կարող է փոխաբերական արտահայտություն լինել՝ Քրիստոսին հավատալու, վստահելու կամ հավատք դնելու համար: Հայտ. 11:13-ում դա կարող է նշանակել, որ ումանք ապաշխարեցին և հավատացյալ դարձան Աստծո դատաստանի գործողությունների արդյունքում: Այս արտահայտությունն օգտագործվում է Աստծո ժողովրդի համար՝ Հայտ. 14:7 և չարչարված անհավատների՝ Աստծո երկրպագությունից հրաժարվելու համար՝ Հայտ. 16:9:

▪ **«Գառի հարսանիքը»** «Գառը» ունի Հին Կտակարանյան զոհաբերության լրավուցիչ իմաստ (տես Դև. 1-7): Այս արտահայտությունը զոհաբերության տարրը կապում է համայնքային կերակուրի հետ (խաղաղության առաջարկ): Ակնարկ կա այս ամուսնության խնջույքին Մաթ. 8:11; 26:29; Դուկ. 14:15; 22:16: Այն կենտրոնանում է նշանադրության ժամանակահատվածի, սպասման ժամանակահատվածի և յոթօրյա հարսանեկան խնջույքի հրեական ամուսնության սովորույթի վրա: Հետաքրքիր է նշել, որ մի քանի հատվածների ընթացքում փոխաբերությունը փոխվում է դեպի Աստծո ժողովուրդը, ոչ թե որպես հարսնացու, այլ որպես հարսանիքի հյուրեր (տես Հայտ. 19:9 և Մաթ. 22:1-14): Հայտ. 21:2,9-ում փոխաբերությունը կրկին կփոխվի Աստծո ժողովրդին որպես «Նոր Երուսաղեմ»: Աստծո և Նրա եկեղեցու միջև ամուսնական հարաբերությունների գաղափարը հանդիպում է Հին Կտակարանում Ես. 54:4-8; 62:5; Եր. 31:32; Եզ. 16; և Ովսիա 2:14-19: Փոխաբերությունը երևում է Նոր Կտակարանում 2 Կոր. 11:2; Եփ. 5:21-31; Հայտ. 19:9; 21:2,9; 22:17: Բացի այդ, Հիսուսը պատկերված է որպես փեսա (տես Մաթ. 9:15; Մարկ. 2:19-20; Դուկ. 5:34-35; Հովի. 3:29): Մաթևոսում մի քանի առակ շարունակում է այս թեման (տես Մաթ. 22:1-14; 25:1-13): Ամուսնությունը կարող է լինել աստվածաշնչյան ուխտի գաղափարի լավագույն մարդկային օրինակը:

▪ **«նորա կինը պատրաստեց իրան»** Մա աօրիստ ներգործական սահմանական է: Ումանք դա մեկնաբանել են որպես մարդկային արժանի գործեր: Հայտ. 19:8 աօրիստ կրավորականը ցույց է տալիս, որ այս մեկնաբանությունը չի կարող ճիշտ լինել: Այս կոնտեքստը հաստատում է պարադոքսային փոխհարաբերությունը Աստծո նախաձեռնող գործունեության միջև (տես Հովի.

6:44,65), որը նկատվում է Հայտ. 19:9 հրավերով, որը վաղակատար կրավորական դերբայ է, և մարդկության անհրաժեշտ հավատքի արձագանքը (տես Մարկ. 1:15; Գործք 3:16,19; 20:21): Այս պարադոքսային հարաբերությունը կարելի է տեսնել Փիլ. 2:12-13: Դրան աջակցում է այն փաստը, որ Հայտ. 19:8 Աստված տալիս է հազնվելու թույլտվություն, բայց հագուստը վերաբերում է Աստծո ժողովրդի բարի գործերին (արդար գործողություններ) (տես Հայտ. 14:13; Եփ. 2:10; 1 Տիմ. 5:25):

Նկարագարդ բառեր Նոր Կտակարանում/Word Pictures in the New Testament Ա. Թ. Ռոբերտսոնը հետաքրքիր մեկնաբանություն ունի Հայտ. 19:7-ի վերաբերյալ: «Կանանց երեք փոխաբերությունները հայտնվում են Ապոկալիպսիսում (12-րդ գլխում գտնվող մայրը, 13-ից 19-ը՝ Պոռնիկը և Քրիստոսի հարսնացուն այստեղ մինչև վերջ): Առաջինը և երրորդը ներկայացնում են եկեղեցին՝ նրա կյանքի երկու տարբեր ասպեկտներում, մինչդեռ երկրորդը պատասխանում է իր մեծ հակառակորդին և թշնամուն (Swete)» (էջ 449):

19:8 «սուրբերի արդարութիւնն է» «Արդար գործեր» տերմինը (*dikaiōma*) մի շարք օգտագործումներ ունի Նոր Կտակարանում:

1. այն վերաբերում է Աստծո արդարության գործողություններին (տես Հայտ. 15:4)
2. այն վերաբերում է Հիսուսի՝ մարդկության փոխարեն մեռնելու արարքին (տես Հռ. 5:16,18)
3. այն վերաբերում է հավատացյալների արդարության կյանքին (տես Հայտ. 19:8)
4. այն վերաբերվում է հրովարտակին, օրենքին կամ արարողությանը, սովորաբար Մովսեսի օրենքին (տես Ղուկ. 1:6; տես Հռ. 1:32; 2:26; 8:4; Եբ. 9:1,10).

Հունարեն տերմինների այս ընտանիքին առնչվող հիմնական աստվածաբանական հարցը (*dikaioō, dikaiōsis, dikaios, dikaiosune*) այն է, թե ինչպես ընկած մարդկությունը կարող է արդար, ուղիղ լինել: Վստահ պետք է փաստել, որ այդ հոգևոր պայմանը չի կատարվել մարդկային ջանքերով (տես Հռ. 3:21-30; Եփ. 2:8-9), այլ Աստծո ընտրությամբ (Հայր), Աստծո գործողության (Որդի), և Հոգու աստվածային նկարչության միջոցով (տես Հովհ. 6:44,65): Մարդկությունը կարող է ստանալ միայն ավարտված արդյունքը (տես Հռ. 5; 2 Կոր. 5:21):

Ճիշտ կանգնելու նպատակը ճիշտ ապրելն է, Քրիստոսանման ապրելը (տես Հռ. 9:29; Գաղ. 4:19; Եփ. 1:4; 2:10): Արդար ապրելը Աստծո հետ ունեցած փոխհարաբերության վկայությունն է (տես Հայտ. 14:13), այլ ոչ թե այդ հարաբերությունների հիմքը (տես Գաղ. 3:1-3): Տես Հատուկ Թեմա Հայտ. 19:11:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 19:9-10
ՊԵՆ ասեց ինձ. Գրիր, Երանելի են Գառի հարսանիքի ընթրիքին կանչուածները. Եւ ասեց ինձ. Սորանք Աստուծոյ ճշմարիտ խօսքերն են: ¹⁰Եւ ես ընկայ նորա ոտների առաջին որ երկրպագեմ նորան, եւ ասեց ինձ. Չգոյշ կաց, մի անիր. Ես ծառայակից եմ քեզ եւ քո եղբայրներին, որ Յիսուս Քրիստոսի վկայութիւնն ունին. Տէր Աստուծուն երկրպագիր. Որովհետեւ Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է:

19:9 «Երանելի են» Սա Հայտնության մեջ փրկության յոթ օրհնություններից չորրորդն է (տես Հայտ. 1:3; 14:13; 16:15; 19:9; 20:6; 22:7,14):

- **«կանչուածները»** Սա վաղակատար կրավորական դերբայ է, որը շեշտում է Աստծո կանչը դեպի փրկություն (տես Հայտ. 17:14; Հովհ. 6:44,65):
- **«Սորանք Աստուծոյ ճշմարիտ խօսքերն են»** Այս արտահայտությունն ընդգծում է հրեշտակի պատգամի վստահելիությունը (տես Հայտ. 21:5; 22:6):

19:10 «Եւ եւ ընկայ նորա ոտների առաջին որ երկրպագեմ նորան» Շատ քննարկումներ են եղել հրեշտակ երկրպագելու Հովհաննէսի փորձի մասին (տես Հայտ. 22:8): Հավանաբար, Հովհաննէսը դա դիտավորյալ ներառեց որպէս խոսք ընդդէմ հրեշտակային երկրպագության (տես Հայտ. 22:9; Կող. 2:18): Հովհաննէսը զարմացավ այս հզոր հրեշտակային անձնավորությունից և գուցէ ենթադրեց, որ նա կամ աստվածային անձնավորումն էր (Ծննդ. 16:7-13; 22:11-15; 31:11,13; 48:15-16; Ելից 32,4; 13:21; 14:19; Դատ. 2:1; 6:22-23; 13:3-22; Զաք. 3:1-2; Դուկ. 24:5) կամ Հոգու ֆիզիկական դրսևորումը (տես Հայտ. 22:8-9):

- **«Եւ ծառայակից եմ քեզ եւ քո եղբայրներին, որ Յիսուս Քրիստոսի վկայութիւնն ունին»** Հովհաննէսն այս նույն տերմինով անվանել է իրեն Հայտ. 1:1: Հրեշտակն իրեն նույնացնում է ոչ միայն որպէս Աստծո ծառա (տես 2 Օր. 33:2; Սաղ. 103:21; Դան. 17:10), այլ նաև փրկված մարդկության ծառա (տես Եբ. 1:14): Այս հրեշտակը նաև նույնացնում է իրեն Հիսուսի վկայության հետ, որը, սովորաբար, ասվում է սրբերի, այլ ոչ թէ հրեշտակների մասին (տես Հայտ. 12:17):

- **«Որովհետեւ Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է»** Սա խիստ անսովոր արտահայտություն է և լայնորեն է մեկնաբանվել: Դա կարող է վերաբերել կամ

1. Հիսուսին՝ որպէս մարգարէության կենտրոնացում
2. այն փաստը, որ մարգարէությունը վերադարձվել է որպէս նշան, որը Հիսուսը բերել է Հոգու նոր դարաշրջանում (տես Հայտ. 1:2; 6:9; 12:17 և 14:12 այս արտահայտության սովորական գործածության համար):
3. Հիսուսը մարգարէության հենց շունչն է (նման է 2 Տիմ. 3:16 «Աստված շնչեց»)

Կոնտեքստը ցույց է տալիս, որ նրանք, ովքեր Քրիստոսին վստահել են, առաջնորդվել են Հոգով: Ոչ ոք չի կարող գալ Քրիստոսի մոտ, քանի դեռ

1. Հոգին չի քաշել նրան (տես Հովհ. 6:44,65)
2. օգնում է նրան հասկանալ ավետարանի պատգամը
3. քաջալերում է նրան վստահել Քրիստոսին
4. մկրտում է նրան Քրիստոսի մեջ
5. ձևավորում է Քրիստոսը նրա մեջ (տես Հովհ. 16:8-11)

Հոգու ծառայությունը մեծացնում է Քրիստոսին:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 19:11-16

¹¹Եւ տեսայ երկինքը բացուած, եւ ահա մի սպիտակ ձի, եւ նա որ նորա վերայ նստած էր, կոչվում էր Հաւատարիմ եւ Ճշմարիտ, եւ արդարութիւնով է դատաստան անում եւ պատերազմում: ¹²Եւ նորա աչքերը կրակի բոցի պէս, եւ նորա գլխի վերայ շատ պսակներ. Եւ անուն ունէր գրած, որ ոչ ով չ'գիտէր բայց միայն ինքն: ¹³Եւ իր վերայ հանդերձ էր հագած արիւնով ներկուած, եւ նորա անունն կոչվում է Աստուծոյ Բան: ¹⁴Եւ երկնքի զօրքերը նորա ետեւից գնում էին սպիտակ ձիերի վերայ սպիտակ եւ մաքուր բեհեզ հագած: ¹⁵Եւ նորա բերանիցը դուրս է գալիս սրած սուր, որ նորանով զարկէ ազգերին. եւ ինքը հովուում է նորանց երկաթէ գաւազանով. Եւ ինքը կոխում է Ամենակարող Աստուծոյ բարկութեան եւ սրտմտութեան գինու հնձանը: ¹⁶Եւ իր հանդերձի վերայ, եւ իր ազդրի վերայ գրած էր անունը, ԹԱԳԱԻՈՂՆԵՐԻ ԹԱԳԱԻՈՂ ԵՒ ՏԷՐԵՐԻ ՏԷՐ:

19:11 «Եւ տեսայ երկինքը բացուած» Սա վաղակատար կրավորական բայաձև է և կարող է վերաբերել Եզ. 1:1: Մի քանի անգամ Հայտնության մեջ երկինքը բացվել է (մասնակի ձևերով)՝ հետագա փուլերում ճշմարտությունը Հովհաննէսին բացահայտելու համար (տես Հայտ. 4:1; 11:19; 15:5): Տես Հատուկ Թեմա՝ Հայտ. 3:7:

- «սպիտակ ձի» Նախորդ պարբերության մեջ փեսան բացահայտվում է հետագայում՝ որպես ամբողջը նվաճող զինվոր: Սա նկարագրում է Հիսուսի գալուստը, քանի որ հրեաները առաջին անգամ էին սպասում Նրան, զորեղ զորավարին: Սա ինչ-որ չափով տարբերվում է 1 Թես. 4:13-18 մեջ հանդիպող Երկրորդ Գալուստի (*Parousia*) նկարագրությունից: Հավաճվող քրիստոնյաների մի խմբի համար սա չափազանց քաջալերող փոխաբերություն է: Մեկնաբանողները պետք է հիշեն
 1. որ սա Երկրորդ Գալուստի լիարժեք և ամբողջական քննարկումը չէ
 2. որ այն ծածկված է խորհրդանշական, ապոկալիպտիկ լեզվով
 3. որ սա ճիշտ է. մեր Աստվածը՝ Քրիստոսով, անձամբ նորից է գալիս, որ ընդունի Իրենների (տես Հովհ. 14:2-3) և դատի ամբողջ մարդկությանը՝ իրենց արարքների համաձայն (տես Գաղ. 6:7):
- «նա որ նորա վերայ նստած էր» Չնայած որ Հայտ. 6:2-ում կա սպիտակ ձի, բայց սա ակնհայտորեն այլ է:
- «կոչվում էր Հաւատարիմ եւ Ճշմարիտ» «Հավատարիմ և ճշմարիտ» տերմինները երբայերենում փոխանցում են վստահելիություն (տես Հայտ. 3:14, ինչպես նաև Հայտ. 1:5; 3:7):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: «ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ» (ԳԱՂԱՓԱՐԸ) ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ
SPECIAL TOPIC: "TRUTH" (THE CONCEPT) IN JOHN'S WRITINGS

Ինչ-որ իմաստով Հովհաննեսը համատեղում է «ճշմարտության» *alētheia* երբայերեն ֆոնը և հունական ֆոնը, ինչպես նա արեց *logos* -ի հետ (տես 1: 1-14): Երբայերեն *emeth* (BDB 53) նշանակում է այն, ինչը ճիշտ է կամ արժանահավատ (հաճախ Մեպտուագինդում ասոցացվում է *pisteuō*-ի հետ): Հունարենում, այն ասոցացվում էր Պլատոնի իրականությունը անիրականի հետ, երկնայինը երկրայինի հետ: Սա համապատասխանում է Հովհաննեսի դուալիզմին: Աստված հստակ հայտնել է Իրեն (*alētheia* ստուգաբանությունը է բացահայտել, հստակորեն հասկանալի) Իր Որդու մեջ: Սա արտահայտվում է մի քանի ձևերով,

1. ԳՈՅԱԿԱՆ, *alētheia*, ճշմարտություն
 - ա. Հիսուսը լի է շնորհքով ու ճշմարտությամբ (տես 1: 14,17 - ՀԿ ուխտի տերմիններ)
 - բ. Հիսուսը Հովհաննես Մկրտչի վկայության կենտրոնում է (տես 1: 32-34; 18:37 - վերջին ՀԿ մարգարեն)
 - գ. Հիսուսը խոսում է ճշմարտությունը (տես 8: 4,44,45,46 - հայտնությունը անձնական է)
 - դ. Հիսուսն է ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը (տես Հովհ. 14: 6)
 - ե. Հիսուսը սրբացնում է նրանց ճշմարտության մեջ
 - զ. Հիսուսն է (Լոգոսը/ *Logos*, 1: 1-3) ճշմարտությունը (տես Հովհ.17:17)
2. ԱԾԱԿԱՆ, *alēthēs*, ճիշտ է, արժանահավատ
 - ա. Հիսուսի վկայությունը (տես Հովհ. 5: 31-32; 7:18; 8: 13-14)
 - բ. Հիսուսի դատաստանը (տես Հովհ. 8:16)
3. ԱԾԱԿԱՆ, *alēthinus*, իրական
 - ա. Հիսուսն է ճշմարիտ լույսը (տես Հովհ.1: 9)
 - բ. Հիսուսն է ճշմարիտ հացը (տես Հովհ. 6:32)
 - գ. Հիսուսն է ճշմարիտ որթատունկը (տես Հովհ.15: 1)
 - դ. Հիսուսն է ճշմարիտ վկայությունը (տես Հովհ.19:35)
4. ՄԱԿԲԱՅ, *alēthōs*, ճշմարտապես
 - ա. Սամարացին վկայում է Հիսուսի մասին որպես աշխարհի Փրկիչ (տես Հովհ. 4:42)

բ. Հիսուսն է ճշմարիտ հացն ու ջուրը, ի տարբերություն մանանայի Մովսեսի օրերում (տես Հովհ. 6:55)

Ճշմարտություն տերմինը և դրա ածանցյալները նաև արտահայտում են ուրիշների վկայությունը Հիսուսի մասին, *alēthēs*,

ա. Հովհաննես Մկրտչի վկայությունը ճշմարիտ է (տես Հովհ. 10:41)

բ. Հովհաննեսի (Ավետարանի հեղինակը) վկայությունը ճշմարիտ է (տես Հովհ. 19:35; 21:24)

գ. Հիսուսը որպես ճշմարիտ մարգարե (տես Հովհ. 6:14; 7:40)

Հին և Նոր Կտակարաններում ճշմարտության մասին լավ քննարկում կարող եք կարդալ Ջորջ Ե. Լադդի *Նոր Կտակարանի Աստվածաբանություն*/George E. Ladd's *A Theology of the New Testament*, էջ 263-269:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: «ՃՇՄԱՐԻՏ» (ՏԵՐՄԻՆԸ) ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ

SPECIAL TOPIC: "TRUE" (THE TERM) IN JOHN'S WRITINGS

1. Հայր Աստվածը

ա. Աստված ճշմարիտ է/հավատարիմ (տես Հովհ. 3:33, 7: 18,28; 8:26; 17: 3; Հռ. 3: 4; 1 Թես.1: 9; 1 Հովհ. 5:20; Հայտ. 6: 10)

բ. Աստծո ուղիները ճշմարիտ են (տես Հայտ.15: 3)

գ. Աստծո դատաստանները ճշմարիտ են (տես Հայտ. 16: 7, 19: 2)

դ. Աստծո խոսքերը ճշմարիտ են (տես Հայտ. 19:11)

2. Որդի Աստվածը

ա. Որդին ճշմարիտ է/ճշմարտություն

1) ճշմարիտ լույս (տես Հովհ. 1:9, 1 Հովհ. 2:8)

2) ճշմարիտ որթատունկ (տես Հովհ. 15:1)

3) լի շնորհքով և ճշմարտությամբ (տես Հովհ. 1:14, 17)

4) Նա ճշմարտություն է (տես Հովհ. 14:6; 8:32)

5) Նա ճշմարիտ է (տես Հայտ. 3: 7,14, 19:11)

բ. Որդու վկայությունը ճշմարիտ է (տես Հովհ. 18:37)

3. Այն կարող է ունենալ համեմատական իմաստ

ա. Մովսեսի օրենքը ընդդեմ Հիսուսի շնորհքի և ճշմարտության (տես Հովհ.1:17)

բ. Խորանը անապատում ընդդեմ երկնային խորանի (տես Եբր. 8:2, 9: 1)

4. Ինչքան հաճախ Հովհաննեսում այս բառն ունեին մի քանի իմաստներ (եբրայերեն և հունարեն): Հովհաննեսն այդ բոլորն օգտագործում է նկարագրելու Հորը և Որդուն, որպես անձինք, որպես բանախոսներ և նրանց ուղերձը, որը պետք է փոխանցվի իրենց հետևորդներին (տես Հովհ. 4:13; 19:35; Եբր. 10:22; Հայտ. 22: 6):

5. Հովհաննեսի համար այս երկու ածականները նկարագրում են Հորը, որպես մեկ և միակ ճշմարիտ Աստված (տես 5:44, 1 Հովհ. 5:20) և Հիսուսը որպես Իր ճշմարիտ և ամբողջական հայտնություն փրկագնման նպատակի համար, այլ ոչ թե ճանաչողական փաստերի համար:

▪ «արդարությունով է դատաստան անում եւ պատերազմում» Սա ակնարկ է Ես. 11:3-5 (տես Ես. 9:7; 16:5; 32:1; Սաղ. 96:13), որը նկարագրում է արդարության նոր դարաշրջանը, Հոգու նոր դարաշրջանը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

SPECIAL TOPIC: RIGHTEOUSNESS

«Արդարությունը» այնպիսի կարևոր թեմա է, որ Աստվածաշունչ սերտող ուսանողը պետք է

անհատականորեն ուսումնասիրի այդ գաղափարը:

Հին Կտակարանում Աստծո բնույթը նկարագրվում է որպես «արդար» կամ «ուղիղ» (ԲՄՅ, BDB 842, KB 1003, ԱՐԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ, BDB 841, KB 1004, ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ, BDB 842, KB 1006): Միջագետքյան տերմինը առաջացել է «գետի եղեգից», որը օգտագործվել է որպես շինարարական գործիք՝ պատերի և ցանկապատերի հորիզոնական ուղղությունը ստուգելու համար: Աստված ընտրեց փոխաբերական կերպով օգտագործել այդ տերմինը Իր բնությունը նկարագրելու համար: Նա ուղիղ գիծ է (քանոն), որով ամեն ինչ գնահատվում և չափվում է: Այս գաղափարը հաստատում է Աստծո արդարությունը և դատելու իրավունքը:

Մարդը ստեղծվել է Աստծո պատկերով (տես Ծննդ. 1: 26-27; 5: 1,3; 9: 6): Մարդը ստեղծվել է Աստծո հետ հաղորդակցվելու համար (այսինքն, Ծննդ. 3: 8): Ամբողջ ստեղծագործությունը Աստծո և մարդկության փոխհարաբերության բեմն է կամ ֆոնը: Աստված ուզում էր Իր ամենաբարձր ստեղծագործությունը՝ մարդկությունը ճանաչի Իրեն, սիրի Իրեն, ծառայի Իրեն և Իր նման լինի: Մարդու հավատարմությունը փորձվեց (տես Ծննդ. 3) և առաջին զույգը ձախողեց: Սա հանգեցրեց Աստծո և մարդկության միջև փոխհարաբերությունների խզմանը (տես Հո. 5: 12-21):

Աստված խոստացել է վերանորոգել և վերականգնել հաղորդակցությունը (տես Ծննդ. 3:15; տես Հատուկ Թեմա: ՅԱՀՎԵԻ Հավիտենական Փրկության Ծրագիրը): Նա դա անում է Իր կամքի և Իր Որդու միջոցով: Մարդիկ անկարող էին վերականգնել ինտերվալը (տես Հո. 1: 18-3: 20; Հայտ. 5):

Անկումից հետո, Աստծո առաջին քայլը վերականգնման համար ուխտի գաղափարն էր, հիմնված Նրա հրավերքի և մարդու ապաշխարող, հավատարիմ, հնազանդ արձագանքի վրա (տես Եր. 31: 31-34; Եզ. 36:22-38): Մեղքի պատճառով մարդիկ անկարող էին համապատասխան գործել (տես Հո. 3: 21-31; Գաղ. 3): Աստված Ինքը պետք է նախաձեռնությունը Իր ձեռքը վերցնե՝ վերականգնելու ուխտը զանց արած մարդկանց: Նա դա արեց

1. Քրիստոսի կատարած գործի (այսինքն, դատական արդարության) միջոցով մարդկությանը արդարացնելու համար,
2. մարդկության ձրի արդարություն տալով Քրիստոսի կատարած գործի միջոցով (այսինքն, դրված արդարություն)
3. տալով Սուրբ Հոգին, որն արդարություն է բերում (այսինքն, Քրիստոսանմանություն, Աստծո պատկերի վերականգնում) մարդկության մեջ
4. վերականգնելու Եդեմի պարտեզի ընկերակցությունը (համեմատել Ծննդոց 1-2-ը, Հայտնություն 21-22-ի հետ)

Մակայն Աստված պահանջում է ուխտի արձագանք: Աստված որոշում է (այսինքն, ձրի տալիս է, տես Հո. 5: 8; 6:23) և հոգում է, բայց մարդիկ պետք է արձագանքեն և շարունակեն արձագանքել

1. ապաշխարությամբ
2. հավատքով
3. հնազանդ ապրելակերպով
4. համբերությամբ

Արդարությունը, հետևաբար, ուխտի, փոխադարձ գործողությունն է Աստծո և Նրա բարձրագույն ստեղծագործության միջև, հիմնված Աստծո բնույթի, Քրիստոսի կատարած գործի և Հոգու տված կարողության վրա, որին յուրաքանչյուր անհատ պետք է անձամբ և շարունակաբար պատշաճ արձագանքի: Գաղափարը կոչվում է «արդարացում շնորհքով հավատքի միջոցով» (տես Եփ. 2:8-9): Գաղափարը բացահայտվում է Ավետարաններում, բայց ոչ այս տերմիններում: Այն հիմնականում սահմանում է Պողոսը, որն օգտագործում է հունարեն «արդարություն» տերմինը իր տարբեր ձևերով, ավելի քան 100 անգամ:

Պողոսը, լինելով լավ կրթված ռաբբի, օգտագործում է *dikaionē* տերմինն իր եբրայերեն իմաստով *tsaddiq* տերմինն օգտագործվում է Սեպտուագինդում, ոչ թե հունական գրականության մեջ: Հունարեն գրվածքներում այս տերմինը կապված է այն անձի հետ, ով հավատարիմ է Աստծո և

հասարակության ակնկալիքներին (այսինքն Նոյ, Հոբ): Եբրայերեն իմաստով այն միշտ կառուցված է ուխտի տերմիններով (տես Հատուկ Թեմա: Ուխտ): ՅԱՀՎԵՆ արդար, էթիկական, բարոյական Աստված է: Նա ցանկանում է, որ Իր ժողովուրդն արտացոլի Իր կերպարը: Փրկված մարդը դառնում է նոր արարած (տես 2 Կոր. 5:17; Գաղ. 6:15): Այս նոր լինելը հանգեցնում է աստվածապաշտության նոր ապրելակերպին (տես Մատթեոս 5-7; Գաղ. 5: 22-24; Հակոբոս, 1 Հովհ.): Քանի որ Իսրայելը թեոկրատիա էր, հստակ սահմանազատում չկար աշխարհիկ (հասարակության նորմերի) և սուրբ (Աստծո կամքի) միջև: Այս տարբերությունն արտահայտվում է եբրայերեն և հունարեն լեզուներով՝ թարգմանվելով անգլերեն որպես «իրավունք» (հասարակությանը վերաբերող) և «արդարություն» (կրոնին վերաբերող):

Հիսուսի ավետարանը (բարի լուրը) այն է, որ ընկած մարդկությունը վերականգնվի՝ Աստծո հետ հաղորդակցվելու համար: Դա կատարվեց Հոր սիրո, ողորմության և շնորհքի միջոցով: Որդու կյանքի, մահվան և հարության շնորհիվ և Հոգու հովանավորության և դեպի ավետարանը քաշելու միջոցով: Արդարացումը Աստծո ձրի գործն է, բայց դա պետք է դրսևորվի աստվածապաշտության մեջ (Օգոստինոսի դիրքորոշումը, որը արտացոլում է թե Ռեֆորմացիայի շեշտադրումը ավետարանի ձրի-ության վրա և թե հռոմեական կաթոլիկ շեշտադրումը՝ սիրո և հավատարմության փոփոխված կյանքի վրա): Ռեֆորմատորների համար «Աստծո արդարություն» տերմինը հանդիսանում է ՕԲՅԵԿՏԻՎ ՄԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ (այսինքն մեղավոր մարդկանց Աստծուն ընդունելի լինելու գործողությունը (դիրքի սրբացում), իսկ կաթոլիկների համար դա ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՄԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ է, որը Աստծուն ավելի նմանվելու գործընթացն է [փորձառու առաջադիմական սրբացում]: Իրականում, իհարկե, այն երկուսն է:

Իմ Աստվածաշնչի մասին ունեցած կարծիքով Օննդոց 4-ից մինչև Հայտնություն 20 Աստված վերականգնում է Եդեմի ընկերակցությունը: Աստվածաշունչը սկսվում է երկրի վրա Աստծո և մարդու հաղորդակցությունից (տես Օննդոց 1-2), և Աստվածաշունչը վերջանում է նույն տեղանքով (տես Հայտ. 21-22): Աստծո պատկերն ու նպատակը կվերականգնվի:

Վերոհիշյալ քննարկումները փաստաթղթավորելու համար ուշադրություն դարձրեք հետևյալ Նոր Կտակարանյան հատվածներին, որոնք լուսաբանում են հունարեն բառախոսքը:

1. Աստված արդար է (հաճախ Աստծու որպես Դատավոր)
 - ա. Հռոմեացիս 3:26
 - բ. 2 Թեսաղոնիկեցիս 1: 5-6
 - գ. 2 Տիմոթեոս 4:8
 - դ. Հայտնություն 16: 5
2. Հիսուսն արդար է
 - ա. Գործք 3:14; 7:52; 22:14 (Մեսիայի կոչումը)
 - բ. Մատթեոս 27:19
 - գ. 1 Հովհաննես 2: 1,29; 3: 7
3. Աստծո կամքը Իր ստեղծագործության համար արդարությունն է
 - ա. Ղևտացոց 19: 2
 - բ. Մատթեոս 5:48 (տես 5: 17-20)
4. Աստծո արդարության ապահովման և կայացման միջոցները
 - ա. Հռոմեացիս 3: 21-31
 - բ. Հռոմեացիս 4
 - գ. Հռոմեացիս 5: 6-11
 - դ. Գաղատացիս 3: 6-14
5. Տրված Աստծո կողմից
 - ա. Հռոմեացիս 3: 24; 6:23
 - բ. 1 Կորնթացիս 1:30
 - գ. Եփեսացիս 2:8-9

6. Հավատքով ստացած
ա. Հռոմեացիս 1:17; 3: 22,26; 4: 3,5,13; 9:30; 10: 4,6,10
բ. 2 Կորնթացիս 5: 7,21
7. Որդու կատարած գործերի միջոցով
ա. Հռոմեացիս 5: 21
բ. 2 Կորնթացիս 5:21
գ. Փիլիպեցիս 2: 6-11
8. Աստծո կամքն է, որ Իր հետևորդները արդար լինեն
ա. Մատթեոս 5: 3-48; 7: 24-27
բ. Հռոմեացիս 2:13; 5:1-5; 6: 1-23
գ. Եփեսացիս 1:4; 2:10
դ. 1 Տիմոթեոս 6:11
ե. 2 Տիմոթեոս 2:22; 3:16
զ. 1 Հովհաննես 3:7
է. 1 Պետրոս 2:24
9. Աստված արդարությամբ կդատի աշխարհին
ա. Գործք 17:31
բ. 2 Տիմոթեոս 4: 8

Արդարությունը Աստծո առանձնահատկությունն է, ձրի տրված Քրիստոսի միջոցով մեղավոր մարդկությանը: Դա է

1. Աստծո որոշումն է
2. Աստծո պարզն է
3. Քրիստոսի գործը
4. ապրելու կյանքը

Բայց դա նաև արդարացման գործընթաց է, որը պետք է ուժեղ և հաստատակամորեն պահել, որը մի օր կավարտվի Երկրորդ Գալստյան ժամանակ: Աստծո հետ համագործակցությունը վերականգնվում է փրկության ժամանակ, սակայն առաջ է ընթանում կյանքի ընթացքում՝ մահվան կամ *Parousia* ժամանակ Նրա հետ դեմ առ դեմք հանդիպելով (տես 1 Հովհ. 3: 2):

Ահա լավ մեջբերում այս քննարկումն ավարտելու համար: Այն վերցված է *Dictionary of Paul and His Letters* from IVP .

«Կավվինը ավելի շատ, քան Լյութերը, ընդգծում է Աստծո արդարության հարաբերական կողմը: Լյութերի տեսակետը Աստծո արդարության մասին կարծես ներառում է արդարացման ասպեկտը: Կավվինը շեշտում է հաղորդակցության հրաշալի բնույթը կամ Աստծո արդարության մեզ վրա դրվելը» (էջ 834):

Ինձ համար հավատացյալի հարաբերությունը Աստծո հետ ունի երեք ասպեկտ:

1. ավետարանը մարդ է (Արևելյան Եկեղեցու և Կավվինի շեշտադրումը)
2. ավետարանը ճշմարտություն է (Օգոստինոսի և Լյութերի շեշտադրումը)
3. ավետարանը փոխված կյանք է (կաթոլիկ շեշտադրումը)

Նրանք բոլորն էլ ճշմարիտ են և պետք է միասին ընկալվեն՝ առողջ, ողջամիտ, աստվածաշնչյան քրիստոնեության համար: Եթե որևէ մեկը գերակշռում է կամ արժեզրկվում է, խնդիրներ են առաջանում:

Մենք պետք է ընդունենք Հիսուսին:

Մենք պետք է հավատանք ավետարանին:

Մենք պետք է ձգտենք Քրիստոսանմանությանը:

19:12 «Եւ նորա աչքերը կրակի բոցի պէս» Սա Հիսուսի նկարագրությունն է Հայտ. 1:14 և 2:18-ից: Այն ունի Հին Կտակարանի հրեշտակային նախապատմություն Դան. 10:6:

▪ **«նորա գլխի վերայ շատ պսակներ»** Սա վերաբերում է թագավորական թագերին: Հիսուսը ավելի շատ պսակներ ունի, քան

1. Հայտ. 6:2-ի սպիտակ ձիավորը (որը խորհրդանշում է արդյունավետ պատերազմ)
2. սատանան (Հայտ. 12:3 կարմիր վիշապը)
3. Հայտ. 13:1-ի գագանը

▪ **«Եւ անուն ունէր գրած, որ ոչ ով չ'գիտէր բայց միայն ինքն»** Դա կարող է ակնարկ լինել Հայտ. 2:17, բայց եթե այդպես է, դրա իմաստը դեռ անորոշ է: Ոմանք դա համարում են որպես ակնարկ հին հավատքին, որ աստվածների անունը իմանալը նրանց վրա իշխանություն ունենալն էր: Մյուսները հավատում են, որ դա ներկայացնում է այն փաստը, որ ոչ ոք չի կարող լիովին իմանալ Քրիստոսի կերպարը: Քանի դեռ անունն անհայտ է, այն չի վերաբերում Հիսուսի որևէ կոչումին (Հայտ. 19:11 «Հավատարիմ և ճշմարիտ», և Հայտ. 19:13-ի «Աստծո խոսքը») հանդիպում է այս հատվածում (կամ գրքում) ներառյալ Հայտ. 19:16 «Թագավորների թագավոր և Տերերի Տեր»-ը:

19:13 «Եւ իր վերայ հանդերձ էր հագած արիւնով ներկուած» Սա ակնարկ է Հայտ. 63:3 ՅԱՀՎԵԻ դատաստանի պոեմին, որի մասին նույնպես ասված է Հայտ. 19:15: «Ներկված» տերմինը (MS A, UBS⁴ տալիս է դրան B վարկանիշ) կամ «ցողված» (MSS ռ *, P Ես. 63:3) տերմինն է վաղակատար ժամանակում. մեկնաբանները համաձայն չեն, արդյոք դա վերաբերում է

1. իր թշնամիների արյանը, որը, կարծես, կենտրոնում է պարբերության վրա և արտացոլված է Ծննդ. 49:10-11 Թարգում (սակայն, կոնտեքստում, մարտը տեղի չի ունեցել):
2. Իր փրկարար, զոհաբերող արյանը, որով սրբերը լվացել են իրենց հանդերձները սպիտակով (տես Հայտ. 7:14):
3. նույնիսկ հնարավոր է, որ դա Նրա վկանների արյունն է, որոնք թանկ են Նրա համար

Կոնտեքստում թիվ 1 տարբերակն ամենալավն է թվում:

▪ **«Եւ նորա անունն կոչվում է Աստուծոյ Բան»** Սա *logos* տերմինն է, որը «Հայտնություն» գիրքը կապում է Հովհաննես առաքյալի հետ, քանի որ նա միակ աստվածաշնչյան հեղինակն է, ով սա օգտագործում է որպես Հիսուսի կոչում (տես Հովհ. 1:1,14; 1 Հովհ. 1:1):

			22:17բ	
			22:17գ	
	Զգուշացում		Ամփոփում	
22:18-19	22:18-19	22:18-19	22:18-19	22:18-19
	Շուտով Ես գալիս եմ			
22:20	22:20-21	22:20	22:20	22:20
		22:20բ	22:20բ	22:20բ
22:21		22:21	22:21	22:21

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան քնթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Կարդացեք գլուխը մեկ շնչով: Բացահայտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց դաբանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ հիմնական թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՄՏՔԵՐ

Ա. Հայտնություն 20-22-ը կազմում են յոթերորդ գրական միավորը: Հայտնություն 21-22-ը եզրափակում են Աստծո գործողությունները մարդկության պատմության մեջ և նախաձեռնում հավիտենական թագավորությունը (տես Դան. 7: 13-14,27; 1 Կոր. 15: 27-28): Հայտնություն 22: 6-21-ը ամբողջ գրքի եզրակացությունն է:

Բ. Այս երկու գլուխների գրեթե յուրաքանչյուր տարր ակնարկ է (1) Ծննդոց 1-3; (2) Սաղմոս 110; կամ (3) միջկտակարանյան հրեական ապոկալիպտիկ գրականության:

Գ. Այս վերջին բաժնում անսովոր տարրերի մասին շատ քննարկումներ են եղել:

1. «ազգերի» հիշատակումը - Հայտ. 21:14; 22: 2
2. հիշատակում է «Երկրի թագավորները» - Հայտ. 21: 24,26
3. հիշատակում է «քաղաքից դուրս անմաքուրը» -Հայտ. 21:27; 22:15

Թվում է, որ այս տարրերը ներառելու համար կան մի քանի հնարավոր պատճառներ.

1. Հովհաննեսն ակնարկում է Հին Կտակարանի մարգարեությունները: Ինչպես Ավետարանների առակները, թարգմանիչները մտադիր չեն բառացիորեն մեկնաբանել մանրամասները, այլ նույնականացնել հիմնական շեշտադրումները:
2. Հովհաննեսի նպատակն է ցույց տալ փրկվածի և կորածի միջև վերջնական տարբերությունները:
3. Այս բաժնում նշված «ժողովուրդները» օգտագործվում են էթնիկական ընդհանուր իմաստով, ինչպես «Աստծո ժողովուրդը» Հայտ. 5: 9; 7: 9; 21:14 և 22: 5-ում:
4. Այս տարրերի պատճառով ոմանք տեսել են քաղաքի ներսում փրկված հրեաներին և փրկված հեթանոսներին՝ քաղաքից դուրս: Բայց Գաղ. 3:29 – ի և Եփ. 2:11–3: 13 – ի պատճառով դա պարզապես չի կարող լինել կենսունակ աստվածաբանական տարբերակ:
5. Կարծում եմ, որ կա ամփոփում Հայտ. 17-19-րդ և Հայտ. 20-22-րդ գլուխների միջև: Սա բացատրում է այս ամբողջ հատվածում առկա կրկնվող թեմաները:

Դ. Այս երկու գլուխներում հանդիպում են «յոթի» ևս մեկ շարք: Սրանք այն բաներն են, որոնք այլևս չեն լինելու

1. Ծով - Հայտ. 21: 1
2. Մահ - Հայտ. 21: 4
3. Սուգ - Հայտ. 21: 4
4. Լաց - Հայտ. 21: 4
5. Ցավ - Հայտ. 21: 4
6. Գիշեր - Հայտ. 21:25
7. Անեծք - Հայտ. 22: 3

Ե. Քանի որ դատաստանները ասոցացվում են Քրիստոսի Երկրորդ Գալստյան հետ դրամատիկ ոճով պատկերված են երեք տեսիլքներում (կնիքներ, փողեր և սկավառակներ), հնարավոր է երկինքը դրամատիկ ձևով պատկերվում է երեք Հին Կտակարանյան փոխաբերություններում.

1. Խորանը, Հայտ. 21: 1-8
2. Նոր Երուսաղեմը, Հայտ. 21: 9-26
3. Եդեմի պարտեզը, Հայտ. 22: 1-5

Սա կարող է նաև ճիշտ Վերջաբան լինել (Հայտ. 1: 1-8), որն ընդգծում է

1. Քրիստոսի վերադարձի անմիջականությունը
2. Աստծո խոսքերի հավատարմությունը
3. Աստծո ժողովրդի անհրաժեշտ սրբությունը

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 21:1-4

¹Եւ տեսայ նոր երկինք եւ նոր երկիր. որովհետեւ առաջի երկինքը եւ երկիրն անցան. Եւ էլ ծով չ'կայ: ²Եւ ես՝ [Յովհաննէսս] տեսայ սուրբ քաղաքը՝ նոր Երուսաղեմը վայր գալիս Աստուածանից երկնքիցը պատրաստուած ինչպէս մի զարդարուած հարս իր մարդի համար: ³Եւ մի մեծ ձայն լսեցի երկնքիցը, որ ասում էր. Ահա Աստուծոյ խորանը մարդկանց հետ, եւ նա կ'բնակուէ նորանց հետ, եւ նորանք կ'լինին նորան ժողովուրդ, եւ ինքն Աստուած նորանց հետ կ'լինի նորանց Աստուած: ⁴Եւ կ'ջնջէ Աստուած բոլոր արտասուքը նորանց աչքերիցը. եւ մահն այլեւս չի լինիլ, ոչ սուգ, եւ ոչ աղաղակ. Եւ

21: 1 «Եւ տեսայ» Որոշակի ժամանակահատվածի տևողություն կա, թե որքան ժամանակ, կախված է 20-րդ գլխի «հազար տարվա» քո մեկնաբանությունից:

▪ **«նոր երկինք եւ նոր երկիր»** Այս հունարեն «նոր» տերմինը, *kainos*, շեշտում է որակը, այլ ոչ թե ժամանակագրական ժամանակը (տես Մաղ. 2:17; 3:12; 5: 9; 14: 3; 21: 1,2,5): Սա Հին Կտակարանյան թեմա էր, վերաստեղծված երկիր (տես Ես. 11: 6-9; 65:17; 66:22; տես նաև Հռ. 8: 18-25; 2 Պետ. 3: 10,12): Բոլոր հավատացյալներն այս Նոր Թագավորության քաղաքացիներն են (տես Փիլ. 3:20; Եփ. 2:19; Եբր. 12:23) և կիսում են այս նոր ստեղծագործությունը (տես 2 Կոր. 5:17; Գաղ. 6:15; Եփ. 4:24): Զուգահեռ աստվածաբանական գաղափար կլինեք «Աստծո քաղաքը, որը չի արվել մարդկային ձեռքերով» Եբր. 11: 10,16; 12:22; 13:14:

Նոր ստեղծագործությունը նման կլինի առաջին ստեղծագործությանը: Երկինքը կարող է լինել վերականգնված Եդեմի պարտեզը: Աստված, մարդկությունը, կենդանիները և բոլոր բնության արարածները նորից կընկերանան և կուրախանան: Աստվածաշունչը սկսվում է այն մտքով, որ պարտեզում Աստված, մարդը և կենդանիները կատարյալ ընկերակցություն ունեին (տես Ծննդոց 1-2): Աստվածաշունչն ավարտվում է, երբ Աստված և մարդը պարտեզում են լինելու (տես Հայտնություն 21-22) և մարգարեական խոսքով՝ կենդանիների հետ միասին (տես Ես. 11: 6-8; 65:25): Հավատացյալները չեն գնում երկինք; նոր Երուսաղեմն է իջնում երկնքից (տես Հայտ. 21: 2) և գալիս է վերականգնված և մաքրված երկիր: Աստված և մարդը նորից միասին են (տես Ծննդ. 3:15; Ես. 7:14; 8: 8,10; Հայտ. 21: 3):

▪ **«որովհետև առաջի երկինքը եւ երկիրն անցան»** Լինելու է վերականգնված ստեղծագործություն (տես Գործք 3:21; Հռ. 8:21; Կող. 1:20), որն այլևս չի ենթարկվում մեղքի (տես II Բարուք 37: 6; 2 Պետ. 3: 10-12; Հայտ. 20:11):

▪ **«Եւ էլ ծով չ'կայ»** Այս արտահայտության մի քանի մեկնաբանություններ են եղել (տես նշում Հայտ. 4: 6):

1. քանի որ ծովը նշված է Հայտ. 4: 6-ում՝ Աստծո սրբության մասին խոսելու միջոց, որը Նրան բաժանում է մեղավոր մարդուց, ոմանք դրա բացառությունը այստեղ տեսել են որպես Աստծո և մարդու միջև կատարյալ ընկերակցության վերականգնում:
2. քանի որ Հայտ. 20: 13-ին ծովը թվում էր, թե մահացածների պահվող երեք վայրերից մեկն է, դա միջոց է ասելու, որ բոլոր մահացածները նշանակվել են երկու հավիտենական վախճաններից մեկին:
3. քանի որ Հայտ. 13: 1-ի առաջին գագանը դուրս է գալիս ծովից, և կա ակնարկ ծովի մասին՝ կապված չար մարդկանց հետ Ես. 57:20, հավանաբար ամբարիշտներն այլևս չեն լինելու
4. քանի որ Հայտ. 17:15-ը մեջբերում է Ես. 17: 12-13-ից որտեղ ջրերը հանդես են մարդկանց փոխարեն, շատերը պնդում են, որ դա վերաբերում է ամբարիշտ ազգերին, ինչպես Մաղ. 2-ը: Ես ամենից շատը հավանում # 1-ը:

21: 2 «Եւ ես՝ [Յովհաննէս] տեսայ սուրբ քաղաքը՝ նոր Երուսաղեմը» Պաղեստինում Երուսաղեմը կոչվում է «սուրբ քաղաք» Ես. 52: 1 (տես Ես. 48: 2; 64:10; Դան. 9:24; Նեեմ. 11: 1): Այս նոր Երուսաղեմը առաջին անգամ հիշատակվում է Հայտ. 3:12-ում և հիշատակվում է Եբր. 11:10; 12:22; և 13:14: Սա ցույց է տալիս, թե ինչպես Հովհաննէսը վերցրեց Հին Կտակարանի մարգարեությունները, տերմինները, տիպոլոգիաները, խոստումները և դրանք կիրառեց Աստծո նոր ժողովրդի համար: Այս

քաղաքը Պաղեստինի հին ուխտի Երուսաղեմը չէ, ինչպես ենթադրել են որոշ միլենիալիստներ, բայց նոր ուխտը՝ երկնային Երուսաղեմն է:

- **«վայր գալիս ... երկնքիցը»** Իջնելը չի լինում երկու անգամ, մեկը Հայտ. 21: 2-ում, իսկ մյուսը՝ Հայտ. 21:10: Ապոկալիպտիկ լեզուն շատ հարթ է և չպետք է կառուցված լինի ժամանակագրականորեն, տրամաբանորեն կամ բառացիորեն:

- **«պատրաստուած ինչպես մի զարդարուած հարս իր մարդի համար»** Սա ակնարկ է Ես. 61:10 (տես Հայտ. 19: 7): Այս վերջին գլուխներում Աստծո ժողովրդին նկարագրելու համար օգտագործվում են մի քանի փոխաբերություններ.

1. հարս (տես Հայտ. 19: 7; 21: 2)
2. հարսանիքի հյուր (տես Հայտ. 19: 9)
3. քաղաք (տես Հայտ. 21:22; 22: 2):

ՅԱՀՎԵԻ Հին Կտակարանի փոխաբերությունը (տես հատկապես Ովսիա 1-3) որպես ամուսին իսկ Իսրայելը որպես հարս, Եկեղեցին՝ որպես Քրիստոսի հարսը կերպարի ֆոնն է (տես Եփ. 5: 21-31):

21: 3 «Ահա Աստուծոյ խորանը մարդկանց հետ» Այս հունարեն արտահայտությունը կրկնում է Աստծո տված Հին Կտակարանյան խոստումները, որոնք բնակվում են մարդկանց հետ երեք տարբեր ձևերով.

1. դա ակնարկ է խորանի մասին, ՅԱՀՎԵԻ ներկայության խորհրդանիշը
2. «Նա բնակվելու է նրանց մեջ» արտահայտությունը նույնն է ինչ Ես. 7:14-ը (տես Հովհ. 1:14) «Էմմանուել» տերմինը:
3. «նրանք կլինեն Նրա ժողովուրդը» ուխտի տերմինաբանություն է; այժմ բոլոր հավատացյալ ժողովուրդը (տես Հովհ. 10:16) Աստծո ընտրյալ ժողովուրդն է (տես Ղև. 26: 11-12; Եզ. 37: 23,27):

21: 4 «Եւ կ'ջնջէ Աստուած բոլոր արտասուքը նորանց աչքերիցը» Սա ակնարկ է Ես. 25: 8 (տես Մատթ. 5: 4; 7:17): Նոր դարաշրջանը կլինի ուրախության, խաղաղության, ամբողջության և փառաբանության ժամանակ:

- **«Էւ մահն այլևս չի լինիլ»** Այս վերջին թշնամին (տես Հայտ. 20:14) կկործանվի (տես 1 Կոր. 15:26): Հավատացյալները կունենան իրենց նոր մարմինները, ինչպես Քրիստոսի հարություն առած մարմինը (տես 1 Կոր. 15: 50-57; 2 Կոր. 3: 18; 1 Թեա. 4: 15-16; 1 Հովհ. 3: 2):

- **«ոչ սուգ, եւ ոչ աղաղակ. Եւ ոչ ցաւ այլևս չի լինիլ»** Սա ակնարկ է Ես. 65:19 և նաև արտացոլում է Ես. 35:10:

- **«առաջիններն անցան»** Առաջին ստեղծագործության վրա ազդեցություն է ունեցել մեղքը (տես Ծննդ. 3; 6: 5,1-12,13), բայց նոր ստեղծագործությունը չի ենթարկվի մեղքին (տես Եր. 12: 27-28):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 21:5-8
Տես աթոռի վերայ նստողն ասեց. Ահա ամեն բան նոր եմ անում. Եւ ասեց ինձ. Գրիր. որ այս խօսքերը ճշմարիտ եւ հաւատարիմ են: Տես ինձ ասեց. Եղաւ, եւ եմ Ալֆան եւ Օմեղան. Սկիզբը եւ վերջը. եւ ձրի կ'տամ ծարաւին կեանքի ջրի աղբիւրիցը: Պով որ յաղթէ, ամենը կ'ժառանգէ. Եւ ես կ'լինիմ նորան Աստուած, եւ նա կ'լինի ինձ որդի: Տես կ'վախկոտներին եւ անհաւատներին, եւ պիղծերին եւ մարդասպաններին եւ պոռոնիկներին, եւ կախարդներին եւ կռապաշտներին եւ ամեն ստախօսներին

21: 5 «Եւ աթոռի վերայ նստողն ասեց» Աստված մի քանի անգամ խոսում է Հայտնության մեջ (տես Հայտ. 1: 8 և հավանաբար 16: 1,17): Թվում է, թե կա նպատակային երկիմաստություն, թե ով է նստում գահին՝ ՅԱՀՎԵՆ թե Մեսիան (տես Հայտ. 22: 3): Տես ամբողջական նշումները Հայտ. 20:11-ում: Քանի որ առաջին ստեղծագործությունը ստեղծվեց Աստծո խոսքով (այսինքն՝ Հայրը Որդու միջոցով) (տես Ծննդ. 1: 3,6,9,14,20,24; Սաղ. 33: 6,9), այնպես էլ կլինի Նրա նոր ստեղծագործությունը:

▪ **«Ահա ամեն բան նոր եմ անում»** Սա Ես. 60-66 գլուխների խոստումն է: Սա վերաբերում է Հոգու նոր դարաշրջանին, Մեսիայի դարաշրջանին, արդարության դարաշրջանին, որը Հիսուսը սկիզբ դրեց Իր առաջին գալստյամբ և կամբողջացնի Իր երկրորդ գալստյան ժամանակ: Սա փոխաբերություն է Աստծո կամքի իրականության հաստատման որոշակիության մասին (տես Հայտ. 1:19; 14:13; 17:17; 19: 9):

▪ **«այս խօսքերը ճշմարիտ եւ հաւատարիմ են»** Այս արտահայտությունն օգտագործվում էր նկարագրելու համար (1) Հիսուսին, տես Հայտ. 1: 5; 3: 7,14; 19:11; (2) Հիսուսի հետևորդներին, տես Հայտ. 17:14; և (3) Աստծո խոսքը, տես Հայտ. 19: 9; 21: 5; 22: 6: Հաճախ Աստված նկարագրվում է որպես «արդար և ճշմարիտ» (տես Հայտ. 15: 3; 16: 7; 19: 2): Այս հունարեն բառի հետևում գտնվող եբրայերենը ենթադրում էր վստահություն:

21: 6 «Եղաւ» Սա վաղակատար ներգործական սահմանական է: Սա կարող է կապված լինել Աստծո խոստումների հաստատ համոզմունքի հետ, որոնք վերաբերում են ինչպես անհավատների բարկությանը, այնպես էլ՝ հավատացյալների ազատագրմանը (տես Հայտ. 6:11; 10: 7; 16:17) կամ Աստծո խոստումների անսահմանությանը (տես Հայտ. 1: 1 , 3; 3:11; 10: 6; 12:12; 22: 7,10):

▪ **«ես եմ Ալֆան եւ Օմեղան»** Սա օգտագործվում է Աստծո համար Ես. 44: 6 և Հայտ. 1: 8; այնուամենայնիվ, ծայրահեղ կարևոր է, որ այս արտահայտությունը, որը թեև տիտղոս է Հոր համար, սակայն օգտագործվում է նաև Մեսիայի համար Հայտ. 1:17 և 22:13 համարներում: Սա Նոր Կտակարանի հեղինակների մեկ այլ օրինակ է Աստծո հատկանիշները Որդուն օգտագործելու համար:

Կան մի շարք ընդգրկուն արտահայտություններ, որոնք նկարագրում են Աստծո հավիտենական, եզակի գոյությունը.

1. «առաջինը և վերջինը», տես Ես. 41: 4; 44: 6; 48:12; Հայտ. 1:17; 2: 8; 22:13

2. «սկիզբը և վերջը», տես Հայտ. 21: 6; 22:13; և KJV 1: 8

3. «ով է և ով էր և ով պետք է գա», տես Հայտ. 1: 4,8; 4: 8

Այս բոլորը կապված են Աստծո ուխտի անվան՝ ՅԱՀՎԵՒ հետ, որը եբրայերեն «լինել» բայաձևն է (տես Ելից 3:14; Ես. 43: 10,13; 46:41; Սաղ. 90: 2; 93: 2):

▪ **«ես ձրի կ'տամ ծարաւին կեանքի ջրի աղբիւրիցը»** Հին Կտակարանյան ակնարկը Եսայիա 55-ն է: Հրավերը բոլորի համար է և այն բացարձակ անվճար է (տես Հռ. 3:24; 6: 23; Եփ. 2: 8): Ինչպիսի հոյակապ հրավեր հենց Աստծուց՝ ներելու հասանելիության համար: Մարդու փրկությունը միշտ եղել է Աստծո սրտի և մտքի կենտրոնում (տես Հայտ. 9: 20-21; 14: 6-7; 16: 9,11; 22:17):

Հին Կտակարանում ջրի աղբյուրները հաճախ ասոցացվում են Աստծո հետ, ով հոգում է մարդկության հոգևոր կարիքները (տես Սաղ. 36: 9; Ես. 12: 3; 44: 3; 49:10; Եր. 2:13; 17:13) ; նաև Հովհ. 4:10):

21: 7 «Ով որ յաղթե» Մա ներկա ներգործական դերբայ է, որը շարունակական հղում է հաստատականության կամ համբերության վարդապետության մասին՝ ահավոր հալածանքների ժամանակ: Այս արտահայտությունը հանդիպում է յոթ եկեղեցիների բոլոր նամակներում (տես Հայտ. 2: 7,11,17,26; 3: 3,5,12,21), որոնք Հայտնության գրքի սկզբի գլուխները կապում են եզրակացության հետ: Տես Հատուկ Թեմա: Համբերություն, հաստատականություն Հայտ. 2:2:

▪ **«ամենը կ'ժառանգե»** Ժառանգության պարզը Հայտ. 21: 7-ում (տես 1 Պետ. 1: 4,5; Հռ. 8:17) և նախագգուշացումները Հայտ. 21: 8-ում հակառակ են պոտենցիալ հավատուրացության իրավիճակին հալածանի ժամանակ: Անօրեն հավատուրացների շարքը (տես Հայտ. 21: 8) ինչ-որ չափով նման է 1 Կոր. 6: 9-10:

▪ **«Եւ ես կ'լինիմ նորան Աստուած, եւ նա կ'լինի ինձ որդի»** Սրանք ուխտի արտահայտություններ են (տես Հայտ. 21: 3), որոնք այնքան տարածված են Հին Կտակարանում (տես Ելից 6: 7; 29: 45,46; Ղև .26: 11-12; 2 Թագ. 7:14; Սաղ. 89: 26-27; Եր. 7: 23; 11: 4; 30:22; 33:38; Եզ. 11:20; 14:11; 34:30; 36:28; Ովս. 2:23; Զաք. 8: 8; 13: 9) և օգտագործվում են նաև Նոր Կտակարանում (տես 2 Կոր. 6: 16,18):

Ուխտի գաղափարը, հավանաբար, Աստվածաշնչի միավորող թեման է: Մարդկությունը օտարացել է Աստծուց (տես Ես. 53: 6; Հռ. 3: 9-18,23): Մարդը չի կարող գտնել Աստծուն: Աստված հասնում է մեզ; Աստված համոզում է մեզ: Նրա վերամիավորման առաջարկը ուխտերից մեկն է: Նա նախաձեռնում է (տես Եր. 31: 3; Հովհ. 6: 44,65); Նա սահմանում է օրակարգը, բայց մարդը պետք է պատասխան տա որոշակի ձևերով: Այս եղանակները բազմազան են բովանդակությամբ (Ադամ / Եվա, արգելված ծառ; Նոյ, նավ; Աբրահամ, երկիր, որդի; Մովսես, օրենք), բայց ընդունման ձևը, հավատը Աստծո հավատարմությանը՝ մնում է նույնը (տես Հռ. 4): Հին ուխտը ուներ պահանջներ. այդպես էլ նաև Նորը (տես Մարկ. 1:15; Գործք 3: 16,19; 20:21): Մարդը պետք է արձագանքի ինչպես սկզբում, այնպես էլ անընդհատ հավատքի, ապաշխարության, հնազանդության, ծառայության, երկրպագության և համբերության մեջ հարատևի:

Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՈՆ ՈՐԴԻՆ, Հայտ.2:18:

21: 8 Անսովոր է գտնել մեղքերի այս շարքը, երբ դատաստանն արդեն տեղի է ունեցել և ամբարիշտները ենթադրաբար վերցվել են (Երկրորդ գալստյան ժամանակ Հիսուսի հաղթանակով, տես Հայտ. 19: 5-21-ը և Սպիտակ Գահը, տես 20: 11-15): Մա չի նշանակում, որ որոշ հավատացյալներ չեն գործել այս մեղքերը, բայց որ նրանց կյանքը չի բնութագրվում այս մեղքերով (տես 1 Հովհ. 3: 6,9): Մա, կարծես, գրական տեխնիկական միջոց է՝ փրկվածին և կորածին հավիտենական տարբերությունը ցույց տալու համար կամ ապոկալիպտիկ դրամայի ասպեկտը (կրկնվում է շեշտադրման համար): Տես «Հայտնության Ներածությունը», Բացման Մտքեր, Գ. կետը:

▪ **«այս լճումը կ'լինի որ կրակով եւ ծծմբով վառուած է: Մա է երկրորդ մահը»** Ակնհայտ է, որ կրակե լիճը հոմանիշ է երկրորդ մահվանը կամ Դժոխքի մեր գաղափարի հետ, որը Հիսուսը կոչեց *Գեհեն* (հունարեն տերմին, որը Հայտնության մեջ չի երևում): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: Որտե՞ղ են մահացածները, Հայտ.1:18:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 21:9-14

⁹Եւ այն եօթը հրեշտակներից մէկը, որ եօթը սկաւառակն ունէին վերջի եօթը պատուհասներովը լցուած, ինձ մօտ եկաւ, խօսեց ինձ հետ եւ ասեց. Եկ ցոյց տամ քեզ այն հարսը, որ Գառի կինն է. ¹⁰Եւ առաւ տարաւ ինձ հոգով մի մեծ եւ բարձր սար, եւ ինձ ցոյց տուաւ այն մեծ քաղաքը՝ սուրբ Երուսաղէմը, որ վայր էր գալիս Աստուածանից երկնքիցը. ¹¹Եւ Աստուծոյ փառքն ունէր. Եւ նորա յուսաւորութիւնը պատուական ակունքի նման ինչպէս բիրեղացած յասայիս քար: ¹²Որ մեծ եւ բարձր

պարիսպ ուներ, եւ տասներկու դուռ ուներ, եւ դռների վերայ տասներկու հրեշտակ, եւ նորանց վերայ անուններ էին գրուած որ Իսրայէլի որդեանց տասներկու ցեղերի անուններն են: ¹³Արեւելքից երեք դուռ, հիւսիսից երեք դուռ, հարաւից երեք դուռ, եւ արեւմուտքից երեք դուռ: ¹⁴Եւ քաղաքի պարիսպը տասներկու հիմեր ուներ, եւ նորանց վերայ Գառի տասներկու առաքեալների տասներկու անունները:

21: 9 «Եօթը հրեշտակներից մէկը» Սա հրեշտակի ճշգրիտ նկարագրությունն է Հայտ. 15: 1,6-8; 16: 1; և 17: 1, ով թափեց յոթ սկավառակները: Ռաբբիական հուղայականության մեջ ավանդույթ կա, որ կան Ներկայության յոթ Հրեշտակներ, որոնք ծառայում են Աստծուն: Այստեղ յուրաքանչյուր պատուհասի համար կա մեկ հրեշտակ:

21:10 «Եւ առաւ տարաւ ինձ հոգով» Սա գրական տեխնիկական միջոց է՝ տարբեր տեսիլքները ցույց տալու համար (տես Հայտ. 1:10; 4: 2; 17: 3; 21:10):

- **«մի մեծ եւ բարձր սար»** Շատերը հավատում են, որ սա ուղղակիորեն հակասում է այն մեծ պռոնիկին, որը գտնվում էր հարթավայրում: Այնուամենայնիվ, Հովհաննէսը նշում է բազմաթիվ Հին Կտակարանյան հատվածներ, այնպես որ այստեղ նա կարող է վկայակոչել հյուսիսային խորհրդավոր լեռը, որտեղ Աստված է ապրում (տես Եզ. 40: 2; Ես. 2: 2; 14:13; Միքիա 4: 1; 1 Ենովք 18: 8; 25: 3): Նույնիսկ հնարավոր է, որ դա հղում է Հիսուսի փորձությանը սասանայի կողմից Մատթ.4: 8:

- **«եւ ինձ ցոյց տուաւ այն մեծ քաղաքը՝ սուրբ Երուսաղէմը, որ վայր էր գալիս Աստուածանից երկնքիցը»** Սա երկնային Երուսաղէմն է, Աստծո ներկայության փոխաբերությունը (տես Հայտ. 21: 2): Երկրային մեղավոր Երուսաղէմը քննարկվում է Հայտ. 11:1-13-ում: Դավիթի մայրաքաղաքը դարձել է համընդհանուր՝ Աստծո ամբողջ ժողովրդի վերջնական բնակության համար (տես Հովհ. 14: 2-3):

21:11 «Եւ նորա լուսաւորութիւնը պատուական ակունքի նման ինչպէս բիրեղացած յասպիս քար» Քաղաքը (տես Հայտ. 21: 11-27) նկարագրված է շատ գեղեցիկ, ֆիզիկական և բարոյական տերմիններով: Ինչպես ամբողջ Հայտնության գիրքը, այս գլուխն էլ խորհրդանշական է: Մարդկանց մեղավոր, սահմանափակ մտքերը պարզապես չեն կարող հասկանալ Աստծո ներկայության վերջնական ուրախությունն ու փառքը (տես 1 Կոր. 2: 9): Բառացի զարդերը և ֆանտաստիկ հնագույն քաղաքը կարող են լավ փոխաբերություններ լինել, բայց դրանք վերջնական իրականությունը չեն: Դրախտը իրականում թե անձ է (Հիսուսը) և թե տեղ (Սուրբ Երրորդության հաղորդակցության վայրը):

21:12 «Եւ տասներկու դուռ ուներ, եւ դռների վերայ տասներկու հրեշտակ» Սա ակնարկ է Եզ. 48: 31-34: «Տասներկու» թիվը կրկին ու կրկին հանդիպում է այս գլխի մնացած հատվածներում և 22-րդ գլխի առաջին մի քանի համարներում: Դա կազմակերպության աստվածաշնչյան թվային խորհրդանիշն է (տասներկու ամիս, տասներկու ցեղ կամ տասներկու առաքյալ) կամ Աստծո ժողովրդի: Տես Հատուկ Թեմա: Տասներկու Թիվը, Հայտ. 7:4:

- **«Եւ նորանց վերայ անուններ էին գրուած որ Իսրայէլի որդեանց տասներկու ցեղերի անուններն են»** Հայտ. 7: 5-8-րդ տասներկու ցեղերի ցանկը փոքր-ինչ փոփոխված է՝ ցույց տալու նրանց խորհրդանշական բնույթը: Այստեղ շատ կարևոր է նշել, որ Հին Կտակարանի Աստծո ժողովուրդը, որը նկարագրվում է որպես դարպասներ Հայտ. 21:12-ում, միավորված է Նոր Կտակարանի Աստծո ժողովրդի հետ, որը նկարագրված է որպես հիմքի քարեր, Հայտ. 21:14-ում: Միշտ եղել է Աստծո միայն մեկ ժողովուրդ, բայց այս խորհուրդը հստակ չի բացահայտվել մինչև ավետարանը (տես Եփ. 2: 11-3: 13):

21:14 «Եւ քաղաքի պարիսպը տասներկու հիմեր ունէր, եւ նորանց վերայ Գառի տասներկու առաքեալների տասներկու անունները» Այս բոլոր փոխաբերությունները վերաբերում են Եզեկիելի վերջին ժամանակի տաճարին (տես Եզ.40-48):

Շատ մեկնաբաններ պնդել են, որ այս համարը ցույց է տալիս, որ հեղինակը չի կարող Հովհաննես Առաքյալը լինել: Այնուամենայնիվ, Պողոսը նման արտահայտություն է օգտագործում Եփ. 2:20:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 21:15-21

¹⁵Եւ ինձ հետ խօսողը մի ոսկի եղեգ ունէր, որ չ'ափէր քաղաքը, եւ նորա դռները, եւ նորա պարիսպը. ¹⁶Եւ քաղաքը քառակուսի էր. Եւ նորա երկայնութիւնն այնչափ է որչափ նորա լայնութիւնը, եւ չափեց քաղաքը եղեգովը, եւ նորա չափը տասներկու հազար ասպարեգ, նորա երկայնութիւնը եւ լայնութիւնը եւ բարձրութիւնը հաւասար է: ¹⁷Եւ նորա պարիսպը չափեց հարիւր քառասուն եւ չորս կանգուն. Մարդի չափով որ հրեշտակինն է: ¹⁸Եւ նորա պարիսպի շինուածքը յասպիս քարից էր. Եւ քաղաքը մաքուր ոսկի էր իստակ ապակու նման: ¹⁹Եւ քաղաքի պարիսպի հիմունքը զարդարուած էին ամեն ազնիւ ակունքներով. Առաջին հիմը յասպիս, երկրորդը շափիղայ, երրորդը քաղկեդոն, չորրորդը զմրուխտ, ²⁰Հինգերորդը եղնզնաքար, վեցերորդը սարդիոն, եօթներորդը ոսկեքար, ութերորդը բիւրեղ, իններորդը տպազիոն, տասներորդը քրիստապրաստս, տասներմկերորդը յակինթ, տասներկուերորդը ամեթովս: ²¹Եւ տասներկու դուռը տասներկու մարգարիտից՝ ամեն մէկ դուռը մէկ մարգարիտից. եւ քաղաքի հրապարակը մաքուր ոսկի ինչպէս թափանցիկ ապակի:

21:15 «Եւ ինձ հետ խօսողը մի ոսկի եղեգ ունէր, որ չ'ափէր քաղաքը» Չափման միջոցներն օգտագործվել են ավելի վաղ Աստծո պաշտպանությունն ու ինսամբը ցույց տալու համար (տես Հայտ. 11: 1-2; Եր. 31: 38-40; Զաք. 2: 1-5): Եզեկիել 40 – ի վերջին ժամանակի մարգարեությունը ներառում է նաև չափումներ:

21:16 «Եւ քաղաքը քառակուսի էր» Սա կարող է ակնարկ լինել Սրբության Սրբոցին (տես 3 Թագ. 6: 19-20), որը նույնպես կատարյալ խորանարդ էր:

Պատճառ, որ տաճար գոյություն չունի (տես Հայտ. 21:22) այն է, որ հենց ինքը Աստված է լինելու տաճարը: Սա կարող է լինել Հովհաննեսի ձևով՝ ցույց տալու, որ Հին Կտակարանի մարգարեությունները ինչպես Եզեկիել 40-48-ը խորհրդանշական են կամ կատարվել են այլ կերպ:

▪ **«տասներկու հազար ասպարեգ»** Բառացիորեն սա «տասներկու հազար ասպարեգ է՝ հարյուր քառասունչորս կանգուն»: Սրանք տասներկուսի բազմապատիկն են. դրանք բառացիորեն չեն վերաբերում քաղաքին, բայց կատարյալ չափումներին, որոնք ցույց են տալիս, որ Աստված յուրահատուկ մթնոլորտ է ապահովում Իր և Իր ժողովրդի միջև մշտական ուրախության և ընկերակցության մեջ (տես Հովհ. 14: 2-3)՝ կատարյալ խորանարդի խորհրդանիշով, ինչպես Հին Կտակարանի «Սրբության Սրբոցը»:

21: 18-20 «պարիսպի շինուածքը» Քարերի այս շարքը հնարավոր է նույնացնել

1. Քահանայապետի եփուղի վրա գտնվող քարերը (տես Ել. 28: 17-20), այնուամենայնիվ, հերթականությունն ու անունները տարբեր են: Սա անսովոր չէր, քանի որ հին քարերի անունները փոխվեցին երկրից երկիր և դարեց դար:
2. Ես. 54: 11-17-ի ոսկեգույն քաղաքը
3. Տյուրոսի (կամ Սատանայի) թագավորի շքեղությունը փոխանցեց թագավորական (կամ երկնային) զարդերը Եզ. 28: 12-13
4. Կենդանակերպը, բայց ներկայացվել է հակառակ կարգով (Ֆիլո և Հովսեփոս)

21:21 «Եւ տասնեւերկու դուռը տասնեւերկու մարգարիտից՝ ամեն մէկ դուռը մէկ մարգարիտից» Սա խորհրդանշական է: Այն վերադարձնում է Թալմուդի «Sanhedrin» 100ա ռաբբիական ավանդույթներին, որտեղ ասվում է, որ քաղաքի վերջնական դարպասները կառուցվելու են 45 ոտնաչափ բարձրությամբ մէկ քարից:

▪ **«Եւ քաղաքի հրապարակը մաքուր ոսկի ինչպէս թափանցիկ ապակի»** Սա խորհրդանշական է: Մենք պետք է գիտակցենք, որ Աստծո քաղաքը պարզապէս մարդկային բժախնդրություն չէ, այլ խորհրդանշում է Աստծո ներկայության անգնահատելի արժեքն ու մաքրությունը:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 21:22-27
22Եւ տաճար չ'տեսայ նորա մէջ, որովհետեւ Տէր Աստուած Ամենակալը եւ Գառն է նորա տաճարը:
23Եւ քաղաքը ոչ արեգակին եւ ոչ լուսնի պէտք չ'ունէր, որ լոյս տան նորա մէջ. Որովհետեւ Աստուծոյ փառքը լուսաւորում էր նորան, եւ նորա ճրագը Գառն էր: **24**Եւ [փրկեալների] ազգերը նորա լոյսովը պիտի գնան. Եւ երկրի թագաւորները իրանց փառքը եւ պատիւը կ'բերեն նորա մէջ: **25**Եւ նորա դռները չեն փակուիլ ցերեկը, որովհետեւ զիջեր չի լինիլ այնտեղ: **26**Եւ ազգերի փառքը եւ պատիւը կ'բերեն նորա մէջ: **27**Եւ բնաւ չի մտնիլ նորա մէջ ոչ մի անմաքրութիւն անող եւ պղծութիւն եւ ստութիւն գործող, բայց միայն նորանք որ Գառնի կեանքի գրքի մէջ գրուած են:

21:22 «Եւ տաճար չ'տեսայ նորա մէջ, որովհետեւ Տէր Աստուած Ամենակալը եւ Գառն է նորա տաճարը» Սա խիստ անսովոր է, երբ համեմատում ես Հայտնության բազմաթիվ հատվածները, որտեղ պատկերված է երկնային տաճար (տես Հայտ. 3:12; 7:15; 11: 1,2,9,19; 14: 15,17; 15: 5,6,8; 16: 1,17): Երկնքում գտնվող տաճարի այս նույն գաղափարը հայտնվում է Եբրայեցի գրքում (տես Հայտ. 8: 2-5; 9: 11,23-24):

▪ **«Տէր Աստուած Ամենակալը»** Ահա Աստծո համար առավել օգտագործված երեք տիտղոսները (3ԱՀՎԵ, *Էլոհիմ և Էլ Շադայ*), որոնք օգտագործվում են համակցված (տես Հայտ. 1: 8; 4: 8; 11:17; 15: 3 16: 7) ցույց տալու համար Գահին նստողի վեհությունը: Ուշադրություն դարձրեք Նրա սերտ կապին Հայտնության 5-ի Գառնան հետ: Նրանք թագավորում են միասին, և գոյություն ունի միայն մէկ գահ (տես Հայտ. 22: 1,3):

21:23 «Եւ քաղաքը ոչ արեգակին եւ ոչ լուսնի պէտք չ'ունէր, որ լոյս տան նորա մէջ. Որովհետեւ Աստուծոյ փառքը լուսաւորում էր նորան, եւ նորա ճրագը Գառն էր» Հոր և Որդու փառքն է ամբողջ լուսավորությունը, որ անհրաժեշտ է (տես Սաղ. 36: 9; Ես. 24:23; 60: 19-20; Զաք. 14: 6-7 և նաև Հայտ. 22: 5): Սա, հավանաբար, աստղային երկրպագությունը կտրականապէս մերժելու միջոց է:

21:24 «ազգերը նորա լոյսովը պիտի գնան. Եւ երկրի թագաւորները իրանց փառքը եւ պատիւը կ'բերեն նորա մէջ» Շատ դժվար է հասկանալ, թե ինչու են «ազգերը» դեռ հիշատակվում Հայտնության այս պոստ-Սպիտակ գահի բաժնում: Դա պարզապէս կարող է Հին Կտակարանյան ակնարկ Սաղ. 72: 10-11; Ես. 49:23; 60: 3,15,16: Դա բառացի չէ, այլ գրական: Այն ներկայացնում է բոլոր ժողովուրդներին բոլոր ցեղերից և ազգերից, որոնք կազմում են Աստծո ժողովուրդը:

21:25 «Եւ նորա դռները չեն փակուիլ ցերեկը, որովհետեւ զիջեր չի լինիլ այնտեղ» Սա ակնարկ է Ես. 60:11 կամ Զաք. 14: 6-7: Աստվածաշնչում խավարի գաղափարը հաճախ փոխաբերություն է չարի համար (տես Մատթ. 6:23; 8:12; 22:13; 25:30): Լույսն ու մույժը հատկապէս կարևոր խորհրդանշական աստվածաբանական հակադրություններ էին Հովհաննեսի համար (տես Հովհ. 1: 4-5, 7-9; 3: 19-21; 8:12; 11: 9-10; 12: 35-36,46; 1 Հովհ. 1: 5-7; 2: 8-11): Դարպասները երբեք չեն փակվում, որոնք խորհրդանշում են բաց լինելը, հասանելիությունը և հարձակման վախը:

21:27 «ոչ մի անմաքրութիւն անող եւ պղծութիւն եւ ստութիւն գործող» Մա ակնարկ է Ես. 52: 1; Եզ. 44: 9; Ջաք. 14:21, որը կարծես թէ գրական տեխնիկական միջոց է, որը ցույց է տալիս Աստծո ժողովրդի և չարի մարդկանց գերագույն տարբերությունը (տես Հայտ. 21:24): Նոր դարաշրջանը բնութագրվում է ավելի թեթև, բաց քաղաքում, լիակատար արդարության քաղաք: Չկա չարը:

▪ **«նորանք որ Գառի կեանքի գրքի մեջ գրուած են»** Այս փոխաբերական արտահայտությունը «կյանքի գիրքը» հանդիպում է նաև Հայտ. 20: 12-15, որտեղ նշված են երկու գրքերի մասին

1. կյանքի գիրքը, որը կազմված է Աստծո ժողովրդի անուններից (տես Ելից 32:32; Մաղ. 69:28; Ես. 4: 3; Դան. 12: 1; Ղուկ. 10:20; Փիլ. 4: 3; Եբր. 12:23; Հայտ. 13: 8; 17: 8; 20:15; 21:27)
2. գործերի կամ հիշատակի գիրքը, որն արձանագրում է և՛ չար, և՛ արդար գործերը (տես Մաղ. 56: 8; 139: 16; Ես. 65: 6; Մաղ. 3:16):

Սրանք Աստծո կատարյալ հիշողության փոխաբերականն են:

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 22

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 22:1-5

¹Եւ ցոյց տուաւ ինձ մի մաքուր գետ, կենդանի ջրի ակնվանու նման փայլուն, որ դուրս էր գալիս Աստուծոյ եւ Գառի աթոռից: ²Եւ նորա հրապարակի միջումը եւ գետի այս կողմին եւ այն կողմին կեանքի ծառ կար, որ տասնեւերկու կերպ պտուղ էր բերում. Ամեն մէկ ամիս տալիս էր իր պտուղը. եւ այն ծառի տերեւը բժշկում էր հեթանոսներին: ³Եւ այլ եւս նզովք բնաւ չի լինիլ. եւ Աստուծոյ եւ Գառի աթոռը նորանում կ'լինի. է եւ նորա ծառաները կ'պաշտեն նորան: ⁴Եւ նորա երեսը կ'տեսնեն, եւ նորա անունը նորանց ճակատների վերայ: ⁵Եւ գիշեր չի լինիլ այնտեղ, եւ ճրագի եւ արեգակի լոյս պէտք չէր նորանց. որովհետեւ Տէր Աստուածը լուսաւորում է նորանց, եւ կ'թագաւորեն յաւիտեանս յաւիտենից:

22: 1 «Եւ ցոյց տուաւ ինձ մի մաքուր գետ» Այստեղ չպետք է լինի որևէ գլխի բաժանում: Աստծո ներկայությունից հոսող գետի գաղափարը ակնարկ է Հին Կտակարանին (տես Մաղ. 46: 4; Եզ. 47: 1-12; Հովել 3:18; Ջաք. 14: 8, հնարավոր է՝ Եղեմը): Ջուրը սովորական փոխաբերություն է, որը վերաբերում է Աստծուն, ով առատորեն ապահովում է Իր ժողովրդի հոգևոր կարիքները (տես Ես. 12: 3; 44: 3; 49:10; Եբ. 2:13; 17:13; Հովի. 4: 10-15; Հայտ. 7:17; 21: 6): Միայն Հովհաննեսն է օգտագործում կյանք (*zoē*) տերմինը՝ հարուցյալ կյանքի համար:

▪ **«ակնվանու նման փայլուն»** Մա խոսում է Աստծո երկնային քաղաքի մաքրության մասին (տես Հայտ. 4: 6):

▪ **«որ դուրս էր գալիս Աստուծոյ եւ Գառի աթոռից»** Գոյություն ունի միայն մեկ գահ (տես Հայտ. 21:22): Մա մարդաբանական լեզու է հին արևելյան արքայական աստյանի պատկերից վերցված: Աստված հավիտենական հոգի է; Նա չի նստում ֆիզիկական գահին: Դա Նրա ինքնիշխան կառավարման փոխաբերությունն է:

22: 2 «գետի այս կողմին եւ այն կողմին կեանքի ծառ կար» Այս նույն ծառը ակնարկվում է Հայտ. 2: 7-ում: Այս ամբողջ տեսիլքը Եզ. 47: 1-12 (այստեղ Հայտ. 22:12): Հրեական ապոկալիպտիկ գրականության մեջ կան բազմաթիվ հիշատակումներ կյանքի գրքի մասին, որը հանդիպում է Ծննդոց 2: 9; 3:22 (տես Ենովք 25: 2; 4 Եզրաս 7:53; 8:52; 2 Ենովք 8: 3): Այն, ինչ Ադամը կորցրեց Աստծուց (ընկերակցություն, գիտություն, հավիտենական կյանք), Աստված այժմ ձրի տալիս է փրկված մարդկությանը (տես Փիլ. 2: 6):

▪ **«որ տասներկու կերպ պտուղ էր բերում»** Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԱՍՆԵՐԿՈՒ ԹԻՎԸ, Հայտ. 7:4

▪ **«եւ այն ծառի տերերը բժշկում էր հեթանոսներին»** Սա շատ անսովոր է, քանի որ բուժման համար ոչինչ չի լինելու այնտեղ: Այնուամենայնիվ, սա կարող է պարզապես մեջբերում լինել Եզ. 47:12-ից; հավանաբար, կրկնվող աստվածաբանական թեման այն է, որ Աստված ցանկանում է, որ բոլորը («ազգերը») փրկվեն (տես Ես. 2: 3-4; 45: 22-25; 60: 3; 66: 18-19; Զաք. 2: 11; 8: 20-23):

22: 3 «Եւ այլ եւս նզովք բնաւ չի լինիլ» Սա ակնարկ է Ծննդ. 3:17-ի և Զաք.14:11: Եկել է նոր դարաշրջանը և Հին Կտակարանի անեծքը (տես Եփ. 2: 15-16; Կող. 2:14) վերցվել է Քրիստոսի մահով (տես Հռ. 8: 18,25; Գաղ. 3:13; Եփ. 2:13,16): Հայտնության գրքում Հայտ. 4: 6-ի բյուրեղյա ծովը խորհրդանշում է Աստծո գերադաս սրբությունը: Մեղավոր մարդկությունը չկարողացավ մոտենալ Աստծուն, բայց այժմ ծովը վերցված է (տես Հայտ. 21:1):

Հնարավոր է, որ տերմինը ներկայացնում է եբրայերեն *charam*, որը նշանակում է ոչնչացված կամ ամբողջությամբ ոչնչացված (տես Զաք. 14:11): Եթե սա Հին Կտակարանյան ակնարկ է, ապա այս համարը վերաբերում է նոր Երուսաղեմի անվտանգությանը և նման կլիներ 1 Պետ. 1: 4-5-ի խոստումներին:

▪ Ուշադրություն դարձրեք այս արտահայտության անսովոր քերականական հատկություններին: Կա մեկ գահ, բայց դրա վրա երկուսն են (այսինքն՝ Աստված և Գառը): Այնուամենայնիվ, ծառաները ծառայում են «Նրան» (եզակի): Սա ներառում է միաստվածության և մարմնավորման խորհուրդը: Մեկ Աստված, բայց նաև աստվածային Մեսիա (և անձնական Սուրբ Հոգին):

22: 4 «Եւ նորա երեսը կ'տեսնեն» Հին Կտակարանում Աստծուն տեսնել նշանակում էր մահ: Մովսեսին թույլ չտվեց տեսնել Աստծո երեսը (տես Ելից 33:20): Աստծուն տեսնելը կամ Աստծո հետ բնակվելը պարզևատրվում է նրանց, ովքեր մաքուր են (տես Սաղ. 11: 7; 16:11; 17:15; 140: 13; Մատթ. 5: 8): Եղեմում նախատեսված առաջին մտերմությունը լիովին վերականգնվել է (տես Սաղ. 42: 1-2):

▪ **«եւ նորա անունը նորանց ճակատների վերայ»** Ինչպես Մատանան է կնքում իր հետևորդներին (տես Հայտ. 13: 1-17; 14: 9; 20: 4), այնպես էլ Աստված է անում Իրեններին (տես Հայտ. 3:12; 7: 3; 14: 1): Դա սեփականության և անվտանգության խորհրդանիշ էր: Տես նշում Հայտ. 7: 2 – ում:

22: 5 «Եւ գիշեր չի լինիլ այնտեղ» (տես Հայտ. 21: 23-25; Ես. 60: 19-20; Զաք. 14: 7):

▪ **«եւ կ'թագաւորեն յաիտեանս յաիտենից»** Ո՞վ է թագավորելու Քրիստոսի հետ հազարամյա թագավորության ժամանակ: Հայտ. 20: 4-5-ը ենթադրում է, որ միայն քրիստոնյաները, ովքեր ապրելու են վերջին հալածանքների ժամանակ, բայց Հայտ. 2:26 և 5:10 ենթադրում են, որ բոլոր սրբերը թագավորելու են Քրիստոսի հետ երկրի վրա: Աստվածաշնչում հստակ տարբերակում չկա հավիտենական թագավորության (տես Դան. 2:44; 7: 14,18; Ես. 9: 7; Ղուկ. 1:33; 2 Պետ. 1:11; Հայտ. 11:15) և հազարամյա թագավորության միջև: Հերմենտիկորեն ճիշտ չէ գլխավոր վարդապետություն հանել ապոկալիպտիկ հատվածից: Այս համարը ենթադրում է հավիտենական թագավորություն:

Աստծու ժողովրդի պատկերը, որոնք փորձառում են չար զավթիչին, ով ամբողջովին ոչնչացված է Աստծո կողմից, վերցված է Եզ. 37-39-ից: Հովհաննեսը երբեք մտադրված չի եղել, որ սա բառացիորեն մեկնաբանվի: Դա ապոկալիպտիկ պատկերները պատմական բառացիության վերածելու հեղինակային մտադրության չարաշահում է: Աստվածաշնչի հանդեպ մեր սերը և ապագայի հանդեպ մեր հետաքրքրասիրությունը պատճառ է դարձել, որ ժամանակակից արևմտյան

եկեղեցին տարօրինակ և լարված ձևերով մեկնաբանի մարգարեությունները և ապոկալիպտիկ գրականությունը: Տես Հատուկ Թեմա: Թագավորել Աստծո Թագավորությունում, Հայտ. 5:10:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 22:6

Յու ասեց ինձ. Այս խօսքերը հաւատարիմ եւ ճշմարիտ են. Եւ Տէրը՝ սուրբ մարգարէից Աստուածն իր հրեշտակն ուղարկեց որ իր ծառաներին ցոյց տայ այն որ շուտով պիտի լինի:

22: 6 «Եւ ասեց ինձ» Սա վերաբերում է հրեշտակներին, ովքեր ունեին դատաստանի յոթ սկավառակները (տես Հայտ. 21: 9; 22: 1,8,9,10):

▪ **«Այս խօսքերը հաւատարիմ եւ ճշմարիտ են»** Այս արտահայտությունն օգտագործվում է՝ նկարագրելու համար

1. Հիսուսին (տես Հայտ. 1: 5; 3: 7,14; 19:11)
2. Հիսուսի հետևորդներին (տես Հայտ. 17:14)
3. Աստծո խոսքը (տես Հայտ. 19: 9; 21: 5; 22: 6)

Հաճախ Աստված նկարագրվում է որպես «արդար և ճշմարիտ» (տես Հայտ. 15: 3; 16: 7; 19: 2): Երբայերենը այս արտահայտության հետևում ենթադրում է լիակատար վստահություն:

▪ **«Եւ Տէրը՝ սուրբ մարգարէից Աստուածն»** Սա հավանաբար.

1. ակնարկ է Հայտ. 19:10-ին
2. մեջբերում Հին Կտակարանի ներշնչանքի մասին (տես 2 Տիմ. 3:16; 2 Պետ. 1: 20-21)
3. մեջբերում Նոր Կտակարանի ներշնչանքի մասին (տես 2 Պետ. 3: 15-16)
4. մեջբերում Հովհաննեսի օրոք ավետարանի քարոզիչների մասին
5. հղում Հովհաննեսի գրքին (տես իրքներ)

Բնագիր հունարեն տեքստերը չունենին մեծատառեր: Հաճախ թարգմանիչները կամ մեկնաբանները պետք է որոշեն «հոգին» վերաբերում է Սուրբ Հոգուն, թե մարդու հոգուն: Այս տեքստը վերաբերում է մարդու հոգուն (տես 1 Կոր. 14:32; Եբր. 12: 9):

▪ **«իր հրեշտակն ուղարկեց»** Սա ակնարկ է Հայտ. 1: 1-ին: Այս վերջին համարները շատ նման են 1-ին գլխի իրենց հիմնական մտքերին: Հայտնություն 1-ում օգտագործված անձնական նամակի ավանդական ձևաչափը կրկին օգտագործվում է Հայտնություն 22-ում:

▪ **«տայ այն որ շուտով պիտի լինի»** Տիրոջ գալստյան մոտ լինելու մասին մի շարք ակնարկներ կան (տես Հայտ. 1: 1,3; 3:11; Հայտ. 22: 6 [երկու անգամ], Հայտ. 22 : 7, 10, 12 և 20): Երկու հազար տարվա ձգձգումը հավատացյալների համար փոքր-ինչ դժվար է հասկանալ (ուշացումը երևում է 2 Թես.), բայց պետք է տեսնել, որ քրիստոնյաների յուրաքանչյուր սերունդ իր օրերում ունի Տիրոջ գալստյան հույսը: Նոր Կտակարանում իսկական լարվածություն կա Տիրոջ ցանկացած պահի վերադառնալու և առաջին անգամ իրականացող ինչ-որ բաների միջև: Հավատացյալները պետք է մնան հավատարիմ և ակտիվ:

Ահա այս թեմայի վերաբերյալ կարճ մեջբերումը Մաթևոսի Ավետարանի իմ մեկնաբանությունից:

«Գոյություն ունի աստվածաբանական պարադոքսալ լարվածություն

1. ցանկացած պահ վերադառնալը (տես Մատթ. 24: 27,44) և այն փաստը, որ պատմության մեջ պետք է տեղի ունենան որոշ իրադարձություններ
2. Թագավորությունը՝ որպես ապագա, և Թագավորությունը՝ որպես ներկա:

Նոր Կտակարանն ասում է, որ որոշ իրադարձություններ են տեղի ունենալու մինչև Երկրորդ Գալուստը:

1. Ավետարանը քարոզվելու է ամբողջ աշխարհին (տես Մատթ. 24:14; Մարկ. 13:10)
2. մեծ հավատուրացությունը (տես Մատթ. 24: 10-13,21; 1 Տիմ. 4: 1; 2 Տիմ. 3: 1; 2 Թեմ. 2: 3)
3. «անօրենության մարդու» հայտնվելը (տես Դան. 7: 23-26; 9: 24-27; 2 Թեմ. 2: 3)
4. խափանողի վերցվելը (տես 2 Թեմ. 2: 6-7)
5. Հրեաների արթնությունը (տես Ջաք. 12:10; Հռ.11) »

Նրանք, ովքեր հավատում են, որ գրքի յոթ գրական բաժինների միջև զգալի գուգահեռականություն կա, նաև պնդում են, որ դրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է Քրիստոսի առաջին և երկրորդ գալուստների միջև ընկած ժամանակահատվածը տարբեր տեսանկյուններից (օրինակ William Hendriksen, *More Than Conquerors*): Եթե սա ճշմարիտ է, ապա տեքստերը, որոնք վերաբերում են Քրիստոսի մոտալուտ գալստյանը (տես Հայտն. 1: 3; 3:11; 22: 7,10,12,20), վերաբերում են մահվան և հարությունից հետո այս մարգարեությունների նախաձեռմանը: Քրիստոսի: Վախճանաբանական գնդակը պտտվում է:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 22:7

7Ահա շուտով գալիս եմ. երանի նորան որ այս գրքի մարգարեության խօսքերը պահում է:

22: 7 «Ահա շուտով գալիս եմ» Երևում է, որ հրեշտակը մեջբերում է Հիսուսին (տես Հայտ. 22: 12-15): Այս մասին մասնավորապես ասում է Հիսուսը՝ Հայտ. 22: 16-ում: Իրականում ով խոսում է Հայտ. 22:17-ում և Հայտ. 22: 18-19-ում, անորոշ է, բայց Հիսուսը կրկին խոսում է Հայտ. 22: 20-ում, իսկ Հովհ. Հայտ. 22: 21-ում: Տես Հատուկ Թեմա: Մոտ Վերադարձը, Հայտ.1:3

- **«երանի նորան»** Սա ևս յոթ օրհնություններից է հավատացյալների համար, որոնք հանդիպում են ամբողջ գրքում (տես Հայտ. 1: 3; 14:13; 16:15; 19: 9; 20: 6; 22: 7,14):
- **«մարգարեության»** Այս գիրքը մարգարեություն է, և այն պետք է մեկնաբանվի մարգարեական գրականության լույսի ներքո (տես Հայտ. 22: 9-10,18-19; 1: 3; 10:11): Այս գիրքը պատմական պատմվածք չէ: Մարգարեությունը միշտ ունի պայմանական տարր: Նոր Կտակարանի վախճանաբանական հատվածները արտացոլում են Հին Կտակարանի մարգարեական պատկերացումները, որոնք նայում էին վերջին ժամանակին ժամանակակից դեպքերի և հավատքի արձագանքների միջոցով: Շատ աստվածաբան գիտնականներ կարծում են, որ ապոկալիպտիկ ժանրը դուրս է եկել հրեական մարգարեությունից:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 22:8-9

8Եւ ես Յովհաննէսս՝ այս բաները լսող եւ տեսնողս, երբոր լսեցի եւ տեսայ, ընկայ որ երկրպագեմ այն հրեշտակի ոտների առաջին, որ այս բաները ցոյց էր տալիս ինձ: 9Եւ նա ինձ ասեց. Ջգուշացիր. Մի անիր. Որովհետեւ ես ծառայակից եմ քեզ եւ քո եղբայր մարգարէների եւ այս գրքի մարգարեության խօսքերը պահողների. Աստուծուն երկրպագիր:

22: 8 Սա շատ անսովոր համար է: Սա է ստույգ խնդիրը, որն ուներ Հովհաննէսը Հայտ. 19:10-ում: Ըստ երևույթին, նա պետք է մտածեր, որ այս հրեշտակը աստվածային էր:

22: 9 «եւ այս գրքի մարգարեության խօսքերը պահողների» Քրիստոնեությունը պահանջում է ապաշխարության, հավատքի և շարունակական ապաշխարության, հավատքի, հնազանդության և հաստատակամության նախնական որոշում: Հայտնությունը, որը գրվել է հետապնդվող քրիստոնյաների համար, ընդգծում է համբերությունը: Այսօր մեր մշակույթի գայթակղությունն ոչ թե ֆիզիկական հալածանքն է, այլ «չոր հոտը», անտարբերությունը, գործնական այթեիզմը,

նյութապաշտությունը, մակերեսային քրիստոնեությունը՝ բոլոր առավելություններով և ոչ մի պատասխանատվությամբ:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 22:10-11

¹⁰Եւ ասեց ինձ. Մի կնքիր այս գրքի մարգարէութեան խօսքերը. որովհետեւ ժամանակը մօտ է:
¹¹Անիրաւութիւն գործողը թող էլ անիրաւանայ, եւ կեղտոտը թող էլ կեղտոտուի, եւ արդարը թող էլ արդարանայ, եւ սուրբը թող էլ սրբուի:

22:10 «Մի կնքիր» Սա ճիշտ հակառակն է Ես. 8:16; Դան. 8:26 և 12: 4,9: Մարգարէության իրականացման ժամանակը հասել է: Աստծու նախագգուշացումները անհավատներին և քաջալերանքը հավատացյալներին հիմա է: Որոշիչ որոշում կայացնելը պահանջվում է հիմա: Թագավորությունը ներկա է:

- «ժամանակը մօտ է» Տես Հատուկ Թեմա: Վերադարձը մոտ է, Հայտ.1:3:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 22:12-13

¹²Եւ անհա շուտով գալիս եմ եւ իմ վարձքն ինձ հետ, որ ամեն մէկին կ'հատուցանեմ ինչպէս իր գործը կ'լինի: ¹³Ես եմ Այֆան եւ Օմեդան. Սկիզբը եւ վերջը, առաջինը եւ վերջինը:

22:11-12 «որ ամեն մէկին կ'հատուցանեմ ինչպէս իր գործը կ'լինի» Սա կրկնվող թեմա է ամբողջ Աստվածաշնչում (տես Հոբ 34: 11,25; Սաղ. 28: 4; 62:12; Առ. 12:14; 24:12; Ժող. 12:14; Եր. 17:10; 32:19; Եզ. 33:20; Մատթ. 16:27; 25: 31-46; Հռ. 2: 6; 14:12; 1 Կոր. 3: 8; 2 Կոր. 5:10; Գաղ. 6: 7-10; 2 Տիմ.4: 14; 1 Պետ. 1:17; Հայտ. 2:23; 20:12): Աստված վարձատրելու է նրանց, ովքեր սիրում են Իրեն և ապրում են Իր համար՝ այս ընկած աշխարհի համակարգի մեջ (տես 2:23; 20: 12-13): Կյանքերը բացահայտում են ներքին հավատքի հոգևոր իրականությունն ու կենսունակությունը (տես Մատթ. 7): Մարդիկ կյանքի պարզևի տնտեսներն են և հաշիվ են տալու Աստծուն:

Սա չի նշանակում «գործեր-արդարություն»: Մարդկությունը փրկագնվել է Աստծո շնորհքով Քրիստոսի մահվան և հարության միջոցով և Սուրբ Հոգու ներգործությամբ: Այնուամենայնիվ, այն ապացույցը, որ մեկը հանդիպել է Աստծուն, քրիստոսանմանության փոփոխված և փոփոխվող կյանքն է: Ինչ-որ մեկի առաջնահերթությունները և ռեսուրսների բաշխումը բացահայտում է սիրտը:

22:11 Սա ակնարկ է Դան. 12:10.

22:12 «Եւ անհա շուտով գալիս եմ» Տես Հատուկ Թեմա Հայտ.1:3

22:13 Այս համարը ակնարկ է ՅԱՀՎԵԻ Հին Կտակարանյան անունների համար, որը հանդիպում է Հայտ. 1: 8-ում և 21: 6-ում, բայց այստեղ այն վերաբերում է Քրիստոսին: Այս Հին Կտակարանյան անունները Հիսուսին վերագրելը մի ձև էր, որը Նոր Կտակարանի հեղինակները հաստատեցին Նրա աստվածությունը: 13-րդ համարն ունի երեք այդպիսի Հին Կտակարանյան տիտղոսներ կամ արտահայտություններ, որոնք ի սկզբանե նկարագրում էին հավիտենական Աստծուն (տես Ես. 41: 4; 44: 6; 48:12), բայց այժմ դրանք օգտագործվում են Հիսուսի համար (տես Հայտ. 1:17; 2: 8):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 22:14-15

¹⁴Երանելի են նորա պատուիրանքները պահողները. որ նորանցը կ'լինի իշխանութիւնը կեանքի ծառի վերայ, եւ քաղաքի դռնովը ներս կ'մտնեն: ¹⁵Բայց դուրսն են շները եւ կախարդները եւ պոռնիկները եւ սպանողները եւ կռապաշտները. Եւ ամեն ստույթիւն սիրողն ու գործողը:

22:14 «Երանելի են» Սա Հայտնության գրքում հանդիպող հավատացյալներ յոթ օրհնություններից վերջինն է (տես Հայտ. 1: 3; 14:13; 16:15; 19: 9; 20: 6; 22: 7,14):

▪ **«նորա պատուիրանքները պահողները»** Սա փոխաբերություն է՝ Քրիստոսի քավությանն ապավինելու համար (տես Հայտ. 7:14): Հավատացյալներն ընդունված են, քանի որ Նա ընդունվեց (տես Եփ. 1: 6): Հավատացյալներն ապրում են, քանի որ Նա մահացավ: Հավատացյալներն ունեն հարության կյանք, քանի որ Նա ապրում է:

Այս արտահայտության մեջ կա հունարեն ձեռագիր տարբերակ:

1. «վճարում են իրենց հագուստները» MSS x (չորրորդ դար) և A (հինգերորդ դար), ինչպես նաև Վուլգատում է: UBS⁴-ը տալիս է «A» վարկանիշ, ինչը նշանակում է «որոշակի»:
2. «պահում են պատուիրանքները» -ը 046-ում է, տասներորդ դարից երկաթագիր MS, տասներկուերորդ դարից՝ MSS- ի փոքրատառ (1-ը և 94-ը), և Peshitta (սիրիական) վարկածը:

▪ **«որ նորանցը կ'լինի իշխանութիւնը կեանքի ծառի վերայ, եւ քաղաքի դռնովը ներս կ'մտնեն»** Սրանք երկու փոխաբերություններ են՝ Քրիստոսի միջոցով հավիտենական փրկության համար: Մեկը ցույց է տալիս Օննդոց 2: 9; 3:22 (տես Հայտ. 2: 7; 22: 2,14,19), իսկ մյուսը՝ Հայտ. 21: 2,9-22: 5:

22:15 «դուրսն են» Սա շատ դժվար է մեկնաբանել, քանի դեռ այն փոխաբերություն չէ կրակե լճի համար (տես Հայտ. 21: 8):

▪ **«շները»** Սա ևս մեկ տարօրինակ ակնարկ է, քանի որ գրքում այս պահին չար մարդիկ չպետք է լինեն: 2 Օր. 23:18 այս տերմինը վերաբերում է քանանացի պտղաբերության պաշտամունքի տղամարդ մարմնավաճառներին: Հին և Նոր Կտակարանների մյուս մասերում այն վերաբերում է ամբարիշտ մարդկանց (տես Մաղ. 22: 16,20; Մատթ. 7: 6; Փիլ. 3: 2): Ներկայացնում Ռոբերտ Հ. Սյունսին այս պահին Նոր Միջագային Սերիայի «Հայտնություն» թեմայով իր մեկնաբանությունից.
«Համարը մտադրություն չունի սովորեցնել, որ հավիտենականության մեջ ամբարիշտ մարդիկ ապրելու են երկնային քաղաքի սահմաններից դուրս: Հակադրությունը հավատացյալների օրհնության և ամբարիշտների վախճանի միջև է» (էջ 394):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 22:16

16Ես Յիսուսս իմ հրեշտակն ուղարկեցի, որ վկայէ ձեզ այս բաները եկեղեցիների մասին. ես եմ Դաւիթի արմատը եւ սերունդը եւ առաւօտեան պայծառ աստղը:

22:16 «Ես Յիսուսս իմ հրեշտակն ուղարկեցի, որ վկայէ ձեզ այս բաները եկեղեցիների մասին» Ուշադրություն դարձրեք, որ «ձեզ» տերմինը հոգնակի է, և Հայտ. 2-3- ի յոթ եկեղեցիների ակնարկը շատ կոնկրետ է: Գիրքը սկսվում և ավարտվում է նամակի ժանրով, մինչդեռ տեսիլքները մարգարեության (վերջը, որին նայում է ներկայի ակնոցի միջով) և ապոկալիպտիկի համադրություն են (երևակայական պատկերներ):

▪ **«իմ հրեշտակն»** Հաճախ ուղարկողը Հայր Աստվածն է (տես Հայտ. 22: 6, «Նրա հրեշտակը»): Այստեղ ուղարկողը Հիսուսն է («Իմ հրեշտակը»): Այս արտահայտությունը հանդիպում է նաև Հայտ. 1: 1-ում, բայց դերանվանը նախորդողը երկիմաստ է:

▪ **«եկեղեցիների»** Տես Հատուկ Թեմա Հայտ. 1:4:

- «Ես եմ Դավիթի արմատը եւ սերունդը» Հին Կտակարանում Մեսիայի Դավիթի սերնդից լինելու բազմաթիվ ակնարկներ կան (տես 2 Թագ. 7: 12-16 եւ Ես. 11: 1,10) եւ Նոր Կտակարանում (տես Մատթ. 1: 1; 9:17; 15:22; 21: 9; Հռ. 1: 3; 2 Տիմ. 2: 8; Հայտ. 5: 5): Հիսուսը Հին Կտակարանի բոլոր մարգարեությունների իրականացումն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ
SPECIAL TOPIC: JESUS THE NAZARENE

Գոյություն ունեն մի քանի հունարեն տերմիններ, որոնք Նոր Կտակարանը կիրառում է Հիսուսի մասին խոսելիս:

- Ա. Նոր Կտակարանի տերմինները
1. Նազարեթ քաղաք Գալիլիայում (տես Ղուկ.1:26; 2:4,39,51; 4:16; Գործք 10:38): Այս քաղաքը ժամանակակից աղբյուրներում չի նշվում, սակայն գտնվել է ավելի ուշ արձանագրություններում: Այն, որ Հիսուսը Նազարեթից էր, հաճոյախոսություն չէր (տես Հովհ.1:46). Հիսուսի իսաչի վրա փակցված ցուցանակը, որի վրա գրված էր այս տեղանքի անունը՝ հրեական արհամարհանքի նշան էր :
 2. *Nazarēnos* – թվում է, որ նույնպես վերաբերում է աշխարհագրական տեղանքի (տես Ղուկ. 4:34; 24:19):
 3. *Nazōraios* – հնարավոր է վերաբերում է քաղաքի, սակայն կարող է նաև լինել «Ընձյուղ» տերմինի եբրայերեն Մեսիական բառախաղ (*netzer*, BDB 666 [և դրա հետ կապված 67 տերմինները]), տես Ես. 4:2; 11:1; 53:2; Եր. 23:5 [BDB 855]; 33:15; Ջաք. 3:8; 6:12; Նոր Կտակարանում Հայտ. 22:16): Ղուկասը այս բառը օգտագործում է Հիսուսի համար 18:37 2:22, 3:6; 4:10; 6:14; 22:8; 24:5; 26:9:
 4. Կապված #3-ի հետ՝ *nāzir* (BDB 634), որը նշանակում է «ուխտի միջոցով նվիրաբերված մեկը»:
- Բ. Նոր Կտակարանից դուրս պատմական կիրառությունները:
1. Այն մատնանշում էր հրեական (նախաքրիստոնեական) հերետիկոսների խմբի (արամերեն *nāsōrayyā*):
 2. Այն կիրառվում էր Քրիստոնեական շրջանակներում՝ նկարագրելու Քրիստոսին հավատացողներին (տես Գործք 24:5,14; 28:22, *nosri*):
 3. Այն դարձավ սովորական տերմին, որը մատնանշում էր սիրիական (արամերեն լեզվով խոսող) եկեղեցիների հավատացյալներին: «Քրիստոնյա» բառը կիրառվում էր հունական եկեղեցիներում, որը մատնանշում էր հավատացյալներին:
 4. Երուսաղեմի անկումից որոշ ժամանակ անց Ջամնիայում Փարիսեցիները վերակազմավորվեցին և եկեղեցու ու ժողովարանների միջև հրահրեցին պաշտոնական բաժանում: Քրիստոնյաների դեմ մի տեսակ նզովքի բանաձևի օրինակ է գտնվել «Տասնութերորդ Օրհներգ»-ի խոսքերում՝ Berakoth 28b-29a, որը հավատացյալներին կոչում է «Նազովրեցիներ»։ «Թող որ Նազովրեցիները և հերետիկոսները անհետանան մի ակնթարթում. նրանք կջնջվեն կյանքի գրքից և չեն գրվի հավատարիմների հետ»:
 5. Այն կիրառվել է Justin Martyr-ի կողմից, *Dial.* 126:1, որը օգտագործում է Եսայի (Ես. 11:1) մարգարեի Հիսուսի համար կիրառած *netzer* բառը:
- Գ. Հեղինակի կարծիքը
- Ինձ զարմացնում է այս տերմինի այսքան տարբեր հեզումները, չնայած գիտեմ, որ սա նորություն չէ Հին Կտակարանում, ինչպես օրինակ «Հետու» անունը եբրայերենում ունի մի քանի տարբեր հեզումներ: Հետևյալ կետերը պատճառ են հանդիսանում, որպեսզի կասկածեմ այս բառի ստույգ նշանակության հարցում.

1. Մեսիական «Շնձյուղ» (*netzer*) բառի սերտ կապի կամ նմանատիպ *nāzir* (ուխտի միջոցով նվիրաբերված) տերմինի
2. Գալիլիա բառի բացասական լրացուցիչ իմաստը
3. Գալիլիայում Նազարեթ քաղաքի մասին քիչ կամ ընդհանրապես բացակայող ժամանակակից փաստարկներ
4. Այն, որ արտաբերվում է մի դևի բերանով՝ վախճանաբանական նշանակությամբ (վերջին ժամանակների վերաբերյալ. այսինքն՝ «Դու եկել ես կործանելու մեզ»): Այս բառի վերաբերյալ լիարժեք մատենագրական ուսումնասիրության համար նայեք Colin Brown (Խմբ.) *New International Dictionary of New Testament Theology* կամ E. Brown *Birth* (Քոլին Բրաուն՝ Նոր Կտակարանի Աստվածաբանության Նոր Միջազգային Բառարան, հատոր 2, էջ 346 կամ է. Բրաուն՝ Մեսիայի Ծնունդը, էջ 209—213, 223-225):

▪ **«առաւօտեան պայծառ աստղը»** Սա Մեսիական տիտղոս է (տես Թվոց 24:17 կամ Մատթ. 2: 2 կամ 2 Պետ. 1:19): Սա կարող է լինել բառախաղ Ես. 14:12, որտեղ նման արտահայտությունը վերաբերում էր սատանային: Հայտնության մեջ չարը հաճախ Սուրբ Երրորդության նմանակողն է:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 22:17
 17Եւ Հոգին եւ հարսն ասում են. Եկ. Եւ լսողն ասէ, Եկ. եւ նա որ ծարաւ է՝ թող գայ, եւ նա որ կամենում է՝ թող առնէ կեանքի ջուրը ձրի:

22:17 «Եւ Հոգին եւ հարսն ասում են. Եկ» Չնայած այս հատվածի տարբեր մեկնաբանություններ կան, կոնտեքստից երևում է, որ սա պետք է լինի ավետարանական հրավեր բոլոր նրանց համար, ովքեր զգում են կարիքը և կպատասխանեն Քրիստոսին ունենալու Աստծո առաջարկին: Սա շարունակել է մնալ «Հայտնություն» գրքի կենտրոնը, ոչ միայն խրախուսել փրկվածներին, այլ նաև համոզել և խրախուսել կորածներին՝ արձագանքելու Իր Որդուն ընդունելու Աստծո ձրի առաջարկին: «Եկ» բառի կրկնվող օգտագործումը (բոլորը վերաբերում են կորածին և ոչ թե Քրիստոսի երկրորդ գալստյանը); «նա, ով» պարբերաբար օգտագործումը; և հիանալի բարի լուրը, որ այն առանց գումարի է (տես Ես. 55), պետք է քաջալերանք լինի բոլորի և յուրաքանչյուրի համար՝ արձագանքելու: Ինձ թվում է սա հիշողություն է նրանց համար, ովքեր ապրում էին Հովհաննեսի օրերում (և ամեն օր): Սա կարող է բացատրել Հայտնություն 19-22-ի անսովոր տարրերը (Դատաստանից հետո կորվածի ներկայությունը): Հովհաննեսի օրերի մի քանի հիշողություններ կան, որոնք կարող են բացատրվել Հայտնության յոթ գրական բաժինների զուգահեռականության միջոցով: Նա իր «սիրելի զավակների» հետ գրեց Եփեսոսում մտքում (տես 1, 2 և 3 Հովհաննես):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ
SPECIAL TOPIC: THE TRINITY
 Ծանոթացեք Երրորդության բոլոր երեք անձանց գործունեությանը միասնական կոնտեքստներում: «Երրորդություն» տերմինը առաջինը առաջ քաշվեց Տերտուլիանոսի կողմից, այն աստվածաշնչյան բառ չէ, բայց գաղափարը տարածված է:

Ա. Ավետարանները

1. Մատթ. 3: 16-17; 28:19 (և զուգահեռներ)
2. Հովհ. 14:26

Բ. Գործք - Գործք 2: 32-33, 38-39

Գ. Պողոս

1. Հռ. 1: 4-5; 5: 1,5; 8: 1-4,8-10
2. 1 Կոր. 2: 8-10; 12: 4-6
3. 2 Կոր. 1: 21-22; 13:14

4. Գաղ. 4: 4-6
5. Եփ. 1: 3-14,17; 2:18; 3: 14-17; 4: 4-6
6. 1 Թեա. 1: 2-5
7. 2 Թեա. 2:13
8. Տիտոս 3:4-6

Դ. Պետրոս - 1 Պետ. 1: 2

Ե. Հուդա - հհ. 20-21

Աստծո հոգնակիության ակնարկը Հին Կտակարանում:

Ա. ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎԸ Աստծո համար

1. *Elohim* անունը ՀՈԳՆԱԿԻ է (տես Հատուկ Թեմա: Աստծո Անունները), բայց երբ օգտագործվում է Աստծո համար, այն միշտ ունի ԵԶԱԿԻ ԲԱՅ
2. «Մեր» Ծննդոց 1:26-27; 3:22; 11: 7

Բ. «Տիրոջ հրեշտակը» (տես Հատուկ Թեմա: Տիրոջ Հրեշտակը) Աստծո տեսանելի ներկայացուցիչն էր

1. Ծննդ. 16:7-13; 22:11-15; 31: 11,13; 48: 15-16
2. Ելից 3: 2,4; 13:21; 14:19
3. Դատ. 2: 1; 6: 22-23; 13: 3-22
4. Զաք. 3: 1-2

Գ. Աստված և Իր Հոգին առանձին են, Ծննդ. 1:1; Սաղ. 104: 30; Ես. 63: 9-11; Եզ. 37: 13-14

Դ. Աստված (ՅԱՀՎԵ) և Մեսիան (Ադոնայ) առանձին են, Սաղ. 45: 6-7; 110: 1; Զաք. 2: 8-11; 10: 9-12

Ե. Մեսիան և Հոգին առանձին են, Զաք. 12:10

Զ. Բոլոր երեքը նշված են Ես. 48:16; 61: 1

Հիսուսի աստվածությունը և Հոգու անձնավորությունը խնդիրներ են առաջացրել խիստ մոնոթեիստիկ/միաստվածություն (տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ), առաջին հավատացյալների մոտ:

1. Տերտուլիանոսը -Որդուն ենթարկեց Հորը
2. Օրիգենը - ենթարկեցնում է Որդու և Հոգու աստվածային էությանը
3. Արիոսը - հերքեց Որդու և Հոգու աստվածությունը
4. Մոնարխիզմը- հավատում էր մեկ Աստծո հաջորդական ժամանակագրական դրսևորմանը `որպես Հայր, ապա Որդի, և ապա Հոգի

Երրորդությունը պատմականորեն զարգացած ձևակերպումն է՝ տեղեկացված աստվածաշնչյան նյութով:

1. Հիսուսի լիակատար աստվածությունը հավասար է Հոր հետ և որն էլ հաստատվել է 325 թ. Նիկիայի ժողովի ժամանակ (տես Հովհ. 1: 1; Փիլ. 2: 6; Տիտոս 2:13)
2. Հոգու լիակատար անձ և Աստված լինելը հավասար է Հորն ու Որդուն, որն էլ հաստատվել է Կ. Պոլսի ժողովում 381թ.
3. Երրորդության վարդապետությունը ամբողջությամբ արտահայտվում է Օգոստինոսի *De Trinitate* –ի աշխատության մեջ

Այստեղ իսկապես խորհուրդ կա: Սակայն Նոր Կտակարանը հաստատում է մեկ աստվածային էությունը (մոնոթեիզմ) երեք հավիտենական անձնական դրսևորումներով (Հայր, Որդի և Հոգի):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 22:18-19

¹⁸Որովհետև ես վկայում եմ ամենին որ լսում է այս գրքի մարգարեության խօսքերը. եթե մեկը բան աւելացնէ սորանց վերայ, Աստուած կ'աւելացնէ նորա վերայ այն պատուհասները որ այս գրքումը գրուած են: ¹⁹Եւ եթէ մէկն այս գրքի մարգարեության խօսքերիցը բան պակասեցնէ, Աստուած

կ'պակասեցնէ նորա բաժինը կեանքի գրքիցը, եւ սուրբ քաղաքիցը, եւ այս գրքում գրուածները:

22: 18-19 Այս համարները ակնհայտորեն առնչվում են պատգամի առաջին լսողներին, ինչպէս նաև այս գրքի բոլոր ապագա ընթերցողներին / լսողներին: Հին Կտակարանի գրական պրակտիկայում ընդունված է խիստ նախազգուշացումներ ուղղել նրանց, ովքեր կփորձեն կեղծել Աստծո խոսքը (տես 2 Օր. 4: 2; 12:32): Սա նախատեսված չէր բառացիորեն ընդունելու համար, բայց դա շատ ուժեղ արևելյան գերազնահատում է՝ Աստծո պատգամը փոփոխելու լրջության մասին: Սա չի վերաբերում հավատացյալ թարգմանիչներին կամ դպիրներին, ովքեր ջանասիրաբար աղոթում են և փնտրում Աստծո կամքը, բայց ըստ Իրենաուսի իր *Contra-Heresies* 30:12-ի, դա վերաբերում էր սուտ ուսուցիչներին, որոնք ավելացնում, փոփոխում կամ ջնջում են Սուրբ Գրքի խոսքերը, որը այս հատվածի հարվածն է: Հիշեք, որ մենք չենք կարող մեկ համարով ապացուցել տեքստը՝ ստեղծելով վարդապետություն, որը հակասում է Սուրբ Գրքի մյուս պարզ ուսմունքներին:

- **«Էթէ ... էթէ»** Սրանք երկուսն էլ երրորդ կարգի պայմանական նախադասություններ են, որոնք նշանակում են հնարավոր գործողություններ:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 22:20

²⁰Այս բաներին վկայողը ասում է. Այո. եւ շուտով գալիս եմ: Ամէն: Եկ, Տէր Յիսուս:

22:20 «Եւ շուտով գալիս եմ» Վերջին ժամանակներում, Աստծո դատաստանի գալը հրեական և քրիստոնեական ապոկալիպտիկ գրականության բնութագրերն են: Այս նույն թեման երևում է Մատթ. 13: 34-36; 24:43; 25: 1-13; Դուկ. 12:29; 1 Թես. 5: 2,4; 2 Պետ. 3:10: 2000 տարվա ձգձգման ֆոնին դա պետք է հասկանալ էքզիստենցիալ, այլ ոչ թե ժամանակավոր ձևով: Նա գալիս է: Ապրեք պատրաստ: Տես Հատուկ Թեմա Հայտ. 1:3:

- **«Եկ, Տէր Յիսուս»** «Եկ» -ը արամերեն է, *Maranatha* (տես 1 Կոր. 16:22): Հնարավոր է մեկնաբանել մի քանի ձևով.
 1. Էթէ *maranatha*, ապա «մեր Տերը եկել է»
 2. *marana tha*, ապա «մեր Տեր, արի»:Թիվ 1-ը լավագույնս է համապատասխանում այս կոնտեքստին: *Didache* 10:6-ից սովորում ենք, որ սա Հովհաննեսի օրոք Տիրոջ ընթրիքի պատարագի փակումն էր:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԱՐԱՆԱԹԱ
SPECIAL TOPIC: MARANATHA**

Սա արամերեն արտահայտություն է, որն արտացոլում է վաղ պաղեստինյան եկեղեցու աստվածաբանական պաշտամունքային հաստատումը, 1) Հիսուսի աստվածությունը (Մաղմոս 110) կամ (2) Հիսուսի Երկրորդ Գալուստը (Գործք 3: 19-21): Դրա իմաստը կախված է նրանից, թե մարդն ինչպէս է բաժանում տվյալ բառը:

1. «Մեր Տեր, է՛կ» (այսինքն, մարանա-թա), նման է հրամայական արտահայտության իմաստին Հայտ. 22:20: Հետևաբար թարգմանությունների մեծ մասը ենթադրում է այդ իմաստը 1 Կոր. 16:22: Եթե այդպէս է, ապա դա կլինի աղոթք Հիսուսի վերադարձի համար:
2. «Մեր Տերը եկել է» (այսինքն, մարան-աթա) կլինի արամերեն ՎԱՂԱԿԱՏԱՐ: Սա այն թարգմանությունն է, որը նախընտրում է Ոսկեբերանը (345-407թթ.), որը խոսում է Հիսուսի մարմին ստանալու մասին:
3. «Մեր Տերը գալիս է», որը արտացոլում էր եբրայական ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ, որը շատերի կողմից օգտագործվում է քրիստոնեական ծառայության համար շարժառիթ դարձնելու համար: Երկրորդ Գալուստը միշտ էլ քաջալերանք է եղել հավատացյալների

համար յուրաքանչյուր ժամանակաշրջանում:

4. Դիդարիեն (գրված երկրորդ կամ առաջին դարի վերջում) 10: 6-ում օգտագործում է այս նույն արտահայտությունը Տիրոջ Ընթրիքի կոնտեքստում, որտեղ Հիսուսի ներկայությունը և գալիք վախճանաբանական գալուստր երկուսն էլ ընդգծված են աղոթքներում:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Հայտնություն 22:21

²¹Մեր Տեր Յիսուս Քրիստոսի շնորհքը լինի ձեր ամենի հետ: Ամէն:

22:21 Ուշադրություն դարձրեք, որ «Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը» լինելով Իր ժողովրդի հետ եզրափակիչ ճշմարտությունն է, որը ներկայացնում է հավածվող քրիստոնյաների դարաշրջանը և քրիստոնյաների յուրաքանչյուր սերնդի հույս է:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին է առաջնությունը համարվում մեկնաբանության մեջ: Պետք չէ դա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնեն ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածողության համար, ոչ թե վերջնական:

1. Հավատացյալները երկինք են գնալու, թե՞ երկինքն է վերադառնալու մաքրված երկիր:
2. Ինչպե՞ս է Հայտ. 21: 3-ը կապված «Էմմանուել» տերմինի հետ:
3. Ինչո՞ւ նոր Երուսաղեմում չկա տաճար (տես Հայտ. 21:22):
4. Ովքե՞ր են Հայտ. 21:24 – ում նշված մարդիկ:
5. Ինչպե՞ս են հավատացյալները «պահպանում / ուշադրություն դարձնում» այս մարգարեության խոսքերին (տես Հայտ. 22: 7):
6. Եթե սա երկինքն է, ովքեր են քաղաքից դուրս չարերը Հայտ. 22: 15-ում:
7. Ինչո՞ւ է Հայտ. 22:17-ն այդքան կարևոր:
8. Արդյո՞ք Հայտ. 22: 18-19-ը պետք է բառացիորեն ընդունել: Կարո՞ղ է հավատացյալը կորցնել իր փրկությունը, եթե սխալ մեկնաբանի Հայտնությունը:
9. Հայտ. 22-ում երեք անգամ ասվում է. «Ահա գալիս եմ շուտով (տես Հայտ. 22: 7,12,20): Ինչո՞ւ է անցել ավելի քան 2000 տարի:

ՀՈՒՆԱՐԵՆ ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Կոյնե հունարենը, որը հաճախ կոչվում էր հելլենական հունարեն, Միջերկրական աշխարհում ընդունված բարբառն էր՝ Ալեքսանդր Մակեդոնացու աշավանքներից հետո (Ք. Ա. 336-323) մինչև հաջորդ ութ հարյուր տարիների ընթացքում (Ք. Ա. 300- մ. թ. 500): Այն պարզապես պարզեցված, դասական հունարենը չէր, այլ շատ առումներով հունարենի ավելի մի նոր ձև, որը դարձավ հնագույն Մերձավոր Արևելքի և Միջերկրական աշխարհի երկրորդ լեզուն:

Նոր Կտակարանի հունարենը ինչ որ առումով բացառիկ էր, որովհետև այն գործածողների հիմնական լեզուն բացի Ղուկասի և Եբրայեցիներին ուղղված Թղթի հեղինակի, արամերենն էր: Ահա թե ինչու նրանց գրքերում առկա էին արամերենի բարբառային և կառուցվածքային ձևերը: Բացի այդ նրանք կարդում էին և մեջբերում կատարում Սեպտուագինտայից (ՀԿ-ի հունարեն թարգմանությունը), որը նույնպես գրված էր կոյնե հունարենով: Սակայն Սեպտուագինտան նույնպես գրել են հրեա դպիրները, որոնց մայրենին հունարենը չէր:

Սա մեզ հիշեցնում է, որ մենք չենք կարող դիտարկել ՆԿ-ը խիստ քերականական կառուցվածքի տեսանկյունից: Նրա քերականական կառուցվածքը եզակի է, սակայն այն շատ ընդհանրություններ ունի (1) Սեպտուագինտայի հետ, (2) հրեական ստեղծագործությունների հետ, ինչպես օրինակ՝ Ջոզեֆ Ֆլավիոսի գործերն են, ինչպես նաև (3) Եգիպտոսում գտնված պապիրուսների հետ: Ուրեմն ինչպիսի մոտեցում պետք է ունենանք Նոր Կտակարանի քերականական վերլուծությանը:

Կոյնե հունարենի և ՆԿ-յան Կոյնե հունարենի քերականական առանձնահատկություններն անկայուն են: Շատ առումներով այն քերականության պարզեցման ժամանակամիջոցն էր: Նախ և առաջ մենք կառաջնորդվենք համատեքստով: Բառերն իմաստավորվում են միայն համատեքստում, հետևաբար քերականական կառուցվածքը կարելի է միայն հասկանալ (1) ըստ հեղինակի հատուկ ոճի և (2) ըստ հատուկ համատեքստի: Հնարավոր չէ տալ հունարենի ձևերի և կառուցվածքների հստակ և վերջնական սահմանումները:

Կոյնե հունարենը գլխավորապես բայերով հարուստ լեզու է: Հաճախ մեկնության բանալին բայածանցյալների տեսակը և ձևն է: Գլխավոր նախադասությունների մեծամասնությունում բայը դրվում է սկզբում՝ մատնանշելով դրա կարևոր նշանակությունը: Հունարեն բայը վերլուծելիս պետք է նշել երեք կարևոր բան. (1) ժամանակի, սեռի և եղանակի հիմնական շեշտադրությունը (ձևաբանություն), (2) տվյալ բայի հիմնական իմաստը (բառարանագրություն), և (3) համատեքստի էությունն ու զարգացումը (շարահյուսություն):

I. ԺԱՄԱՆԱԿ

Ա. Ժամանակը կամ կերպը ցույց է տալիս բայի հարաբերությունը կատարյալ կամ անկատար գործողությանը: Այն համապատասխանաբար կոչվում է «կատարյալ» և «անկատար» ժամանակ:

1. Կատարյալ ժամանակները կենտրոնանում են գործողության կատարման վրա: Ուրիշ որևէ տեղեկություն չի տրվում, այլ միայն այն, որ որևէ բան է տեղի ունեցել: Ոչինչ չի ասվում գործողության սկզբի, դրա ընթացքի կամ գագաթնակետի մասին:

2. Անկատար ժամանակները կենտրոնանում են գործողության շարունակական ընթացքի վրա: Այն կարող է նկարագրվել իբրև գծային, շարունակական և սաստկացնող:

Բ. Ժամանակները կարող են դասակարգվել համաձայն հեղինակի կողմից գործողության ընթացքի դիտարկման:

1. Այն տեղի ունեցավ = անորոշ կատարյալ

2. Այն տեղի ունեցավ, իսկ հետևանքները դեռ շոշափելի են = կատարյալ
3. Այն տեղի էր ունեցել անցյալում և հետևանքները շոշափելի են, սակայն ոչ հիմա = գերակատար
4. Այն տեղի է ունենում = ներկա
5. Այն տեղի էր ունենում = անկատար
6. Այն տեղի կունենա = ապառնի

Որպես օրինակ, թե ինչպես են այս ժամանակաձևերն օգնում մեկնաբանության մեջ, կվերցնենք «փրկել» տերմինը: Այն կիրառվում էր մի քանի տարբեր ժամանակներով՝ ցույց տալով թե՛ դրա ընթացքը, թե՛ կուլմինացիան:

1. Անորոշ կատարյալ - «փրկված» (տես Հո. 8:24)
2. Կատարյալ - «փրկված են, և հետևանքը շարունակվում է» (տես Եփ.2:5,8)
3. Ներկա - «փրկվում են» (տես 1 Կոր.1:18; 15:2)
4. Ապառնի - «կփրկվեն» (տես Հո. 5:9,10; 10:9)

Գ. Ուշադրություն դարձնելով բայի ժամանակներին, թարգմանիչները փնտրում են պատճառը, որով բնագրի հեղինակը նախընտրել էր իր մտքերն արտահայտելու համար օգտագործել տվյալ ժամանակաձևը: Ստանդարտ «առանց ավելորդությունների» ժամանակաձևը՝ անորոշ կատարյալն էր: Այն սովորական, ոչ կոնկրետ, «աննշան» կամ «ոչնչով չթուլացող» բայի ձև է: Այն կարող է կիրառվել տարբեր կերպերով՝ կախված համատեքստից: Այն պարզապես հաստատում էր, որ ինչ-որ բան էր տեղի ունեցել: Անցյալ ժամանակձևն ընդունում էին միայն սահմանական եղանակով բայերը: Եթե որևէ այլ ժամանակ էր կիրառվում, հեղինակը շեշտադրում էր ավելի կոնկրետ որևէ բան: Բայց ի՞նչ:

1. Կատարյալ ժամանակ. Այն արտահայտում է կատարված գործողություն, որի հետևանքները շոշափելի են: Ինչ-որ առումով դա անորոշ կատարյալի և ներկա ժամանակների գուգորդություն է: Սովորաբար շեշտը դրվում է գործողության շոշափելի հետևանքների կամ ավարտման վրա: Օրինակ՝ Եփ.2:5 և 8 «շնորհքով եք փրկված և շարունակում եք փրկվել»:
2. Գերակատար ժամանակ. այն նման է կատարյալին, սակայն շոշափելի հետևանքներն արդեն վերջացել են: Օրինակ՝ «Պետրոսն էլ դոսան մոտ կանգնած էր» (Հովհ.18:16):
3. Ներկա ժամանակ. Խոսքը վերաբերում է անավարտ կամ անկատար գործողությանը: Սովորաբար շեշտը դրվում է իրադարձության շարունակության վրա: Օրինակ՝ «Ով մնում է Նրա մեջ, մեղք չի գործում» «Ով որ Աստուծոց է ծնված, մեղք չի գործում» (1 Հովհ.3:6 և 9):
4. Անկատար ժամանակ. Այս ժամանակաձևի կապը ներկա ժամանակի հետ ուղիղ համեմատական է կատարյալի և գերակատարի միջև կապին: Անկատարն արտահայտում է անավարտ գործողություն, որը տեղի էր ունեցել, բայց դադարել է ներկա պահին կամ էլ անցյալում գործողության հենց սկզբում: Օրինակ՝ «Այդ ժամանակ նրա մոտ էին գնում Երուսաղեմից» (Մատթ.3:5):
5. Ապառնի ժամանակ. Այն արտահայտում է մի գործողություն, որը տեղի կունենա ապագայում: Շեշտադրում է առավել պոտենցիալ, քան իրական իրողությունը: Այն հաճախ ցույց է տալիս իրադարձության որոշակիությունը: Օրինակ՝ «Երանի... նրանք...» (Մատթ.5:4-9):

II. ՍԵՌ

- Ա. Մեռը ցույց է տալիս բայի գործողության և դրա ենթակայի միջև եղած կապը:
- Բ. Ներգործական սեռը նորմալ, սպասված և չէշտադրված միջոցն է, որը ցույց է տալիս, որ ենթական կատարում է բայի արտահայտած գործողությունը:
- Գ. Կրավորական սեռը նշանակում է, որ ենթական կրում է բայի արտահայտած գործողությունը, որը կատարվել է արտաքին գործող անձի կողմից: Գործողությունը կատարող արտաքին գործող անձին էին մատնանշում հետևյալ նախդիրները և հոլովները հունարեն ՆԿ-ում:
1. Անհատական ուղղակի գործող անձ՝ *hupo* բացառական հոլովով (տես Մատթ.1:22; Գործք 22:30):
 2. Անհատական միջնորդ գործող անձ՝ *dia* բացառական հոլովով (տես Մատթ.1:22):
 3. Անորոշ գործող անձ՝ սովորաբար կիրառվող *en* գործիական հոլովով:
 4. Երբեմն անհատական կամ անորոշ գործող անձ միայն գործիական հոլովով:
- Դ. Չեզոք սեռը նշանակում է, որ ենթական կատարում է բայի արտահայտած գործողությունը, ինչպես նաև ուղղակիորեն ներգրավված է բայի գործողության մեջ: Այն հաճախ կոչվում է անձնական սուր հետաքրքրվածության սեռ: Այս քերականական կառուցվածքը ուժեղացնում է ենթակայի նշանակությունը նախադասության մեջ: Անգլերենում նման քերականական կառուցվածք գոյություն չունի: Հունարենում այն ունի բազմաթիվ նշանակություններ և թարգմանություններ: Այս ձևի մի քանի օրինակներն են՝
1. Անդրադարձ – ենթակայի ուղղակի գործողությունն ինքն իր վրա: Օրինակ՝ «ինքն իրեն կախեց» (Մատթ.27:5):
 2. Ինտենսիվ – ենթական կատարում է գործողությունն ինքն իր համար: Օրինակ՝ «Սատանան ինքն էլ կերպարանափոխվում է լուսի հրեշտակի» (2 Կոր.11:14):
 3. Փոխադարձ – երկու ենթակաների փոխազդեցությունը: Օրինակ՝ «Եվ խորհուրդ արին իրար հետ...» (Մատթ.26:4):

III. ԵՂԱՆԱԿ

- Ա. Կոյնե հունարենն ունի չորս եղանակ: Դրանք ցույց են տալիս բայի կապը իրականության հետ, սակայն համաձայն հեղինակի սեփական տեսանկյան: Եղանակները բաժանվում են երկու մեծ խմբի՝ իրական գործողություն ցույց տվող (սահմանական) և պոտենցիալ գործողություն ցույց տվող (ստորադասական, հրամայական և ըղձական):
- Բ. Սահմանական եղանակը արտահայտում է ստանդարտ եղանակ, որը ցույց է տալիս առնվազն հեղինակի տեսանկյունից տեղի ունեցած գործողություն: Սա միակ հունարեն եղանակն է, որն արտահայտում է որոշակի ժամանակ, եթե անգամ այդ ասպեկտը երկրորդական է:
- Գ. Ստորադասական եղանակն արտահայտում է ապագայում հնարավոր գործողություն: Ինչ-որ մի բան դեռ տեղի չի ունեցել, բայց հնարավորությունները մեծ են, որ տեղի կունենա: Այն շատ ընդհանրություններ ունի ապառնի սահմանականի հետ: Տարբերությունն այն է, որ ստորադասականն արտահայտում է որոշ աստիճանի տարակուսանք: Անգլերենում հաճախ այն արտահայտվում է *could*, *would*, *may* կամ *might* տերմիններով (կարող էր, կկարողանար):

- Դ. Ըղձական եղանակն արտահայտում է ցանկություն, որը տեսականորեն կարող է ի կատար ածվել: Ստորադասականի հետ համեմատած այն դիտարկվում է իրական գործողությունից մի քայլ առաջ: Ըղձական եղանակն արտահայտում է գործողության հնարավորությունը որոշ հանգամանքների ներքո: ՆԿ-ում ըղձական եղանակը հազվադեպ է հանդիպում: Այն շատ հաճախ կիրառվում է Պողոսի հայտնի արտահայտության մեջ՝ «քավ լիցի», որը հանդիպում է ավելի քան տասնհինգ անգամ (տե՛ս Հռ. 3:4,6,31; 6:2,15; 7:7,13; 9:14; 11:1,11; 1 Կոր.6:15; Գաղ.2:17; 3:21; 6:14): Մյուս օրինակներն են՝ Ղուկ.1:38, 20:16; 8:20 և 1 Թե՛ս.3:11:
- Ե. Հրամայական եղանակը ցույց է տալիս հրաման, որի կատարումը հնարավոր է, սակայն շեշտը դրվում է խոսողի մտադրության վրա: Այն հաստատում է միայն կամային հնարավորությունը և պայմանավորված է մեկ այլ անձի ըտրությամբ: Հրամայական եղանակը հատկապես օգտագործվում է աղոթքներում և երրորդ անձի խնդրանքներում: ՆԿ-ում այս հրամաններն ունենին միայն ներկա և անորոշ կատարյալ ժամանակաձևեր:
- Զ. Մի քանի լեզուների քերականության մեջ ածական դերբայները դասակարգվում են որպես առանձին եղանակ: Դրանք շատ են հունարեն ՆԿ-ում և սովորաբար սահմանվում էին որպես բայաձանցյալներ: Դրանք թարգմանվում են գլխավոր առնչվելի բայի հետ միասին: Ածական դերբայները թարգմանելիս հնարավոր էին բազմաթիվ տարբերակներ: Դիտարկվել է լավագույն տարբերակը և հաշվի առնվել Աստվածաշնչյան մի քանի թարգմանություններ: Այս հարցում շատ օգտակար կարող է լինել Բեյքերի Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով ձեռնարկը (The Bible in Twenty Six Translations, Baker):
- Է. Ներգործական սեռի սահմանական եղանակի անորոշ կատարյալն օգտագործվում է որպես գործողության ստանդարտ կամ «աննշան» միջոց իրողությունն արձանագրելու համար: Ցանկացած այլ ժամանակ, սեռ կամ եղանակ մեկնության համար ուներ որոշակի նշանակություն, որը հեղինակն էր ուզում հաղորդել:
- IV. Հետևյալ ձեռնարկները կարող են օգտակար լինել նրանց համար, որոնք չեն տիրապետում հունարենին.
- Ա. Բարբարա և Տիմոթի Ֆրայբերգ, Հունարեն Վերլուծական Նոր Կտակարան /Frieberg, Barbara and Timothy, Analytical Greek New Testament, Grand Rapids: Baker, 1988/:
- Բ. Ալֆրեդ Մարշալ, Նոր Կտակարանի Տողամիջյան Հունարեն-Անգլերեն Թարգմանություն /Marshall, Alfred, Interlinear Gree-English New Testament, Grand Rapids: Zondervan, 1976/:
- Գ. Ուիլյամ Դ. Մաունս, Հունարեն Նոր Կտակարանի Վերլուծական Բառարան /Mounce, William D. The Analytical Lexicon to the Greek New Testament, Grand Rapids: Zondervan, 1993/:
- Դ. Ռեյ Սամերս, Նոր Կտակարանի Հունարենի Կարևոր Առանձնահատկությունները /Summers, Ray, Essentials of New Testament Greek, Nashville: Broadman, 1950/:
- Ե. Դուք կարող եք նաև օգտվել կոյնե հունարենի ուսումնասիրության ուսումնական դասընթացներից, որոնք հասանելի են Չիկագոյի Մուլիի Աստվածաշնչյան Ինստիտուտի հետ նամակագրության միջոցով:

V. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ա. Շարադասությամբ գոյականները դասակարգվում են ըստ հոլովների: Հոլովը գոյականի խոնարհվող ձևն է, որը ցույց է տալիս դրա կապը բայի և նախադասության մյուս անդամների հետ: Կոյնե հունարենում նախդիրները ցույց էին տալիս հոլովի շատ ֆունկցիաներ: Քանի որ հոլովի ձևը կարող էր վկայել մի քանի տեսակ կապերի մասին, նախդիրներն օգնում էին ավելի հստակ սահմանափակել այս հնարավոր ֆունկցիաները:

Բ. Հունարենում գոյություն է ունեցել ութ հոլով.

1. Ուղղական հոլովն օգտագործվում էր առարկաններն անվանելու համար, և այն սովորաբար կատարում էր նախադասության ենթակայի ֆունկցիան: Այս հոլովում կարող էին օգտագործվել նաև բաղադրյալ գոյականները և ածականները «լինել» կամ «դառնալ» օժանդակ բայերի հետ:
2. Սեռական հոլովն օգտագործվում էր նկարագրության համար և սովորաբար մատնանշում էր այն բառի հատկանիշը կամ որակը, որի հետ առնչվում էր: Պատասխանում էր «ի՞նչպիսի» հարցին: Այն հաճախ արտահայտվում էր անգլերենի «of» նախդիրի օգնությամբ:
3. Բացառական հոլովն ուներ սեռական հոլովի նույն խոնարհված ձևը, սակայն օգտագործվում էր անջատում նկարագրելու համար: Ընդհանրապես այն արտահայտում է ժամանակի, տարածության, աղբյուրի, ծագման կամ աստիճանի անջատում: Անգլերենում այն հաճախ կիրառվում է from նախդիրի օգնությամբ (հայերենում՝ -ից վերջածանցով):
4. Տրական հոլովն օգտագործվում էր անձնական հետաքրքրությունը նկարագրելու համար: Մա կարող էր մատնանշել դրական կամ բացասական ասպեկտը: Հաճախ այն անուղղակի լրացումն էր: Թարգմանվում է անգլերենի to նախդիրի օգնությամբ:
5. Ներգոյական հոլով ուներ տրականի նույն խոնարհված ձևը, սակայն նկարագրում էր դիրք կամ տեղանք տարածության, ժամանակի կամ տրամաբանական սահմանների մեջ: Հաճախ թարգմանվում է անգլերեն in, on, at, among, during, by, upon և beside նախդիրների օգնությամբ:
6. Գործիական հոլովն ուներ տրական և ներգոյական հոլովների նույն խոնարհված ձևը: Այն նշանակում էր միջոց կամ կապ: Հաճախ թարգմանվում էր անգլերեն by և with նախդիրների օգնությամբ:
7. Հայցական հոլովն օգտագործվում էր գործողության ավարտը նկարագրելու համար: Այն արտահայտում էր սահմանափակում: Գոյականն այս հոլովում հիմնականում օգտագործվում էր որպես ուղիղ լրացում: Այն պատասխանում է «որքա՞ն», «ի՞նչ աստիճանի» հարցերին:
8. Կոչական հոլովն օգտագործվում էր որևէ մեկին ուղղակի դիմելու համար:

VI. ՇԱՂԿԱՊԵՏ ԵՎ ԿԱՊԵՏ

Ա. Հունարենը շատ ճշգրիտ լեզու է, քանի որ ունի շատ կապեր: Դրանք կապում են մտքերը (նախադասությունները, արտահայտությունները և պարբերությունները): Դրանք այնքան տարածված են, որ դրանց բացակայությունը հաճախ մեկնաբանության համար շատ նշանակալի է լինում: Փաստացի այս շաղկապները և կապերը մատնանշում են հեղինակի մտքի

ուղղությունը: Հաճախ դրանք կարևոր են որոշելու, թե ինչ է փորձում հաղորդել հեղինակը:

Բ. Ստորև ներկայացված է որոշ շաղկապների, կապակցող բոռերի և դրանց իմաստների ցուցակը (այս տեղեկությունը հիմնականում հավաքված է Հ. Ի. Դանայի և Ջուլիուս Բ. Մենթեյի Հունարեն Նոր Կտակարանի Քերականության Ձեռնարկ գրքից /H. E. Dana and Julius K. Mantey's A Manual Grammar of the Greek New Testament/):

1. Ժամանակի կապ
 - ա. *epei, epeid ē, hopote, hōs, hote, hotan* (ստորադասական եղ.) – «երբ»
 - բ. *heōs* – «մինչդեռ»
 - գ. *hotan, epan* (ստ. եղ.) – «երբ էլ որ»
 - դ. *heōs, achri, mechri* (ստ. եղ.) – «մինչև որ»
 - ե. *priv* (անորոշ) – «նախքան»
 - զ. *hōs* – «ի վեր», «երբ», «այն ժամանակ, երբ»
2. Տրամաբանական կապ
 - ա. Նպատակ
 - (1) *hina* (ստ. եղ.), *hopōs* (ստ. եղ.), *hōs* – «որպեսզի», «որ»
 - (2) *hōste* (անորոշը հայացական հոդով) – «որ»
 - (3) *pros* (անորոշը հայցական հոդով) կամ *eis* (անորոշը հայցական հոդով) – «որ»
 - բ. Հետևանք (նպատակի և հետևանքի քերականական ձևերի միջև սերտ կապ կա)
 - (1) *hōste* (անորոշ, սա ամենատարածվածն է) – «որպեսզի», «այսպիսով»
 - (2) *hiva* (ստ. եղ.) – «այնպես որ» «որպեսզի»
 - (3) *ara* – «այնպես»
 - գ. Պատճառ
 - (1) *gar* (պատճառ-հետևանք կամ պատճառ-եզրահանգում) – «քանի որ», «որովհետև»
 - (2) *dioti, hotiy* – «որովհետև»
 - (3) *epei, epeidē, hōs* – «քանի որ»
 - (4) *dia* (հայցական հոլովով) և (անորոշ հոդով) – «որովհետև»
 - դ. Եզրակացություն
 - (1) *ara, poinun, hōste* – «հետևաբար»
 - (2) *dio* (ամենաուժեղ հետեվանքային շաղկապը) – «ինչի կապակցությամբ» «ինչի համար», «ուստի»
 - (3) *oun* – «ուստի», «այսպիսով», «այն ժամանակ», «արդյունքում»
 - (4) *toinoun* – «համապատասխանաբար»
 - ե. Ընդդիմական կամ հակադրություն
 - (1) *alla* (խիստ ընդդիմական) – «բայց», «բացառությամբ»
 - (2) *de* – «բայց», «սակայն», «բայց և այնպես», «մյուս կողմից»
 - (3) *kai* – «բայց»
 - (4) *mentoi, oun* – «սակայն»
 - (5) *plēn* – «այնուամենայնիվ» (հիմնականում Ղուկասում)
 - (6) *oun* – «սակայն», «համենայն դեպս»
 - զ. Համեմատություն

- (1) *hōs, kathōs* (ներմուծվում է ստորադասական շաղկապներում)
- (2) *kata* (բաղադրյալ բառերում՝ *katho, kathoti, kathōsper, kathaper*)
- (3) *hosos* (Եբրայեցիսում)
- (4) *ē* – «քան»

է. Շարունակական կամ հաջորդական

- (1) *de* – «և» «հիմա»
- (2) *kai* – «և»
- (3) *tei* – «և»
- (4) *hina, oun* – «որ»
- (5) *oun* – «այն ժամանակ» (Հովհաննեսում)

3. Էմֆատիկ (շեշտված) կիրառություն

- ա. *alla* – «անշուշտ», «այո», «իրականում»
- բ. *ara* – «իրապես», «անշուշտ», «իսկապես»
- գ. *gar* – «բայց իսկապես», «անշուշտ», «իսկապես»
- դ. *de* – «իսկապես»
- ե. *ean* – «նույնիսկ»
- զ. *kai* – «նույնիսկ», «իսկապես», «իրապես»
- է. *mentoi* – «իսկապես»
- ը. *oun* – «իրապես», «ամեն դեպքում»

VII. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա. Պայմանական նախադասությունը պարունակում է մեկից ավելի պայմանական ստորադասական նախադասություններ: Այս քերականական կառուցվածքը օգնում է մեկնաբանությանը, քանի որ տալիս է պայմանները կամ պատճառները, թե ինչու է հիմնական բայով արտահայտված գործողությունը տեղի ունենում կամ տեղի չի ունենում: Գոյություն ունեւ պայմանական նախադասությունների չորս տեսակ: Դրանք կարող էին արտահայտել գործողությունների մի ամբողջ սպեկտր՝ նրանք, որոնք իրական էին հեղինակի կամ նրա մտահղացման տեսանկյունից մինչև ցանկալին:
- Բ. Առաջին կարգի պայմանական նախադասությունն արտահայտում էր գործողություն կամ վիճակ, որն իրական էր համարվում հեղինակի կամ նրա մտադրության տեսանկյունից, թեև արտահայտվում էր «եթե» շաղկապով: Որոշ համատեքստերում այդ շաղկապը կարող էր թարգմանվել «քանի որ», «ապա» (տես՝ Մատթ.4:3; Հռ.8:31): Սակայն սա չի նշանակում, որ առաջին կարգի պայմանական նախադասությունները պարտադիր նկարագրում են իրապես տեղի ունեցած դեպքեր: Դրանք հաճախ կիրառվում էին բանավեճի մեջ տեսակետ արտահայտելու կամ մոլորությունը բացահայտելու համար (տես՝ Մատթ.12:27):
- Գ. Երկրորդ կարգի պայմանական նախադասությունը հաճախ կոչվում է «իրականությանը հակասող»: Այն արտահայտում էր մի բան, որը չէր համապատասխանում իրականությանը և չէր կարող ապացուցել արտահայտած տեսակետը կամ ընդունվել որպես փաստ: Օրինակներ.
 - 1. «Այս մարդը, եթե մարգարե լիներ (որ չէր), կիմանար (իսկ նա չգիտեր), թե ով և ինչպիսի կին է սա, որ դիպչում է Իրեն, որովհետև նա մեղավոր մեկն է» (Ղուկ.7:39):

2. «Քանի որ, եթե դուք Մովսեսին հավատայիք (իսկ դուք չեք հավատում), Ինձ էլ կհավատայիք (իսկ դուք չեք հավատում)» (Հովհ.5:46):
3. «Եթե մարդկանց հաճեցնեի (իսկ ես դա չեմ անում), ապա Քրիստոսին ծառա չեի լինի» (Գաղ.1:10):

Դ. Երրորդ կարգի պայմանական նախադասությունը խոսում է ապագայում հնարավոր գործողության մասին: Հաճախ այն ենթադրում է գործողության հավանականությունը, իսկ սովորաբար ակնարկում է դրա պատահականությունը: Հիմնական բայով արտահայտված գործողությունը պայմանավորված է այն բանով, թե արդյոք տեղի կունենա ստորադասականում նկարագրված գործողությունը: Օրինակ՝ 1 Հովհ.1:6-10; 2:4,6,9,15,20, 21,24,29; 3:21; 4:20; 5:14,16:

Ե. Չորրորդ կարգի պայմանական նախադասությունն ամենահեռուն է գործողության կատարման հնարավորությունից: Այն հազվադեպ է հանդիպում ՆԿ-ում: Փաստացի գոյություն չունի լիարժեք չորրորդ կարգի պայմանական նախադասություն, որտեղ գլխավոր և ստորադասական նախադասությունները համապատասխանում են իրենց սահմանմանը: Մասնակի չորրորդ կարգի պայմանական նախադասության օրինակ է 1 Պետ.3:14-ի բացման խոսքը: Մասնակի չորրորդ կարգի պայմանական նախադասության մեկ այլ օրինակ է Գործք 8:31-ի եզրափակիչ խոսքը:

VIII. ԱՐԳԵԼՔՆԵՐ

Ա. Ներկա հրամայական եղանակը *mē* մասնիկի հետ հաճախ (բայց ոչ միայն) շեշտադրում է արդեն տեղի ունեցող գործողության դադարը: Որոշ օրինակներ են «ձեզ համար գանձեր մի՛ դիզեք երկրի վրա...» (Մատթ.6:19), «հոգս մի՛ արեք ձեր կյանքի համար...» (Մատթ.6:25), «և ձեր անդամները անիրավության գործիք մի՛ ընծայեք մեղքին...» (Հռ.6:13), «և մի՛ տրտմեցրեք Աստծո Սուրբ Հոգին...» (Եփ.4:30), «և մի՛ արբենաք զինով...» (Եփ.5:18):

Բ. Անորոշ կատարյալը ստորադասական եղանակով *mē* մասնիկի հետ շեշտադրում է, որ «նույնիսկ մի սկսեք կատարել որոշակի գործողություն»: Մի քանի օրինակներից են՝ «Մի՛ կարծեք ...» (Մատթ.5:17), «հոգս մի՛ արեք ...» (Մատթ.6:31), «ամոթ մի՛ համարիր...» (2 Տիմ.1:8):

Գ. Կրկնակի ժխտումը ստորադասական եղանակի հետ շատ խիստ ժխտում է՝ «երբեք, ոչ երբեք» կամ «ոչ մի դեպքում»: Մի քանի օրինակներից են՝ «Նա մահ չի տեսնի հավիտյան» (Հովհ.8:51), «ես հավիտյան միս չեմ ուտի» (1 Կոր.8:13):

IX. ՀՈԴ

Ա. Կոյնե հունարենում որոշիչ հոդն ունի նույն իմաստը, ինչ անգլերենի որոշիչ հոդը: Դրա հիմնական ֆունկցիան բառի, անվան կամ արտահայտության վրա ուշադրություն հրավիրելու միջոց հանդիսանալն է կամ դրանք «մատնացույց» անելը: Նոր Կտակարանի տարբեր հեղինակներ տարբեր կերպերով են այն կիրառում: Որոշիչ հոդը կարող էր կատարել նաև հետևյալ ֆունկցիան.

1. որպես առանձնացում, ըստ հակասության սկզբունքի, ինչպես որ ցուցական դերանունը
2. որպես նշան, ավելի վաղ հիշատակված ենթակայի կամ անձի
3. որպես միջոց, նախադասության մեջ որոշելու ենթական իր հետ կապված բայի հետ: Օրինակներ՝ «Աստված Հոգի է» Հովհ.4:24, «Աստված լույս է» 1 Հովհ.1:5, «Աստված սեր է» 4:8,16:

- Բ. Կոյնե հունարենը չի ունեցել անորոշ հոդ, ի տարբերություն անգլերենի: Որոշիչ հոդի բացակայությունը կարող էր նշանակել.
 - 1. առարկայի առանձնահատկությունների կամ որակի շեշտադրություն
 - 2. առարկայի դասակարգման շեշտադրություն
- Գ. Նոր Կտակարանի հեղինակները տարբեր կերպերով էին կիրառում հոդը:

X. ՀՈՒՆԱՐԵՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ

- Ա. Շեշտադրման տեխնիկան տարբեր է ՆԿ-ի տարբեր հեղինակների մոտ: Ամենահետևողական և խիստ հեղինակները Ղուկասը և Եփրայեցիս թղթի հեղինակներն են:
- Բ. Ավելի շուտ նշեցինք, որ ներգործական սեռի սահմանական եղանակի անորոշ կատարյալը ստանդարտ է և չի շեշտադրվում, մինչ ցանկացած այլ ժամանակաձև, սեռ կամ եղանակ մեկնության համար իրենց նշանակությունն ունեն: Իհարկե դա չի նշանակում, որ ներգործական սեռի սահմանական եղանակի անորոշ կատարյալը հաճախ չէր կիրառվում որպես կարևոր քերականական ձև: Օրինակ՝ Հռոմ.6:10 (երկու անգամ):
- Գ. Բառային հաջորդականությունը Կոյնե հունարենում
 - 1. Կոյնե հունարենը ճկուն լեզու էր, որ ի տարբերություն անգլերենի կախված չէր բառային հաջորդականությունից: Հետևաբար հեղինակը կարող էր փոխել բառերի ստանդարտ հերթականությունը, որպեսզի արտահայտեր
 - ա. ինչ էր ուզում հեղինակը ընդգծել ընթերցողի համար
 - բ. ինչը կարող էր ըստ հեղինակի զարմացնել ընթերցողին
 - գ. հեղինակի համար թանկ և կարևոր բաները
 - 2. Բառային ստանդարտ հաջորդականությունը հունարենում դեռևս անլուծելի խնդիր է: Սակայն, ենթադրվում է, որ բառային ստանդարտ հաջորդականությունը սա է՝
 - ա. Կապող բայերի համար
 - (1) բայ
 - (2) ենթակա
 - (3) լրացում
 - բ. անցողիկ բայերի համար
 - (1) բայ
 - (2) ենթակա
 - (3) ուղիղ խնդիր
 - (4) անուղղակի խնդիր
 - (5) նախդիրով արտահայտություն
 - գ. գոյականական արտահայտությունների համար
 - (1) գոյական
 - (2) որոշիչ
 - (3) նախդիրով արտահայտություն
 - 3. Բառային հաջորդականությունը կարող է մեկնաբանության համար խիստ կարևոր լինել: Օրինակներ
 - ա. «Աջ ձեռք տվեցին ինձ և Բառնաբասին հաղորդակցության համար» (Գաղ.2:9 /հունարենի հաջորդականությամբ/): «Աջ ձեռք հաղորդակցության համար» արտահայտությունը կիսվել է և դրվել սկզբում և վերջում, ցույց տալու դրա կարևորությունը:

- բ. «Քրիստոսի հետ» (Գաղ.2:19) դրված էր առջևում /հունարենում՝ «Ես Քրիստոսի հետ խաչված եմ»/: Նրա մահը կենտրոնական իրադարձությունն էր:
- գ. «Շատ մասերով և շատ կերպերով» (Եբր.1:1) առջևում էր դրված: Շեշտադրվում էր այն, թե ինչպես Աստված հայտնեց Իրեն, ոչ թե հենց հայտնության փաստը:

Դ. Սովորաբար շեշտադրման համար նաև կիրառվում էր՝

1. Դերանվան կրկնությունը, որն արդեն առկա էր բայի խոնարհված ձևում: Օրինակ՝ «Ես Ինքս ձեզ հետ եմ...» /հայ.՝ «Եվ ահա Ես ձեզ հետ եմ»/ (Մատթ.28:20):
2. Սպասված շաղկապի կամ մեկ այլ կապերի, արտահայտությունների կամ նախադասությունների միջև բացակայությունը: Սա կոչվում է անշաղկապություն («չկապված»): Սպասվում էր, որ շաղկապը պետք է լիներ, հետևաբար դրա բացակայությունը կարող էր ուշադրություն գրավել իր վրա: Օրինակներ՝
 - ա. Երանելիները, Մատթ.5:3 և այլն (շեշտադրվում էր հերթականությունը)
 - բ. Հովհ.14:1 (նոր թեմա)
 - գ. Հռ.9:1 (նոր բաժին)
 - դ. 2 Կոր.12:20 (շեշտադրվում է հերթականությունը)
3. Տրված համատեքստում առկա բառերի և արտահայտությունների կրկնությունը: Օրինակներ՝ «Իր փառավոր շնորհքի գովասանքի համար» (Եփ.1:6,12 և 14): Այս արտահայտությունն օգտագործվում էր շեշտադրելու Սբ. Երրորդության յուրաքանչյուր անձի գործը:
4. Բարբառային արտահայտությունների կամ բառախաղերի կիրառությունը
 - ա. Մեղմասույթները թաքույի ենթարկված բառերի փոխարինող բառերն են, ինչպիսիք են՝ «ննջել» մահ բառի փոխարեն (Հովհ.11:11-14) կամ «ոտքեր» տղամարդու սեռական օրգանի փոխարեն (Հռութ 3:7-8; 1 Թագ.24:3):
 - բ. Շրջաբանությունները Աստծո անվանը փոխարինող բառեր են, ինչպես օրինակ՝ «Երկնքի թագավորություն» (Մատթ.3:21) կամ «ձայն Երկնքից» (Մատթ.3:17):
 - գ. Փոխաբերություններ
 - (1) անվանական չափազանցություններ (Մատթ.3:9; 5:29-30; 19:24)
 - (2) մեղմ չափազանցություններ (Մատթ.3:5; Գործք 2:36)
 - (3) անձնավորում (1 Կոր.15:55)
 - (4) հեզնանք (Գաղ.5:12)
 - (5) բանաստեղծական հատվածներ (Փիլ.2:6-11)
 - (6) բառախաղ
 - (ա) «եկեղեցի»
 - (i) «եկեղեցի» (Եփ.3:21)
 - (ii) «կոչում» (Եփ.4:1,4)
 - (iii) «կանչված» (Եփ.4:1,4)
 - (բ) «ազատ»
 - (i) «ազատ կին» (Գաղ.4:31)

- (ii) «ազատություն» (Գաղ.5:1)
 - (iii) «ազատել» (Գաղ.5:1)
- դ. Բարբառային լեզու՝ մի լեզու որը բնորոշ է տվյալ մշակույթին կամ լեզվին:
- (1) «Կերակուր» բառի փոխաբերական կիրառությունը (Հովհ.4:31-34)
 - (2) «Տաճար» բառի փոխաբերական կիրառությունը (Հովհ.2:19; Մատթ.26:61)
 - (3) Կարեկցանքի եբրայերեն բարբառը «ատել» է (Ծննդ.29:31; 2 Օր.21:15; Ղուկ.14:36; Հովհ.12:25; Հռոմ.9:13):
 - (4) «Ամենքս» բառն՝ ի համեմատություն «շատերը» բառի: Համեմատություն՝ Եսայի 53:6 («ամենքս»), իսկ 53:11 և 12 («շատերը»): Այս տերմինները հոմանիշներ են, ինչպես ցույց են տալիս Հռոմ.5:18 և 19:
5. Մեկ բառի փոխարեն լիակատար լեզվաբանական արտահայտության կիրառություն: Օրինակ՝ «Տեր Հիսուս Քրիստոս»
6. *Autos* բառի կիրառումը՝
- ա. հողի հետ (որոշիչ) այն թարգմանվում էր որպես «նույն»
 - բ. առանց հողի (ստորագյալ) այն թարգմանվում էր որպես ուժգնացող անդրադարձ դերանուն՝ ինքն իրեն:
- Ե. Աստվածաշունչ ընթերցողը, որը չգիտի հունարեն լեզուն, կարող է գտնել շեշտադրված տեղերը հետևյալ կերպ.
- 1. Օգտվելով վերլուծական բառարանից և հունարեն-անգլերեն տեքստի տողամիջյան թարգմանությունից:
 - 2. Համեմատելով անգլերեն թարգմանությունները, հատկապես նրանք, որոնք հիմնված են թարգմանության տարբեր տեսությունների վրա: Օրինակ՝ կարելի է համեմատել «բառացի» թարգմանությունները (KJV, NKJV, ASV, NASB, RSV, NRSV) «համարժեք դինամիկ» թարգմանությունների հետ (Williams, NIV, NEB, REB, JB, NJB, TEV): Ձեզ նաև մեծապես կօգնի Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով Բեյքերի հրատարակության գիրքը (The Bible in Twenty-Six Translations, Baker):
 - 3. Օգտվելով Ջոզեֆ Բրայանթ Ռոթերհեմի գրքից՝ Հատուկ Շեշտադրումն Աստվածաշնչում (the Emphasized Bible, Joseph Bryant Rotherham /Kregel/, 1994):
 - 4. Օգտվելով Աստվածաշնչի հետևյալ բառացի թարգմանություններից.
 - ա. Ամերիկյան Ստանդարտ Տարբերակ (The American Standard Version, 1901):
 - բ. Աստվածաշնչի Բառացի Թարգմանություն Ըստ Յանգի (Young's Literal Translation of the Bible /Gardian Press/, 1976):

Քերականություն ուսումնասիրելը հոգնեցուցիչ է, բայց անհրաժեշտ է ճիշտ մեկնաբանության համար: Այս համառոտ սահմանումները, մեկնաբանությունները և օրինակները նպատակ ունեն քաջալերելու և սպառազինելու հունարեն չիմացող անձանց, որպեսզի օգտվեն այս գրքի քերականական բացատրություններից: Անշուշտ, այս սահմանումները չափազանց պարզեցված են: Դրանք չպետք է կիրառել դոգմատիկ և ոչ ձկուն կերպով, այլ որպես մի քայլ ՆԿ-յան շարահյուսությունն ավելի լավ հասկանալու ուղղությամբ: Հուսով ենք, որ այս սահմանումները կօգնեն նաև ընթերցողներին հասկանալու մյուս ուսումնական ձեռնարկների մեկնաբանությունները, ինչպիսիք են ՆԿ-ի հատուկ սերտողությունները:

Մենք պետք է կարողանանք ստուգել մեր մեկնությունն աստվածաշնչյան տեքստերի տեղեկատվության հիման վրա: Քերականությունը հասկանալ ծայրահեղ կարևոր է, սակայն մեզ նաև օգնում են պատմական և գրական համատեքստերը, ինչպես նաև բառերի ժամանակակից օգտագործման և զուգահեռ տեքստերի կիրառման մասին իրազեկությունը:

ՏԵՔՍԱՅԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մենք այս թեման կնայենք այնպես, որ բացատրենք տեքստային ծանուցումները՝ բերված այս մեկնաբանության մեջ: Մենք կհետևենք հետևյալ պլանին՝

- I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները
 - Ա. Հին Կտակարան
 - Բ. Նոր Կտակարան
- II. Խնդիրների և «ցածր քննադատության» կամ այսպես կոչված «տեքստային քննադատության» տեսությունների համառոտ բացատրությունը:
- III. Գրքեր լրացուցիչ ընթերցանության համար:

I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները

Ա. Հին Կտակարան

1. Մագորեթիկ տեքստ (MT) – Սա հին հրեական կոնստանստ (բաղաձայն տառերով գրված) տեքստ էր խմբագրված ռաբբի Աքիբայի կողմից մ. թ. 100-ին: Ձայնավոր հնչյունները, շեշտերը, լուսանցքի նշումները, կետադրությունը և ապարատային նշանները սկսեցին ավելացվել 6-րդ դարում և վերջնականապես ձևավորվել 9-րդ դարում: Դա արվեց հայտնի հրեա գիտնականների կողմից, ովքեր մագորեթներ էին: Տեքստը, որը նրանք օգտագործեցին, նույնն էր ինչ որ Միշնան, Թալմուդը, Թարգումները, Փեշիտտան և Վուլգատան:
2. Մեպտուագինտա (LXX) – Ավանդույթն ասում է, որ Մեպտուագինտան կազմվել է 70 հրեա գիտնականների կողմից 70 օրվա ընթացքում, Ալեքսանդրիան գրադարանի համար Պտղոմեոս II թագավորի հովանավորությամբ (Ք. Ա. 285 – 246): Ենթադրվում է, որ թարգմանությունը կատարվել է Ալեքսանդրիայում ապրող մի հրեա առաջնորդի խնդրանքով: Այս ավանդույթը հիմնված է «Արիստեոսի ուղերձի» վրա: LXX հաճախ հիմնվում էր եբրայերեն այլ տեքստային ավանդության վրա, համեմատվելով ռաբբի Աքիբայի (MT) տեքստի հետ:
3. Մեռյալ Ծովի մագաղաթները (DSS) – Մեռյալ Ծովի մագաղաթները գրվել են Հռոմում (Ք. Ա. 200- մ. թ. 70) հրեա անջատողական խմբավորման կողմից, որոնք կոչվում էին «Էսսեններ» (սրանք փարիսեցիների նախահայրերն էին): Մեռյալ Ծովի տարբեր մասերից գտնված եբրայերեն ձեռագրերը պատկանում են եբրայերեն այլ տեքստային ընտանիքի չտարբերվելով MT և LXX:
4. Ահա մի քանի հստակ օրինակներ, թե ինչպես են այս տեքստերի համեմատությունները օգնել մեկնաբանել Հին Կտակարանը հասկանալու համար.
 - ա. LXX օգնել է թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT
 - (1) LXX, Ես.52:14, «Ինչպես որ շատերը ապշեցին ՆՐԱ վրա»
 - (2) MT, Ես.52:14, «Ինչպես որ շատերը ապշեցին ՔԵԶ վրա»
 - (3) դատելով Ես.52:15-ից ճիշտ տարբերակը LXX-ն է
 - (ա) LXX, «նույնպես պիտի շատ ազգեր ապշեն Նրանով»
 - (բ) MT, «այնպես շատ ազգերի Նա զարմացնում է»
 - բ. DSS օգնել են թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT
 - (1) DSS, Ես.21:8, «հետո տեսանողը աղաղակեց, դիտարանի վրա եմ կանգնել Ես...»

- (2) MT, Ես. 21:8, «Առյո՛ւծ, ո՛վ Տերս, ցերեկը շարունակ կանգնում եմ դիտանոցի վրա»
- գ. LXX և DSS օգնել են հասկանալ Ես.53:11-ը
 - (1) LXX և DSS, «Իր անձի աշխատությունից հետո նա կտեսնի լույսը և կբավարարվի»
 - (2) MT, «Իր անձի աշխատության պտուղը պիտի տեսնի ու պիտի բավարարվի»:

Բ. Նոր Կտակարան

1. Գոյություն ունեն հունարեն ամբողջական Նոր Կտակարանի կամ նրա մասերի ավելի քան 5300 ձեռագրեր: Մոտավորապես 85 գրված են պապիրուսների վրա, իսկ 268 ձեռագրեր գրված են բոլորը մեծատառերով (ունցիալ): Ավելի ուշ, մոտավորապես մ. թ. 9-րդ դարում հայտնվեցին գրչագիր ձեռագրերը (փոքրատառերը միջնադարյան ձեռագրերում): Գոյություն ունեն մոտ 2700 հունարեն ձեռագրեր: Մենք նաև ունենք Սուրբ Գրքի մոտ 2100 օրինակ, որոնք օգտագործվել են պաշտամունքների ժամանակ, որոնք կոչվում են բնագրի տարբերակներ:
2. Մոտ 85 հունարեն ձեռագրեր, պարունակելով ՆԿ-ի առանձին հատվածներ, գրված պապիրուսների վրա, գտնվում են թանգարաններում: Նրանցից մի քանիսը պատկանում են մ. թ. 2-րդ դարին, սակայն մեծամասնությունը մ. թ. 3-րդ և 4-րդ դարերին: Այս ձեռագրերից ոչ մեկը չի պարունակում ՆԿ-ն ամբողջությամբ: Եվ չնայած, որ նրանք հանդիսանում են ՆԿ-ի ամենահին օրինակները, դա ինքնուրուից չի նշանակում, որ նրանցում քիչ տարբերակներ կան: Այդ օրինակներից շատերը արվել են հապճեպ՝ տեղական օգտագործման համար, որոնց վրա այդքան էլ ուշադրություն չեն դարձրել: Այդ իսկ պատճառով նրանց մեջ կան շատ տարբերակներ:
3. Մինայական հին ձեռագրերի ժողովածու (Codex Sinaiticus), որը հայտնի է երբայերեն ա) aleph) տառով կամ (01), գտնվել է Թիսշենդորֆի կողմից Մինա լեռան վրա գտնվող Սուրբ Եկատերինայի վանքից: Այն պատկանում է մ. թ. 4-րդ դարին և պարունակում է LXX թե՛ Հին Կտակարանի և թե՛ հունարեն ՆԿ-ի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:
4. Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածուն (Codex Alexandrinus), որը հայտնի է որպես «A» կամ (02), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Եգիպտոսի Ալեքսանդրիայում:
5. Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածուն (Codex Vaticanus), որը հայտնի է որպես «B» կամ (03), գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում և պատկանում է մ. թ. 4-րդ դարի կեսերին: Այն պարունակում է LXX թե՛ Հին Կտակարանի և թե՛ հունարեն Նոր Կտակարանի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:
6. Եփրեմի հին ձեռագրերի ժողովածուն (Codex Ephraemi), որը հայտնի է որպես «C» կամ (04), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, որը մասամբ ոչնչացվել է:
7. Բիզայի հին ձեռագրերի ժողովածուն (Codex Bezae), որը հայտնի է որպես «D» կամ (05), 5-րդ կամ 6-րդ դարի հունարեն ձեռագիր է: Սա հանդիսանում է «Արևմտյան Տեքստ» կոչվող ձեռագրի հիմնական տարբերակը: Այն պարունակում է բազմաթիվ հավելումներ և հանդիսացել է հիմնական հունարեն ձեռագիրը անգլերենի KING JAMES թարգմանության ժամանակ:
8. Նոր Կտակարանի ձեռագրերը կարող են բաժանվել երեք, հնարավոր է նաև չորս ընտանիքների, որոնք ունեն որոշակի առանձնահատկություններ.

- ա. Ալեքսանդրիան տեքստը Եգիպտոսից
 - (1) P 75, P66, (մոտ մ.թ. 200), պարունակում են Ավետարանները
 - (2) P 46 (մոտ մ.թ. 225), պարունակում է Պողոսի նամակները
 - (3) P 72 (մոտ մ.թ. 225-250), պարունակում է Պետրոսի և Հուդայի նամակները
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու B, որը կոչվում է Վատիկանյան (մոտ մ.թ. 325), ընդգրկում է ՀԿ և ՆԿ ամբողջությամբ
 - (5) Օրիգենի մեջբերումը այս տեսակի տեքստից
 - (6) ուրիշ MSS ձեռագրեր, որտեղ այս տեսակի տեքստ են ներկայացնում, հետևյալն են՝ 8, C, L, W, 33
- բ. Արևմտյան տեքստ՝ Հյուսիսային Աֆրիկայից
 - (1) հյուսիս-աֆրիկյան եկեղեցու հայրերի՝ Տերտուլիանոսի, Կիպրիանոսի մեջբերումները, և հին լատիներեն թարգմանությունը
 - (2) Իրենեոսի մեջբերումները
 - (3) Տացիանոսի մեջբերումները և հին սիրիական թարգմանությունը
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու «D» Բիազայի՝ այս տեսակի տեքստ
- գ. Արևելյան բյուզանդական տեքստ Կոնստանդնուպոլսից
 - (1) Այս տեսակի տեքստը ներկայացված է 5300 ձեռագրերից ավելի քան 80%-ի մեջ
 - (2) Սիրիայի Անտիոքի եկեղեցու հայրերի մեջբերումները՝ Կապադովկացիներ, Ոսկեբերան և Թերոդորեթ
 - (3) Հին ձեռագրերի ժողովածու A (Codex A), միայն Ավետարաններում
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու E (Codex E), 8-րդ դար՝ ամբողջ ՆԿ-ը
- դ. Չորրորդ հնարավոր տեսակը «Կայսերական» է Պաղեստինից
 - (1) հիմնականում հանդիպում է միայն Մարկոս Ավետարանում
 - (2) մասամբ կարելի է գտնել P 45 և W ձեռագրերում

II. «Ցածր քննադատության» կամ «տեքստային քննադատության» խնդիրներն ու տեսությունները

Ա. Ինչպե՞ս են հայտնվել տարբերակները

1. ոչ դիտավորյալ կամ պատահական (շատ դեպքերում՝ մեծամասամբ)

- ա. Վրիպակ, երբ երկու միանման բառեր (կամ նույնանման վերջավորություն ունեցող բառը) իրար կողք կողքի դրված, արտագրողը նայել է երկրորդին և բաց է թողել այդ երկուսի միջև գտնվող ամբողջ տեքստը (հոմեոտելետոն - homoioteleuton)
 - (1) այքի վրիպում, երբ բաց է թողնվել նույն տառերով բառի մի մասը կամ ամբողջ արտահայտությունը (հապլոգրաֆիա - haplography)
 - (2) հունարեն տեքստի արտահայտության կամ տողի կրկնություն (դիտոգրաֆիա - dittography)
- բ. լսողական վրիպում. տեքստը թելադրության միջոցով արտագրելու ժամանակ, բառերի գրելաձևի վրիպում (իտացիզմ - itacism): Հաճախ գրվել է նույնանման հնչողությամբ հունարեն բառի մեկ այլ տարբերակ:
- գ. Շատ հին հունարեն տեքստերում գլուխների և համարների բաժանումները չկան, գրեթե բացակայում է կետադրությունը և բառերը իրարից առանձնացված չեն: Տեքստը կարելի է բաժանել տարբեր մասերում, որի արդյունքում ստացվում են նոր բառեր:

2. Դիտավորյալ
- ա. Արտագրված տեքստի քերականական բարելավման համար արվել են փոփոխություններ
 - բ. Տեքստը աստվածաշնչյան այլ տեքստերի հետ համաձայնեցնելու համար արվել են փոփոխություններ (զուգահեռ տեքստերի համաձայնեցում) գ. Ընթերցանության երկու կամ ավելի տարբերակներից մեկ երկար կապակցված տեքստ ստանալու համար կատարվել են փոփոխություններ (միաձուլում)
 - դ. Անհասկանալի թվացող տեքստը ուղղելու համար կատարվել են փոփոխություններ (տես՝ 1 Կոր.11:27 և 1 Հովհ.5:7-8):
 - ե. մի արտագրող լրացուցիչ տեղեկություն է մտցրել պատմական կոնտեքստի կամ տեքստի ճիշտ մեկնաբանության վերաբերյալ լուսանցքներում, իսկ մյուս արտագրողը դա մտցրել է հենց տեքստի մեջ (տես՝ Հովհ.5:4):
- Բ. Տեքստային քննադատության հիմնական սկզբունքները (տրամաբանական միջոցներ՝ տեքստի բնագրի ընթերցանությունը որոշելու համար, երբ կան տարբերակներ)
1. ամենատարօրինակ կամ անսովոր քերականական տեքստը ավելի շուտ բնագիրն է
 2. ամենակարճ տեքստը ավելի շուտ բնագիրն է
 3. ավելի հին տեքստին ավելի շատ արժեք է տրվում՝ նրա պատմականորեն բնագրին մոտ լինելու համար, իսկ մնացած ամեն ինչում հավասար են
 4. ձեռագրեր, որոնք աշխարհագրական առումով բաժանված են, սովորաբար մոտ են բնագրին
 5. վարդապետորեն ավելի թույլ տեքստեր, հատկապես ձեռագրերի փոփոխության ժամանակաշրջանում մեծ աստվածաբանական քննարկումներին վերաբերող, ինչպես օրինակ Երրորդության թեման 1 Հովհ.5:7-8-ում
 6. գերադասելի է այն տեքստը, որն օգնում է բացատրել այլ տարբերակների գոյությունը
 7. երկու մեջբերումներ, որոնք օգնում են ցույց տալու բալանսը այսպիսի խրթին տարբերակներում
- ա. Ջ. Հարոլդ Գրինլի Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածություն (J. Harold Greenlee's book, Introduction to New Testament Textual Criticism) էջ՝ 68.
«Ոչ մի Քրիստոնեական վարդապետություն չի հիմնվում վիճելի տեքստի վրա և ՆԿ-ը ուսումնասիրող յուրաքանչյուր անձ պետք է զգուշանա իր տեքստը ավելի ուղղափառ կամ վարդապետական դարձնելուց, քան ներշնչված բնագիրն է»:
 - բ. Ու. Է. Կրիստելն ասում էր Գրեգ Գարիսոնին «Բիրմինգհեմ Նյուզ»-ից, որ նա՝ Կրիստելը, չի հավատում, որ Աստվածաշնչի յուրաքանչյուր բառ ներշնչված է, «համենայն դեպս, ոչ ամեն բառ, որը հասել է ժամանակակից հրատարակման՝ թարգմանիչների բազմադարյա գործունեությունից հետո»: Եվ ավելացրեց, - «Ես հավատում եմ տեքստային քննադատությանը: Եվ որպես այդպիսին, կարծում եմ, որ Մարկոսի Ավետարանի 16-րդ գլխի երկրորդ կեսը հերետիկոսություն է, այն ներշնչված չէ, այլ ակնհայտ հորինվածք է... Եթե համեմատենք հին

ձեռագրերը, կտեսնենք, որ Մարկոսի Ավետարանը այդպիսի վերջաբան չունի: Ինչ-որ մեկը այն ավելացրել է...»:

SBC (Southern Baptist Convention) անսխալականության հետազոտողներից այս նախահայրը նաև պնդում է, որ «ինտերպոլացիա» նաև ակնհայտ է Հովհաննես 5-ում, Բեթհեզդայի ավազանի մոտ Հիսուսի պատմության մեջ: Խոսելով Հուդայի ինքնասպանության հետ կապված երկու տարբեր պատմությունների մասին (տես՝ Մատթեոս 27 և Գործք 1), Կրիստելն ասում էր, - «Սա պարզապես ինքնասպանությունը դիտարկելու մեկ այլ ձև է: Եթե դա այդպես է Աստվածաշնչում, ապա ունի բացատրություն: Իսկ Աստվածաշնչում կա երկու պատմություն Հուդայի ինքնասպանության մասին»: Կրիստելն ավելացրեց, - «Տեքստային քննադատությունը ինքնին հիանալի գիտություն է: Այն անցողիկ և անհեթեթ չէ, այլ դինամիկ է և շատ կարևոր...»:

III. Ձեռագրերի խնդիրները (տեքստային քննադատություն)

Ա. Հետագա ընթերցանության համար գրքեր.

1. Biblical Criticism: Historical, Literary and Textual, by R. H. Harrison (Ռ. Հ. Հարիսոն, Աստվածաշնչյան քննադատություն՝ պատմական, գրական և տեքստային):
2. The Text of the New Testament: Its Transmission, Corruption and Restoration by Bruce M. Metzger (Բրյուս Մ. Մեցգեր, Նոր Կտակարանի Տեքստը՝ ձեռագրերի ավանդությունը, խեղաթյուրումը և բնագրի վերականգնումը):
3. Introduction to New Testament Textual Criticism, by J. H. Greenlee (Ջ. Հ. Գրինլի, Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածություն):

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ալեքսանդրիան դպրոց. Աստվածաշնչյան մեկնաբանության այս մեթոդը զարգացել է Ալեքսանդրիայում, Եգիպտոս, մ. թ. 2-րդ դարում: Այնտեղ օգտագործվում է Ֆիլոյի հիմնական մեկնաբանական սկզբունքները, որը Պլատոնի հետևորդն էր: Հաճախ այն կոչվում է այլաբանական մեթոդ: Մինչև Բարեփոխությունը եկեղեցին ընդունում էր այս մեթոդը: Սրա ամենաուժեղ կողմնակիցները եղել են Օրիգենը և Օգոստինոսը: Տե՛ս Միլվա Մայիսեյի «Արդյոք եկեղեցին ճիշտ չի կարդացել Աստվածաշունչը» գիրքը (Moises Silva, Has The Church Misread The Bible) (հրատ. Academic, 1987):

Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածու. Մա 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Ալեքսանդրիայում, Եգիպտոս, որը պարունակում է ՀԿ-ը, Անկանոն Գրքերը և ՆԿ-ից շատ գրքեր: Մա հանդիսանում է ամբողջ հունարեն ՆԿ-ի գլխավոր օրինակներից մեկը (բացի Մատթեոսից, Հովհաննես Ավետարանից և 2 Կորնթացիներից որոշ մասերի): Գիտնականներից շատերը շատ դեպքերում համարում են, որ երբ այս ձեռագիրը, որը հայտնի է որպես «A» համընկնում է «B» (Վատիկանյան) ձեռագրի հետ, ուրեմն տեքստը բնագիր է:

Այլաբանություն. Մա Աստվածաշնչի մեկնաբանության տեսակ է, որը սկիզբ է առել ալեքսանդրիան հուդայականության մեջ: Այն հանրաճանաչ է դարձել Ֆիլոնում Ալեքսանդրիացու կողմից: Սրա հիմնական յուրահատկությունն է Սուրբ Գիրքը հարմարեցնել որևէ մեկի մշակութային կամ փիլիսոփայական համակարգին, անտեսելով Աստվածաշնչի պատմական և/կամ գրական համատեքստը: Նրա մեջ փնտրում են թաքնված հոգևոր իմաստ յուրաքանչյուր սուրբգրային տեքստի ետևում: Պետք է խոստովանել, որ Հիսուսը, Մատթ.13-ում, և Պողոսը, Գաղ.4-ում, օգտագործել են այլաբանություն՝ ճշմարտությունը փոխանցելու համար: Դա, ինչն է, սիմվոլիկ լեզու էր, և ոչ թե խիստ այլաբանություն:

Աշխարհի պատկերը և աշխարհայացքը. Սրանք համախոհ տերմիններ են: Այս երկու փիլիսոփայական գաղափարները կապված են արարչագործության հետ: «Աշխարհի պատկեր» տերմինը վերաբերում է «ինչպես» է ստեղծվել աշխարհը հարցին, մինչ «աշխարհայացքը» թե «Ով» է ստեղծել այն: Այս տերմինները կարևոր են Մենդ.1-2 գլուխները մեկնաբանելու համար, որտեղ խոսքը գնում է, նախ և առաջ այն մասին, թե Ով է ստեղծել երկիրը, և թե ինչպես է այն ստեղծվել:

Անտիոքյան Դպրոց. Աստվածաշնչյան մեկնաբանության այս մեթոդը զարգացել է Սիրիայի Անտիոքում, մ.թ. 3-րդ դարում որպես պատասխան Եգիպտոսի Ալեքսանդրիայի այլաբանական մեթոդին: Նրա հիմնական գաղափարն էր ուշադրություն դարձնել Աստվածաշնչի պատմական նշանակությանը: Այս դպրոցը թարգմանեց Աստվածաշունչը որպես սովորական, մարդկային գրականություն: Այն ներգրավվեց բանավեճի մեջ, թե արդյոք Քրիստոսն ուներ երկու բնություն (նեստորականություն), թե մեկ (լրիվ Աստված և լրիվ մարդ): Հռոմի կաթոլիկ եկեղեցին հռչակեց դա հերետիկոսություն և նրա ներկայացուցիչները բնակություն հաստատեցին Պարսկաստանում, սակայն քիչ ազդեցություն ունեին: Այս դպրոցի հիմնական հերմենևտիկական սկզբունքները ավելի ուշ սկսեցին օգտագործվել դասական բողոքական Ռեֆորմատորների կողմից (Լյութեր և Կալվին):

Ապոկալիպտիկ գրականություն. Առավելապես, գուցե և բացառապես, հրեական ժանր էր: Գրելաճի գաղտնի տեսակ էր, որը հրեաները օգտագործում էին օտար աշխարհակալների կողմից

նվաճումների ու զավթումների ժամանակ: Ենթադրվում էր, որ անձ հանդիսացող Փրկիչ Աստվածն ստեղծել և վերահսկում է աշխարհի իրադարձությունները, և որ Աստված հատուկ ուշադրություն և հոգատարություն է ցուցաբերում Իսրայելի հանդեպ: Այս գրականությունը Աստծո ժողովրդին խոստանում է վերջնական հաղթանակ Աստծո հատուկ ջանքերի շնորհիվ: Սա շատ խորհրդավոր և ֆանտաստիկ ժանր է՝ բազմաթիվ հանելուկային տերմիններով: Այստեղ ճշմարտությունը հաճախ արտահայտվում է գույների, թվերի, տեսիլքների, երազների, հրեշտակների, գաղտնագրերի տեսքով, հաճախ կա նաև սուր դուալիզմ չարի և բարու միջև: Այս ժանրի մի քանի օրինակներ (1) Հին Կտակարանում՝ Եզեկիել (36-48 գլուխները), Դանիել (7-12 գլուխները), Ջաքարիա; և (2) Նոր Կտակարանում՝ Մատթեոս 24; Մարկոս 13; 2 Թեսաղոնիկեցիս 2 և Հայտնություն:

Ապոլոգետ (ապոլոգետիկա / հավատքի պաշտպանություն). Տերմինը առաջացել է հունարեն «օրինական պաշտպանություն» բառի արմատից: Աստվածաբանության մեջ սա հատուկ դիսցիպլինա է, որը ձգտում է ներկայացնել ապացույցներ և ռացիոնալ փաստարկներ քրիստոնեական հավատքի օգտին:

Արիոսականություն. Արիոսը Եգիպտոսի Ալեքսանդրիայի եկեղեցու երեցն էր, 3-րդ և 4-րդ դարի սկզբին: Նա պնդում էր, որ Հիսուսը հավիտենական էր, բայց ոչ Աստված (Հոր նույն էությունը չուներ), հնարավոր է հենվելով Առակաց 8:22-31-ի վրա: Նրան մարտահրավեր է նետում Ալեքսանդրիայի եպիսկոպոսը, և վեճը սկսում է (մ.թ. 318), որն էլ շարունակվում է երկար տարիներ: Արիոսականությունը դարձավ նույնիսկ հավատքի պաշտոնական խորհրդանիշը արևելքի եկեղեցում: Մ.թ. 325-ին Նիկիայի Ժողովը դատապարտեց Արիոսին և հռչակեց Հոր և Որդու աստվածության լիարժեք հավասարությունը:

Արիստոտել. Հին հունական փիլիսոփաներից էր, Պլատոնի աշակերտը և Ալեքսանդր Մակեդոնացու ուսուցիչը: Նրա ներգործությունը մինչև այսօր զգացվում է ժամանակակից ուսումնասիրություններից շատերի մեջ, քանի որ նա շեշտը դնում էր հետազոտության և դասակարգման միջոցով կատարվող գիտության վրա: Սա գիտական մեթոդների սկզբունքներից մեկն է:

Աստվածաշնչյան հեղինակություն. Այս տերմինը օգտագործվում է շատ մասնագիտացված նշանակությամբ: Այն սահմանվում է որպես մի հասկացողություն, թե իր օրերում բնագրի հեղինակն ինչ է ասել և մեր օրերում այդ ճշմարտությունը ինչպես կիրառել: Աստվածաշնչյան հեղինակությունը սովորաբար սահմանվում է որպես Աստվածաշունչը դիտարկելու ձև, որպես մեր միակ հեղինակավոր ուղեցույց: Ինչևէ, լայն տարածում գտած, սխալ մեկնաբանությունների լույսի ներքո, ես սահմանափակել եմ Աստվածաշնչի գաղափարը թարգմանված պատմական-քերականական մեթոդով:

Անհատական կարծիքի հաստատում աստվածաշնչյան տեքստի միջոցով. Սուրբ Գրքի մեկնության կիրառություն, երբ մեջբերվում է որևէ համար առանց ուշադրություն դարձնելու անմիջական տեքստին կամ գրական հատվածի ընդհանուր կոնտեքստին: Արդյունքում մոռացվում են բնագրի հեղինակի մտադրությունները և հաճախ փորձ է կատարվում հաստատելու որևէ անձնական կարծիք իր աստվածաշնչյան հեղինակությամբ:

Բնագրի հեղինակը. Սա վերաբերում է Սուրբ Գրքի իրական հեղինակներին՝ գրողներին:

Բնագրեր. Սա Աստվածաշնչի բնօրինակի գրվածքներին տրված անունն է: Այս բնագիր, ձեռագիր մատյանները բոլորն էլ կորել են: Միայն օրինակների օրինակներն են մնացել: Սա եբրայերեն և հունարեն ձեռագրերի և հին տարբերակների շատ տեքստային տարբերակների աղբյուրն է:

Բիզայի հին ձեռագրերի ժողովածու. 6-րդ դարի հունարեն և լատիներեն ձեռագիր է, որը հայտնի է որպես «D»: Պարունակում է բոլոր Ավետարանները և Գործք Առաքելոցը, ինչպես նաև մի քանի թղթեր: Այն պարունակում է շատ լրացումներ, որոնք արվել են դպիրների կողմից: Սա հիմք է հանդիսացել «Textus Receptus» հիմնական հունարեն ձեռագրի համար, որն էլ իր հերթին հիմք է հանդիսացել անգլերենի King James Նոր Կտակարանի թարգմանության համար:

Բարձր քննադատություն. Աստվածաշնչյան մեկնության ընթացակարգը, որը կենտրոնանում է աստվածաշնչյան առանձին գրքի պատմական կոնտեքստի և գրական կառուցվածքի վրա:

Բառացի թարգմանություն. Սա սերտողության միջոց է, որը թույլ է տալիս մարդկանց, որոնք չեն տիրապետում աստվածաշնչյան լեզվին, վերլուծել նրա նշանակությունը և կառուցվածքը: Սա բառացի թարգմանություն է, որը գրվում է աստվածաշնչյան լեզվով անմիջապես բնագրի տեքստի տակ: Այս ձևը, ինչպես նաև վերլուծական բառարանը, մեզ տալիս է Աստվածաշնչի հին եբրայերեն և հունարեն տեքստի հիմնական նշանակությունները և ձևերը:

Բառացի ընթերցանություն. Եվս մեկ անուն հերմենտիկական պատմական և կենտրոնացած տեքստի մեթոդի համար, որը զարգացել է Անտիոքում: Սա նշանակում է, որ մեկնաբանությունը ներառում է մարդկային լեզվի սովորական և ակնհայտ իմաստ, չնայած ընդունում է պատկերավոր լեզվի առկայությունը:

Բնական հայտնություն. Մարդու համար Աստծո հայտնության կատեգորիաներից մեկն է: Այն ներառում է բնության երևույթների հաջորդականությունը (Հռոմ.1:19-20) և բարոյական խղճմտանքը (Հռոմ.2:14-15): Այդ մասին խոսվում է Սաղմ.19:1-6 և Հռոմ.1-2: Այն տարբերվում է հատուկ հայտնությունից, որը Աստծո հատուկ հայտնությունն է Աստվածաշնչում և կարևորագույնը՝ Հիսուս Նազովրեցու մեջ:

Այս աստվածաբանական կատեգորիան կրկին վերընդգծվել է «հին աշխարհ» քրիստոնյա գիտնականների շարժման կողմից (օր.՝ Հյու Ռոսի գրվածքները /Hugh Ross/): Նրանք կիրառում են այս կատեգորիան, որպեսզի հաստատեն, որ ցանկացած ճշմարտություն Աստծուց է բխում: Բնությունը բաց դուռ է Աստծո մասին գիտություն ունենալու համար. այն տարբերվում է հատուկ հայտնությունից (Աստվածաշունչ): Այդպիսով ժամանակակից գիտությունը կարող է հետազոտել բնության երևույթների հաջորդականությունը: Իմ կարծիքով, սա նոր հիանալի հնարավորություն է վկայելու Աստծո մասին ժամանակակից արևմտյան գիտական աշխարհում:

Գնտատիցիզմ. Այս հերետիկոսության՝ աղանդի մասին ունեցած մեր իմացության մեծ մասը գալիս է 2-րդ դարի գնտատիկ գրվածքներից: Սակայն համապատասխան գաղափարներ գոյություն են ունեցել դեռևս առաջին դարում (և դրանից առաջ):

2-րդ դարի գնտատիկներ Վալենտինայի և Կերնիթիանի որոշ հաստատված հավատամքներ այսպիսինն են՝ (1) նյութն ու հոգին հավասարապես հավիտենական են (օնթոլոգիական դյուալիզմ): Նյութը չար է, հոգին՝ բարի: Աստված, որ Հոգի է, չի կարող ուղղակիորեն ներգրավված լինել մեղավոր նյութի ձևավորման գործընթացում; (2) Աստծո և նյութի միջև կան էմանացիաներ (eons կամ հրեշտակային մակարդակներ): Դրանցից վերջինը

կամ ամենացածրը ՀԿ-ի Եհովան էր, որ ստեղծեց տիեզերքը (kosmos); (3) Հիսուսը Էմանացիա էր, ինչպես Եհովան, բայց ավելի բարձր մակարդակի վրա, ավելի մոտ ճշմարիտ Աստծուն: Ոմանք Նրան ամենաբարձրն էին համարում, բայց Աստծուց ցածր, և անշուշտ ոչ մարմնացած Աստված (տես՝ Հովհ.1:14): Քանի որ նյութը չար է, Հիսուսը չէր կարող ունենալ մարդկային մարմին և Աստված լինել: Նա հոգևոր ուրվական էր (տես՝ 1 Հովհ.1:1-3; 4:1-6); և (4) փրկությունը հասնում է Հիսուս Քրիստոսին հավատալով, գումարած հատուկ գիտություն, որն ունեն միայն հատուկ մարդիկ: Գիտությունը (ծածկագրեր) անհրաժեշտ էր, որպեսզի անցնեիր երկնային ոլորտների միջով: Հրեական օրինապաշտությունը նույնպես անհրաժեշտ էր՝ Աստծուն փնտրելու համար:

Գնոստիկ սուտ վարդապետները երկու հակադիր էթիկական համակարգերի կողմնակիցներ էին. (1) ոմանք կարծում էին, որ մարդու ապրելակերպը ոչ մի բանով կապ չունի փրկության հետ: Նրանց համար փրկությունն ու հոգևորությունը սահմանափակվում էին գաղտնի գիտությամբ (ծածկագրեր), որը կատարվում էր հրեշտակային մարմինների միջոցով (eons); կամ (2) ուրիշների համար էլ ապրելակերպը խիստ անհրաժեշտ էր փրկության համար: Նրանք համարում էին, որսակետիկ ապրելակերպը ապացույց էր ճշմարիտ հոգևորության:

Գրական ժանր. Հատուկ ձևեր, որոնք կարող են ինֆորմացիա փոխանցել մարդկային հասարակությանը, ինչպես օրինակ՝ պոեզիան կամ պատմական արձակը: Գրականության յուրաքանչյուր տեսակ մեկնաբանվում է հատուկ հերմենևտիկական սկզբունքների վրա, ընդհանուր սկզբունքների հիման վրա, որոնք վերաբերում են ցանկացած գրավոր գրականությանը:

Գրական բաժին. Սա վերաբերում է աստվածաշնչյան գրքի գլխավոր մտքի բաժանումներին: Այն կարող է կազմված լինել մի քանի համարներից, պարբերություններից կամ գլուխներից: Այն ինքնաբավ տեքստ է կենտրոնական թեմայով:

Դեդուկտիվ. Տրամաբանելու, դատողականության մեթոդ, որը ընդհանուր սկզբունքներից գնում է դեպի առանձին կիրարկումներ: Սա հակառակ է ինդուկտիվ դատողությանը, որն արտահայտում է գիտական մեթոդը, որը առանձին դեպքերի դիտարկումներից անցում է կատարում դեպի ընդհանուր եզրահանգումները (տեսություններ):

Դիալեկտիկական. Տրամաբանելու, դատողականության մեթոդ, որտեղ թվացյալ հակասությունները կամ պարադոքսները գտնվում են լարվածության մեջ՝ փնտրելով համաձայնեցված պատասխան, որն իր մեջ ամփոփում է պարադոքսի երկու կողմերն էլ: Աստվածաշնչյան շատ վարդապետություններ ունեն դիալեկտիկական բարբառային գույգեր. նախասահմանություն – ազատ կամք; ապահովություն – հարատևություն; հավատք – գործեր; Աստծուն ընդունելու որոշում – աշակերտ լինել; Քրիստոնեական ազատություն – Քրիստոնեական պատասխանատվություն:

Դինամիկ համագոր. Սա Աստվածաշնչի թարգմանության տեսություն է: Աստվածաշնչի թարգմանությունը կարող է դիտվել որպես շարունակություն «բառ-առ-բառ» համապատասխանության, որտեղ յուրաքանչյուր եբրայերեն կամ հունարեն բառին համապատասխանում է թարգմանված բառը, և որպես «բառափոխում» որին տրվում է իմաստ, որոշ չափով ուշադրություն դարձնելով վերափոխությանը կամ բնագրի բառերին: Այս տեսությունների միջև գոյություն ունի «դինամիկ համագորի» տեսությունը, որը լրջորեն է մոտենում բնագրի տեքստին, սակայն թարգմանության ժամանակ օգտագործվում է

Ժամանակակից քերականական ձևեր և դարձվածքներ: Տարբեր տեսությունների շուրջ իրոք լավ քննարկում կարելի է գտնել Գորդոն Ֆիլի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջական իմաստով» (Fee and Stuart's How to Read the Bible For All Its Worth), էջ 35 և Ռոբերտ Բրետչերի «Ժամանակակից անգլերեն Աստվածաշնչի թարգմանության ներածությունը» գրքում (Robert Bratcher's Introduction to the TEV):

ՅԱՀՎԵ. Հին Կտակարանում սա Աստծո Ուխտի անունն է: Սահմանումը գտնվում է Ելից 3:14-ում: Այն եբրայերեն «լինել» բայի պատճառական ձևն է: Հրեաները վախենում էին արտասանել այդ անունը, որ գուր տեղը չլիներ, ուստի այն փոխարինեցին եբրայերեն Adonai, «Տեր» բառով: Ահա, թե ինչպես է թարգմանվում այս ուխտի անունը շատ լեզուներում:

Երկիմաստություն. Տեքստի անհասկանալի մասեր, որտեղ գրավոր փաստաթղթում կամ ընթերցանության երկու կամ ավելի հնարավորություններ, կամ երբ երկու կամ ավելի բաներ են առկա միառժամանակ: Հնարավոր է, որ Հովհաննեսը դիտավորյալ օգտագործել է երկիմաստ արտահայտություններ:

Չուգահեռ հատվածներ. Սրանք մաս ենկազմում այն գաղափարի, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է և, ուստի, ինքն է լավագույնս օգնում մեզ իրեն մեկնաբանելու և բալանսի բերելու պարադոքսալ ճշմարտությունները: Այն նաև օգտակար է, երբ մեկը փորձում է մեկնաբանել անհասկանալի կամ բազմիմաստ հատվածները: Նրանք նաև օգնում են գտնել տվյալ թեմայի շուրջ ամենահստակ հատվածները, ինչպես նաև բոլոր մյուս սուրբգրային հատվածները նույն թեմայի վերաբերյալ:

Էյզեզետիկա. Էզեզետիկայի հակադարձը: Եթե էյզեզետիկան հիմնված է հեղինակների միտումների փնտրտուքի վրա, ապա էյզեզետիկան ենթադրում է տեքստի մեջ այնպիսի մտքի կամ կարծիքի ներմուծում, որը խորթ է հեղինակին:

Էկզեզետիկա. Հատուկ տերմին է, որը նշանակում է որոշակի հատվածի տեքստի մեկնաբանություն, բառացի՝ այդ հատվածի իրական մտքի պեղում. այսինքն հասկանալ հեղինակի մտադրությունները պատմական իրավիճակի, գրական համատեքստի՝ հատվածի, սինտաքսիսի՝ քերականության և բառերի նշանակությունների լույսի ներքո:

Էկլեկտիկա. Այս տերմինի կիրառությունը պայմանավորված է տեքստի քննադատության հետ: Այն ենթադրում է տեքստերի ընթերցանությունից տարբեր ձեռագրերի ավանդույթների հետ կապված տարբերակների դուրսբերում, որպեսզի ի հայտ գա այն տեքստը, որն ավելի մոտ կգտնվի բնագրին: Այս դեպքում հերքվում է այն կարծիքը, որ հունարեն ձեռագրերի ամեն խումբ ունի մի բնօրինակ:

Էթիմոլոգիա. Բառերի ուսումնասիրման ոլորտ, որտեղ ի հայտ է բերվում բառի սկզբնական նշանակությունը: Մեկնաբանության ժամանակ բառերի էթիմոլոգիան ամենակարևորը չէ, ավելի կարևոր է նրանց նշանակությունը և կիրառությունը որոշակի դարաշրջանի համար:

Թալմուդ. Գրքերի ժողովածուի անվանումն է, որտեղ շարադրված է հրեական բանավոր ավանդույթը: Հրեաները հավատում են, որ այն բանավոր կերպով տրվել է Աստծո կողմից Մովսեսին Մինա լեռան վրա: Իրականում սրանք հրեա վարդապետների իմաստուն ասացվածքներն են, որոնք հավաքվել են տարիների ընթացքում: Գոյություն ունեն Թալմուդի

երկու տարբեր գրավոր ավանդույթներ՝ Բաբելոնյանը և ավելի կարճը՝ թերի մնացած Պաղեստինյանը:

Թեմայեություն/Parochialism. Սա վերաբերում է այն հիմքերին, որոնք միացվում են տեղական աստվածաբանական, մշակութային համատեքստին: Մրանք չեն ընդունում աստվածաշնչյան ճշմարտության կամ նրա կիրառության միջմշակութային բնությունը:

Թորա. Եբրայերեն տերմին է, որը նշանակում է «ուսուցում, ուսմունք»: Այսպես պաշտոնական կոչվել են Մովսեսի գրքերը (Օննոգից մինչև 2 Օրինաց): Հրեաների համար սա եբրայական կանոնի ամենահեղինակավոր մասն է հանդիսանում:

Թույլ քննադատություն. Տե՛ս «Տեքստային քննադատություն»:

Ժանր. Ֆրանսերեն տերմին, որը նշանակում է գրական ատեղծագործության տարբեր տեսակներ: Աստվածաշնչյան գրական ձևերը բաժանվում են մի քանի կատեգորիաների, որոնք ունեն ընդհանուր առանձնահատկություններ՝ պատմական արձակ, պոեզիա, առակներ, ապոկալիպտիկ՝ վախճանաբանական և օրենսդրություն:

Իդիոմա (դարձվածք). Արտահայտություն, որը տվյալ մշակութային համապատասխան ունի հատուկ նշանակություն, որը կապ չունի առանձին վերցրած բառերի սովորական իմաստի հետ: Ժամանակակից օրինակներ՝ «դա սարսափելի լավն էր» կամ «դու պարզապես սպանում ես ինձ»: Աստվածաշունչը նույնպես պարունակում է այս տեսակի արտահայտություններ:

Իմաստային դաշտ. Սա վերաբերում է իմաստի ամբողջ ոլորտին, կապված կոնկրետ բառի հետ: Հիմնականում սրանք տարբեր համատեքստերի մեջ բառի ունեցած իմաստային երանգներն են:

Իմաստասիրական գրականություն. Գրական ժանր, տարածված հին Մերձավոր Արևելքում (և ժամանակակից աշխարհում): Նպատակն է երիտասարդ սերնդին պոեզիայի, առակի կամ ակնարկի միջոցով սովորեցնել կյանքի իմաստությունը: Այն ավելի ուղղված է առանձին անհատների, քան խմբային համայնքի: Հիմնված չէ պատմական ակնարկների վրա, այլ կյանքի փորձառությունների և դիտարկումների վրա: Աստվածաշնչում Հոբից մինչև Երգ Երգոցը ենթադրվում է ՅԱՀՎԵԻ ներկայությունը և Նրան երկրպագությունը, սակայն կրոնական աշխարհայացքը հստակ չի արտահայտվում:

Որպես ժանր, այն արտացոլում է ընդհանուր ճշմարտությունները: Բայց այս ժանրը չի կարող օգտագործվել ցանկացած կոնկրետ իրավիճակում: Դրանք ընդհանուր մտքեր են, որոնք միշտ չէ, որ համապատասխանում են անհատական իրավիճակներին:

Իմաստունները համարձակվել են բարդ հարցեր տալ կյանքի վերաբերյալ: Հաճախ նրանք մարտահրավեր են նետել ավանդական կրոնական հայացքներին (Հոբ և Ժողովող): Այդպիսով նրանք հավասարակշռություն և լարվածություն են ստեղծում կյանքի ողբերգությունների հետ կապված հեշտ պատասխանների միջև:

Ինդուկտիվ. Տրամաբանական դատողության մեթոդ է, որը մասնավորից տանում է դեպի ընդհանուր: Այն ժամանակակից գիտության էմպիրիկական՝ փորձով հաստատված մեթոդ է: Հիմնականում սա Արիստոտելի մոտեցումն է:

Լուսավորում. Սա այն հասկացության անունն է, որով Աստված խոսում է մարդկանց: Այս հասկացության լիարժեք նշանակությունը արտահայտվում է երեք տերմինների միջոցով՝ (1) հայտնություն՝ Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ; (2) ներշնչանք՝ Նա տվել է Իր գործերի և դրանց նշանակության ճշգրիտ մեկնությունը ընտրյալ մարդկանց, որպեսզի արձանագրեն դրանք մարդկության համար; և (3) լուսավորում՝ Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունն Իր մասին:

Կանխակարծիք. Որևէ թեմայի շուրջ նախօրոք ձևավորված պատկերացում: Հաճախ մենք ունենք կարծիքներ կամ դատողություններ ինչ որ հարցերի շուրջ մինչև Սուրբ Գրքին անդրադառնալը: Այս կանխակարծիքը հայտնի է նաև որպես հակվածություն, պնդում, նախօրոք ձևավորված կարծիք:

Կանոն. Տերմինը օգտագործվում է այն գրվածքների համար, որոնք անկասկած համարվում են ներշնչված: Այն թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանի գրքերի համար է:

Հակադիր. Երեք բնութագրական տերմիններից մեկն է, որը ցույց է տալիս երբայերեն պոեզիայի տողերի միջև գոյություն ունեցող կապը: Այն վերաբերում է պոեզիայի տողերին, որոնք իմաստային առումով իրար հակադիր են (տես՝ Առակ.10:1; 15:1):

Համաբարբառ. Աստվածաշունչը ուսումնասիրելու միջոց: Այստեղ իրականում տրված են Հին և Նոր Կտակարաններից յուրաքանչյուր բառ: Սա օգնում է մեզ (1) սահմանել երբայերեն կամ հունարեն բառը, որը ընկած է հատուկ բառի թարգմանության տակում, (2) համեմատել հատվածները, որտեղ օգտագործվում են նույն երբայերեն կամ հունարեն բառերը, (3) ի հայտ բերել հատվածներ, երբ երկու տարբեր երբայերեն կամ հունարեն տերմիններ թարգմանվում են նույն բառով, (4) տեսնել տարբեր բառերի կիրառությունը տարբեր գրքերում կամ տարբեր հեղինակների մոտ, (5) Աստվածաշնչում գտնել որոշակի անհրաժեշտ հատված (տես՝ Ուոլթեր Քլարքի Ինչպես օգտագործել հունարեն Նոր Կտակարանի օժանդակ ձեռնարկը /Walter Clark's How to Use New Testament Greek Study Aids/ էջ՝ 54-55):

Հայտնություն. Սա այն հասկացության անունն է, որով Աստված խոսում է մարդկանց: Այս հասկացության լիարժեք նշանակությունը արտահայտվում է երեք տերմինների միջոցով՝ 1. հայտնություն՝ Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ, 2. ներշնչանք՝ Նա տվել է Իր գործերի և դրանց նշանակության ճշգրիտ մեկնությունը ընտրյալ մարդկանց, որպեսզի դրանք արձանագրեն մարդկության համար, և 3. լուսավորում՝ Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունն Իր մասին:

Հերմենևտիկա. Սկզբունքներ նշանակող հատուկ տերմին, որն օգտագործում են մեկնաբանության ժամանակ: Սա թե՛ յուրահատուկ ուղեցույցների շարք է և թե՛ արվեստ, պարզև: Աստվածաշնչյան հերմենևտիկան սովորաբար բաժանվում է երկու կատեգորիաների՝ ընդհանուր սկզբունքներ և հատուկ սկզբունքներ: Դրանք կապված են Աստվածաշնչում եղած գրական տարբեր տեսակների հետ: Յուրաքանչյուր տեսակ (ժանր) ունի իր հատուկ սկզբունքը, բայց մեկնաբանության մի քանի ընդհանուր ենթադրությունների և ընթացակարգերի հիման վրա:

Հումանիշ. Մա վերաբերում է այն բառերին, որոնք իմաստով նույնն են կամ համընկնում են (չնայած իրականում երկու բառերի իմաստաբանական մասը երբեք ամբողջությամբ չեն համընկնում): Նրանք իմաստով այնքան մոտ են իրար, որ կարող են նախադասության մեջ իրար փոխարինել՝ իմաստը չկորցնելով: Այս տերմինը նաև կիրառվում է հին եբրայերեն պոետիկ գուգահեռների երեք տեսակներից մեկի համար: Այս իմաստով, այն նշանակում է երկու պոետիկ տող, որոնք արտահայտում են նույն ճշմարտությունը (տես՝ Մաղմ.103:3):

Ձեռագիր. Այս տերմինը վերաբերում է հունարեն Նոր Կտակարանի տարբեր օրինակներին: Սովորաբար դրանք բաժանվում են տարբեր տեսակների՝ (1) նյութը, ինչի վրա որ գրվել են (պապիրուս, կաշի) կամ (2) գրության ձևը (բոլորը մեծատառերով կամ սահուն ձեռագիր): Հակիճ կոչվում է «MS» (եզակի) կամ «MSS» (հոգնակի):

Մագորեթիկ տեքստ. Հին Կտակարանի եբրայերեն ձեռագիր է (9-րդ դար): Դա արվել է հայտնի հրեա գիտնականների կողմից, որը պարունակում է ձայնավոր հնչյուններ և այլ տեքստային նշումներ: Դրանք հիմք են հանդիսանում Հին Կտակարանի թարգմանության համար: Նրա տեքստը պատմականորեն հաստատված է եղել հին եբրայերեն ձեռագրերով, հասկապես Եսայի մարգարեությունը, հայտնի որպես Մեռյալ Ծովի գլանաձև մագաղաթներ: Հապավումն է՝ «MT» :

Մարդակերպություն. /Anthropomorphic/ «Մարդկային էության հետ առնչվող առանձնահատկություններ ունենալու» նշանակությունն ունի: Այս տերմինը կիրառվում է նկարագրելու Աստծո մասին արտահայտվող մեր կրոնական լեզուն: Տերմինն առաջացել է հունարեն մի բառից, որը նշանակում է մարդկություն: Մա նշանակում է, որ մենք խոսում ենք Աստծո մասին որպես մարդու: Աստված նկարագրվում է որպես ֆիզիկական, սոցիոգիական և հոգեբանական այնպիսի տերմիններով, որոնք առնչվում են մարդկանց հետ և հասկանալի են մարդու համար (տես՝ Ծննդ.3:8; 3 Թագ.22:19-23): Իհարկե, սա միայն համանմանություն է: Այնուամենայնիվ մարդկային տերմիններից և կատեգորիաներից գատ ուրիշ ոչինչ չէր կարող մեզ համար կիրառելի լինել: Հետևաբար Աստծո մասին ունեցած մեր գիտությունը չնայած ճիշտ է, բայց և սահմանափակ:

Մեկնաբանություն. Աստվածաշունչը ուսումնասիրող հատուկ գիրք: Այն ներկայացնում է աստվածաշնչյան գրքի ընդհանուր համատեքստը: Ապա բացատրում է գրքի յուրաքանչյուր բաժնի նշանակությունը: Որոշ մեկնաբանություններ հատուկ ուշադրություն են դարձնում ճշմարտության կիրառությանը, ուրիշներն էլ տեքստը դիտարկում են տարբեր հատուկ հարցերի օգնությամբ: Այս գրքերը օգտակար են, սակայն պետք է կիրառվեն միայն ինքնուրույն ընդհանուր սերտողությունից հետո: Մեկնաբանի մեկնությունները երբեք չպետք է ընդունվեն առանց քննադատության: Սովորաբար օգտակար է համեմատել մի քանի մեկնություններ, որոնց հեղինակները ունեն աստվածաբանական տարբեր տեսանկյուններ:

Մեռյալ Ծովի մագաղաթները. Մա վերաբերում է մի շարք եբրայերեն և արամերեն հին տեքստերի, որոնք գտնվել են Մեռյալ ծովի մոտակայքից 1947թ-ին: Դրանք պատկանում էին առաջին դարի հուդայական աղանդավորների կրոնական գրադարաններին: Հռոմի տիրապետության ճնշումը և 60-ականների կրոնական պատերազմները պատճառ հանդիսացան, որ նրանք մագաղաթները հերմետիկ տեղավորեն գլանաձև կավե ամանների մեջ և թաքցնեն քարանձավներում ու հորերում: Այս մագաղաթները օգնել են մեզ հասկանալու առաջին դարի պատմական իրադրությունը Պաղեստինում և հաստատել են Մագորեթիկ ձեռագիրը, որպես

շատ ստույգ փաստաթուղթ, համենայնդեպս համեմատած մեր դարասկզբի հետ: Հապավումն է՝ «DSS»:

Մուրատորիան հատվածներ. Սա ՆԿ-ի կանոնի գրքերի ցանկն է: Գրվել է Հռոմում մինչև մ.թ. 200թ.: Պարունակում է նույն 27 գրքերը, ինչպես Բաղդադական ՆԿ-ում: Այն պարզ ցույց է տալիս, որ հռոմեական կայսրության տարբեր տեղերում գտնվող տեղական եկեղեցիները «փորձնականում» կանոն են որոշել մինչև 4-րդ դարի գլխավոր եկեղեցական խորհուրդը:

Նախատիպ. Մեկնաբանության յուրահատուկ ձև է: Սովորաբար պարունակում է ՆԿ-յան ճշմարտություն, որը գտնվում է ՀԿ-յան հատվածներում նույնատիպ խորհրդապատկերով: Հերմենևտիկայի այսպիսի տեսակը Ալեքսանդրիան մեթոդի գլխավոր տարրն է եղել: Եվ քանի որ մեկնաբանության այսպիսի մեթոդը հեշտ է աղավաղել, պետք է սահմանափակել դրա կիրառությունը կոնկրետ օրինակներով արձանագրված ՆԿ-ում:

Նեստորականություն. 5-րդ դարում Նեստորը Կոնստանդնուպոլսի նախահայրերից էր: Նա սովորել է Սիրիայի Անտիոքում և պնդել է, որ Հիսուսն ուներ երկու բնություն՝ լիարժեք մարդ և լիարժեք Աստված: Այդ կարծիքը տարբերվում էր Ալեքսանդրիան դպրոցի՝ միայն մեկ բնություն, ուղղափառ կարծիքից: Նեստորի հիմնական մտահոգությունը Մարիամին տրված «Աստվածամայր» տիտղոսն էր: Նեստորի ուսմունքը հակասում էր ալեքսանդրիացի Կիրիլին և ըստ էության, իր իսկ սեփական Անտիոքյան դպրոցի ուսմունքին: Անտիոքը աստվածաշնչյան մեկնաբանության պատմա-քերականական-տեքստային մոտեցման կենտրոնն էր, իսկ Ալեքսանդրիան՝ մեկնաբանության քառապատիկ (+ այլաբանական) դպրոցը: Նեստորը պաշտոնագուրկ է լինում և վտարվում:

Ներշնչանք. Աստված խոսել է մարդու հետ աստվածաշնչյան հեղինակների միջոցով, ովքեր հստակ և ճշգրտորեն արձանագրել են Իր հայտնությունը: Սովորաբար ամբողջ գաղափարը արտահայտվում է երեք տերմինով՝ (1) հայտնություն՝ Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ; (2) ներշնչանք՝ Նա տվել է Իր գործերի և դրանց նշանակության ճշգրիտ մեկնությունը ընտրյալ մարդկանց, որպեսզի արձանագրեն դրանք մարդկության համար; և (3) Լուսավորում՝ Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունը Իր մասին:

Նկարագրող /պատկերավոր/ լեզու. Կիրառվում է դարձվածքների հետ, որոնց օգնությամբ գրվել է ՀԿը: Այն խոսում է մեր աշխարհի մասին այնպես, ինչպես ընկալվում է մեր հինգ զգայարաններով: Դա գիտական նկարագրություն չէ և չպետք է լինի:

**Շարահյուսություն /Syntax/.
Հունարեն տերմին է, որը վերաբերում է նախադասության կառուցվածքին, թե ինչպես են վերջինիս տարբեր մասերը ավարտուն միտք ստանալու համար միացված իրար:**

Շեղություն/հակվածություն. Ուժեղ հակվածություն որոշակի կարծիքի կամ տեսակետի հանդեպ: Մտածելակերպ, որն անհնարին է դարձնում կոնկրետ թեմայի կամ դիրքորոշման խորականությունը:

Ոգեշնչում. Տեքստին խորհրդանշական իմաստ տալը: Աստվածաշնչի այլաբանական մեկնության հոմանիշն է, քանի որ այստեղ նույնպես անտեսվում է հատվածի պատմական և գրականական համատեքստը, իսկ մեկնաբանությունը հիմնվում է այլ չափանիշների վրա:

Որդեգրություն. Աստծո և Հիսուսի միջև եղած կապի վերաբերյալ վաղ կարծիքներից մեկն էր: Այն պնդում էր, որ Հիսուսը սովորական մարդ էր բոլոր առումներով և հատուկ որդեգրվել էր Աստծո կողմից, Իր մկրտության պահին (տես՝ Մատթ.3:17; Մարկ.1:11) կամ հարության ժամանակ (տես՝ Հռ.1:4): Հիսուսն այնպիսի օրինակելի կյանքով ապրեց, որ Աստված ինչ-որ պահի (մկրտություն, հարություն) որոշեց որդեգրել Նրան որպես Իր «որդի» (տես՝ Հռոմ.1:4; Փիլ.2:9): Սա վաղ եկեղեցու և 8-րդ դարի մարդկանց փոքրաքանակ զանգվածի տեսակետն էր: Ոչ թե Աստված մարդ դարձավ (մարմնացում) այլ ընդհակառակը՝ մարդը դարձավ Աստված: Դժվար է ասել, որ Հիսուսը՝ Որդի Աստվածը, Հավիտենական Աստվածը, վարձատրվեց կամ փառավորվեց Իր օրինակելի կյանքի համար: Եթե Նա արդեն Աստված էր, ինչպես կարող էր Նա վարձատրվել: Եթե Նա ուներ հավիտենական աստվածային փառք, ինչպես կարող էր ավելի մեծ պատվի արժանանալ: Չնայած դժվար է մեզ համար սա հասկանալը, Հայրը ինչ-որ կերպով պատվեց Հիսուսին այն ժամանակ, երբ Հիսուսը կատարելապես կատարեց Հոր կամքը:

Պապիրոս. Նյութի մի տեսակ, որի վրա գրում են. կիրառվել է Եգիպտոսում: Այն պատրաստում էին գետի եղեգից: Այդ նյութի վրա գրվել են հունարեն ՆԿ-ի հնագույն օրինակները:

Պարադոքս. Սա վերաբերում է այն ճշմարտություններին, որոնք թվում է, թե իրար հակասող են, սակայն երկուսն էլ ճշմարտություն են, չնայած նրանց միջև կա ներքին լարվածություն: Պարադոքսը փոխանցում է ճշմարտությունը՝ ներկայացնելով դրա երկու կողմերն էլ: Շատ աստվածաշնչյան ճշմարտություններ ներկայացված են պարադոքսալ (կամ բարբառային) գույգերով: Աստվածաշնչյան ճշմարտությունները առանձին աստղեր չեն, այլ համաստեղություններ, որոնք ձևավորել են առանձին պատկեր:

Պարբերություն. Սա արձակի հիմնական մեկնաբանության գրական բաժինն է: Ունի մի կենտրոնական միտք և դրա զարգացումը: Եթե մնանք այդ կենտրոնական մտքին հենված, ապա չենք փոքրացնի, մեծացնի կամ բաց թողնի բնագրի հեղինակի մտադրությունը՝ նպատակը:

Պլատոն. Հին Հունաստանի փիլիսոփաներից մեկն է: Նրա փիլիսոփայությունը մեծ ազդեցություն է թողել վաղ եկեղեցու վրա Ալեքսանդրիայի և Եգիպտոսի գիտնականների միջոցով, իսկ ավելի ուշ Օգոստինոսի միջոցով: Պլատոնը պնդում էր, որ երկրի վրա ամեն ինչ երևակայական է և հանդիսանում է հոգևոր աշխարհի բնօրինակը: Աստվածաբանները հետագայում Պլատոնի «գաղափարները՝ ոճր» հավասարեցնում էին հոգևոր արքայությանը:

Ռաբբիական Հուդայականություն. Շրջան, որը սկսվել է բաբելոնյան գերության ընթացքում (Ք. Ա. 586-538): Երբ քահանաների և Տաճարի ազդեցությունը դադարեց, հրեաների կյանքը սկսեց ձևավորվել տեղական ժողովարանների շուրջ: Հրեական մշակույթի, հաղորդակցության, երկրպագության և աստվածաշնչյան ուսմունքների այս կենտրոնները դարձան ազգային կրոնական կյանքի կիզակետը: Հիսուսի օրոք «ղպիրների այս կրոնը» հավասարազոր էր քահանաների կրոնին: Մ. թ. 70- ի Երուսաղեմի անկումից հետո, դպիրների կրոնը, որտեղ գերիշխում էին փարիսեցիները, սկսեց վերահսկել Հրեաների կրոնական կյանքը: Բնորոշվում է Թորայի գործնական, օրինապաշտական մեկնաբանությամբ, ինչպես որ բացատրում է բանավոր ավանդույթը (Թալմուդը):

A priori Սա հիմնականում հոմանիշ է «կանխակարծիք» տերմինին: Այն ենթադրում է նախապես ընդունված սահմանումների, սկզբունքների կամ դիրքերի հիման վրա քննարկում, որոնք ընդունվում են որպես ճշմարտություն: Սա այն է, ինչն ընդունվում է առանց քննելու և վերլուծության:

Սեպտուագինտա. Այսպես է կոչվում եբրայերեն չԿ-ի հունարեն թարգմանությունը: Ավանդույթն ասում է, որ այն գրվել է 70 օրում, 70 հրեա գիտնականների կողմից Եգիպտոսի Ալեքսանդրիան գրադարանի համար: Գրվելու ընդունված տարեթիվը Ք. Ա. 250 (իրականում թարգմանության համար, ավելի շուտ, պահանջվել է ավելի քան հարյուր տարի): Այս թարգմանությունը ունի մեծ նշանակություն, քանի որ (1) մեզ է տալիս հին տեքստը, որը կարող ենք համեմատել Մագորեթիկ եբրայերեն տեքստի հետ; (2) մեզ ցույց է տալիս հրեական մեկնաբանության վիճակը Ք. Ա. 3-րդ և 2-րդ դարերում; (3) մեզ է տալիս հրեական մեսիական հասկացողություն նախքան Հիսուսին կմերժելին: Հապավումն է «LXX»:

Մինայական հին ձեռագրերի ժողովածու /Codex Sinaiticus/. Մ.թ. 4-րդ դարի հունարեն ձեռագիր է: Այն գտնվել է գերմանացի գիտնական Թիսշենդորֆի կողմից Ջեբել Մուսա լեռան վրա գտնվող Սուրբ Եկատերինայի վանքից, որն ըստ ավանդության համընկում է Մինա լեռան հետ: Այս ձեռագիրը հայտնի եբրայերեն այբուբենի առաջին ռ) aleph) տառով: Նրա մեջ ընդգրկված են թե՛ Հին Կտակարանը և թե՛ ամբողջ Նոր Կտակարանը: Այն մեր ունեցած ամենահին ունցիալ (մեծատառերով գրված) ձեռագիրն է:

Մինթետիկ. Եբրայերեն պոեզիայի տեսակներին պատկանող երեք տերմիններից մեկն է: Այս տերմինը վերաբերում է պոեզիայի տողերին, որոնք ընդհանուր առմամբ կառուցվում են մեկը մյուսի վրա. երբեմն այսպիսի պոեզիան անվանում են «կուլմինացիոն» (տես՝ Սաղմ.19:7-9):

Միատեմատիկ աստվածաբանություն. Սա մեկնաբանության մի փուլ է, որը փորձում է աստվածաշնչյան ճշմարտությունները իրար հետ համակցել ավելի միահյուսված և ռացիոնալ կերպով: Ունի ավելի տրամաբանական, քան թե պատմական բնույթ, և ներկայացնում է Քրիստոնեական աստվածաբանությունը ըստ դասակարգման (Աստված, մարդ, մեղք, փրկություն և այլն):

Սուրբ Գրքի համանմանություն. Սա նշանակում է, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է, հետևաբար, նրա տարբեր տեքստերը չեն հակասում միմյանց, այլ լրացնում են: Այս նախապայմանը հիմք է աստվածաշնչյան տեքստը մեկնաբանելու համար օգտագործելու գուգահեռ հատվածներ:

Սփյուռք. Հատուկ հունարեն տերմին է, որն օգտագործում էին Պաղեստինի հրեաները այն հրեաների համար, ովքեր ապրում էին Խոստացյալ Երկրի աշխարհագրական սահմաններից դուրս:

Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածու (Codex Vaticanus). Մ.թ. 4-րդ դարի հունարեն ձեռագիր է: Գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում: Սկզբում պարունակել է ամբողջ չԿ-ը, անկանոն գրքերը և ՆԿ-ը: Սակայն որոշ մասեր անհետացել են (Մենդոց, Մաղմոսներ, Եբրայեցիների ուղղված թուղթը, Հովվական թղթերը, Փիլիմոն և Հայտնություն): Շատ օգտակար ձեռագիր է հեղինակային բնագրերը ճանաչելու համար: Այն նշվում է «B» :

Վերափոխում. Սա Աստվածաշնչի թարգմանության տեսություն է: Աստվածաշնչի թարգմանությունը կարող է դիտվել որպես շարունակություն, որտեղ յուրաքանչյուր եբրայերեն կամ հունարեն

բառին համապատասխանում է թարգմանված բառը, և որպես «բառափոխում» որին տրվում է իմաստ, քիչ ուշադրություն դարձնելով վերափոխմանը կամ բնօրինակի բառերին: Այս տեսությունների միջև գոյություն ունի «դինամիկ համագործի» տեսությունը, որը լրջորեն է մոտենում բնօրինակի տեսքտին, սակայն թարգմանության ժամանակ օգտագործվում է ժամանակակից քերականական ոճեր և դարձվածքներ: Թարգմանության տարբեր տեսությունների վերաբերյալ հետաքրքիր քննարկում կարող եք գտնել Գորդոն Ֆիլի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշուրջը իր ամբողջական իմաստով» (Fee and Stuart's How to Read the Bible For All Its Worth), էջ` 35:

Վերլուծական բառարան. Սա ուսումնասիրություն անելու միջոց է, որը թույլ է տալիս որոշել բոլոր հունարեն ձևերը ՆԿ-ում: Այն հանդիսանում է հիմնական սահմանումների ժողովածու՝ հունարեն այբբենական կարգով: Բառացի թարգմանության հետ միասին օգնում է հունարեն չիմացող հավատացյալին վերլուծելու ՆԿ-ի հունարեն քերականական և շարահյուսական ձևերը:

Վուլգատա. Սա Ջերոմի կողմից թարգմանված Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունն է: Հանդիսանում է Հռոմի Կաթոլիկ եկեղեցու հիմնական թարգմանությունը: Այն կատարվել է մ.թ. 380- ապաններին:

Տեքստային քննադատություն. Աստվածաշնչի ձեռագրերի ուսումնասիրություն: Տեքստային քննադատությունը անհրաժեշտ է, որովհետև բնագրերը մեզ չեն հասել, իսկ արտագրությունները տարբերվում են միմյանցից: Մենք փորձում ենք բացատրել տարբերակներն ու մոտենալ (որքան հնարավոր է) Հին և Նոր Կտակարանների հեղինակների բնագրերին: Այն հաճախ կոչվում է «թույլ քննադատություն»:

Textus Receptus. Անվանումը վերցված է Էլզևիրի հունարեն ՆԿ-ի խմբագրված տարբերակից, մ.թ. 1633: Հիմնականում հունարեն ՆԿ-ի այս տարբերակը հիմնված է հունարենի մի քանի ավելի ուշ ձեռագրերի վրա և Երասմոսի (1510-1535), Ստեփանոսի (1546-1559) և Էլզևիրի (1624-1678) լատիներեն թարգմանությունների վրա: Ա. Թ. Ռոբերթսոնը («Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը» գրքում) ասում է, որ «բյուզանդական տեքստը իրականում Textus Receptus-ն է»: Բյուզանդական տեքստը հնագույն առաջին հունարեն ձեռագրերի երեք ընտանիքների միջից ամենաքիչ արժեքավորն է (արևմտյան, ալեքսանդրիան և բյուզանդական): Այն պարունակում է սխալներ, որոնք հարյուրամյակներ շարունակ արել են արտագրողները: Համենայնդեպս, Ա. Թ. Ռոբերթսոնը նաև ասում է, որ «Textus Receptus տեքստը մեզ է հասել հիմնականում ճշգրիտ տեսքով» (էջ` 21): Այս հունարեն ձեռագիր ավանդական տարբերակը (հատկապես Երասմոսի 1522 թ-ի երրորդ խմբագրությունը) հիմք է հանդիսանում King James անգլերեն թարգմանության համար, 1611 թ.:

Փոխանություն (Metonymy). Սա պատկերավոր լեզու է, երբ մի բանի անունը օգտագործվում է մեկ այլ բան ներկայացնելու համար: Օր.՝ «թեյնիկը եռում է» այնինչ թեյնիկի միջի ջուրն է եռում և ոչ թե թեյնիկն ինքը:

Քրիստոսակենտրոն. Այս տերմինը ընդգծում է Քրիստոսի կենտրոնական դերը: Ես այն կիրառում եմ կապված այն գաղափարի հետ, որ Հիսուսը Տերն է ամբողջ Աստվածաշնչի: ՀԿ-ը մատնանշում է Նրան. Նա է կատարողն ու նպատակը ՀԿ-ի (տես՝ Մատթ.5:17-48):

Օրինականություն. Այս մոտեցմանը բնորոշ է կանոններին կամ ծեսերին հետևելու խիստ շեշտադրումը: Այն հակված է ապավինելու մարդու կողմից որոշակի կանոններ և օրենքներ պահելուն, որպես Աստծո կողմից ընդունված լինելու միջոց: Օրինականությունը հակված է թերագնահատելու փոխհարաբերությունները և մեծարելու գործերը, երբ երկուսն էլ իհարկե կարևոր են սուրբ Աստծո և մեղավոր մարդու միջև եղած ուխտի փոխհարաբերության մեջ:

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ

Ինձ այնքան էլ չեն մտահոգում հավատքի հանգանակները կամ դավանությունները: Ես նախընտրում եմ հոչակել հենց Աստվածաշունչը: Մակայն գիտակցում եմ, որ հստակ ձևավորված հավատքի դավանությունները այն մարդկանց, ովքեր չեն ճանաչում ինձ, թույլ կտան գնահատելու իմ վարդապետական հայացքները: Մեր օրերում աստվածաբանական այնքան շատ սխալներ ու շփոթություններ կան, որ կարևոր եմ համարում առաջարկել իմ աստվածաբանության հետևյալ համառոտ վերլուծությունը:

1. Աստվածաշունչը՝ թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանը, ներշնչված, անսխալական, հեղինակային, հավիտենական Աստծո Խոսքն է: Այն Աստծո ինքնահայտնությունն է, արձանագրված մարդկանց կողմից՝ Իր գերբնական առաջնորդությամբ: Այն մեր միակ Աստծո և Նրա նպատակների հստակ ճշմարտության աղբյուրն է: Այն նաև մեր հավատքի միակ աղբյուրն է և Իր եկեղեցու ուղեցույցը:
2. Կա միայն մեկ Հավիտենական Աստված, Արարիչ և Փրկիչ: Նա է Արարիչն ամեն ինչի՝ տեսանելի և անտեսանելի: Նա Իրեն հայտնել է որպես սիրող և գթաբառ Աստված, չնայած որ Նա նաև արդար է և սուրբ: Նա Իրեն հայտնել է Երեք տարբեր Անձերով՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին: Նրանք տարբեր անձիք են, սակայն միևնույն էությամբ:
3. Աստված ակտիվորեն վերահսկում է այս աշխարհը: Նա Իր արարչագործության համար հավիտենական ծրագիր ունի, որն անփոփոխ է և այնպես է գործում յուրաքանչյուր անհատի համար, որ թույլ է տալիս մարդուն ունենալու ազատ կամք: Ոչինչ առանց Աստծո գիտության և թույլտվության տեղի չի ունենում, սակայն Նա թույլ է տալիս թե՛ հրեշտակներին և թե՛ մարդկանց կատարել իրենց սեփական ընտրությունը: Հիսուսը Հայր Աստծո Ընտրյալ Մարդն է, և մենք բոլորս էլ պոտենցիալ ընտրյալներ ենք: Դեպքերի վերաբերյալ Աստծո կանխագիտությունը չի նշանակում, որ մարդիկ պետք է ամեն բան անեն այնպես, ինչպես կանխատեսված է եղել: Մենք բոլորս պատասխանատու ենք մեր մտքերի և գործերի համար:
4. Մարդկությունը չնայած ստեղծվեց Աստծո պատկերով և առանց մեղքի, գերադասեց ըմբոստանալ Աստծո դեմ: Չնայած Ադամին ու Եվային փորձեց մի գերբնական արարած, միևնույն է նրանք պատասխանատու էին իրենց հոժարակամ անձնակենտրոն վարքի համար: Նրանց ըմբոստությունը ազդեց մարդկության և ամբողջ արարչագործության վրա: Մենք բոլորս Աստծո ողորմության և շնորհքի կարիքն ունենեք, թե՛ Ադամի վիճակի մեջ մեր բաժինն ունենալու և թե՛ հոժարակամ ըմբոստանալու համար:
5. Աստված հոգացել է մեղավոր մարդկության ներման և վերահաստատման միջոցը: Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Միածին Որդին, մարդացավ, ապրեց անմեղ կյանքով և Իր փոխանորդական մահով վճարեց բոլոր մարդկանց մեղքերի համար: Նա է Աստծո հետ հաղորդակցության վերականգնման միակ ճանապարհը: Նրա կատարած գործին հավատալուց գատ ուրիշ փրկության միջոց չկա:
6. Մեզնից յուրաքանչյուրն անձամբ պետք է ընդունի Աստծո կողմից առաջարկվող ներումը և Հիսուս Քրիստոսի մեջ ունեցած վերստին ծնունդը: Սա տեղի է ունենում Հիսուսի միջոցով Աստծո խոստումներին հոժարակամ վստահելու և մեղքից հրաժարվելու միջոցով:
7. Մենք լիարժեք ներում ենք ստանում և վերահաստատվում Քրիստոսի վրա ունեցած մեր վստահությամբ և մեղքից ապաշխարությամբ: Մակայն այս նոր փոխհարաբերության կյանքի ապացույցը մեր վերափոխված և վերափոխող կյանքն է: Աստծո համար մարդկության նպատակը միայն երկինք հասնելը չէ, այլ հիմա Քրիստոսի պես լինելը: Նրանք, ովքեր իրոք փրկված են, թեև երբեմն մեղանչեն, կշարունակեն հավատքի և ապաշխարության մեջ ապրել իրենց ամբողջ կյանքի ընթացքում:
8. Սուրբ Հոգին «երկրորդ Հիսուսն» է: Նա ներկա է այս աշխարհում, կորած մարդկանց Քրիստոսին առաջնորդելու և փրկվածների մեջ Քրիստոսի կերպարը ձևավորելու համար: Հոգու պարզները տրվում են փրկության ժամանակ: Պարզները Քրիստոսի կյանքի և

ծառայության իմաստն են, որոնք բաժանված են Իր ամբողջ մարմնով մեկ՝ եկեղեցում: Պարզևները, որոնք հիմնականում Հիսուսի վարքն ու շարժառիթներն են, պետք է գործադրվեն Սուրբ Հոգու պտուղներով: Հոգին գործում է մեր օրերում ճիշտ այնպես, ինչպես գործում էր աստվածաշնչյան ժամանակներում:

9. Հայրը հարուցյալ Հիսուս Քրիստոսին դրել է ամեն բանի Դատավոր: Նա վերադառնալու է երկիր դատելու ամբողջ մարդկությանը: Հիսուսին հավատացողները, որոնց անունները գրված են Գառան Կյանքի Գրքում, Նրա վերադարձի ժամանակ կստանան իրենց հավիտենական փառավորյալ մարմինները: Նրանք հավիտյան Նրա հետ կլինեն: Սակայն նրանք, որ մերժել են արձագանքել Աստծո ճշմարտությանը, հավիտյան բաժանված կլինեն Երրորդություն Աստծո հետ ջերմ հաղորդակցության բերկրանքից: Նրանք կդատապարտվեն Սատանայի և նրա հրեշտակների հետ միասին:

Անշուշտ սա ամբողջը չէ, սակայն հուսով եմ, որ այն ձեզ կտա իմ սրտի աստվածաբանական համն ու հոտը: Ես սիրում եմ այս արտահայտությունը:


«Կարևոր բաներում՝ միաբանություն, երկրորդականում՝ ազատություն, իսկ ամեն ինչում՝ սեր»:

ԿԱՐՏԻՔՆԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՍԻՆ

ՆԵՐԱՕՈՒԹՅՈՒՆ


- Ա. Այս թեման մեծ փաստարկներ է առաջացրել:
- Բ. Ինչպեսը հստակ չէ, երբը հստակ չէ, բայց իրադարձությունը հաստատ է:
- Գ. Որտեղի՞ց ես ձեռք բերել այն, ինչին հավատում ես:
- Դ. Ո՞րն է Երկրորդ Գալստյան նպատակը:
- Ե. Աստվածաշունչը սովորեցնում է համակարգված վախճանաբանություն:
- Զ. Ինչո՞ւ է մեր օրն այդքան հետաքրքրված Երկրորդ Գալուստով:
- Է. Հիսուսի ֆիզիկական վերադարձին վերաբերող բոլոր տեսությունները պահպանողական տեսակետներ են:

ՎԱՂ ԵԿԵՂԵՑԻ ՆԱԽԱՀԱԶԱՐԱՄՅԱ (Պատմական նախահազարամյա)



	Նախադրյալներ/Կանխակարծիք	Փաստում են	Ուժեղ կողմերը
1.	Երկրագնդի պատմությունը նման է Արարչագործության 7 օրերին (Բառնաբասի նամակը, Իրենայոս, Մեթոդիոս)	Պապիաս Իրենայոս, Հուստինոս Նահատակը, Տերտուլիանոս Հիպոլիտոսը, Մեթոդիոսը	Մինչև <i>Parousia</i> -ն որոշ դեպքեր պետք է կատարվեն ա. Ավետարանը բոլոր ազգերին (Մաթ. 24:14) բ. Իսրայելի դարձի գալը (Հռ. 11:25) գ. Մեծ ուխտադրությունը (Մաթ. 24:10; 2 Թեա. 2:3) դ. Մեծ Նեղություն (Մաթ. 24:21) ե. Անօրենության մարդու հայտնվելը՝ Նեղը (2 Թեա. 2:3)
2.	Յուրաքանչյուր օր ներկայացնում է 1000 տարի (2 Պեռ. 3: 8; Մաղ. 90: 4)	Ջորջ Լադդ (Պատմական նախահազարամյա)	Տեսանելի, տիեզերական Հափշտակություն և Գալուստ


ՈՉ ՀԱԶԱՐԱՄՅԱ (իրականացված կամ կատարված հազարամյա)



	Նախադրյալներ/Կանխակարծիք	Փաստում են	Ուժեղ կողմերը
1.	Եկեղեցին հոգևոր Իսրայելն է (Գաղ. 3:9,29; 6:16; Հռ. 2:5,9,28-29; Հայտ. 1:6; 1 Պեռ. 3:6)	Որոշ Վաղ Եկեղեցու Հայրեր	Գողգոթայի հաղթանակը, չկա Հազարամյա


2.	Մեկ Ուխտ (Հին և Նոր, Հռ.4-Աբրահամը Պողոսի օրինակն է հավատքով արդարանալու համար)	Օգոստինոս	Սատանան հիմա կապված է
3.	Քրիստոսի Թագավորությունը ժամանակավոր չէ (Հովհ. 18:36)	Զվինգլի	Աստծո փրկության ծրագրի միությունը
4.	Մեկ Երկրորդ Գալուստ Մեկ Հարություն Մեկ Դատաստան Հավիտենական Թագավորություն	Կավլին (Երիցական)	
5.		Ռեյ Սամրս (Մկրտական)	
6.		Ջեյ Ադամս (Ռեֆորմատոր)	
7.		Քրիստոսի Շատ Եկեղեցիներ	

ՀԵՏՀԱԶԱՐԱՄՅԱ (հազարամյան հիմա է)



	Նախադրյալներ/Կանխակարծիք	Փաստում են	Ուժեղ կողմերը
1.	Մարդու ջանքերը կրեբեն Հազարամյայի (2 Պետ.3:12; Մաթ. 6:10)	Հովնաթան Էդվարդս	Լրջորեն է մոտենում Երկրորդ Գալստյանը
2.	Գնալով ամեն բան լավանում է	Ա. Հ. Սթրոնգ	Մարդն ունի բաժին Աստծո ծրագրում
3.		Ու. Թ. Կոններ	Լավատեսական ժամանակակից մշակույթի մասին
4.		19-րդ դարի աստվածաբան գիտնականների մեծ մասը	

ԴԻՄՊԵՆՍԱՑԻՈՆԱԼ ՆԱԽԱՀԱԶԱՐԱՄՅԱ



¹ Այս Գաղտնի Գալստյան մասին 3 կարծիք կա


1. Մինչ ներդրություն
2. Ներդրության կեսին
3. Ներդրությունից հետո

² Հավատացյալների Դատաստանը (2 Կոր.5:10)

³ Ազգերի Դատաստանը³ (Մաթ.25)

	Նախադրյալներ/Գանխակարծիք	Փաստում են	Ուժեղ կողմերը
1.	Աստվածաշունչը բաժանված է յոթ տարբեր հատվածների	Ջոն Դարբի (Պլիմաութ եղբայրություն)	Լրջորեն է ընդունում Աստվածաշնչի մարգարեությունը (հատկապես Դանիելը)
2.	Իսրայելի մասին Հին Կտակարանյան յուրաքանչյուր մարգարեության բառացի իրականացում	Կլարենս Լարկին	Վերադարձ ցանկացած պահին (Մաթ.24:40-42)
3.	Եկեղեցին և Իսրայելը ամբողջովի առանձին են: Եկեղեցին Աստծո ծրագիր Բ-ն է, երբ հրեաները մերժեցին Հիսուսին որպես Մեսիա	Դ.Լ. Մուդի	
4.	Եկեղեցին գաղտնի հափշտակվելու է, մինչև Ներդրությունը: Հայտնության Գիրքը 5-րդ գլխից հետո հրեական է:	Ք. Ա. Սքոֆիլդ (վերենայած Աստվածաշունչ)	
5.	Նոր Կտակարանը մեկնաբանվում է Հին Կտակարանի լույսի ներքո	Դալլասի Ճեմարան (Պենտեկոստե, Ռուտիկ, Վալվուրդ)	
6.		Ու. Ա. Քրիստել (Հարավային Մկրտական)	
7.		Հալ Լինդսեյ	
8.		Թիմ ԼաՀայե	
9.		Աստվածաշնչի Եկեղեցիներ (Դալլասի Ճեմարան)	

ԲՈՒՔԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԿԱՐՏԻՔԸ (Պատմական նախահազարամյա/Մինչ նեղություն/Ոչհազարամյա)



Նախադրյալներ/Կանխակարծիք

1. Մեկ ծրագիր (Մննդ. 3:15)
2. Աստծո ժողովրդի միությունը (Հո. 2:28-29; Գաղ.3:29; 6:16)
3. Դանիելի, Եզեկիելի և Հայտնության Ապոկալիպտիկ բնույթը (գրական ժանրը)
4. Հին Կտակարանը տեսնում էր մեկ գալուստ(երկու շրջան), մեկ տեսանելի գալուստ
5. Մեկ տեսանելի գալուստ (Մաթ.24:27)
 Մեկ Հափշտակություն (1 Թեա.4:13-18)
 Մեկ Հարություն
 Մեկ Դատաստան (Մաթ.25; Հայտ.20)
 Հավիտենական Թագավորություն

Դիալեկտիկական լարվածություն

1. Հին Ուխտի մարգարեական մոդելների և Նոր Ուխտի առաքելական մոդելների միջև
2. Աստվածաշնչի միաստվածության (մեկ Աստված բոլորի համար) և Իսրայելի ընտրության միջև
3. աստվածաշնչյան ուխտերի և խոստումների պայմանական ասպեկտի միջև («եթե ... ապա») և Աստծո անպայմանական հավատարմության միջև ընկած մարդկության փրկագնման համար
4. Մերձավոր Արևելքի գրական ժանրերի և արևմտյան ժամանակակից գրական մոդելների միջև
5. Աստծո Թագավորության միջև որպես ներկա, բայց և ապագա
6. Քրիստոսի մոտալուտ վերադարձի հավատքի և այն համոզմունքի միջև, որ նախ և առաջ պետք է տեղի ունենան որոշ իրադարձություններ

Եզրակացություն

1. Ջոն Քալվինը «Հայտնություն» գրքի մասին ասաց. «Միայն Աստված գիտի, թե ինչ է դա նշանակում»:
2. Երկրորդ Գալստյան վերաբերյալ հաստատված կամ մեծամասնության կարծիք չկա:
3. Հավատացյալների յուրաքանչյուր սերունդ Աստվածաշունչը պարտադրում է իր պատմական և մշակութային միջավայրում:
4. Նոր Կտակարանում չկա համակարգված վախճանաբանություն, բայց ճշմարտությունը բացահայտվում է մեզ համար «պատրաստ լինել» և «լինել ակտիվ»:
5. Այս հարցի շուրջ պայքարում են միայն պահպանողականները:
6. Հավատացյալների յուրաքանչյուր սերնդի հույսն է, քաջալերանքը և շարժառիթը ակնկալել Երկրորդ Գալստյանը իրենց կյանքի ընթացքում (Մարկ. 13: 33-37):

Հայտնություն

Մի փոքր վախեցնում է ինձ

այս առեղծվածային հայտնությունը:

բայց հետո նորից գագաթնակետին է հասցնում իմ հետաքրքրասիրությունը

և խթանում է իմ երևակայությունը:

բայց ես սովորել եմ, որ պետք է զգույշ լինեմ

թե ինչպես եմ ես ընդունում պատգամն այնտեղ,

համոզվելով, որ դոգմատիկ չեմ

և խնամքով վերլուծելով այն:

Գիտեմ, որ լեզուն խորհրդանշական է

այնպես որ ես չեմ կարող լինել վայրի և ազատ

իմ մեկնաբանությամբ

և անտեսել երկիմաստությունը:

Ժանրը կարևոր է

Ես դա պետք է հիշեմ,

երբեք չմտածելով, որ իմ պատասխանները

միակ պատասխաններն են, որոնք ճիշտ են.

բայց հուսով եմ, որ կարող եմ լսել բառերը

Հայրը պետք է ասի.

փնտրիր Քրիստոս, որ նորից գա,

ցույց տուր ուրիշներին Նա է Ճշմարտությունը, Կյանքը, Ճանապարհը:

և այդ ժամանակ ես կհիշեմ, երբ ամեն օր պայքարեմ

իմ երկրային դերում,

*որ Աստված կհաղթի,
Նա տիրում է գերագույն,
Նա վերահսկում է*

Փաթ Բերգերոն/Pat Bergeron 7/21/1999

Copyright © 2014 [Bible Lessons International](#)